Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16293

891.99
[illegible] 89

891.99
Պ-89

ԿՐՕՒԽԱՃԱՂԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Հեղինակութիւն

ՊԵՐՃԻ ՊՌՕՇԵԱՆՑ

ԱՇՏԱՐԱԿԵՑԻՈՅ

238

"ԿԻԼԻԿԻԱ" ԳՐԱՏՈՒՆ
57 La Belle Ave., H.P.
Detroit, Mich.
"CILICIA" BOOK STORE

ԹԻՖԼԻՍ

Հ. Ենֆիաճեանցի եւ Ընկ. տպարանում.

1878

20 03

3592

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ՕՐԻՈՐԴ ԱՇԽԷՆ

ԴՕԼԳԵԱՆՑԻ

յիշատակին

ՆՈՒԻՐՈՒՄ Է

Հեղինակը.

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-СОРА им. А. Мясникяна

888
39

Дозволено цензурою. Тифлисъ. 30 марта 1878 г.

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

ԻՄ ՔԱՂՑՐԻԿ ՔՈ՛ՅՐՍ,

ՎԱՂԱԹԱՌԱՄ ԱՇԽԷ՛Ն·

Տարի և կէս սրանից առաջ ես յայտնեցի քեզ իմ ցանկութիւնս՝ սրանից մի դար յառաջ իմ քաղցր հայրենիքում գտնուած մեծ մարդկանց յիշատակներն անմահացնելու,—որոնց մէջ գլխաւոր տեղերից մինն անպատճառ պատկանելու էր Հայոց ազգի գլուխ երջանկայիշատակ Ներսէս Ե. իմ հայրենակից Աշտարակեցի կաթուղիկոսի մանկական անմեղ տարիներին։ Այնուհետև դու էլ ձեռք չը քաշեցիր ինձանից. ամառուան զով առաւօտները հիւանդ անկողնիցդ վեր էիր կենում, անտէր հազը քեզանից անբաժան, գալիս զարթնացնում ինձ և ստիպում գրել Ներսէսի մանկութիւնը, որը քո խորհրդով «կռուածաղիկ» անունն ստացաւ, երբ առաջին անգամը բովանդակութիւնը կազմեցի և քեզ մօտ կարդացի։ Յիշում եմ, անմահ հոգի, թէ ինչպէս ուրախացար դու՝ լսելով համառօտիւ վիպասանութեանս պարունակութիւնը։ Էլ ես քո կողմից դադար չունէի, օրը մինչև երեկոյ «կռուածաղկի» վերայ ինքդ ինձանից աւելի էիր մտածում, «կռուածաղիկն» էր քո խօսակցութեան նիւթը։ Չեմ մոռացել քո համբուրալից ուրախութիւնը, երբ լսեցիր առաջին երկու գլուխները։—Շնորհակալ էիր, աղաչում էիր դու ինձ, սրանից աւելի մեծ շնորհք չէիր կարող անել ինձ՝ քո հիւանդ քոյրդ, եթէ ամէն առաւօտ մի մի գլուխ անկողնիս մօտ կանգնած՝ կարդայիր ինձ համար։ Եւ արդարև, այդպիսի օրը դու մի թեթևութիւն էիր զգում, այդ օրը դաժան տկարութիւնն այնքան չէր կարողանում իւր ներգործութիւնը ցոյց տալ. դու ուրախ խօսում, ծիծաղում և խորհուրդներ էիր տալիս ինձ՝ «կռուածաղկիս» վերաբերութեամբ։

Բայց աւա՜ղ, քանի յառաջ էին գնում օրերը, անիրաւ թոքախտի մահաբեր ազդեցութիւնը ծանրանում էր վրէդ։ Շատ անգամ անողոք հազի անդուլ շարունակութիւնից քառորդ ժամով ընդհատվում էր քո սիրելի «կռուածաղկի» նոր գլխի ընթերցումն. դու այդ ժամանակն էլ ձեռքից

բռնած՝ չէիր թողնում յետ պահել ընթերցանութիւնը, հազը դադարելուն պէս ստիպում էիր շարունակել։

Մօտեցաւ սեպտեմբերը, անիրաւ հիւանդութիւնը ուժից հետ ականջներիդ լսողութիւնն էլ խլեց և դու մի քանի կաթիլ արտասուքներ՝ քո սիրելիների սիրտը չխոցելու համար՝ ծածուկ գլորելով կիսամար աչքերիցդ, ձեռքս բռնած մօտ էիր քաշում ականջիդ և ստիպում բարձր բարձր կարդալ։ Ա՜խ, կտրատւում, դալարւում էր մեր աղիքը, բայց քո սիրտդ չկոտրելու համար հարկադրուած էի ոչ միայն ցանկութիւնդ կատարել, այլև քո հատու կտուր բազմընդհատ խօսքերով արած նկատողութիւններդ լսել, որոնք որքան և մի հիւանդ գլխի ծնունդ՝ բայց հասուն դատողութիւն և քո եղբօրդ համար շատ գնահատելի։

Դու էիր, արդարև, իմ հանճարաւոր քոյր, «Կռուածաղկիս» համար օտարութեանս մէջ իմ միակ խորհրդատուն, քեզ եմ պարտական սորա լոյս տեսնելը։

Քո ընթերցասիրական եռանդն այնքան շատ էր, որ դու Կռուածաղկով էլ չէիր բաւականանում, կլանում էիր անկողնիդ մէջ պարկած պարբերական թերթեր և այլ նոր հրատարակութիւններ։ Ոյժդ էլ հատաւ, լսողութիւնդ էլ կորաւ, բայց դու էլի կերակուր էիր տալիս քո զարգացած մտքին. մեր ամէն մէկը քեզ մօտ հերթապահ ընթերցող էր։ Միւս առաւօտը դու խլուելու էիր մեր ձեռքից, բայց երեկոյին էլի ուշադրութեամբ լսում էիր նոր ստացած «Մշակ» և «Մեղուի» յօդուածները։ Բժիշկն ինքը համոզուած էր, որ քեզ սփոփանք միայն ընթերցանութիւնն էր և թոյլ էր տուել։

Եւ ինչ անէիր, իմ չնաշխարհիկ անզուգական քոյր, բացի ընթերցանութիւնից և քո մերձաւորներից ո՞վ ունէիր պանդխտութեանդ մէջ քեզ մխիթարող։ Ամիսներով մեր դուռն ուրիշից չէր բացւում. լոյսը ծագում էր, մեզ էիր տեսնում, մթնում էր, մեզ հետ էիր անց կացնում երեկոն, իսկ դու քո մարդասէր և քաղցր բնաւորութեամբդ սովոր էիր ի մանկութենէ շրջապատուել բարեկամներով, ընկեր—հարևաններով և մանաւանդ՝ քո սրտին ամենամօտիկ աարկաներով՝ փոքրիկ աշկերտուհիներով, որոնցից այժմ բոլորովին զրկուել էիր։

Ափսոս, դառն անցկացրիր քո վերջին տարիդ օտարութեան շնորհիւ՝ դառն և անհնար եղաւ թաղումդ Հաշտարխանի չահասէր հոգևորականների շնորհիւ։

Կեանքդ վերջին օրերն եկան. սեպտեմբեր 18ը զրկեց մեզ քեզ նման մի անհատից. դու ոչ միայն քո ընտանեացդ՝ այլև սիրելի ազգիդ համար մեծ և անգին կորուստ եղար։

Այդ սև օրից յետոյ երկար ժամանակ աչքից ձգեցի «Կռուածաղիկը» էլ չէի ուզում շարունակել, մանաւանդ՝ երբ երկու ամիս քեզ կորցնելուց յետոյ զրկուեցանք քո հոգածութիւնքդ իր մանկական անմեղ թոթովանքներով ցրուող տասն և հինգ ամսական քաղցրիկ զաւակիցս—Նորայրից։

Նրան էլ տարաժամ քո սառը ծոցը դնելով՝ բոլորովին արհամարհեցի ամէն պարապմունք։

Սակայն ի վերջոյ էլի քո յիշատակդ ինձ մխիթարեց. իմ չնչին աշխատութիւնս քեզ նուիրելու և քո անունդ անմահացնելու նպատակը խրախուսեց ինձ կրկին գրիչը ձեռքս առնուլ, ընտանեկան մեծագրաւ կեանքի մէջ շրջապատած հոգսերը, սրտամաշ տրտմութիւնը և օտարութեան անախորժ տպաւորութիւնը մի կողմը թողուլ և դարձեալ շարունակել վիպասանութիւնս։

Հասա՞յ արդեօք իմ ցանկութեանս, թէ ոչ, սրանով կարողացա՞յ իմ սիրելի ազգայնոց ընթերցող դասին մի փոքրիկ ծառայութիւն մատուցանել, այդ մասին չեմ հետաքրքրւում. յուսամ, որ հայկական գրականութիւնը սիրող բանասէրը ներողամիտ աչքով կընդունի իմ այս դուզնաքեայ երկասիրութիւնս։ Իմ զգալի ուրախութիւնն այս է, որ առիթ ունեցայ այս մի քանի տողովս, իմ աղնիւ, իմ ճշմարիտ ազգասէր քուրիկս, քեզ հետ խօսել։

Ընդունիր, անմահ հոգիդ, քեզ յարգող եղբօր անկեղծ սրտի աննշան նուէրը, քո չիրմիդ՝ քո հեռաւոր օտարութեան մէջ ամփոփուած նշխարացը նրանից աւելի ոչինչ չունիմ ձօն բերել։ Քանի կայ «Կռուածաղիկը», քանի կը թերթուին ընթերցասէր հայերից նորա թերթերը, կը շարունակուի նրա հետ էլ Օրիորդ Աշխէն Դօլգեանի յիշատակը։

Աներկմիտ եմ, թէ սառն ընդունելութիւն չի գանիլ քո համառօտ կենսագրութիւնը, վստահ եմ, որ իմ պաշտելի հայրենակիցներս քաղցր ակնարկութեամբ կընդունին, գտնելով քո մէջդ մի հաղուագիւտ և արի մշակ Հայ մանուկ գեղեցիկ սեռնդի զարգացմանը նպաստելու գործում։

ՕՐԻՈՐԴ ԱՇԽԷՆ ԴՕԼԳԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1876 թուի սեպտեմբերի 19ին մի անձրևոտ առաւօտ ժամը 7-ին Աստրախանու ցեխոտ փողոցներով տանում էին հոգևորականաց յառաջադիմութեամբ մի դագաղ՝ յուղարկաւորութեան սայլի վերայ դրած։ Հանդէսը շատ անշուք էր. յուղարկաւորների թիւը շատ աննշան էր. երկու երեք հոգի մէջ արած մի սևերում կոլոլուած պառաւի, մի մանկամարդ նոյն հագուստով կնոջ և մի երիտասարդի՝ դիմում էին դէպի Հայոց սուրբ Աստուածածին եկեղեցին։

Նայելով յուղարկաւորողների փոքրաթուութեանը, ամէն մարդ կարող էր կարծել, որ ննջեցեալն օտարական պիտի լինի։

Այո, այս հանգուցեալն էր Ղզլարեցի բժիշկ Մարտիրոս Դօլգեանի դուստր օրիորդ Աշխէնը։ Չեմ ուզում այս տեղ ոչ ոքի սիրտը խոցոտել. դուսկում միայն կասեմ, որ Աստրախանու հոգևորականաց չահասիրութեան պատճառաւ, Աշխէնի թաղումը բոլորովին անյայտ եղաւ։

Աշխէնի մայրը՝ քանքարաւոր Սայաթնովայ երգչի տոհմից սերած տիկին Շուշանը՝ իւր երիտասարդութեան օրերումը զրկվեցաւ իւր ամուս-

սին Մարտիրոսից հինգ որբ դեռահասակ երեխաներով. Աշխէնը չորրորդն էր, որ ծնել էր Բաքու։

Մարդու մահից յետոյ տիկին Շուշանը բնակուեցաւ Տփխիսում և շատ չուտ ճաչակեց կենսական պատերազմի դառնութիւնը։ Սակայն արիասիրտ կինը չը յուսահատուեցաւ, դառն աղքատութեան մէջ նա փայլ տաբաւ իւր զաւակների կրթութեանը։

Դեռ Թիֆլիզումը նոր էր մտնում իգական սեռի կրթութիւնը և այն ժամանակ, որ տիկին Շուշանն իւր հանդուցեալ ամուսնու ընկերների միջոցով կարողացաւ իւր աղջիկներին ոչ միայն ռուսերէնն ուսուցանել, այլ և մայրենի լեզուն։ Նրա մեծ աղջիկ Վարվառան բաւականին զարգացած՝ ամուսնացաւ Նուխեցի Յարութիւն-բէգ Շոկալնիկեանցի հետ և մի տարուց յետոյ վախճանւեցաւ՝ մեծ ցաւ պատճառեց տարաբաղդ մօրը՝ առանց կորցնելու նրա ազնուութիւնը։ Շուշանը շարունակեց դաստիարակել իւր մնացեալ դուստրերը, իսկ իւր միակ Ամբատ տղային յաջողեցաւ ուղարկել Մօսկվա Լազարեանց ճեմարանը, գիտնի ու ցուլեկ մասների պլոտ-զանցով առցով վճարելով ճանապարհի ծախքը։

Նրա միջակ դուստր Մարիամն արդէն բաց հայադէտ, ռուսադէտ և բաւականին ֆրանսիադէտ ամուսնացաւ «Կռունկի» խմբագիր Մարկոս Աղաբէգեանի հետ։ Բայց այս բաղդաւորութիւնն էլ երկար չքաշեց. անխնայ մահն երեք տարուց յետոյ Մարիամի պատանի կեանքն էլ կարճեց, և այժմ նրա մշտապես իւր չորս ծնած որդուց՝ միայն անդրանիկ Գարեգինն է, որ ուսանում է Կոստանդնուպոլսում։

Թշուառ այրու յոյսը մնացին մի տղայն և երկու անչափահաս աղջիկները, որոնք նոյնպէս չը դադարեցան ուսանելուց, բայց աւելի անյաջող հանգամանքների տակ։ Մի բան, որ պակաս Դօլգեան օրիորդների աշխատասիրութիւնը, նոցա մաքուր հայախօսութիւնն եղաւ։

Սոցանից կրտսերի՝ Աննայի հետ նա ամուսնանալու բաղդն ունեցայ, Ամբատն արքունի ծառայութեան մէջ մտաւ, իսկ միջակը՝ Աշխէնը նուիրեց իւր կեանքը մանկավարժութեան սուրբ պաշտօնին։

1869 թուից սկսած Աշխէնն ունէր Թիֆլիզումն իւր առանձին Գայիանեան անունով աղջկանց ուսումնարանը, որը Թիֆլիզում գտնուած բոլոր հայ-աղջկանց ուսումնարաններից անդրանիկն էր և որը բացել էր նա 1861 թուին հանգուցեալ տիկին Եղիսաբեթ Ցովհաննիսեանցի եռանդուն ձեռնտուութեան և հովանաւորութեան շնորհիւ։ Մի քանի տարի դադարել էր իր ուսումնարանը ժամանակի բերմունքից, իսկ այժմ Աշխէնը կրկին երեք տարի շարունակեց աննշան վարձատրութեամբ։ Վերջումը կազմակի աղդեցութեանց զօրութեամբ թոյլ տուեց Աշխէնն և պարապեցաւ Թամարեան և Մարիամեան ծխական ուսումնարաններում հայ լեզուի և ձեռագործութեան դասատուութեամբ և վերակացուհւոյ պաշտօնով։

Շուտով Աշխէնի աշխատութիւնն և հայասիրութիւնը տարածուեցաւ

ամէն հայաբնակ տեղերում. հրաւիրական թղթեր և բանակցութիւններ
եղան նրան Բաքուից, Ագուլիսից, Ալէքսանդրոպոլից և Ղզլարից։
Վերջինս բերև իւր հայրենիք, ունեցաւ իւր աղդեցութեան եռան-
դուն օրիորդի վերայ և Աշխէնն ընտրեց իւր համար Ղզլարը՝ 1872 թուին։

Երեք տարի շարունակեց Աշխէնը Ղզլարում ուսուցչութեան և վարժուհութեան պաշտօնը. 120-ի չափ աշակերտուհիներով շրջապատուած՝ հաւասարապէս սիրելի եղաւ նա թէ իւր հոգեւոր սանիկներից և թէ բոլոր Ղզլարեցիներից. ամէն Ղզլարեցի յարգում էր Աշխէնի համար և ինքը փա-
խաղարձաբար յարգուած ու սիրուած։ Նա ոչ միայն ուսուցչուհի և վարժուհի՝ նա և աղքատ երեխաների խնամածուն ու հոգատարն էր, նա և ուսումնարանի համար մտածողներից մինն էր։ Ջքաւոր աշակերտուհիները նրա միջնորդութեամբ Ղզլարի հարուստ աղջիկների և տիկինների քսակից հագուստ, ոտքի ամաններ և դասական առարկաներ էին ստանում, ուսումնարանն Աշխէնի ձեռքով Երևանցի կապիտան Մ. Գաղամեանց Միքայէլից առանց հոգաբարձութեան գիտութեանը հարիւր րուբլիանոց կալի մեքենայ էր շահւում, տեղացիներից կամ օտարականներից օժանդակութիւններ էր ձեռք բերում, ուսումը, մայրենի լեզուն արագաքայլ էր յառաջ գնում և Աշխէնի պատիւն ու նշանակութիւնը Ղզլարեցւոց մէջ օր ըստ օրէ բարձրանում էր։ Հոգաբարձութիւնը նրան իւր խորհրդատու գործակից անդամն էր համարում, տեսուչը նրա ներկայութեամբն իւր այցելութեան պարտքը լրացրած էր կարծում և Ղզլարի աղջկանց ուսումնարանի յառաջադիմութիւնը պարզ երևում էր։

Մի բան միայն Աշխէնին սիրողների սրտին ծանր էր գալիս. Նրա
անխոնջ աշխատութիւնը օր յառաջ մօտեցնում էր նրա օրհասը. փչարու-
թիւնն իւր թաթը դրել էր նրա վերայ ու ճնշում։

Ոչ բժշկի անխնայ աշխատութիւնը, ոչ ծովային բաղանիքներն և ոչինչ ջանք չը կարողացան յառաջն առնել նրա նուազելուն։ Դարն ճշմարտութիւնը ցոյց էր տալիս, որ Աշխէնի վերցրած ուժը միայն իւր մահն չտաւ պեցնելուն էր պէտք գալիս։ Հարկաւորեցաւ ձեռք քաշել իւր սիրելի պարապմունքից։ 1875 թուին մի անախորժ վարմունք բոլորովին կտրեց Աշխէնի սիրտը և նա թողեց խպառ իւր սրտով սիրած ու կեանք նուած
պաշտօնն ու վերադարձաւ իւր պառաւեալ մօր հետ Աստրախան ապրելու
մեզ՝ իւր մերձաւորներիս մօտ, ուր դէպքի բերմունքից ընկել էինք մենք....

Մի քանի անգամ նորից հրաւիրակներ ու կոչնական նամակներ եկան
Ղզլարից, բայց էլ չը համաձայնեցաւ Աշխէնը յետ դառնալ և մենք էլ եր-
բէք չէինք թոյլ տալ. այդ նշանակում էր չտապեցնել նրա վերջին օրը։

Մի տարի միայն այնուհետև երբեմն կլսալաւ, երբեմն թոյլ կեանք
քաշեց Աշխէնն Աստրախանումն և սեպտեմբերին 1876 կնքեց իւր երկրա-
ւոր կեանքը 26 տարեկան հասակումը։

Ոչ այնքան ցաւը, որի ակօսները նշմարելի էին օրիորդի երեսին, փութացրեց նրա մահը, որքան օտարութիւնն և դաստիարակչութիւնից ձեռք

քաշելը։ Աչխէնի հոգին ընկերական էր, նա ժողովրդական անձն էր, նա Թիֆլիզում, Ղզլարում և ուր եղել է իւր հեզահամբոյր բնաւորութեամբն ու անուշիկ ճարտար լեզուովը միշտ սիրուած ու շրջապատուած է եղել բարեկամներով, իսկ Աստրախանումն այս գտաւ միայն մեր նեղ ընտանեկան շրջանումը։

Ահա քեզ, հետաքրքիր բանասէր, իմ վիպասանութեանս գլխաւոր պատճառի համառօտ կեանքը, որի վերայ եթէ աւելացնենք, որ թէ առողջ և թէ տկար ժամանակն այս աղջիկը միշտ պարապում էր ընթերցանութեամբ և գրականութեամբ, եթէ ասենք, որ մահուան անկողնումն էլ դողդոջուն ձեռքերով երբ հնարաւորութիւն չէ ունեցել գրիչը բռնելու, իւր քրոջն է կանչել և մի քանի տող բանաստեղծութիւններ թելադրել աշխարհիս առօրեայ կեանքի մէջ կատարուած անկարգութեանց վերայ, եթէ ասենք, որ ունի նա բաւականին ինքնուրոյն ոտանաւորներ, ընդարձակ շարադրութիւններ և թարգմանութիւններ և մի քանիսը կտոր կտոր տպուած են պարբերական թերթերում, այն ժամանակն, իմ կարծեօք, քեզ էլ ծանր կը լինի այսպիսի մի գործունեայ օրիորդի դէմ մեր Աստրախանու սուրբ հայրերի մի քանի աւելորդ կոպէկների աղագաւ արածը։

Էհ, հոգ չէ, որ Աչխէնն անյայտ ու աննշան թաղուեցաւ, նա կենդանի է իւր հարիւրաւոր սաների ու սիրելիների սրտերումը։

Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։

Այսքան առայս Օրիորդ Աչխէն Դօլգեանցի մասին. մի քանի խօսք ևս «Կաթուածահարի» վերաբերութեամբ։

Սորա նիւթը, ինչպէս ընթերցողը կը տեսնի, առած է Աշտարակու դարով յառաջ կեանքից։ Գրաւոր աղբիւրներն ես քաղել եմ Սիմէօն բազմաչխատ Կաթուղիկոսի տպուած երկասիրութիւններից և պ. Յարութիւն Շահազիզեանցի չնորհիւ Ներսիսի գրութիւններից։ Իսկ իբրև անսպառելի աղբիւր ինձ եղել են ի մանկութենէ մինչև վերջին տարիներս Աշտարակի իմ ծննդեան տեղի ծերունիներից լսածներս, որոնցից շատերը խորին ծերութեան հասած՝ ականատես են եղել շատ իրողութիւններին։

Ի՞նչ կարծէք, որ վիպասանութեան պայմանին համաձայն թոյլ տուած է նոր արկածքներ և նոր անձներ ևս ստեղծելը։

Ժամանակագրական ճշդութեանը ես չեմ ուզեցել, և չէի էլ կարող անաչառապէս հետևել։ Ներսիսի ծննդեան տարիքը մինչև այսօր պատմաբանական փաստերն անգամ տկարանում են ինկապէս հաստատել։

Մանկական յիշողութեանս մէջ տպուածներն այսօր հայ ընթերցասէր դասին եմ նուիրում։

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ
ԱՇՏԱՐԱԿԵՑԻ։

ԿՌՈՒԱԾԱՂԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

ՏԱԽՏԱԿԱԿԱՊ ԱՅՐԵՐԸ

Առաւօտեան կարմիր արևի ճառագայթներն երբ որ ցոլանում են Արագածոտն գաւառի վերայ և Արայի լեռան քամին նրա բազմատեսակ ծաղիկների բուրմունքը տարածում է դէպի Աշտարակ, այս երկնային բարիքը վայելողներից առաջինը լինում են Աշտարակումը Գոմշախրամ կոչուած ձորամռքի գլխին գտնուած տախտակակապ այրերը, կամ ինչպէս տեղացիք առհասարակ կոչում են ցեբերը, որի ներքևը ձորի միջից վազում է Քասախ գետակը։

Աշտարակու այս ձորը իւր ցերերի տակովը պէտք է եկել և պէտք է գալիս մեր գիւղացիներին տաւար [1]) պահելու և գարունը ձիւնը վեր կենալուն պէս մեծ պասի երկարութիւնը մոռացնող բազմատեսակ աղցաններ [2]) և ուրիշ կանաչեղէններ քաղելու համար։ Աշտարակու առուն, սկիզբն առած կարբի գիւղի տակից Քասաղ գետից՝ անց է կենում այս ցերերի տակովը և քանի դար է զովացնում ու կեանք է տալիս մեր երկրաւոր դրախտին՝ Աշտարակ գիւղին։ Նոյն առուն է, որ բարակ վտակներով դուրս հոսելով ափներից, պարգևում է Աշտարակին շատ բանջարեղէններ, ոչ թէ մարդու ձեռքով խնամած՝ այլ բնութեան առատ շնորհաց բերք։ Այստեղ են բուսնում եղինջն ու զողլապատը, ծնեբեկն ու պարոն—բանջարը [3]) և իրանց գրաւում մեծ պասին Աշտարակու կանանցը և հարս ու աղջկանցը։ Այս տեղ մեր լուսաւորիչ պապի երինջները յետ են ձգում իւրեանց մշտածածուկ քօղը՝ իրանց քիթ ու բերանը կապող քնթկալը [4]) ու ազատ թռչուն-

---

[1]) Անասուն։ [2]) Բանջարեղէն։ [3]) Բանջարներ են։ [4]) Քթի ծածկելու շղարշ։

ների նման քարափից քարափ ծլունդ-ծլունդ լինելով՝ վայրի այծերի անահ ճարպկութիւնով միմեանց սրտերի գաղտնիքները պատմում: Այս էլ բաւական չի. այս տեղ մեր սիրուններն խառնում են իրեանց քաղցրանուագ ձայները Քասախի խողխողջների ներդաշնակութեան հետ, արձագանգը ժայռերից ժայռեր ու սարերից սարեր տարածելով թնդացնում ողջ ձորը: Այստեղ, այո, և ուռենիների տակից քեզ երբեմն կը վախեցնեն մարդ մտած կատուի երկու պլստրակին տուած [1]) աչքեր, որ ժամերով բևեռուած մի տեղում, փոխում են միայն իրեանց տեղերը քարերի տակից կուզէ կուզ անելով, երբ իրեանց սրտի առարկաները բանջարքաղեների [2]) ցեխը քերելով միմեանց ասում են. աղջի, բալամ ջան [3]), էլ ըստեղ աղջան չկայ, գնա բռնենք [4]) դրա Մողնու ձորը: Հետո էլ միմեանց նշանացի աչքով անելով, ունքերով դիմացի քարերն են ցոյց տալիս: Հա՛, իմ խունջիկ-մունջիկ եկող [5]), սիրոյ կրակում էրվող աղջիկներս, դուք էլ լաւ իմանում էք և լաւ ճանաչում ունքով ցոյց տուած քարերի տակից ցոլացող փայլուն բծերին—ձեզանից ոչ պակաս սիրավառ պատանիներին, բայց վնաս չունի, ձևացրէք, իբրև թէ ոչինչ բանից տեղեկութիւն չունիք, թոյլ տուէք այդ անշղթայ գերիներին կշտանալ ձեր գեղեցիկ տեսքովը, զմայլել ձեր հոգու թելերին խփող ձայնովը:

Մանուշակը թէպէտ գուշակում էր, որ իւր մի ժամանակուան դասընկեր նախրչի Մանուկի տղայ Վարդը էս ուռենիների մացառներումը կամ քարափների խոռոչներումը իւր հետքը պահում կը լինի, թէպէտ ուրախ էր այդ բանի վերայ, բայց միւս կողմից էլ շատ տրտում էր. նա նոյնպէս հաստատ գիտէր, որ իւր երբեմնեան ուսուցիչ Տէր—Յարութիւնի տղայ Թորոսը, որը մի քանի տարի Էջմիածնումը վերարկուն հագին մի շարական, կամ ութ կանոն սաղմոս ձեռքին պատրաստվում էր իւր կամքի հակառակ Հայ-քրիստոնէի համար գիշեր ցերեկ աղօթողների կարգը մտնել, այսօր այդ տիրացուն ներսէսացած՝ Աշտարակումն էր նոյն փարաջայով և իւր քամակիցը հոտոտելով ման է գալիս:

Էլ ժամանակ չը կորցրեց Մանուշակը, բաժանուեց մի հնարքով

1) Պլշած: 2) Բանջար քաղելու գործիք: 3) հոգիս: 4) Վազենք:
5) Նազ անող:

իւր ընկերուհիներից ու իւր դայեակ պառաւ Սանդխտի հետ մտաւ Տախտակակապ այրերի գետնափոր անցքի մէջ:

Այսօրուան Մանուշակի աղջամնի գալը պատրուակ էր. նա իւր մօր մահից յետոյ իւր բռնակալ քարասիրտ հօր ահից երբէք չէր համարձակել տանից ազատ դուրս գալ: Նրա միակ գնալու տեղը Աշտարակայ առուն էր: կուժն ուսին դրած՝ ուսաշորը [1]) ծածկած՝ նա այնպէս պէտք է փողոցովն անցկենար, որ իւր կողքովն անցնողները վաղանցուկ ստուերի պէս երևէին իրեն. Նրա աչքերը պէտք է իւր կանաչ սևկի [2]) կօշկի ծայրին նայէին: Այս մի հատիկ զբօսանքն էլ այն ժամանակն էր, երբ բարբարոս Ղևոնդը Երևանումը սարդարի ու խաների հաճոյքներին թարգման լինելու էր գնացել, Աշտարակու պարկեշտ, գեղեցկութեան տիպար, գեռահաս օրիորդների ցուցակը սարդարի մօտ կրքը գրգռելու համար տարած լինելով:

Այսպիսի միջոցներ միայն Մանուշակը քաղցրաբարոյ Սանդխտի թոյլտվութեամբը կերթար ջրի:

Այս անգամ ինքը Սանդուխտն ընտրել էր Տախտակակապ այրերը ժամադրեալ տեղ: Նա լաւ գիտէր, որ իւր տէրը՝ Ղևոնդը այս անգամ երեք օրից յառաջ չի կարող վերադառնալ Երևանից. դեռ երեկ նա պարսից սարվազներին [3]) առաջնորդ եղած՝ անգթաբար դուրս քաշել տուեց իւր հարևան խեղճ Գասպարի 14 տարեկան գողտրիկ աղջկանն ու գնաց նրանով Պարսից Նավրուզ-Բայրամը՝ մարտի 10-ին—գարնանամտի տօնը շնորհաւորելու: Գիտէր նոյնպէս, որ գիւղի միւս ծերուկներն ու Տէր Յարութիւն բարեպաշտօն քահանայն Գէորգ-խալֆի հետ, Աշտարակումն էլ ձու, իւղ, հաւ, ոչխար չը թողած՝ 12 հոգւով գնացել են նոյնպէս շնորհաւորութեան, որ եթէ կարելի լինի, մի հնարքով յետ խնդրեն թշուառ աղջկանը սարդարի ժանիքներից, որ եթէ դեռ անմեղ որսը փաշուէր սարդարի հարամխանի լաբիւրինթոսը չի ընկել, յափշտակող սարվազից սկսած՝ մինչև գլխաւոր ներքինապետը կաշառակուր անեն ու ողորմելի հօր վշտերը փարատեն:

Այս սրտառուչ տեսարանները Ղևոնդի անպիտանութեամբ սովորական էր դառել Աշտարակու համար. այսպիսի եղեռնագոր-

1) Ուսի ծածկելու շոր, ջրի գնալուս՝ թաց չլինելու համար: 2) կաշի:
3) Պարսից զինուոր:

ծութիւններ տարին մի քանի անգամ կատարւում էին. դրա համար մեր գիւղումը 15 տարեկան աղջիկ դժուար էր գտնելը. մատաղ հասակի մէջ պսակւում էին՝ միայն գլուխը ծածկելու և կին կոչելու համար։ Պարսիկները, կամ իւրեանց անարգանք համարելով և կամ խղճի խայթից երկիւղ կրելով՝ նուիրականութեան դէմ սրբապղծութիւն էին համարում ամուսնացած կանանց բռնաբարութեամբ քաշելը։

Վաղուց Մանուշակն էլ այդ վիճակին ենթարկուած կը լինէր, եթէ Գէորգ խալֆէն կամ ծերունի իշխաններից մէկը Ղևոնդի մատնիչ հոգին կռնենային, կամ եթէ Ղևոնդի համամիտը և չարութեան գործակից վատահոգի, ցած, փծնի Տէր-Մելքսեթը չունենար Ղևոնդի հետ մասնակցութիւն։ Այս երկու վատթար անձինքը ոչ միայն Աշտարակին՝ բոլոր գաւառի վերայ էին սարսափ բերել։

Այսօր ես սատանայի կամակատար, քահանայութեան թուք ու նախատինք Տէր-Մելքսեթը Ղևոնդի հետ Երևանումն էր։

Այսպիսի միջոցը Աշտարակու հարս ու աղջիկները ազատ էին իւրեանց վանդակից, և այս էր պատճառը, որ ցէրերի տակը մի կենդանութիւն էր ստացել այսօր։

Բ.

ՈՒԽՏԻ ԳՐԱՒԱԿԱՆԸ

Մանուշակի՝ վերայ ոչինչ ազդեցութիւն չարին Ցախտակալապ այրերը. նա Սանդուխտ տատի հետ մի քանի անգամ մտել էր։

Պառաւը թէպէտ ինքը կարծում էր և ամբողջ գիւղն էլ համոզուած էր, որ կանանց միջից միայն իրեն և տղայ մարդկանցից Գէորգ խալֆին էր յայտնի այդ այրերի մուտքը, բայց մտքովն էլ չէր անցկացնում, թէ այս րոպէիս մի երրորդն էլ քայլ առ քայլ հետևում է իրանց գետնափորների միջով և իրանցից ոչ հեռու մի մութը խոռոչում լռիկ մնջիկ դիտում և լսում է իւրեանց շարժուածքն ու խօսեցածը։

Ի հարկէ հարկաւոր էլ չէր կանանցը այսպիսի նշանաւոր տեղերի մուտք ու ելքը ցոյց տալը։ Այս այրերը գիւղի ամրոցներն էին, որոց մուտքը իբրև սուրբ գաղտնիք գիւղի իշխաններին միայն աւանդւում էր իւրեանց նախնիներից, և անկասկած Ղևոնդն էլ պէտք է

իմանար, եթէ նորա հայրը դեռ մանկութիւնից նկատելով իւր որդու անպիտան բնաւորութեան հետքերը, չպահէր այս խորհրդաւոր տեղի գաղտնիքը։ Նա այդպէս էլ արեց. իւր մահուան ժամանակը յայտնեց իւր հօրեղբօր որդի Գէորգ խալֆին [1] և Տէր-Յարութիւնին։ Սանդուխտը միանգամ Ղևոնդի մօր հետ աղցանի գնալուս նրա հետ մուտք էր ունեցել այրը։

—Մենք հիմի էստեղ մէն մենակ ենք, Աղամայ որդու հոտ չըկայ մեզ մօտ, Մանուշակ ջան, խօսեց Սանդուխտ տատը, ծառայ ու մեհտար [2], թուրք ու շուն էլ անհանգիստ չեն անիլ մեզ իրանց դող աչքերովը, սատանի չաքուճ Տէր-Մելքսեթը, նրա հոգին հուրն յաւիտեան դժոխքական ընի, էլ քեզ զզուացնիլ չի, էլ իր սևացած ժանիքը բաց արած՝ լըբածիծաղ չի տալ երեսիդ, որ բալքի թէ [3] մի թալաքի [4] մէջ քցի քեզ. դէհ խօսի, բաց արա սիրտդ, էլ ամաչկոտութիւնը դէն քցիր. դու գիտես, որ ես օր քեզ համար մէր եմ, ես եմ, հընկեր եմ, էլի իմ չոր գլուխս ա։ Էն օրից՝ որ դու ոտդ կտրել ես լուսահոգի Տէր Յարութիւնենց շեմքից, էն օրից՝ որ Սուսամբար տէրտէրընկայ քաղցր աչքը վերցդ պակսել ա, էլ ո՞վ ունիս սրտէ ի սիրտ բարեկամ։ Ես իմ չորացած գլուխս մէնակ հօ քեզ չէ պահել մենծացրել, ես իմ ուռիպէս դողացող կռներս քո հօրդ էլ են գրկել ման ածել։ Էն երեխութիւնի յիշատակն ա, որ հօրդ պէս քարասիրտ մարդը, քէչ թէ շատ՝ ինձ պատւում ա։ Ա՜խ, սիրտս մղկտում ա, որ միտքս ա գալիս, թէ ինչքան սիրելի, թմփլիկ [5] երեխայ էր։ Ես մաթ եմ մնացել [6], թէ էն Աստծու գառը, էն հրեշտակ Ղևոնդն ի՞նչպէս փոխուեց։ Քսան տարին մօտ էր, որ պսակեցինք, իրանից մեծի մօտ երկու խօսք չանգալով չէիր կարող բերանիցը դուս քաշել։ Խեղճ ողորմածիկ պապդ, լիս դառնայ նրա հոգին, դրախտումը ծլվլայ, մի մին ասում էր.—ես իմ տղի քիթ ու պռունգից վախում եմ։ Աստուած իրան դատաստանը քաղցր անի, հոգին վկայում էր։ Խեղճը պսակեց, տան կառավարչութիւնն իր ձեռը տուեց, համա սրտումը տուն տուեց [7], ինչքան լսի բաժին մենծ Տէր-Մարտիրոսը մի օր քարոզեց իրան, որ ես Ցախտակալապ յէրերի մուտը շանց տայ [8], նա անկաջ չարեց։

---

[1] Վարժապետ կամ առաջին աշակերտ։ [2] Ձիապան։ [3] Գուցէ։ [4] Որոգայթ. [5] Կայտառ [6] Զարմացել եմ։ [7] Նախագուշակեց։ [8] Ցոյց տալ։

—Չէ՛, որ չէ՛, տէրտէ՛ր ջան, աջիդ մեռնեմ, ասաց. ինձանից էլածի բնութիւնն ինձ լաւ այան ա [1]). իմ անունը պարզացնողն իմ հօր-ողբօր տղայ Գէորգը պտի ըլի. քահանէքանց միջից էլ քո տեղդ Տէր-Ցարութիւնը պտի բռնի. էս երկուսը հերիք են, ես սրանց կը-տանեմ, մօքի բերնին կըկաննացնեմ, ինչ որ ասելքն է, կասեմ: Էս խօսքերը իմ խլանալու անկաջովս լսեցի, հոգի ունիմ տալացուկ, ձեռներս խաչած գաբրելական փողին ոչ արժանի ըլեմ, թէ որ մի խօսքը սուտ ա:

—Լաւ ա, լաւ, Սանդուխտ տատի՛, էլ երդում հաւատ ծո՞ւր ես անում, էդ հօ նոր բան չես ասում, հարիր հետ պատմել ու մոռացել ես. էլ ժամանակ չըկորցնենք, դու ասում էիր, որ խօսալու բան կայ, պատմի՛ր տեսնենք. էգուց հէրս Երևանից յետ կըդառ-նայ, էլ յետ չորս պատի մէջ կըփակուենք, էլ յետ ոտ ու ձեռքներս էլ ու լեզուներս էլ կըկապուեն: Ա՜խ Աստուած, մի լես ու ճար պտի անե՞ս ինձ, մի օր կըպրծնե՞մ էս գերութիւնից, թէ պտի փթիմ ու ջահէլ արևս ժուռումուռ [2]) չորանայ. գոգնոցի ծայրով աչքերը սրբելով ասեց Մանուշակը:

—Սրտիդ մի՛ առնիլ, աչքերիդ մեռնի Սանդուխտ տատը, մայ-րական գթութեամբ երկու դողդոջուն նիհար ձեռքերով առաջ քաշեց պառաւը կարմրատակած հեւկլտոց օրիորդի գլուխն ու ար-տասուախառն աչքերը համբուրեց. Աստուած ողորմած ա, քու պա-հապանը, քու տէր ու տիրականը սուրբ Կիրակէն ա, որի գմբէթի առաջին ամէն կիրակնամուտ լիս ես վառում. երեսս նրա ոտի տա-կը, նա քեզ չի թողալ էդպէս հալու մաշ ըլելու, այ, հալուե՛ ու մաշուե՛ իմ ջանս:

—Է՜հ, Սանդուխտ տատի՛, քո էդ մխիթարական խօսքերն են ինձ սրտաւորում, պահում, թէ չէ իմ օրս ի՞նչ ա. աչքս բաց արած օրից ոչ մօր քաղցրութիւն, ոչ հօր անուշ երես եմ տե-սել, իմ մուրազախափան մօր պակսելուց յետոյ դու ես էլել իմ ուրախութիւնն էլ, իմ պահողն էլ. մի քանի ժամանակ Սուսամ-բար տէրտէրընկայ ձեռի տակին, սաքի, [3]) աչք բաց արի, Վարդի ու տէրտէրի երեխեքանց հետ խաղալով մի քիչ սիրտս բաց էր ըլում, բայց էն բոլորն ինձ համար՝ ոնց որ մի երազ: Ա՜խ, ի՞նչ

[1]) Յայտնի է. [2]) Տհաս. [3]) Իբր թէ.

կըլէր ես նրանց տանը մեռած ըլէի ու հիմի օրս էսպէս սև չէր ըլել, նրանց տանից սրտիս մէջ պահած մի յիշողութիւնի համար ես հիմի քո առաջին կարմրել, քրտնել չէի... Ա՜խ, ես ընչի՞ չեմ կարողանում սիրտս բաց անել քեզ մօտ....

—Դու էլ քու մէջը կարծում ես, թէ տատիդ թաքուն ա սրտիդ խորհուրդը, դու. հէնց իմանում ես, իմ աչքի տակիցը փախչում են քո ժաժ ու մաժ գալդ. դրանով սրտիս սին ես տալիս, յուսով լցնում ես ինձ: Շատ կարելի ա, Մանուշակ ջա՛ն, վաղուց քո մօր ոտի հո-ղին ես էլ արժանացած կըլնէի, համա [1]) իմ սիրտս իմանում ա, որ Սիամօն ծերունու պէս դեռ պտի բաց աչքով, ուրախ սրտով տեսնեմ քո բաղդաւորութիւնը, յետոյ աչքերս փակեմ: Ասած ա. մարդ իր մեռնելու օրի վերայ չպտի խօսի, համա ի՞նչ կանես, որ ես աշկարայ առաջիս տեսնում եմ, որ սուրբ Կիրակու զօրութիւնովը քո մօր սրտի սմթլը [2]) կատարուելու ա. ես քեզ բերել եմ ըստեղ լուսահոգի Համասփիւռ խանումիս խորհուրդը պատմեմ:

—Հոգիս հանեցիր, տատի ջան, էլ քանի՞ ձգձգես:

—Չէ, որդի՛, դեռ դու պտի քո բերնովը խոստովանուես քո հալ ու մաշ ըլելու պատճառը. ընչանք չասես, մի խօսք չեմ հա-նիլ բերանիցս, կըպապանձուիմ, կըլռուեմ, կըմնամ. համա քեզ ասեմ, մի սուտ որ խառն ըլի, էլ ոչ ես՝ ոչ դու:

—Ստասան էլ չինեցի՞ր, տատի ջա՛ն, մի օր իմ բերնիցս մի սուտ բառ դուս էկե՞լ, որ հիմի հաւատում էլ չես, էդքան էհ-տիբարս [3]) կտրուե՞լ քեզ մօտ:

—Չէ որ ամանչկոտութիւնը քու բերանդ կըբռնի, կամանչես մի ջահէլ-ջիւան [4]) աղջիկ՝ մի գզզուած [5]) պառաւի մօտ սրտիդ սըր [6]) յետ բացանել. քանի՞ հետ, ասա, տեսնեմ, մին ուզեցել ես սրտինդ թափ տալ առաջիս, մին էլ, նալա՛թ [7]) չար սատանին, ասել ես ու թողել. դու էլ, էն է, քո միջումը կարծել ես, թէ պառաւը բան չը-հասկացաւ: Լաւ էլ հասկացել եմ, լաւ էլ էրուել փոթոթուել եմ իմ միջումս, համա ծպտունս կտրել եմ. [8]), ուզեցել չեմ քո ան-մեղ հրեշտակի պէս սիրտը խռեմ: [9]) Հիմի էլ էս բանը չէի անիլ. ի՞նչ կանես, քոռանան էս աչքերը, տեսնում եմ, որ օրէցօր թառամում,

[1]) Բայց. [2]) Ուխտ. [3]) Վարկ. [4]) Դեռահաս. [5]) Զառամեալ. [6]) Գաղտ-նիք. [7]) Անէծք. [8]) Լուռ. [9]) Քանդել.

չմնկում ես. մին էլ վախում եմ, որ մի քշեր Գաբրիէլ հրեշտակը գայ իմ մեղաւոր անարժան հոգին ուզի, ու ես պարտական մնամ քո լիս դառած մօրը. նրա իմ վրայ դրած բեռը ցեց ա դառել, սիրտս կծոտում: Դէհ, բացն ասա, Մանուշակ ջան, ո՞վ ա քու քաղցր քունը խլել, ո՞վ ա քու հանգստութիւնը փախցրել:

—Ի՞նչ ունիմ, տատի, մխիթարուելու, որ ուրախանամ:

—Ջէ, ասաց պառաւը ձեռը բարձրացնելով խրոխտաբար, քանի՞ թագցնես, Վարդն ա քու քունը կտրողը, սուտ ա՞:

Ամօթխածութիւնը իւր թեւերը փռեց մի վայրկեանի մէջ համեստաբեմ աղջկայ վրայ, Վարդ անուան յանկարծական ազդեցութիւնից նրա գլուխը ինքն իրեն քաշ ընկաւ գեղեցիկ կուրծքի վրայ և նայեց աջուձախ լանջի վրա դրած երկու փոքրիկ բլրակներին: Ճակատից քրտինքը ջրի նման առաւ եղած փոքրիկ քթի երկու կողմից՝ բոլորակ ծնօտի վրայից կաթիլ-կաթիլ թափվում էր երկու բլրակաց հովտի մէջ, որի վերին մասը մի մատնաչափ տեղ բաց երեւում էր մարմարանման, իսկ ցածը՝ փակուած էր կարմիր ղանաւուզի [1]) շապկի վերայ կախ արած մարգարտաշար ոսկէ կոճակի շնորհիւ: Տեսնել արժան էր, թէ ի՞նչ աննման պատկեր էր ներկայացնում այս չքնաղ կոյսը այս րոպէին. ինչպէս ակամայից բարձրանում և իջնում էին ամբողջ կրծքի տախտակի հետ երիտասարդների կեանք հալող երկու բլրակները—նրա կուսական ստինքը. Թէ որքան հրաշալի էր Մանուշակը իւր կորացրած աչքերով, այդ Սանդխտին չէր տուած դատելու. այդ զգալի էր նոյն ժամին այն տեղ մթնումը աչքերը պլշացրած, նրանից վերայ տնկած և շնչառութիւնը հազիւ պահող երիտասարդին: Քիչ մնաց ինքն իրան մատնում էր նա, բերանը բաց էր մնացել և Մանուշակից ոչ պակաս բարձր ու ցած էր անում նրա կուրծքը, մի մազաչափ մնաց, որ իւր ներկայութիւնը յայտնվում էր: Երկու խօսակիցները, արդարև, մի ուրիշ շնչառութեան ձայն լսեցին, երկուսն էլ մի րոպէ սթափեցան ու ականջները սրեցին, բայց աներեւոյթ անձնաւորութիւնը պինդ կծեց առաջին սուր ատամներով լեզուի ծայրն և նախկին անշարժ դրութեան մէջ մնաց:

—Ո՞վ կըլնի բաեղ, ասաց գլուխը կրկին ցած թողնելով Մանուշակը, մեր շունչն ա յերի քարափներին գլպչելով ձէնը յետ մեր անկաճը քցել:

[1]) Կերպաս է:

Խեղճ աղջիկը կարծեց արձագանքը:

—Երեւդ քո տեղակ լեզու ա էլել խօսում, Մանուշակ ջան, պատասխանեց պառաւը, մի անգամ հա՛ ասա ու պրծի, էլ ինչ ես ամանչում:

—Հա՛, Սանդուխտ տատի, հա՛, վճռաբար ասաց աղջիկը՝ մատը վեր բարձրացնելով. Նրանից որ թագուն չի, քեզանից ինչ պահեմ, իմ ուշքումիտքս, խելքս, սիրտս էն աղքատ, որբնների ծերից ոտի մատները դուս պրծած տղի վրայ ա. նախրչի՝ [1]) հօրս գզեր Մամունկի տղայ Վարդի վրայ եմ քշեր ցերեկ միտք անում երեխունութիւնից, հենց տէր Յարութիւնենց տանից՝ նա սրտիս մէջ նստած ա. չգիտեմ, յիմար եմ, թէ ինչ, որ թողած մեր գեղի համիէքանց [2]) ու իշխանների տղէքանցը, մի անտուն-անտէր ուրիշի հացին կարօտի վրայ եմ միտք անում: Դու էլ գիտես, որ հենց էս սհաթն էլ տիրացու Ներսէսը երկու սաս մի մաշիկ ա դրել, [3]) համա որ կպչում չի: Նրա գլի նման միտս ա գալիս մեր երեխութիւնը, որ տէր Յարութիւնենց բաղչումը ալերմաղիների [4]) պէս նրա երեխեքանց հետ ծաղկների մէջ տափկենալուկի [5]) էինք խաղում. ես ինքս ինձ ու ինձը գնում էի Վարդիցը բռնվում, խելքս գնում էր հետը. Խեղճ Թորոսը, որ հիմի Ներսէսն ա, պռօշները կծոտում էր, որ չէր կարում ինձ գտնել: Էն օրուանից ընչանք հիմի էն սէրը սրտիս մէջը հա կա՛յ ու կա՛յ. բաց ասեմ, ո՛չ ամանչեմ, Վարդի ղունդը ողջ աշխարհքի հետ չեմ փոխիլ, ընկի [6]) ինքս էլ չըգիտեմ, ընչի՞ համար: Հենց իմանաս, թէ էս ցաւը նրա ջանն էլ ա մտել. շատ քշեր ձմեռուան բուք ու ձներին մէջ տեսել եմ նրան մեր դռանը պատի տակին, ուսը ծակ եափունջին [7]) ծածկած՝ լռացրել ա. լաւ էլ սիրտս կտոր կտոր ա էլել, համա ոչ քեզ եմ մի բան ասել, ո՛չ իրան մի նշան ցոյց տուել: Աչքի պոչով կուժն ուսիս, առաւօտները ջրի գնալուս մտիկ եմ տուել ու աչքիս լիսը քաղուել ա, երբ որ տեսել եմ տրեխը տասը տեղից կարկատած ու ոտի բութը միջիցը դուս եկած:

—Ասում ես, որ ոչ մի խօսք կամ նշան չե՞ս արել նրան:

—Թող Աստուած ինձ պատժի. շատ էլ ուզեցել եմ, համա

[1]) Նախրորդ: [2]) Հարուստ: [3]) Ստիպել: [4]) Թիթեռնիկ: [5]) Խաղ է երեխայական: [6]) Երբէք: [7]) Վերարկու:

կարող էի՞, կամ կըհամարձակուէի՞, հօրս բնութիւնն ինձ յայտնի չէ՞, իր շուաքիցն էլ խրտնում ա. կամ թէ չէ էն անխղճմտանք տէր Մէլիքսէթը որ իմանար, ի՞նչ կըլնէր խեղճ տղի օրը. միտդ չէ՞, որ անբաղդ Վարդի հէր Մանուկն էլ էդ երկուսի խաչովը խաչուեց. մի օր էլ կըլսէինք, թէ Վարդն ա մի փոսի մէջ խեղդած՝ վէր քցած՝ կամ քարափիցը ցած ընկած:

—Էլ պահելու ոչինչ չունիմ, վճռաբար ձեռքը թափ տուեց Սանդուխտը, քեզ հարկաւոր ա քո գլխի գալացուկն իմանաս, պըստիկ չես, տարիքդ էն ա հասել են, դու Ասանից Վարդին բուլթայ[1]) ես տուած, անկարելի ա, որ մի օր դուք ձեր փախագին չըհասնիք: Սուրբ Կիրակու դռանը քո օղորմածիկ մէր համասփիւռ խանումն ու Վարդի մէրը ձեր գլուխը կապել են, ուխտ են դրել. ձեր էդ սէրը Աբէլայ մատաղի պէս Աստծուն ընդունելի ա:

Պառաւը երկարօրէն պատմեց Մանուշակին այս գաղտնիքը, որն ընթերցողը հետեւաբար կը կարդայ միւս գլուխներումը կարգին նկարագրուած:

Քո պարտքիցը պրծայ, շարունակեց պառաւը, էնքան չմեռնիմ, Վարդին էլ հասկացնեմ իր գլխի գալացուկը: Էս բանը հիմի յայտնի ա ինձ՝ քո հօրդ ու Գէորգ խալֆին: Մի քանի վախտ մօրդ նոր մեռած տարին հէրդ միտք ունէր Վարդին յառաջ քաշելու, դրա համար էլ Մանուկին իր մօտ վեր առաւ, համա էլ յետ չարն սատանէն տէր Մէլիքսէթի լեզուով նրան ճամփից հանեց. խեղճ Գէորգ խալֆէն էլ՝ ի՞նչ անի, յոյսն առ Աստուած դրած՝ սպասում ա:

—Տատի՛ ջան, ոգեւորուելով ասաց աղջիկը, հիմի ինձ գիւղլէն[2]) քեար[3]) չի անիլ, դու ձեռիդ ճար ունես, Վարդին էլ իմաց տուր, չես տեսնո՞ւմ, որ օրէցօր սրտամաշ ա ըլում խեղճը:

—Աւելորդ ա, Սանդուխտ տատի՛, նեղութիւն մի՛ քաշիլ, ես ամէն բան իմացայ: Հիմի էլ հօ չէ՞ք բարկանալ ինձ վերայ, որ համարձակուեցի ձեր քամակիցը տուն մտնել ու ղլի[4]) նման էս քնջնումը կուչ գալ. ի՞նչ անեմ, Մանուշակի սէրը քաշեց ինձ, բաշխեցէ՛ք մեղքս, Աստուածանից որ չըլնէր, ոտներս յէրի դռանը կը չոնթանային[5]) ու տուն չէին գալ. լսի բաժին ըլի՛ն մեր մէրերը, նրանց սրտի խորհուրդը հիմի ինձ լաւ յայտնի ա: Մութն անկիւնից

1) Նախասահմանեալ սիրահար. 2) Գնդակ: 3) Ազդեցութիւն: 4) Ծառայ: 5) Խեղդանալ.

դուրս ընկած՝ Սանդխտի ձեռքը անդադար համբուրելով ներողութիւն էր խնդրում նախրչի Մանուկի տղայ Վարդը:

Երկիւղը, զարմանքը, ուրախութիւնը խառնուեցան միմեանց. ամօթխածութիւնը կրկին միջոց տուեց Վարդին մօտիկից տեսնել համարձակ փոքր ինչ յառաջ անցած տեսարանը՝ աղջկայ կրծքի ել և էջը:

—Ձեր երկուսի մօր տեղակ ես հիմի իմ անարժան բերանովս օրհնումեմ ձեզ, որդիքս, բարով գութ ու խնամք ընկնի իմ աղէ սիրտը ու դուք ձեր սրտի մուրազն առնիք: Համա, ձեզ մատաղ, թէ իմ պառաւ գլուխս սիրում էք, զգուշ կացէք, ընչանք որ Աստուած օրը կըտայ, բարին հետը, ձեր մէրերի աղօթքը բարեխօս կըլնի ձեզ համար:

Պառաւն երկուսին էլ գորովանօք համբուրեց և առաջ ընկաւ գետնափորից դէպի լոյս աշխարհ:

Շատ կարելի է մտքումն էլ չանցկացրեց Սանդուխտը, որ երկու սիրահարները կարող էին իւր քամակիցը գնալուս տալ միմեանց առանց ձայն ու ծպտուն[1]) հանելու յաւիտենանս անբաժան լինելու

:ուխտի գրաւականը

Առաջին ջերմ գրկախառնութեան առաջին համբուրի կենդանի վկան եղաւ Տախտակակապ այրերի մութ անկիւններից մինը:

Արեւն արդէն դէպի արեւմուտք էր ծռւում, երբ պառաւ Սանդուխտն ու իր սանը խառնուեցան աղջանաւորների հետ և գոմշախրամի քարքարոտ խրամով[2]) վերև բարձրացան:

Ազապ[3]) տղէքն աղջկանց քամակից դուրս եկան ձորից և բաժանուած նրանցից պարերգի լէլէն երգելով՝ կարծես հարսանիք էին գնում:

Մեր տղէքանց միջից պակաս էր մինը: Նա Վարդն էր, որ այրից դուրս եկաւ և առուի թմբումն շապեց, առաջկտրուկ արեց ու ջաղի[4]) ձորակի քարերից մէկի գլխին նստեց:

Գ.

ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿԷՆ

Հայոց ազգի պատմական յիշատակարաններին ծանօթ լինողը, նրա կրած անհամար թշուառութիւնների նկարագիրը իմաստասի-

1) Շշուկ: 2) անցք: 3) Ամուրի, կոյս: 4) Մարդու անունն է:

բոլորովին մեծապէս կը զարմանայ, եթէ մի հետաքրքիր հայեացք ձգի նոյն ազգի ընտանեկան կեանքին. չկայ, կամ թէ շատ քիչ կը լինի աշխարհումս Հայոց նման մի ազգ, որ իւր բազմատեսակ նեղութեանց և հալածանաց մէջ մի վսեմ ձգտմամբ ոգևորութիւն ստանար, որին կրօնի սուրբ յոյսն այն աստիճան վառէր, բորբոքէր, որ մի կողմից իւր վիզը թշնամու կացնին դէմ անէր, միւս կողմից սուրբ տաճարներ աճեցնելու հոգսը քաշէր:

Հայաստանի որ կողմն աչքդ դարձնես, քեզ կը զարմացնեն հրաշալի տաճարների ու վանքերի աւերակները. չես գտնիլ մի գիւղատեղ, ուր երբեմն մի քանիսը մեր նախնիքներից բնակուած լինին, ու ամենասակաւը մի երկու սրբատաշ կոփածոյ քարից աւերակ չը լինի:

Այդ աւերակների դռների ու լուսամուտների վրայի քանդակագործ նկարները մարդու աչքն են ծակում և սիրտն են խոցում. ես միայն մի հայրենասէր հայի համար չեմ ասում. հարցնենք Հայաստանն այց ելանող Եւրոպացի բանասէր ճանապարհորդներին. նրանք մեզանից աւելի ցաւում և ափսոսում են:

Մի տեղ տեսնում ես մի դատարկ պատի հետք, նրա մօտ մի խոտով ծածկուած բլրակ. մօտ գնա, բահի կամ բրիչի ծայրով փոքր ինչ քանդքնտրրի՛, և ահա ի՛նչ կընկնի աչքիդ. հիանալի խաչքարեր, արձանագրութիւնների կտորտանք, քարերի վերայ փորուած գեղեցկաքանդակ կենդանեաց ոտքի, կամ գլխի, կամ թևի կտորներ: Մի ուրիշ տեղում անցկենողի աչքից արտասուքները բռնի դուրս են քաշում չորս քայքայուած ու խախտուած՝ միմեանցից հեռացած հաստ պատեր, որոնց վերայ անարատ մնացել են հրացանի գնդակների նշաններ, կամ թէ մուրճերի հետքեր. աչքդ վեր բարձրացրու, պատերի վերին մասի վրայից դուրս են ցցուած երկու փոքրիկ պատնէշներ մի փոքրիկ լուսամուտանման ծակաբերանի վերայ հովանի եղած՝ ձկան միջքի նման՝ մինն այս և միւսն այն կողմից միմեանց պինդ սխմած՝ վահան դարձած: Սրանց պաշտօնն եղել է այդ շինութեան ներսի պատսպարուածներին պաշտպանել արտաքուստ այդ ծականման լուսամուտներից գալիք թշնամու հրացանի գնդակների հարուածից, իսկ միւս կողմից էլ միջոց տալ անհամար գնդակներ ներսից թշնամու վերայ թափելու:

Մի երրորդ տեղում բոլորովին նոր և ամուր կանգնած է դեռ մի պատուական վանք՝ քարափի գլխին՝ այգու մէջը՝ կամ մի ձորա-

միջում. փոքր ինչ հեռուից կարծում ես, թէ դեռ այսօր այդ մեծ շինուածքի վարպետն իջել է գլխից, բայց մօտեցի՛ր, ո՛հ, ի՛նչ ցաւալի տեսարան, երկրաշարժն արդէն իւր կործանիչ ոյժը փորձել է դրա վրայ, ահագին ճեղքուածքներ պատերի վրայ մարդու վստահութիւնը կտրում են ներս մտնել: Բայց նայի՛ր այդ վանքի պատերի քանդակագործ արձաններին, տե՛ս հայկական դրօշները—արծիւ, առիւծ, Մասեաց սարը, եօթնագլխեան վիշապ և այլն, ինչպէս խրոխտ դուրս ընկած ողորկ պատի վրայից, քեզ յիշեցնում են քո նախնեաց փառաւոր անցեալը: Բայց չե՞ս ուզում հետաքրքրուել, թէ մեր հնաւրագէտ պապերը ի՞նչպէս ճիշդ որոշել են ժամանակը. տե՛ս հարաւային պատի վրայ կամարակապ դռան գլխին արեգակի ժամացոյցը ի՞նչպէս գիտնական ճշդութեամբ շինուած է. Հայոց նշանագրերն են ժամի որքանութիւնը ցոյց տուողը. իսկ միջակէտում ցցած մինն է իւր ստուերով ժամերը որոշողը: Այս ցորեկուան ժամերն են: կուզե՞ս իմանալ, թէ մեր նախնիքը գիշերն ի՞նչպէս էին չափում ժամանակը: Ամեն մի գիւղացի բնական աստեղագէտ էին, աստեղների համակարգութիւնները, մոլորակները և այլ ուրիշ փայլուն աստղերը մեր գիւղացուն ժամերի տեղ են ծառայել, դրանց ամեն մէկին նա իւր կեանքից առած անուններ է ստեղծել ու գործ ածում: կարելի է դու կեանքումդ չես էլ լսել.—Բազումք, Շամփուր-կշեռք, Խաչ աստղ, Խէչանենց աստղ, Լուսաստղ, Դարմանագող, Քարվան կորող և այլ այսպիսի անուններ. սրանք երկնային գիշերուան լուսաւորներն են, սրանք Հայաստանցու գիշերուան ժամացոյցն են:—Տե՛ս Բազումքը դո՞ւս եկել, կամ Խէչանենց աստղը Շամփուր կշեռքին մօտեցե՞լ ա, ոչխարն արօտ քշենք, դուրս է զրկում մի աւերակ վանքի միջից մի հովիւ իւր ընկերին: Մէկ էլ տեսնես լուսնի պայծառ լուսի առաջնորդութիւնով ամբողջ հօտը դուրս եկաւ վանքի միջից և ցրուեցաւ սիզաւէտ դաշտը: Քաղցր է, այո՛, այս բնութեան հարազատ որդի—հովուի սրնգի ձայնը հեռուից լսելը, երբ նա մի պայծառ գիշեր վանքի պատին կռթնած՝ սար ու ձոր զմայլեցնում է: Մեզանից ոչ պակաս ախորժանքով լսում է Հայ ճանապարհորդը մի ձի, կամ եզը կամ էշ իւր գիւղի բարեկամներով բեռնած՝ երբ նա գնում է օտար գիւղեր ծախելու կամ նրանց բերքի հետ փոխելու: Ո՞ր եւրոպական երաժշտութիւն կարող է այնքան ներդաշնակ ազդել սրա սրտին, ինչպէս մեր հովուի սրինգը: Բայց մի և նոյն ժամանակը ո՞վ է այնքան ցաւ, այնքան վիշտ զգում,

ինչպէս մեր ճանապարհորդը, երբ որ իւր պապերի դառն քրտինքով ու ջերմեռանդութեամբ շինած սուրբ յիշատակարանները էս օր անասունների բնակարան է տեսնում։

Այս աւերակներից մի քանիսն էսօր ճակատը դէմ տուած՝ դարերի մաշող զօրութեանն ընդդիմացած՝ որը կիսաքանդ, որը չէն և որը հազիւ հետքը երևելով մնացել են Աշտարակումը։ Ծիրանաւոր, Սպիտակաւոր, կարմրաւոր, Սուրբ Մարիանէ, Սուրբ Սարգիս, Թուխ մանուկ, Ամենափրկիչ, Սուրբ Կիւրակէ, սրանք իւրեանց մի քանի ժամանակի հոսանքից յետ խլած արձանագրերով հասցնում են Աշտարակի գոյութիւնը շատ հին դարերի։

Այս վանքերը ոչ միայն ինչպէս աղօթարան են ծառայել ջերմեռանդ հայ-քրիստոնեաներին, սրանք բերդ ու պաշտպան են եղել թշնամու յարձակմունքների դէմ, սրանք պահարան են եղել նուիրական աւանդների ու գիւղի թանգագին իրերի։ Օտարը երբէք չի կարծիլ, թէ այս վանքերի պատերի մէջը մի նշանակեալ տեղ դատարկ է. թշնամին ամենևին չէր կարող մտածիլ, թէ իւր հալածած հայերի այս աղօթատունը, որ հիմի իւր աչքին մի դատարկ տուն է ներկայացնում՝ մի քանի պատերի վրայ քաշած նկարներով, պէտք է թագցրած ունենայ իւր մէջ շատ իւր ագահութեան կերակուր գանձ։ Հմուտ ճարտարապետը այնպէս չի շինել պահարանների մուտքը, որ անտեղեակ օտարը կարողանայ ծիծաղել իւր վերայ։ Նթէ պատահել է, որ բռնաւոր տիրապետողը իւր շահամոլութիւնը լցնելու համար չունեցնելու[1]) հրաման է տուել, մեր քաջ պապերը մի կողմից իւրեանց դուրս գնալու պատրաստութիւնն են տեսել, միւս կողմից գիւղի հազուագիւտ բաներն այս ամուր պահարանների մէջն են ածել. մի քանիսն էլ վանքի կտերն են ամրացել, կռիւ են տուել և պահապան կացել։ Շատ անգամ մի փոքրիկ գիւղ բոլորովին տեղաւորուել և պաշտպանուել է այս վանքերի կտուրներումը։ Դեռ կենդանի են շատ ականատեսներ, որոնք Աշտարակումը Ծիրանաւոր եկեղեցու կտեր բաժնի մէջ ամիսներ են անց կացրել իւրեանց ընտանեօք։ Ո՞վ կերևակայէր, թէ այդ միապաղաղ չորս պատը երկու եկեղեցի ու ժամատուն է իւր մէջ պարունակում. կտեր բաժնումն էլ եղել է սեղան ու ժամատուն. Երբ կարող էր պարսիկը մտքովն անցկացնել, թէ իւր մտած՝ այդ

[1]) Թշնամին։

դուռը բաց դատարկ եկեղեցու գլխին Աշտարակ գիւղի մեծ մասը հիմա նստած՝ դիտում է իւր ամեն մի քայլուածքը։

Մեզ յայտնի չէ, թէ սուրբ Կիւրակէն ո՞ր տեսակից է եղել, ժամանակը նրան կուլ է տուել. իսկ իբրև կենդանի վկայ և Աշտարակու գլխաւոր պաշտպաններից և բարեխօսներից մինը մնացել է Շուխոնց կոչուած ձորաբաշի այգումը գլխի վայր ընկած սուրբ Կիւրակէի կաթուղիկէն։ Քանի՜ քանի տէրերի ձեռք է ընկել այդ այգին, բայց նրանցից ոչ մէկը չի վստահացել արգելել Աշտարակու ուխտաւոր կանանցը ամեն շաբաթ երեկոյ մի ճրագով ձէթ ու խունկ բերել ու վառել երեսը երկինք դարձրած Կիւրակէի գմբեթի մէջ։ Սուրբ Կիւրակէն շատ մուրազներ է[1]) կատարել և մինչև հիմի էլ ամեն մի աշտարակցի կին-արմատ պատմում է պարծենալով Սուրբ Կիւրակէի իւր վերայ արած հրաշքը։ Զքնաղագեղ Աշտարակու հարս ու աղջիկները համբարձման չորեքշաբթի օրը՝ Ծաղկաքաղին դէպի Պատուաղջիկները լակոտը ծաղիկ քաղելու գնալուս, կամ թէ գարունքը այգիներումը աղջանի մանգալու ժամանակը՝ մինչև մի մի ուխտ չը դնեն Սուրբ Կիւրակէի կաթուղիկէի մէջ, մեղք կը համարեն այն տեղից անցկենալը։

Սուրբ Կիւրակէն ալևոր ծերունու տեսքով սրանց շատերին երևացել և ուխտը կատարել է, մեռնիմ նրա սուրբ զօրութիւնին։ (Այստեղ, ընթերցող, ես երեսս խաչակնքեցի, դու էլ ինձ հետևի՛ր։)

Դ.

ՈՒԽՏ, ԿԱՄ ՎԱՐԴ ԵՒ ՄԱՆՈՒՇԱԿ

—Ողորմի Աստուած, Շուշա՛ն, աղջի՛, էդ ի՞նչ շուտ լեզդ վառել յետ ես դառնում, ասաց մի շաբաթ երեկոյ ժամից յետոյ Ղևոնդ աղի կին համասփիւռը Նախրչի Մանուկի կնոջը՝ մի դդում լիքը ձէթ ու թղթում կոլոլած խունկ ձեռին, երբ որ նա նոր ուզում էր ոտը դուրս դնել Շուխոնց այգու դռնակիցը։

—Ողորմի ծնողացդ, խանում, խոր գլուխ տալով պատասխանեց Շուշանը. ես շատ վախտ ա եկել եմ, մեռնիմ Սուրբ Կիրակոսի տակին։

[1]) Խնդրուածք։

— Սուրբ Կիրակին պահի քո տղէն. աղջի՛, ես լսել եմ, որ դու ամէն չորեքշաբթի ու կիրակնամուտ իրիկուն, տարին 12 ամիս անխափան Սուրբ Կիրակումը լիս ես վառում, իրաւ ա՞:

— Ընէնց ամէն հայ-քրիստոնի սրտի խորհուրդը կատարի՝ ձեռն առ Աստուած բռնած՝ Սուրբ Կիրակին, ոնց որ իմ սրտի մուրազը կատարեց, երեսը դէպի Կիւրակէի կանթուղկէն դարձնելով ու խաչակնքելով պատասխան տուեց Շուշանը. ծառայեմ սրա զօրութիւնին, քիչ բան ա արել ինձ համա՞ր, որ չը գամ. քանի շունչս ղնկիս ծէրին ա, շաբթէն երկ՛ օր պտի էրեսս սրա հողէն քսեմ. իմ մինուճար Վարդս սրա մատաղը չի՞, սրա բաշխածն ու պահածը չի՞:

— Աղջի՛, ո՞նց:

— Միտդ չի՞, խանում, որ մի քանի ժամանակ ես պտղում չէի. էլ մօլլա, էլ գրբաց, էլ փալչի [1]), էլ նեար գնող [2]) չը մնաց, դռներումը քաշ եկայ, որ բալքի Աստուած ինձ խնայի, մի որդի տայ:

— Ա՛խ, հիմի ես եմ քու օրումը, երկուսհալթ չը կայ, որ Գռենց Բեչանի կնիկը մօտս էր, նեան էր գնում: Մաղը ձեռն առաւ, երեսին խաչ քաշեց, սուրբ Կիւրակու անունը տալն ու մաղը աջ պտուտելը մին էլաւ: Թէ որ Աստուած ինձ խեղճ ա եկել, խնդիրքս կատարել, ես էլ քեզ պէս ղուլ պտի դառնամ սրա ոտի տակին:

— Դու գիտես, խանում ջա՛ն, որ ես քո կոխած տեղէն արժան չեմ, ես ի՞նչ կը համարձակուիմ քեզ խելք ու խրատ տալ, համա թէ որ բարկանալ չես, ինձ կը լսես, ինչ որ ես արի, դու էլ արա՛, ու էկող տարի էս վախտ սուրբ Կիրակին քո չոր ծառը կը պտղացնի, քեզ մի որդի կըտայ:

— Ա՛խ, էդ բերանդ տաճար դառնա՛յ, Շուշան ջան, սա՛ս, քեզ մատաղ, համ կը լսեմ, համ շլինքս էլ երկու գազ կը մեկնեմ, ըստեղ հարստի ու աղքատի բան չըկայ, դու սաս տեսնեմ, ինչ արիր, որ քեզ երեխայ էլաւ: Ա՛խ, ես մի մազ պտի ըլէի, քո ոտիցը կախ, էրնէկ չէ՞ր, որ ես էլ նախրչու կնիկ ըլէի ու մի երեխայ ունենայի, քանց թէ հիմի էս կարողութիւնի միջին անորդի, գլխակեր բայղուշ. [3]) Էհ, եարաբ գիտե՞ս թէ հարստութիւնի տակին քանի օձեր

[1]) Հմայող: [2]) Գուշակող: [3]) Բու:

կան թախկացած, մարդի սիրտն են ծծում. ինձ ի՞նչ օգուտ, որ անումս Ղևոնդ աղէ կնիկ ա ու ամօթն ու նախատինքը պռչներիցս կպած. գոզնոցի ծայրով արտասունքը սրբեց Համասփիւռը. քեզ պարզն ասեմ, Շուշա՛ն, ես լաւ կաշէի [1]), մարդս օրէն հացին կարօտ մուրացկան ըլէր, օրն աշխատէր դառը քրտինքով, իրիկունը մի կտոր ցամաք հաց տուն բերէր իր օղլուշաղի [2]) հետ քաղցր ուտէր, քանց թէ էս ողջ աշխարհքի արէն աղաղակն ա մեր գլխին թափւում: Ես շատ լաւ եմ իմանում, որ Աստուած իմ մարդի բնաւորութիւնի համար մեր գլխին քար ա քցել, որդի չի տալի. ամա դէ ես ի՞նչ մեղաւոր եմ: Իրան էլ լաւ յայտնի ա իմ սիրտս, որ կերածս ու խմածս աղի արտասունք ա:

— Է՛հ, խանում, յոյսդ Աստուածանից մի՛ կտրիլ, ամէնքին էլ յայտնի ա, որ Ղևոնդ աղէն մի քիչ լաւ չի անում, էս արար աշխարհքին նեղութիւն ա տալիս, ամա երևում ա, որ էդ էլ մեր մեղքի պատիժն ա, որ քաշում ենք, կասկածելով խօսեցաւ Շուշանը. համա դէ դու ընչո՞վ ես մեղաւոր. ասում ա. էծն իր ոտիցը քաշ կըտան, ոչխարն իր ոտիցը: Ես չեմ կարծում, թէ Աստուած քո մարդի մեղքն ա քո երեսովը տալիս ու երեսը շուռ ա տուել քեզանից: Ի՞նչ էր արել իմ խեղճ մարդը. 12 տարի էր պսակուել էինք, օրը մի կտոր հաց էր աշխատում արևի, անձրևի, ձնի, կարկտի տակին, գեղի տաւարը պահելով, դատածի կէսն էլ մեզանից աղքատներին էր բաժանում, համա էլի որդի չունէինք: Տեսնում ես հիմի, փառք Իրան, երեսս սուրբ Կիրակու ոտի տակը, Նրա տուածից Թագաւորավայել Վարդս աչքիս առաջին պտիտ ա գալիս:

— Աղջի՛, Շուշա՛ն, դու իմ սրտիս մի հաստատ սին տուիր. պատմի՛ տեսնեմ. ես էլ ուզում եմ քո արածն անեմ: Մենք էլ էս ա 12 տարի ա մարդ ու կնիկ ենք. ասենք, իմ մարդի հոգսն էլ չի, նա խաների դռներին խեղճ մարդկանց տունը քանդելով քաշ գալը թողալ չի, որ երեխի վրայ միտք անի, համա, դէ կարելի ա Աստուած իմ դառն արտասունքին խեղճ գայ:

— Ես քեզ ասեցի, որ ամէն դռան ընկայ, ամէն գիտեցողի հարցմունքս արի, օխտն առաւօտ, օխտը տանից անխօս մեղրամոմ հաւաքեցի, ջուր արի, խմեցի, ոչինչ չէլաւ: Մի օր իմ տէքքերանց [3])

[1]) Մտիկ տալ. համարել: [2]) Գերդաստան: [3]) Տագր:

յիքուցը [1]) գալուս, երբ որ ըստեղ հասայ, երեսս դպա սուրբ կիրակին արի ու մօքումս ուխտ դրի, թէ որ սուրբ կիրակին ինձ մի որդի տայ, քանի ողջ եմ, շաբթէնը երկ՛ օր սրա դռանը լիս վառեմ: Մին էլ ինչ տեսնեմ, դագանակը [2]) սին տալով, ժամհարինց ողորմածիկ Սահակ հալեւորը յիքուցը տունն ա գնում. խուշուշքս [3]) ցած քաշեցի, քնթկալս պինդ հուպ տուի, գոտիկս յետ արի ու մօտացայ ձեռը պաչեցի, գոտիկս իրան տուի, գլխով սուրբ կաթուղիկէն շանց տուի ու ինքս առաջ ընկայ: Ի՞նչ ասել ա պէտք, որ էն լիս դառածը մէքինս հասկացաւ:—Աստուած սրտիդ խորհուրդը կատարի, որդի, ասեց ու մօտ եկաւ, սուրբ կիրակին համբուրեց, ձեռներն երկինք բարձրացրեց, գոտիկը մէջքս տարաւ, իրեք հետ հուպ տուեց ու Աստուածանից խնդրեց, որ էնքան ողջ պահի իրան, որ մի երեխայ եկեղեցուցը տուն բերի, գիրկս տայ: Զոքեցի, ոտը պաչեցի ու ընչանք տեղեցս վեր կը կենայի, տեսայ որ հալեւորը չը կայ: Ինչ ես ասում, խանում, ինն ամսի գլխին Վարդս աշխարհք եկաւ, որ ասես, մի օր աւել պակաս չը կայ: Էն օրուանից դէսը մի օր սրա դռնիցը յետ չեմ ընկել: Տուն ենք, բան է, թէ որ ձէթ չի գտնուել, վերջին հացը հարեւանիս եմ տուել ու սրա լիսը ճարել:

—Քո լիսը մի շաւղ [4]) էլ իմ գլխին ընկնէր, Շուշան, էդ ջրիցը մի կաթ էլ իմ վրէն կաթէր: Ա՛յ, լիր, էս մուրազատու սուրբ կիրակու առաջին ուխտ եմ անում. թէ որ Աստուած ինձ մի տղայ տայ, անունը դնում եմ Սահակ՝ քո ողորմածիկ կնքաւոր ժամհարինց Սահակի անունովն՝ ու վանքը մատաղ եմ տալիս, վանքական եմ շինում. համա թէ որ աղջիկ տուեց, անունը դնում եմ մօրս անունովը Մանուշակ ու քու տղին եմ տալիս. թող քո Վարդն ու իմ Մանուշակը երկու հոտով ծաղկների պէս ծլին, ծաղկին ու իրար հետ աճին:

—Է՛դ վերջի բանն ա, խանում ջան, դու ըտէնց դժար ուխտը մի՛ անիլ. Գէորգ աղի աղջիկը նախրչի Մանուկի տղի հետ բանիլ չի, դու էդ թող, ես գիտեմ որ դու պտի պտղես, արի չոքենք սուրբ կիրակու առաջին քեզ համար աղօթք անենք. յոյս ունիմ, որ Աստուած իմ անարժան բերնի խնդրուածքը լսող, կատարող կըլնի:

---

[1]) Այգի. [2]) Գաւազան. [3]) Ճակատի շղարշ. [4]) Շառաւիղ.

Երկու կանայքը մոռացած իւրեանց անհամեմատ դրութիւնը՝ երկար ժամանակ չոքած մնացին կիւրակէի աւերակ կաթուղիկէի մէջ ու երբ գլուխները բարձրացրին, տեսան քուչումն անցնելուս Դանիէլի որդի տիրացու Առաքելին՝ վերջումը Տէր Առաքել:

—Շուտ գոտիկդ յետ արա, խանում ջան, ասեց Շուշանն ու վազեց քուչեց նշանացի անելով կանչեց տիրացուին:

Ինն ամսից յետոյ Վարդավառ կիւրակէ օրը տիրացու Առաքելը քահանայի քամակն ընկած՝ եկեղեցուց դրկին տանում էր շարական ասելով մի աղջիկ երեխայ:

—Անունն ի՞նչ դնենք, հարցրեց Գէորգ աղէն, որ այսօր համարեա կարելի էր ասել, թէ մի փոքր մարդկութեան շնորհք կար վրէն:

—Մանուշակ, պատասխանեց տիրացու Առաքելը, սանամայրս էդպէս էր կամեցել ու տատմօր բերանով ապսպարել:

Ե.

ԳԷՈՐԳ ԽԱԼՓԷՆ

Շատ տարի է, որ Երեւանու նահանգը իւր բոլոր գաւառներովն ու գիւղերովը բաժանուած է օսմանցոց տիրապետութիւնից: Պէտք է ասել, որ Հայաստանի այս մասը մի որոշ դրութեան մէջ չի մնացել. երբեմն պարսիկն է տիրել, երբեմն օսմանցին, մի ժամանակ վրացիքն են ոտնատակ տուել, միւս ժամանակ լեզգիների արշաւանքներին է ենթարկուել և միշտ խաղալիք է դառել այլև այլ տարբեր օրէնքների և կառավարիչների իրաւասութեանը: Յիսուն տարի կայ սակայն, որ ազատուելով պարսկական լծից, ստացել է մի կայուն դրութիւն: Այս ժամանակամիջոցից յառաջ, ինչպէս և մեր պատմած իրողութիւնները կատարուելուս՝ ամբողջ մի դար սրանից անդ՝ Երեւանը գտնվում էր պարսից բարբարոս ճնշողութեան ներքոյ. բռնակալութիւնն ընդհանրացած էր ամէն տեղ:

Աշտարակ գիւղն էլ լինելով Երեւանի նահանգումը, ոչընչով չէր զանազանվում իւր նմաններից: Ամէն մարդ ենթակայ էր որ և իցէ սարվազի կամայականութեանը. գլուխը մի սոխ էր: Եթէ, ասենք, ցանկացաւ մի խանի ծառայ իւր վայելչութեան համար փորձել մարդու և հաւի զանազանութիւնը, էլ չէր հարցնիլ, թէ ո՞վ է իրան

դիմացը, ինքան որ Հայ լինի, տանուտէր, իշխան, ծեր, մանուկ, նրա համար մին է, կը խփէր անխնայ. գիւղ պարծանքի համար աւելի պատուաւորների վրայ կը փորձէր թուրը. սուրը գնահատւում էր իւր կտրած գլուխների քանակութեան չափով: Կեղտոտ մի Հայ սպանելու համար, ո՞վ պիտի նրա սրտին կպչէր. քրիստոնեան ու շունը՝ երկուսն էլ հաւասար են, քանի որ քո կամքն է, որ քո շունը դռանդ կապած լինի, թող ապրի ու պէտք գայ. երբ զզուեցար, սատկացրու: Եթէ քո շունը իւր արած որսովը կարողանում է բերանդ համ բերել, պահիր. որսն ինքդ անուշ արա, ոսկորն էլ շանդ առաջը ձգիր. անպիտանացաւ, էլ պէտք չի գալիս, էլ նապաստակի քամակից չի կարողանում վազել, սպանիր, ուրիշը վերցրու:

Որքան էլ պարսիկը սրանց հետ էսպէս էր վարվում, իրանք Հայերը ի նախնեաց անտի իրարու պատիւը ճանաչում էին. մեծը փոքրին սիրում, փոքրը մեծին էր յարգում, հարուստը աղքատի կարիքին էր հասնում, նրա վճարելիք հարկն իւր վերայ առնում, չքաւորը հարուստի գործերումն էր պէտք գալիս. Աստուծոյ երկիւղը միապէս տիրած էր ամէնքի սրտում. Հայոց սուրբ հաւատը, Լուսաւորչու սուրբ եկեղեցին այս պարտականութիւնն էր դնում իւր հօտի ամէն մի անդամի վերայ: Ամէն գիւղ ունէր իւր համար իշխաններ սահմանած: Սրանք մի քանի պատկառելի ալեզարդ ծերունիներ ու խոհական երիտասարդներ էին, որոնց ձեռքից բան էր գալիս, որոնց բերանումը լեզու՝ գլխումը խելք և քսակումը փող կար: Սրանք պատասխանատու էին իւրեանց գիւղի ամբողջութեան համար Աստուծոյն, իշխանութեանը և փոխադարձ օգնութեան գործին: Ոչ-ոք չէր կարգել սրանց այս պաշտօնին, ամէն մի հասարակութեան յարգանքն էր տարիների հետ սրանց պատիւն աւելացնում: Սրանց խօսքն իշխանական իրաւունք ունէր, սրանց կտրածը կտրած էր, դատածը՝ դատած: Եւ ի՞նչ ասել կուզի, որ տէրտէրն էլ իբրև իւր սիրելի ժողովրդի հոգևոր ծնողը, սրանց ուրախութեանը և տրտմութեանը միշտ մասնակից էր լինում:

—Տէր տէր ջան, աջիդ մեռնիմ, տանուտէր, իշխաններ, մեր տէր ու տիրականներ, ձեր գլխին մատաղ, մի դատաստան արէք իմ ու հարևանիս մէջ. յանկարծ երևում էր նրանց պատկառելի ժողովքումը իրանց գիւղացիներից մէկը և ձեռքերը կրծքին խաչած՝ ակնածութեամբ գլուխ տալով, սպասում էր սրանց բերանի վճռին: Կանչում էին մեր պատուելիները հակառակորդին և միահաւան նրանց բա-

ւականութիւն տալիս: Այնուհետև սրանց վճռածը համաձայնութեամբ ընդունելի էր երկու կողմիցն էլ, էլ հակառակութիւն չը կայ, էլ ոչ դատաստան՝ ոչ դատաւոր, էլ ոչ թուղթ և ոչ պայման, սրանց վճիռը վերջնական էր:

Մեծ էր, շատ մեծ էր այս անաչառ դատաւորների՝ այս գիւղի կառավարիչ ծերունիների պարտաւորութիւնները, մեծ էին լինում միշտ և սրանց կրած նեղութիւնները: Յանկարծ եթէ մի պարսիկ բէգ գիւղն էր գալիս, սրանց միջքի կաշին էր շարժվում. նրան լաւ չը պատուեցին, նրա ընծան իրան հաճելի չեղաւ, խեղճ ծերունիների մօրուքի ալեքն էր նրա ձեռին մնում. երիտասարդները գլուխ առած՝ ծակն էին մտնում, իսկ ծերունիքը ձեռք ընկնում. և ի՞նչ կը համարձակուէին ջահէլները յանդգնիլ, դուրս ընկնել, աչքի երևալ. էդ կը նշանակէր ծերերին և իշխաններին անպատուել:

Խեղճ ծերունիք, քանիսը ձեզանից մի հանդիսաւոր օր յանկարծ կոչուել էք, կամ որ ճշմարիտն է քաշ էք տրուել մի խանի կամ բէգի դուռ և գլուխներդ քօթուկի[1]) մէջ մեռել, կամ թէ մի քանի ամիս բանտարկուել ու ձեր ուղուրին ձեր ընտանիքն էլ, գիւղն էլ քանդուել, աղքատացել է կաշառքներ տալով, և ի վերջոյ դուրս էք եկել բանտից գանակոծ, տանջուած, կիսամեռ, յետին շնչումը: Քանի շատ են եղել ձեր վրայի տանջանաց նշանները, այնքան ձեր պատիւը բարձրացել է ձեր համագիւղացոց մէջ, այնքան ձեր խօսքը գնահատուել է:

Աշտարակ գիւղն էլ՝ Երևանի գիւղերից առաջինը՝ ունեցել է իւր արժանաւոր ծերունիքն ու իշխանները, իւր պատուելի քահանայքը, որոնց գլխին արթուն հսկողի նման կանգնած են եղել տէր Յարութիւնն ու Գէորգ խալֆէն: Վերջինս ոչ միայն իւր գիւղի մէջ, ոչ միայն Երևանու գաւառումը, այլև պարսից խաների ու բէգերի համակրութիւնն է գրաւել. իւր խելքովը, հանճարովը և քաղցր բնաւորութեամբն ամէնքի խօսելու առարկան է համարուած եղել:

Այս պատուական մարդը լինելով մեծ տան որդի, ի մանկութենէ բարձր է կանգնել իւր նմաններից. երևի լաւ կարդալ է իմացել, որի համար խալֆայ[2]) մականունը մինչև մահը իւր անուան հետ կրել է: Գէորգ-խալֆայ էր նա կաթուղիկոսի, խաների, բէգերի

[1]) Ծառի բուն: [2]) Կարդացողների պատուանուն:

ու ամէն մեծ ու պստիկի համար. 100 տարի է անցել ու այսօր էլ Աշտարակումը դեռ յիշվում են Գէորգ-խալֆենց այգին, ձորը, հանդը և այլն:

Գէորգ-խալֆէն չի ունեցել որդի և որդուց կարօտ է վախճանել, ասում է նրա տապանագիրը. Գէորգ խալֆէն չի ունեցել որդի ու բոլոր գիւղին ու գաւառին հայրութիւն էր անում—ձայն է տալիս աւանդութիւնը Աշտարակցիների բերանում: Նա որքան էլ մեծ հարստութեան տէր՝ շատ պարզ է եղել հագնելուս. երկար կապուտ ղալաք արխալուղ, մի սև թեւերով լանքեայ կապայ նրան ցոյց են տուել ամէն տեղից. լինելով միջահասակ մարդ, բաւականին քաղցր դիմաց գծագրութիւն է ունեցել: Նրա երիտասարդութիւնից մինչև խորին ծերութեան հասնելը իւր կարմիր գոյնն և առողջ կազմուածքը նրանից չեն բաժանուել. նրա մեծ մեծ սև աչքերը, հաստ ունքերը, արծուի քիթը ամէնքի մօտ պատկառելի են կացուցել նրա անձնաւորութիւնը. վեհանձնութիւն և խոնարհ սիրտ—այս երկու յատկութիւնը մի և նոյն ժամանակը գտնուել է նրա մէջ:

Գէորգ խալֆէն շատ մեծ չէր, երբ որ գիւղի իշխանների կարգն անցաւ, բայց շուտով ամէնքի գլուխը բարձրացաւ: Այդ բաւական չէր, որ Աշտարակումն առանց Գէորգ խալֆի ոչինչ գործ չէր յառաջ գնալ, այդ հերիք չէր, որ ամառները՝ Կարմրաւորի պատի տակին, ձմեռները գոմերի օդաներումը [1]) Նրա նստելու քարը, որ նախագահական բազկաթոռի պաշտօն էր կատարում, միշտ պարապ էր իւր բացակայութեան ժամանակը. ուրիշ գիւղերում էլ նա բարձրաթոռ էր. մի հայ գիւղում եթէ իւրեանց ծերունի իշխանները տկարանում էին մի գործում, իսկոյն դիմում էին Գէորգ խալֆին, և այս հանճարեղ մարդը ամէնքի կարիքին էլ հասնում էր: Նա ազգական էր տէր Յարութիւնի և Ղևոնդի. վերջինիս հետ հօր եղբօր թոռներ էին: Այս երեք տունն էլ ծագել էր Կամսարական ցեղից, ինչպէս իւրեանց ազգաբանութիւնն է ասում. Շահազիզեան մեծ տան որդիք էին սրանք՝ Աշտարակ գիւղն է այսօր բարձրաձայն քարոզում: Գէորգ խալֆի օրումն էլ մի քանի տուն էին սոքա բաժանուած, իսկ այսօր Աշտարակու կէսն է Շահազիզեանց, հետն էլ

[1]) Գոմի մէջ մի բաժանմունք է, ուր հաւաքվում են ձմեռները գիւղացիք:

Կամսարականը կցած. երևի քանի մի դար է տևում այս ազգութիւնը. Գէորգ խալֆի օրն արդէն միմեանց մէջ չհաշտութիւնը հեռացել էր. երկու սեռի Շահազիզեաններ միմեանց հետ ամուսնանում էին:

Գէորգ խալֆէն իւր ունեցած մեծ հարստութիւնը բոլորը գործ էր ածում գիւղացոց շահի համար: Եօթը գութան էր դուրս գալիս սրա բակից. 40 գոմէշ, 200 կով, 2000 մաքի [1]) ամէն օր խշխշալով կթվում էին ու փրփրալից կաթը անուշ հոտով գիւղի կողքիցը քունկերի [2]) միջից առու էլած՝ քուչէքովը գետնի տակից գալիս նրանց մեծ մառանն էր լցվում և իւղ ու պանիր էր դառնում. Նրա տասն այգիներից եկած գինին ու պտուղը վերեքուել [3]) չէր լինում: Այս բոլորը դրած էր խեղճերի ուղուրին: [4]) Մի ստիլ [5]) իւղ, կամ մի չափ գինի չէր ծախուիլ այս բարութեան ծովիցը: Օրական 200 հօտող, [6]) մշակ, բանուոր ու աղքատ սեղան էին նստում Գէորգ խալֆենց տանը: Չէր կարելի մի օտարական Աշտարակումն անց կենար ու Գէորգ խալֆի մի բաժակ սառը ջուրը չը խմէր: Այս էր նրա սովորական հրաւիրանաց ձևը: Եթէ չը վախենար իւր համագիւղացիների սիրտը ցաւեցնելուց, բոլոր պարսիկների բերանն էլ նա կը փակէր իւր ուղարկած ընծաներովը, բայց չը կամենալով հասարակութեան անձնական պատուին դիպչել, որ և իցէ պարսկական բայրամի, կամ մի խանի ու բէգի որդու հարսանիքի ժամանակը թոյլ կը տար, որ գիւղերն էլ ընծայ ուղարկուէր:

Իւր այսքան մեծ գործունէութեան մէջն էլ նա մի օր գիւղումն եղած ժամանակը ժամից յետ չէր ընկնիլ. դա կը կանգնէր տէրտէրի մօտ ու ժամ կասէր:

—Աղջի՛, Խոբիշան, վեր կաց ժամ գնանք, ասում էր նա իւր սիրելի ամուսնոյն, և խալֆէն իւր կնոջ հետ ամէնքից յառաջ ժամումն էր:

Գէորգ խալֆի բոլոր գործերին օգնական էր ընտանեկան կառավարութեան մէջ նրա կին Խոբիշան խանումը: Եթէ մարդը տղամարդկանց մէջ անուն ունէր, կինը բոլոր Աշտարակու կնանոց ծաղիկն էր. ոչ թէ իւր մարդու անունովն էր նա պատուած. ինքը մարդիցը յետ չէր մնում բարեսրտութիւնով. բոլոր այրիները նրա ձեռքումն էին իրանց ցաւերին դարման գտնում Գէորգ խալֆից, բոլոր որբերի ու անտէր քաղցածների մայրն էր նա: Գէորգ խալֆէն ժամանակ չունէր իւր ահագին հոգսերի մէջ խառնուիլ, Խոբիշան խա-

[1]) Էգ ոչխար: [2]) Խողովակ: [3]) Ժողովիլ: [4]) Համար: [5]) Կշռաքի քաշ է: [6]) Երկրագործ մշակ:

նումն էր քէյվանու[1]) գլխին կանգնած նփ ու թափ անել տալիս. Նա ինքը բանալիները գոտկին քաշ արած՝ ամէն տեղ էլ հասնում էր: — կերէք, ձեզ անուշ, խրախուսում էր բազմած ճաշողներին, գութանաւորի փլաւը ղըկեր, հրամայում էր քէյվանուն, էս իւղն ու ալիւրը տարէք խեղճ Մարկոսի կնկանը, ահագին ջվալն և աքաշը[2]) լցրած՝ ուղարկում էր ծառաների ձեռքով. լոյսը կըբացուէր, մինչև մութն ականակիրը նրա ոտի մաշիկը հագիցը դուրս չէր գալ. Նրա նստելը միայն ճաշելու ժամանակն էր, նրա կանգնելը միայն եկեղեցումը: Նրանց ամուսնական քաղցրութեան վերայ ամէնքը զարմացել էին: Ասում են, սրանք մի բնութիւն են ունեցել. առաւօտնից հէնց որ շորերը հագան, երեսները լուացին, մի անգամ կըհամբուրուէին, երեկոյին էլ նոյնպէս ընթրիքից յետոյ էս գործողութիւնը կըկրկնէին և էս սովորութիւնը մինչև մահը շարունակել են:

Խորիշան խանումն էլ իր մարդիցը յետ չէր մնալ ազգաբանութիւնով: Նա էր դուստր Ազարիայի Գառնեցւոյ Պռօշեանց, վկայում է այսօր նրա մամռոտած տապանաքարը. իսկ Պռօշեանց իշխանական ցեղի համար Գառնի գիւղի մօտ գտնըւած գեղարդայ հրաշակերտ վանքի արձանագրութիւններն և հայոց պատմագիրները այսօր էլ բարձրաձայն քարոզում են: Պահլաւունեան տան շառաւիղ, Գրիգոր-Մագիստրոսի եղբօր որդի էր ինքը՝ ցեղապետ Պռօշ իշխանաց իշխանը: Երևում է, Խորիշան խանումի հայր Ազարիան է գաղթել Գառնի գիւղից և նրա սերունդն է, որ այսօր էլ բնակվում է Աշտարակումը. որոյ մի անդամն էլ ընթերցօղ, ձեզ ձանձրացողն է: Աշտարակու երեխան էս քեզ կասի, որ տէր—Առաքելենց տունը Պռօշ մեծ իշխանի ցեղիցն է:

Ահա այս մեծ մարդը՝ Աշտարակու պաշտպան Գէորգ խալֆէն իւր սրտի էլ կին էր ճարել:

Գէորգ խալֆի ժամանակը ոչ մի ուլի քիթ չէր խռովել,[3]) ոչ մի նեղութիւն չէր գալ պարսիկներից, եթէ միւս կողմից իւրեանց ազգին թուք ու նախատինք Դևոնը յառաջ եկած չըլինէր և իւրեան չարութեանն էլ գործակից չունենար Աստուծոյ երկիւղը և մարդկանց ամօթը սրտից հանած, իւր քահանայութեան կարգին անարժան Քաւթառենց տէր Մելքսէթին: Եթէ Աստուծոյ պատիժ էիր ուզում, էս երկու մարդը հերիք էին. բոլոր Երևանու գաւառի հայերին սարսափեցրել էին, Աշտարակին էս առաւել: Ինչ որ Գէորգ խալֆէն շինում էր, միւս օրը էս երկու փչանալու պտուղները քանդում էին. — ի՞նչ անենք, ասում էր ախ քաշելով Գէորգ խալֆէն, ծառի որդն իրանից է բհամ գալիս:[4])

Զ.

ՔԱՌԱՍՈՒՆՔ

— Ես քեզ ասում եմ, գլխիս ղուզը հանիլ մի՛, շուտ արա, վեր կաց, ինչ ունիս չունիս հաւաքի՛, սնդուկդ կապի՛, ի՞նչ ես

[1]) Տնտես: [2]) Հողի փոքր կարաս: [3]) վնաս ղիպչել: [4]) Յառաջ գալիս:

էդքան դանդ ու սար անում:[1]) Էս օր Հիւսէին-Ալի խանը իմ ճակատս պաչեց, հասկանում ե՞ս, Հիւսէին-Ալի խանը՝ աշխարհքի տէրը. Ի՞նչ ես մի մատը լակոտի պէս լացով ուզում վախացնել. անպատճառ պէտք ա քօչացնենք:

— Թող ինչ գալու ա, գայ. իմ մարդ Դևոնդը չըլնես, ուզենաս պէծ պէծ կրակ ղառնաս, ես քառասունքը չըլրացրած՝ տանս շեմքն[2]) անց չեմ կենալ. օխտը խաչի գլուխ եմ պատռել,[3]) անջախ[4]) Աստծու ողորմութիւնը հասել ա, պտի իմ ձեռով հիմի իմ տունը քանդեմ, երեխէս քառսնքակոխ անեմ:[5]) Դու հէր չե՞ս, դու մօր բերած չե՞ս, դու գիտես ոչ որ ընչանք քառասունքը բոլորի ոչ, ընչանք քառասունի օրէն գլխին երեխին ժամ չըտանին, քառսնքահան չանեն, ծննդկանը բակի շեմքից ոտը չի դուս դնիլ, դու գիտում չե՞ս, որ շեմքի գլխիցը Չարը երեխին կըխփի, քօփէն[6]) չարոց[7]) կըլնի, կընկնաւորուի. սատանէքը նրան քշերը քնած տեղը աչքերը բաց քարափների գլխին ման կածե՞ն, բաս դու էս բաներից խաբարութիւն չունի՞ս, դու ո՞ր սատղի տակին ես յառաջ եկել:

— Էդ քո քօռ պառաւի քարոզներդ քեզ համար պահի՛ր, հէնց հիմի, որտեղ որ ա, թուրքերը գեղը կըթափուին, մենք ըսօր շատ գործ ունինք. տէր Մելքսէթը հիմի իր տունը տեղը վաղուց ա կարգի դրել. քանի գեղցիք բէխաբար են[8]), քանի ունեցած չունեցածները ծակուծուկերը չեն կոխել, դու պտի բարգ ու բուրգդ[9]) հաւաքես ու շտապես փարբի Նաղի բէգի տունը. ընտեղ քեզ համար լաւ տուն եմ պատրաստել: Վնաս չունի, ընտեղ պարկի, քառասունքդ թուրքի տանը լրացրու, մի շաբթէն գլխին էլ չէկը[10]) յետ բերել կըտամ քօչատեղից. սանդն էլ ա իմ ձեռին, պօպօքն էլ:[11])

— Ա՛յ մարդ, ի սէր Աստծու, ես գիտեմ քո սիրտդ էնքան քարացել ա, որ ողջ գեղի սուգն ու աղաղակը քո սրտին մի մատը քեար չեն անիլ, էս օրվան քո ազգ ու ընտանու, քո ընկեր հարևանի նեղութիւնները, էս օրվան արէնթաթախ երեխեքանց մէրերի անիծքն ու հայհոյանքը քո անկամ իդ գլուխի ձէնից քաղցր պէտք ա

[1]) Ձգձգուացնել: [2]) Սեամ: [3]) Խաչերին աղաչել: [4]) Հազիւ: [5]) Քառասուն օրը չլրացնել և այդ պատճառաւ գիւահարիլ: [6]) Փոքրիկը: [7]) Այսասուն հար: [8]) Անտեղեակ: [9]) Ծանրութիւն: [10]) Հասարակութիւն: [11]) Ընկոյզ:

թուայ, գոնէ՛, քու հէրութինդ միտդ բեր, աչքդ քցա՛ էս բարուրի վրայ, որի համար տասներկու տարի ես աղի արտասունք եմ թափել: Ջօլի ջանավարը իր ձագին տեսնելուս կակղում ա, դու անվերիվերի [1]) կծոտողներիցն էլ անցկացար: Հէնց էս օ՞ր պտի դու քո չարահոգի ընկերի հետ, պատժի՛ նրան իր անտօնական կարգը, գնալիք անհաւատ խանին բզէկք, որ գաք գեղը արէն կօլօլ անէք, ա՛յ արէնկօլօլ ընի՛ էն պաճոկուելու տէր Մէլիքսէթը: Քեզ մատաղ, Ղևոնդ ջա՛ն, քաղցրացի՛ր, լսի՛ քու կնգայ աղանչաքը, քու որդու սիրուն, ձի նստի՛, յետ դա՛ռ, գնա՛ Երևան, ընկի՛ իմ կողմից խանի ոտները. ասա՛ կնիկս վարսը [2]) շաղ տուած ոտիդ տակին փռում ա, անց կացրու էս պատուհասը: Դու իմանում ես, որ տարուան էն վախտն ա, որ մի մարդը տասը հազար դեկան [3]) աժի. խեղճ գեղցիքն իրանց տարուան ապրուստն են հաւաքում, արտերը հասել, կծղել [4]) ա, հինդ օր էլ ա՞նց կենայ, էլ մի հատիկ չի՛ մնալ հասկի մէջ, վէր կը թափուի, երկնքի ղշերի բաժին կընի: Ասա՛, հասկացրու խանին, կարելի ա խեղճ կը գայ, կարելի ա նրա անօրէն սիրտը քեզանից աւելի փափուկ կընի: Որ ուրիշ ոչինչ չընի, դու հէր ես, ծնող ես, յայտնի՛ իրան, որ կնիկդ քառասնքումն ա, ասա՛, որ գեղը քօչացնելով դու քու մինուճարիդ [5]) փորձանքի կը բերես:

— Ես քեզ հրամայում եմ ձէնդ քեզ քաշի՛, անպիտան կնի՛կ, գոռաց Ղևոնդը խեղճ համասփիւռ տիկնոջ վրայ, որ սիրթնել, պատի ծեփ էր դառել, քու էդ կնգայ խօսքերովը պտի իմ միտքս փոխել տա՞ս: Խանն ի՞նչ ա հասկանում գեղի խաբարը, էդ իմ սարքած բանն ա, խօսակ յարմար ժամանակն էսօր ա, որ կայ. գեղի շատ բաժինը հիմի հանդումն ա, քօչելու ձէնը կը քցենք ու մի սհաթ չը քաշած՝ փէտը կը դնենք, առաջ կանենք. ընչանք հանդաւորը կը լսի, գեղը կը թափի, մենք մեր թալանը [6]) տուած՝ մեր գործը տեսած կըլնենք: Էս անգամ խանը չէր ուզում քօչացնել, վախում էր, որ հերուայ պէս բան չը կարողանանք գլուխ բերել. հերուայ պատճառն էլ դու էլար, էնքան դէս ու դէն ընկար, ուշացրիր տունդ ժողովելը, որ գեղցիք հոտն առան, էլած չէլածը Երևանաւորը

---

[1]) Ամենավայրենի: [2]) Մազ: [3]) 1000 դեանը 30 կոպէկ է: [4]) Հնձելու ժամանակն անցնելու պատճառաւ արևից խանձուիլ: [5]) Մի հատիկ զաւակ: [6]) Աւար:

կոխեցին, վերջն էլ էնքան սարվազներ կոտորուեցին: Դու գիտե՞ս, որ գլուխս կտրել էր տալիս սարդարը. էն օրուանից դէսը դեռ սիրտը վրէժ պակաս ա: Էն սատանայ տէր Մէլիքսէթն էլ իմ ճանաչացրածն ա, ուզում ա յառաջս կտրի: Լաւ էլ սիրտը տրաքում ա, որ իրան բան չասած՝ քօչացնելու հրաման հանեցի, համա որ ձեռին ճար չը կայ, եկել ա ոտս լիզում. նա լաւ հասկացաւ, թէ էս օրուանից Ղևոնդն ինչ փառքի տիրացաւ:

— Քարասի՛րտ, անխղճմտանք, յուսահատուած ճիչ արձակեց համասփիւռը և մի ակնթարթի մէջ յափշտակեց կողքին դրած բարուրած երեխայն ու մէտակ շապկով, բոբիկ ոտքերով վէր թռաւ անկողնից. — առաջինը ես գլուխս մատաղ կը տամ երեխիս հետ ու քու օձ սրտինդ կը խափանեմ, ես ողջ գեղը տուն է տուն կը պըտտեմ, ամէնքին իմաց կը տամ: Դեռ քու թալանչի թուրքերը գեղը չհասած՝ ամէն բան կըպահեն, դու էլ մի չոփ [1]) չես գտնիլ, որ աչքդ կոխես, սարդարի կշտին էլ սև երես կընես:

Կայծակի արագութեամբ դուրս թռաւ տիկին համասփիւռը սենեկից բակը, բայց նոյն և մի արագութեամբ դրսից լսուեցաւ նրա յուսահատական ճչիւնը և լալը:

— Հա՛, հա՛, հա՛, հետևեց նրա դուրս գնալուն Ղևոնդի սրտի խորքից դուրս բղխած բարձրաձայն քրքջոցը. յիմար կնի՛կ, հէնց կարծումա, թէ հերուայ պէս բանը փահմիլ [2]) չեմ էլ չի իմանում, թէ չորս աղէքսլիլ [3]) դուռը պահումեն ու ինքը հիմի նրանց ճանգին ա. գնա՛ գեղին իմաց տուր. չաւ արա՛ [4]), գնա՛, քու խելօք Գէորգ խալֆէդ քեզ տիրութիւն կանի, գեղի ճարն էլ կը տեսնի...

Խօսքը դեռ չէր վերջացրել, երբ չորս վեթխարի պարսից սարվազներ ներս բերին մի անշունչ ասենք, թէ կիսաշունչ դիակ, գրկին ամուր սխմած մի երեխայի բարուր:

— Ղևոնդ քեօխվա՛յ [5]) ասաց նրանցից մինը. քու հրամաներդ մի առ մի կատարեցինք, խանումը դուրս գալուն պէս բռնեցինք, բայց յանկարծ սա մեր ձեռքին թուլացաւ ու ինչքան աշխատումենք, չենք կարողանում երեխէն ձեռքիցն առնել. եթէ սրան կամ երեխային մի փորձանք պատահի, մենք մեղաւոր չենք, դու մեզ երեխայի համար չը զգուշացրիր և չը հրամայեցիր, որ նուաղելուս քեզ կանչենք:

---

[1]) Ծղօտի կտոր: [2]) Նկատել: [3]) Կարիճ: [4]) Հաչակիր: [5]) Տանուտէր:

Դիակը զգուշութեամբ ցած դրին պարսիկներն անկողնի վրայ ու յետ կանգնեցան:

Մի սարսափելի տեսարան էր. նորածին երեխայն ճչում է, Համասփիւռն անշունչ ընկած է. պարսիկները հեռուումը յետ քաշուած անխօս՝ մին նայում են կնոջը, մին էլ մարդին. Ղևոնդը մի քանի րոպէ արձան է կտրուել ու չի համարձակւում շարժուիլ: Այդ րոպէին հայր և ամուսին կոչումը իւրեանց ազդեցութիւնը գործ դրին նրա վրայ, աչքերիցը ակամայից դուրս խլուեցան երկու կաթիլ արտասուքներ. ինչ անէր, չգիտէր, մոլորուել՝ մնացել էր: Յանկարծ միտքն եկաւ, որ ինքն ամուսին է, որ իւր նուիրականութիւնը՝ իւր պատիւն օտար պարսիկների աչքի առաջին անվայել ընկած է, որ կանացի պատկառանքն ինքը ոտքի տակ է տուել: Այս ամէնը նկարագրուեցան նրա յիշողութեան մէջ և նա իրան համարեց հողի հետ հաւասար, ամէն արարածներից ցած, մի աննշան որդն: Էլ չհամարձակուեցաւ իւր քաշ ձգած գլուխը վեր բարձրացնել Ղևոնդը, ձեռքով պարսիկներին նշանացի արեց, որ դուրս գնան: Հրամանը կատարուեցաւ, բայց ինչ անելը չէր իմանում. չէր վստահանում մօտենալ այս րոպէին ամէն բանից թանգագին առարկային. գոնէ այս րոպէն այսպէս եղաւ նրա համար: Նա առաջին անգամ, կարելի է իւր կեանքի մէջ զգաց, թէ ինքը այր և հայր է. չոքեց կնոջ սառը մարմնի առաջին, ոտքը համբուրեց, գլուխը դրեց անշունչ դիակի կրծքին, երեխայի թաթիկը մի ձեռքով իւր անտաշ ձեռքերի մէջ բռնեց և բաւական ժամանակ էս դրութեան մէջ անխօս մնաց: Եւ մինչ ուզում էր գլուխը դէպի երկինք բարձրացնել, թէ ինչի՞ համար, էդ միայն իրան էր յայտնի, աչքովն ընկաւ առաւօտեան նոր ծագող լոյսը:

Էլ յետ գազանական կիրքը յաղթեց նրա թուլացող ջիղերին. միտքն եկաւ, որ երկու ժամ չի քաշել, պարսից սարվազների գունդը գիւղը կըլցուի քօչացնելու և աւերելու: Ինչպէս էր անօրինել նա, որ նախիրը դեռ գիւղի մօտ հաւաքուած լինի, ամէն մարդ նոր ցրուած լինին իւրեանց կալ ու կտին, իրանց արտն ու այգին, սարվազները գիւղը լցուին:

— Ես էս ինչ եմ անում, գլխիս լաչակ [1]) ա՞, որ էս կատուասատկ տուած կընդայ հետն եմ ընկել, օրը ճաշ դառաւ, սարվազը

[1]) Շղարշ կանացի:

ծէրը հիմի կարմունջը հասաւ ու էս ոչ մի պատրաստութիւնս չեմ տեսել: Էհ, ո՞վ կայ ըտեղ, մռնչաց նա, կամ աւելի լաւ ասենք, ոռնաց, ու գժուած դուրս թռաւ:

Գոռոցի արձագանքը դեռ սենեկումը թնդում էր, որ պառաւ Սանդուխտը տուն ընկաւ. դեռ շուարեցաւ, բայց զգաց որ երկար ժամանակ կորցնել չի հարկաւոր, մօտ եկաւ, ձեռը Համասփիւռ տիկնոջ սրտին դրեց, տեսաւ որ բաբախում է, զգուշութեամբ երեխային ձեռից առաւ, որը հիմա անարգել բաց թողուեցաւ ձեռքից և ջուր ու ծծմբի օգնութիւնով հազիւ հազ կարողացաւ էս մի քանի թոյլ խօսքերը լսել.—«իմ երեխէս, ո՞ւր ա երեխէս, ո՞ւր եմ ես, ինչ էլան թուրքերը, ո՞ւր ա Ղևոնդը, գեղը կրակը տանում ա՞, քօչեցին պրծա՞ն, քօչը ո՞րտեղ ա հասել....» Մի քանի էսպէս Սանդխտի համար անհասկանալի բառեր միմեանց քամակից շարեց Համասփիւռը:

Կէս ժամ չըքաշեց, երկու հայ ու չորս պարսիկ ծառաներ առաջ էին արել հինգ բարձած ձիանք. նրանք շտապով քշում էին Գրչի—Խէչի տակովը: Երկու ձիանոց բեռները շատ թեթև էին. նրանք էին մի կին մի բարուր կրծքին կապած և մի պառաւ, իսկ միւս երեքը սնդուկներում ու մաֆրաշներում չարխդած՝ [1]) տան կահ կարասիք: Հայ ծառաները քշում էին կենդանի բեռների ձիանքը, իսկ թուրքերը միւսները:

— Ի՞նչ էք նաղ անելով քշում, յետ մնիկ տալով բաւականին ուշ մնացած հայ ծառաներին, ձայն տուեց թուրքերից մինը, մի ժամից մենք կրկին Աշտարակ պէտք է լինինք, Ղևոնդ քեօխվէն ասում էր, որ ձիանքն էս օր շատ հարկաւոր են:

— Ի՞նչ էք շտապում, պատասխանեց հայը, հրէդ չի Փարբի՞ն, ոտս փոխեմ, ընտեղ ենք, տեսնում չե՞ս որ խանումը շատ նուաղ ա, ձիու վրայ նստել չի կարո՞ւմ:

— Երևում ա սուրբ Գրիգորին ըխտաւոր ա, քչփչում էին ձիանց սանձը քաշելով հայերը, որ դեռ քառասունքը չպրծած՝ ըսէնց անջան, թիլեկ միլեկ [2]) Փարբի ա գնում, թէ չէ երկու շաբթուան ծննդկանը տանից դուս կը գա՞յ, լսած բան ա՞:

— Ախար որ մի ցաւ կունենայ, տեսնում չես արտասո՞ւնքը:

[1]) Կապկպուած: [2]) Թուլացած:

Բայց սրանք երկուսն էլ չը հետաքրքրուեցան, թէ այս բեռնե՞րն ուր են տանում, ուխտաւորին էնքան բա՞ն:

Մի ժամ չ'քաշած՝ մեր ճանապարհորդներն իջեցրին փարբի Վալի աղի դռանը տիկին Համասփիւռին և պառաւ Սանդխտին: Պարսիկները գիտէին այս ուխտագնացութեան պատճառը, բայց հայ ծառաները հիմա միայն հասկացան, որ սրանից լաւ հոտ չի փչում, ու իրանց գլխին վա՛յ տալով, առանց պարսիկներին սպասելու՝ թռան ձիանոց վրայ ու շտապեցին Աշտարակ իրանց ընտանիքի հոգսը քաշելու:

Մի քանի րոպէից փարբի մտաւ մի ընտանիք էլ՝ նոյնպէս բարձած ձիանքով: Ներկայ տիկինը ոչընչով չէր համապատասխանում առաջի եկողին. նա սառնութեամբ նստած ձիու վերայ, հրամաններ էր տալիս քշողներին և պատուիրում զգոյշ լինել, բեռներից ոչինչ չը վայր ձգել, կամ երեխաներին ապահով պահել:

Սա էր չարահոգի տէր Մէլիքսէթի կինը, որ եթէ համամիտ էլ չէր իւր մարդին, արգելք էր չէր լինում նրան: Սա էլ իջաւ Վալի աղի տանը:

Է.

«ԽԵԼՔ ՈՒՆԻՍ ՏՈՒՆ ԹՈ՛Ղ, ԹԷ ՉԷ ԴՈՒՌԴ ԷԼ ՈՐ ՓԱԿԵՍ, ԵՐԹԿՈՎԸ ՏՈՒՆ ԿԸՆԿՆԵՄ»:

Յուլիսի միջերքումն էր, առաւօտեան արեգակը կտոր կտոր ամպերի տակից նոր իւր գլուխը ցոյց էր տալիս, մին երևում էր մառախլապատ, մէկ էլ թաք կենում, Մասիսի գագաթը թանձր սև ամպերի կտուռները բոլորովին փակել էին, օրը բոլորովին յուլիսի չէր նմանում, կարելի էր գուշակել, որ անձրև և տեղ տեղ էլ կարկուտ կը լինի:

Աշտարակցիք նոր զարթնած՝ կանայքն սկսել էին կովերը կթել, աղջիկները կռները հաւաքած՝ պոպոզ [1]) գտակները գլխներին ծածկած՝ փէշերը վեր քաշած, գոտիկը խրած՝ իւրեանց քուչի դուռը աւլում էին և ուսաշորը ուսին ձգած՝ շուտ շուտ առուից ջուր բերում, ջրջրհանում. էս գործը նրանք շատ եռանդով էին կատա-

[1]) Վեղարաձև:

րում. ում քուչի դուռն լաւ աւլած ջրջրհանած էր, նրանց տանու աղջիկն աւելի աշխատաւոր էր յիշվում ու աւելի պատանիների սիրտ էր գրաւում: Մի քանի կանայք էլ աւարտել էին իւրեանց տան գործը, երեխեքանցն ու ջահէլ հարս ու աղջիկներին լաւ հագցրած՝ հարսների երեսը պինդ չարսաւով [1]) ծածկած՝ առաջ արած՝ գնում էին այգին:

Նախիրը դեռ բոլորովին չէր դուրս գնացել, մի ծայրը գիւղի մէջն էր, միւսը հաւաքվում էր ձորի կամրջի մօտ: Կամրջի քարի վրայ դագանակը սևն տուած նստած էր նախրչի Մանուկն և կովերի առաջը պահում էր: Անդաւորներից շատերը հանդումն էին քնել. տուն եկողներն էլ իւրեանց գերանդիները, մարանդիներն ու մանգաղները [2]) արած՝ ուզում էին շտապել մնացող արտերը հնձելու, վաղուց մասիլը [3]) հասել էր. կը կծղէր, կէրուէր, թողնել չէր կարելի: Մի կողմիցն էլ ձիանքը օրանով [4]) բարձած՝ կալերումը թափում էին և ուզում էին յետ դառնալ: Սրանք աքլորականչին [5]) էին իւրեանց գործն սկսել: Ոմանք էլ կալը քօլաշ [6]) արած՝ լծել էին եզներն ու կամների վրա կանգնած «հառալօ» կանչում, իրանց կալսելու գործին էին: Տէրտէրները, Գէորգ խալֆէն մի քանի ծերունիներով առաւօտեան ժամերգութիւնը նոր աւարտած՝ բերդի դռնիցը նոր ուզում էին բաժնուել իրարից:

— Էս ի՞նչ սարվաղներ են չորս հոգի ըսէնց վաղ էս կողմը քշում իրանց ձիանքը, մի կասկածալի հայեացք ձգելով դէպի նեղ փողոցի ծայրը, ասաց Գէորգ խալֆէն. տէր Աստուած, դու փորձանքից հեռու պահես, սրանք իմ աչքումս լաւ մարդիկ չեն երևում:

— Կամ աղերը կըլի պակաս, կամ մաղերը, լաւ բանի հօ չե՞ն գալ, գուշակեց տէր Յարութիւնը:

Խօսքը դեռ չէր վերջացրել, որ ձիաւորները հասան իւրեանց մօտ և առանց բարև տալու՝ նորանցից մինը գոռաց:—Արևը մինչև էստեղ գալը ձեզ ժամանակ, այս ասելով նա մտրակի կոթով ցոյց տուեց երկինքը, էստեղ հասնելուն պէս բոլոր գիւղը պէտք է քօչի, 100 սարվազ մի ժամից գեղը կը մտնին, որ ձեզ քօչացնեն: Էլ

[1]) Սաւան: [2]) Այս երեքն էլ հնձելու գործիքներ են: [3]) Բերք: [4]) Որայ: [5]) Հաւախօսին: [6]) Որայն կալումը փռել կալսելու համար:

ինչ էք կանգնել, չէք հասկանում, յոխորտաց նա, գնացէք ձեր շան լակոտներին հաւաքեցէք ու դուրս գնացէք գերեզմանների թումբը:

Մերոնց էլ հարկաւոր չէր ուշանալ, էս առաջինը չէր նրանց համար եսպիսի բօթաբեր համբաւ լսելը, նրանցից ամէն մինը հինգ անգամ ամենափոքրը իւր կեանքումը քօչ տեսել կը լինէր:—Դէհ, մեր տղէք, հառաչելով ասաց Գէորգ խալֆէն, վազեցէք նախիրը ձորիցը յետ բերէք, գեղը հաւար ¹) քցեցէք, մի տղայ ղրկեցէք հանդաւորի քամակիցը, էլ ինչ էք երեսխ մոլիկ տալիս, ամէնքդ գիտէք, թէ ինչ պէտք է անել: Տէր Յարութիւն, դու էլ անելիքդ արա, ես էս անհաւատներին տանեմ առաջները մի քիչ լաւ ²) ածեմ, դու եկեղեցու պահարանը բաց արա: Դուք էլ (միւս ծերունիներին) արանչիների ³) հոգսը քաշեցէք, լաւ տղէք ըլէ՛ն:

Մի րոպէի մէջ գիւղի խաղաղութիւնը խանգարուեց, ինչպէս մի գեղեցիկ պարզ օր, որ երբէք միտք չես անել, թէ կարող է այդպիսի եղանակին փոթորիկ լինել, յանկարծ մի փոքրիկ ամպ հիւսիսից հաւաքուի, երկինքը պատի ու կարկուտ թափի: Այսպէս փոխուեցաւ Աշտարակ գիւղը:

Լաց ու կոծը, շփոթն ու աղաղակը գիւղը բռնեց, ամէն մարդ իւր շարժական իրեղէնները պահելու հոգսումն էր, ունեցած չունեցածը ածումէին մառանների միջի կամ կարասների տակի վաղուց պատրաստ փորած հորերի մէջ ու երեսը հողով ծածկում, մի քանիսը կրում էին այգիներն, ուր աւելի ապահով տաքարներ ⁴) ունէին պահելու, թանգագին աւել բաներն էլ վազեցնումէին մի շորի մէջ կապած՝ Ծիրանաւոր եկեղեցու պահարանը, ուր տէր Յարութիւնը վաղուց բերածը առնում ու դարսում էր:

Անդաւորները որտեղ լսեցին էս բօթը, գործերը թողին, գերանդին կամ մարանդին ձեռքերիցը վէր ընկաւ, ցորնի բարդերը մնացին շաղ անցած, խրձերը՝ կիսակապել, օրան կրողները ճանապարհին թափեցին բեռը, կալերումը կալուածքը կիսատ մնաց, այգիները դատարկուեցան ու խուրձերը լեքը բերքով անտէր ընկան, թափ տուած ծիրանը ծառերի տակին առանց հաւաքել փթեց,

¹) Շփոթ: ²) Լափեկը: ³) Գիւղապահ: ⁴) Գինի լցնելու հոր:

ամէն բան աչքից ընկաւ և միայն ջանք էին անում մի րոպէ չը կորցնել, իրանց պաշարը, որ միայն ալիւրից էր բաղկացած՝ գրաստի վերայ բառնալ ու դուրս գալ կարմրաւոր եկեղեցու պատի տակ գերեզմանատան թումբը:

Մենք մտնենք, ընթերցող, քեզ հետ մի յարկի տակ և իմանանք այս տան տիրող դրութիւնը: Մի ցնցոտի անկողնի մէջ գետնի վերայ պարկած է մի հիւանդ երիտասարդ կին: Սա է ընտանիքի մայրը: Միւս մնացած անդամներից ամենից հասակովն է տասնեչորս տարեկան մի աղջիկ, որը շփոթուելուց մնացել է սառած կանգնած: Հիւանդը շատ ծանր է. նա ամբողջ գիշերը տաքութեան մէջ դեռ է տուել—գլխից դուրս է տուել անկապ խօսքեր. երկու, երեք և հինգ տարեկան երեխայքը կողքին թափած՝ գետնի վերայ քնած են եղել. վեց ամսական մի նիհար, ոսկրներն ու կաշին մնացած տղայ—մանուկ էլ մինչև լոյս կողքին ընկած՝ նուացել է ¹): Երբեմն աղջիկը բաց է արել իւր մօր քրտնքոտ կուրծքը, դրել երեխայի բերանը, ծծացրել առանց հիւանդի զգալուն. երբեմն էլ հարևանի տանից բերած մի փոքր թթուած կաթն է բերանն ածել, որ խոկոյն բերանից կամ յետևիցն է թափուել: Եօթն ամիս է, որ այս տան գլուխը՝ մի աղքատ գիւղացի, որի ապրուստը իւր մի հատ բեռան ձին էր, թողել է էս աշխարհը և իւր ընտանիքի օրը սևացրել: Այն օրից մինչև հիմա սրա երեխայքը տաք կերակրի համ առել են միմիայն հարևանների ուղարկած բաժնից, իսկ ձին իւր մահից յետոյ կառավարող չըլինելու պատճառով վաղուց ծախուել է ու կէսը թաղման վրայ է գործ դրուել, միւս կիսովն էլ փէրսի գիւղացի մօլլա Բեադեմի պարտքը տալու և իւր տան կարիքը լցնելու համար է բանել:

—Նանի ²) ջան, նանի՛, ի՞նչ պտի անենք, մօտենում է մեծ աղջիկը հիւանդին, գեղը քօչացնումեն, խալխի շատ բաժինը իր բեռը կապած՝ կարմրաւորի տակին հազիր ա, ասումեն, Ջաղի դզից ³) սարվաղի ծէրն երևում ա:

Հիւանդը, որ գիշերուան անհանգստութիւնից յետոյ մի փոքր թմրութեան մէջ էր ընկել, այս լսելուն պէս վեր է թռչում տեղիցը.—եկէք, մենք էլ գնանք, ես ո՞ր մօրիցը պակաս սիրտ ունիմ,

¹) Թոյլ ձայնով լալ: ²) Մայրիկ: ³) Տափարակ:

որ իմ երեխէքս Թուրքի սարվազների ճանգը քցեմ. ասել, դէպի դուռը վազելը, դռան տակին սատկի գետին ղլպչելը և անշնչանալը մէկ է լինում: Երեխայքը, որ քրոջ ձայնից զարթնել էին, ու ամէնքը մի մի կտոր չոր հացի փշրանք ձեռքներին կռծում էին, լեղապատառ եղան, երբ որ իրանց մօր վայր ընկնելը տեսան, վազեցին հիւանդի վերայ թափուեցան ու լաց եղան. Ծծի մանուկն աւանց ուշադրութեան գետնին ճչում է: Ի՞նչ անի խեղճ մեծ աղջիկը. բացի աղիողորմ հառաչալից արտասունքի ուրիշ ոչինչ չի կարողանում մտածել: Ինքն էլ իւր քոյրերի հետ բանտարկուեցաւ տանը. Նրա ոյժը չի տանիլ մօր դիակը յետ քաշել ու դուռը բանալ:

— Նանի ջան, նանի, ինքն էլ հետևելով փոքրիկների օրինակին, ընկել մօր վերայ գոռում է, նանի ջան, վեր կաց, դուռը բաց անեմ, գնամ տեսնիմ հարևաններն իրանց գործից պրծել են, կանչեմ մեզ օգնեն, նանի, նանի.... Նանը չէր լսում, նա վաղուց ազատուել էր էս աշխարհքիս դառն հոգսերիցը:

Սարվազի ձայն Աշտարակ մտած՝ սկսել էր իւր աւերմունքը. քուչաններումն էլ համարձակ ման գալ չէր լինում, Թրի բութ կողմը կպչում էր աջ ու ձախ ծակից դուրս հանողին ու—շուտ արէք, անհաւատներ, ճանապարհ ընկէք,—լսվում էր ամէն մի սարվազի բերանից: Յուսահատութեան աղաղակը ողջ գիւղը վերցրել էր:

Տէր Յարութիւնը, Գէորգ խալֆէն ու մի քանի իշխաններ քունջ ու պուճախ ընկած՝ անկիւններով փախչելով օգնութիւն էին հասնում աղքատներին ու անտէրներին:

Ծակի փողոցումն անց էին կենում նրանք, երբ մեզ ծանօթ տանից մանուկների սրտակտոր լացը ականջներն ընկաւ:

— Ո՞վ կայ ներսը, բաց արէք դուռը, ձայն տուեն սրանք. եկէք, մեր տղէք, մենք էստեղ այս խեղճ ընտանիքը մտահան ենք արել, ողորմած հոգի Ղազարի կնիկը հիւանդ ա:

— Ի՞նչ անեմ, չի կարելի բաց անել, սրանց բաղխելուն մի պատասխան եկաւ ներսից, մէրս դռան տակին վեր ա ընկել քնել ու զարթնում չի:

Տղէքանցից մինը պատովը բարձրացաւ կտուրը, երդիկիցը ներս նայեց ու էլ երկար չը մտածած՝ ցած եկաւ երդիկովը տան մէջ, յետ քաշեց անշնչացած կնոջն ու դուռը բաց արեց:

Սիրտ բե՛ր, որ դիմանայ, իրողութիւնը երևակայութիւն չէր,

հիւանդը մեռած էր, էլ բերանը բաց՝ սառած կանգնելու ժամանակ չըկար: — Հողը մեր գլխին, Աստուած էլ ընդուր ա մեզ էս օրը քցում, մեր հախն ա, ըսկի միտս մտքումս անց ա կացել, որ ըստեղ հիւանդ կայ, ամէն մարդ իր հալին [1]) ա, մեղադրում էր նրանցից ամէն մէկը իւր գլուխը:

— Մեռելը՞ վեր կալնելու վախտ չի, տնօրինեց Գէորգ խալֆէն և հրամայեց հետի երիտասարդներին երեխաներին վազացնել էլլէկի մէջ:

— Տէր հա՛յր, աջիդ մեռնիմ, շնչասպառ վազելով հասաւ նրանց նախրչի Մանուկը, էլը քշեցին դէպ Աբարան, համա խառատ [2]) Աբրահամի կնիկը կէս սհաթ չի ըլել երեխայ ա բերել, ծննդկան ա. տատմէրն էլ ու բարեկամներն էլ իրանց գլխի ճարը տեսնելումն են էլել, ու ինքն ուստէն էր մնացել կնգայ կողքը կտրած՝ ձեռ ու փէշ ընկել: Երկու սարվազ երեխի ձէնը լսել էին, ու հէնց շեմքի առաջին խեղճ խառատին տուել մէյիդ քցել [3]). հիմի կնիկը մնացել ա անտէր տանը վէր ընկած:

Ո՞վ սիրտ ունի, Թող համբերի, ի՞նչ անեն ողորմելի իշխանները, էստեղ պրծան, էնտեղ վազեցին:

— Արանչոնց մօտ, Ծիրանաւորի գլուխը պտի բարձրացնել էս ծննդկանին, հրամայեց Գէորգ խալֆէն: Դու տէր Յարութիւն, էլ կանգնիլ մի՛, վեր կա՛լ խաչ ու աւետարանը, էլլէկի առաջն ընկի՛, ես էլ արանչոնցը կարգի գնեմ ու գամ հասնեմ,

---

Քթոցը կախ ընկաւ Ծիրանաւոր եկեղեցու կռիցը պարանով, խառատ Աբրահամի կինը իւր բարուրը գիրկն առած՝ մէջը նստաւ և քթոցի հետ վերև համբարձուեցաւ:

Ձեզ տեսնեմ, ձեր ջանին մեռնիմ, իմ կտրիճներս, խրախուսեց ներքևից Գէորգ խալֆէն արանչիներին, օյաղ [4]) կացէք, գեղն ու յլքանիքը լաւ պահեցէք, ընչանք լաւ մթնի ոչ, ըտեղից ցած չըգաք, հալալութիւնով, հերթով յլքանիքը ջրեցէք, ընչանք շատ կարիք չըլնի, թուանք [5]) չի ժաժ տաք, աշխատեցէք տեղներդ թաքուն պահել, երբ որ տեսաք թէ էլ ճար չըկայ, արիւններդ էլ մի՛ խնայէք:

— Մեր աչքի՛, մեր գլխի՛ վրայ, Գէորգ խալֆայ, լսեց ցաւալի իշխանը վերևից արանչիների պատասխանն ու արտասունքը թափելով համբուրեց եկեղեցու պատը, գնաց էլլէկի հետ խառնուեց:

[1]) Հոգսին [2]) Հիւսն: [3]) Դիակի նման պառկացնել: [4]) Սթափ: [5]) Հրացան:

Ը.

Ք Օ Չ [1])

Աշտարակու էլլէկը [2]) պատաշարի առաջը չէր հասել, բացի արանչէններից ու ոտ ու ձեռքից ընկած ծերերից ու ծանր հիւանդներից բոլոր գիւղն այս տեղ է. տէր Յարութիւնը աւետարանը քաշած՝ յառաջ էր ընկել և հօր պէս քաջալերութիւն կարդում, տղամարդիկը իրանց շրջապատող սարվաղների մըտրակներն անուշ անելով, առանց ղանաղանելու խուրը կամ օտարինը՝ օգնում էին, ամէնքի կարիքին էլ հասնում էին։ Աւերլորդ ձի կամ եզ ունեցողները չունեցողներին էին առաջարկում, էլ առանց տիրոջ կամքը հարցնելու առնում էին աղքատ մայրերի կամ պառաւ տատերի շալակներից նրանց ծանր, բայց քաղցր բեռը— անմեղ երեխաներին և նստացնում իրեանց գրաստի վերայ. շատ փոքրիկներին էլ կոխում էին խուրջինի [3]) մէջը. յետ էին բաց անում եզան կամ կովի վրայ քցած խուրջինի բերանը և ամէն մի հակի մէջ երկու երեք երեխայ տեղաւորում, փոքրիկ գլուխներն էլ բերանից դուրս հանում։ Մեզ համար անշուշտ հիմա ծիծաղելի կը լինի, բայց այն ժամանակը ցաւալի էր տեսնել եզան վրայ ձգած խուրջինը, կամ երկու ջվալ միմեանց կարած՝ որոնց միջից կախ ընկած են այս և այն կողմից մի քանի մանուկների մանրիկ գլուխներ ու պստիկ պստիկ աչքեր, որոնք կարծես իրանք էլ զարմացել այս օտարոտի նոր տեսարանի վերայ, ձայները կտրած՝ աչքերը պլշրակլին արած՝ [4]) հետաքրքիր են լինում։ Բայց Աստուած ոչ անի, թէ որ նրանցից մինը իւր քաղցր զուռնէն սկսեց. լացի ձայնը բարձրացրեց։ Ականջներդ փակի՛ր, որ չըլսես, բոլորը միասին կը զռան, ու քաջ մարդ կասեմ, թէ այս երաժշտութիւնը անտարբերութեամբ լսես։ Հինգ կամ վեց տարեկան երեխայքն էլ կիսամերկ՝ մի մի արխալըղի կամ շապկի գուրշ [5]) վըէն քցած՝ բոբիկ ոտներով կուռ կուռի բռնած՝ վազում են քարոտ դարիդուսովը [6]) և կամ իրարից առաջ կտրուկ անում։ Ամէնքից ուրախը սրանք են.—ուխտ ենք գնում, միմեանց ասում են, ա՛յ, հիմի կը հասնենք սուրբ Գէորգի ցից քարը, տեսնենք մեզանից ո՞վ յառաջ կը համբուրի քարի պիպը [7]) ո՞վ յառաջ կը տեսնի աղայ սուրբ Գէորգի գլուխը։

[1]) Ձու, չուել։ [2]) Համայնք։ [3]) Պարկեր։ [4]) Պլշեցրած։ [5]) Հնոտի։ [6]) Ջառիվեր [7]) Ծայրը։

Այս քարը նշանաւոր և ծանօթ է բոլոր Մողնի ուխտ գնացողների համար։ Բարձրանալով Աշտարակու զառիվերը, յանկարծ մի տեղից երևում է սուրբ Գէորգայ հրաշագործ վանքը։ Այս խոկ տեղումը գետնի մէջ ամրացած է մի ապառաժ փոքրիկ քար, ոչ թէ մարդկային ձեռաց գործ, այլ բնականապէս ցցուած ճանապարհի մէջ տեղը։

Վարդն ամէնքից յառաջ ընկաւ. նախրչու որդի է նա, դաշտումը հօր հետ ջահել արջառների ու մոզիների [1]) քամակից շատ է վազել։ Ահա հասաւ նրան տէր Յարութիւնի երեխէն—Թորոսը, բայց շատ ուշ, Վարդը երեք ծունր էլ դրել պրծել է։ Այս անմեղ մանկական խաղերն են, որ երեխաներին փոխանակ նեղութիւն տալու, սիրելի են արել քօչ գնալը։ Անխիղճ պարսիկներն էլ գթոտվում էին այս մատաղ մանուկների պարզ սրտի վրայ, նրանք էլ թող էին տալիս սրանց և զուարճանում, նրանք չէին վիրաւորվում, երբ որ այս փոքրիկ հրեշտակները չոքում են, ցից քարը համբուրում ու վեր կենում, աչքները դէպի երկինք բարձրացնում, թաթիկները դէպի նրան ուղղում, Որը գրկաբաց ընդունում է իւր մօտ, Որը միշտ հրամայում է. «Թող տուէք դրանց ինձ մօտ գալ և մի՛ արգելէք»։

Գէորգ խալֆի խնդրանօքը ուզբաշին [2]) թոյլ տուեց մի՛ երիտասարդի սուրբ Գէորգի ցից քարի մօտից յառաջ ընկնիլ։—Շուտով, հրամայեց խալֆէն երիտասարդին, խնդրի՛ր հայր սուրբին, թող շտապի։

Մողնի դեռ նոր էին մտնում, որ վանքից սրանց յառաջը դուրս եկաւ վանահայր վարդապետը սուրբ Գէորգի արծաթապատ աջը իւր արկղի մէջ բարձրացած։

Պարսիկներն ամենայն ակնածութեամբ ճանապարհ տուին էլի՝ մէրը կորցրած գառների նման մայինը երկինքը բարձրացնելով երեսները գետնին քսելով, մօտենալ այս սուրբ մասունքներին, մի կուշտ ու կուռ արտասունք թափել։ Անիրաւները վախենում էին սուրբ Գէորգից, և մինչև այսօր էլ շատ զգուշութեամբ են խօսում նորա վերայ.—պստիկ սուրբն է, ասում էին միմեանց, դրա հրաշքները շատ են։

—Ո՛վ աղայ սուրբ Գէորգ, քու ոտի տակին մեռնիմ, երկու

[1]) Հորթ։ [2]) Հարիւրապետը։

կարաս գինի իմ ձիու վրայ բարձած՝ քու դուանը կը դարտակեմ, թէ որ ողջ առողջ մեզ յետ բերես մեր վաթանը [1]), կուրծքը ծեծելով ասում էր մինը.—Ես չալ [2]) աչառը [3]) հէնց էս ահալթից քու մատաղն ա, երբ որ ուրախ սրտով, ցամաք աչքով քու դուռը յետ դառնանք. էլ գեղը չեմ տանելու. արջառի ականջը կտրեց մի ուրիշն ու աչքերը սուրբ աջին քսեց։—Մի սաղ տարի տղէքանցս մինը քու դուանը ղուլ կը շինեմ, թող գնայ ընչանք տարին բոլորուիլը քու հանդ ու հանդաւորին, քու մենծ ու փոքրաւորին ծառայութիւն անի, վարդապետի առաջին չոքած՝ երեսը հողին էր քսում երրորդը։

—Ջինաւոր սուրբ Գէորգը բարեխօս լինի, ձեզ էս պատուհասիցն ազատի, փրկի, որդիք, համբուրեցէք, ջերմեռանդ աղօթք արէք, անխնայ խոստացէք, մի՛ վախենաք, սա ձեր հաւարին կը հասնի, ես հէնց հիմի ձեր առաջն ընկած՝ քաշումեմ էս լուսաթաթախ Աջը, ուր որ գնաք, սա ձեզ հետ կը լինի, խրախուսում էր որդեսէր հայր սուրբը։

Մեր ու մանուկ իրանց սրտի ուխտն արին, վարդապետը աջով խաչակնքեց էլլեկի վրայ ու յառաջ ընկաւ ձիու վրայ նստած։

Շոքը քանի գնում՝ սաստկանում էր, ամպերը գլուխ առան, սարերը քաշուեցան, քարափները տաքացել՝ կէծացել էին, գետնի վրայ ոտ դնել չէր ըլում, բայց մեր խեղճ քօչուորները քթինքը ծլծլալով, քիչ էր մնացել Սաղմոսավանքի դարիդուսի [4]) փօշին [5]) էին գէմ ըլում։ Հիմի էլ չես տեսնում առաւօտեան երեխեքանց առաջկտրուկն ու վազվզելը, հիմի էլ խեղճ պառաւները, կամ ծծմերները չէին կարում մի երեխի շալակել, միւսին էլ գրկած՝ ծիծը բերանը քցել, լիքռացնել [6]), էլ ոտքերումը ոյժ չի մնացել, վա՛յ էն քարշ գալուն, որ գնում էին նրանք։ Անխղճմտանք պարսիկներն էլ ղամչու [7]) առաջն արած՝ էլ ոչ աչքեն հարցնում, ոչ քիթ ու բերան, ոչ մեծ են մարդի տեղ քցում՝ ոչ պստիկ, որ վրայ չեն բերում ու գաղգլորիկ անում, [8]) կպած տեղը երկու մատը ձուկն է կապում, [9]) կապտում, ըղակ կտրվում. քաղցածութիւնը, ծարաւութիւնը, դադրածութիւնը—էս ամէնը միացել են ու անտէր անտիրական ժո-

[1]) Հայրենիք։ [2]) Խայտաբղէտ։ [3]) արջառ։ [4]) Զառի վեր։ [5]) Թումբ. [6]) Անյագօրէն ծիծ ուտեցնել։ [7]) Մտրակ։ [8]) դաղել, այրել։ [9]) Ձկան միջքի նման բարձրանալ։

ղովողին անօրէն սարվազների բարկութեանը զոհ արել դրանց։

Սրտովն արիւն է գնում Գէորգ խալֆի, մին պտիտ պտիտ անելով էլլեկի գլխովը, սրան նրան սիրտ է տալիս, մին մօտենում է իւզբաշուն, չլինքը ծուռը աղաչում, որ արգելի էս նեղութիւնները։ Է՜հ, շունը շանից՝ երկուսը մի տանից. գլխաւորը թէպէտ մի թուլաբերան հրամայում է չընեղացնել, բայց լողն ով է, էլ էն ջուրն է, էլ էն ջաղացը, աչքը թերթելու պէս էլի ղամչին գալիս է սրա նրա գլխին։

Գէորգ խալֆայ, գլխիդ մատաղ, մի ճար ունիս տես, էլ ջան ու թաղաթ [1]) չմնաց էլլեկի մէջ, կոտրուեցինք գնաց, մօտեցան նրան մի քանի ծերեր։ Ա՛յ, հասանք Սէրգեւիլ գեղի քեալավէքանց [2]) մօտ, հազիր ջուրն էլ գալիս ա, մի բան արա, բալքի էս կանանչ խոտի միջին վեր գանք, թէ չէ սրանց, միտքը ինչպէս երեւում ա, Աւանչալան հասցնելն ա. ոչով սաղ չի մնալ, մինը տեղ չի հասնիլ։

—Հը՞մ, ի՞նչ կայ, էլի մի փորացաւ կուննաս, քթի տակին քմքածիծաղ տալով հարցրեց իւզբաշին Գէորգ խալֆին, երբ որ վերջինս երկու պաճախլու ջեբեցը հանած՝ մօտեցաւ նրան. չըլնի՞ ուզումէք էս դղումը վեր գալ։

—Ոնց որ տեսնում ես, էլլեկումն էլ ջան չը մնաց, ըղէնց մի բան անես, լաւ կըլի։

—Իսկ մեր սարվազներին Աստուած չի ստեղծե՞լ, սրանք քաղցած օդ պէտք է կուլ տա՞ն, ոսկիները ծոցաջէբը կոխելով, ծածուկ աչքով արեց ու բարձր բարձր թնդուած պատասխանեց մեծաւորը. դուք ձեր ապրանքն, ականջներդ գինջ, առաջէք արել քշում, ես էլ իրաւունք չունիմ բարձած ու քշած տաւարից օգուտ քաղելու, էլ չէք ասում, թէ էս մարդիկը մեր համար են չարչարվում։ Մեզ հրամայած է յետ մնացածները մորթել։ Աշտարակու հանդումն արածող ապրանքն էն խոտը չի կերել, որ մի օրումը բէզարի, չաղ սիրուն մարալի պէս են վազում։ Շատ լա՛ւ, եթէ դուք ձեր կամքովը մի քանի ոչխար կը տաք, որ իմ սարվազներն էլ մորթեն ուտեն, ես էլ ձեզ էստեղ վեր կը բերեմ։ Իմ ձեռքին է, ուզենամ ծուռն աչքով մտիկ տալ, բոլորն էլ կը կոտրեմ, հարցնողն ո՞վ է, կասեմ դադրել էին, գնալ չէին կարողանում, պրծաւ,

[1]) Ոյժ։ [2]) Աւերակ։

գնաց. բայց չէ, թող ձեր կամքովը լինի: Արի դու էնպէս արա, ես գիտեմ իմ քաջերի սիրտը Աշտարակու ոչխարի քիւլլամայ ու խաշլամայ է ուզում, ձեր մսի համն ուրիշ է. Աշտարակը դեղ հօ չի, դրախտ է որ կայ. ես խանի տեղակ լինիմ, օրն էս օր կը հանեմ անհաւատ հայերիդ ու մուսուլմաններ կը բնակեցնեմ: Մեր տղէք, յետ դառաւ մեծաւորը դէպի իւր սարվազները, առանց գէորգ խալֆի պատասխանին անգամ սպասելու, Աշտարակու էլլեկը խնդրում է, որ էս կանաչ տեղը գնջանայ, ձեզ էլ 100 ոչխար է տալիս, արեւն էլ ղըլը [1]) կողմն է անց կացել, ճաշուան նամազի [2]) ժամանակն է, հազիր լաւ ջուր էլ կայ, էս գիշեր էս տեղ մնանք, էգուց հովով սարը կը բարձրանանք:

Ինչպէս երկու շաբթուան քաղցած՝ փորը փորին կպած գայլեր, մի աչքը թերթելումը էս մեր սարվազներն ընկան ոչխարների հօտերի մէջ ու աջ ու ձախ խանչալի ծէրով ծակծկոտեցին: Հինգ էնքան բազմութիւն լինէր, բաւական էր մորթածները. մի կողմից ծակոտում, միւս կողմից քարշ էին տալիս ջրի ափին թափում. ով գիտէ բոլորը կը ջնջէին, եթէ իւզբաշին գէորգ խալֆի խնդրանօքը չը հրամայէր բաւականանալ: Վերջը երբ որ տեսան, թէ էդքանը լափել չեն կարող, չաղերը ջոկեցին, մնացածը հայերի առաջն ածեցին:

Օճաղները սարքուեցան, ծիրանի մուխը քուլայ քուլայ երկինք բարձրացաւ, չաղ չաղ խորովածների հոտը աշխարհքը բռնեց, մի քանի տեղ էլ գետինը փորում էին, կրակ անում ու մի ամբողջ ոչխարը մորթու մէջ կոլոլած՝ [3]) քօզի միջին թաղում, քիւլլամայ անում:

Թուրքերը մի մի սանդրի կտոր, մի բոլորակ կոլիկ պատիկ քար ու մի սեւ տէրողորմեա մի կեղտոտ սեւ աղլխահնի վրայ փռեցին գետնին, կռները մինչեւ արմունկն եւ ոտքերը մինչեւ ծնկները թաց արին ու երեսները հարաւ դարձրած՝ մտքով իմամների գերեզմանների սպասաւորների հետ Մէքքա ու Մեդինումը կամ Քեարբալին էին դառնում: Ճաշուայ նամազը պրծան թէ չէ, էնքան լափեցին կեղտոտ ձեռներով, որ դունչ ու մռութը [4]) ճենճումը կորչելուց յետոյ՝ աչքերն ու շորերն էլ կողտոտուեց ու էլ տեղերից շարժուել չէին կարողանում. որտեղ հասաւ, վեր թափուեցան ու շնթռկեցին, [5])

[1]) Հարաւային կողմը, դէպի ուր մահմետականներն աղօթում են: [2]) Աղօթք: [3]) Մոխիր: [4]) Ռնգունք: [5]) Շան պէս քնել:

երբէք հոգս էլ չանելով, թէ աշխարհքումն էլ մժեղ, ճանճ, մոծակ, կրէտ, [1]) բզէզ ու ես ինչ գիտեմ, հազար ու մէկ ժժմունք չի մնաց, եղտ բերանների վրայ հաւաքուած՝ շնչի հետ կուլ էին գնում ճաշից յետոյ մրգի փոխարէն:

Այսօր մեր էլլեկը մի փոքր հանգստացաւ Սէրգեւիչի աւերակների տակին:

Թ.

ՈՍԿԻ ԳՈՒԹԱՆ

Ինչպէս թափառական քրդերի վրանների տեղեր, ուր քանի չեն քօչել ամէն բան կարգին է, եւ երբ որ էլ իրանց իջած տեղը արօտ չմնաց, մի առաւօտ վեր կը կենան կը բարձեն իրանց շարժական տունը կովերի, եզների, իշանոց եւ իրանց շալակը եւ կերթան ուրիշ կանաչ ձորադաշտեր կը բռնեն, ու մէկ էլ էն կը տեսնես, որ երկնքի գիշակեր անգղներն ու դաշտի պտտառող գազանները հոտից զգալով, թէ այդ տեղ իրանց համար ուտելիք կարող են գտնել, հաւաքվում են այդ վրանների տեղերը եւ իրանց համար որս պտըտում, — էդպէս էլ էր ճիշդ քօչը կարմրաւորի թմբից հեռանալուց յետոյ Աշտարակ գիւղը: Ամէն փողոցով վաղէվազ են անում պարսից սարվազներն ու հոտառու շների նման ամէն մի դռան առաջին կանգ առնում. էլ ոչ մի դուռը դրանց առաջին փակ չի մնում, մի քանի քացի խփելումը դուռը տեղահան են անում ու տուն թափվում. էլ քունջ ու պուճախ չի մնում, էլ գոմերի մսուրքներ, պատերի խոռոչակներ, սանդուղտների տակեր չեն թողում, որս պտռտող թազիների [2]) նման ամէն տեղ քրքրում են: Մի տանից տեսնում ես, պղնձեղէն են դուրս քաշում, միւս տանից՝ կճուճներ, [3]) մի գոմից դաբաղ [4]) ընկած հիւանդ անասուններ, մի ուրիշ մառանից ծիրանի չրով լիքը քթոցներ. ինչ որ պէտքական գտան, ձեռից չեն թողնում: Մի սենեակ կայ, որտեղից՝ ոնց որ խոզի մսից՝ փախչում են մեր ջերմեռանդ կրօնասէր Ալու Թոռները. էդ շիրախանէն, կամ զէրուզամբին է, որտեղ Աշտարակցոնց գինու կարասներն են շարած: Շատ լաւ էլ իմանում են սուրբ

[1]) Իշամեղու: [2]) Որսկան բարակ շուն: [3]) Հողի ամաններ: [4]) Անասունոց հարբուխ:

մուսուլմանները, որ կարասների տակին իրանց համար շատ պաշար կը գտնեն, բայց Ղուռանի խօսքը Երբ գետինը կը քցեն. գինետուն ու պարսի՛կ. էն էլ էնքան բազմութեան մէջ, օրով ցերեկո՛վ:—Գլուխ գալու բան չի: Բայց չէ՞, սրանց մէջը մոլլէք էլ կան, նրանք տեղն եկած ժամանակը Սուրբ Գիրքը կարդանում են մենակ և մեր սարվազներին զզուացնելով կարասների տակը կոխում: գոնեա՛, մի մխիթարական բան կայ, որ կարասները չեն կոտրում: Ցանկարծ անիծուած հեղուկը գինին նրանց վրայ թափուի ու իրանց մուռտառի: Աստուած մի՛ արասցէ, տասը տարի էլ որ օրն եօթն անգամ նամազ անեն, էդ մեղքի տակից չեն կարող դուրս գալ:

Այս անգամ մրջիւնի քարվանի պէս Թալանչիքը տուն ու դուրս են անում ամէն տեղ ու շալակները գիւղի ափին, Ագլենց կալումը Թափում, էլ յետ գեղը մտնում: Վա՛յ էն տանը, որտեղից իրանց ոտքի վարձը, գոնէ, չկարողացան դուրս բերել. Հազարաւոր հայհոյանք տան տիրոջ հաւատին, օխտը պորտին կը տան ու կամ դռները կը կոտրատեն, կամ օճորքը կը քանդեն, կամ մի պատը շուռ կը տան. մի խօսքով, առանց վնաս տալու ոտը դուրս չեն դնիլ:

—Մեր տղէք, տներս քանդուեց, տեսէք քանի՞ ջվալ բան են դուս բերում, հէնց իմանաս, թէ ամէն պահարան գտել են. ես երեք քօչ եմ տեսել, երկու հետ էլ արանչի եմ մնացել, էսքան շատ թալան չեմ տեսել. Ծիրանաւոր եկեղեցու գլխից պահապանական ծակից նայելով ասում է մի արանչի:

Մերոնք հետաքրքրուեցան ու ամէն ծակից աչքը դուրս տնկեցին:

—Չէ՞ք տեսնում, ի՛նչ Ասսու կրակ ա թափուել մեր գլխին, նկատեց մի աւելի սրատեսը, Ղևոնդ աղէն Սողոմոնենց կտերը կանգնած՝ երթիկովը մտիկ ա տալիս, ա՛յ, սարվազները չուանով կախ են ընկնում երթկից:

—Տունս քանդուեց, դուռս շարուեց, ձեզ ղուրբա՛ն, էն քօփակ [1]) տէր Մելքսէթը երեք Թուրքի մեր բակի միջի թարեքի [2]) տակի հօրն ա շանց տալիս. օգնեցէք, լինգը տուին հօրի բերնի քարի տակը, լացակրկնած երկու ձեռքով գլխին խփեց Մարկոնց համբարձումը:

[1]) Մեծ գամփռ շուն: [2]) Անօթներ դարսելու տեղ:

—Հիմի՛, որ մեր գեղը քանդուեց, ամէնքիս աչքն էլ դուս էկաւ, գլուխը տմբտմբացրեց ծերունի Անտօն պապը՝ ձեռնափայտը ծնօտի տակին սիւն տալով ու ծակիցը մտիկ անելով. գողը որ տանու ըլի, եզն երթկովը դուս կը քաշի. Հիմի մեր չիրախանէքանցիցն էլ ձեռներդ լուացէք, էդ ոչ ու փչերը արխէյին [1]) կը մտնեն ու էլած չէլածը դուս կը քաշեն:

—Ի՞նչ կըլէր Ասսանից մի քարափ վէր ընկնէր էդ մեռոնն երեսներիցը վէր եկածների գլխին ընկնէր, չնաստակ անէր. տեսէք, մտիկ տուէք, Ասսու ահը սրտներիցը գնացել ա, երեսներին ջուր չի մնացել, ըսկի ամանչում, գետինն էլ չեն մտնում, տես ո՛նց էդ կէծակի [2]) գալու Ղևոնդը մատը տնկել մեզ ա շանց տալիս Թուրքերին, ու առաջ ընկած՝ դրա Գևարանենց բակը գնում, սուս կացէք, ձեզ մատաղ, մի լսենք, թէ էն գող աղուէսն ի՛նչ ա խօսում Փարրաշբաշու հետ:

—Շուտ արա, Ղևոնդ քեօխվա՛յ [3]) ոսկէ գուլթանը գտի՛ր, թէ չէ իմ միջքիս կաշին էլ կերթայ, քու գլուխն էլ, բարձր բարձր լսում են մերոնք Փարրաշբաշու խօսքերը. դու անցիր խանին, որ քու աչքովդ տեսել ես. չէ՞ որ հինգ լուծ եզը քաշել չէր կարող, մենք էլլեկի մէջ էնպէս բան չտեսանք, էստեղըանք էլ ոչինչ չի երևում, ո՞ւր ա, ի՞նչ էլաւ:

—Ա՛յ հէնց էս տունն ա, որ կայ, Աստուած ոչ գիտա իրանց գլուխը, ո՛ր ծակն են կոխել. երևում ա, որ իմ էս շան տղայ ծառէն քօչացնելու հոտն առել ա ու առաջուց գեղը չաւ արել, որ հիմի մենք շատ տանից ձեռներս դատարկ ենք դուրս գալիս: Չըլի՛մ, չիմանամ, որ տակիցն ըտէնց բան դուս գայ, անմահ, անգրող կը սպանեմ, էս Թուրքը տեսնում ե՞ս, կը փռթեմ, ղիմա ղիմա [4]) կանեմ, մենծ թիքէդ անկաջդ կը թողամ, լսում ե՞ս, ի՞նչ եմ ասում, դու հօ չե՞ս չուղուլութիւն, [5]) խաբարբղանութիւն [6]) արել. ասա՛, թէ չէ էս սհաթը մահացրի, յետ դարձաւ Ղևոնդը դէպի իւր հայ ծառայն:

—Չէ՛, գլխիդ մատա՛ղ, քու հացն իմ աչքերը բռնի, թէ որ բերնիցս մի բան դուս եկած ըլի. ես թէ չէ ես բան իմացած ըլիմ, արդարանում էր ծառայն:

Ջէնդ կորի՛, լլկուի՛, փուչ կենդանի՛, մի սաստիկ ապտակ երեսին թխկացրեց Ղևոնդը, շուն ու գէլ հօ խաբար չտուի՞ն, բաս

[1]) Ապահով: [2]) Կայծակ: [3]) Տանուտէր: [4]) Կտոր կտոր: [5]) Լրտեսութիւն: [6]) Լրատարութիւն:

ծուր ա, ո՞ր ջհանդամը [1]) կորաւ Գևարանենց ոսկի դուլթանը, քու քառ. անկաջովդ դու լսել չե՞ս, որ սրանք ոսկի դուլթան ունե՞ն. ասա էլի, ի՞նչ ես պապանձուել, Թուրքերէն ծղրտաց նրա վերայ Ղևոնդը:

—Ղորթ ա, լսել եմ, դէ համա ես ի՞նչ գիտեմ ո՞ւր ա, խեղճ խեղճ պատասխանեց ծառան, ու երբ որ Ղևոնդը ուշք չդարձրած սկսեց փարրաշքաշու հետ խօսիլ, ծառան ատամները կրճտեցրեց, գլուխը իւր աղայի վերայ թափ է թափ տուեց ու պռօշները կծոտելով, փնթփնթաց.—էս օր եա ես չը պտի ըլեմ, եա դու:

Գևարանենց քունջ ու պուճախը քրքրեցին, ծակ տեղ չմնաց տակն ու վրայ արին, ոսկի դուլթանը չկար: Ղևոնդն իւր միտն ուտում էր, նա երեխութիւնից լսել էր, բոլոր Աշտարակցիք էլ նրա հետ հաստատ հաւատացած էին, որ Գևարանենք ոսկի դուլթան ունին: Վաղուց էր Ղևոնդը մտքումը դրել էր խանին յայտնի, բայց վախում էր սուտ դուրս գար. վերջապէս այս անգամը վճռեց, ասաց ու սատանական չկայ: Մոլորուել, պաշարուել էր:

Հիւսիսային բարակ քամին պարզ և որոշակի ամէն մի Գևարանենց բակում խօսեցածը բերում հասցնում էր Ծիրանաւորի գլխի բնակիչների ականջը, որոց մէջ էր և Գևարանենց 70 տարեկան Յակոբ պապը: Ոնց որ մի կանգնած ջուր, որ եղանակը հանդարտ ժամանակը չես էլ իմանալ, շարժվում է ոչ, այդպէս ոչինչ ազդեցութիւն չէին կարողանում անել ծերունու վերայ ոչ տունը քրքրելը, ոչ Ղևոնդի խօսքերը: Ուրիշները մի մին մտիկ էին տալիս նրա վերայ աչքի պոչով ու սուս կենում, իսկ ինքը ամենևին այնմ էլ չէր քցում [2]), երևում էր, որ պարզ ծիծաղում է մարդկանց արարքի վերայ:

Ցիմար Ղևոնդ, ծօծեմ կատարդ, վերջապէս բաղի տակին ծիծաղելով ասաց Յակոբ պապը. ոսկէ դուլթանը ձեր առաջին ընկած ա, ու դուք ձեր քօռ աչքովը չէ.ք տեսնում: Գիտէ.ք ի՞նչ կայ, յետ դարձաւ նա հետաքրքրութեամբ ականջները սրած իւր չորս կողմը հաւաքուածներին. Գևարանենց տունը նախնուց պարծեցել ա իւր ոսկի դուլթանովը, համա ընչանք էսօր ձեզանից մինը տեսել չի. ընենց չի՞: Այ, ասեմ ձեզ. մենք ունինք ոսկի դուլթան. տեսնում է՞ք մեր բակումը պատի տակին ընկած փէտէ դուլթանը. տեսնում էք ծերի ժանգոտած երկաթէ խոփը, հէնց էն ա, որ մեզ համար ոսկի ա

[1]) Դժոխք: [2]) Հոգալ:

բերում. պապ ու տատից մենք լսել ենք մանկուց, որ դուլթանի անումը Ոսկի պտի տուած, նա որ չըլնի, քօմձքս [1]) էլ տված կը կոտրուինք:

Այս բացատրութիւնը փարատեց Աշտարակեցոց աւանդաբար ունեցած կարծիքը ոսկէ դուլթանի համար և ամէնքը բերանները բաց՝ զարմացած մնացին.

Երկար ժամանակ Գևարանենց տունը քար ու քանդ արին, գոմի օջէն, թունդիրների [2]) մէջը, ննդոների [3]) ծակերը, ամէն տեղ աղեցին-մաղեցին [4]) ու ոչինչ չգտան:

Ի՞նչ անենք, տէրտէր, էդ անտէր ոսկի դուլթանը կորել ա, երևում չի, թաղանած բաներն էլ ային-օյին [5]) զատիր են, մենք հօ կը կորչենք. չի ըլի՞, որ մի հնարքով Ծիրանաւորի պահարանը ձեռք քցենք, բալքի խանի կշտին երեսատեղ ունենանք. հարցրեց Ղևոնդը տէր Մելքսէթին, երբ որ վերջինս տուն մտաւ և ուսերը բարձրացրած՝ սիրտը կոտրած՝ ասեց, որ աւարը շատ քիչ է դուրս գալիս:

—Ի՞նչ պտի անենք, տէրտէրը պատասխանեց. պտի սպասենք ընչանք իրիկուն. արանչիքը որ ցած կը գան ղիքանիքը քաշուելու, կը բռնոտենք, կասենք, թէ որ դուռը չէ.ք բաց անել, ամէնքիդ էլ կը կոտորենք. նրանք էլ կը վախենան, Ծիրանաւորի պահարանը մեր ձեռը կը տան:

—Տեսնենք, մտքումը փնթփթաց կրկին Ղևոնդի ծառան, լաւ երազ է, թէ որ կատարուի, դանակն ոսկոռին հասել ա:

—Դևռ դըմ ղիքանիքը, յառաջն ընկան Ղևոնդն ու տէր Մէլքսէթը, դեռ հնձաններից ու տաքարներից պրծնենք, էս քշեր թալանը չաղ կըլի. տեսնում էք եկեղեցի՞ն. մատով ցոյց տուին Ծիրանաւորն ու թալանչիներին առած՝ հեռացան Գևարանենց տանից:

Ժ.

ԱՐԱՆՋԻՔԸ [6])

—Սո՜ւս..... թղկոց ա գալիս, նշանի ձէն ընկաւ անկաջս....

Ծիրանաւոր եկեղեցու գլխին տիրեց խորին լռութիւն. երիկուն էր, լոյսն ու մութը նոր բաժանվում էին: Ներքևից լսուեցաւ երկու անգամ ծանր և երեք միմեանց ետևից շուտ շուտ դռան

[1]) Բոլորեքեանքս: [2]) Թոնրոն: [3]) Թոնրին օդ մտնելու ծակը: [4]) Որոնեցին: [5]) Աննշան: [6]) Գիւղապան:

թըկթըկոց. սրանից յետոյ էլ երկու անգամ ծանր և երեք շուտ շուտ հաղի ձայն:

— Նշան են տալիս, ես վախտ ով պտի ըլի, իրարու հետ փըփըշալով միտք են անում արանչէքը, չըլնի՞ քօչատեղից մինը յետ ա մնացել, եա բանի են ըրկել:

Մեր տղէքը չէին վստահանում քթոցը կախ անել, վայ թէ մի օյին են [1]) ուզում գալ, հետևեցնում են անդադար նշանի ձայնին:

— Որդէք, գիտէք ինչ կայ, ասեց Անտօն պապը. Աստու անունը տուէք, քթոցը կախ արէք. դուք արանչի էք. դուք գիտէք, թէ արանչու պարտքն ինչ ա, դուք որ կաք, ես սհաթս գեղի տէրն ու պահապանն էք, դուք ձեր էլեցն ու ընտանիքիցը յետ էք ընկել, արինն աչքներիդ տակն էք առել, գլխներիցդ ձեռք եք վեր կալել, որ գեղը պահէք, քշերները ցած գաք մեր յիքանիքը ջոկէք, գեղըն գլուխ քաշէք, ըստեղ մնացած անկեալ–ունկլւընելիս [2]) համար ջրի ու ապրուստի թադարէք [3]) քաշէք, ինչ երկարացնեմ. սաղ Աշտարակն էս օր ձեր ումուտին ա, [4]) երկու երեք հարիւր տան աչքը ձեր վրայ ա. տեսէք, վըրներդ մոտիկ ես տալիս, մարդի աչքը ա ծակում ձեր թուր ու ասպապի պսպղոցը, էլ ինչ էք շատ միտք անում, ումնից պտի վախենաք, վերև եկողը մի մարդ պտի ըլի, որ կրակ էլ դառնայ, էրել չի կարող, գլուլլախորով [5]) կանէք. վերև քաշեցէք էդ մարդին, բալքի հէնց մեզնից ա, անիրաւ թուրքերի ձեռքից փախստական մեղա հասել:

Արանչէքը կարմրեցին ու ձեռաց պարանով մի քթոց ներքև թողին: Խորհրդական անձը նստեց քթոցի մէջ և երկու անգամ պինդ ձգեց պարանը: Այս նշան էր իւր պատրաստութեան, և ահա օդի մէջ քթոցը վերև համբարձուեցաւ:

Ծփոթը բոլոր արանչիներին տիրեց, քիչ մնաց նոր եկող հիւրին պատառ պատառ էին անում:

— Սուրբ Գէորգի գլուխը կըսիրէք, մի քիչ հովսուլա, [6]) համբերութիւն ունեցէք, ինձանից երկիւղ մի՛ քաշէք, մի հարկաւոր բան ունիմ ասելու, ձեր գլխներն ու Աշտարակ գեղը պրծացնելու համար եմ եկել:

---

[1]) Հնարք, խաղ: [2]) Անդամալոյծ: [3]) Պատրաստութիւն: [4]) Յոյս: [5]) Գնդակախորով: [6]) Համբերութիւն:

— Տօ, տանք օձի պէս գլուխը ջանջախ անենք, [1]) ինչ էք լսում դրան, սաքըովլի բան կըլնի:

— Չէ, որդէք, մէջ ընկաւ էլի Անտօն պապը, թողէք տեսնենք ինչ խաբար ունի, դրանից ինչ էք քաշվում, տեսնիք, որ խոսքերումը մի քիչ սուտթիւն ա մաշուր ըլում, [2]) վեր կալէք, գլխի վրայ ներքև քցեցէք ձորը, բանհոգի [3]) արէք:

— Ի՜հ, իմ մեղքն ա, ձեզ ինչ ղնամիշ անեմ, [4]) ես էլ ձեր տեղն ըլէի, ձեզանից աւելի թունդը կանէի, իմ աղէ կշտին լաւ մարդը մի սհաթ բանդ կըլնի՞, [5]) որ ես տարիներով եմ ընկած, նրա տունն Աստուծ քանդի, բաբելական կրակն ընկնի Ղևոնդի օջաղը. դուք հէնց գիտէք, թէ ես շատ թիլանում եմ նրա մօտ կենալու համար, ինչ կանես, լեզուս կարճ ա, հօրս պարտքը տալու համար եմ դռանը եսիր դառել. թէ չէ ես նրա տանը հաց հօ չեմ ուտում, լեղի ու արէն արտասունք ա իմ կերածն ու խմածը: Ես հիմի եկել եմ մի շատ հարկաւոր բան ասեմ ու գնամ, օրն էգուց եա ես կըլնիմ, ես իմ աղէն: Համա գիտէք ինչ կայ, շարունակեց Ղևոնդի ծառան, երբ որ ամէնքը բերանները բացած մնացել էին նրան մոտիկ տալով. էս քշեր, ինձ լսեցէք, դուք յիքանիքը մանգալու համար ցած մի՛ գաք. Ղևոնդն ու տէր Մելքսեթը թալանչիների հետ խորհուրդ են արել, որ ձեր ճամփէն կտրեն, ցած եկողին բռնոտեն, մի մին բերաններդ կապեն ու երբ որ ամէնքդ էլ վեր էկաք պրծաք, զօռ անեն, [6]) Ծիրանաւորի դուռը բաց անել տան, պահարանը թալան տան, յետոյ կենտ–կենտ [7]) ձեզ սուրը քաշեն: Դէ շուտ արէք, ինձ ցած թողէք գնամ, դուք ձեր գլուխը պրծացրէք:

Երկիւղն ամէնքին տիրեց, կասկածն ընդհանրացաւ, չգիտէին հաւատա՞ն Ղևոնդի ծառային, որի վերայ բոլոր գիւղը երկմիտ աչքով էր մոտիկ տալիս. մնացել էին մոլորած, սպասում էին, թէ ինչ դուրս կըգայ ծերունիների բերանից: Բայց Ղևոնդի ծառան չթողեց էլ, որ խօսեն:— Ես տեսնում եմ, որ իմ էհտիբարը կորած ա, դուք ինձ դժար էք հաւատում. որ ըտէնց ա, ձեզանից մի քանիսը թող ինձանից յառաջ վեր գայ, ինձ էլ կապկպոտեցէք, ներքև բերէք, մի թաքուն տեղ տապ կացէք, [8]) թէ որ մի կէս սհաթից

---

[1]) Ջախջախել: [2]) Երևում: [3]) Հոգին դուս գալ: [4]) Մեղադրել: [5]) Մնալ: [6]) Ստիպել: [7]) Մէկառ մի: [8]) Թաքչիլ:

իմ խօսքերս ճշմարիտ դուրս էկան, ձեր գլխի ճարը տեսէ՛ք, ինձ էլ ազատ թողէ՛ք, թէ չէ ինձ ղիմա ղիմա տուէք տօլմի պէս։ Ձեզ մատաղ, էլ մոլորուելու ժամանակ չի, ինչ անելու էք, արէ՛ք, ես նրանց ձորաքաշներումն եմ թողել ու փախել, հիմի որտեղ որ է կերևան. համա ես էլ ասեմ, ինչ կանէք արէք, ոչինչ նշանի անկաշ մի՛ անէք։

Քսան հոգի կտրիճ տղամարդիկ, գլխիցը ձեռք վերցրած արանչէք՝ ոտից գլուխ ղրահաւորուած՝ կրակների մէջ կոփած՝ Բերդի դռան գլխին հրացանները վրի ուսը քաշած՝ Ղևոնդի ծառային էլ կապած՝ մէջները վեր ձգած՝ սպասում էին, երբ որ Ղևոնդն ու Տէր Մէլիքսէթը մի խումբ պարսից թալանչի սարվազներ հետն առած՝ եկան Տիրանաւորի մօտ։

— Դեռ շուտ ա, ասաց տէր Մէլիքսէթը, դեռ իջած չեն ըլել, նրանք ընչանք Բ ա ղ ու մ ք ը լաւ բարձրանայ ոչ, ցած եկողը չեն։

— Աշխատեցէք քթոցը ցած գալուս միջի մարդի բերանն աղլուխ խրել. մենք էլ դուրս գալու նշանը կըտանք ու ըռէնցով բոլոր արանչէքը մեր ձեռին կըլինին. երբ որ թուրը շլնքներին դէմ էլաւ, վիրևի մնացածները սրանց խօսքը կըլսեն ու ընտեղից կըմտնեն ժամի դուռը բաց կանեն. վիրևից տեղ կայ եկեղեցին մտնելու։

— Սրա համար ի՞նչ նեղութիւն ենք քաշում. հէնց էս սհաթին դուռը կրնկահան անել կըտամ, մի աչքով անեմ մի քաջերիս թէ չէ, սրանց առաջին սարն էլ չի դիմանալ. պարծեցաւ սարվազների գլխաւորը։

— Էդքան էլ հեշտ չկարծես, ընչանք մեր տղէքը դուռը տեղահան կանեն, մեզանից 10 մարդ կըմեռնի, մանիկ տուր վիրևը պատի միջից դուրս ցցուած ղարաւուլատեղերին, նրանց տակիցը կարկտի պէս գլուլէքը մեր գլխին շաղ կըտան, ցոյց տուեց նրան Ղևոնդը պատից դուրս եկած պատնէշները։

— Համբերութիւնս հատաւ, դուք մեզ չօլ է չօլէք քցում, բարկացաւ մեծաւորը, մեռանք սպասելով. էստեղից ոչ ո՛վ ներքև եկողը չի, ինչ անումէք արէք, թէ չէ սաղ օրը սարվազը կոտորեցէք արևի տակին, ճարածներս էլ մի բան չի։

Ղևոնդն ու տէր Մէլիքսէթը տեսան, որ արդարև ժամանակը երկարեց, ոչ ով չի իջնում. խորհուրդ արին ուրիշ խորամանգութիւն գործ դնել. ուղեցան նշան տալ, որ քթոց կախ անեն։ Ինչպէս Աշտարակեցի դժուար չէր երկու անգամ ծանր, երեք անգամ

շուտ շուտ դուռը ծեծել կամ հաչալ, բայց քանի կրկնեցին նշանը, այնքան մեռելութիւնը տիրեց, ոչինչ պատասխան չեղաւ։

— Հը՛մ, ըստեղ սատանութիւն կայ, անպատճառ դրանք մեր հոտն առել են, եւ թէ չէ իմ ծառան մեզանից կորել ա մտները ու իմաց տուել, ինքն էլ նրանց հետ վերևումն ա. կամ թէ չէ ներքև են եկել, ըստեղանք մի տեղ պահուել. եկէք մտն դանք էս մտերքը, թէ խօսքս սուտ դուրս գայ, էս բեղս վեր կանեմ, պնդում էր Ղևոնդը. տղէք, հրամայեց սա, բարձրացէք բերդի դռան գլուխը։

Դեռ ոտները մի քայլ յառաջ չէին դրել, որ երկու հրացանների ճայթոցները մի երկուսին գնդակախորով արին։

— Յետ դառէք, գոռաց ևըզբաշին սարվազներին, լոյսը չբացուած՝ ես սաղ գիւղի հետ էս երկու շների գլուխն էլ կտրել կըտամ։

Էլ Տիրանաւորի մօտ մի մարդ չմնաց, Ղևոնդն ու տէր Մէլիքսէթն էլ մկան ծակը 100 թումանով [1]) առան։

— Դէ՛հ, հիմի ձեր գլխին մեռնեմ, ձեր աչքովը տեսաք, ինչ որ ասեցի, ինձ հիմի բաց թողէք գնամ իմ աղի հետ մեր գործը վերջացնենք, նրա մի քթալ արինն էլ թող չըլնի. թէ դեռ նրա օրը կտրուած չի, թող իմ օրս խաւարի։ Ես գիտեմ, նա հիմի Շուխոնց գետովը [2]) վեր եկաւ, գնաց խանի դռանը գլուխն արդարացնելու. ումուտ ունիմ, որ Փիլթավէն չըհասած՝ երկուսիցս մինը սաղ չի մնալ։

— Աստուած քեզ հետ, սուրբ Գէորգը կռանդ ըլի։

Այս գիշեր արանչէքը այգիները չըմտն եկան, գեղի գլխովը պտտուեցան. բաց դռները փակեցին, Այգենց կալում հաւաքած աւարն էլ մօտիկ տների միջն ածեցին, երկու տղայ էլ դէպի էլէկը ղրկեցին Գէորգ խալֆին իմաց տալու, սպանուած պարսիկներին տարան Օլօրաններումը տէր Առաքելենց այգու գլխին հորեցին ու յետ դարձան իրեանց ամրոցը։

Միւս օրը առաւօտեան արեգակը ազրաթի [3]) տեղն էր հասել, որ միևնոյն ժամի մէջ չորս մարդ Սարդարի ոտքերն էին ընկած։ Սարդարը մարմարոնեայ աւազանի մօտ գրկած իւր սիրելի կնոջից ծնած կայտառ մանկանը, փայփայում և գուրգուրանում էր։

---

[1]) Երեք մանէթ։ [2]) Ձոր իջնելու անցք։ [3]) Նախաճաշիկի և ճաշի մէջ ուտելու ժամանակը։

—Գլխիդ մատաղ, քու երեխի գլխովը պտիտ տուր մի սաղ գեղ. Թէ իմանաս քանի՜ էսպէս անմեղ երեխէք մօր գրկիցը խլուել սպանուել են, դու անպատճառ խեղճ կը գաս նրանց։

—Գլխիդ մատաղ, մեղաւորը էս երկու մարդն են, ինչ որ քեզ հասկացրել են, բոլորը սուտ է եղել, համ իզուր տեղը խեղճ գիւղացիք քանդուեցին, համ մենք երկու լաւ տղամարդ կորցրինք։

—Գլխիդ մատաղ, մենք էսպէս սև երես չէինք ըլել, թէ որ իմ ծառէն առաջուց լսէր ու գնար արանչիներին իմաց տար։ Նա իր անպիտանութիւնի պատիժն առաւ էս գիշեր, ինձ էլ ուզում էր սպանի. մինչև ֆիւլթափի բլուրը հետքս պահելով եկել էր, բայց իմ Թրի հունարը [1]) տեսաւ։

—Գլխիդ մատաղ, ուզում էր արդարանալ չորրորդը, որ սարդարի ծիծաղն եկաւ ու խօսքը կտրեց.—վեր կացէք, վեր կացէք բոլորիդ էլ ներում եմ էս իմ երեխի սիրուն. Գէորգ խալֆա՛յ, դարձաւ նա դէպի առաջին խնդրողը, դու Ալի-բէգի հետ գնացէք էլլեկը յետ բերէք, իսկ դուք Ղևո՛նդ ու ղարաքէշի՛շ [2]) Մէլիքսէթ, գնացէք ձեր գործին, դուք իմ հաւատարիմ ծառաներն էք։

Այս քօչին սովորականից շուտ Աշտարակը կեանք առաւ, ամէն մարդ իւր ռանչպարութիւնին [3]), իւր գործին կացաւ ու իւր արևի ձէնն ածեց։ [4])

ԺԱ.

ՏԻԿԻՆ ԵՒ ԱՂԱԽԻՆ, ԿԱՄ ՄԱՅՐ ՈՒ ԱՂՋԻԿ

Ջե՞ս մոռացել, հետաքրքիր ընթերցող, Գրչի Խէչի տակովն անց կենող ընտանիքը, որոնցից մինը մի ջահել կին՝ երեխի բարուրը կրծքին կապած և միւսը մի պառաւ՝ մի մի ձիու վրայ նրստած՝ ծառաների առաջնորդութեամբ դէպի փարբի էին գնում։

Հէնց որ հասան այն Թմբի գլուխը, որտեղից պէտք է ցած գային փարբի գիւղի վրայ, ջահել կինը երեք անգամ գլուխը ուղղահայաց բարձրացնելով, երեսին խաչ հանեց ու մի ուխտ արեց։ Այս կոնդի [5]) քարքարուտ գլխիցը էն ժամանակուան այգիների սակաւութեան պատճառով երևում էր մեր Լուսաւորիչ պապի Ճգնելու

[1]) Շնորհք։ [2]) Սև տէրտէր։ [3]) Երկրագործութիւն։ [4]) Իւր ձայնը քաշեց։ [5]) Բլրակ։

տե՞ղն ասենք, թէ գուցէ մի համանուն հայոց պատմութեան տարեգրներից անյայտ մնացած՝ Ղազար փարբեցու ընկերակից Թարգմանչի գերեզմանը, որի վերայ մեր նախնիքը չէին մոռացել տաճար կանգնացնել և Սուրբ Գրիգորի վանք անուն յատկացնել և որը ժամանակի կամ երկրաշարժների շնորհիւ կիսաքանդ ընկած է մինչև էս օր փարբու այգիների մէջ։ Այսքանը մեզ աւանդաբար հասած է, որ եթէ աշխարհիս միւս ծայրումը մինը կատաղած շանից վիրաւորուի և ուխտ գնի անխօս փարբու Սուրբ Գրիգորի դուռը գալ, նա իւր խնդրուածքին կատարումն և շան դառնացածութիւնից առողջութիւն կստանայ։ Հարկաւոր է միայն, որ ճանապարհի վտանգներից և ուրիշի հետ խօսելուց իրան ազատ պահելու համար՝ գլուխը մի խոտից ոլորած պարան, կամ ինչպէս սովորաբար անուանում են կեմ փաթաթի։

—Ա՛յ, Սուրբ Գրիգորը, մեռնիմ իրա զօրութիւնին, երեսը դէպի իւր ուղեկիցը դարձնելով ասաց տիկին Համասփիւռը։

—Աչքդ դրա աջ էլ քցի՛, խանո՛ւմ, երեսին խաչակնքելով պատասխանեց Սանդուխտ տատը, տեսնո՞ւմ ես Լազրվանու էն դաբլվէրի տակին երևացող քանդուած վանքը, ասում են էն մեր Ղազար փարբցի Թարգմանչի վանքն ա. հէնց ընտեղից են դուս գալիս Օխտնակի [1]) կաթնահամ աղբրները. որ քարերի տակից բստեղից ընտեղից քչքչալով դուս չեն քցում հայլու պէս սառը ջուրը, տեսնողի սիրտը փառաւորում ա. միտս ա գալիս ջահել վախտս, էրնէկ էր էն օրը, Բիրակնայ ձորիցը իրիցանուկ ու բոլի [2]) քաղելու տեղիցը յետ դառնալիս ընչանք Օխտնակի վրայ ոտ ու ձեռներս լուանայինք ո՛չ, նրա անմահական ջուրը խմէինք ո՛չ, օրըներս օր չէր։

—Գիտեմ, ես էլ եմ էլել, երեսի խաչը կրկնելով պատասխանեց տիկին Համասփիւռը, իմ ողորմածիկ հէրս ասում էր, որ Լազրվանն ու փարբին յառաջ մի գեղ են էլել։

—Բաս էն ի՞նչ Թարգմանիչ ա, որ Լազրվանու և փարբու մէջ տեղը մի քարի տակի մի պստիկ խարաբայ [3]) տեղում կայ։

—Չգիտեմ, ես էլ քեզ պէս Թարգմանիչ եմ լսել, կըլի որ հէնց Ղազար փարբեցին ընտեղ ըլի թաղած։

Այս անցքը պատահելուց մի շաբաթ յետն էր, որ տիկին

[1]) Եօթնակնեան։ [2]) Բանջարեղէններ։ [3]) Աւերակ։

Համասփիւռը Նաղի-բէգի տանը բաւականին կազդուրուել էր, մանաւանդ քանի որ իւր աւելի մարդու երեսը չէր տեսել, բայց որի անունովը Թուրքի տանը նրա կեղտոտ հայութիւնին չմտիկ տուած՝ շատ պատւում էին:

—Էգուց մեր ետևից ձիանք պտի գան, ասաց Համասփիւռը Սանդխտին, էս օր մեր տանիցն եկող սարվաղը պատմեց, մեր գեղի էլևկը էս անգամ երկ՝ օր ա դուանը մնացել, Սարդարը խեղճ ա եկել, Սաղմոսավանքի տակիցը յետ դարձրել. դու վեր կաց երեսի բարուրը վեր կալ, գնանք Սուրբ Գրիգորը համբուրենք:

—Ախար լաւ չի ծննդկանին դուս ու տուն անիլը, վախում եմ, դեռ շատ թիլ [1]) ես, դեռ ծնկներումդ թաղաթ [2]) չկայ:

—Է՜հ, ձեռը վեր կալ, այ մէրա, ինչ ես ասում, ինչ ծննդկան, ինչ քար ու քացախ իմ գլխին ու արևին, ջուրն ընկնողն անձրևից կը վախենա՞յ, մեռնիմ Սուրբ Գրիգորի ոտի տակին, նրա դուռը գնացողը կը փոշիմանի՞, յանդիմանում էր հոգածու Սանդխտին տիկին Համասփիւռը:

—Գիտես ինչ կայ, Սուրբ Գրիգորի աւերակ վանքի գլխով երեք անգամ պտտուելից ու գերեզմանը համբուրելից յետոյ ասաց տիկինը, նստենք էս կանանչ խոտի մէջը, ես քեզ ուզում եմ պատմել, թէ էս իմ մինուճար աչքիս սև ու սիպտակը ինչ մուրազով, օխտը խաչի գլուխ պտտելով եմ ստացել:

Համասփիւռը մանրամասնաբար պատմեց պառաւին նախրչի Մանուկի կնոջ հետ սուրբ կիրակէումն արած ուխտն ու հետևանքը:

—Ինչքան էլ գոհ եմ իմ ստեղծողից, հոգիս ուրախ ա իր արած ողորմութիւնի համար, շարունակեց ոգևորուելով տիկին Համասփիւռը, համա սրտիս վրայ մի ծանր բեռը դրած՝ հուփա տալիս, մարդիս արածները օձեր են դառել, լերդ ու թոքս կտրատում, ջիգեարս [3]) կռծում: Չեմ գիտում սրա վերջն ինչ պտի ըլի, մեր երեխէքը Ասանից բութայ են, ո՞նց պտի անենք, որ իմ քարասիրտ՝ ճար կտրածի մարդն էլ հասկանայ էս բանը. ընչանք հիմի ինձանից ու նախրչու կնկանից սավահի [4]) ոչ ով չի իմանում, նրան երդում հաւատ եմ արել, որ մի խանատրդու [5]) բան չասի, համա կը մեռնիմ, որ քեզ իմաց չտամ: Անցկացած շաբթին Աշ-

[1]) Թոյլ: [2]) Ոյժ: [3]) Լեարդ: [4]) Բացի: [5]) Մարդու որդի:

տարակից գալուս, երբ որ Սուրբ Գրիգորի գլուխը տեսայ, մտքումս ուխտ արի, թէ որ ուրախութիւնով շուտ յետ դառնալու ըլինք, քեզ մի մին թարիֆ [1]) անեմ: Գիտես, Սանդուխտ, դու ինքդ ես պատմել շատ անգամ, որ դու Թորոսենց տան սինն ես, 14 տարեկան հասակիցդ ընչանք օրս էս տան ղահրը [2]) քու շլնքին ա էլել, քու խտըտիդ, քու կռներիդ վրայ ես պահել մենծացրել մեր տան մենծ ու պստիկին. ես էլ հօրի ունիմ տալացուկ, ոտս Թորոսենց շեմքը դրած օրից՝ քու ամակն [3]) իմ վրայ կայ ու կայ. մօր աշխատանք ունիս ինձ վրայ, իմ մատը մտած փուշը քու ջանն ա ծակել, էդ ես լաւ հասկացել եմ. հիմի էլ խնդիրքս էս ա, որ մօր պէս էս բանի դարդը քաշես, քու աղջկանը մի ճամփայ շանց տաս. ո՞նց անեմ, ինչ ջուրն ընկնիմ, որ ես կարողանամ նախրչի Մանուկին մի կտոր հացի տէր շինել, որ էս օրէն էգուց իմ մարդակեր մարդը, երբ որ ես իրան իմ ուխտն ասեմ, գիժ եզի նման փնչացնի ոչ ու սարեր չօլեր ընկնի, էն խեղճի գլխին էլ մի փորձանք բերի, ինձ էլ անմահ անդրող սպանի. դու գիտես, որ նա որդի, կնիկ, օտար, իրաւոր, մի Թուրքի, մի սարվաղի գլխին ղուրբան կանի: Ոտիդ տակին մատաղ, Սանդուխտ նանի, ըստուց յետը մտքիցդ հանիր, որ ես քու խանումն եմ, դու իմ ղուլլուղչին, [4]) դու ինձ դուզ [5]) Համասփիւռ կանչիր, ես էլ քեզ նանի, ու մօր պէս ինչ որ քու փորձուած տեղովդ ինձանում մի պակասութիւն գտնես, էն ահալթը խրատի, բարկացի ու հրամայի: Գլուխս ջարդի, էնքան ըլի, որ էս ցաւին մի դարման գտնես:

Համասփիւռը մոռացել էր տիկնոջ և աղախնու յարաբերութիւնները, բարուրը խոտի վրայ դրած՝ փաթաթուել էր պառաւին ու նրա չորացած ծծերը համբուրելով լաց լինում և մայր կոչելով չէր կարողանում պոկ գալ նրանից: Շատ սիրաշարժ էր տեսարանը, ինչպէս մի որդեկորոյս մայր, որը երկար տարիներից յետոյ յանկարծ, անսպասելիք տեղը գտնի իւր մինուճարին, ինչը կարող է էն րոպէին թարգման լինել նրա սրտին, ո՞վ կարող է նրա ուրախութեան և զգալի արտասունքներին արգելք դնել, այդպէս էր այս միջոցումն էս երկուսի զգուանքը. հրեշտակները, եթէ կարելի է այսպէս ասել, հովանի էին այս փոքրիկ խմբին, որի հետ միացել էր

[1]) Պատմեմ: [2]) Ծոցս: [3]) Երախտիք: [4]) Սպասաւոր: [5]) Ուղիղ:

նորածին մանուկը իւր անմեղ ժպիտներով և տատրակի նման գվգվոցով: Վերջապէս Սանդուխտը ինչպէս մի խնամատար մայր, համբուրեց համասփիւռի ճակատը, զգուշութեամբ ցած դրեց նրա գլուխը իւր դողդոջիւն կռների վերայ և սկսաւ յուսադրել նրան:

—Իմ խանում, մեղայ Աստծու, իմ քաղցր աղջիկս, համասփիւռ ջան, ես տեսնում եմ, որ հայր Աբրահամի օրհնութիւնը քու տան վրայ եկել ա. ես սուրբ Կիրակու զօրութիւնը իմ աչքովս տեսել եմ, կոնդ [1]) անդամնալոյծը տարել են նրա դռանը, ոտ ու ձեռին ջուր ածել, շորիցն էլ մի կտոր կտրել նրա կաթղուկէի մօտի դուս եկած չալու [2]) փշի ճղքին կապել, ողջ-առողջ իր ոտովը տուն ա էկել: Նա որ քու լիս վառելու վախտը հանդիպացրել ա քեզ նախրչի Մանուկի կնգանը, ձեր երկուսի բերանը լեզու ա դրել, դարդ մի՛ անիլ, Աստծու պահած դառը գէլը չի ուտիլ, ձեր երեխէքը կը մենծանան, կը ծլին կը ծաղկին ու իրանց մուրադին կը հասնին. իմ աղայ Ղևոնդը չի, որ արարած աշխարհքը հաւաքուի, էդ բանը խափանել չի կարող. ո՞վ գիտա, բալքի Աստու կամքն էն ա, որ աղքատի ու հարուստի երեխէքանց մին մնի թուշ անի ու երկուսի միջին իր հրաշքը շանց տայ, եա թէ չէ մի՞ օր էլ կը տեսնիս, որ էս քու նախրչին գեղի առաջին իշխանը դառաւ. Աստու առաջին դժար բան ա՞: Տեսնո՞ւմ ես, իմ միտս չի գալիս, էնքան տարուան կնիկ եմ, որ երկու երեք օրուայ մէջ քօչուորը յետ գայ. համա ինքդ ես ասում, թէ սարդարի սիրտը խնամք ա ընկել, յետ ա բերել ինքդ: ես ասում, թէ մեր արանչիքը երկու թալանչի [3]) են սպանել ու սարդարը բաշխել ա: Ըսկի մեր օրումը ըտէնց հրաշք լսել ե՞նք: Մի սարվազի ոտ որ քարին դիպչէր, տասը մարդ կը խեղդէին: Միտս ա գալիս խեղճ Գուսանենց պառաւը, ինչ ա, թէ թուրքերը մտած են ըլում իրանց յիքին [4]) հաւող քաղելու, ձին էլ թմբերի միջին բաց են թողել, խեղճ պառաւը բերել ա ձին ախումը մի լաւ խոտալի տեղ կապել: Անխղճմտանք անօրէնները բռնում են նրան, չուանով կապում ծիրանու ծառիցն ու չորս դհիցը [5]) կրակը վառում: Ողջ թաղ ու թառակը [6]) հաւաքուեց, աղաչեց, պաղատեց, անջախ ոտները կուտացած ազատեց. երկու շաբաթ չքաշեց, էն

[1]) Խեղացած. [2]) Դժնիկ փուշ. [3]) Աւա[illegible]. [4]) Այգի. [5]) Կողմն.
[6]) Թաղ.

անճար Գուսանենց պառաւը հոգին աւանդեց: Համա հիմի տեսնո՞ւմ ես, Աստծու աչքը քաղցրացել ա, Սարդարը մի չօռ էլ չի ասել. ըտէնց էլ ումուդ ունիմ, որ սուրբ Կիրակին եա Մանուկին մեծ մարդ կը շինի, եա հէնց աղքատի տղի հետ հարուստի աղջկանը թուշ կանի: [1])

—Ա՛խ, թէ որ կարենայի իմ քարասիրտ մարդին էս հրաշքը պատմել, թէ որ նրա սիրտը գութ քցէր, Մանուկի վրայ քաղցր աչք ունենար, մի ճամփայ տար նրան մի քիչ յառաջ գալու, թէ որ ճար ըլէր էն ճար կտրածին իր մոլորուած ճամփիցը յետ դարձնել, էս աշխարհքի աղաղակը մեր տանիցը կտրել, էլ ինձ գիւլլէն քեար չէր անիլ, էլ—ալամ [2]) ինձ էրնէկ կը տային, սիրտս վարդ կը բացուէր: Ա՛խ, Սանդուխտ նանի, քեզ յայտնի ա, ի՞նչ եմ տեսել ես, կժերով դառն արտասունք եմ թափել. 13 տարի ա ես մռմունջներ ու կսկիծներ եմ քաշում, ատամներս վէր ա թափել էդ ապառաժ քարը փափկացնելու, ոտներն եմ ընկել 1000 անգամ, թուրը բռնել եմ շլնքիս դէմ արել. ա՜ռ, կտրի քու ձեռովդ ասել եմ, հոգիս ա՜ռ ու յետոյ էդ անաստուածութիւնդ բանացրու, թող ես իմ քոռանալու աչքովս տեսնիմ ոչ ու ընդուց յետոյ, գլուխը քարը, անկաջս դինջ ոչինչ բանից խաբարութիւն չեմ ունենալ: Շատ անգամ տեսնում ես, որ գառն ա դառնում, ասում ես, էս ա դարձ եկաւ. հէնց երդում ա ուտում, որ քարը կը պատռացնի, ի՞նչ անես, ո՞նց չհաւատաս. մի քիչ սիրտս հանդարտվում ա, ոտը պաչում եմ ու թէք ընկնում քնում. էն ա, ասում եմ, լիսը կը բացուի, վեր կը կենայ, մի քանի սիրով խօսքեր կասի ու իրիկուայ խօսք տուածը կը կատարի.—Ղևոնդ ջան, ասում եմ ու վրայ ընկնում փաթաթվում: Ա՛խ, ընչի՞ եմ էնքան սիրում. ջանս քշաքաղվում ա, որ մին էլ լսում եմ, որ թուրքին ղըկեց էն սատանի չաքուչ տէր Մելքսեթի քամակիցը, արինս սառչում ա, հէնց որ նրա խըռպոտ ձէնը անկաջս ա ընկնում, գիտեմ որ գալն ու կանանչ խլէզի [3]) պէս աղու [4]) տալը մին կըլի: Շատ անգամ մահ եմ ցանկացել, ուրախ կըլնիմ, որ մի օր էլ խնդրելուս բարկանայ ու տայ ինձ, լէնքս ու երկէնքս մին անի, բալքի խղճմտանքը տանջի ու իր չար գործերիցը ձեռը վերցնի. համա ի՞նչ անես, ընչանք ըսօր մի ճկթով

[1]) Դիմաւորել. [2]) Ամենքեան. [3]) Մողէս. [4]) Թոյն.

ինձ դիպել չի, էրնէկ չէր, օրը տասը հետ ծեծեր ինձ ու ինքը լաւ ըլէր: Ծեծելուց ո՞վ ա մեռել, որ ես մեռնէի, ո՞ր կնիկը իր մարդիցը ծեծ չի ուտում, բաս ընչի՞ ա տղամարդ, որ իր կնգանը խրատէր ոչ. ծեծելն էլ ա ադաթ, [1]) սիրելն էլ:

Փոքրիկ խանձարուրը երևի ձանձրացաւ պարտիզի ծառերի միակերպութիւնից, նրա անմեղ ձայնը զարթնացրեց երկու կանանցը մի տեսակ թմրութիւնից. մէկի աղեղորմ արտասուախառն գանգատները միւսի յուսադրական խօսքերին տեղիք տուին, միաձայն վճռեցին մէջք մէջքի տալ, թաքուն աշխարյ նախրչի Մանուկի գրութիւնը փոխելու հնարքը գտնել, Ղևոնդին մի կերպով իր կորստական ճանապարհից դարձ բերել: Յաջողեցան թէ ոչ, էդ ապագայն ցոյց կը տայ:

Միւս օրը ոչ ոք Աշտարակցիներից չզարմացան, երբ որ տեսան Համասփիւռ խանումին Սանդուխտ տատի հետ բարեւը խաղտին Սուրբ Կիւրակէից գալուս:

—Դա իրա քառասունքն էն օրը պրծաւ, ասում էին միմեանց, երբ որ տանից դուրս եկաւ:

Սանդխտի ու Համասփիւռի յարաբերութիւնը հիմա էնպէս էր, ինչպէս մօր ու աղջկայ:

ԺԲ.

ՆԱԽՐՉԻ ՄԱՆՈՒԿԸ

Ազատենց տանը կպած՝ ծակի դուան ձախ անկիւնումը, Երևանից եկողի աչքին դեռ Աշտարակ չմտած՝ դիպչում է մի փոքրիկ խրճիթ: Նա գիւղի մնացած տների պէս հասարով [2]) չի շրջապատած, մի քանի սենեակներից չի բաղկացած, նրա մէջը մտն եկողը չի տեսնիլ ոչ շերախանայ [3]) կամ կամարակապ, երկար ու մէկ ընկած, կարասներով լիքը պերուզամբի [4]), ոչ կախանատուն. [5]) իւր ալվան [6]) խաղողների ու կարմրաթուշիկ խնձորների ու խնկան նման դեղին պահոնի տանձերի և ուրիշ մրգեղէնների կախաններովը, ոչ գոմ՝ իւր տաւարներովն ու մուհաջառով բաժանած օդայովը, ոչ ամբար՝ մէջը լիքը շարմաղ [7]) ալիւրովը և ոչ մառան՝ իւր պատերի

[1]) Կարգ. [2]) Պարիսպ. [3]) Գինետուն. [4]) Նկուղատուն. [5]) Մրգեղէն պահելու տուն. [6]) Պատուական խաղողներ. [7]) Բարակ մաղած.

տակին կարգով շարուած ծիրանի չրի քթոցներովը, պօպոքի կամ շուջուխ ալանու [1]) բունունիկներովը (միրգ պահելու անասնոց աղբից շինած ամաններ): Մեր աղքատիկ համեստ խրճիթը մի սենեակ է միայն, կամ այսպէս ասենք հացատուն, որի մէջ տեղը վեր թողած ունին մեծ հացի թոնդիրը, իսկ մի կողմը, վերին անկիւնի մօտիկ փոքր կերակուր եփելու կամ քուրսու թոնդիրը. պատերի տակին շարուած են մի քանի մանր թանի ծափեր, կճուճ, բժութ, բղուղ, պուլըկներ, պանրի, կողակաձկան, կամ պասուայ զօխ ու բոխի համար. մի քնջնումն էլ երկու մեծ կարասներ էին կանգնացրած՝ որ Աշտարակցու տան յատուկ սեպհականութիւնն է, ծալքատեղումն էլ դարսուած էր մի քանի հին ու մին անկողիններ՝ երեսին մի հնմաշ կարպետ փռած. մի խօսքով էս տունը իւր բնակիչների և ննջարանն և ամէն պիտոյքներին ծառայող մառանն էր: Էդ հոգ չէ, որ նրա օճօւքը ամէն օր անխափան վառուող պստիկ թոնրից դուրս եկած աթարի կամ տարթի սև մխից սևացել, ապուխտ էր դառել, սա միև նոյն ժամանակը և հիւրատուն էր: Ինչքան որ փոքր թոնդիրը բանում էր, ընդ հակառակը մեծ հացի թոնդիրը տարէն 12 ամիսը բերնին ծածկած էր: Ուրիշների մեծ թոնդրի մէջը էլի ամիսը մի անգամ գաղուկխանոց սպիտակ լաւաշ հաց կը թխուէր ու կը չորացրվէր, կը դարսուէր մինչև պրծնիլը, իսկ սրանց թոնդիրը կարօտ էր էդ փառքին հանելու, հէնց իմանաս միայն շնորհքի համար էր. սրանց տանը երբէք հաց չէր թխուիլ:

Միջահասակ տան տիկինը, թէպէտ գծծի հագուստով, բայց միշտ մաքուր լուացած և խստակ կարկատած՝ ամէն օր զարթնում, աւարտում էր իւր առաջին գործը, ամառը իւր դրան առաջը խստակ աւլում, իւրեանց մօտից վազող Աշտարակու վճիտ և սառն առուի Վանանց կաւառից (ջրաբերան) ջուրը վերցնում շաղ էր տալիս, իսկ ձմեռը մարդիցը շուտ վեր կենում, թէին վերցնում ու դրան առաջի ձիւնը քերում ու սկսում թոնդիրը ծուխ քցում: Ոչ այգու հոգս ունէր նա, որ շտապէր առաւօտեան տան գործն աւարտել ու գնալ ծիրան, տանձ, խնձոր, շլոր, խաղող, դեղձ, փշատ, սերկևիլ և այլ ամենայն բարիք ժողովելու, ոչ արտերի ու կալուկտի հաւաքելու վրայ էր մտածում, ոչ կովերը կթելն ու նրանց աթարը թխելն էր մտքով անց կացնում, ոնց որ ասում են, էս

[1]) Ջօր միրգ.

բաների մասին աչքից էլ էր պրծել, աչքացաւից էլ. Նրա դարդ ու ղասավաթը [1] իւր բակ ու դուռն աւլելուց յետոյ՝ ձեռաց մի նախաճաշիկ շինել, իւր սիրելի մարդուն ուտացնելն ու նրա համար օրուան պաշար պատրաստել, օխտը մաղից եկած բարակ լաւաշի մէջ փաթաթելն ու մի ուրկիւտի կարմիր չիթ սփռոցի մէջ ծալել, նրա մէջքը կապելն ու փայտը ձեռը տալն էր. երբեմն երբեմն էլ երեկոյին, կամ գործով զբաղուած լինելու, կամ մոռացութեան պատճառաւ իւր մարդի տրեխների հողը այժմ թափ կըտար ու առաջը կըդնէր:—Վեր կաց, այ մարդ, նախիրը գեղիցը դուս են անում, իմ սիրուն Վարդս Ազլենց կալումը կաննել, ձօրն ա քշում, քու հընկեր Գիքօն վաղուց ա գնացել ձորումը կարմնջի ծէրին նախրի առաջը պահում. էս օր քու հերթն էր ձորումը կաննելու, դու անուշ քնած էիր, ուզեցայ ոչ թարժաժ անեմ [2] քունդ կտրեմ, Գիքոյին աղաչանք արի:

Այս գործողութիւնը ամէն օր կատարվում էր այս խրճթի մէջ:

Վեր էր կենում տեղից անցեալ օրուան դադրածութիւնից խոնջացած անդամներով նախրչի Մանուկը, գնում էր առուի վրայ, երեսին մի քանի չոփ էր տալիս, [3] փէշով սրբում էր ու դէպի աղօթարանը դարձած՝ մի քանի անգամ խաչ էր հանում. իւր նախաճաշիկը՝ ինչ որ իւր կին Շուշանը պատրաստել էր, փաթաթում էր մի կակուղ հացի մէջ, դուրում էր անում [4] ու կծելով դուրս էր գալիս, փայտը ձեռին կանգնում Ազլենց կալումը: Նախրի տաւարը գեղիցը կորչելուց յետոյ տուն էր մտնում, հացը շալակը կապում, մի մեծ տօլու [5] գինի էլ կոնձում ու գնում իւր բանին: Ուտիս օրերը կամ մի կտոր պանիր կըլինէր նրա դուրումի մէջ, կամ կէս խոտոց [6] կողակ ձուկը, իսկ պասերին՝ աղը դրած բոխ, կամ ողորմակոթ [7], կամ եթէ գարունքն էր, իւր կնոջ քաղած խաշած աղցան—գարնան ականջ, առուի կարաս, սիբեխ, թէլուկ, [8] կամ որևիցէ այդպիսի աղցան: Նրա տան ուտելիքից ոչ մի բանը փողով չէր ստացվում. ինչպէս նախրարած՝ նա ամէն շաբաթ հացը տաւարատիրոջ տներիցն էր հաւաքում—ամէն տանից մի մի լաւաշ. իւղ ու պանիրը նրա համար ինքն իրան էր ընծայ գալիս հարևանների տանից, տարեկան կողակն ու գինին,

[1] Հոգս. [2] Քունը կտրել: [3] Լուացուիլ: [4] Լաւաշ հացի մէջ փաթթել: [5] Գաւաթ. [6] կտոր: [7] Բանջար է: [8] Բանջարեղէններ են:

ինչպէս նախրչի, իրաւունք ունէր իւր ժամանակին հաւաքել, պասուց աղը դրած խորակները [1] կինն էր գնում քաղում, կամ թէ ինքը նախիրն արածացնելուս ժողովում էր դաշտից, երեկոյեան հացի սփռոցի մէջ կապած՝ շալակին տուն բերում. ամէն բարութիւն նրա տանն անպակաս էր: Ոչ մի Աշարակեցի այգետէր էնքան շատ բերք չէր կախան անիլ ձմեռուայ համար, ինչքան Շուշան քուրիկը. այսպէս էին սովոր կոչել նրան գիւղի բոլոր բնակիչները. ամէն Աստծոյ տուած օրը նրան բաժին կըգար, ոչ մի բանից չտես չէին մնում նրանք: Հիւրասէր Աշտարակցիք միշտ խնդրում էին Շուշանին ու իւր դմբրճիկ Վարդին իւրեանց այգիները: Գնում էր վազվզելով իւր մօր առաջն ընկած Վարդը և երեկոյին մի շալակ լիքը իւր սրտի ուզած մրգեղէն մէջքը կապած՝ իւր ընկերակիցների հետ թռչկոտալով տուն դառնում:

Միով բանիւ այս ընտանիքը ոչինչ բանից պակասութիւն չէին քաշում: Հագնելիքն էլ իւրեանց տանիցն էր դուրս գալիս. Շուշանն իրանց համար բաժին եկած մրգեղէնը միշտ փոխում էր գիւղի կողքով իրանց տան առաջից ոչխար անց կացնող Քրդի կամ Զօբանքեարի էլի [2] հետ բրդի վերայ, լուանում, գզում, մանում ու մարդու և որդու համար չուխայ գործում, կարում հագցնում, բամբակեղէնն էլ ինքն էր մանում՝ էլի մի հարևանի տղի ձեռքով Դաշտեցու վրայ մրգով փոխելով:

Նրանց միակ հոգսը իրանց որդի չունենալն էր մի ժամանակ, էն էլ Աստուած երեք տարի էր սուրբ Կիւրակէի բարեխօսութիւնովը ղօչ [3] որդին իրանց բաշխել էր, մարալի [4] պէս առաջներին պտիտ էր գալիս ղարաղաշ [5] Վարդը, էլ ի՞նչն էր պակաս,—և ոչինչ:

Նրանց մէջ թագաւորած էր ընտանեկան սէրն ու խաղաղութիւնը. չափաւորութիւնը նրանց առաջին կանոնն էր:

Երեկոները երբ նախրչին նախրիցը յետ էր դառնում, ողջ գեղի տաւարը տեղաւորում, տէրեց տէր էր անում, գալիս էր իր տունը համբուրում իր երեխին և փառք էր տալիս իր արարչին ու նստում էին սեղան, մի կտոր հալալ հաց ուտելու: Այնուհետև պարկում էր նա իր բեզարած ճռները [6] դինջացնելու: [7]

[1] Ուտելիք: [2] Հասարակութիւն: [3] Խոյ, արու ոչխար—քաջ: [4] Եղջերու: [5] Սև ունքերով: [6] Անդամները: [7] Հանգստացնել:

Շատ անգամ էլ, սրտի ուրախ—չաղ ժամանակը՝ հանդումը պատահած անցքերը հպարտ, քաղցր քաղցր պատմում էր իր Շուշանին, մանաւանդ, եթէ գայլի ձեռքից մի արջառ էր խլել, կամ նախրից փախած առած մի կով էր գտել, մի սարսափելի ձորից հանել վերև: Այսպիսի պատմութիւնները շատ մեծ ախորժակով էր անում նա, հետն էլ կնոջ առաջին ուռած ուռած պարծենում, որ թէպէտ ինքը մի նախրչի է, բայց մի աչքով չպտի մտիկ տալ իրան, նա աթա-բաբա [1]) լսել ա, որ իր օղորմածիկ պապերը մեծ մարդիկ են էլել, որ իր մեծ պապը մի բռնցքով մի փահլեվան [2]) ա սպանել, սարդարի առաջին մէյիդ քցել. [3]) խանն էլ էն սհաթը ճակատը պաչել ա, կարմիր խալաթը հագցրել ու մի քանի գեղերի վրայ մէլիքութիւն տուել: Այս մէլիք բառը շատ լեքը լեքն էր հանում նա բերանից: Երբ որ ամէն գարունք նախիրը իր վրայ առնելու ժամանակը մի թղթի կտորի վրայ մի պայմանի նման բան էր գրում տանուտէրը, առաջին խնդիրն էն էր լինում գրող տիրացուին, որ չմոռանայ իւր համար Մէլիքենց նախրչի Մանուկ գրել. դրա փոխարէնը խոստանում էր տիրացուին հանդից մի քանի լաւ եաւշանի [4]) աւել բերել. հետն էլ միշտ աւելացնում էր. մարդ իր ազգը չպէտք ա մոռանայ. թուրքն ասել ա. ասլի լիթրան հարամզադայ դըր. (իւր ազգը կորցնողը ապօրինի զաւակ է:)

Ինքը՝ նախրչի Մանուկը մի բարձրահասակ մարդ էր, երկար սրած բեղերով, խոշոր ու սուր սև աչքերով, ահարկու ձայնով և յաղթանդամ մարմնով: Եթէ նա իւր հեզ բնաւորութիւնովը բոլորի աչքին սիրելի էր եղել, իւր հսկայական ուժովը գրաւել էր բոլոր գիւղի յարգանքը: Շրջակայ գիւղերի պարսիկներից շատերը նրա բռնցքի ոյժը փորձել էին, երբ որ կամեցել էին մի կով, կամ մի արջառ նախրից փախցնել: Ոչինչ սուր չէր բանացնում մեր Մէլիքի թոռը, նրա զէնքը իւր կոմբալագլուխ [5]) հոնի մտրտած դագանակն էր: Քանի՛ քրդերի ու պարսիկների սրերի բերաններ էդ գաւազանի վրայ փշրուել էին: Պարսիկները մին մինին անիծելիս առած էին շինել ասում. նախրչի Մանուկի դագանակին հանդիպիս դու: Էս էլ պէտք է ասել, որ էս ահարկու մարդը ոչ մէկին վնաս չէր տուած. տաւարագող եկողին մի քանի լաւ, զօրս դու պատուիրեցեր

[1]) Ի Նախնեաց. [2]) Ըմբիշ: [3]) Դիակ չացնել: [4]) Խոտի անուն է. [5]) Հաստագլուխ:

[1]) բռնցքներ հասցնելուց յետոյ, գլխին էլ մի քանի գայլի աւետարան կըկարդար ու բաց կըթողնէր: Էլ ե՞րբ էր գժուել էն մարդը Աշտարակու նախրին խէթ աչքով մտիկ տալ, խելքը հացի հետ հօ չէ՞ր կերել:

Ահա հէնց այս էր պատճառը, որ Մանուկը 15 տարի էր նախրչութիւնը իրան սեպհականացրել էր. նրա միւս ընկերները տարէնը մինը, համարեա, փոխվում էին, իսկ ինքը կար ու կար, և ինչպէս միշտ պարծենալով կրկնում էր, քանի կենդանի էր, պէտք է ըլնէր: Ի՞նչ էք կարծում. նա շատ պարծանքով էր խօսում իւր այս պաշտօնի համար և իւր ասլանի ճուտին, [2]) (այսպէս էր սիրում կանչել Վարդին) դրա համար էր մեծացնում: Քանի երեխայ չունէր, նա միշտ հոգսերի մէջ էր իւր մահից յետոյ իւր կնոջ ապրուստի մասին, բայց հիմի մի քանի տարուց յետոյ իւր որդին իւր տեղը կըբռնի և իրա մօրը կըպահի. երկու երեք տարուց յետոյ նրան հօրթարած կըշինի, երբ որ մեծացաւ, նախրչի ա որ նախրչի. վրէն ձեւած ու կտրած ա:

—Տօ, էս տեսնում չե՞մ, որ իմ արիւնն ա ասլանի ճուտիս տամարներումը վազում, քոռ հօ չեմ, էլ-ալամը [3]) կըվկայի, որ երեք չորս տարեկան տղէս տասը տարեկանի բօյ ու բուսաթ [4]) ունի, ձեռների ջլերը տեսնում ես, հէնց իմանաս մի մին ղազլի [5]) չուանն ըլին, ը՛հ, ջանըմ սան բալէս, [6]) սա որ իմ տեղը բռնի ոչ, ինձանից յետը Աշտարակու ճարն ու իլաճն ի՞նչ կըլի. նախիրն ո՞ւմ կարելի ա հաւատալ:

Այս խօսքերից յետոյ միշտ հետեւում էին կաթողին համբոյրներ իւր ձագուկին և գրկախառնութիւններ: Այսպիսի ժամանակները միշտ Շուշանի աչքերից մի քանի կաթիլ ուրախութեան արտասուքներ էին դուրս թափվում և դէմքը դէպի երկինք էր բարձրանում:

—Ի՞նչ ես լալիս, Շուշան ջան, յուսադրում էր Մանուկը. փառք իրան, ընչնե՞րս ա պակաս. Աստուած Աշտարակ գեղի հիմքը հաստատ անի, կեանքները երկար ըլի մեր Գէորգ խալֆի ու բոլոր իշխանների, Ասսու տուածիցն ու նրանց սայիցը [7]) ամէն բան ունինք,

[1]) Օրինաւոր: [2]) Առիւծի ձագ: [3]) Ընդհանուր աշխարհը: [4]) Հասակ և տեսք: [5]) Այծի մազից ոլորած պարան: [6]) Քաջ երեխայս: [7]) Շնորհիւը:

ոչ կոռ [1]) գիտենք, ոչ բէգեառ. [2]) ձնից ու անձրևից աւելի մեր գուռը ոչ մի գլխը եա եասաւուլ [3]), կամ սարվազ չի տեսել. գան էլ ընչի՞ համար. ձի չունինք, կոռ տանին, հասած որդի չունինք, բէգեառ ղըկեն. ես էլ փառք Աստու, Թարխանի [4]) պէս ընչանք իրիկուն դաշտերումը կանանչ խոտերի վերայ մեկնուած՝ հանգիստ անկաջս դինջ ապրում եմ:

—Ոչինչ չկայ, ա՛յ մարդ, ուրախութիւնից սիրտս լցուեց, կաբացի ոչ արտասունքս բռնել, պատասխանում էր Շուշանը. դու ողջ ըլիս իմ գլխի համար, Աստուած իմ Վարդը պահի. ես ընչի՞ պէտք ա տխրեմ. ո՞ւմ կնիկն ա ինձանից բաղդաւոր. պսակուած օրներիցս դէսը մի ծուռն աչքով չես մտիկ տուել ինձ, մի մատը չես բարձրացրել վրէս, ասել չես, թէ աչքիդ վերևն ունք կայ. 100 օրինակ ունիմ աչքիս առաջին. հէնց կնիկ կայ մեր գեղումը, որ մի փուչ խօսքի համար օրական 10-20 բարդի կակող ճիպոտներ [5]) ա միջքին կոտրատվում: Երնէկ չէր, իմ ընկի չափ բաղդաւորութիւն ունենար մեր խեղճ համասփիւռ խանումը—էն քարասիրտ Ղևոնդ աղի կնիկը, նաչարի [6]) կերածն էլ ա աղի արտասունք, խմածն էլ, ինչ անեմ, որ անքուն ցեց ունին, աշխարհքիս հարստութիւնը նրանց տանն ա. մի օր չի էլել, որ նրա աչքերի աղբրակները ցամաքին, խա՛ֆ [7]) նրան, որ ընէնց մարդի ձեռին ընչանք օրս էլ ապրում ա. արարած աշխարհ.քը նրանց վրայ տրտնջում ա, ծակ բերան նրանց վրայ ա խօսում, տուն չկայ, որ նրա մարդի երեսից մի փորձանքի հանդիպած չըլնի. տէր Աստուա՛ծ, դու իմ դուշմանին չքցես համասփիւռ խանումի օրը. էս ի՞նչ Աստու բարկութիւն ա քա՛, ընէնց հրեշտակին, ըտէնց սատանայ դիմաւորի՞. երևի նրա ճակատին ըտէնց ա գրած: Հլա՛յ Աստուած խեղճ գար, էդ մի քօրփէն [8]) էլ ա ապրէր, ընդով էլ ա մխիթարուէր խեղճը: Համա գիտե՞ս ինչ կայ, ա՛յ մարդ, ասաց նա մի օր այսպիսի խօսակցութեան ժամանակը ծանրակշիռ դէմք առած. ես ումուտ ունիմ, որ մի օր ողջ Աշտարակն էրնէկ տայ մեզ, սուրբ Կիրակու աչքը իմ երեխի վրայ պտի քաղցր ըլի, մեր ուխտը պտի կատարուի:

—Գրուածը ջնջուիլ չի՛. ասած ա. մի առուից որ ջուր ա

1) Արքունական ծառայութիւն: 2) Նոյն խօսքն է: 3) Հարկահան: 4) Ազատորդի: 5) Մահակ: 6) Անճար: 7) Կեցցէ նա: 8) Փոքրիկ:

գնացել, էլի կերթայ, պնդեց կնոջ խօսքը նախրչի Մանուկը. թէ որ մէլիքի թոռը նախրչի կը դառնայ, Աստու ձեռին դժար ա՞ նախրչու տղէն մէլիք շինիլը. իմ ալանի ճուտս ո՞ւմ որդուցն ա պակաս—ազգով, բօյով, բուսաթով, շէնք ու շնորհքով, ոնց որ էլ ես էս օրուանից նշանները վարաւուրդ եմ անում [1]), ուժով, խելքով ու քեամալով [2]). փառք տէ՛ր ստեղծողին ու քեզ համար ձէնդ քեզ քաշի՛, ոչ ովին բան մի՛ ասիլ. մի օր մեր Վարդն աղայ կը դառնայ:

Այսպիսի խօսակցութիւններ յաճախ կրկնւում էին մեր նախրչի Մանուկի տանը և ամէն անգամ ջերմ աղօթքներ երկու բերանից բարձրանում էին դէպի վերին Տեսչութիւնը:

ԺԳ.

ԱՍՏՈՒԱԾ ԵՐԱԶԴ ԲԱՐԻՆ ԿԱՏԱՐԻ.

Ամէն բան իր կարգին գնում էր, Աշտարակու խաղաղութիւնը շատ աննշան երբեմն խանգարվում էր: Մի քօսոտ [3]) խան, կամ մի բօբիկ բէգ անց կացած ժամանակը, մի քիչ իրարոցով էին դիպչում, մի քանի ընծաներ էին տալիս, մի քանիսը մորակ էին անուշ անում ու էլի, ձեռաց, ամէն բան իր ճանապարհը գտնում էր, ամէն մարդ իր արևի ձէնն էր ածում:

Ղևոնդն ու տէր Մէլիքսէթն էլ, հէնց իմանաս, ձանձրացել էին չարութիւն անելուց, գլխները քաշ ման էին գալիս: Պատահում էր երբեմն, որ տէրտէրը Էջմիածնից Երևան մի մին լռտեսութիւններ անելով մի քանի շաբաթներ տուն չէր գալիս, Ղևոնդն էլ ամիսը մի երկու անգամ Երևանու կամարակապ փողոցներումը շողոքորթութիւն էր անում եղունգներն ու երկար մօրուքը հինայով կարմրացրած, Մեքքայ մի քանի անգամ ուխտ գնացած, բարեպաշտ, հարուստ հաջու մօտ, կամ թէ չէ տէր Մէլիքսէթի հետ մի երկու օր Երևանու բազարների հրապարակներումը թրև էին գալիս՝ օրը մինչև երեկոյ կաքաւ ու ղօչ կռուացնող, թաղի ու թառլան ղուշ պահող աննպատակ, անգործ, փողոցներ չափող խանի կամ բէգի քամակից, հաճոյախօսութիւններ էին անում, շատ խոստանում՝ քիչ

1) Նկատել: 2) Հանճար 3) Բորոտ:

կատարում էին, բայց գլխները քարը, ինչ կուզեն անեն, վաղն առաջի պէս, մեր ոչխարին վնաս չըտան։

Գեղումն էլ նրանք մի մին մարդամիջի երևում էին, և եթէ Աշտարակցիք քաշվում էլ էին, նրանց գտնուած ժամանակը ոչ մի հարկաւոր հասարակութեան վերաբերեալ բաներ չէին խօսում, բայց մեր պարոնները, իբր թէ չեն էլ հասկանում. ձևացնում էին, որ ամէնքն էլ իրանց պատվում են ու գեղի համար մի մին սրտացաւութիւն էլ էին անում։

Ղևոնդը մի քանի միջոց հէնց իմանաս, սրտանց էր անում էս բաները. տիկին Համասփիւռն էլ հիմա զարմացել էր իւր մարդու վերայ. Նա իւր օրումը քաղցր դէմք տանը ցոյց չէր տուած, բայց էս վերջին ժամանակներս երեխին փայփայում էր, սիրում էր, թուշիկներին մատով խփելով ծիծղացնում էր. մի օր մինչև անգամ կնոջը Համասփիւռ ջան՝ ասեց։

—Սատանի անկաջը խուլ, ասում էին միմեանց գեղացիք, մեր աղէն աղօթած էշա դառել, գիր հօ չէ՞ն արել, Երևանումը խոփները քարի հօ չե՞ դիպել։

Եթէ էս տարի Աշտարակը խաղաղութիւն էր վայելում, ամէնքի սիրտն ուրախ էր, երեք հոգի կային, որ էս ուրախութեանը մասնակից չէին լինում, որոնց աստղը հէնց իմանաս թեքուել էր։

Մինը հէնց ինքը Համասփիւռ խանումն էր. քանի մարդի նօթերը [1]) յետ էին գնացել, նրա մտածմունքն աւելացել էր։ Լաւ տեսնում էր, որ սրանից էլ յամար ժամանակ չկայ Մանուկի վիճակի վերայ մտածելու. բայց քանի ուզում էր, պռունգը [2]) պռնգին տայ, էդ մասին մի խօսք բերնիցը հանի, կարծես մինը ձեռը պինդ բերնին դրած՝ կանիցը քաշած՝ արգելում էր, քունն էլ էր կտրուել աչքերիցը, բան ու գործն էլ մոռացել էր ու հէնց էդ բանի վրայ էր մտածում։

—Սանդուխտ նանի, քեզ մատաղ, մի խելք սարքացրու։

—Համբերի, աղջի՛կս, Աստուած օրը կը տայ, բարին հետը։

—Հերի՛ք ա, Համասփիւռ ջան, ի՞նչ էլաւ քեզ, մի կտոր հաց կե՛ր։

—Ջուր ու ցաւ ուտեմ ես, Սանդուխտ նանի, կուլ չի գնում, բողազումս [3]) անկվում ա, Մանուկն էլ ընէ՞նց մնում ա։

---

[1]) Կնճիռը։ [2]) Շրթունք։ [3]) Կոկորդ։

Մի օր՝ մինչև ինքը Ղևոնդը նկատելով կնոջ զգալի փոփոխութիւնը, լղարել մաշուելը, ասաց. էդ ի՞նչ ա, այ կնիկ, հիւանդ հօ չե՞ս։

Մին բերանն եկաւ, որ ոտներն ընկնի, սրտի ցաւը յայտնի, մին էլ խպռնուեց, [1]) ձէնը կտրեց։

Միւս երկու տրտումները մեր Նախրչի Մանուկն ու իւր կինն էին։

Միտքդ էր մի օր ինչպէս Մանուկը ուրախ ուրախ պատմեց իւր ազգաբանութիւնը Շուշանին, ինչ մեծ մեծ էր խօսում, ինչ յոյսեր էր յայտնում իւր աղանի ճուտի համար։ Ուղիղ միւս օրից քամբաղդութիւնը թափվում էր միմեանց ետևից դրանց գլխին։

Միւս առաւօտն իսկ, Շուշանը շատ սիրտը կոտրած՝ զարթնեցաւ, Նրա երեսի վրայ էլ երեկուան ուրախութիւնը չէր երևում, սիրտ էլ չունէր իւր բակ ու դուռն աւելելու, էս քնջնից էն քունջն [2]) էր ընկնում ու գոգնոցի փեշով աչքերը թաքուն սրբում։

—Հը՛, Շուշան ջան, էդ եաղո՞ւզ [3]) էս օր քեամ շաղավաթ [4]) ես, ի՞նչդ ա ցաւում։

—Գիտեմ ոչ, Մանուկ ջան, էս ի՞նչ պէտք ա ըլի, մի երազ եմ տեսել, վա՛տ երազ, շա՛տ վատ երազ։

—Աստուած խէրը վրայ բերի՛, Աստուած երազդ բարին կատարի՛, երազին վատ չեն ասիլ, պատմի՛ր տեսնենք։

—Երազում տեսնում եմ, որ մեր տունը լիքը վարդապետներ են։ Դափ ու զուռնէն ածում են, հարսանիք ա։ Վարդապետներից երկուսը մեր հացի մեծ թունդրումը պսակվում են. մնացողը կուռ կուռի են բռնել, թունդրի չորս կողմովը ե ա լ լ ի են պար գալիս։ Մին էլ էն տեսայ, որ բոլորի բերանիցն էլ կրակ ա դուս գալիս, տունը բոցով լցուել ա, էրվում ա։ Ես ու դու էլ Վարդիս ձեռը բռնած՝ հեռվումը կաննել՝ պէլացած մտիկ ենք տալիս։ Տէր Աստուած, դու իմ թշնամու գլուխը չբերես։ Էդ վարդապետներից մինը, սաքի թէ, մօտացաւ մեզ, կրակ փչեց մեր երեսին. մենք յետ յետ փախանք, համա կրակը մեզանից յառաջ ընկել ու մեզ բոլորել։ Էն դհէցը, մին էլ ինչ տեսնեմ, Համասփիւռ խանումն ու Սանդուխտ նանը մի մին կուժ ջուր ձեռներին՝ վազէ վազ վրայ հասան մեզ ու մեր փախած ճամփին շաղ են տալիս։ Համա քանի նրանք էդ անում են,

---

[1]) Լռուեց։ [2]) Անկիւն։ [3]) Ընչու։ [4]) Տրտում։

բոցը աւելի բարձրանում ա ու ճամփէքս փակում. իմ ոտ ու ձեռս կապվում ա, կրակն ինձ կուլ ա տալիս:

—Մեղա՛յ քեզ տէր Աստուած, երեսին խաչ է հանում սփրթնած Մանուկը:

—Դեռ էս ոչինչ, շարունակում է Շուշանը, քոռանամ իմ աչքերը. կրակի միջից տեսնում եմ, որ դու երեխիս ձեռիցը պինդ բռնած՝ ուզում ես մի մենծ կրակի փոսից փախչել: Մին էլ յանկարծ Ղևոնդ աղէն քամակիցդ բռնում ա ու քեզ երեխիս հետ կրակի մէջը քցում. դու էն սհաթն էրվում խորովվում ես, համա երեխէս ոնց որ մի ղուշ, դուս ա թռչում կրակիցը ու լեղէն հաքուստով մի երկար Քրդի կեռակտուց թուր ձեռն առնում, մի մէյդան [1]) տեղ ձիու վրայ նստում ու քրդերի հետ կռիւ անում. որ տեղ համնում, ընտեղ փրթում ա ու մէյիդ քցում: Հէնց էս չփոթների միջին վեր թռայ, տեսնեմ քափ [2]) ու քրտինքը ջանս բռնել ա:

—Ոչինչ, այ կնիկ, դարդակ բան ա, բաց ես քնել, աշխատելով իւր վրդովմունքը պահել, սիրտ էր տալիս Մանուկը:

—Ո՞նց ոչինչ, այ մարդ, ես գիտեմ, որ մեր տան գլխին մի փորձորիկ պտի տրաքի. ասում են, երազում վարդապետ տեսնելը սատանայ ա, դափ ու զուռնէն՝ նեղութիւն ա. էն կրակը, որ մեր տունն էրեց, էն անբաղդութիւնն ա, որ մեզ համնելու ա. էն՝ որ ես ու դուն էրուեցինք՝ մեր երկուսիս վերջն ա. համա էս էլ իմացած կա՛ց, որ Ղևոնդի ձեռովը պտի մեր տունը քանդուի: Համասփիւռ խանումն, երևում ա, պտի գլուխը քարէ քար տայ Սանդխտի հետ, մեզ իր մարդի չարութիւնիցն ազատելու, համա ձեռիցը ոչինչ չը պտի գայ: Մի բանը մի քիչ սիրտս պնդացնում ա, որ Վարդս պտի ազատուի էն անօրէնի ձեռիցը: Համա, Մանուկ ջա՛ն, սիրտս թուլանում ա, ի՞նչ կընշանակի լուսեղէն շորերը. չըլի՞ թէ, բերնիցս դուս գայ, քամին տանի, երեխէս էլ պտի նահատակուի ու հրեշտակների դատումը դատակուի: [3])

—Թէկուզ ինչ փորձանք գալիս ա մեր գլխին գայ, վէճս [4]) չի, մի բանն ա լաւ, որ երեխէս մենծ մարդ պտի դառնայ, նա իր մուրազին պտի համնի, Մէլիքենց չէն օճաղը մի օր պտի ծխի,

[1]) Հրապարակ. [2]) փրփուր. [3]) Դատուել. [4]) (Հոգս).

Թուրքն ասում ա. օճաղտան քիւլ աքսիկ օլմազ. (օճաղիցը մոխիրը չի պակասիլ), հաստատ պատասխանեց մարդը:

Առաջին անգամը չէր տիկին Համասփիւռի Շուշանի քամակից ղրկելը. էս օր Մանուկի նախիրը գնալուց յետոյ՝ Սանդխտան եկաւ ու կանչեց:

—Աղջի՛, Շուշան քուրի՛կ, ասեց տիկինը, ի՞նչ ես ընչանք իրիկուն մէնակ տանը նստում. մարդդ նախիր գնալուց յետոյ վեր կա՛ց, արի՛ մեր տունը, երեխին էլ հետդ բեր. հազար բան կայ շինելու, անող չկայ, արի՛ մեզ օգնի՛, իրիկունը գնա՛ քու բանին. վախիլ մի՛, քեզ մաղըուն չեմ անիլ [1]):

Շուշանը թէև ոչինչ բանով չէր ուզում համաձայնել, բայց Համասփիւռի քաղցր դէմքն իւր ազդեցութիւնն ունեցաւ: Այսուհետև ամէն օր Ղևոնդի տանը նրա համար գործ կար: Եւ որովհետև Շուշանը միշտ փախչում էր փողով վարձատրութիւնից, հէնց առաջին շաբաթը նրա երեխայի հագուստը նորոգուեցաւ:

Մի իրիկուն Շուշանը Վարդի հետ՝ Համասփիւռն էլ իւր երեխէքն գրկած՝ սուրբ Կիրակէումը լոյս վառելուց վերադառնում էին, նախրի ծայրը կտրուելու վրայ էր, որ մի երեխայ վազէվազ յառաջ եկաւ, շտապի՛ր, ասաց, բալնիքը բե՛ր, մարդիդ արիւնկոլոլ առած՝ բերել, ձեր դռանը վէր են քցել: Ոնց որ մի գիւլլա դիպչի խեղճին. էլ իմացաւ ոչ, թէ ի՞նչպէս իրանց դռանը հաւաքուած բազմութեան արանքը [2]) ճղեց ու բղաւելով մարդի գլխին կանգնեց: Մանուկի վիզը քամակի կողմից մինչև կոկորդը կտրած էր ու ողջ գիւղի ու դաւառի բժիշկ Աղումենց Գալուստը մի հաստ ասեղ ձեռքն առած՝ ոնց որ մի ճղուած տիկ կարում էր:

—Վա՛յ գլխիս, դրա անողի կռները դօշիցը կպչի՛, էդ ո՞վ ա իմ տունը գլխիս փուլ ածել, ծղրտում էր անմխիթար կինը:

—Բան չկայ, Շուշան քուրի՛կ, մի կողմից ասեղը մսի մէջն էր խրում, միւս կողմից մխիթարում էր Գալուստ ափէրը, մի քիչ քերծուել ա, դու դուռը բաց արա՛, տուն տանենք:

Բանից դուրս եկաւ, որ 20 թուրք յարձակուած են եղել նախրի վերայ, Մանուկի ընկեր նախրչին թողել փախել է, իսկ ինքը կանգնել է մի դաւազանով նրանց հետ կռիւ արել. մի երկուսին

[1]) Ձրկել. [2]) Մէջը.

գագաթնակի կոմբաշոմ [1]) էն աշխարհքն է ուղարկել, քամակիցը մէկի սուրն էլ իւր գլուխն է կոկորդի վերայ ճօճեցրել։ Եթէ Յօշականցի 10-15 հոգի կողակատեղից եկող քարվանը վրայ չըհասնէր, կարելի է նախիրը քշած կըլինէին ու Մանուկն էլ արենքամ մեռած կըլնէր։

—Երազս կատարուեցաւ, գլխին խփեց Շուշանը,

Երկու ամիս տկարութիւնը տևեց. Աստուած ինքը փրկի ու ազատի, ինչ որ սրանց դրութիւնն էր. էլ ոչ տնեցիքը հաց էր հաւաքվում, ոչ ուտելիքի պատրաստութեան հոգս քաշվում. կողքը կտրած՝ նստած էր տարակուսած Շուշանն ու իր մարդի վրայ մի ճանճ չէր թողում ցած գայ. գիշեր ցորեկ անքուն հրեշտակի պէս մարդի գլխովը փարվանի [2]) նման պտիտ պտիտ էր անում. Թէ որ հարևանների կանայքը բաժինն եփած չբերէին, ստիպելով, հարկադրելով, մի քանի դրգալ զօռով չխմացնէին, ո՞վ գիտէ, էդ երկու ամսումը բերանը նշխարք չէր մտնիլ։ Երբեմն տէր Յարութիւնը Գէորգ խալֆի հետ գալիս էին Մանուկին այցելութիւն, մխիթարում, յոյս էին տալիս, բայց ինքը սիրտը միշտ կտրած էր, մանաւանդ, երբ երկու ամսից յետոյ, այն ինչ կարծում էին, թէ շլինքը լաւացել ա, ուժը տեղն ա եկել, հիմի կարող է նախիրը գնալ, յանկարծ ոտքի տակին մի մեծ խոց դուրս եկաւ և բոլորովին արգելեց տանից դուրս գալը։ Թէպէտ բարեսիրտ Աղուանից Գալուստը հիմի էլ սկսաւ տուն դեղ անել, եարախոտ, գաղտիկուռ, կամ եղան լեղու և ուրիշ խոտեր ու տերևներ գնել, բայց հնար չեղաւ, մինչև աշունքը ոտը շեմքից դուրս չդրեց։ Հոկտեմբերի վերջին՝ նախրաթողի պասին նոր կարողացաւ դուրս ու տուն անել Մանուկը, բայց էս ուղիղ դուրս է գալիս Աշտարակցի գիժ, քաչալ Աղուամի ասածը։ Նա մի անգամ մի անձրևային տարի տեսնում ա, որ Երևանու ճանապարհին Երկու կոնդամէջ կոչուած հովիտը շատ սիրուն կանաչել է։—Տօ՛, չօլի խոտը որ ըսէնց սիրուն դուս կըգայ, ցածրին կըտայ, էստեղը որ վարուի, ցորեն ցանուի, լաւ մահիլ [3]) չի տա՞լ, մտածում է Աղուամը և միւս տարին եօթն օրավար տեղ սկսում դութան ձգում, մշակ բանացնում, վարում ու ցանում։ Բայց ոչ մեռնիս, նրա բաղդիցը էդ տարին անձրև չի գալիս, տարին երաշտ է լինում,

[1]) Հաստ գլխովը։ [2]) Ճրագի լուսոյ վերայ հաւաքուող թիթեռնիկ։ [3]) Բերք։

Աղուամի աշխատանքը ջուր է կտրվում։ Հնձի ժամանակը մի ջվալ վերցնում է նա, գնում տեղ տեղ մի մին հատ բուսած ցորենները պոկոտում, ողջ արտը մի ջվալի մէջ տեղաւորում ու յետ դառնում։ Օրը շատ պարզ է լինում, հէնց որ մտնում է ձորը, կամրջին մօտենում, որտեղից որտեղ, մի պստիկ ամպ յառաջ է գալիս ու Աղուամի ոտը կամրջին դնելն ու երկնքից հեղեղ թափուելը մին է լինում։ Կամաց շալակը վէր է դնում մեր խեղճը, քաչալ գլուխը բաց անում, ու ասում.—«օխտն օրավարը կօլօլել, ջվալիս մէջն եմ կոխել, հիմիկէց դէնը արի էս իմ կօնդալ [1]) գլխիս»։ Ուղիղ այդ բանը մեր խեղճ Մանուկի գլխին եկաւ. ողջ ամառ հիւանդ ընկած նախրից զրկուել է, ու նախրաթողի պասին վէր կենում. Աստուած որ մի մարդի բանն աջողի ոչ, բանդէն [2]) հազար էլ աշխատի, ոչինչ չի շինիլ։

Ձմեռը վրայ հասաւ, վա՜յ աղքատի օրին։ Ոչ մի գիւղում ձմեռը գործ չկայ, ամէն մարդ անբան, անգործ, առաւօտեից մինչև երեկոյ հաւաքուած սրա նրա տաւարի գոլորշիով տաքացրած գոմերի օդաններումը խօսում են, զրոյց են անում, շատ ժամանակ էլ իրար եախից [3]) ձաւար [4]) են հաւաքում. [5]) երբեմն էլ բռընցքների ուժը միմեանց վրայ ցոյց են տալիս։ Ի՞նչ անէր մեր Մանուկը, լաւ էլ չէր ուզում համասփիւռ խանումի ղըկած ցախը, ալիւրը, կերակուրը վերցնել, բայց որ չէր լինում. անտէր փորը որ կայ, անտակ ձոր ա, քանի լցնում ես, լցվում չի, մի կողմից էլ ուզում ա. չարէն կտրած՝ տեսնելու չէր դնում, երբ որ կնիկը բերածը մի խոր հոգոց քաշելով վէր էր առնում, բերողին էլ շնորհակալութիւն անում.

Շուշանը չըկարողացաւ տանել իւր մարդի տխրութիւնները. նա թէպէտ աշխատում էր ուրախ երևիլ, իբր թէ վրէն չի առնում էս նեղութիւնները, բայց թելը որ բարակից, կըկտրուի. մի օր էլ պարկեց ու էլ տեղէցը չըվեր կացաւ։ Երկու շաբաթ չքաշեց, մեր անբաղդ նախրչու գուռն երեսին շրջուեց. կնոջ դագաղը դուրս տանելիս քիչ էր մնում իրան սպանում էր։ Միւս գարունք, իրաւ է, ստիպուած էր կրկին նախիրը վերցնելու իր ասլանի ծուռին

[1]) Կնդակ։ [2]) Մարդս։ [3]) Օձիք։ [4]) Հաճար։ [5]) (Այս ոճը կընշանակէ բանակռիւ լինել։)

պահելու համար, բայց միշտ ասում էր. ըստով էլ բան չի դառնալ, մի օր իմ երեխէն պտի անտէր, խալխի դռան հացին մուրացկան ըլի, էհ դրանով էլ դոհեմ, վերջն երեխէս պտի մենծ մարդ դառնայ. Աստծու պահած դառը գէլը չի ուտիլ: Հետն էլ աւելացնում էր. լէս կորիս դու, ա՛յ կնիկ, ինչ գալիս ա գայ, Թաք վերջը խէր ըլի, Աստուած երազդ բարին կատարի:

ԺԴ.

ԳՐԲԱՑ, ԿԱՄ ՄԻ ՇԱԲԱԹՒՑ ՑԵՏՈՑ:

Եթէ մի կողմից երբեմն երբեմն Աշտարակեցիք ցաւակցելով էին խօսում Նախրչի Մանուկի վիճակի համար, միւս կողմից բոլոր գիւղը զարմացած մնացել էր տիկին Համասփիւռի վրայ: Որտեղից անց կենայիր, ափսոս կնիկ, կըլսէիր:

— Էս ողորմելին ի՞նչ օրն ա ընկել, պինչը բռնես, հոգին կըտայ. մի օր երեկոյեան ժամից յետոյ բերդի դռանը ասաց Գէորգ խալֆէն տէր Յարութիւնին, երբ Համասփիւռը ամէնքից շատ ուշ դուրս եկաւ ժամից և տմբտմբալով դէպի տուն ծռեց իր ճանապարհը:

— Էս էլ մաթ եմ մնացել [1], Գէորգ խալֆայ, ուսերը վեր քաշեց տէրտէրը, միտդ ա՞, երեխայ չունեցած ժամանակն ի՞նչ զուարթ էր, սարի մարալը քեզ օրինակ. էս էլ պտի ասած՝ որ միշտ երեխի համար էր հոգս անում ու Ղևոնդի տուած նեղութիւններն էլ գլխից անպակաս էին: Հիմի փառք Աստուծոյ, երեխայ էլ ունի, մարդի ձեռիցն էլ էնքան նեղութիւն չի քաշում, առաջուայ վրայ դառն ա դառել էն կապելու գազանը. համա ի՞նչ կանես, ես տեսնում եմ, որ քանի գա պտղել ա, օրից օր յետ ա գնում. պտի որ որա սրտումը մի դարդ կայ, առանց էն չի՛:

— Ես քանի անգամ մերոնց ղրկել եմ մախսուս, [2] խեղճ հարսիս մօտ, բալքի կարողանայ բերնիցը մի խօսք դուս քաշի, մի բան գլխի ընկնի. շատ անգամ էլ մեր տունն եմ կանչել տուել, ասել եմ, խրատել եմ, ղնամիշ եմ արել [3]. ինչ որ սպառած քարին ասած՝ նրան ասած. մարդի գլու[illegible]րան չեմ քցել, էլի միալար [4] տխուր, տրտում, հէնց գիտես, թէ աշխարհքի կոտ

[1] Զարմանալ: [2] Դիտմամբ: [3] Մեղադրել: [4] Անդադար:

ու բեզեռան լրանից են ուզում. շատ էլ որ ասում ես, ընէնց ուքուր ուքուր [1] լաց ա ըլնում, որ մարդի սիրտ ա կտրատվում, իրա լացն էլ ա գալիս. ձորդ կորած՝ ձէնդ պտի քեզ քաշես, տաղ անես: Լսի՛ր, տէրտէր, խօսքը փոխեց Գէորգ խալֆէն. Համասփիւռն իմ հարսն էլ ա՝ քու հարսն էլ, ասենք մի երկու պորտ ինձ աւելի մօտիկ ա, համա դէ դու էլ գիտես. որ դու էլ՝ ես էլ, մեր փչանալու Ղևոնդն էլ մի ծառի ճղքներ ենք, Շահաղիզենց մեծ քօթուկի վրայ դուս եկած: Ես գիտեմ, որ Համասփիւռն ինձ էլ շատ ա պատվում, մերոնց հետ էլ շատ սիրով տէքիրակնանիք են, համա քու բանն ուրիշ ա, նա ինձ հետ չխօսքան ա, բայց դու նրա հոգևոր ծնողն էլ ես, էս օր նա քու խոստովանորդիդ ա. դու իրաւունք ունիս կանչել, խրատել, զոռ անել, որ իր սրտի ցաւերը քեզ յայտնի, մի տեսնենք, թէ ձեռներիցս կըգայ, մի ճար անենք, խեղճ ա հարսս, ոտի վրայ չորացել ա:

— Է՛հ, հիմիկեց դէնը ինչ ուզում էք, արէք, մի դառը ժպիտով մօքի մէջ պատասխանեց նրանց մօտից շուաքի նման պատի տակովն անց կենող մի պառաւ կին. ցաւն ընէնց չի նրա սիրտն առել, հուպ տուել, որ դուք նրա հարարին հանէք, [2]. էն վաղ էր, էշը կաղ էր. ինչ գրուած ա, պտի կատարուի, ինչ գալու ա, պտի գայ:

Պառաւի այս խօսքերն իւր մէջ մեռան, տէրտէրն ու Գէորգ խալֆէն ոչ նրան տեսան, ոչ լսեցին. գնացին իրանց բանին. իսկ պառաւը մինչև տուն հասնիլը իր մէջ նրանց պատասխանելով փնթփնթում էր. հետն էլ շուտ շուտ ծնկներին խփում և հո՛ղն իմ գլխին, հո՛ղն իմ գլխին, կրկնում: Սա Սանդուխտ տատն էր, որ գնացել էր Շուխոնց աւետարանին իւր կողմից մի խաչակատար աքաղաղ մատաղ խոստանալու և ղզօղլան [3] Օհանին իմաց տալու, որ էքսի օրը Սուրբ Գէորգի սէրը ման գայ իւր տիկնոջ հետ: Օհանը խոստացաւ Համասփիւռի հրամանը կատարելու: Նա էգուց ծէքէլահան կըգայ անօթուց ու մի խուրջին ուսը կըքցի, տիկնի հետ տուն է տուն ման կըգայ, ամէն դռան կը կանգնի, «աղայ Սուրբ Գէորգի սէրը ման ենք գալիս, նրա բաժինը բերէք» կըգոռայ, ու ամէն տանից ալիւր, խունկ, մոմ, չիր, ցորեն կըհաւաքի. Համասփիւռի հետ

[1] Հեկեկալով: [2] Օգնութիւն հասնել: [3] Հերմոֆրոդիտ:

էլ շաբաթ օրը կերթայ Սուրբ Գէորգ, հաւաքած բաժինը հայր տէրբին կը յանձնի: Այս ամէնը թէպէտ սիրով խոստացաւ Օհանը, բայց Սանդուխտը բոլորովին սիրտը կտրած էր յետ դառնում. ոչ թէ կասկած ունէր Սուրբ Գէորգի հրաշագործութեան վերայ, նա օրը մին կը լինէր, աղայ Սուրբ Գէորգի անունը տալն ու երեսին խաչ հանելը 100, բայց այս անգամ ծածուկ մտել էր ռամ քցող[1]) գրին մօտիկ տուող Շօրագեալցի տիրացու Վարոսի մօտ, որ երկու օր էր Աշտարակ էր և իջած էր բերդաթաղումը:

—Քեզ մատաղ, տիրացու, մի գրից մօտիկ տուր, աղաչել էր Սանդուխտը: Վարոսն էլ ի՞նչ գիտի, օտարական մարդ, նրա ի՞նչ հոգն է, թէ ո՞ւմ համար է պառաւը խնդրում: Ռամը քցել էր, գիրը բաց արել ու պարզ էսպէս ասել:—«Երկնքի ու երկրի մէջ տեղը մի լուսի պէս սպիտակափայլ գեղեցիկ կին է երեւում կանգնած՝ գրկին մի հրեշտականման փոքրիկ աղջիկ. երկնքի դռները բաց են, ադամական դրախտը պայծառ երեւում է, բիւրաւոր ծաղիկներ անմահական հոտով մարդու հոգին լցնում են. Ինը դաս հրեշտակները Գաբրել-Մուքէլն առաջներին՝ ոսկեփունջ ծաղկները ձեռքներին՝ դրախտի դռնից մինչև այս կնոջ մօտ քաղցր շարականներ երգելով, շարուել են աջ ու ձախ, ճանապարհ են բաց արել, Ռափայէլ հրեշտակն էլ մի կանաչ ծառի ճիւղք ձեռին բռնած՝ հրաւիրում է նրան դրախտումը կատարուող հանդէսին ներկայ գտնուելու: Միւս կողմից այդ կնոջ քամակից եկել են մի քանի սեւեր հագած, մազերը խճճուած, այլանդակ, զարշահոտ և զզուելի սատանէք, Բելիարն էլ նրանց առաջին. նրանք զարդարել են մի հոյակապ, շքեղ տուն և անթիւ ոսկի ու թանգագին քարեր փռել են այն տանից մինչև այս կնոջ մօտ:—Այս ամէնը քեզ կըտանք, առաջարկում է Բելիարը, եթէ մեզ մօտ հիւր գաս. լսո՞ւմ ես երգերի ու երաժշտութիւնների ձայնը, այս ամէնը քեզ համար է պատրաստուած: Կինը երեսն էլ չի յետ դարձնում, նրա աչքը տնկած է դէպի դրախտի դուռը, ուզում է գնալ, բայց երկմտում է: Եւ ահա, ահա նա հեռուումը տեսաւ մի պառաւ կնիկ, ահա կանչեց նրան, շարունակում է ոգեւորուելով իւր գուշակութիւնները տիրացու Վարոսը, տա՛, ասաց նա պառաւին, այս երեխան, քեզ յայտնի է մեր ուխտը,

[1]) Գրբաց, հմայող:

գրուածը ջնջուելու չի, դու մինչև սրանց իրանց նպատակին չը հասցնես, մեռնելու չես. լաւ պահի՛ր սրան: Այս խօսքերից յետոյ կինը երեխային ձգեց պառաւի գիրկը, ինքը ձեռքը տուեց Ռափայէլ հրեշտակին ու մտաւ դրախտը: Դռները քամակիցը փակուեցան»:

Վարոսը լռեց, շատ կարելի է ինքը ոչինչ էլ չը հասկացաւ իւր տեսիլքներից, իւր ռամլի զօրութիւնից, բայց Սանդուխտը պարզ ամէն բան գլխի ընկաւ, արտասուքն աչքերին թողեց հեռացաւ: Էս էն միջոցն էր, որ տէր Յարութիւնն ու Գէորգ խալֆէն խօսում էին:

Եթէ համասփիւռ տիկինն չսթափեցնէր ժամից յետ դառնալուս իւրեանց դռանը մի քանի մանկական ձայներ, նա առանց գլուխը բարձրացնելու տուն կըմտնէր և «Ողորմի Աստուածը» տուն չըտարած՝ ոչ ոքի հետ չէր խօսիլ: Այս անգամ նա վերև նայեց, աչքը քցեց իրանց դռանը խաղացող երեխաների վերայ և կանգ առաւ:

Մանուշակն արդէն մեն էր գալիս ոտքով և թոթովելով խօսում էր, չորրորդ տարումն էր նա: Այս այն հասակն է, որ երեխայի ամէն մի շարժուածքը, մի սրամիտ խօսքը ամէնքին ուրախացնում է, ծնողական սրտին իւր երեխայի ամէն մի արարքը բերկրանք և մխիթարութիւն է: Այս կայտառնքը, այս թոթովանքը ևս աւելի ազդում են քնքոյշ մօրը, երբ նա տեսնում է, որ իւր սիրունիկը կարողանում է զգալ և հասկանալ մայրական զգացմունքները, և իւր կողմից էլ պատասխանում է: Մանուշակի այս թոթովանքներն էին, որ սթափեցրին համասփիւռ տիկինին թմրութիւնից: Նա լսեց իւր աղջկայ ձայնը, նա կանգ առաւ. տեսարանը, որ երևեցաւ նրան, շատ հետաքրքիր և իբրև նախասահմանական անօրէնութիւն էր նրա համար: Նա էլ չը կարողացաւ իրան հաշիւ տալ, թէ ո՞ր տեղից երկու երեխայ 5—6 տարեկան հասակում, յանկարծ խաղում են իւր մինուճար բալի [1]) հետ: Ինչպէս գիւղացի մանուկներ, նրանց արտաքին հագուստը շատ չէր զանազանվում իրարից շքեղութիւնով. երկուսի հագին էլ մի հասարակ արխալուղ հին էր, ոտքերը բոբիկ. սուր և սովոր աչքերը կարող են գտնել մէկի մէջ բոլորովին ալքատի որդի, միւսին բաւականին ապրուստի տիրոջ զաւակ:

Տիկինը զարմացել էր. նա երեխաներին, ի հարկէ, ճանաչում էր,

[1]) Զաւակ:

բայց իւրեանց դռանը իւր երեխայի հետ խաղալուս՝ առաջին անգամն էր տեսնում: կանգնած էին գրկաբաց երկու մանուկները Մանուշակից մի փոքր հեռու, անմեղ երեխայական ժպիտը երեսներին կանչում էին երկուսն էլ փոքրիկ աղջկան.—տեսնենք ո՞ւմ մօտ կերթայ, տեսնենք ո՞ւմ ա շատ սիրում: Արի՛, Մանուշակ, գնանք մեր տունը, ասում էր նրանցից մինը, իմ նանը քեզ չարազ [1]) կըտայ, մենք մի լաւ բաղչայ ունենք, սիրուն սիրուն ծաղկներ կան, կըքաղենք, կըփնջենք. իմ Թագա [2]) շորերս քեզ շանց կըտամ:

—Մենք ոչ բաղչայ ունինք, ոչ լաւ տներ, սրանից աւել ես շոր չունիմ, ասում էր միւսը. իմ նանը երկինքն ա գնացել. ափուս [3]) էլ նախրիցը նոր կըլի եկել. ես ոչ մի խաղի հնկեր չունիմ, թէ որ դու մեր տունը գաս, ինձ հետ խաղաս, շատ կուրախանամ, յետոյ իմ հէրս կըխոլտի քեզ, կըբերի ձեր տունը:

Երեխան ծիծաղ դէմքով մտիկ էր տալիս:

—Դու Վարդին անկանջ մի՛ անի, ինձ մօտ արի, ասում էր մինը:

—Թորոսը սուտ ա ասում, դու ինձ հետ արի, կրկնում էր միւսը:

—Չէ, Թորոս, ես քեզ մօտ չեմ գալ, Վարդը խաղացող հնկեր չունի, ես սրա մօտ կերթամ, վճռեց Մանուշակը և ուրախ ուրախ ընկաւ Նախշի Մանուկի տղի գիրկը ու պաչ արեց նրան:

Տէր Յարութիւնի տղայ Թորոսը պռօշները քաշ արեց ու կիսախռով տուած՝ մտիկ էր տալիս:

Աննկարագրելի էր տիկին Համասփիւռի զգացմունքը, նա իւր ականջովը լսեց մանուկների միամիտ խաղը և հոգւոյ աչքով տեսաւ իւր ուխտի կատարումը. նա մոռացաւ այն րոպէին իւր տըխրութիւնը, դուրս վազեց պատի տակից դէպի երեխաները, որոնք մինչև հիմա չէին տեսել նրան, և մինչ նոքա կըսթափէին, գրկեց երկու գրկախառնուածներին, մի քանի անգամ մէկի ու միւսի երեսները համբուրեց և յետոյ Թորոսի կոնիցը քաշեց, որ լացակրկնած՝ ոչ մի խօսք չէր հանում բերանից, նրան էլ խառնեց սրանց հետ ու երեքին էլ անդադար համբոյրներ էր տալիս.—Երեքդ էլ իմ բալէքս էք, սիրունիկներս, ես ձեր երեքին էլ միրգ կըտամ, ասում էր նա և շարունակում գգուանքը:

[1]) Ջուր միրգ· [2]) Նոր· [3]) Հայրիկս·

Թէ ո՞րքան տևեց էս տեսարանը և ինչո՞վ վերջացաւ, մենք չըգիտենք. այս յայտնի է, որ Սանդուխտ տատը գրքացի մօտից տուն վերադարձաւ և ծառաներից իմացաւ, որ խանումին ուշաթափուած տուն են բերել քուչի դռնից, հիմի հիւանդ վէր ընկած ա, աղէն էլ խանումի խնդրքովը մօտն ա:

Շփոթուած ներս ընկաւ պառաւն իւր սենեակը, որ տեղից մուտք կար տիկնոջ մօտ, բայց դուռը ծածկած էր: Սողնակիցը ներս նայեց, և ահա ի՞նչ տեսաւ: Տիկին Համասփիւռը անկողնում, Ղևոնդն էլ մօտը տխուր նստած: Այս շատ զարմանալի թուեցաւ պառաւին. նա իւր կեանքումը շատ սակաւ էր տեսած Ղևոնդին իւր կնոջ հետ նստած: Կարծես սա այն մարդը չէր, որ օրը 100 անգամ կրկնում էր Համասփիւռին, «Ե՞րբ պտի սատկես, էս տանիցը վերանաս, վերջանաս, որ ես քու ձեռքիցը պրծնիմ. ի՞նչ ես օձի պէս շնքումս փաթաթուել»:

—Լսի՛ր, Ղևոնդ, ասում էր Թոյլ ձայնով տկարը. ես ընչանք հիմի քեզանից պահել եմ մեր երեխի ճակատին գրուածը. հիմի ես քեզ ամէն բան մի մին ասեցի. ես հաստատ ումուդ ունիմ, որ Աստու կամքը պտի կատարուի. ի՞նչ կըլնի, որ Նախշի Մանուկին յառաջ քաշես, օգնես, կարողութիւնի տէր շինես: Ասենք, Աստու կշտին թէ հարուստ թէ աղքատ մինն են, համա քու աչքիդ դժար կերևայ, որ Նախշի խնամի ունենաս: Ի՞նչ կայ քեզ համար նրան հարստացնելը, ոնց որ մի քթալ ջուր խմես. մի երկու յէքի տուր իրան, մի քանի տարով պահելու, մի քանի օրավար հող քու դութանովդ վարել տուր նրա համար, մի երկու օրավար յէքատեղ տուր, թող իրա համար տնկի. ես ինչ գիտեմ հազար ճամփայ կայ. որ ուզենաս, երկու երեք տարումը կիսահամփայ [1]) կըշինես նրան. ինքը քիչ քիչ յառաջ կըգայ, ու ընչանք մեր երեխեքանց հասնիլը, Մանուկը գեղումը մի օրինաւոր մարդ կըլի: Աղաչում եմ քեզ, ա՛յ մարդ, խօսք տուր ինձ սուրբ Կիրակուն չըբարկացնիլ, ես էլ տեղիցս վէր կենողը չեմ. ես մեր երեխի բաղդաւորութիւնը չըկարացի տեսնիլ, դու էլա տես, ուրախացի՛ր. գերեզմանումն էլ իմ հոգին կիմանայ ու կուրախանայ: Ասա, Ղևոնդ ջա՛ն, խօսք տալիս ես, թէ ոչ:

[1]) Կիսահարուստ·

— Լաւ, լաւ, այ կնիկ, ամէն բան կանեմ, ասում էր հեղացած Ղևոնդը, դու երեխայ երեխայ խօսալ մի՛, դեռ լաւացի՛ր:

— Աշխատի՛ր, իմ տէր, իմ յիշատակը քաղցրացնել, ընչանք էս օր ինչ որ արել ես, թո՛ղ. էն անխղճմտանք տէրտէրին մի՛ լսիր, ջանք արա՛ ըստուց յետը Թորոսենց տան սևացրած անունը սպիտակացնել, քու լխահոգի պապերն Աշտարակի աչքն են էլել. էս սհա՛թս աչքիդ առաջին տեսնում ես քու ազգականներին՝ տէր Յարութիւնին, Գէորգ խալֆին, ի՞նչ կըլէր դու նրանց մազի չափ սիրտ ու ռահմ [1]) ունենայիր. ախար [2]) նրանք էլ ձեր տան պտղները չե՞ն, ընդուր ա ասած. մի ծառից համ թթի կըլի, համ հորսլի:

— Հերի՛ք ա հերի՛ք, ըստուց յետը ինչ կասես, էն կանեմ, դեռ մի դու տեղիցդ վեր կա՛ց:

— Դու էլ իրաւունք ունիս, թոյլ հեգնօրէն ժպտաց կինը, մօտ արի՛ ճակատդ պաչեմ. թո՛ղ իմ էս պաչը միտդ բերի, որ մինը էլել ա, որ իր օրումը մի քաղցր խօսք քեզանից լսել չի, համա էլի իր սև օրը վա՛յ տալով իր սրտումը քեզ սիրել ա ու սիրելով էլ շունչը փչում ա, իր պարտքը տալիս ա:

Այս միջոցին բացվում է դուռը, տուն է ընկնում Մանուշակը և վազում է դէպի մայրը, բայց հօրը տեսնելով սարսափած ուզում է դուրս փախչել:

— Արի՛, իմ անմահական վարդս, գգուանօք կոչում է մայրը, արի՛ ափունի կուշտը, նրա խափան ընկի՛:

Երեխան տան մէջ տեղը մնում է սառած, նա չի վստահանում մօտենալ հօրը, որ սևացել ածուխ էր կտրուել, չգիտեմ ամօթի՞ց՝ թէ բարկութիւնից. նա սաստիկ յուզուել էր և լալ:

— Ի՞նչ ես պէլացած մնացել, այ մարդ, հէնց արել ես, որ քեզանից էլածը քեզ մոտիկ ա տալիս, ոնց որ թուրքը խոզի մսին. մի քաղցրացի՛ր, վեր կա՛լ գիրկդ, մի երկու անուշ խօսք ասա՛. քաղցր լեզուն օձը ծակից հանել ա:

Ղևոնդը քաշեց իւր մօտ Մանուշակին ու համբուրեց, բայց նա երեսը շուռ տուեց, գրկիցը դուրս ընկաւ: Ղևոնդը մի ցնցիւն զգաց իւր մէջ և լռեց:

Այսօր էլ Աշտարակ մտնողը գտնում է երկու գերեզմանատուն: Մինը—մեծը՝ հասարակաց կոչուածը կարմրաւորի թմբին է,

[1]) Գութ: [2]) Ոչ ապաքէն:

գիւղի արևելահիւսիսային կողմումը. իսկ երկրորդը՝ ընկնում է Աշտարակու արևմտահարաւային ծայրը՝ որ տեղից սկզբն են առնում Օլորան կոչուած այգիները: Առաջին այգին, որին կից է այդ գերեզմանատունը, մինչև վերջին տարիներս էլ պատկանում էր Շահազիզեանց տան մի ներկայացուցչին: Խօսքս Թիֆլիզում բնակուող Շահազիզեանց—կամսարական Յարութիւնի մասին է, որից այս այգին անցաւ ուրիշ ցեղի ձեռք:

Հիւսիսային պատը բաժանում է այգին գերեզմանատանից: Շահազիզենց, Թորոսենց կամ Գէորգենց. այսպէս է կոչւում այդ հանգստարանը: Մինչև այսօր էլ այդ տեղն են թաղում այս մեծ ազգատոհմի, մի խօսքով ասած՝ Շահազիզեանց—կամսարականների հանգուցեալներին. երևում է շատ եսական մարդիկ են եղել սրանց նախնիքը. նոքա իւրեանցից յաւիտեանս բաժանուած անդամներին էլ չեն թողել իրանց աչքից հեռանալու. այգուցը կտրել, նրանց տեղ են տուել: Այսօր թէպէտ գերեզմանատունը լցուած է, էլ տեղ չկայ թաղելու, գիւղն էլ մեծանալով մէջ է առել այդ նուիրականութիւնը և բարոյապէս արգելք է դրել այդ ազգի վերայ հետևել իրանց նախնեաց օրինակին, բայց նոյն եսականութիւնը մի ազնիւ գոռոզութեամբ տիրում է ամէն մի Շահազիզեան տան անդամների վերայ՝ մեծից մինչև կրտսերը: Շատերը լինում են, որ մեծ պահանջ են յայտնում իւրեանց վերջին ցանկութիւնը կատարելու:

Ղևոնդի և Համասփիւռի խօսակցութիւնից մի շաբաթ յետոյ, մի երեկոյ այդ հանգստարանումը մի նոր թաղած գերեզմանի վրայից ծուխ էր բարձրանում: Մի աղքատ մարդ բռնած իւր 6-7 տարեկան երեխայի կռնից, հանգստարանի պարսպիցն էր դուրս գալիս, աչքերն արտասուքով լիքը:

— Ի՞նչ էիր անում ըտեղ, Մանո՛ւկ, հարցրեց նրան այգուցը տուն դարձող մի գիւղացի, էդ ի՞նչ ա էլել երեխէդ:

— Վարդս մի քիչ քէֆ չունի, երկ՛ օր ա դողացնում—էրացնում ա, պատասխանեց նախրչի Մանուկը. էս օր նաչար Համասփիւռ խանումին պատարագին ժամ դրած վախտը՝ մի կտոր բամբակ ղրկեցի սեղան, պատարագիչը դողը կապեց. հիմի էլ մի կաւէ ամանով ջուր բերի, խանումի գերեզմանի վրայ երեխիս ոտ ու ձեռին ջուր ածեցի, ամանն էլ ընտեղ կոտրեցի. «Թող էս փառչն ըտեղ կոտրուի, ասեցի, երեխիս դողն էլ ըտեղ կոտրուի»:

— Տեառք, ի՞նչ եկաւ խեղճ կնկանը, ափսոս համասփիւռ խանում:

— Աստու կամքն էր:

— Մեռնեմ Աստուն, պատասխանեց խօսակիցը, հոգւոս էլ մեղք եմ անում. հազիր ասես, որ անօրէն Ղևոնդ աղէ սպանածն ա՞:

ԺԵ.

ՂԵԻՈՆԴԸ ՏԱՆՈՒՏԷՐ՝ ՆԱԽՐՁԻ ՄԱՆՈՒԿԸ ԳԶԻՐ:

Մարդուս արժանաւորութիւնը կամ անարժանութիւնն այն ժամանակն է հասկացվում, երբ որ նրան բաղդատում ենք իւր համակարգ դասակիցների հետ:

Գէորգ խալֆի յատկութիւնների հակապատկերն էր Ղևոնդը: Նրա գործերը քննել շատ էլ հարկաւորութիւն պէտք չի, բաւական է միայն ասել, ինչ որ ամէն օր ինքը Գէորգ խալֆէն ասում էր, և մեզ լաւ յայտնի կը լինի նա: Մի ծառից համ թի կըլի, համ հորսլի: 1)

Եթէ Գէորգ խալֆի տանը օրական այնքան բազմութիւն հաց էր ուտում, Ղևոնդի տանը բոլորը քօռ ու փուչ էր լինում. նա ժամանակ էլ չունէր իւր մլքին, 2) ապրանքին մոխկ տալու. տանող տանողն էր, շներոց գիլերոց 3) էր լինում: էլ սարվազ, էլ ղարախափախ, էլ սէվզլու 4) ասես, նրա տուն ու դուռը, նրա այգիները լէքն էին լինում. գափում, գշլում, տրորում, կոտրատում, գողանում, տանում էին, նա էլ՝ միայն թէ անողը Պարսիկ լինի, հոգն էլ չէր, ի հարկէ մինը կերթայ սարդարին, խաներին, բէգերին, ես ինչ գիտեմ, ո՛ր մի փորը քաղցած՝ անունը մեծ պարսկի իմաց կըտայ նրա առատաձեռնութիւնը:

Եթէ նա ինքն էլ շահազլկեանց տան անտակ ծովի որդի չըլինէր և այդ ճանապարհը բռնէր, վաղուց սոված պկռտում կըլինէր, բայց Աստուած ողորմի յետ ձգողին, այնքան են թողել, որ մինչև իւր մահն էլ այսպէս գնար, ինչպէս ծովեցը մի կաթիլ ջուրը վերցնես:

Տէր Մելքսէթն ընդհակառակն էսպէս չէր, նա իւր հաշիւը լաւ գիտէր. մի կողմից էլ ինքն էր տղրուկի նման դուրս ծծում:

1) Հօսելի: 2) Կալուածք: 3) Գայլերի բաժին: 4) Թուրքերի ցեղեր են:

Քանի անգամ խեղճ Գէորգ խալֆէն երբ միայն կը ճանգէր Ղևոնդին, կը յորդորէր խեղճ գալ իւր մինուճար երեխային, ափսոսել, խնայել իրանց օճաղը, անտէր չթողուլ իւր կալուածքը, բայց նրա խօսքերը մի ականջից մտնում, միւսովը դուրս էին գնում:

— Ամէն մարդ իր գլխին խելք դնի, իր խէր ու շառը ճանաչի — կը մրթմրթար Ղևոնդն ու երեսը շուռ կըտար:

— Գոնէ յանձնիր մի քօմակ 1) շատուոր տան, թող քեզ տարեկան մի բան տան ու մուլքը երեսից չըքցեն, կարդադրի մի երկու ջիքու մասիլ 2) Թուրքերին բաժանեն, բայց որ Թուրքն իրաւունք չունենայ իր ձեռովը քանդի, աւերի:

— Ամէն մարդ իր խելքի տէրն ա, ամէն մարդի խելք իր գըլխին ա. շատ մի՛ ասիլ, լաւ էն կըլի, որ գլորն 3) եկել ես, գէնը գնաս, կասէր խեղճ մարդին, ու գնչով ճանապարհը ցոյց կըտար:

Որքան էլ սկզբներումն էսպէս էր, կնոջ մահը մի միջոց իւր ազդեցութիւնն արեց նրա վերայ: Մեծ պասն եկաւ, ուրիշների հետ հէնց իմանաս նրա փուքն էլ նստացրեց՝ էլ շուտ շուտ գեղեցը չէր հեռանում: Պասի հետ Աշտարակցոնց բան ու գործն էլ դուրս է գալիս. ամէն մարդ մեյլաճանճի պէս դադար չունէր, բայց Ղևոնդի գործերը մնում էին մի պարսիկ կառավարչի կամքից կախուած. էդ էր պատճառը, որ նրա 10—20 արտեցը ուրիշի չարեքի չափ հասկ չէր հաւաքուիլ: Գէորգ խալֆի հետ հաւասար բաժանած էր՝ նրա մլքերը, դեռ ողորմածիկ Թորոսին՝ նրա հօրը մեծաբաժին էլ էր տուած, բայց նրա կիսի չափ բերք չէր լինում:

Այս տարի ընդհակառակն Ղևոնդն ինքն էր կանգնել իւր ապրանքի վերայ, օրը մի անգամ այգի կըգնար, իր տուն ու տեղի վերայ աչք կունենար:

Ամէնքը մանաւանդ զարմանում էին նրա վերայ, որ աւելորդ մուֆտախորներին 4) հեռացրեց ու միայն մնաց Սանդուխտը, որ հիմի կարծես Ղևոնդի աչքումը մեծ նշանակութիւն էր ստացել:

— Մի հոգևորի իծանը 5) դուս են էլել 6) ա՛յ, փսփսում էին երբեմն նրան տեսնելուս Գէորգ խալֆէն ու տէր Յարութիւնը:

— Սանդո՛ւխտ, երեխին ծածկի մրսի ո՛չ, Սանդո՛ւխտ, մի երկու կնիկ կանչէ, տանը քու հաւարին հասնին, Սանդո՛ւխտ, էս մա-

1) Բազմամարդ: 2) Բերք: 3) Որ տեղից: 4) Զրիակեր: 5) Այծերը: 6) Խելօքացել է:

ռանատան բանիքը ջիրիդ պահիր՝ գողանան ոչ, էս էին նրա հրամանները ամէն առաւօտ:

—Փառքդ շատ ըլի, երկնային Թագաւոր, միտք էր անում ուրախ ուրախ պառաւը, մի առուով որ ջուր գնացած ըլի, վերջն էլի կերթայ, ասը [1]) կըքաշի. ախ, ինչ կըլէր լոի բաժին խանումիս օրոճն ըլէր փոխուած, նաչարը [2]) մի աչք չի բաց արեց: Ընէնց պտի արած՝ որ էլ յետ սատանէն սրան ճամիից հանի ոչ, մտածում էր ամէն գիշեր պառաւը և սրա համար մի հնարք գտաւ. երեխայի համակրութիւնը փոքր առ փոքր զարթացրեց նա դէպի իւր հայրը: Մանուշակ ջան, ախուն էկաւ, գնա գիրկն ինկ, գնա պաչ արա:

—Ա՛հ, նա փիս [3]) ա, ես նրանից վախումեմ, Թոթովումէր երեխայն, բայց պառաւը կարողացաւ իր նպատակին հանիլ:

Ամէն երեկոյ, երբ Ղեւոնդը տուն կըգար, երեխայն կըվազէր առաջը, կըփարէր նրա վզովը և սխմելով իր գլուխը հօր գրկին, համբուրել կըտար իր Թշիկներն ու կասէր. ախու ջան, նանս երկինքը գնաց, հիմի իմ հէրս էլ՝ մէրս էլ դու ես. մի օր որ քեզ տեսնեմ ոչ, սիրտս կերթայ:

Այս խօսքերը, որչափ և Թութակի նման սերտած՝ անգիր արած՝ երեք չորս տարեկան երեխայի բերանից, բայց և այնպէս մի կախարդիչ ներգործութիւն էին անում այն ապառաժ քարի վերայ, Ղեւոնդը բոլորովին փոխուեցաւ:

—Երկաթը տաք տաք կըծեծեն, միտք արեց պառաւ Սանդուխտն ու կամեցաւ իւր տիկնոջ կամքը գլուխ բերել. ես իմ շապկումս կենալ չեմ, վճռեց նա, ընչանք նախրչի Մանուկին յառաջ չըքաշել տամ:

Հանգամանքը նրան օգնումէր:

Գիւղացիք էլ էս տեսնելով, առանց երկար մտածելու նրան տանուտէր շինեցին:

Առաջին անգամը մեր իշխաններն էլ իրանց աչքերին չէին հաւատում, երազ էին համարում, երբ որ տեսնումէին, որ մեր տանուտէրը աչքի լուսի պէս՝ գեղին մտիկ է տալիս:

Նավրուզ բայրամին հօ, էն որ ամէնքը դողումէին, Թէ տեսնես, էլ որ խեղճի տունը պտի քանդի, ո՞ւմ աղջիկը պտի դուրս

[1]) Աչքը: [2]) Անճար: [3]) Վատ:

քաշի, սարդարին ընծայ տանի, մանաւանդ երբ որ պարզ տեսան, որ մի շաբաթ յառաջ յատուկ մհասիլ [1]) եկաւ Երեւանից ու իրան տարաւ, բայց ինչ ես կարծում, բոլորի բերանն էլ բաց մնաց, երբ որ նա Աղարակ գեղի Սաֆար Գուլի բէգի աղջկանն արժանացրեց էդ շնորհացը:—Սարդարը ինձ հրամայեց մի սիրուն աղջիկ տանեմ իրան էս Նավրուզին, յայտնեց նա Երեւանից գալուս Գէորգ խալֆին, ես էլ խոստացայ, բայց ուզումեմ Թուրքի աղջիկ տանեմ:

—Էդպէս էլ հարկաւոր ա, խորհուրդ տուեց Գէորգ խալֆեն և միւս օրը Սաֆար Գուլին ուրախ ուրախ մեծ մեծ պարգեւներով իւր աղջկայ երեսը ծածկած՝ Թարքին [2]) նստացրած, գնումէր դէպի Երեւան: Քիչ բաղդաւորութիւն չէր. նրա աղջիկը, որ ով գիտէ ինչ քաղցած բէգ պէտք է փախցնէր, իրեն կնիկ շինէր, հիմի առօք փառօք բայրամի առաջի իրիկունը քօծ ու զարդարուած [3]) բաղնիք պէտք է գնայ ու Երեւանու տիրոջ կին լինելու շնորհքին արժանանայ: Եթէ բաղդ կունենայ, սարդարի աչքը վրէն կըքաղցրանայ, էն է որ նրա հարամխանի ծաղիկը կըդառնայ նա, իսկ եթէ ոչ, մի շաբաթուան երջանկութիւնն էլ մեծ բան է, մանաւանդ, որ սարդարի հարամի շէմքը տեսողը մեծ մեծ խաների կին դառնալու յոյսը միշտ կարող է ունենալ. ո՞վ չի պարծանք համարիլ իրան սարդարի կնոջ հետ քեարին կորիլ: [4])

Աշտարակեցոց սրանից աւելի ինչ հաստատութիւն էր հարկաւոր, Ղեւոնդը տարաւ պարսկի աղջիկը և սիրտն ուրախ մի լաւ խալաթ հագին յետ եկաւ:

Էլ Աշտարակեցւոց ուրախութեանը չափ կըկար. ոտքերը գետնիցը կտրուել էր:—Էս է որ կայ, սրանից լաւ տանուտէր չենք գտնիլ մենք, շնորհաւորումէին իրարու:

—Ասումեմ, որ երկաթը տաք տաք կըծեծեն, հաստատապէս վճռեց Սանդուխտը. և որքան խելք ունէր, բանացրեց Մանուկի վիճակը փոխելու:

—Ախու ջան, մի երեկոյ սովորական գրկախառնութիւններից յետոյ, Ղեւոնդի սրտի ուրախ ժամանակը Թոթովեց Մանուշակը, պառաւի Թելադրութեամբ: Ախու ջան, նանի սաղ վախտը նա-

[1]) Սուրհանդակ: [2]) Քամակին: [3]) Հարճ: [4]) Ամուսնանալ:

խըրչի Մանուկի տղէն մեր տունն էր գալիս, էլ հիմի խի՞ [1] չի գալիս:

—Ընչի՞դ ա պէտք, քեզ մատաղ, յանկարծ թափահարուելով ասաց Ղևոնդը, նա քու ընկերը չի, նա մի նախրչու տղայ դու տանուտէրի աղջիկ:

—Էս օր նա մեր քուչովն անց էր կենում, վրէն ըսկի շոր չունէր, արմնկները բաց երևում էին. նանիս բաշխած արխալուղն էր հագին, էն էլ սաղ քրքրուել էր. նա ինձանից մի կտոր հաց՝ ուզեց, սոված եմ, ասում էր, տանը ոչ հաց ունինք, ոչ կերակուր: Ափու ջան, ի՞նչ կըլի, որ նա գայ մեր տանը կենայ, շոր էլ հագցնենք, հաց էլ տանք:

— Նրա հէրը չի թողել, բալայ ջան, մատը ատամի տակին սղմելով պատասխանեց Ղևոնդը:

—Հօրն էլ բեր, ի՞նչ կըլի. հալէր [2] ասում ես, որ գզիր Ղազարը հայհուրել ա, բան չի կարում շինել, Վարդի հօրը քեզ մօտ գզիր վեր կալ: Նա քեզ պէտք կըգայ, ես էլ Վարդի հետ խաղ կանեմ, նա լաւ տղայ ա, ես նրան շատ եմ սիրում:

—Գրածը ջնջուիլ չի, միտք արեց Ղևոնդն և միւս օրը Նախըրչի Մանուկը տաւարն իր նախորդ գզիր Ղազարին յանձնեց ու ինքը նրա պաշտօնն յանձն առաւ: Սկզբումը շատ էլ ուրախ չէր Մանուկը իւր սիրելի գործը թողնելուս, բայց տեսնում էր պարզ Աստուծոյ կամքն է կատարվում, Ղևոնդի վարմունքը ուխտի կանզսկատարման սորութիւնն է նշանակում:

Այնուհետև երկար ժամանակ Աշտարակեցւոց լեզուին դժուար էր գալիս նախրչի Մանուկը գզիր Մանուկ կոչել:

—Ո՞վ կը մտածէր, ուսերքը վեր էին քաշում միմեանց մօտ Աշտարակցիք, այ արմանք, Ղևոնդը տանուտէր՝ նախրչին գզիր:

Վարդն ու Մանուշակն այնուհետև միմեանցից անբաժան էին. Սանդուխտը ուրախութիւնից չգիտէր, հէնց գիտէր, թէ աշխարքն իրանն են տուել, երկու երեխայքն իւր երկու աչքերի լուսի պէս սիրում և խնամում էր: Ինքը Ղևոնդն էլ փառաւորվում էր էս երկու անմեղների քաղցրութեամբը. շատ անգամ նա Մանուշակին ու Վարդին միասին գիրկն առած՝ քանի մի րոպէներով պահում էր:

[1] Ընչու. [2] Ահա.

ԺԶ

ՔԱՒԹԱՌՈՆՆՑ ՏԷՐ ՄԷԼԻՔՍԷԹԸ:

Լուսածաղին մի կիւրակէ առաւօտ՝ դեռ նոր ժամհար Սուքիասը վեր էր կացել քնից, Զաղնոց Զրլոքումը [1] առուի վերայ երեսը լուանում էր, որ գնայ ծիրանաւոր եկեղեցին բաց անի, կոչնակները [2] ծեծի, Աշտարակցիներին ժամ հրաւիրի:

Տէր Մէլիքսէթը նստած իր սև ձիու վրայ, երկու սարկաւագ էլ քամակը քցած՝ Սուքիասի առաջովը ծռուեց դէպի Ծակի դուռ կոչուած փողոցը, որ ուղղակի տանում է դէպի ձորը, որ տեղից Խօջայ-փլաւի շինած սրբատաշ, երեք աչքանի, կամարակապ կամրջովը Ճանապարհն անց է կենում դէպի Երևան:

Դեռ լոյս ու մութը նոր էր ուզում բաժանուիլ, Ազամայ մութը դեռ չէր քաշուել և տէրտէրը մտքովն անգամ չանց կացրեց, թէ ժամհար Սուքիասը կարող իրան տեսնել: Զրլոքի մօտ նա պինդ մտրակեց իւր ձիուն և քչփչաց իւր ուղեկիցների հետ: — Մի փոքր շուտ անց կենանք ձորը, քանի չի լուսացել, թող մեզ ոչ ով չտեսնի:

—Ա՛յ քու տունդ գլխիդ փուլ գայ, մրթմրթաց նրա քամակից իւր միջումը ժամհարը, էս լիսաթաթախ սուրբ կիրակուայ աղօթաբանը խափանի քու չոր միտքդ, քո Անտօնական կարգը պատժի քեզ, գնալդ ըլի, գալդ՝ ոչ. տեսնես էլ ի՞նչ տնաքանդ բան ես միտք արել, վերկացել, կորչում խաների դռանը չուղուլութիւն [3] անելու. աչքը դիպաւ, շատ վախտ ա, որ գեղը մի քիչ դնջացել ա. փառքդ շատ ըլի Աստուած, ընդուր են սաել աշխարհականից մխալ մխալ, հոգևորականներիցը լէտր լէտր պտի էն աշխարհքումը մեղք հարցնեն. աշխարհականն ինչքան էլ մեղաւոր ըլի, մի օր նա դարձ կըգայ, համա տէրտէր — վարդապետների վատից հախ միայն տէրն [4] ազատի, նրանց էլ յարութիւն թողութիւն չկայ. ախար սրա պէնեներին էլ

[1] Ջուր լցնելու տեղ. [2] Տախտակ, որ զանգակի տեղ էր բանում. [3] Լրտեսութիւն. [4] Արդարադատ տէրը:

ի՞նչ յարութիւն թողութիւն, ի՞նչ Գաբրէլ հրեշտակի փողի ձէնը լսել: Մի վախտ կար, մեր տանուտէր Ղևոնդն էր սրա տնքանդութիւնի ընկերը. մենք ասում էինք, թէ սրան ճամփից հանող մոլորացնողը նա է, համա նա ո՞րտեղ, սա որտեղ, նա ախսոս չի՞, մարդ ա՛ մարդի պէս: Ընդուր են ասել. արջն իր ահն կը գոռայ. տօ, թէ սրա սրտինը չարութիւն չէր, ընչի՞ էր վռազացնում թուրքերին. «Ջրը մթնով անց կենանք, թող մեզ ոչ ով տեսնի ոչ»: Գնա՛, ոչ տէր Մէլիքսէթ, Մինը կայ, որ նրանից ոչինչ չես կարող թագցնել, գնա՛, նա քո գլուանդ ¹) կանի, երբ որ էն աշխարհքումը՝ դատաստանի օրը երեսդ սև, պոզաւոր սատանեքանցով պատած, նրա առաջին կըկաննես, գլուխդ էլ չես համարձակուիլ բարձրացնիլ, որ պատասխան տաս. էն օրը ես քեզ կ՚ասեմ. «Հը՛, մ՞ոտ ա ջըլքի վըլինը»:

Սուքիասն այս խօսքերը մրթմրթալով մինչև եկեղեցու դուռը հասաւ և դեռ բաց չարած՝ աչքը ձգեց ձորաբաշից դէպի Երևանու ճանապարհը: Լոյսն արդէն բացուել էր, նա իւր արդար սիրտը պըղտորողին տեսաւ. Ախար-Բախար ասուած տեղին մօտենալիս: Ինչպէս շուտ շուտ են քշում, միտք արեց նա գլուխը տմբտմբացնելով և ժամի դուռը բաց արեց, ներս մտաւ իւր պաշտօնը կատարելու:

Տէր Մէլիքսէթը գնում էր առանց աջ ու ձախ նայելու, չէր էլ ուշք դարձնում, թէ իւր քամակից մարդիկ են գալիս. նա ըղնում էր ու մտածում. ի՞նչ ուրախ եմ, որ հիմի ես ինձուղղուս, առանց ուրիշի օգնութիւնի սարդարի ու խաների մօտ համարձակ ելու մուտք կունենամ. ասած ա. կէսուրդ մեռաւ, տեղդ լէնացաւ. հիմի իմն ա. տեսմար Ղևոնդը կորուել ա Երևանից, էլ խաների երեսը չի գնում. դարձ ա եկել, խղճմտանքը միտը բերել. յիմար յիմար, մի հարցնող ըլի, թէ ի՞նչ խղճմտանք, ի՞նչ դատաստան. էն աշխարքիցն ո՞վ ա յետ եկել, մեզ խաբար տուել. էհ, ի՞նչ եմ հոգում, իմ բանն աջ ա, ով կուզի թող հաչայ: Ես հիմի կըգնամ սարդարի մօտ, Ղևոնդի քարը անտակ հորը կըքցեմ ու ինչ որ նրան էին յանձնում կատարելու, ինձ կըյանձնեն. ուժնից եմ վախենալու, կարգս ոչ ով չի կարող վեր առնել, սարդարին մի աչքով կանեմ, Էջմիածնի մոխիրը երկինք կըբարձրացնի, կաթուղիկոսին Ֆալախի մէջ կը չորացնի, քարն էլ ա իմ ձեռին, պօպօքն ²) էլ: Էգուց

¹) Դատաստան. ²) Ընկոյզ.

էլօր Նավրուզ բայրամը կըգայ, մի հէնց սիրուն աղջիկ կը տանիմ սարդարին, որ օրումը տեսած չըլնի: Ղևոնդը թէ որ շատ կը փըրթփըրթայ, իր աղջիկը կըքաշեմ, որ ընչանք հիմի սարդարի աչքից գողնովի պահել ա, ես էլ խաթրիցն անց չեմ կացել, տաք եմ արել ¹):

Ծանր քշէ՛ր մի փոքր, քէշիշ աղա ²), ձայն էին տալիս տէր Մէլիքսէթի քամակից նրա ուղեկիցները, մեր ձիանքը չեն կարողանում քո քեահլանի ³) հետ գնալ:

—Եկէք ոչի՛նչ, ձեռքը թափ է տալիս տէրտէրն ու ձիու սանձն արձակ թողած՝ շարունակում իւր մտածմունքը:

Լցուեցէք, հարստացէք Աշտարակցիք, ուրախացէք, Ղևոնդին ձեր թօռը քցեցիք, միամիտ էլէք, ըստուց յետոյ ձեր մի մազին ոչ ով չի կարող դիպչել. էլ ի՞նչ դարդ ունիք, մի Ղևոնդ կար ձեր տունը քանդող, նրան էլ տանուտէր շինեցիք, գեղը նրան տուիք. տէր Մէլիքսէթին էլ չթողէք աւագ քահանայութիւն տալ, «տէր Յարութիւնը հերիք ա» ասացիք. դրանով տէր Մէլիքսէթի ատամներն էլ քաշեցիք, խեղճացրիք. էլ ի՞նչ հոգս ունիք, Աստուած էլ ձերը տուել ա.... Չէ՛, իմ սիրելի խոստովանորդիքս, դեռ սպասեցէք, մին մնի կըհանդիպենք, դեռ դուք նոր պտի իմ զօրութիւնս փորձէք, ընչանք հիմի ամէն բան Ղևոնդի վրայ էիք քցում ու ինձ նրանից ստոր համարում, հիմի իմ զօռս էլ փորձեցէք: Ործա՛ւ ձեր Ղևոնդը, նրա գլխին թափած անէծքը թող իմ ու ընտանիքիս գլխին գայ այսուհետև. շունը կըհաչի, քարվանը կըքոչի. եթէ տէր ընդ մեզ իցէ, ո՞վ իցէ մեր հակառակ. թող ես սարդարի աչքն ինձ վրայ քաղցրացնեմ, ձեր պէս 500 գեղ նրա ղնկին թող մատաղ գնայ, դեռ մի խալաթներ ու պարգևներ ստանամ, էն ժամանակը կըիմանաք, թէ ես ո՞վ եմ. երբ որ ձեր փխփխալով կթուող հօրթը տակին կովերը, ձեր եղի մէջ թաղուած՝ ապրշումի նման փափուկ բուրդ ունեցող ոչխարները, ձեր բերնից հետ լէքը սիպտակահատ ցորնի հօրերը անցկացան Երևանու խաների ձեռը, էն օրը վայ կըտաք ձեր սև օրին:

Թողունք, ընթերցող, տէր Մէլիքսէթին իւր ապագայ գործողութիւնների ծրագիրը կազմել, մենք սորա արտաքին տեսքն և յատկութիւնները զննենք:

¹) Լռել: ²) Պարոն տէր տէր: ³) Նժոյգ:

Սա էր մի միջահասակ երիտասարդ, աւելի ցած քան թէ բարձր, լղար դէմքով, երկարաւուն երեսով ու մուք շիկագոյն մազ ու մօրուքով, աչքերը շականակագոյն և ըստ երևոյթին փոքր ինչ կարճատես: Դրա համար էր, որ եթէ երբեմն իւր խիղճը միտքն էր բերում, կամ գուցէ կեղծաւորութիւնից ստիպուած՝ ժամ էր գալիս, իրան խառով կենայ, աւետարան էր կարդում, ակնոց էր դնում աչքերին, որի տակից էլ նշմարելի էր նրա խորամանկ նայուածքը. Նրա բերերը միշտ անհանգիստ էին և անդադար շարժողութիւնով մի վատ տպաւորութիւն էին թողնում դիմացի մարդու վրայ. իւր պուշ հայուածքից պարզ երևում էր հոգւոյ չարութիւնը: Թէպէտ նա ինքը մի կեղծաւոր անհամեստ շինովի ժպիտ երեսին առած՝ ուզում էր դրանով ցրուել իւր աչքերի արած վատ ազդեցութիւնը, բայց նրա ժպիտը աւելի զզուանք էր պատճառում: Տէր Մելքսէթը փոքր ինչ ընդունակութիւն ունէր, բայց իւր այդ թանգագին յատկութիւնը ի չարն էր գործ դնում. դրանով կարողանում էր նա անծանօթներին ու միամիտներին խաբել իւր ճարտար լեզուով: Եթէ հետամուտ աչքերով նայելու լինէիր նրա չոր երեսին, կըկարդայիր պարզ նրա չար հոգին: Վա՜յ այն օտարականին, որ առաջին անգամ նրա ճանգն ընկաւ, նա իւր շողոքորթ և կեղծաւոր լեզուովը այնպէս կփաթաթէր իւր թակարդի մէջ, այնպիսի կեղծ բարեկամութիւն ցոյց կըտար, որ ողորմելին էլ նրա թօւիցը չէր կարող դուրս գալ, ուզէր չուզէր, հետը, գոնէ երեսահանից, քաղցրութիւնով պէտք է վարուէր, թէ չէ մի շաբթի մէջը նրա անունը մէջ տեղից վեր կը կենար:

Այս երկերեսանի մարդը եթէ ժիզուիթական օրդէնին չէր էլ ծառայել, ի բնուստ նա ժիզուիթ էր ստեղծուել: Մի ոտքն Երևան, միւսը Էջմիածին ունելով՝ նա քանի՜ քանի՜ բարձրաստիճան հոգևորականների իւր թակարդի մէջ էր ձգել: Յանկարծ մի վարդապետ, կամ մի եպիսկոպոս մի խանից մի թուղթ էր ստանում, որ գրաբերիս ձեռքով ուղարկի իրան այսքան փող, կամ իւր սնդուկի մէջ պահած այսքան գազ կերպասը, եթէ նա խնայում է իւր գլուխը: Գիրը գրուած էր լինում հայերէն մի անծանօթ ձեռքով. պահանջածը անյապաղ տեղ էր հասնում. բայց մի բան միայն զարմանալի էր թւում, թէ ո՞վ նրա փողերի կամ սնդուկում պահուած կերպասի որքանութիւնը յայտնեց խանին, շատ անգամ մինչև գոյնն էլ նկարագրուած էր լինում:

Այսպիսի դէպքերից մի քանի օր յետոյ տէր Մելքսէթը կը գար Էջմիածին, խոր հոգւոց քաշելով սրտացաւութիւն կը յայտնէր հայր սուրբին և միշտ կը խոստանար տեղեկանալ, թէ ո՞վ է եղել աներևոյթ լրտեսը, որ սուրբ հօր փողերը կամ կերպասը խանի ճանգն է ձգել: Բայց ի՜նչ անես, որ խոստմունքը միշտ անկատար էր մնում, միամիտ վարդապետը մինչև այսօր էլ չի իմանում, թէ իր թոյլ լեզուն է նրա սնդուկի դուռը բաց արել, նրան ո՞վ էր ասում տէր Մելքսէթի մօտ իւր աջհամբոյր ստացած փողերի ու ջերմեռանդ ուխտաւորներից եկած պարգևների, կամ օգէտ տէրտէր դարձող տիրացուների բերած կաշառքների հաշիւը նրան տար:

Գտնուելով անդադար սարդարի ու խաների դռանը, ծանօթ լինելով գլխաւոր մուշտէիդից ու շէյխերից մինչև ախոնդն ու վերջին մոլլէն, տէր Մելքսէթն իւր ընդունակութիւնովը և նրանց դուր գալու համար սովորել էր պարսկերէն լեզուն: Այդ բանը դրան աւելի յաջողութիւն էր տուել Էջմիածնի Հայոց Հոգևորական կառավարութեան միջնորդը լինել: Եթէ մի նոր խան, կամ կառավարիչ էր ղրկվում Պարսկաստանից Էջմիածնի վերայ, որ չգիտէր թուրքերէն, կամ ինչպէս սովորաբար ասում են, Ղաջարի լեզու, տէր Մելքսէթն էր գրաւոր և բանաւոր թարգմանը: Այդ պատճառաւ էլ հէնց առաջին օրից չարամիտ տէրտէրն իւրեան հաւատացող հոգևորականութիւնը կասկածելի էր անում նոր կառավարչի աչքում. սրանց խօսքերը ծուռն էր մեկնում և նրանց պատասխանը իւր քմաց համաձայն էր տալիս: Այս անում էր նա՝ մանաւանդ գրաւոր խնդիրների ժամանակ. ամէն գործ իւր նպատակի յարմար էր փոխում և աւելի յօգուտ պարսից, քան թէ իւրեան կուրօրէն հաւատացող հայերի համար էր աշխատում: Իւր գործը միշտ էնպէս էր տանում, որ Էջմիածինը նրան համարում էր իւր շահերին հաւատարիմը, դրա պատճառաւ էլ նրա արած չարագործութիւնները շատ անգամ չտեսնելու էր տալիս. իսկ սարդարը նրան շատ լաւ ճանաչել էր, իւր կողմից նրան լըրտես և ամենահաւատարիմ գործակալ էր համարում:

Տէր Մելքսէթն իւր այս չար յատկութիւնների հետ մի փծնի դողութիւն էլ ունէր: Շատ անգամ մի խանի, կամ բէգի, կամ Հայոց Հոգևոր [illegible] և կամ իւր ծխի տունը մտնելիս, եթէ տանուտէրը աչքն ուրիշ կողմը լինէր դարձրած, կամ թէ սենեկից դուրս գնացած՝ տէրտէրը աչքի կտրածը կը կոխէր իւր ծո-

բարկուէր թէև էն էլ այնպէս հնարագիտութիւնով, որ խեղճ տանուտէրը իրանից կը հաւատար, տէրտէրիցը ոչ։

Շատ անգամ եթէ Էջմիածնից, կամ մի եպիսկոպոսից տօն օրերին պարգև էր ղրկվում սարդարին կամ խաներին, նա այնպիսի յաջողաձեռնութիւնով էր գողանում այդ պարգևից, որ խանը չէ՛ր ստանալէն էլ չէր կարող բան հասկանալ։ Ասում են, որ այս երևելի ձիրքը, այս ուրիշի ապրանքը իրան սեպհականացնելու գեղեցիկ յատկութիւնը տէր Մէլքիսէթի մէջ ժառանգական էր. բայց ի հարկէ, երբ իւր պապերը կամ հայրն՝ արել են, խայտառակուել են յիմարութիւնից, չեն կարողացել անթթխել [1]), ծածկել, իսկ տէր Մէլքիսէթի մէջ ամէն բան ծածկվում էր իւր ճարպիկութեան և վարպետութեան շնորհիւ. էդ պատճառաւ են ասել. հունար [2]) փուշ կուլտալը չի, հունար մարսելն ա։

Սատանայ տէրտէրը էնքան հնարագիտութիւն և խորամանգութիւն ունէր, էնպէս կեղծ ու պատիր դէմքեր էր անում իր գիւղացիների առաջին, որ Աշտարակցիք մի քանի րոպէ զղջում էին իրանց սխալանաց վերայ.—ամօթ մեզ ասում էին. հոգևորս կրակում կորցրել ենք, էսպէս լաւ մարդի վրայ ինչ ասես խօսում ենք. բայց հէնց որ հեռանում էր ու միտքն էին բերում նրա արածները, կուրծքներին ծեծում էին. ո՜հ, ո՜հ, ո՜հ, մեր տղէք, սրանից զգոյշ պէտք ա կենալ, իմ թշնամիս սրա լեզուի տակը չընգնի. տանուտէր Ղևոնդը սրա մօտ հրեշտակ էր, սա իր հօրն էլ չի խնայիլ. էս օր որ իր հէրը մի սուտ խօսք ասի սրան, էքուց տարաղաջու [3]) վրայ ձօրթի [4]) անել կը տայ Երևանայ բաղարի մէջ տեղը։ Բայց տես, թէ ինքը Ղևոնդն ինչպէս էր քաշվում սրանից, իրաւ է ինքը մեծն էր, նա իր յառաջ քաշածն էր, բայց միշտ կասկածում էր, թէ սրանից մի օր իւր ոտքը քարի կառնի. պարզ տեսնում էր, որ տէր Մէլքիսէթը ինչքան ոյժ ու զօրութիւն ունէր, ինչքան խելք ու հնարագիտութիւն գիտէր, գործ էր դնում, որ իրան սլքացնի, տեղն ինքը հաստատուի։ Էս ամէնը գիտէր Ղևոնդը, բայց լուռ էր կենում, մանաւանդ, քանի որ ինքը դարձ էր եկել, տանուտէր էր դարձել, ամէն տեղեկի պէս դողում էր։

—Տէր Աստուած, դու ազատես նխաս [5]) շառից [6]) փրկե-

[1]) Գաղել։ [2]) Հնարք։ [3]) կախաղան։ [4]) ծօձել։ [5]) [illegible] [6]) զրպարտութիւն

փրկում էր ամէն մի ժամուոր կանգնող, երբ որ տէր Մէլքիսէթը տուն էր մտնում։

—Տես, տես ի՛նչ փարիսեցութիւն ա անում, բոլթում էին մէկ մէկի կողքի, տես ո՛նց ա պատերի ու սների պատկերները պաչպչոտում, տես ի՛նչ կեղծաւորութիւնով երեսին խաչ ա հանում։ Ինչ ա, թէ էսօր հանդիսաւոր տօն ա, ժամումը խալխ շատ կան, կնանիքն էլ իրան կը փառաբանեն, հրէ չոքեց էն պատկերի առաջին, տես ո՛նց ա ձեռները բարձրացրել, աչքի, աղօթք անում. ա՛յ գլխիդ խուռվ կենայ էդ սուրբ պատկերը։

Այսպիսի բաներ նա ոչ միայն Հայոց եկեղեցումն էր անում։ Շատ անգամ Երևանումը իրան կը քցէր պարսից մէջիդը ու երբ որ կը տեսնէր շատ խան ու բէգեր, հաջի ու սէյիդներ հաւաքուած՝ չոքում էր և երբ թէ ոչ ոքի չի տեսնում, պարսից նման նամազ էր անում, բայց ի հարկէ, աչքի պոչովը տնտղում էր, թէ ինչպէս ամէնքը իրան մտով ցոյց էին տալիս։

—Քէշիշ աղա՛յ, հարցնում էին նրան մօլլէքը, մի՛ թէ ձեր օրէնքը թոյլ է տալիս ձեզ մեր մէջիդը գալ և նամազ անել։

—Գիտէք, սի՛րելիք, կեղծաւոր համեստութեամբ պատասխանում էր տէրտէրը։

—Աստուած ամէն տեղ է. նա իւր ծառաներից ամէն ժամանակ երկրպագութիւն է պահանջում, Աստուծոյ տունը ամէն տեղ մէկ է։ Երեկոյեան աղօթքի ժամանակը հասաւ, մեր եկեղեցուցը հեռու էի, տեսայ որ չեմ հասնիլ, մտայ էստեղ և իմ պարտքս կատարեցի։

—Մաշալլա՛հ, մաշալլա՛հ, [1]) ի՛նչ սուրբ մարդ է, զարմանում էին իւրեանց մէջ պարսիկները և իւրեանց յարգանքն աւելացնում։ Ասում էին, որ տէրտէրը սարդարին ծածուկ խօսք է տուած եղել մահմետականութիւնն ընդունելու, բայց սպասելու է եղել յաջող միջոցի, որ կարողանայ իւր համագիւղացիներից շատերին էլ իւր կողմը քաշի. էդ պատճառաւ էլ սկսել է ծածուկ՝ աշկարայ պարսիկներին գովաբանել. մի օր մինչև այն տեղն է հասել, որ մի քանի բէգերի ներկայութեամբ եկեղեցու բակումն ասել է ժողովրդին, թէ մենք պէտք է մեր արիւնը չխնայենք մեր սարդարի համար, զնանք

[1]) կեցցէ

սարվաղ գրուենք և եթէ հարկը պահանջէ՝ հաւատներից էլ ձեռք քաշենք։ Այդ էր պատճառը, որ Աշտարակցիք մի ժամանակ ճնալէս կատաղեցան, որ ուզում էին տալ, շնատակ անել. մի քանի երիտասարդ փայտաւորուած քամակիցը մանէին գալիս. մի օր մինչև անգամ յարձակուեցան որ կամրջից քցեն ջրի մէջ, բայց նա իւր պատրաստութիւնը տեսել էր, մի քանի սարվաղ հետը քցած՝ մանէր գալիս. էլ ի՞նչ երկարացնեմ, տէր Մէլիքսէթը մի ժանտախտ էր Աշտարակցիների համար, որից ամէնքը խորշում էին, որից ազատուելու ամէն մինը իրաւունք ունէր, բայց որ չէին կարողանում։

Ահա այս էր համառօտակի այն մարդունկարագիրը, որ արևգակը՞ մի տէգաչափ բարձրացել էր, երբ նա մտաւ Երևան, ձին կապեց Զարգարի քարվանսարայումը, թողեց իւր ուղեկից պարսիկներին ու քայլերը դարձրեց դէպի Երևանու բերդը, որտեղից մի քանի ջերմեռանդ մօլլաներ և ախունդներ առաւօտեան աղօթքը կատարելուց յետոյ վերադառնում էին։

Երկու օր մնաց տէր Մէլիքսէթը Երևանումը. թէ քանի՞ տուն մտաւ, քանի՞ ժամ սարդարի խոհանոցումը քարշ եկաւ, որքա՞ն լեզու թափեց, ո՞ր տեղից ի՞նչ օգուտ քաղեց, մեզ յայտնի չէ։ Նրա խօսակցութիւնները միշտ ծածուկ էին լինում. խաների անեբից դուրս գալուս ճնալէսի փողոցներով էր պտոյտներ անում, որ ոչ ոք մի կասկած չէր կարում տանել։

Այսքանը միայն մեզ յայտնի է, որ չորեքշաբթի օրը առաւօտը նրա հետ Աշտարակ եկան երկու սարվաղ։ Նրանք տէրտէրի հետ չմտան գիւղը, ձորի միւս երեսումը բաւական ժամանակ սպասեցին։

Եթէ էդ օրը ճաշին Աշտարակու կամրջի վրայ լինէիր, կը տեսնէիր, որ յիշեալ սարվաղները յառաջ արած առանց ամօրական յարգանքի տանում էին տանուտէր Ղևոնդին Երևան։

Նրա գնալուց յետոյ իրա ծառաներն ասացին, որ սարդարը տասնեկ բարկացած պահանջել է նրան, թէ ինչի՞ համար, ոչ ոք չգիտէր, ամէնքն էլ ուսերը վեր էին քաշում։

ԺԵ.

ՑԱԼԱԽԱՑ [1])

— Ի՞նչ պտի ըլի, եարաբ, [2]) էս բանը։ Ես Ղևոնդն ըլիմ ու էսպէս անպատիւ էլած դուսպղ [3]) պէս Փարրաշների առաջն առած քշուիմ. ընչի՞ համար պտի բարկացած ըլի սարդարը. տանուտէրութիւնիս համար չըլի՞, թէ մի քանի ամիս ա նրա ղուլլուղին չեմ գտնվել, տէր Մէլիքսէթին ասել եմ, որ խաբար տայ, թէ ես հիւանդ եմ։ Չըլնի՞ հէնց նրա սարքած բաներն ին։ Մախլաս [4]), գլուխս ուռչում ա խելքիս զոռ տալով, մտածում էր Ղևոնդը Երևանու ճանապարհին. հա՛յ գիտի հա՛, աշխարհքիս քոռութիւնը տես. սաղ մհալը [5]) դողացնող Ղևոնդը հիմի շլինքը ծուռը՝ գող աւազակի նման չի էլ համարձակվում երկու Փարրաշի երեսի մտիկ տալ. ո՞ւր ա էն օրը, որ մի քանի սարվաղներով, երբ որ դաշտի վրայ երկու սհաթէն ճամփից կերևայի, հայերը մի «Ղևոնդն ա» կասէին ու դողմանի գլխած՝ մեան ծակը 100 թումանով կառնէին. թուրքերը իրանց գեղերի կտրների գլուխը կը բարձրանային, աքլորների պէս թառ կըլնէին, մատերը դպա ինձ դարձրած՝ Աշտարակցի Ղևոնդն ա, կասէին. քանիսի՞ց լսած ըլիմ, թէ 100 մարդի միջից ես ճանաչվում եմ, քանի՞սն են «ջանմ սաղ էյ, ձէն տուել, հալալ ըլնի քու ծծած կաթը, քու մէրը քեզ պէս օխտը պտի բերած ըլնէր։ Ին օրն ո՞ւր, հիմի ո՞ւր, որ ճուռեկ մտած [6]) հաւի նման կուչ եմ եկել, մի խօսք էլ չեմ կարում բերանիցս դուս թողալ։ Տես էս շներին էլ, ընդուր են ասել. եզը որ վէր ընկնի, դանակաւորները կը շատանան. սրանք ձեռը խաչած գլի պէս միշտ առաջիս կանգնած են էլել, հիմի չեն էլ ուզում միտք անել, թէ սա աշխարհքը գարգարի բերող [7]) Ղևոնդն ա։ Ցեն էլ թողում, որ մի քիչ հանգարտ գնամ, ձիուս սաղրին [8]) ուռցրին՝ էնքան ղամչեցին [9]), քիչ ա մնում՝ իմ միջքին էլ հասնի։ Երևում ա իմ սև օրն ա։ Հալբաթ սրանք մի բան գիտեն, թէ չէ.....

---

[1]) Փայտեայ տանջանաց գործիք։ [2]) Արդեօք։ [3]) Բանտարկեալ։ [4]) Ինչ և լինի։ [5]) Գաւառ։ [6]) Փետուր փոխող։ [7]) Սարսափեցնող։ [8]) Ագդրի կաշին։ [9]) Մտրակել։

—Տօ, գիշերս քնել չես ինչ ա, ծըրտաց Փարրաշներից մինը, ինչ ես ննջում, ձեռներ չունի՞ս, ձիու գեամը [1]) ժաժ տուր, քնելու ժամանակ շատ կունենաս:

—Մեր աղէք, իբր թէ առ ոչինչ համարից նոցա խօսքը Ղևոնդը, դուք լաւ չէք անում, որ ձեր չափը չէք ճանաչում, ես գիտեմ մենք ուր ենք գնում, ով որ ձեզ ղրկել ա, ծուռն ա հասկացել. ասում ա, ուղտը ինչքան էլ սատկի, կաշին մի իշաբեռը կըլնի. ես էլի էն Ղևոնդն եմ: Ալի աղայ, դու իմ տանը բեռներով հաց կըլնիս կերած. Ղահրաման բէգ, ես քեզ ինչքա՞ն լաւութիւնեմ արել. միտդ ա՞, որ Սվանդուլի խանի ջաղացի մօտ եթէ ես չըլնէի, Մահմատ խանն անկաջներդ կտրում էր. հիմի էլ ձեր Ղևոնդ քեօխվէն չեմ, ընչի՞ էք ինձ հետ էդպէս վարվում:

—Շատ խօսալու ժամանակ չի, նօթերը տօլթեց [2]) մինը, մին էլ որ բերանդ բաց կանես, միջքիդ զօլը [3]) կը բարձրանայ, ինչ որ ասելու ես, Սարդարի դուան համար պահիր, մեզ ինչ որ հրամայած ա, էն պտի անենք, համա էս էլ իմացիր, որ էլի քեզ խնայում ենք:

—Հա՛, մասը կծեց ու միտք արեց Ղևոնդը, մեջ տեղը մասնութիւն կայ, կայ ես իմանամ. զօչաղնե՛ր, կեղծաւոր դէմք առնելով ասաց նա Փարրաշներին. ես հանաք եմ անում, ի հարկէ որ ձեր պարտքն ա ձեր մեծաւորի խօսքը կատարել, ինչ որ մենծը հրամայում ա, էն սուրբ ա. դուք միամիտ կացէք, ես ձեր հաւատարմութիւնը Փարրաշբաշուն կը պատմեմ, լաւ փոքրաւորը իր տիրոջ երկու աչքի լիսն ա: Հիմի էս ահաթս Ղարաքէշիշ Մէլիքսէթը որ կայ, ինձ համար ազգ ու ընտանուց առաւել ա, դեռ բերնիցս խօսքը դուս չեկած՝ գետինը չի քցում, գլխի վրայ կատարում ա:

—Հը՛մ, ծիծաղեց Փարրաշը, խեղճ մարդ, ինչքա՞ն միամիտ ես, թէ որ քու Ղարաքէշիշը քեզ հաւատարիմ ըլէր, դու էս օրը կընգնէի՞ր, նա չի քո աստղը խաւարացնո՞ղը:

—Տօ ի՞նչ ես երկար մասլահաթներ [4]) սկսում էդ կեղտոտ հայի հետ, այ, բերդն երևաց, թող գնայ էնտեղ իմանայ իր գլխի գալիքը, բարկացաւ ընկերի վրայ միւսն ու Ղևոնդի միջքախառը ձիուն մտրակեց:

---

[1]) Սանձ. [2]) Քիթ ու պռունգը կախել. [3]) Շերտ. [4]) Առակներ.

Բերդի անունը մի սարսափ բերեց էն մարդի վրայ, որի գլխին էնքան մազ չըկար, ինչքան ինքը տեսել էր այդ տեղն ու ոչինչ ազդեցութիւն չէր արել վրէն. Նրա համար Աշտարակից Երևան գալն ու Դալմէքանց այգիների բաց տեղերից բերդը, մզկիթների ու մինարեքանց գլուխը տեսնելը այնպէս էր, ինչպէս մինը ամէն առաւօտ քնատեղից վեր կենայ, դուռը բացանի ու աչքին իւր սովորական բակը, սիւնը, քարը հանդիպի:

Բայց հիմի էնպէս չի մեր Ղևոնդի համար, իւր գիմացից երևող Զանգու գետի ափի ամէն մի քարափը նրան բերանը բաց արած գայլ է թվում, էդ քարափների վրայ երեսը դէպի հարաւային կողմը—Մասեաց սարը դարձրած սարդարի ծաղկած այվանը պօզաւոր սատանայ է երևում, որ պօչն ոլորած՝ չանգերը բաց է արել, իրան գրկել է կամենում: Ինքը՝ Զանգու գետը, որ աշխարհքիս ստեղծելու օրից մինչև էս օր սկիզբն է առել Սևանայ ծովից, մի ճիւղքը Միխանի սարիցն է վեր կալել, Ծաղկոց ձորի փտակները կարկաջելով իւր մէջն առնում, դմբդմբալով, դմբդմբալով, ոլոր մոլոր անտակ քարափոտ ձորերի միջով մէկ ձայնը երկնքում՝ մէկ ձայնը գետինքումը տալով, իւր զարզանդելի գոռոցով ականջներ խլացնելով, գալիս Երևանու կողքովն անց կենում, քաղաքը Դալմայ կոչուած այգիներից բաժանում, այսօր՝ այդ Զանգու գետն, ասում եմ, Ղևոնդի աչքին իւր կամարակապ, եօթն աչքանի կամուրջով, եօթը գլխանի վիշապ է երևում, որ փրփրադէզ ալիքները կամրջին խփելով, այնպէս կարծես, ուզում է կուլ տալ իրան: Նոյն խոկ կարմիր քարերից շինած այդ ամուր կամուրջը, որի շինութիւնը նոյնպէս աւանդութիւնը Խօջայ—Փիւլին է տալիս, այս կամուրջն, ասում եմ, որ միացնում է Դալմէքը քաղաքի հետ, Ղևոնդի աչքին դժոխքի մազէ կամուրջն է երևում. Նա կարծում է, թէ ոտը վրէն դնելուն պէս, պէտք է վիժի ու իրան մատաղ տայ Զանգուի փրփրուն ալիքներին: Քանի մօտենում է քաղաքին, քանի պարզվում են աչքին վերևը յիշուած առարկաները, էնքան Ղևոնդի աչքերը շաղվում են: Խեղճ ձիու լեզուն կէս գազ կախ է ընկել, ճանբը փոքր է մնացել ու ջուր իջնի, էնքան վազել է Փարրաշների մտրակի զօրութիւնից, բայց վրայի նստող աղէն կարծում է, թէ տեղից չի շարժվում, թէ էլ Զանգու գետը չի գնում. Նա մեքենաբար նստած է ձիու վերայ. Նա անիծում է իւր կնոջ յիշատակն էլ, իւր երեխայքն էլ, իւր զղջումն ու տանուտէ-

րութիւնն էլ ; — իմ հախն ա, [1]) մրթմրթում է իւր մէջ. խօղէ գլուխը խալէչին կենալ չի, իմ ի՞նչ բանն էր նըգայ խնլքի ընկնել, դէն քցել պատիւս ու անունս. կարմիր կովի պէս ջացի տուի իմ բաղդին. տո՛ւղն է ինձ, ձեռի միջի՛ցն ա ենել տէր Մէլիքսէթի, որ ինձ համար հոր ա փորել. արժանի՛ ա իրան իմ տեղս էլ խլել, խաների ու սարդարի աչքն էլ մտնել: Ա՛խ, թէ գլուխս ձեռս կրնկնի, թէ մի հնարքով դուս կը պրծնիմ էս տեղիցը, դու արի ինձ էն վախտը տես: Խելք ունիս, Սարդար, էս մի անգամը բաշխի, մի հաւի ճուտ սպանելը քեզ համար մեծ բան չի. ինձ ի՞նչ, մի օր էլել եմ, մի օր պտի մեռնիմ, համա դու կը զրկուիս քու օգուտիցը. 500 տէր Մէլիքսէթ մի Ղեոնդ չաժեն....

— Ձես տեմնո՞ւմ բերդի դուռը հասանք, ի՞նչ ես փէտի պէս ձիու վրայ ցցուել, ուզում չե՞ս հօ պստի հարսի պէս խատենք, վէր դնենք: Էս խօսքերի հետ էլ մտրակի կոթը կպաւ կողքին:

— Ցալալա՜յ, դուրս թռաւ ամբողջ Երեւանու նահանգի տիրոջ բերանից, երբ որ Ֆարրաշները աջ ու ձախ Ղեոնդի կռներն ընկած՝ ներս տարան նրան ծաղկած այվանի բակը, կանգնացրին Սարդարի առաջին:

Այս այվանը շինած է Երեւանու բերդի մէջ Զանգուի քարափի գլխին. նրա ներքին յարկը ունի մի մեծ դահլիճ պարսկական նկարներով զարդարած: Արեւելեան նկարչութիւնն իւր բոլոր ոյժն ու շնորհքը թափել է այս դահլիճի վերայ: Պատերին նկարուած են պարսից առասպելական դիւցազունքներից մի քանիսը, մինը մի ոչխարի գլուխ թրի ծայրին բռնած՝ միւսը մի ուղտ երկուկէս անելիս եւ այլն: Առաստաղը զարդարուած է կտոր կտոր հայելիներով խորդ ու բորդ ձեւերով, ամէն մի հայելու եռանկիւնի կտորի միջին մարդ տեսնում է իւր պատկերը եւ ուրիշ առարկաները՝ 100 տեղ կոտրատուած, մի այլանդակ հրէշ է մարդ ինքն իրան կարծում. մի աչքը մի շուշի կտորի մէջ է երեւում, քթի կէսը միւսի, յօնքը երրորդի եւ այլն: Այս նշանաւոր դահլիճի յատակը բոլոր մարմարնեայ է: Արեւմտեան կողմը ունի մէջտեղը մի մեծ եւ կողքերին երկու փոքրիկ լուսամուտներ գոյնզգոյն ապակիներից, որ նայում է Զանգուի վերայ. հրաշալի է երեկոյեան պահուն այս լուսամուտները փակած ժամանակը դահլիճի մէջը. ամէն մի կտոր գունաւոր ապա-

[1]) Արժան է ինձ.

կին իւր գոյնը միացրել է միւսի հետ եւ մի այնպիսի լոյս է ցոլացնում սենեկի մէջ, որ ոչ մի տեսարանի չի նմանիլ. Ծխածանն էլ չի կարող այնքան հրաշալի լինել: Լուսամուտի առաջին շինած է մարմարնեայ աւազան, որի միջից ջուրը բարակ միլերով բղխել է: Ահա հէնց այս տեղ է ծխածանը, որ կազմուել է ջրի ցոլացմունքից: Աւազանի մէջ լողացել են գոյնզգոյն մանր ձկներ, որոնց կերակրել է ինքը սարդարը սպիտակ հացով սրտի ուրախ ժամանակը: Պատերի վերայի այժմեան նկարներն են Ֆաթալի-շահը, քաջ քաղաքագէտ Աբբաս Միրզայ՝ 1827 թուին ռուսաց հետ պատերազմող մեծ իշխանը, որ թէպէտ պարսկական ճաշակով քաշած, բայց աչքերից եւ երեսի գծագրութիւնից արտափայլում է իւր հանճարը. սրա մօտ են Երեւանու վերջին տիրապետող Հիւսէին խան սարդարը եւ իւր եղբայր հայի թշնամի, արենարբու Հասան-խանը: Այս նկարները վերանորոգուեցան մի քանի տարի սրանից յառաջ պարսից ճաշակը կենդանի պահելու համար եւ խնամվում են ամենայն զգուշութեամբ: Սկզբումը ներկայ պատկերների տեղ եղել են երեւակայական դիւցազունքներ:

Դահլիճի արեւելեան կողմի ամբողջ պատը մի լուսամուտ է, նոյնպէս գոյնզգոյն ապակիներով, որ խպառ բացվում է. իսկ այս լուսամուտի առաջը ծածկում է ցանկացած ժամանակը մի մեծ վրանանման վարագոյր, որ դրսից բարձրանում եւ իջնում է: Կողքերից այս դահլիճն ունի մի քանի մանր սենեակներ, որոնք նոյնպէս ծաղկանկար են, իսկ վերին յարկումը կան մի քանի աննշան սենեակներ:

Այս դահլիճը ծառայել է Երեւանու ահեղասաստ սարդարների վայելչութիւններին եւ շատ յաճախ մոլի կրքերին. կողքերի եւ վերին յարկի մանր սենեակներումն են կացել սարդարի ամենամերձաւոր ղուլլան բերող կամ շարբաթ ածող պատանի սպասաւորները:

Ահա այս դահլիճումն էր բազմած սարդարը Խորասանու գորգի վերայ՝ շրջապատած իւր սեւաչեայ ղուլլանչիներով. բաց էր թողնում ղուլլանի քուլայ քուլայ մուխը իւր բերանից, երբ յայտնեցին իրան Ղեոնդի գալը: Արեւելեան լուսամուտները խպառ բաց էին եւ Ղեոնդին կանգնացրին բակումը:

Ցալալայ բառը դեռ նոր էր դուրս թռել սարդարի բերանից,

որ երկու ջալլաթներ [1]) յական թօթափել հանեցին Ղևոնդի ոտքերից նաշխուն դուլբաները և երեսի վերայ գետին ձգելով կաշկանդեցին ոտքերը փայտի վերայ երկու կողմից ամրացրած՝ ոչխարի աղիքներից ոլորած պարանի մէջ։ Անխնայ իջնում էին բարակ մահակների կապերը Ղևոնդի բաց ոտքերին. բարդի ծառի կակուղ ճղքերը շատ չէին դիմանում, գետինը ծածկուել էր բարակ մահակների կոտրտանքներով։ Առաջին անգամը Ղևոնդը գթութիւն էր գոռում. բայց յանկարծ փոխեց իւր աղաղակի ձևը և խնդրում էր.
—մի՛ խնայէք, աղաչում եմ, դեռ քիչ ա ինձ, ինչքան ճիպոտ իմ ոտներին դիպչի, էնքան շուտ կը քաւեմ մեղքս, էնքան շատ միտքս կը բերեմ քու լաւութիւնները, երկրի տէր. էլի՛, էլի՛, ոտքերիդ մատա՛ղ, սարդարը ողջ ըլի՛, ես քու հացին քօռ մնիկ տուի։

Սկզբումը ուշք չէր դարձնում սարդարը այս խօսքերին. վերջումը սրանք իրանց ազդեցութիւնն ունեցան։

—Հերիք է, հրաման եղաւ սարդարից, և Ղևոնդն արնոթաթալս ոտքերով գետնին ընկած՝ հողին էր քսում երեսը և օրհնում իւր տիրոջ կեանքը։

—Դեռ քիչ է ինձ, գլխիդ մատա՛ղ, կրկնեց նա, ես տարաղաճի եմ արժան, ես ինքս հասկանում եմ իմ մեղքը. բայց դու ըստուց յետը տես, էնպէս կանեմ, որ ամէն բան կը մոռանաս. ես գիտեմ, Ղարաքէշիշն ա բոլորը քեզ յայտնել, ես կերթամ նրա ձեռը կը պաչեմ, շնորհակալութիւն կանեմ, որ նա ինձ իմ պարտքս միտս բերեց։ Աղաչում եմ, ողորմած սարդա՛ր, քու երեխայի գլխովը պտիտ տուր. էս անգամ ների՛ ինձ, յետոյ կը տեսնես։

—Աֆարի՛մ, Ղևոնդ քեօխվա՛յ, հիմիկեց դէնը ես քեզանից արխէյին եմ. Ֆարրա՛շ, հրամայեց սարդարը, շո՛ւտ, մի խալա՛թ Ղևոնդ քեօխվին. միրզա՛, պատուիրեց իւր քարտուղարին, էս րոպէին մի մուհր [2]) ուղարկի՛ Ղարաքէշիշին, որ էլ յետ Ղևոնդ քեօխվին իւր գլխաւոր ճանաչի։ Հէքիմբաշի՛, դարձաւ նա դէպի իւր բժիշկ աէյիգը, շուտով իմ ծառայիս ոտները առողջացրու։ Գնա՛ իմ հաւատարիմ Ղևոնդ քեօխվայ, առողջացի՛ր, խալաթը հագի՛ր ու արի՛ ինձ մօտ, հարկաւոր հրամաններ ունիմ քեզ տալու։

[1]) Դահիճ. [2]) Կնիք, հրամանագիր։

ԺԲ.

«ԷՍ ԱՄՊԸ ԿԱՐԿՏԻ ԱՄՊ Ա»

—Էս ամպը կարկտի ամպ ա, կամ էն ա կը տրաքի, քարէ կարկուտ կը թափուի, աշխարհքս տակն ու վրայ կանի, կամ թէ մի թունդ քամու առաջին ցաք ու ցրիւ կընդնի։

Էսպէս գուշակեց տէր Մելիքսէթը, երբ որ գզիր Մանուկին տեսաւ մի իրիկուն իրանց դուռը բաց անելիս։

—Տանուտէրը նոր տուն օրզանդուլիցը [1]) հանեց, Երևանիցն էկաւ ու էս ահաթս քեզ կանչում ա։

—Գնա գալիս եմ։

—Գետնին թքել ա, ընչանք թուքը չորանալը թէ որ ընտեղ չենք էլել, իմ միջքիս զօլը վեր կը կենայ, քեզ համար էլ արևը փիս տեղը կըմթնի։

—Գնանք։

—Իմ մատը տարայ իմ աչքը հանեցի, երեկ հրամանն ստացայ, որ խալաթ ա ստացել, ողջ կարբու մհալին վէրգու [2]), սարվազ հաւաքող ա նշանակուել, ինձ վրայ էլի մենծ ա կարգուել. ըլզուս բուն չը գնեմ ինչ անեմ։ Շատ անգամ ինձ Ղևոնդը հաւանքութիւնով ասել ա. աղուէսի պատկեր ունիս. էլ յետ աղուէսութիւնը բանացնենք. ո՛հ. ո՛հ. ո՛հ, երեսիցը ժանգը լորերով ա վէր թափվում. մտիկ տուեց տէր Մելիքսէթը Ղևոնդի երեսին, բակի դռնիցը նրա երեսը տեսնելուն պէս։

—Բարի ողջո՛յն, աղայ տանուտէ՛ր, շատ ուրախ եմ, մեր աչքը լի՛ս, Աստուած էլ աւելի պարգևների արժանի անի, քո բաղդաւորութիւնը մերն ա, մենք էլ քո փէշի տակին պտի կառավարուինք։

—Էդ բաներից օխտը մի փարա չաժեն, դու էս ասա, թէ էգուց ի՞նչ պտի խօսաս էս մեր շների հետ. դրանց հետ էլ միլիբիլի [3]) անիլը ձեռք չի տալ, էգուց սարվազները ծէգելահան ըստեղ կըլնին, քու քամակդ պտի քցես ու մենծ ու պստիկ չը հարցրած՝ տունը մինը կայ, երկուսը կայ, 20ից ընչանք 30 տարեկան, առաջ անել տաս տաւարի պէս ու Թորոսենց կալումը հաւաքես. մի քաղցր խօսք չըգտուս գայ բերանիցդ, էլ շատուոր ու մէնակ, էլ աղ-

[1]) Ասպանդակ. [2]) Հարկ. [3]) Կեղծաւորութիւն.

քաշ ու հարուստ, էլ պատկառած ու անպակաս չափի մոլիկ տաս, թէ չէ քամակիցդ էկող փարրաշը հրաման ունի քեզ ու ինձ էլ չօլնայել:

Տէր Մէլքիսէթը լեզուն կծեց. նրա որ արեւը վառ տեսնել էր մթնել, Ղեւոնդի հրամանը խիստ կծու էր նրա համար. մինչեւ էս օր նա իւր կեանքումը պարզ, երես առ երես, ոչ ոքի մի թթու խօսք չի ասել, նա վատ շատ պէս քամակից ծածուկ է կծել. հիմի էլ իւր հնարքները ձեռք չը պէտք է տան. ինչ անէր, չգիտէր. մի փոքր ոլոր մոլոր եկաւ կանգնած տեղը եւ ուզումէր պատասխանել, բայց Ղեւոնդը չըթողեց էլ, որ բերան բանայ: — Լաւ ա, լաւ, ես ժամանակ չունիմ, էգուց 150 սարվազի, 20 էլ փարրաշի գլխաւոր ես, գնա մատտաշէսպ ¹) տուր, ջաշէլների համարքն իմացի:

Տէրտէրի գնալուց յետոյ Ղեւոնդը ամբողջ գիշերը աչքը չը փակեց: Ամէն բան սովորութիւն է եղել. նա իւր կեանք մահից յետոյ կարծես մոռացել է ուրիշներին վնասելը նա ուզումէ, նա վճռել է այդ քայլն անել, բայց դժուար է թւում իրան. թիկնած իւր արմունկի վրայ մինչեւ լոյս մտածմունքների մէջ է եղել. նրա մէջ պատերազմումէին մարդկութեան եւ հայրութեան սովորութիւնները գազանաբարոյութեան եւ անխղճութեան հետ: Նա չէր կարողացել սանձարութեամբ մեկի տալ Երեւանից վերադառնալուս իւր մի հատիկ աղջկայ ուրախ դիմաւորութեանը չէր վստահացել իւր սիրտը խնայել ուրախ թեթեւնիկի փորիլուն. որքան աշխատել էր երեսը շուռ տալ, աչքէ աչք չնայել, անհնար էր եղել, հոգւոյ այլայլութիւնը անկարելի է եղել պահել, երբ որ փափկիկ եւ զուարթ աղջիկը թռչկոտալով յառաջն է վազել ձիուց վեր գալուն պէս, իւր քնքոյշ ժպիտը հօր աչքերի մէջ խաղացնելով, համբուրել է նրա կնճռոտ երեսը, դէմ է արել իւր կարմիր եւ փափուկ թուշիկը հօր պժալապուռ բերանին եւ ասել. ախու ջան, աչքս ջուր մաղսեց ճամփին մեկի տալով, էս ինչի՞ ուշացար, ես հիմի առանց քեզ չեմ կարում դիմանալ. ուզումէի լաց ըլել, համա Վարդը ուրախացնումէր. ես հենց իմանումէի, թէ դու կորել ես, էլ յետ չես գալ. ես փախչումէի, մտնում քո օթախը, գլուխս քո բարձի վրայ դնում ու լալիս, ու թէ որ Վարդը չըգար ինձ գտնէր, ինքն

¹) Մատենահաշիւ

էլ ինձ հետ լաց չըլէր, ես ոչովի չէի լսիլ: Ախու ջան, բաս ինչ են անում մեր հարեւան Ղազարենց երեխէքը, որ ոչ հէր ունին, ոչ մէր. ինչ լաւ բան ա ՚լել հէրն ու մէրը. նանս հրեշտակների մօտ գնալուց յետոյ թէ որ դու էլ չըլնէիր, ես չէի ապրել:

Ո՞ր սլաքը այնպէս չէշտակի կրծակի մարդու սիրտը, ինչպէս Մանուշակի խօսքերը Ղեւոնդին. քանի՜ քանի անգամ աշխատեց յետ քաշել իւր վզից այն քնքոյշ կռները, բայց խօսքը բերանումը չորանումէր: Ձեռքը տարաւ նա գրպանը, մի երկու բուռը Երեւանից բերած չոր միրգ ածեց նրա գոգնոցի մէջ եւ ատամները հուփ տուեց, մի երկու անգամ նայեց քեզ չար սատանայ, ասեց ինքն իրան, միտքս ինչ ա գալիս, յետ դառնում ու չինծու մի քաղցր դէմք դարձրեց աղջկանը: Գնա՛, հոգիս, գնա Սանդուխտ տատի կուշտը, տա՛ր քո մրգից Վարդին էլ տուր:

— Չէ, դու Վարդին կանչի՛, սիրի՛, նա էլ մէր չունի, նա ինձ հետ շատ լաց էլաւ քեզ համար:

— Գնա՛, ասումեմ, Մանուշա՛կ, ձեռը վեր կա՛լ ինձանից, ես ժամանակ չունիմ քո յիմարութիւնները լսելու: Այնպէս ոլորեց Ղեւոնդը գազանական կատաղի աչքերը երեխայի վերայ, այնպէս յետ խփեց իրանից, որ երեխան չորացաւ, սիրթնեց, պատի ծեփ դարձաւ:

Մի երկու րոպէ գլուխը կախ ձգած՝ մի թաթը ճակատին բռնած փքուեց Մանուշակը, շարման չըթունքներն ուռցրեց ու գոգիցը թափեց Ղեւոնդի տուած չոր միրգը. — ա՛ռ քեզ ըլի, ինքդ կե՛ր, կշտացի՛ր, ով որ ըստուց յետոյ քու աղջիկը կըլնի, տա՛ր նրան տուր, ինձ պէտքը չի, էլ ես քեզ չեմ սիրում: Ասաց ու լացակրկնած, առանց հօր երեսին նայելու վազեց, գնաց Սանդուխտի գիրքն ընկաւ ու սրտի փուքը նրա մօտ թափեց:

Հէնց այս վերջին արարքն էին, որ այս գիշեր խլեցին Ղեւոնդի աչքերից քունը. հանգստութիւնը փախաւ նրանից, ձեռները գրպանը դրած՝ ամբողջ գիշեր սենեկի մէջ շտապ քայլերով դարձուածքներ էր անում: Խռոված եղը, պոչը ցցած՝ մինչեւ յոգնելը կըվազի ու կանգ կառնի, գժուած աչքերը շուռ է շուռ կըտայ, յետ կը դառնայ դէպի իւր խրտնացնող առարկայի կողմը կընայի, ու երկչոտ դէմքով գլխի վերայ պտոյտներ կանի. մէկ կուզենայ վերադառնալ դէպի նոյն առարկան, մէկ էլ խոյս կըտայ նրանից, երբեմն էլ ռնգունքներից փնչացնելով գոլորշի բաց կը թողնի: Այսպէս էր մեր Ղեւոնդ աղի դրութիւնը:

Մի երկու քայլ փոխում է նա ու կանգ առնում: — Հը՛մ, ես էլ քեզ չեմ սիրում, տար նրան տուր, ով որ ըստ ...ց յետոյ քու աղջիկդ կըլնի. մրթմրթաց նա կրկնելով աղջկայ խօսքերը: Դու իրաւունք ունիս, անմեղ երեխայ. ինձ պէս սատանի գործակալին ո՞վ կը սիրի. դու մի անթառամ վարդ ես՝ ինձ պէս փշի միջից կոխոմած. դու մի անմահական պտուղ ես՝ չալուի վրայ դուրս եկած. ես ինչ արժան եմ քեզ պէս հրեշտակին հէր ասուելու՝ գլխըս ցաւն ա ծնել, ցաւն ու գէլը բնութիւնով իրար հետ ո՞նց կըգան. ով ա քեզ զոռ անում, որ ինձ սիրես, ես ինչ արժանի եմ քեզանից սիրուելու, ես քո իրաւունքդ խլելու. գլուխս խփէիր ես ... անցած միրգը աւելի լաւ էր, քան թէ գետնին ցրուեցիր:

Այսպիսի բացականչութիւններ խանգարում էին Ղևոնդի հոգւոյ անդորրութիւնը: Վերջապէս շարժեց նա վճռաբար իւր ձեռքը: — Ի՞նչ եմ նեղի գալիս ու մտածում, ի՞նչ կը տայի քեզ, Ղևոնդ, ապագաւիլանութիւնը թողալ, ուխտադրանալ: Չէ՛, չէ՛, չէ՛, թող հեռու կորչի ինձանից թուլասրտութիւնը. ես արիւն աչքերս կախած գազան եմ, ես սրտացաւութիւն չունիմ, ես ատում եմ ամէն խղճմտանք, որ մարդկերանցը խղճմտանք ասած բան չը կայ աշխարհիս երեսին: Այ, լեռնագէմ ա, վախտը մօտացել ա, պատրաստուէ՛, Ղևոնդ, ծարաւել ես, էս օր տաք տաք արիւն պտի խմես, ձեռներդ քշտի՛, կտրի՛, ջարդի՛, ջնջի՛, սպանի՛, տանջի՛, ամէն նեղութիւն տուր, քաշի՛ր Աշտարակու ջրով մեծացած՝ վարդի պէս կարմրած աղջիկներին, ու երբ որ կրակներս խաների ու բէկերի կոների մէջին հաւի ճուտի պէս սմքուած, վերջին էլ երեխերի վրայ նրանց քուչեքանցումը վեր քցած՝ սրտիդ մի կտոր ծրագու քսի՛ր ու աստօխայ: Ի՞նչ էի յիմարացել, խելքս հացի հետ էի կերել, կնգանս խելքովն էի ընկել. աղջիկս բութայ ա տուած նախրչու տղին, իմ գդլի որդին իմ փեսացուն ա. Էլա՛ գնաց, աչքդ լո՛ս, Թորոսենց Ղևոնդ, աղջիկդ գդլի հարսը պտի դառնայ: Ծօ, յաւն էն չէ՞, որ դու էլ, քու աղջիկդ էլ, գդլին էլ իրա լակոտովը ջնջուիք աշխարհքիս երեսիցը վերանաք: Դէհ, իմ խելօք տէր Մելիքսէթ, համեցէք մէյդան, Ղևոնդի տան էիր ուզում սլացնել, նրա անգը բռնել, նրա ժենծաւորը դառնալ. վեր դի՛ր հիմի կեղծաւորութիւնդ, երեսիդ փարդէն յետ քաշի՛ր, շանց տուր աշխարհքին քո չար հոգին, էլ չես կարող վարդապետներին խաբել, սուտ հաւատարիմ երևալ, պրծաւ, էս օր պտի օրով ցերեկով թուրքերի առաջն ընկնես, գեղը

արէն արտասունք քցես, որ համբաւդ ամէն տեղ հանի: Դու կաց, մի օր էլ պտի քնթիցդ դուս բերեմ արած գողութիւններդ: Ի՞նչ ես արել Գէորգ եպիսկոպոսի սեղանից գողացած մատանիքը: Կարծում ես ոչ ով չիմացա՞ւ, երբ որ Էջմիածնից գրքեր ղրկեցին քեզ ծախելու, հրամայել էին, որ օխտը շահուց աւել չծախես, հաւաքուած փողիցն էլ չորս հազարդեան մեր ժամի համար լիսաղին տաս, դու ամէն մի գիրքը տասն ու չորս շահով զոռով սրա նրա վրայ քցեցիր ու մի սև փողի խունկ ու մոմ էլ չառար ժամի համար: Ո՞ր մինը շարեմ քո գողութիւնների, էս էլ դառաւ ու հօրդ արածները, ինչ տուն մտնէր, մի բան փէշի տակին դուս կը բերէր. թէ թագուն ճանգը չը կարողանար քցել, աշխարայ էլա երեսը դէմ կանէր, տրխի տղլափ [1]) կը չինէր ու կուզէր. խալխն էլ ամօթից բան չէին կարող ասել, կրակին որ շուտ ռադ ըլի կորչի: Ես ինչքան էլ փիս եմ, անիրաւ եմ, տնաքանդ եմ, էլի քեզանից լաւ եմ, աշխարայ երկրի առաջին տնաքանդութիւն եմ անում ու վատամարդի դառնում: Դու էլ թէ ղօչաղ ես, ծակերումը մի՛ մտն դալ, մէյդան համեցէ՛ք, հունարն էն չէր սարդարի մօտ լոտեսութիւն անել, Ղևոնդին փալախայ դնել տալ, հունարն էն էր, որ կարենայիր ղըուխ տանել. դու դեռ կաց, էն փալախի ճիպոտները մի մին աչքումդ պտի տնկեմ, դեռ ո՞ր տեղ ես: Մենք երկուս էլ սատանի դաւթարումը [2]) գրուած ենք, համա որ տրաքիս, դու ինձանից աւելի պտի կրակի միջին էրուիս ու խորովուիս. դու տէրտէր ես, դու քեզ համար էլ՝ ինձ համար էլ պտի ջուղաբ տաս, քեզ ոչ էս՝ ոչ էն աշխարհքումը տեղ ունիս:

— Էլ սրանից յարմար ժամանակ երբ ունիս դու, Ղևոնդ, սկըսաւ նա շարունակել, հացիր փուսանդն ա ընկել, [3]) քանի ձեռիդ իշխանութիւն կայ՝ արա՛, լեռն երթկովը տուն ընկաւ թէ չէ, ոչխարի պէս յառաջ քշի գեղի ջանը սաղ տղէքանցը, տար, լըրս Երևան. սարդարն ասում էր Վրացու թագաւորն իր վրայ ա գալիս մենծ ղօնշունով, [4]) սարվաղ էր ուզում աչքիս վրայ, ողջ մհալը քեզ փէշքէշ, կոտորել տուր ինչքան քո սիրտդ կուզի. ես դեռ ամէնքից յառաջ իմ փուքը նստացնեմ, քաւթառի տղայ չուզուլ տէրտէրին գեղումը գետնի հետ հաւասարացնելուց յետոյ խանի ա-

---

[1]) Տրեխի կարկատան: [2]) Մատեան: [3]) Յաջողացրել ես [4]) Զօրք.

ռաջին էլ քարը հորը քցեմ, գզիր Մանուկին իր տղի հետ էլ էն աշխարհքը ղրկեմ, նոր կը հանգստանամ:

Էս էին Ղևոնդի վերջին խօսքերը, երբ գզիր Մանուկը նրա սենեկի պատուհանիցը խոտի խուրձը հանեց, լոյսը տուն ընկաւ: Մի խուրձը խոտն էր մեր աշխարհքումը պատուհաններին ու երթիկներին ապակիի և վարագոյրի տեղ բռնում:

ԺԹ.

ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՀԱԾ ԳԱՌԸ ԳԷԼԸ ՋԻ ՈՒՏԻԼ, ԿԱՄ ՆԱՀԱՏԱԿԻ ԳԵՐԵԶՄԱՆ

— Էս օր քսան տարեկանից վերև ոչ ով գեղեցը հեռանայ ոչ, ամէն մարդ հաւաքուի Թորոսենց կալը, Հէքիմի դռնից [1]) հրաման կայ: Արևի ցօղը դեռ Մասիսին չէր ընկել, որ դռնէ դուռ ձայներ տալիս գզիր Մանուկը: Ով որ լսում էր, խորթ էր թվում իրան. Մանուկը իւր գզիր դարձած օրից առաջին անգամն այսպիսի մունետիկութիւն էր անում:

— Ի՞նչ կայ, Մանուկ, խէր ըլի, վըխտ լաւ հոտ չի փչում:

— Հէնց իմանաս ըռէնցա, գլխիդ մեռնիմ, պատասխանեց նա Գէորգ խալֆին, թէ ճարումդ ճար կայ, մի բան գտես, արա. տանուտէրը Երևանից գալուց յետոյ տէր Մելքսէթին կանչեց ու մի քանի խօսք ասեց. շատ թնդուած ա երևում, երեսիցը քացախ ա թափվում. բաց ասեմ, ոչ ամաչեմ, մեղքս ինչ թաքցնեմ, անկաջս սողնակի [2]) ծածկիցը տուն խրեցի, մի քանի կիսատ միսատ խօսքեր լսեցի. ես ոնց որ տեսնում եմ, էլ յետ չարը սատանէն բնակել ա տանուտէրի սրտումը:

Շատ խօսքեր հարկաւոր չէին իւր ժամանակի քաղաքագէտ Գէորգ խալֆին Մանուկի հաղորդած անկապ լուրից յառաջ գալու հետևանքը նախատեսանելու համար: — Էլ մի՛ ուշանալ, Մանուկ, հրամայեց նա, թող էս սհաթիս տէր Յարութիւնն ու մեր իշխանները ինձ մօտ գան, դեռ ոչ ոքի բան չասած՝ նրանց ընտեղ ղրկիր ու յետոյ գեղը ջառ քցիր [3]) Թող բոլորը հա-

---

[1]) Դատաւորից: [2]) Գիւղացոց դռան բացանելու ծակը: [3]) Հրաչակէր:

ւաքուին Թորոսենց կալը, ես ինքս շուտով իշխանների հետ ընտեղ կըլեմ:

Թէ ինչ խօսեցան, որքան ժամանակ խորհեցին մեր ծերունիները, մենք չենք կարող ասել. այսքանը միայն յայտնի է, որ բոլոր երիտասարդները կալումը պատրաստ էին: — Ապրէք, իմ որդիք, խրատում էր նրանց Գէորգ խալֆէն, ինչ որ հրամայելեմ, լսէլէք, հիմի էլ ընչանք իմ բերնի տաք ու հովը իմանաք ոչ, ձէն ու ծպտուն չըհանէք:

— Է՜ ինչ նոր խաբար ա, տէր Մելքսէթ, էլ ինչ նոր բաներ էք սարքել, էլ ինչ գեղը գլխատակար էք արել, կռներդ քշտած հագիրուել ես, հէնց իմանաս մի աչքալես լի տալու ես, շատ կմկմում ես, դէ ասա ու պրծի, տեսնում ես հրամաններդ կատարել ենք, գեղումն էլ մորդահոտ չի մնացել, ըստեղ հաւաքուած են, Թորոսենց կալը ձեր դիւանի [1]) դուռն էք շինել:

— Է՜հ, իմ կարգը վկայ, Գէորգ խալֆայ, դու գիտես, որ ես մարդի վնաս չեմ տալ, մրջիմը ոտի տակը չեմ քցել. ընչանք էսօր ես մի ճանճ չեմ սպանած. ես էլ քեզ պէս անտեղեակ եմ, տանուտէրը իրիկունը կանչեց, հրամայեց որ քարոզեմ, ես էլ ինչ կարող էի ասել, մենք սուրբ աւետարանի աշակերտ ենք, տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ. էս կալումը հաւաքուածները բոլորն էլ իմ աչքի լիսն են, բայց էլի ասում եմ ես մեղաւոր չեմ, տանուտէրը հիմի կըգայ, ամէնքդ էլ կիմանաք:

— Տօ, էլ ո՞ւր ես ծամծմում, քեզ նոր հօ չենք ճանաչում, գլխիդ մազերը մի մին համբարած ունինք, միրքիդ ամէն մի մազի տակին քանի պոչաւոր հրեշտակներ [2]) կան, մեզ յայտնի ա, էփած ըլես, խաշուդ [3]) կըճանաչենք, բայղուշի պէս բռան, տեսնենք, քու բերանիցդ խէր բան հօ չի՞ դուս գայ:

— Ի զուր էք ինձ վրայ եղպէս մեղքեր անում, իմ սիրտս Աստծուն էլ յայտնի է, որ պարզ ա, ուզում էր արդարանալ կեղծաւոր տէրտէրը, երբ պարսից սարվազները Ղևոնդի առաջնորդութեամբ գիւղի միւս ծայրիցը յառաջ եկան, երևում էր, որ Ղևոնդը Ծակի քուչումն նրանց ճանապարհը պահելիս է եղել:

Ամէնքի լեզուն էլ փորն ընկաւ:

---

[1]) Դատարան: [2]) Սատանաներ: [3]) Արգանակ, ջուրվայ:

— Հը՞, ղարուլե՞ն, դարձաւ Ղևոնդը դէպի տէր Մէլիքսէթը:

— Դեռ. բան չեմ ասել: Սիրելի որդիք, իմ կարգն ինձ խառվ կենայ, թէ ես մեղաւոր եմ, տանուտէրի հրամանովը....

— Տօ՛ բա էլ ո՞ւր ես քունջ ու պուճախում մարդի ոտ կըռծոտում, ի՞նչ ասլի բիլի [1]) անելու տեղն ա, երեսիդ փարդէն [2]) դէն քցի՛ր, տակէ տակ մի՛ ըլի, ոչովի չես կարող խաբիլ, աշխարակցիք քեզ էլ՝ ինձ էլ լաւ են ճանաչում, երկուսս էլ օձեր ենք, մեր գործը շանթելն ա, համա որ կտրուխ, ես քեզանից քիչ վնասակար եմ. ես աշկարայ եմ վրայ քշում, ինձանից փախչելով կըպրծնին, համա դու քար ու քռէքանցով [3]) կամ ջանղալների [4]) միջով փորսող ես տալիս, կրնկին շանթում ու էլի դլուխ առնում, քարի տակը մտնում, կորչում: Էդ ամէնը պրծաւ, հիմի պարզ, երեսէ երես կանգնի ու ինչ որ քեզ խանիցը հրաման եմ ասել, կատարի: Դու ես գնացել ցանել. խանն ինձ ասում էր, որ էս խելքը դու ես իրան գլխի քցել. էլ ի՞նչ ես ըլկուել, որ օրի համար ես պահել ճարտար լեզուդ. կարելի ա դու ուզում էիր առանց ինձ անիլ, ինձ գլխի վրայ շուռտալ, նոր մէյդան դուս գալ. մ՛յ, համեցէք, ես ցրաղ եմ քաշվում, էս դու՝ էս իւզբաշին իրա սարվազներով, էս էլ Աշտարակու էլէկը. տեսնում ես որ տունը մի մարդ կայ, երկուսը կայ, էս տեղ են: Իւզբաշի՛, դարձաւ Ղևոնդը տէր Մէլիքսէթից, մեր Ղարաքէշիշը հիմի կը յայտնի մեր ողորմած խանի հրամանը գեղին, թող միրզէն [5]) պատրաստուի:

Մի կարմրամիրուք մոլլայ գոտու ծալքից դուրս քաշեց պարսից հաստ թըղթից շինած, առասպելական նկարներով և Ղուրանի գրուածներով զարդարած պռչաւոր կաղամարը, հանեց նրա միջից կարմիր եղէգնի գրիչը, պպըղեց մի քարի վրայ, թուղթը ծնկան վրայ դրեց ու պատրաստուեց գրելու:

Իւզբաշին մի հրամայական հայեացք ձգեց տէր Մէլիքսէթի վերայ:

Արևը վատ տեղն էլ էր մթնել, տէրտէրը մի քիչ ուսին պոչին արեց ու սկսեց:

— Բարձրաստիճան Հիւսէյն-Ալի-խան սարդարի բարեհաճ կամ-

---

[1]) Շողոքորթութիւն: [2]) Վարագոյր: [3]) Քարքարուտ տեղեր: [4]) Խիտ թփեր: [5]) Գրագիր:

քովը սարվազ պէտք է հաւաքուի, վրացոնց հետ կռիւ կայ. մենք ամէնքս էլ գիտենք, թէ մեր տէրը, մեր սարդարը ինչքան խնամք ունի մեր վրայ, նրա շնորհքովը մենք էսօր տուն ու տեղի, որդու և ընտանիքի տէր ենք, հաւատ ունենք, եկեղեցի ունենք, ոչով մեր մի հաւը չի քաշում. մենք, որդի՛ք, խանի արած լաւութիւնների փոխարէնը պտի էսօր մեր արիւնը չը խնայենք, ով որ ձեզանից էսօր սուր բռնել կարող ա, 20 տարեկանից մինչև 30ը հէնց էս սահաթին ձեր յօժար կամքովը Աստծու անունը տուէք ու երեսներդ Երեւանի կողմը շուռ տուէք. ով որ սարդարի ուղուրին կը մեռնի, նա դրախտ կերթայ. իսկ ով որ սաղ կը մնայ՝ էն էլ իր բաղդիցը, նա էլ դրախտական կըլնի:

— Մենք սարդարի հրամանին ընդդէմ չենք, մէջ մտաւ Գէորգ խալֆէն, մի տարի չըկայ, որ մեր սարվազը տուել ենք. Աշտարակը տարեկան 20 սարվազ ա տալիս, էս տարի 40 կըտանք, թէ չէ, ես չեմ կարծում, որ սարդարը ուզենայ իր ռահաթին քանդել. թէ որ 20ից 30 տարեկանները գնան, մնացողն ընչո՞վ պտի կառավարուին, բռէնցով մեր գեղը կը քանդուի:

— Դուք գիտէք, որ խանը մեզ որդու պէս սիրում ա, լաւ կըլնի, որ կատարէք հրամանը, ընենց չի՞, տանուտէր, դարձաւ տէր Մէլիքսէթը դէպի Ղևոնդը, որ լուռ նայում էր:

— Տօ՛, քանի՞ կմկմաս, քու պատրաստած կերակուրն ա, կեր էլի՛, լաւ բան չի, որ անհաշիւ մարդկանցը տաւարի պէս յառաջ անեն քշեն. դու սարքել ես, ես էլ հրամանը բերել եմ, խօսի՛ր էլի:

— Մենք սաղ գեղով կերթանք խանի ոտքերը կընկնենք, որ մեզ մի ողորմութիւն անի, հաստատապէս խօսեցաւ Գէորգ խալֆէն, մենք էսքան մարդ չենք կարող տալ:

— Մի՛ անէք, մի՛ ըլէք, ուզում էր էլի քարոզն սկսել տէրտէրը, որ Ղևոնդն էլ չըհամբերեց: — Շատ խօսելու ժամանակ չէ, ճչաց նա, բանը վերջացած պրծած ա, տէր Մէլիքսէթը խանին ասել ա, որ ես գեղը փչացրել եմ, երես եմ տուել, էս սարվազն էլ դրա խորհրդովն ա եկել, դա ինձ տանիլ տուեց Երևան, որ խեղդիլ տայ ու ինքը էսօր լիակատար իշխան ըլի, էդ մի բանը գլուխ չեկաւ, համա սարքածները կատարուեց: Խելք ունիք անխօս ուխտի պէս յառաջ ընկէք դէպի Երևան, թէ չէ գեղը ձեռաց կերթայ: Ընենց չի՞ տէրտէր, ես ու դուն մեծ բանի վրայ ենք էսօր:

—Դու նհախ ես ինձ վրայ խիալ տանում ¹), տանուտէր, ես ի՞նչ կը համարձակուէի քեզ վրայ չար խօսալ:

—Իրաւունք ես ունեցել, ես ինքս էլ հասկանում եմ, որ խելքս կորցրել էի, հասարակութիւնը որ կայ, թրթուր ա, թէ որ ջարդես ոչ, աշխարհքը կը բռնի ու էլ օգուտը գալ չի ըլիլ: ²) Բայց էդ թողանք, մեր գործին կենանք, դու բանդ սկսիր, հարցրու, իմացիր, յօժար ե՞ն թէ ոչ:

—Սիրելէք, մէջ մտաւ տէր Յարութիւնը, փէտի որդն իրանից բհամ կըգայ, ³) ի՞նչ էք միաք անում, էս երկու բարի պատւըները իրարու միս ուտում են ու խալխի տունը քանդում, էլ դէս ու դէն ընկնելու ժամանակ չի, երեսներիդ խաչ քաշեցէք, թող անուններդ գրեն:

—Գրեցէք անունները, յուսահատ ասաց Գէորգ խալֆէն և միրզէն մի մին նշանակեց:

—Սարվազը ղոշումը զօնաղ տուր մինչև էգուց, Մանուկ, հրամայեց Ղևոնդը գզիրին, թող մեր տղէքն էլ իրանց պատրաստութիւնը տեսնին, էգուց լուսը քցելուս Աղբենց կալումը հաւաքուին, դու էլ տուն է տուն ընկի, հաւ, ձու, բրինձ, ոչխար, ինչ որ հարկաւոր ա, հաւաքիր խիզաշու համար:

Մի կողմից սարվազների աներես պահանջմունքները, միւս կողմից նոր սարվազ հաւաքելը Աշտարակը սուգ ու շիւանի մէջ էր ձգել, շունը տիրոջը չէր ճանաչում:

Հինգ վեց հոգի վարուց չը կային. դրանք էին Գէորգ խալֆէն մի քանի իշխաններով. նրանք որտեղ որ է՝ հիմի Երևանու կամուրջը կը հասնեն.—մի ճար պէտք ա տեսած, ասաց Գէորգ խալֆէն ու ջէբերը ոսկով լցրած՝ առաջաւոր իշխանների հետ գնաց Երևան:

Ամբողջ օրը մի կտոր հաց չէր մտել տէր Յարութիւնի բերանը, նա էր Գէորգ խալֆի փոխարէն ամէն տուն մտնում ու մխիթարում: Ցաւ թեթևել էր: Հէնց նոր դադրած՝ ոյժից ընկած խեղճ ծերունին տան իրանց շեմքն էր գնում, որ մի աղետալի ձայն նրա ականջն ընկաւ:

—Տէրտէր ջան, կարգիդ մեռնիմ, իմ ձեռն ա քու փէշը, ⁴)

¹) Կասկած տանում: ²) Ջարել: ³) Կըգոյանայ: ⁴) Քեզ եմ ապաւինել:

երեխիս թագցրու, ես էլ գլխիս ճարը տեսնիմ. Ղևոնդն ուզում էր ինձ էլ՝ նրան էլ սպանել տալ, երկու սարվաղ քամակներից հիմի կը հասնեն. տէրտէր ջան, դու ըլիս քու Աստուածը ¹), իմ երեխին լաւ պահիս, դու դառիր դրա հէրը:

Տէրտէրը շփոթուեց մնաց, բերանը մի խօսք էլ չեկաւ, էնքանը միայն տեսաւ, որ Մանուկը երեխի ճակատը շտապաւ պաչեց, դէպի իրան հրեց ու ինքը դէպի հօրի կողմը վազեց:

Տէր Յարութիւնը փայտի նման կանգնել էր. յանկարծ երկու սարվազ, դաշոյնները հանած՝ նրանց հետ էլ Ղևոնդը՝ կայծակի արագութեամբ իրանց դռնովն անց կացան:

—Քանի կարաք՝ աշխատեցէք առաջ երեխին ոչնչացնել, յետոյ հօրը. չը մոռանաք ղօչաղներ, ²) երեխին եմ ասում, դրա համար լաւ հախ ³) կառնէք ինձանից: Պարզ լսեց տէր Յարութիւնը Ղևոնդի խօսքերը:

—Էս ինչ կրակ ու պատիժ ա, երկնային Թագաւոր, էս ինչ կը նշանակի, մտածեց տէր Յարութիւնն ու դուռը ծածկեց, երեխային գրկեց, ներս տարաւ:

Երկար ժամանակ չէր հարկաւոր իր տիրուհուն բանի էութիւնը հասկացնել ու երեխային նրա խնամքին յանձնել: Ուզեցաւ գնալ իմանալ եղելութիւնը:

Դեռ դուռը չէր բաց արել, Ղևոնդի ձայնն էլի ականջն ընկաւ. նա հայհոյում էր սարվազներին:

—Ես ձեզ ասեցի, որ ինձ համար երեխէն ա հարկաւոր, ընչի՞ս էր պէտք հէրը, ախր չիմացա՞ք, թէ ո՞ր ծակը կոխեց նա իր լակոտին:

—Մենք երեխայ չտեսանք, իրան գտանք քարափի գլխին ու սպանեցինք քարովը ցած քցեցինք, նա մենակ էր, երեխայ չըկար հետը:

—Հալբաթ ⁴) դիրը ջնջուած չի, մրթմրթաց ինքն իրան հայերէն Ղևոնդը, երևում ա Աստծու պահած զաւը գէլը չի ուտիլ, թող գնայ մեծանայ, ընչանք էն օրը կամ էշը կը սատկի՝ կամ իշատէրը:

Տէր Յարութիւնը պարզ լսեց այս ամէնը և գլուխը շարժեց:

¹) Ի սէր Աստուծոյ: ²) Քաջեր: ³) Վարձ: ⁴) Երևի:

— Խեղճ Մանուկ, փնթփնթաց նա, դու էլ էս գաղանի ճանգն ընկար. բայց քանի էս անօրէններն էստեղ են, պէտք է տաղ անենք [1]):

Հէնց էն իրիկունը սարվաղը գեղէցը հեռացաւ: Գէորգ խալֆէն հրաման էր բերել, որ ոչովի ձեռք չըտան և Թուղթն առնելուն պէս գիւղը թողեն:

Ղևոնդն էլ սարվաղի հետ գնաց Երևան:

Միւս առաւօտը անգղները պոյտ պոյտ էին անում Շուխոնց ձորի դէմի գլխին:

— Անպատճառ էգտեղ կը լինի խեղճ Մանուկի մարմինը, ասաց տէր Յարութիւնը Գէորգ խալֆին. ես ամէն բան լսեցի:

Կարմրաւոր եկեղեցու արևելահիւսիսային անկիւնում մի չալու [2]) փուշ է դուրս եկած, մացառի տերևները չեն երևում, բոլոր ճղքները կապոտած են շորահներով: Այդ փշի տակը լիքն է խեցեղէնների կտորտանքներով: Ամէն օր այդ փշի վրայ մի քանի կտոր շորահին էլի աւելանում է և խեցիի կտորտանքը շատանում են: Այս տեղ են բերում Աշտարակեցիք իրանց հիւանդներին և ոտք ու ձեռքերին ջուր են ածում, նրա հագուստից էլ մի կտոր կտրում, չալուի վրայ կապում են, ջրի ամանն էլ այն տեղ կոտրում են: Ամէն մի Աշտարակեցի երեխայ քեզ կասի, որ էս նահատակի գերեզմանն է, որի բարեխօսութեամբն իւրեանց հիւանդներն առողջանում են: Շատերը շատ պատմութիւններ են անում այս գերեզմանի վերայ, մի մասն էլ ասում է, որ այս մեր ջրատար նախրչի ու գզիր Մանուկի գերեզմանն է, որին սարվաղները նահատակիլ՝ քարափովը ցած են ձգել:

Ի.

ՈՐԴԵԳԻՐ

Ամէն ջանի իւր շալիկը միշտ կպած կը լինի, ամէն աչքի իւր սովորն է հաւանելի: Աշխարհի էն գլխից էսպէս եկել, էսպէս էլ գնում է: Խաչը տէրը զօրաւոր կանի: Մարդուս համար իրան ունե-

[1]) Լունք: [2]) Սև փշի թուփ:

ցածը, իրան սրտին մօտիկ առարկան ուրիշի սեպհականութիւնից շատ վեր է: Նրա աչքը, որքան իւրանից հեռաւորներին կըսեմի, 100 անգամ իւրը աւելի մօտիկ կը գնի: Փորձած բան է. այսօր այս տեղ ես, քո սրտին, քո մտքին մօտ եղելութիւններն են քեզ պարապեցնում. այս տեղի օգուտն ու վնասը՝ այս տեղի հասարակական իրողութիւններն են քեզ զբաղեցնում՝ այս տեղի վերայ ես խօսում, խորհում, դատում, չափում. հեռացար՝ մի երևակայութեան պէս քո մտքովդ ստուերի նման անցնում են երեկուան թողածներդ և ներկան է քեզ գրաւում:

Հետևաբար, եթէ մի տեղի անուն պայծառացել է, նրա վերայ շատ ասվում, խօսվում և գրվում է, այդ նշանակում է, որ տեղացիների զարգացմունքից կամ անզարգացողութիւնից է կախուած: Մի աշխարհից տեսնում ես երևելի տաղանդներ են յառաջ գալիս, հռչակաւոր անուն են ստանում, մեծացնում են իրանց աշխարհի փառքը, իսկ միւս տեղն ընդհակառակը անյայտութեան մէջ ընկած է: Մի՞թէ չկան այն աշխարհում մարդիկ, մի՞թէ ոչինչ արժանայիշատակ բան չկայ այն տեղ, մի՞թէ հանճարներ միայն մի որոշեալ կլիմայի տակ են ծնում:—Պատասխանը շատ պարզ է. այստեղ հանճարը չքանում է տգիտութեան ցանցերի մէջ, միւս տեղում նա աւելի յաջող պայմանների տակ է զարգանում. այստեղ երկիրը իւր բոլոր հրաշալիքներով անտէր և անխնամ ընկած է, միւս տեղում նրան զօրաւոր է արել, հանրահռչակ է արել իւր տէրը, իւր զարգացած հասարակութիւնը: Եթէ ճիշդ չէ, եթէ խաչը տէրը չի զօրաւոր անում, ապա ընչո՞ւ Հայոց աշխարհի ճոխութիւնները անծանօթ են մինչև այսօր լուսաւորեալ աշխարհին. Շվեյցարիայի ամէն մի քարը ունի իւր յիշատակարանը, իտալական պարզ երկնակամարը իւր բանաստեղծների գրուածներումն է պարծենում, իսկ մեր աշխարհը մեր իմաստուն եղբայրների մտքումը վայրենիների որջեր և գուցէ բևեռային կողմերի անբերրի տեղեր է ստուերի նման նկարագրվում: Թող շնորհ բերէ, թող գայ մեր շնորհալի Եւրոպացին Հայաստանի որ տեղը կամենայ, ուրիշները թողած՝ միայն մի չնչին գիւղը վերցնենք, թող բարեհաճի Աշտարակ այցելել և տես թէ ինչ ահագին հատորներով գրքեր կը գրէ մեր աշխարհի վերայ, տես թէ ինչպէս կը համեմատէ նա մերը իւր տեսածների հետ և ինչպէս բարձր կը համարի: Թող մի երևելի ճարտարապետ էս օր մտնի Աշտարակ և կը տեսնես որ նա կասէ թէ մեր տգէտ պապերն էլ պա-

կաս ճարտարապետներ չեն եղել: Վստահ կարելի է ասել, որ իրաւունք կունենայ մեր գիտնականը հերքել Աշտարակու առուի արուեստագիտանութիւնը: Բնութիւնը միայն կարող է այնպիսի մի անսովոր երևոյթ յառաջ բերել, ինչպէս մեր առուն է: Ի՞նչ զարմանք, եթէ մեր առուի սկզբն՝ առնելու տեղից մինչև Աշտարակ մտնելը 1000 անգամ մարդ մահն իւր աչքի առաջին կը տեսնի, եթէ նա կը կարծի, թէ իւր ոտքի տակի մի թիզ լայնութեան հարիւրաւոր գազերից բարձրացրած թումբը այս րոպէիս ուր որ է կը փլչի, ու թէ իւր մեծ կտորն ականջը կը թողայ և թէ կը զրկի Աշտարակցուն իւր դարաւոր տարիներով ժառանգութիւն ստացած հայրենիքից: Եթէ Աստուած մի արասցէ, բերանից դուրս գայ՝ քամին տանի, մի այդպիսի անբաղդութիւն պատահի, մեր առուի որ և իցէ բիթը [1]) քանդուի, մեր գիւղը կը ոչնչանայ և կը չորանայ: Բայց միամիտ եղէ՛ք, մեր տգէտ որմնադիր պապերը էնպէս բան չեն շինել, որ վտանգի ենթակայ լինի: Առասպելական աւանդութիւնը մեր առուին տուել է մի ճգնաւորի բարեմաղթութեան ծնունդ: Ժողովրդի մէջ այսօր էլ Ականատես անունով մի անապատական փառաբանվում է. Ականատեսը Աշտարակու բարերարն է կոչվում. նա եկել է, երբ թէ, հաւանել Աշտարակու տեղագրութիւնը և օդի առողջարարութիւնը ու երկար աղօթքներից ու մաղթանքներից յետոյ՝ գաւազանի ծայրով գծելով Կարբի գիւղի տակից՝ Քասաղ գետից մինչև Աշտարակ, հրամայել է այդ գծին լայնանալ, յետ բացվել, քարափներ ու թմբեր ծակել, ձգվել և առու կազմուել, իսկ ջուրը մի ընտելացած գառան նման քամակից վազել է: Աղօթքով՝ թէ խելքով, աւանդութիւնից կարողենք եզրակացնել, որ Ականատեսն է այն հանճարը, որ մեր առուի ծրագիրը մաքուր գծագրելով, այսօր մեր երջանկութեան պատճառն է դարձել, Ականատեսն է եղել այն տգէտ ճարտարապետը, որ այսօր շատ երևելի ճարտարապետների մոլորեցնում է:

Քո յիշատակը քաղցր լինի, մեր առաքինի և գերահանճար Ականատես. քո գերեզմանդ պաշտելի է ամէն մի Աշտարակցու համար, մենք չենք կարող Սաղմոսավանք գալ և քո սուրբ շիրիմը չհամբուրել: Այո, Սաղմոսավանքի եկեղեցու աջակողմեան դասումն է

[1]) Առուի խախուտ տեղը, որ ոչինչ բանով հնարաւորութիւն չկայ ամրացնելու.

թաղած Ականատեսը և ամէն մի Աշտարակցի եկեղեցին մտնելուս անպատճառ մի «ողորմիս» տալիս է ու համբուրում նրա գերեզմանը:

— Ա՛յ, էս ա Ականատեսի գերեզմանը, որ մեր առուն հանեց, լիս կորի՛ սա, պատմում է հայրը որդուն, մայրը աղջկան և այլն:

Թողենք մեր առուն. թող գայ մի եւրոպացի լուսաւորեալ և կանգնի Աշտարակումը Ծիրանաւոր եկեղեցու մօտ Շուխոնց անշուք տան պաշտգամբին և թող արշալոյսը նոր ծագելուս, կամ մի պարզ լուսաւոր ու աստղաճաճանչ գիշեր նայի նա ուղղահայեաց իւր առաջին փռուած ձորովը դէպի արևելք: Տեսա, թէ ի՜նչպէս կզմայլի նա մեր լայնարձակ ձորի տեսարանովը, ի՜նչ սքանչելի պատկեր կը տեսնի իւր աչքի առաջին, ի՜նչ տպաւորութիւն կունենայ մեր օտարական հիւրի վրայ ձորը իւր կարկաջասահ Քասախի արծաթափայլ գետովը, իւր տերևախիտ ծառերովը, իւր եռակամար կոփածոյ կամուրջովը, իւր հանդէպի փոկարերդ կոչուած բնական և ոչ արհեստական միապաղաղ պատովը. մանաւանդ՝ եթէ գարնան սկզբին, արևածագին այս տեսարանին մի աւելի չքնղութիւն կը տան կարմրակտուց կաքաւների կլկլական ներդաշնակ ձայները: Հաստատ հաւատացած եմ, որ մի հրճուանք՝ մի բերկրալի խոստովանութիւն դուրս կը թռչէ իւրովին հետաքրքիր բնագէտի սրտից. նա կասէ թէ ինքը մինչև այսօր առաջին անգամն է բնութեան սքանչելի պարգևների հետ ծանօթանում: Հիմի արի՛ դու, գրիչը տո՛ւր մեր բանաստեղծի ձեռքը և հեռացի՛ր: Սրտի հետ գործ չունիս, նրա հոգւոյ արտայայտութիւնքը, քո անշուք հայրենիքի նշանակութիւնը, գերազանցութիւնը և գովքը դու կը կարդաս եւրոպական մամուլի տակից լոյս տեսած՝ և երջանիկ կը համարիս քեզ այդպիսի մի հայրենիքի որդի լինելուդ համար:

Ո՞ր մէկը պատմեմ մեր հայրենիքից. ամէն մի աւերակը, ամէն մի քարը հիացք և սխրութիւն է պատճառում ուրիշներին, իսկ մեր պապերի համար մի սովորական երևոյթ:

— Շատերը չեն էլ վստահանալ կանգնել մեր նկարագրած տեղը Ծիրանաւոր եկեղեցւոյ պատի տակին, որի խարխուլ և կիսաւեր քարերը վարագի ժանիքների նման ամէն կողմից մինչև կէսը յառաջ են եկել ու կարծես մի մազի վրայ են բռնուած, կարծես մի բարակ քամու են սպասում, որ վայր գահավիժուին և տակի կանգնողին ջախջախեն: Էլ ո՞վ է գժուել որ իւր գլուխը յայտնի մահուան ենթարկի: Բնութեան տեսարաններով հիանալը, այո՛, շատ քաղցր է,

բայց կեանքը ես առաւել։ Որքա՜ն կամիս, ատամներդ թափի՛ր, կոկորդ ձգի՛ր, լեզու գործ դի՛ր, ցանկացի՛ր շատերին հաւատացնել, որ դու այսօր ծերութեան հասակի մէջն ես և քո օրօրոցդ էս թեքով կլպցրած քարի տակին է դրած եղել, քո մայրդ այս տեղ է քեզ անուշ ձայնով օրօր ասել ու թէ քեզ քնացրել և թէ այն ձորի գարնան այցելու քաղցրաձայն թռչուններին նախանձը շարժել. ասա որ էսօր արեգակը իւր ցօղը քեզ վերայ շողացրել է նոյն պաշտգամբի վերայ. ինչ կուզես՝ խօսի՛ր—շատ այցելու քեզ խելագար կը կարծի։ Դու ասա, որ եկեղեցու պատի գլխից կախ ընկած քարի վերայ գարսած խաչուրները [1]) և ծառի ճղներները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի զոյգ արագլի բուն, ուր այդ թռչունը գալով գարնանամտին Բաղդադից՝ անց է կացնում տարուան քաղցր եղանակը, ձու է ածում, հանում՝ մեծացնում է իւր երկու սիրուն ձագերը և աշնանը՝ իւր սախուածի ընտանիքի հետ ճանապարհ ընկնում կրկին խուրմայ ուտելու։ Ասա, որ քո սիրելի հարեւան արագիլը գնալուս մի քանի անգամ թռչտելով պտոյտ է անում Աշտարակու գլխովը, գիւղը թնդացնում է իւր կլկլոց ձայնովը, երախտագէտ, հրաժարական է տալիս. «բարով մնաք, դուք հիւրասէր Աշտարակեցիք, այս է ասում նա իւր կլկլոցովը, ես ձեր քաղցր բարեկամութիւնը, ձեր ինձ ցոյց տուած սէրը չեմ մոռանալ. թողում եմ իմ բունս ձեզ աւանդ, որ միւս տարին էլի կարողանամ ձեր հիւրասիրութեան արժանանալ։ Բայց թէ իմ կեանքիս օրերը հաշուած լինին, եթէ ես էլ չկարողանամ վերադառնալ, չեմ թողուլ ձեր գիւղը արագլեց զուրկ, կըպատուիրեմ իմ ձագերին չմոռանալ իւրեանց ծնած տեղը, իւրեանց հայրենի տնակը—Ծիրանաւորի խախուլ պատը, ամէն տեղից գերադաս համարել իւրեանց ամարանոցը և վերադառնալ այդ տեղ ձագեր հանել»։

Պատմի՛ր դու նոյնպէս մեր շատերին թէ Աշտարակու եկեխայքն էլ իւրեանց կողմից ուրախ ուրախ պատասխան են տալիս. «բարո՛վ գնաս, բարով գաս ոտքդ խէրով ըլի՜, ցաւ ու չօռը պակաս ըլի՜ հաց ու պտուղը շատ, լի՜ մեռնողը տասս ու պապս ըլի՜ն»։

---

[1]) Մանր ցախեր.

—Բարո՛վ գնաս, բարո՛վ գաս, ոտդ խէրով ըլի, ցաւ ու չօռը պակաս ըլի՛, հացն ու պտուղը շատ ըլի՛, հարսանիքը աղւօրս ըլի՛, մահէնիքը տասնիս ըլի։

Դու ինչքան փառաւոր կուզես բե՛ր, ինչքան կամիս հաւատացրու, մեր պատուական այցելուն աչքը կը դարձնի Ծիրանաւորի վերայ և կամ ինքն իրան երազում կը համարի, կամ քեզ ցնորքի մէջ։

Մենք թողնենք մեր ներկան և վերադառնանք մեզով, թռչենք մի դար յառաջ, գնանք, գտնենք մեր մոռացուած պապերին և տեսնենք, թէ մի ազնուականօրէն ծերունի, որ իւր կեանքի շատ գիշերներն անքուն վայելել է Ծիրանաւորի տակից բնութեան գեղեցկութիւնները, հսկել, սաղմոս է ասել հեզամռունչ, ոտքի վերայ մանգալով, մեր սրբակեաց ծերունին ինչ է զգացել այն ժամանակը. նա էլ նոյնպէս սքանչացել ու ափշել է Աշտարակու տեսարաններով, ինչպէս և մեր ներկայ օտարական հիւրը։

Ո՛չ, նրա համար այս ամէնը սովորական երեւոյթներ են եղել, նա այնպէս հաւատացած է եղել, թէ ամէն տեղ մի և նոյն տեսարաններն են, մի և նոյն ձորերը, նոյն և մի կաքաւները և այլն. նա ոչ հեռու երկիրներ է տեսել, ոչ մեծ գիտութիւն է ունեցել, որ կարողանար համեմատել մերը ուրիշների հետ և անմահացնել մեր աշխարհի անունը. նրա ցաւն ու հոգսը ուրիշ բան է եղել, նրա աչքերի արտասուքը չի չորացել, տեսնելով իւր սիրելի ժողովրդի կրած տառապանքներն ու անտանելի նեղութիւնները, նրա հօտն առաջին պառակտել են և նա ինքը հովիւ՝ ոյժ և զօրութիւն չէ ունեցել դիմադրել։ Գուցէ այնչափ խորթ՝ հաւատի թշնամու տուած տանջանքները չեն նրան վշտացրել, որչափ իւր հարազատ ազգի միջից յառաջ եկած վատթարները. այնչափ տգէտ ռամկից պատճառած խոցերը չեն կարողացել անհանգիստ անել նրան, որչափ մի քանի հոգեւորականներ։ Կարծեմ իմացուեցաւ, որ խօսքս տէր Յարութիւնի համար է։ Առաքինի հովիւը որքա՞ն անգամ ծածուկ կանչել է իւր մօտ իւր կարգակից փոքր տէր Մելքսէթին, յիշեցրել է նրան իւր վերայ առած պարտքը, դառնապէս նկարագրել է նրա առաջին ժողովրդի նեղութիւնները, խնդրել՝ աղօթել է, յետ կենալ այս չար ճանապարհիցը, խոստացել է նրան և առաջնութիւն և իւր քահանայական արդիւնքը, միայն թէ վերջինս արատ չբերէ հոգեւորականութեան անուանը, ինչպէս քաջ հովիւ, դնի իւր

անձը իւր հօտի վրայ, բայց ոչ միանգամ՝ մի որոշ և մխիթարիչ պատասխան չի ստացել:

Տէր Ցարութիւնի առաջիկայ գիշերուան կրած աղէտները միւս առաւօտը մեզանից ամէն մինը կարող է պարզ տեսնել նրա երեսին աւելացած խորշոմներից և բնականից աւելի փոս ընկած աչքերից:

Նրա սովորական զուարթութիւնն ամէն նայողի մէջ յարգանք էր ներշնչում: Նրա հասակը կարճ էր, ինքը վտիտ, բայց ջղոտ և կայտառ. որքան էլ եօթանասուն տարեկան մօտ զառամեալ, բայց ճարպկութեան և թեթև գնացքի ու վեր ու նիստի մէջ չէր կարելի նրան զանազանել մի երիտասարդից. անդադար կը գործէր նա և չէր յոգնիլ. Նրա գլուխն իւր փոքրութեամբը համապատասխանում էր երեսին և հասակին: Նրա յօնքերի թանձրութիւնը կամար կապելով խոր գնացած աչքերի վրայ, իւր արծուի քիթն էլ պատնէշ արած, նրան տալիս էր կեանքն աշխարհից դուրս անապատութեան անցկացրած և երկնային մանանայով միայն ապրած ճգնաւորի կերպարանք: Նորա երկու խոր փոսերի միջից կրակի պէս փայլիւն տուող մանր և սուր աչքերը զանազան մարդկանց վրայ այլատեսակ տպաւորութիւն էին անում: Այդ կախուած էր ծերունու հայեացքից, թէ ո՞ւմ վրայ ի՞նչ հոգւոյ արտայայտութիւն է ուզում ցոյց տալ: Խիղճը մաքուր և գործքը բարի մարդը կուզէր տեսնել տէր Ցարութիւնի ժպտալի դէմքի հետ նրա քաղցրութիւն և հոգւոյ մխիթարութիւն արտաշնչող աչքերը: Իսկ խղճի խայթից հարուածուածը միշտ կաշխատէր փախչել այդ զարմանալի ծերունու սուր հայեացքից. տէրտէրի աչքերիցը, կարծես, էլեքտրական կայծեր էին դուրս թափվում և իրեն շանթահարում: Այս էր պատճառը, որ մինչև այսօր ոչ մի բէգ, կամ խան մեր տէրտէրին մի պակաս խօսք չէին ասել, միշտ նրա հետ յարգանօք էին վարուել: Սարդարը շատ անգամ կամեցել է նրան պատժել, բայց երբ կանչել է իւր առաջը, նրա բարկութիւնը խորտակուել է տէր Ցարութիւնի հայեացքից և պատուով ճանապարհ է դրել: Ղևոնդը որքան էլ մարդկութիւնից դուրս եկած լինէր, եթէ տէր Ցարութիւնի աչքերին նայէր, խիղճն անհանգիստ կը լինէր. դրա համար էր, որ նա միշտ փախչում էր մեծ տէրտէրի ներկայութիւնից: Գէլը գարբնոցը չի գնալ, ասում է առածը:

Մի սարսափելի առաւօտ բացուեցաւ մի օր տէր Ցարութիւնի

վրայ. երեկուան տեսողը այսօր նրան չէր ճանաչիլ, կնճիռները կրկնապատկուել էին:

Եթէ չեմ մոռացել, այս երեկուան անցքից յետոյ էր, երբ իւր տան անդամներին մինն էլ աւելացաւ: Նա Ղևոնդի և պարսիկների խօսքերից պարզ գուշակեց, որ իրեն աւանդ տուած Վարդ երեխան հիմա որբ է, թէ այսուհետև գզիր Մանուկ չկայ՝ իւր որդու ապագայով պարծեցող: Այս էր պատճառը, որ խեղճ ծերուկը ամբողջ գիշերը անտէր երեխայի վիճակի վրայ մտածելով՝ բաց աչքերով էր լուսացրել: Նրա համար ոչ երեխայի կերածն ու հագածն էր զգալի, ոչ իւր աշխատութիւնն էր խնայում: Նրա տանը օրը տասն օտարական էին ճաշում, նրա շնորհիւ մի քանի որբեր էին խնամւում և հագնվում: Ի՞նչ էր ուրեմն տէր Ցարութիւնի հոգսը Վարդի վերաբերութեամբ:—Միմիայն երեխայի վտանգաւոր դրութիւնը:

Նա պարզ լսել էր Մանուկի խօսքերը. «Ղևոնդն ուզում էր ինձ էլ՝ երեխիս էլ սպանել.... դու ըլես քու Աստուածը, իմ երեխին լաւ պահիր, դու դառիր դրա հէրը»:

Այս խօսքերն էին տէր Ցարութիւնին մտատանջում, նրա վրայ մի նոր հայրական պարտաւորութիւն էլ էր դրուել:

—Ի՞նչ կարիք ունէր Ղևոնդը մի երեխայ սպանելու, ի՞նչ թշնամութիւն պտի ունենար գզիր Մանուկի դէմ. ինքն էր նրան նախրչութիւնից հանողը, ինքն էր նրան իրա տունը տանողը. ասում էին, որ գզրի երեխին իր աղջկանից պակաս չէր սիրում, հիմի ի՞նչ քամի անց կացաւ նրա գլխովը: Ո՞վ գիտի, ի՞նչ օձի մտքեր ունի նա. ես ո՞նց պտի պահեմ երեխին, որ ազատեմ էն կատաղած գազանիցը: Չէ, իմ տուն ու տեղս էլ երեխի ուղուրին յետ կըգնեմ, ու Ղևոնդին չեմ թողալ, որ Վարդի մի մազին դիպչի: Սակայն ի՞նչ հնարք բանացնեմ, էն արենկերը լաւ գիտայ, որ Վարդը կենդանի ա, ամէն ծակ ու ծուկ կընկնի, շան պէս հոտոտալով ման կգայ, բալքի կարողանայ տեղն իմանալ: Բանից դուրս ա գալիս, որ հէրը որդու սիրուն մատաղ գնաց, Ղևոնդի սրտի փուքը դեռ չի նստել. էստուց յետոյ նրա կախը ինձ հետ ա, ես էլ ճակատէ ճակատ քեալլայ պտի տամ [1]) նրա հետ. ընչանք տէր Ցարութիւնն իր օղլուշաղի [2]) հետ կոտորուի ոչ, Մանուկի երեխայ Վարդի գիւը թեքվելու չի [3]):

([1] Ճակատամարտութիւն. [2]) Գերդաստան. [3]) Վնաս չի հանդիպելու.

Երեւում էր, որ տէր ցարութիւնը չէր լսել Ղեւոնդի վերջին փնթփնթոցը, որ երեխայի համար ասաց. «Հալբաթ գիրը ջնջուած չի, Աստծու պահած դառը դէլը չի ուտիլ, թող գնայ մեծանայ» և այլն: Եթէ տէրտէրը լսած լինէր, էլ այնքան չէր սրտնեղիլ:

—Վարդն ու Թորոսը համարեա հասակակից են, վճռաբար մտածեց տէր ցարութիւնը, ես հիմա երկու չի երեք տղայ ունիմ, քանի շունչս վրէս ա, քանի մեր օջաղը ծխում ա, երեքին էլ մի աչքով պտի մտիկ տամ:

—Սուսամբար, կանչեց տէրտէրն իր կնոջը, ես քեզ խեղճ Մանուկի գլխի եկածը պատմեցի, մենք հիմի երկու տղայ չունինք, իրեք են. մեծ տղէդ Վարդն ա, յետոյ Թորոսն ու Կարապետը. ըտէնց ա՞, թէ ոչ:

—Թող ըլի, Աստծու տուածիցը փախչիլ չենք:

—Շատ լաւ, բաս որդի չենի՞ր:

Տէրտէրակինը գնաց Վարդին բերեց:

—Արի աջս առ, Վարդ ջա՛ն, հայրական քնքուշ դէմք առած՝ կանչեց տէրտէրը երեխային:

Երեխէն կատարեց:

—Մտի՛ր Փարաջիս տակը, երկու ձեռքով վերարկուի փէշերը յետ բացանելով հրամայեց տէրտէրը:

Վարդը հնազանդուեց:

Փէշերքի մէջ փաթաթեց Վարդին տէր ցարութիւնը և առնելով իր գիրկը՝ սխմեց նրան իւր կուրծքի մէջ, համբուրեց և տուեց տիրուհւոյն:

—Ես պրծայ, դու սկսի՛ր:

Սուսամբար տիրուհին յետ բաց արեց իւր գօտին, մտցրեց մանկանը իւր շապկի մէջ և կուրծքի բացուածքով հանեց ու մի մայրական քաղցր համբոյր տալով՝ գրկեց նրան: Նրանք վերածնեցին:

Էս միջոցին էր, որ ժամկոչ Սուքիասը կոչնակները ծեծեց.
—Օրհնեա՛լ է Աստուած, ժամ հրամայեցէք: Դատաստան կայ գալու, պատասխան կայ տալու. ո՛վ բարի քրիստոնեայք, ժամ հրամայեցէք: Էս էր կանչում ձայնով՝ ծիրանաւորի կտուրը կանգնած ժամկոչ Սուքիասը՝ կոչնակի տախտակին խփելով:

—Ո՛վ բարի լսի տուող սուրբ Աստուածածին, գրկից երեխային ցած դնելով, ձեռները դէպի երկինք բարձրացրեց Սուսամբար

տիրուհին, դու պահի՛ր իմ երեխեքանցը՝ իմ Վարդին, իմ Թորոսին, իմ Կարապետին:

—Աստուած ձէնդ լսի՛, էն տնաքանդի սիրտը մի գութ քցի՛, մենք մեղաւոր անարժան ենք, արժանաւորաց աղօթքը բարեխօս ըլի՛, ձայնակից եղաւ տէրտէրն իւր երէցկնոջն ու միւս անգամ համբուրելով Վարդին՝ գնաց առաւօտեան ժամն օրհնելու:

ԻԱ.

«ՀԱՑԸ ՀԱՑԱՐԱՐԻՆ ՏՈ՛ՒՐ, ՄԻՆՆ ԷԼ ԱՒԵԼԻ»

—Ընդուր են ասել, թէ «շան հետ աղբէրացի, փէտը ձեռիցդ մի՛ վէր քցի»: Ո՛վ կիմանար, թէ մեր փչանալու Ղեւոնդ կրկին փալանը շուռ կըտայ, ինչպէս խելօքացել էր: Աֆսոս Մանուէլ, ինչ լաւ մարդ էր:

—Անցկացած բանի քամակիցը շատ չեն ընկնիլ, Գէորգ խալֆա՛յ, մեռածներին թող, աչքիդ առաջի ցաւերն թէ դեղ գիտես, արա՛, Ղեւոնդի մասլահաթը դեռ մնա՛յ, Աստուած Հայի ճակատին ըտէնց ա գրել, որ մենք էս աշխարհքումս հանգստութիւն չպտի ունենանք. դեռ ոտ ու ձեռ ընկնենք, էս մեռելը թաղենք, էս բանի ճամփէն գտնենք: Ես քեզ ասեցի, որ Մանուկի երեխէն ինձ մօտ ա, մի հրաշքով, համարեա, Աստուած մեր տունը քցեց, հալբաթ վերեւից կտրուած չէր: Հէնց էն սհա՞թը պտի մեր գեղերովը փախչէր Մանուկը, որ ես մեր բակի դուռը բաց արի. դեռ մի խելք սարփացրու, ինչ անենք, որ էս երեխի գլխին էլ մի օյին չգայ [1]) էն գազանը. ես պարզ լսեցի, որ նա սարվազներին հրամայեց ջանք անել առաջ երեխին սպանել. յետ դառնալուս էլ տեսնեմ կատաղած էր, որ պտկին աչքից կորցրել են: Ես չգիտեմ, թէ ինչ մուռ [2]) ունի Ղեւոնդը մի երեք չորս տարեկանի հետ, համա որ մոլթեթ էլ, կասեմ՝ թէ Մանուկը իր մնացածների ուղուրին [3]) մատաղ գնաց:

—Խեղճ մարդ, որ տեղ նստում էր, բերնի առաջի խօսքը իր ամլանի ճուտն էր:

—Ղորթ որ այտանի ճուտ ա, մարդի սիրտ փառաւորվում ա

---

[1]) Մի խաղ չխաղայ. [2]) Նախանձ. [3]) Սիրոյն.

վըէն մտիկ տալով, թէ որ Աստուած պահեց, մենծացաւ, շատ լաւ տղայ պտի դուս գայ:

—Կանչէ՛, տէր ցարութի՛ւն, մի քիչ խօսացնենք, ո՞վ ա իմանում, կարելի ա երեխի բերնից մի բան գլխի ընկնենք, հալբաթ [1]) տանը մի ղալմաղալ [2]) պատահած կըլնի. ասած ա «պէղի էն գլուխը գնայ, երեխիցը բան հարցրու»: Այ, հրէս գալիս են Թորոսիդ հետ. մտիկ ես տալի՞ս, ես կարծեմ թայդաշ [3]) են, երկուսն էլ մի տարուան երեխէք են, համա Թորոսը նրա կէսին հաւի ճուտի չափ ա թվում:

—Գնացէք խալֆի ձեռը պաչեցէք, բալէքս, հրամայեց տէր ցարութիւնը:

—Այ՛ շատ ապրէ՛ք, նստացնելով երկուսին էլ իւր ծնկների վերայ համբուրեց մանուկներին Գէորգ խալֆէն, ի՞նչ խելօք տղէք էք:

—Վարդը Թորոսիս աղբէրն ա հիմի, երկուսն էլ իմ բալէքն [4]) են, երկուսի համար էլ լաւ շորեր պտի կարեմ. երբ որ մի քիչ մենծանան, դրանց համար մի մին տախտակ պտի շինեմ, այբ բենը վըէն պտի գրեմ, կարդալ սարվացնեմ, ժամ պտի տանիմ, շապիկ հաքցնեմ, մում բռնել տամ. ընէնց չի՞, Թորոս ջան, խօսացնում էր մանուկներին տէր ցարութիւնը:

—Ի՞նչ անեմ, Վարդը չի ուզում կենալ, ասում ա ես իմ ափունի [5]) կուշտն եմ գնում, ընչանք իմ ափուն գայ ոչ, ձեր տանը ճալ չեմ, ես Մանուշակի կուշտն եմ ուզում, մի ալար [6]) ասում ա:

—Թէ որ իմ ափուն, Մանուշակն ու Սանդուխտ տատը ընտեղ չըլնին, գժուել եմ որ նրանց տունը գնամ, ես Մանուշակի ափունին չեմ սիրում, նա փիսն ա. նա իմ ափունի վրայ բարկանում ա, ես նրանից վախում եմ, ձեռքը աչքերի վրայ դրեց, ուզում էր լաց ըլել Վարդը:

—Տէր տէր ջան, Գէորգ խալֆի ծնկնից վեր թռչելով հօր գիրկը փաթաթուեց Թորոսը, ի՞նչ կըլի Վարդի ափունին էլ, Մանուշակին էլ, Սանդուխտ տատին էլ մեր տունը բերես, որ Վարդը դարդ չի անի, մեզ մօտ կենայ, այ տես, ուզում ա լաց ըլի:

—Կը բերեմ, բալայ ջան, դու ուրախ կաց, քու ափուն ուրիշ տեղ ա գնացել, կը գայ, կասեմ կերթայ Մանուշակին էլ,

¹) Ինարկէ. ²) Աղաղակ. ³) Հասակակից. ⁴) Երեխայքս. ⁵) Հայրիկի. ⁶) Անդադար.

Սանդուխտ տատին էլ կանչի, կը բերի. դուք հիմի գնացէք կարապետի մօտ, նրան խաղացրէք:

Մի քանի րոպէ լռութիւնը տիրեց, ոչ տէրտէրը և ոչ խալֆէն խօսք չէին գտնում, կամ բերանները չէր գալիս, որ խօսին:

Երկուսն էլ մի խորին հառաչանք քաշեցին:

—Լսեցի՞ր:

—Լսեցի, գլուխը շարժելով պատասխանեց Գէորգ խալֆէն:

—Տէր Աստուած, դու ներքև մտիկ տուր, մի լես ու ճար արա:

—Տէրտէր ջան, աչքիդ մատաղ, մի երկու խօսք ունիմ ձեզ ասելու, ինչ լաւ որ խալֆէն էլ ըստեղ պատահեց. յանկարծ թանաքին ներս մտաւ պառաւ Սանդուխտը:

—Ի՞նչ կայ, Սանդուխտ, խէ՞ր ըլի. ո՞րտեղից ո՞րտեղ:

—Ձեր գլխին մեռնիմ, քո որդու արևի մատաղ, տէրտէր ջան, սուրբերդ ղուրբան խալֆայ, ինչ կուզէք արէք, գեղը խախալտակեցէք [1]), քուն ջու պաճախ ընկէք, էն լեռահոգի նահատակ Մանուկի երեխին գտէք: Աչքովս էլ տեսած ըլեմ, հաւատալ չեմ, որ խեղճ քորփին [2]) սպանած ըլին, ես քարափներովը վեր քցած, ես թէ չէ գետումը խեղդած, ունց որ սաղ գեղը լեզու ա էլել, խօսում: Սուտ ա, սուտ, էն երեխի գիրը դեռ ջնջուել չի, նա դեռ շատ պտի ապրի, նա Աստծու պահած զառն ա, որ ողջ աշխարհքի գէլերն էլ հաւաքուին, նրա տոտի պճեղին չեն կարող դիպչել:

Տէրտէրն ու Գէորգ խալֆէն զարմացած՝ միմեանց նայելով մնացել էին:

Էդ ի՞նչ մտքով ես ասում, Սանդուխտ:

—Ո՞նց թէ ինչ մտքով, խո՞ ես անհաւատ եմ, ես Աստուած՝ ես սրբերի չեմ հաւատո՞ւմ:

Թէ որ իմ քարասիրտ աղէն իր դրախտի բաժին կնկայ խօսքին անկաջ արած ըլէր, էն խեղճ Մանուկն էլ չէր կորչել: Հիմի հրէն լաւ տանջվում ա, քու փոշիմանել ա [3]). համա ինչ պտի անի, էլաւ պրծաւ. սաղ գիշերս, որ աչքս աչքը կպցրել չի, Երեանից իրիկունն եկաւ, մտաւ իրա օթախն ու դուռը վըէն հետ արեց. ընչանք լիս տօի վրայ ման ա եկել ու իրան իրան խօսացել:

—Քո մտքումդ մի բան պտիտ ա գալիս, Սանդուխտ, էլ ի՞նչ

¹) Որոնեցէք. ²) փոքրիկին. ³) Զղջացել է.

ես պահում, մեր հոգին դուս ա եկել մանգալով, ոչինչ չի էլել. Թէ որ մի բան կայ, կամ երեխէն մօտիկ ա, կամ տեղը գիտես ու վախում ես աշխարայ անիլը, մեզանից մի՛ քաշուիլ. մենք խալֆի հետ էնէ երեխին հէնց կը պահենք, որ գլուլը սօյմիշ չի ըլիլ:[1] Ասա, Սանդուխտ, ասա, տեսնում եմ, որ մտքումդ մի բան ունիս. ես գիտեմ, որ դու Մանուկի երեխին քո հոգու պէս սիրում ես:

— Ճարս ի՞նչ, պտի ասեմ. Աստուած էլ գիտի, որ ես Վարդի սիրու խաթեր պտի տուած խօսքս քանդեմ. ես իմ ողորմածիկ Համասփիւռ խանումին խօսք էի տուել, որ ընչանք գրածը գլուխ գալը էս խորհուրդը ոչ ովի չասեմ, համա էլ ո՞վ ա մնացել, դուք էք իմ ումուդը:[2] Էս խորհրդին տեղեակ մնացել ենք ես ու իմ աղէն. նա էլ էն ա չար ճանապարհից ձեռ չի քաշում. ես մենակ ի՞նչ պտի անեմ: Հինգ հոգի գիտէին, ինչ որ երկու երեխեքանց համար Աստուած կամեցել ա. Համասփիւռ խանումը, Մանուկը, իր կնիկը, իմ աղէն ու ես. էն իրիքին Աստծանից կտրուած էր. մենք էլ, ես ի՞նչ գիտեմ, պտի տեսնի՞նք թէ ոչ. ասենք, ես իմ յոյս չեմ կտրել: Ձեր գլխովը պտիտ գնամ, մի՛ յիտացնէք, զորթ ա երեխէն սաղ ա, համա, ո՞վ գիտի, ի՞նչ փորձանքների կը հանդիպի, շուտ գտէք, վախենում եմ մրսի, ուրիշի ձեռ ընկնի ու մի հանդիպսի գայ:

— Էլի կմկմացնում ես, էլի չես ուզում մտքինդ բաց անել:

— Ասեմ, ասեմ, աչքդ մեռնիմ, տէրտէր ջան, մի փոքր ժամանակ գլուխը քաշարած մտածեց Սանդուխտն և մի առ մի պատմեց Կիւրակէի կաթուղիկէում արած ուխտը:

— Որ ըտէնց ա, հանգստացիր, երեխէն մեր տանն ա, հէնց էս սհաթս Թորոսի հետ էստեղ էին, դու շուտ հեռացիր, որ չգայ էստեղ քեզ տեսնի ու հետդ գալ ուզենայ, ընչանք տեսնենք ի՞նչ ա դառնում:

Պառաւը դեռ դուռը չէր բաց արել, որ Ղևոնդն ինքը տուն ընկաւ:

Սանդուխտն էլ տեսաւ, որ իր աղէն իրան չնկատեց, շուտով դռնէդուս:

Ղևոնդի աչքերն ուռած էին, երեսը կուք ընկած, մազերը

[1]) Չի թառամել: [2]) Յոյս:

ցից ցից: Նա երբէք այսպէս չէր եղած. նրա եղեռնագործութեանց ժամանակը առ հասարակ երեսի վերայ մի գազանային սարսափելի պատկեր էր նկարագրվում, իսկ հիմա աւելի հարբած մարդի, կամ ցիմարանոցից շղթաները կտրատած դուրս ընկած խելագարի էր նման, քան թէ չարագործի: Նա հոտրուած էր, նրա ձեռքերը դողում էին, նրա երեսի գոյնը պարզ ցոյց էր տալիս, թէ նրա ներսը պատերազմ է եղել և չէր կարելի նկատել, թէ ո՞ր կիրքը տեղի է տուել միւսին: Հազիւ կըպատահէր, որ Ղևոնդը դէմ ու դէմ տէր Յարութիւնի տանը գնար, կամ թէ Գէորգ խալֆին երևէր. այդ պատահել էր մի քանի անգամ նրա տանուտէրութեան միջոցին. նա միշտ փախչում էր այս երկու մարդկանց երեսին ուղիղ մտիկ տալուց, նա միշտ խոյս էր տալիս տէր Յարութիւնի աչքերից և Գէորգ խալֆի պատկառելի դէմքից:

Ոչինչ չխօսեցան տէրտէրն ու խալֆէն. երկուսն էլ սպասում էին հետևանքին:

Հա, մի քանի անգամ գլուխը ծանր բարձրացած անելով խօսեցաւ Ղևոնդը, շա՛տ էք զարմանում, իրաւո՛նք ունիք, ինչքան ձեռներիցդ կըգայ, առեցէք ինձ՝ մի անպէտք, մի վնասակար, մի մարդասպան, մի անխղճմտանք մարդի. ես ատուելուց աւել ոչինչ բանի չեմ արժան. գթութիւն, քաղցրութիւն, մարդասիրութիւն ինձ համար մեռած են. իմ թափել տուած անմեղ արիւնների ձէնը Աբէլի նման ինձանից Աստծուն գանգատ ա գնացել. ես պտի կայէնի պէս չօլէ չօլ, սարէ սար, ձորէ ձոր ընկած քաշ գամ, ես չպտի հանգստանամ, ես ոչինչ լաւութիւն չպտի անեմ. տերել մարդկանց բաղդաւորութիւնի վրայ, ուրախանալ ուրիշների անբաղդութիւնի վրայ: Ես հիմի եկել եմ ձեր առաջը ոչ թէ թողութիւն խնդրելու, ոչ թէ դարձ գալու, եա մեղքերս խոստովանուելու. չէ, ես անդարձ մեղաւոր եմ, քանի շունչս վրէս ա, ես պտի վնաս տամ: Ես մի խնդիրք ունիմ, նրա համար եմ եկել ղլ[1]) նման դուշմաններիս առաջին կաննել: Հա, դուք իմ արենարբու թշնամիքն էք, համա պտի խնդրեմ, պտի ոտներդ ընկնիմ, որ էս բանումը իմ աղաչանքս լսէք: Զորթ ա, իմ խնդիրքս կամքիս հակառակ ա, բայց պտի անեմ: Ճարունիք տեսէք, Մանուկի երեխին գտէք. սուտ ա, որ

[1]) Ծառայ.

տուամէն սպանած ա. Թուրքերն աչքից կորցրել էին, գտնէին էլ՝ ոչինչ չէին անիլ, իմ յիմարութիւնն էր որ Աստուծոյ հրամանը քանդել էի ուզում: Զորթ ա, ես կրտխրեմ, ես կը կատաղեմ, երբ որ էն երէխին տեսնիմ առաջիս մանգալուս. ես կուզեմ, որ գետինը պատռուի ու կուլ տայ նրան, բայց նրա կոխած տեղին էլ չեմ համարձակիլ դիպչել: Գտիր նրան, տէր Ցարութիւն, վեր կալ քեզ մօտ, մեծացրու, քո երեխեքանց հետ կարդալ սարվացրու, մարդ շինիր: Ես էլ հէր չեմ. էս օրուանից իմ մինուճար աղջկանը քեզ եմ տալիս, ասումա «հացը հացարարին տուր, մինն էլ աւելի». դու կարող ես, նրան էլ քո աղջկանց պէս մեծացրու, թող իմ կնիկս գերեզմանի մէջ ուրախանայ, թող նրա հոգին հանգստանայ: Վերջը նախրչի-գզիր Մանուկի տղին տուր իմ աղջկանս: Ես մեռած ըլիմ, թէ կենդան՝ խառնուելու չեմ. ձեր երկուսիցդ որը սաղ մնայ, իմ խնդիրս կատարեցէք: Ցեսէք բանը որ տեղն ա հասել. էս սհաթը դուք երկուսդ էլ իմ ազգ ու ընտանին էք, համա առաջին թշնամիս էք. ձեզ՝ իմ թշնամիներին իմ տալիս իմ երեխին: Շատ կարելի ա, էս րոպէիս խնդրածս կէս սհաթից կուզենամ քանդել, կուզենամ երկու երեխին էլ փչացնել, աշխարհքի երեսից վերացնել, որ ուխտը չկատարուի, որ մի օրից մի օր նախրչու—գզրի տղէն Թոլոսենց Գլոնկի փեսայ չդառնայ, բայց մի՛ վախէք. ինձ կապանեմ, սրտիս փուքը 100ի վրայ կը թափեմ, հազարին կանրադրչացնեմ ու էդ բանը չեմ քանդիլ:

Գէորգ խալիֆէն տեսաւ որ Գլոնկը դէպի յուսահատութիւն է դիմում, խղճաց նրա դրութեան վրայ ու առանց տէր Ցարութիւնի կամքը հարցնելու ասաց, որ երեխայն իրանց մօտ է:

Մի զառն ծիծաղ բարձրաձայն հնչեց Գլոնկի կողմից այս լուրին, նա աչքերը վեր բարձրացրեց և աւելի շփոթուած՝ օդի հետ խօսեց: —Ուրախացիր, արդար հոգի, դինջացիր, իմ Համասփիւռ, ինձ էլ դինջութիւն տուր, հեռացրու քո կնճռած երեսդ ինձանից, հերիք ա, էլ մի՛ երևալ, քո փափագդ կատարուեց, քո փեսացուն ապահով տեղ ա, աղջեկդ տէր Ցարութիւնի տանն ա:

Սանդուխտը տուն հանելուն պէս ծառայիցը լսեց, որ աղէն դուրս գնալուս հրամայել է իրեն շուտով Մանուշակին տանել տէր Ցարութիւնենց տունը:

Պառաւը խեղճը հասկացաւ, գրկեց երեխային ու յետ դարձաւ:

Վարդն ու Թորոսը պարտիզում խաղալուս նկատել էին Սանդըխ-

տին Մանուշակին գրկած Թանաքին մտնելուս: Միանուագ համարեա երանք էլ պառաւի քամակից վազէվազ տուն ընկան:

—Էլ ես էստեղ գործ չունիմ, ես օտար եմ, ասաց Գլոնկն ու բռնեց երեք երեխաներին էլ համբուրեց և առանց մի բարեւի դուրս ընկաւ:

ԻԲ.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

—Էս լաւ բան միտս եկաւ այ, հոգուս էլ վարձք ա, մանթերը[1] մեր տանու գործին էլ պէտք կըգան. հագեր պարապ վախտ ա, աշխարհքն էլ հանդարտութիւն, բեր մեր գոմի օդումը մի քանի երեխէք հաւաքեմ կարդացնեմ, ժամումը փոխ էլ ա կասեն, մոմ էլ ա կը բռնեն, քանց ընչանք իրիկուն քուչեքումն ու կալերումն են իրար միս կըծոտում, թող մեր դրսի բակումն ու գոմի օդումն էնքան մին մնի գզուեն, որ բեզարին[2]:

Տէր Ցարութիւնն էլ շատ միտք չարեց. մի քանի օրումը նրա տունը մի ուսումնարան դարձաւ: Երեխեքանց որի ձեռը մի տախտակի կտոր տուեց, վըէն մի քանի տառեր գրեց փայտէ գրչով, որին մի եզան կամ կովի թիակի ոսկրի վրայ մի տիձորի բերանից յետ արած զագել[3] կապեց շլինքը քցեց, մի երկու տառ էլ նշանակեց. միկին մի պապենական հին օճաղից մնացած բոխի կամ պանրի աքաշի[4] բերանին ծածկած՝ ափները մկան կրծոտած, մէջ միջին սևացած՝ ապուխտ դառած քերական որ է այբենարան տուեց: Մի քանիսն էլ, որոնք որ չորս հինգ տէրտէր—վարժապետ էին փոխել, մի քանի տարի միութ կանոն քրքրուած, կազմահան էլած սաղմոս էին կռնատակներին տարել ու բերել, ամառը գնացել իրանց հօրթերը հանդումն արածացրել, կամ գութանաւորին հաց տարել, ձմեռն էլ յետ եկել տէրտէրենց տունը զուիրը բերել[5], էպպէսներին էլ տէր Ցարութիւնը էլի էն գզգզուած Սաղմոսը տուեց ձեռքները և հրամայեց որ էլ յետ գլխիցը սկսեն իրանց «Ն—րա—նեալ. է—այր» և այլն:

1) Աշակերտ. 2) Ձանձրանան. 3) Այծի մազից բարակ պարան. 4) Աման.
5) Ձանձրացել.

— Էլ ըստուց յետոյ մեր գոմի օջէն ձմեռները մարդիկ չգան հաւաքուին մասլահաթի. դրա համար Գէորգ խալֆենց օջէն հեռբէք ու. հիմի ես մնթեր պտի կարդացնեմ:

— Աղջի Սուսամբար, խորհուրդ արեց տէրտէրը իւր տիրուհու հետ, արի մեր աղջկերքին էլ կարդացնենք. Մանուշակն էլ թող երեխեքանց հետ խառնուի:

Տէրտէրի օրինակին մի քանիսն էլ հետևեցան. նրանք էլ ուզեցան իրանց աղջկանցը կոյս շինել:

Պէտք է ասել, որ աշխարհիս կոյր ժամանակն էլ, եթէ մեր պատմութիւնն իմաստասիրուի, պարզ կարելի է տեսնել, որ մեր կանացի սեռն էլ զուրկ չի մնացել ընթերցանութիւնից:

Եթէ մեզանում կուսանաց վկայարաններ չեն եղել, առանձին իգական միաբանութիւն չի կազմուել, բայց և այնպէս մասնաւոր ընտանեաց մէջ գտնուել են ամէն ժամանակ իրանց աղջիկներից մէկին զանազան պատճառներով կոյս, կամ ինչպէս սովորաբար կոչում են, վ ա ր պ ե տ շինողներ:

Մանուկ աղջիկը մի տէրտէրի մօտ քանի մի տարիներ քարշ գալով՝ սովորել է մի քանի եկեղեցական փոխեր ու սաղմոսներ, անգիր է արել «Ե կ ե ս ց է ն», կամ իրանց գիւղումը գտնուած անապատ կոչուած ուխտատեղի բանալին է մօտն առել, այն մատուռն սպասաւորել, երեկոյ առաւօտ լոյս վառել և կամ իւր հօր տանը նստած՝ միշտ եկեղեցի է յաճախել և գիւղի կանանցը ծառայել մի սրբի սէր հաւաքս անելու, կամ թէ խեղճ անտէրներին այցելութիւն անելն է ընտրել իրան նպատակ:

Այսպիսի վարպետներ, կամ կոյսեր մինչև այսօր Հայաստանի շատ գիւղերում կարելի է տեսնել: Մի գիւղ մտած՝ երբեմն օտարականի աչքին ընկնում է մի կին սև և համեստ հագուստով, գլուխը տեղացի կանանցից կամ աղջիկներից բոլորովին տարբեր մի սուգ թաշկինակ կապած: Այդպիսի կնոջը ամէն մարդ էլ կարող է ճանաչել. սովոր աչքերը կասեն, որ սա այն գիւղի վարպետն է: Նա չի հագնիլ վերարկու, ինչպէս հագնում են այժմ մեզանում մի քանի հայաբնակ քաղաքներում գտնուած կուսանքը: Նրա հագուստը, համարեա, նման է իւր գիւղի կանանցը, բայց իւր սև գոյնովը և բաց երեսովն ու ազատ շարժուածքովը, այդ կնամարդը ցոյց է տալիս իւր վ ա ր պ ե տ ու թ ի ւ ն ը:

Մեզանում ամէն մի կին կը փախչէր քեզանից, եթէ նրան մի

հարց անելու լինիս, երեսը շուռ կը տայ, նշանացի անելով պատի հետ կը խօսի, քո պատասխաններդ պատի կամ քարի ձեռքով կը տայ. իսկ վարպետը մի պարկեշտ վստահութեամբ կը կանգնի դիմացդ, ուղիղ երեսիդ կը նայի, ազատօրէն և խոնարհաբար կը պատասխանի և ամենայօժար կամքով կը ցուցանի քո խնդրուածքդ, եթէ այդ բանումը մի մարդասիրական ծառայութիւն կայ անելու:

Եթէ դու օտարական ես, քո խնդիրդ է որ և է անձի տունը ցոյց տալ, վարպետը քեզ ուղեցոյց կը լինի. եթէ դու գիշերելու տեղ ես խնդրում, նա քեզ կը տանի իւրեանց տունը և հայերին յատուկ հիւրասիրութեամբ կը պատուասիրի, իսկ եթէ իրանք աղքատ են, տեղ չունին, նա քեզ կառաջնորդի մի ունեւոր մարդոյ տուն: Վարպետի համար փակ դուռը չկայ. նա ամէնքի տան անմիջական անդամն է, նրան բոլորը ուրախութեամբ ընդունում են, նրան ոչ ոք չի բաց ասիլ, ընդ հակառակն գլխի վերայ տեղ կը տան վարպետի բերած հիւրին:

Ահա հիմա էլ տէր Յարութիւնի մօտ մի քանի հայրեր ուրախութեամբ բերին իրանց աղջիկներին վարպետացուք պատրաստելու:

Ամէն մի երեխայ բերել էին իրանց համար մի խուզած ոչխարի մորթի, կամ մի կոտր թաղէք, կամ մի հին, մաշուած, քրքրուած, տասը տեղից գիւլթահներով կարկատած փալաս, քցել էին իւրեանց տակը և գոմի օդումը կարգով շարուել: Գիւղի միւս ծայրից կարելի էր լսել մանուկների ձայնը, որոնք բարձր բարձր իրանց դասերը սերտում էին:—բ Ե՛ն—ա՛յբ—բ ա՛, բ Ե՛ն—Ե՛չ—բ Է՛, բ Ե՛ն—Է՛—բ Է՛ գրել է մինը.—ա՛յբ—շ ա՛—ա՛շ, խ Է՛—ա՛յբ—խ ա՛—ա՛շ խ ա՛, տ ի՛ ւ ն—վ ո՛—տ ո՛, ա՛շ խ ա՛ տ ո՛, ղ ա՛ տ—ա՛յբ—ղ ա՛—ա՛շ խ ա՛ տ ո՛ ղ ա՛, կ Ե՛ ն—ա՛յբ—կ ա՛, ա՛շ խ ա՛ տ ո՛—ղ ա՛ կ ա՛, ն ո՛ ւ—ա՛յբ—ց ո՛—ն ա՛ ց, ա՛շ խ ա՛ տ ո՛ ղ ա՛ կ ա՛ ն ա՛ ց, ձգում է միւսը:

Տէրտէրն էլ ծանրագոգոթ [1]) մի հաստ մորթի իր տակը ձգած վերին անկիւնումը, հանել է իւր պարսկական լայնաբերան նամանիքը [2]) բազմել ծալապատիկ ու մի կակուղ սերկևիլի ճիպոտ ձեռքին բռնած՝ դաս է տալիս: Այս րոպէիս նա իւր վարժապետական վեհ պաշտօնի մէջն է:

1) Փքուած. 2) Կօշիկները.

Զօրում է հինգ վեց տարեկան տղայ կամ աղջիկ աշակերտը մեր տէր վարժապետի առաջին և բռնելով տէրտէրի լրան ձգած ճիպոտի ծայրը, պատասխան է տալիս հետևեալ հարցերին:

Տէրտէր. Էս որտեղից ա եկել:

Աշակերտ. Դպրատնից:

Տէրտէր. Ի՞նչ ա բերել:

Աշակերտ. Խելք ու խրատ:

Տէրտէր. Դէ ծերը պաչէր:

Դողդողալով համբուրում է հլու աշակերտը ճիպոտի ծայրն ու կուչ գալիս: Նա սպասում է տէրտէրի սովորական խօսքերը լսելու: «—Օրհնեալ է փայտն, որով լինի արդարութիւն». ասում է տէր հայրը և մի թեթև հարուած էլ միջքին խփելով, աւելացնում. «որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ»:

Այս ամենօրեայ բնաբանն է դաս սկսելու. որից յետոյ երեխայն կարդում է իւր դասը:

Վա՜յ նրան, ով իւր համարը անգիր չգիտէր. յանկարծ կը կպչէր նրա միջքին ճկուն սերկևիլի ճիւղքը և դիպած տեղը կը կապտացնէր: Այսպէս հետզհետէ միմեանց քամակից կը փշրուէին մահակները աշակերտի բոբիկ, կամ թէ ծակ ջորաբներով պաշտպանուած ոտքերի վերայ, մինչև որ տէր հօր կամքը կը լրանար, մի երկու անգամ հօր կողքերն էլ կօրհնէր քաղցր խօսքերով և կասէր.—գնա, կորի, տեղդ նստիր, էլ յետ էս օրուան դասն եմ թողում, թէ որ էգուց ջրի նման չես կլլացրել, մենծ թիքէդ անկաջդ կը թողամ:

Կարգով անուշ կանէին ամէնքը առանց բացառութեան միևնոյն կերակուրը և կսպասէին էգուցուան մեծ թիքէն ականջը ղառնալու: Բայց եթէ մէկը սաստիկ շարժէր տէր հօր բարկութիւնը, մահակների զօրութիւնը նրան զգալ տալուց յետոյ տէր Յարութիւնը կը չոքացնէր նրան բաց ծնկներով խոշոր աւազի վերայ, փէշերքին հող կը լցնէր և կը կնքէր գիւղի ցորեն կնքելու կնքով, որ այս միջոցին միշտ իւր մօտ էր պահում: Թող արինն աչքի առաջն առնի այն աշակերտը, որի փէշերքի կնիքը քանդուել է. ինչ անենք, որ ծնկների վերայ մի քանի նկարներ են կազմուել, պէտք է համբերի, թէ չէ ապագայ պատիժն աւելի խիստ կը լինի:

Հէնց էս երկիւղն էր, որ երբ մի օր մի փէշերքը կնքած երեխայի մօտից տէրտէրենց պոչը ծաղէկ շունը ցած բերեց պատի վերայ

կախ արած մի լոտ միսը և քարշ տալով տարաւ մի անկիւնումը երկու թաթերի մէջ բռնած մաքրազարդեց՝ պռօշները լիզելով, նա մեր պատժուած երեխան ոչ միայն տեղից չկանգնեց շանը արգելելու, բերանն անգամ չշարժեց և շան վրայ չը բարկացաւ. ինչ անէր ողորմելին, ահը շատ էր՝ քան թէ մահը: Տէր Յարութիւնը շատ էլ նեղացաւ իւր միջին երեխի վրայ, բայց լեզուն բուն դրեց. Մեղաւորն ինքն էր:

Մենք չկարծենք, ընթերցող, որ տէրտէրը այնպէս վարվում էր իւր քարասրտութիւնից: Ընդհակառակն նրա սիրտը ցաւում և լերդը խաշվում էր ամէն մի երեխայի կսկիծը լսելուս. նա պատժուողից աւելի էր մորմոքում: Բայց այդ նրա և ընդհանուրի հայեացքն էր ու համոզմունքը, թէ մինչև երեխայն չպատժես, նա մարդ չի դառնալ: Մինչև էս օր էլ եթէ գիւղական բարեխիղճ վարժապետներից մէկը քաղցր վարուեց իւր սաների հետ, նա մեղադրանաց առարկայ կը դառնայ գիւղացիներից. այդ նշանակում է, որ այնպիսի ուսուցիչը գլուխ չի դնում, չի աշխատում, երես է տալիս. էլ այդպիսի վարժապետին ով երեխայք կը յանձնի:

— Միսը քեզ, ոսկոռն ինձ, տէր հայր ջան, ջարդիր, սպանիր, հոգին հանիր ու մարդ շինի՛ր սրան. այս առաջին յանձնարարական խօսքերն են ամէն մի իւր որդու կրթութեան համար հոգացող հօր:

— Միամիտ կաց, իմ ճիպոտի զօրութիւնը հէնց էս օր կը փորձի դա, էլ իմ ճանկից դուրս չի պրծնիլ, հալեմ, մեղրամոմ շինեմ: Ա՜յ տես ինչ լաւ տղայ կը դուրս գայ սա:

Իբրև ապացոյց իւր խօսքերին՝ առաջին ուսումը հօր մօտ էր տալիս տէրտէրը—ճիպոտի ծայրը համբուրել ու դրախտից դուրս եկած լինելը հասկացնելը:

Սարսափը կը բռնէր այն երեխայի, որի հայրը վճռաբար կասէր.—վերկաց գիրքդ վեր կալ, գնանք տէրտէրի կուշտը, քեզ աշկերտ եմ տալիս: Մանկան լեզուն բացուած օրից տէրտէրովն են վախացրել. Լաց լինելիս—«տէրտէրը կը գայ անկաջդ կը կտրի» ասել են, ու հիմա այն երևակայական սպառնալիքը իրողութիւն է դարձել. Գլուխը քաշ ձգած՝ արտասուքը ծածուկ թևով սրբելով գնում է երեխայն հօր քամակից: Եթէ կարող է, թող հակառակի. էնպիսի մի քացի կը կպչի նրան, որ չորս կողքը միասին կը փշրուէին: Էլի ուսումնարանումը եթէ ծեծը կայ, ընկերակիցներ էլ շատ կան, որոնց

ցից նա լսել է, թէ ինչ խաղեր են անում, երբ որ տէրտէրը գնում է իւր քահանայական պաշտօնին, թէ ինչպէս անասնոց չորացած աղբի փշրանքներ են շաղ տալիս իրարու վրայ, ինչպէս մուրճնե-րումը տափկենալուկի են խաղում, ինչ փոշին բարձրացնում օդի մէջ, ինչ հաճոյքով երեք չորսը միասին հեծնում են գոմումը կապած տէրտէրենց էշերի, կամ գոմէշների ու եզների վերայ։

Այս ամէն վայելչութիւններն երեխայի սրտի վերայ գիւթա-կան զօրութիւն են անում և աւելի ընտրում է նա տէրտէրի սեր-կեւիլի ճիպոտը, քան թէ հօր աքացիները։

Եթէ տէր հայրը իւր կողմից իւր աշակերտների հետ խիստ էր վարվում, նրանք էլ պակաս չէին թողնում, նրա օգնիցը գալիս էին։

— Գասպա՛ր, արի՛ դասդ ասա՛, հրամայում էր տէրտէրը մեկին։

Գասպարը շատ ծանր ու ակամայից է շարժվում։

— Այդ՛ա լակոտ, ինչ ես պստի հարսի պէս նազով ժաժ գա-լիս, ոտներիցդ քրեհ են ուզո՞ւմ, արի՛ էլի՛։

Գասպարը իբրև թէ չի լսում էս խօսքերը, մինչև մի ոտքը փոխում է, տէրտէրի հոգին դուրս է գալիս։

— Ջրի՞ թէ դաս չես սերտել։

— Գիրք չունիմ, փնթփնթում է Գասպարը այնքան կամաց, որ ես ու դու կողքին եթէ կանգնած լինէինք, չէինք լսիլ, բայց տէր հօր ականջները շատ սուր են։

— Ի՞նչ ես արել գիրքդ։

Երեխայն շատ լաւ գիտէր, որ ինչ փաստ էլ բերէր, դիցուք սաղ էլ որ կորցած լինէր, պէտք է մինչև տէրտէրի քօթակը և եղանի կորկոթները չուտէր, անկարելի էր գործը ուրիշ կերպ փոխել․ էդ պատճառաւ էլ լուռ կը մնար և չէր պատասխանիլ։ Բայց երբ ա-կանջների արմատները տաքացան, ձեռները մրկացին, մի փունջ մազ էլ գլխից տէրտէրի ձեռքին մնաց, նոր գոռալով կսկսէր ար-դարանալ ու իւր հնարած ապացոյցները մէջ բերել, որից յետոյ տէր հայրը թոյլ կըտար։

Արդարանալու պատճառը միշտ պատրաստ էր և շատն էլ խո-կութիւն։ Ո՞ր տանը չըկար փոքրիկ երեխայ։ Մեր Գասպարը, կամ Ղազարն ու Ղուկասը կը տար իր անտրակը իւր փոքր քրոջը կամ եղբօրը, կը սովորացնէր նրան, որ իւր հօր, կամ մօր մօտ յան-կարծ ձգի վառած թոնրի մէջ, կամ բաց անի տան անկիւնումը դրած հայրենական սևացած թանի կամ բոխի աքաշի բերանը ու

մէջը քցի, որտեղից մինչև դուրս կը հանէին, եղած թերթերն է՛լ կը փտորուէր, կը թափուէր։ Բայց եթէ իւր հօր բաղդից նրանց տանը փոքրիկ չկայ, ինքը քուչումը տուն գնալուս, իբր թէ յանկարծ ոտքը քարին կ'առնէր, վայր կընգնէր ու իւր գիրքը ձեռքիցը կը թռչէր կընկնէր Աշտարակու գոչգոչելով վազող սրընթաց առուի մէջ, և դու հիմա մարդ բե՛ր, որ նրա գիրքը բռնի։ Նրա ընկեր վկաները Գասպարից շուտ նրանց տունը կը վազէին, հօրն ու մօրը իմաց կը տային, դեռ իրանց կողմից մի բան էլ կաւելացնէին իւրեանց դասընկերին պաշտպանելու համար․ կովը գիպաւ, վէր քցեց, կամ մի ուրիշ այսպիսի յարգելի պատճառ կասէին. էդ վկայութիւնը ոչ միայն Գասպարենց տանը, տէրտէրի մօտ ևս կը կրկնէին, բայց առաջին անգամը ինչպէս ասացի, չէր օգնիլ, մինչև նա իւր հօր ու տէրտէրի մի քանի ապտակը չըվայելէր։ Այնուհետև մինչև նոր գիրք առնելը կամ նոր տախտակ շինելը մեր Գասպարը գիժ մօլի էր, ու-սումնարան գալիս էր միայն իւր հաճոյքի համար։

Այնպիսի խնլօքներն էլ լինում էին, որ այդ գործողութիւնը տարին մի երկու անգամ էին բանացնում։ Առաջին պատժից ազա-տուելու համար հնարք գտնում էին. ամառը այգիներում թփերի միջին էին երկու երեք օր թաքչում, իսկ ձմեռը իւրեանց դատարկ ցորնի հորերումը. և ինչ կարծիք, որ իւրեանց համար նախապէս պաշար վերցնում էին։ Խեղճ ծնողքն էլ շատ որոնելով յուսահա-տութեան էին հասնում։ Վերջապէս երբ որ գտնում էին, ոչ միայն իւրեանք էին ներողամիտ գտնվում, տէրտէրին ևս աղաչում էին այս անգամ բաշխել, որ չլինի թէ միւս անգամին աւելի վտանգաւոր միջոց ձեռք առնին։

Տէրտէրն էլ այդպէս ժամանակը շատ հեռու չէր ընկնում։ Գա-րապ երեխաների համար էլ իւրեանց տանը գործ կայ, մանաւանդ՝ եթէ նա շատ հասակաւոր է։ Տաւարի տակը պէտք է քերուի, մաք-րուի, նրանց աղբը շալակով կալը պէտք է տարուի, բասմա [1]) քցուի, որ մինչև ամառ չորանայ, աշնան դէմը կտրեն, միւս ձմեռուան հա-մար վառելիք շինեն։ Այգուցը շալակով ցախ պէտք է կրուի, ամէն երեկոյ մարագից խոտ ու ղարման պէտք է բերուի անասունների համար։ Տէրտէրը հասակաւոր որդի չունէր, մի հօտաղն էլ էսքան

[1]) Տաւարի աղբը ձմեռը փռում են կալումը մինչև ամառը չորանում է, յետոյ կտրում են վառելիքի համար։ Այս է բասման։

գործը չէր կարող կատարել. գիրք ունեցող աշակերտներն էլ պարտական էին իւրեանց վարժապետին օգնել, ո՞ւր մնաց անգիրքները. նրանք պարապ են ու պարապ:

Ամառը մանաւանդ, ամէնքը միասին կերթան վաղ առաւօտեան իրանց դասերը կասեն. գիտեն չգիտեն, գրքերը կռնատակները կը դնեն, կգնան տէրտէրենց այգումը քար ժողովելու, խչմար [1]) տալու, խոտ հնձելու. ես ի՞նչ գիտեմ, հազարաւոր գործ կայ կատարելու: Ծոյլ աշակերտներին մեր տէր հայրը գործը պրծնելից յետոյ տուն էլ չէր թողնում գնալ. իւրեանց հօրթի չաթուովը [2]) պինդ կապում էր մի ծառից, որ դաս սովորի ու ինքը գալիս մի ծառի հովում քնում իւր համար. երբ որ նա իւր քունը թափեց, կրկին յետ էր անում մեր կալանաւորութիւնն ու էլի բանացնում:

Միայն տղայքը չէին տէր հօրը պէտք գալիս. աղջկանց համար էլ նրանց տանը միշտ գործ կար. նրանք էլ տներն էին աւելում, ջուր բերում, խմորին օգնում և այլն:

Եւ ահա այսպէս մեր տէր Յարութիւնը վարժապետ էլ դառաւ, ուր սովորում էին Թորոսը, Մանուշակը և Վարդը:

ԻԳ.

ԽԱՉԱՐՁԱՆՆԵՐ:

Հայոց աշխարհի նշանաւոր գիւղերը կամ աւանները եթէ պատմութիւնն էլ մոռացած լինի իւր էջերի մէջ տեղաւորելու, մի բանասէր ինքը կարող է նրանց պատմութիւնը գիտենալ, եթէ սկսի ման գալ այդ գիւղերը:

Ոչ միայն ներկայ աչքի առաջ եղած տեղերն ունէին իրանց անմեռ պատմութիւնը՝ վանքերի, աշտարակների և աւերակների վերայ փորագրուած. շատ ամայի դաշտեր էլ մի տեսակ յիշատակարան ունէին: Մի քար, մի բլուր, մի այր գոնէ կը գտնուի, որ տեղից մի նորութիւն լոյս կը տեսնի. քարը շրջի՛ր՝ վրէն մի արձանագրութիւն կը գտնես, այրը մտի՛ր՝ մի հնութիւն դուրս կը բերես, բլուրը քանդի՛ր՝ մի բան կը գտնես: Շատ ժամանակ չի անց կացել, Բիւրականայ մօտ ամայի դաշտումը դուրս եկաւ Արտաշէս Թագաւորի

[1]) Նեցուկ. [2]) Պարան:

սահման դրած քարերից մինը և հիմա տնկած է Բիւրականայ եկեղեցու մօտ: Եթէ այս վերոյիշեալ հնութիւններն էլ չարժելու չլինէր, բաւական են մեզ գերեզմաններն ու խաչարձանները: Շատ քիչ գիւղ կը լինի, որ տեղ մի տապանագիր մի հնութիւն չքարոզէ. իսկ խաչարձանները պարզ ցոյց են տալիս, որ այս տեղ՝ իրանց տակին թաղուած են այս փոքրիկ աւերակի՝ երբեմն դուցէ չէն քաղաքի իշխաններն ու պատուաւոր անձինքը:

Ի՞նչ է Եղվարդը.—մի փոքր գիւղ՝ մի քանի տուն հայերից կազմուած. բայց մտէ՛ք եկեղեցին, մտէ՛ք այն տեղի հարիւրաւոր խաչքարներին և ինքդ կը պնդես, թէ այս տեղ մի ժամանակ նշանաւոր տեղ է եղել: Դեռ գիւղը չմտած՝ հեռուից աչքիդ ընկնում են պատերազմի պատրաստուած՝ կարգով կանգնած զինուորների նման խաչարձանները: Ինչքան որ ցրեկը սրանք մարդի սիրտն են քանդում, մի պարզ լուսաւոր գիշեր հիացնում են նայողին իրանց հրաշալի տեսքովը: Օտարականը առաջուց կը սարսափի էլ, կը կարծի, թէ արդարև պատերազմի դուրս եկած բանակ է, որ սպասում է թշնամու հետ ճակատամարտելու: Մի փոքր վախը սովորն էլ իւր աչքի տեսածի վերայ կը կասկածի: Աւելորդ թող չը լինի վերցնել մի զուարճալի դէպք, որ մինչև էս օր միմեանց աւանդելով ուրախութեամբ պատմում են Աշտարակեցիք Եղվարդի խաչաքարների մասին՝ իմ պապիս հետ պատահած:

Լուսահոգի տէր Առաքելը, ասում են, շատ բարձրահասակ և պարթև մարդ է եղել. Նրա արտաքին տեսքը ուրիշներին սարսափ է բերել, բայց ինքը մի երեխայի չափ սրտապնդութիւն չի ունեցել: Դա հովուելուս է եղել Աշտարակը և Եղվարդը՝ երկու միմեանցից ոչ հեռի գիւղերը: Մի կիւրակէ առաւօտ՝ արևի ցօղը դեռ չծգած՝ գնում է Եղվարդ պատարագելու: Աշտարակն անցնում է ու առաւօտեան ժամերգութիւնն սկսում, որ մէկ էլ իրան ոտքերին ու գիւղացիներին նեղութիւն չտայ ժամումը երկար կանգնելու. ուղղակի գնայ ու պատարագն սկսի:

Երբ որ անցնում է այն բլուրը, որ տեղից Եղվարդը իւր խաչարձաններովը երևում է, տէրտէրի աչքը յանկարծ ընկնում է խաչքարների վերայ, որոնցից առաւօտեան կարմիր արևի ճառագայթները տարածել են երկայն ստուերը դէպի արևմուտք՝ իւր ոտքի տակը:

Խեղճ քահանայի աչքերը շաղվում են, կայծակի արագութեամբ

մտքումը ծագում է, որ սրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ լեկզիների հեծելազօր, որոնք գալիս են ուղիղ Աշտարակը թալան [1]) տալու:

— Ա՛յ տղայ, փախի՛ր, մտածում է տէր հայրը և ինչքան ոտքերի ոյժ կար իւր մէջ, երկու էնքան էլ սարերի եղջերուներից է փախ տանում ու գիւղն ընկնում:

— Ձեր տունը չքանդուի, գլխներիդ ճարը տեսէ՛ք, հէնց հիմի լեկզին գեղը կը լցվի, էլ թիւ ու համար չկայ՝ էնքան շատ են:

Ասած ա չալ օձը տեսնողը չալ չաթուից [2]) կը վախի. մեր գիւղացիք էդպէս բաներ միշտ տեսած՝ էլ ինչ կսպասեն. ունեցած չունեցած, ինց որ լինի, պահոտում են ու բերդաթաղը հաւաքվում, զէնքերը ձեռքին սպասում:

Օրը ճաշ է դառնում, ոչ ոք չի երևում:

— Տէրտէ՛ր, սխալուել հօ չե՞ս:

— Գիժ էք, ի՞նչ ա, հանաք մասխարութիւն հօ չի՛, ես իմ աչքովս տեսայ:

— Բա՛ս երևում ա, խեղճ Եղվարդցոնց վրայ են թափել, վըճռումեն գիւղացիք, նրանց են թալանել, գնանք օգնենք:

— Մի մասը մնում է գիւղումը, միւսը ձիաւորվում, տէրտէրին էլ հետները տանում:

Տես, թէ որքան է խանգարուած լինում տէրտէրի երևակայութիւնը. ինչպէս հասնումեն նոյն տեղը, որ տեղից ինքը յետ է դառել, գտնում է.—տօ տնաքանդնե՛ր, արինն աչքներդ կոխել ա՞, գլխներիցդ ձեռն էք քաշե՞լ. ո՞ր էք գնում, հրէ հա՛, տեսնում չէ՞ք:

Ցոյց է տալիս խաչարձանները տէրտէրն ու ինքը իւր ձիու գլուխը կրկին դէպի Աշտարակ յետ դարձնում:

Աւելորդ է ասել, թէ ինչպէս ծիծաղ է բարձրանում, թէ ինչքան կոտրվում է ինքը տէրտէրը, երբ որ տեսնում է, թէ իւր սիրտը ճաքեցնող լեկզիքը այն խաչքարերն են, որոնց վերայ էր կեանքումը հազար անգամ «հոգւոց» կը լինի ասել:

Ահա այս խաչքարներիցը ամէն տեղում կը գտնես Հայաստանումը. որանցից բաւականին կան և Աշտարակի զանազան ժամանակներում կանգնացրած:

Սոցա մէջ մինը կայ, որ Մողնուց իջնելուս ամէնից յառաջ դիմաւորում է եկւորին: Մի սև քարարձան է սա, մէջ տեղը մի

[1]) Աւար: [2]) Պարան:

ծակ պատուհանով, որի պատճառաւ Ծակ խաչ է կոչվում գիւղացիներից: Նա թէպէտ շատ հին չէ, թէպէտ շատ հետաքրքրական չէ, բայց այս րոպէիս մեզ համար շատ կարևոր է:

Ամէն մի Աշտարակցի քեզ կասի, որ սրանից 20—25 տարի յառաջ մի ալեզարդ կարճահասակ ծերունի բարձրաստիճան հոգևորական՝ մի քանի իշխանների ներկայութեամբ, հոգևորական դասի հետ շուրջ բոլորած այդ խաչարձանին՝ հոգեհանգիստ էր կատարում: Բարեմաղթութիւնները վերջանալուց յետոյ՝ ինքը զգայուն ծերունին երկար ժամանակ ծունկ չոքած այս արձանի առաջին, գլուխը խաչքարի մի անկիւնին կպցրած՝ աղօթում էր անմռունչ: Բոլորը լուռ էին, ոչ ոք չէր խանգարում խաղաղութիւնը. ամէնքն ակնածութեամբ սպասում էին: Վեր կենալուս ներկայ եղողները նկատել են այդ պատկառելի մարդու մանր և խոր աչքերից գլորուող արտասուքների կաթիլները:

Այս վեհ անձնաւորութիւնը երջանկայիշատակ Ներսէս հինգերորդ Աշտարակեցի կաթողիկոսն էր, ընթերցո՛ղ, որ երկար տարիներ պանդխտութեան մէջ տարագիր լինելուց յետոյ՝ եկել էր իւր կարօտը լցուցանել իւր հայրենի գիւղում ամփոփուած՝ իւր հօր մեզ նախածանօթ տէր Յարութիւնի գերեզմանից: Ահա այս Ծակ քարի տակին է հանգչում Աշտարակու պաշտպան հոգևորականը, գիւղի տէր ու տիրականը, Գէորգ խալֆի թև ու թիկունք տէր Յարութիւնը:

Մեր պատմութեան տարին այս խաչքարը չկար: Սորա տեղը ամայի քարքարուտ անապատ էր՝ Աշտարակու հասարակաց գերեզմանատանից բաւականին հեռու: Թէ ինչի՞ համար տէր Յարութիւնը իւրեանց յատուկ գերեզմանատանը չի թաղուել, կամ հասարակաց հանգստարանից դուրս է ամփոփուել, մեզ յայտնի չէ:

Բայց եթէ այն ժամանակը գարնան լաւ օրերից մէկում, մի կիւրակի առաւօտ մինը Մողնուց իջնելու լինէր և աչքը դէպի արևելք դարձնէր, կը գտնէր այս անապատի մէջ մի նոր հողակոյտից կազմուած անշուք գերեզման՝ երեք հասարակ քար վրէն ցցած: Գերեզմանի վրայի նոր մոխիրը և փափուկ հողը պարզ ցոյց էին տալիս, որ այս դամբարանը շատ ժամանակ չէ կապուած է: Իսկ գերեզմանի շուրջը հաւաքուած՝ սպիտակ ծածկոցների մէջ կոլոլուած մի խումբ կանանց սգալուցը երևում էր, որ այսօր երկրորդ օրն է

Աշտարակը գլխուել է իւր անձնազիր հովուից՝ իւր սիրելի և յարգելի տէր Ցարութիւնից։

Մոխիրը դեռ նոր էր, դեռ ամրացած չէր։ Այդ նշանակում էր, որ տեղական սովորութեան համեմատ Թաղման երեկոյին ծուխ են դրել գերեզմանի վերայ, որ իւրեանց հասկացողութիւնովը, իբր թէ, քաւթառը ¹) չգայ ու գերեզմանը չփորի, մեռելը չհանի։

— Աղջի՛, Մագթա՛ղ, փսփսաց մէկ կին իւր մօտ չոքած կնոջ ականջին, քամբաղ տէրտէրակինը քօռացաւ լացըլելով, հասկացրա՛ւ Գէորգ խալֆի կնգանը. հերիք ա, թող յետ քաշի։

— Խորիշան խանում, քամակից ծածկոցը քաշեց Մագթաղը, հերիք ա, էդ խեղճը ձեռաց գնաց։

— Տէրտէրակին ջան, դէ բօլա, քեզ մատաղ, քո եթիմներին ²) քո Թորոսիդ, կարապետիդ խեղճ արի, լացով ոչինչ չենք շինիլ, դրա աղօթքը բարեխօս ըլի իր երեխեքանցը, նրանց սայլցն ³) էլ մեր գեղին։

Թողէք, ձեզ ղուրբան, իմ տէրտէրիս իգնա հողէքն ⁴) ա, Թողէք մի մուրազս առնիմ սրանից. աղջի՛, սա ձեր որին չի հէրութիւն, տէրութիւն արել. ծտի ձուտ հօ չենք կորցրել, երգում էր ողբաձայն տէրտէրակինը՝ երեսը հողակուտին քսելով ու գլխին խփելով։

— Դէ հերիք ա, տէրտէրակին ջան, էլ յետ ողբաձայն կցում էր մի ուրիշ կին, ա՛յ ջուրը գայ քեզ էլ տանի, մեզ էլ... տէր Ցարութիւնի տեղն ո՞վ կըբռնի, հացողները նրա ոտի պճեղը չամեն։

— Ա՛յ քվերտինք, ա՛յ մերիր, կացէք մի բայաթի էլ ասեմ ու յետոյ տեսնիմ ինչ սև եմ տալիս իմ գլխին, սկսում էր տիրուհին. ես հիմի սուն կերթամ, էլ՝ ալամ ⁵) կը հաւաքուին, ինձանից կը հարցնեն, թէ՝

---

¹) Քաւթառ զիւղացւոց հասկացողութեամբը մի հարս է, որ բոլորովին մերկ տանից դուրս է եկել և քաւթառ քօսի է դառել. դրան ասում են և մարդագայլ. նա փորում է նոր գերեզմանները և ուտում մեռելի միսը, կամ թէ մտնում գիշերները տները և երեխայք գողանում։ Ամէն մի ջահել կնամարդ եթէ մերկացած տանից ոտքը դուրս դնի, նա կը դառնայ քաւթառ, որ ասել է բոլենի.

²) Որբերին։ ³) Իպատիւ նրանց։ ⁴) Այդ։ ⁵) Բոլոր հասարակութիւնը։

Նաշիլ դըր բաշն, օրդա՛կ,
Ղալամ դըր ղաշն, օրդա՛կ,
Ջուլթ գէլթօն, Թաքեա գեա՛լդն,
Հանի՞ եօլդաշըն, օրդա՛կ։ ¹)

— Դէ ես ինչ հողը տամ իմ գլխին, ինչ ցեխը տամ իմ արևին, ինչ ջուղաբ ²) տամ հարցնողաց, ձեզ ղուրբան.... ա՛ն... ա՛ն... ա՛ն...

— Քա՛, Սուսամբար ջա՛ն, իմ ջրատար տէրտէրակին, ջանիդ մեռնի Նշան նանը, դու էլ ասա.

Նաշիլ դըր բաշըմ մա՛նըմ.
Ղալամ դըր ղաշըմ մա՛նըմ,
Ավչինն ղօլի սընըղ՛ն,
Վուրդլի եօլդաշը մանը՛մ ³)

Այսպէս մի ժամաչափ Թուրքերէն ու հայերէն ողբեր երգելով լալիս էին կանայքը։ Վերջը Խորիշան խանումն ընկաւ Սուսամբար տիրուհու կուռը և բարձրացրեց։ Այդպէս շարունակելով իւրեանց լացը, վերադարձան կանայքը գիւղը։

Նոյն երեկոյին էր, որ Գալուստ եպիսկոպոսն ու Գէորգ խալֆէն նստած տէր Ցարութիւնենց Թանարումը, մտածում էին որբերի վերայ։ Եպիսկոպոսը լսել էր տէրտէրի մահը և անձամբ եկել էր, որ իւր ձեռքովն օծի ու Թաղի։

— Խեղճ տիրուհու շէնքին իր երեխեքանցից աւելի ուրիշ բեռներ էլ կան, հայր սուրբ, ասաց նրան Գէորգ խալֆէն, քեզ յայտնի, ա, որ մեր նահատակ նախրչի Մանուկի տղէն ու մեր փուչկենդանի Ղևոնդի աղջիկն էլ սրանց կշտին են։ Ասենք ես գիտեմ, որ մեր փչանալու Ղևոնդը էգուց իւր երեխին կը տանիլ տայ, չի Թողնիլ տիրուհու մօտ, համա նախրչու տղէն պտի մնայ։ Ես ինքս շատ ուրախ կը լինիմ, որ տէրտէրակինը Վարդին ինձ բաշխի, բայց նա իրաններից ձեռք կը քաշի ու նրանից ոչ. շատ սիրում ա, խելքը գնում ա։

---

¹) Կանաչ է գլուխդ, ով բադ, ունքերդ գրչով նկարած է, զոյգ գնացիր, միայնակ յետ դարձար. ուր է քո ընկերդ, ով բադ. ²) Պատասխան. ³) Կանաչ է իմ գլուխը, գրչով նկարած է իմ ունքերը, որսորդի կուռը կոտրի, նա սպանեց իմ ընկերին։

— Մենք կարող ենք թեթևացնել տիրուհու բեռը. Թորոսն ինչպէս տէրտէրի անդրանիկ որդին, անպատճառ վարդապետացու է, էդ օրէնքը չի խախտուիլ. Վարդին էլ կը տանինք վանքը:

— Չէ, աչքիդ մեռնիմ, Վարդը վանքական չպտի դառնայ, լուսահոգի տէրտէրի կտակն ա: Ես ասումեմ, բալքի մի բան անէիր, Թորոսին էլ վանքից ազատէինք. ինչ կայ, կաթուղիկոսին խնդրի, թող էս մինը բաշխի. ես էլ կը գամ Էջմիածին, աղաչանք կանեմ, խեղճ ա տէրտէրանկինը, յոյս ու ապաւէնն էդ երկու երեխէքն են, կարապետը դեռ նոր ա ոտքի ըլնում, Թորոսն ա նրա հասցրածը, քեզ յայտնի ա, թէ քանի երեխայ հողին պահ ա տուել, անջախ [1]), էս մի երկուսն յառաջ բերել, էն էլ որ ձեռիցը խլէք, նա ինչ պտի անի:

— Էդ դժուար չի, Գէորգ խալֆայ, կարծեմ հոգևոր տէրը կը համաձայնի. եթէ այդպէս է, եթէ տիրուհին չի ուզումիւր որդուն վանքը տալ, կանչենք միամտացնենք, թող շատ հոգս չանի:

— Քո ոտն իմ գլխի հետ հաւասար ա, աչքիդ մատաղ, հայր սուրբ ջան, ասաց տիրուհին, երբ որ իրաւունք ստացաւ խօսելու և իւր միտքը յայտնելու. ես շատ շնորհակալ եմ, որ դուք իմ ցաւը քաշումէք, համա իմ խնդիրքս էս ա, որ անպատճառ Թորոսիս վանքական չինէք: Ես ուխտ եմ արել, իմ ուխտը քանդել չեմ. երեխէքս ապրում չէին ու երբ որ Թորոսս ծնեց, էդ մինն իմ ձեռովը վանքին մատաղ տուի: Նրանից յետոյ, փառք իմ ստեղծողին, միւսներն էլ ապրեցին, դեռ երկու ուրիշն էլ Աստուած բաշխեց: Թորոսիս տեղը ես Վարդին եմ դրել, նա ու Թորոսն ինձ համար՝ ոնց որ էս երկու մատը. (ցուցամատերը միմեանց կպցնելով՝ ցոյց տուեց տիրուհին.) երկուսն էլ իմ աչքի լոյսն են, իմ երեխէքն են, իմ ջրատար տէրտէրիս հետ մենք փոքուց Վարդին որդեգրել պրծել ենք, ես իմ թևի միջիցը դուս եմ քաշել նրան: Իմ դարդս Մանուչակս էր, որ էն էլ գոհեմ իմ Աստծուց, հէնց հիմի Ղևոնդը Սանդուխտին ղրկել էր, որ թէ կուզեմ, կարող եմ ինձ մօտ պահել, թէ չէ՝ յետ ղրկեմ: Աչքիս լոյս պէս կը պահեմ, ընչի՞ յետ կղրկեմ, նրան իմ աղջկերանցիցը շատ եմ սիրում, Վարդիս ու Թորոսիս խելքը գնումա, Աստուած իմ գլխիս խռովիլ. հօ չէ՞, որ իմ տան

[1]) Հազիւ։

հրեշտակներիցը մինը վերցնեմ ուրիշին տամ. Աստուծու ողորմութիւնովը ոչինչ պակասութիւն չունիմ, Գէորգ խալֆի պէս էլ թագաւոր տէգրը գլխիս կանգնած ա, սա ողջ ըլի իմ համար, մատը դէպի վերջինս ձգեց տիրուհին:

— Շատ լաւ, թէ որ դու սրտով ուզում ես, որ քո տղէն վարդապետ դառնայ, թող քո կամքն ըլի. էս մի քանի ամիսը որ կանցնին, աշնան հովերը կընկնին, ես քեզ կապսպարեմ, մի օրինաւոր խելքը գլխին մարդի հետ վեր կալ, ուղարկիր: Ես կաթուղիկոսին առաջուց կասեմ:

— Հա, աչքիդ մեռնիմ, ըտենց արա, տար Թորոսիս մարդ չինիր, իմ ողորմածիկ տէրտէրիս միտքն էլ հէնց էդ էր:

— Թող մօր կամքը կատարուի, վճռեցին եպիսկոպոսն ու Գէորգ խալֆէն տիրուհու հեռանալուց յետոյ, ուզում է՝ թող վարդապետ դառնայ:

ԻԴ.

ԱՍԼԱՆԸ ԿԱՏՈՒ ԴԱՌԱՒ:

Պարսից լծի տակ գտնուած ամէն մի հայը չի խաբվում երբէք ժամանակաւոր խաղաղութիւնից: Ամէն մի մայր իւր երեխային դալի [1]) հետ պարսկական տանջանքների սարսափն է ներշնչում, ծնած օրից միամիտ մանկան սիրտը ահ ձգում. մի խոր թառանչ էլ իւր կտրած սրտի խորքից դուրս է մղում նա ու անմռունչ գառան նման բոլոր գալիք նեղութիւններին համբերել երգում: Երեխայական խաղերն էլ պարսից բռնութիւնն ու նեղութիւններն են ներկայացնում. Ազգային երգերն էլ հայի գերութիւնն են քարոզում:

Ով մի հայ չէր զարմանում, եթէ աչքը յանկարծ դէպի Խուրեանց գիւղի ափն էր դարձնում և քանի մի ընտանիք զէնուորների առաջին փարած տեսնում:

— Որ գիւղի էլլին ա: Ահա այսքան կուզի ամէն մարդ իմանալ ու գնալ իւր գործին. չեն էլ հետաքրքրուիլ, թէ ո՞ւր են տանում սրանց անասունների նման առաջ արած:

[1]) Նոր ծննդկանի առաջին օրերի կաթը:

Ամենքին յայտնի էր, որ փարող գնուորների գլխաւորն ինքն էլ չգիտի, թէ ո՞ւր և ընչի՞ համար է տանում: Այսօր միտք ունին, դիցուք, դէպի հարաւ քշել, էգուց հրաման կըգայ դէպի հիւսիս դարձնել: Երբեք հոգս էլ չեն անել, թէ իւրեանց նոր բռնած ճանապարհը վերջանում է մի կատաղի գետի մօտ, որտեղից այս բազմութիւնից շատերը հնարաւորութիւն չունին անց կենալու, թէ կարող են նրանք կերակուր լինել գետի ամեհի փրփրադէզ ալիքներին: Ի՞նչ ցաւ, եթէ մեծ մասն էլ փչանայ, ո՞ւմ հոգսն է, հաշուով են պահ տուե՞լ, իրանք հրամանակատարներ են. «աղէն ասաց քշի՛ ձորը, քշի՛ ձորը». այս պաշտօնի համար շատ յարմար է պարսից այս առածը:

Այս ամենը շատ պարզ յայտնի է պարսկահպատակ հային և նա յաւիթեամբ կրում է իւր ճակատագիրը:

Շատ երկար ժամանակ չէր անցել խաղաղ ու առանց արկածքի: Ահա մի նոր հրաման էլ դուրս եկաւ ու մի օրուան մէջ տարածուեցաւ Արագածոտն ու Արարատ նահանգի հայ գիւղերումը:

Մհասիլ ¹) մհասիլի վերայ, սարվող սարվողի քամակից, ուրը մորակ շինած՝ բոլոր գիւղերը միանգամայն քշեցրին ու երկու երեք օրուան մէջ Երեւան լցրին: Վաղարշապատի գիւղը միայն ազատ մնաց: Ի՞նչ ասել կուզի, որ Գևոնդն էլ Աշտարակու հերոսն էր:

Վրացւոց Հերակլ թագաւորն այս երկրորդ անգամն էր, որ մեծ զօրքով Երեւանու վերայ էր գալիս:

Հուսէին-Ալի խանն իւր զօրութիւնը շատ լաւ էր փորձել. նա խմանում էր, որ իւր քաջութիւնը միայն անզէնք հայերի վերայ էր յաջողում. մի կանոնաւոր զօրքի դէմ յիմարութիւն կը լինէր իրան կողմից պատերազմելը: Այս պատճառով էլ հրաման հանեց, որ Երեւանու քաղաքի բոլոր ուղղահաւատ մահմետականները բերդը մանին, իսկ հայերին՝ հովիւը կորցրած հօտի նման թողեց դուրսն անխնամ ընկած. որ մինչև Հերակլը հայերի արմատը կըկտրի, ինքը մի հնարքով իւր դժուար դրութիւնից կազատուի:

Վրացւոց զօրքը քաղաքը լցուեցաւ: Թագաւորը հեռուից տեսնելով հայերի բազմութիւնը, որոնք բերդի առաջի հրապարակումը լցուած էին, կարծեց թէ պարսիկներ են. սպառնալից դես-

¹) Ռամիկանութեան տուրքին բանիբեր պաշտօնեայ:

պան ուղարկեց նոցա մէջ և պահանջեց անձնատուր լինել, ապա թէ ոչ՝ ամենքին էլ սուրը քաշել կըտայ:

Վրաց թագաւորի պատգամաւորը հայ էր: Արտասուքը չկարողացաւ բռնել մեր վշտատանջ բանբեր հայը, երբ որ տեսաւ իւր ազգը, իւր եղբայրները ճակատագրի կամքին խաղալիք թողած:

Հայ իշխանները միմեանց ճանաչեցին և ի միասին եկան Հերակլի բանակը: Քրիստոնեայ թագաւորի բարկութիւնը տասնապատիկ աւելացաւ Հուսէին-Ալի խանի անօրէն արարքի վերայ:

Միւս օրը ձեռք տուին բերդի դռները քանդելու: Ճար չունէր Հուսէին-Ալի խանը. երեք օր ժամանակ խնդրեց մտածելու: Յայտնի չէ, թէ ընչո՞ւ նա թողած Երեւանու իրան աւելի մօտիկ հայ իշխաններին — Աղամալ աղային, Աբրահամ Աղային և այլն և պահանջեց Աշտարակու հասարակութիւնի միջից Գէորգ խալֆին, որին անգուլտ դրած՝ ներս առան բերդի պատի վերայից:

Արժան էր տեսնել, թէ առիւծ խանը ինչ քաղցրութեամբ հիմի խօսում էր Գէորգ խալֆի հետ, ինչ սէր էր ցոյց տալիս: Մոռացած միանգամայն իւր բարձր պաշտօնը՝ իւր մօտ հաւասար նստացրել էր:

— Քեզ տեսնեմ, իմ սիրելի Գէորգ, գնա շուտով Էջմիածին, Սիմէօն խալֆի ¹) մօտ. տուր նրան էս թուղթը, շատ սիրով բարև արա իմ կողմից. թող գլուխն էնտեղ թրջի, էստեղ վեր անի. գայ էս անաստուած գիւրջուն ²) մի հնարքով մեզանից հեռացնի: Նա միայն կարող է մեզ էս դժուարութիւնից ազատել. առաջին անգամն էլ նա յետ դարձրեց սրան, երբ որ էլի ուզում էր մեր աշխարհքը քանդել: Ասա Սիմոն խալֆին, որ եթէ էս անգամ էլ մեզ էս նեղութիւնից փրկեց, ես իրա բոլոր խնդիրքը կըկատարեմ, հայերին իմ ազգի պէս կըսիրեմ, Էջմիածնի ու միւս վանքերի հարկերը կըթեթևացնեմ ու խաների ու բէգերի բռնութիւնով տիրապետած վանքական կալուածքները իրան յետ կըդարձնեմ:

Խանը կատու էր դառել:

— Ի՞նչ անեմ, միտք էր անում ինքն իրան Գէորգ խալֆէն, շատ լաւ գիտեմ, որ սրա ոչ մի խօսքը պարանի չի դրուել ³), բայց ճարս ինչ, պէտք է գլուխ բերեմ, որ բալքի ⁴) կաթուղի-

¹) Կաթուղիկոս: ²) Վրացուն: ³) Խօսքին հաւատ ընծայել չի կարելի: ⁴) Գուցէ:

կոսի լաւութիւնը սրա աչքերը բանի, խոստացածների հազար բաժ-նից մինն էլա կատարի: Ա՛խ, եթէ ես իմանայի, որ Հերակլ Թագաւորը միանգամից կըտիրի մեր աշխարհքին ու էս անօրէնների ոտը մեզանից կըկտրի, պարան էլ չէի տալ խեղդուելու. համա ինչ անես, վրացիք պէտք է վերջը մի քանի հազար թուման փող պոկեն ու հեռանան. էն ժամանակը մեր միջքի զօլը [1]) պտի բարձրանայ, մեր կաշին պտի քերթուի, էն փողն էլ մեր ջանիցը պտի դուրս գայ. լաւն էն ա, էլի բարիշացնենք [2]) ուտ ըլի [3]), կորչի գնայ:

— Աչքիս վրայ, իմ գլխի տէր, պատասխան տուեց Գէորգ խալֆէն խանին, գլուխս յետ կըդնեմ ու քո կամքդ կատարել կըտամ կաթուղիկոսին:

Պայմանաժամը լրանալուն մի օր էր մնում: Վրացւոց Թագաւորն իւր բանակով նստած էր Զանգու գետի միւս ափումը՝ բերդի դիմացը. Ճիշդ այն տեղը, որ այժմ Սարդարի Այգի կամ Թալարի բաղ է կոչվում:

Շատ ուրախ չեղաւ Հերակլը, երբ որ մերձակայ բլրի վրայի պահապանները լուր բերին, թէ այգիների փողոցով արևմտեան կողմից մի քանի սուր սուր գտակներով ձիաւորներ են երևում, որոնք դէպի իւրեանց բանակն են գալիս, քամին էլ մի մի գազաչափ սև կտաւ ծածանեցնում է ձիաւորների քամակին:

Հասկացաւ Թագաւորը, որ հայոց Սիմէօն կաթուղիկոսն է միջնորդելու գալիս:

Զանազան մտածմունքներ էր անում Հերակլը իւր զօրապետների հետ դէպի այգիների փողոցը ոտքով ընդառաջ գնալով, երբ որ բլրի ստորոտի օձապտոյտ փողոցից ձիաւորներն երևեցան: Գլխարկը հանած յառաջ վազեց Թագաւորը, ժամանակ չտուեց ծերունի կաթուղիկոսին ձիուցն իջնելու, ինքը գրկեց, ցած բերեց և ձեռքը համբուրեց:

Չենք կարող իմանալ, թէ ինչ արտասուքներ էին վեհ ծերունու աչքերից թափվում, երբ որ նա գրկախառնութիւններից յետոյ յառաջ ընկաւ դէպի բանակը, բարձրացաւ մի թմբի վրայ և

---

[1]) Մի տրոչ լայնութեամբ կտրած կաշի: [2]) Հաշտեցնենք: [3]) Հեռանայ:

«Պահպանիչ» ասաց: Արդեօք նա ուրախացե՞լ էր քրիստոնեայ Թագաւորի զօրքը տեսնելով, թէ յիշեց նոյն րոպէին իւր նախնիքը, որոց պատկերը այժմ րոպէական բերմամբ նկարագրուեց ազգասէր Հայրապետի աչքումը: Արդեօք իւր տարաբաղդ ազգի զաւակները շարժեցին նրա սիրտը, որոնք լսելով Հոգևոր տիրոջ գալուստը, բոլոր մելիքներով ու իշխաններով մեծ ու մանուկ յանկարծ Զանգուի կամրջի խրամիցը դուրս թափուեցին ու զօրքի բազմութեանը չնայած՝ բառաչելով ուզում էին իրանց հոգևոր ծնողի ոտքերը համբուրել:

— Մի լիս ու ճար արա, աջիդ մատաղ, էս ինչ ա մեր հալը, շինքը ծռած կանգնել էր Մելիք Աբրահամը կաթուղիկոսի առաջին ու ձեռքով ցոյց տալիս գլխները բաց՝ գետնի վերայ չոքած ամբոխին. տես, էս քո զաւակներն են, որ աչքները կթած՝ յոյսները վերև Աստուած՝ ներքև քեզ բռնած՝ սպասում են, թէ երբ կըլինի էն օրը, որ համ ինքդ թափ տաս քո ձեռք ու ոտքերի կապած զնջիլը [1]), որ համ իրանց էլ քեզ հետ ազատես էս գերութիւնից: էս ինչ ա մեր հալը [2]). կամ առաջ ընկի՛ դպա Վրաստան, գնա էս խաչապաշտ Թագաւորի ձեռի տակին դու էլ ապահովուիր, մեզ էլ հետդ տար, կամ թէ չէ մի տեսակ վերջ տուր էս նեղութիւններին. հագէր [3]) լաւ ժամանակն ա, ճար ունիս՝ ճար տես. վրացոնց ողորմած Թագաւորը մեզ երեսի վրայ չի թողալ, թէ որ դու ցանկանաս:

— Ես ուրախութիւնով կընդունեմ բոլոր հայերիդ էլ իմ երկրումս, գլխիս վրայ տեղ ունիս դու քո ազգովդ, հայր սուրբ, եթէ դուք կըցանկանաք թողալ պարսից իշխանութիւնը, վերադարձաւ Հերակլը դէպի կաթուղիկոսը, երբ թարգմանը Աբրահամ աղէ խօսքերը նրան բացատրեց:

— Ես քեզանից միայն այս եմ խնդրում, տէր արքայ, Թագաւորի ձեռքը իւր ձեռքի մէջ սեղմելով ասաց Հայրապետը, որ դու խեղճ գաս իմ ազգին, թողես էս անգամ էլ Երևանը, եթէ գիտես, որ բոլորովին չես կարող ջնջել պարսիկներին մեր երկրիցը. բայց, ի հարկէ, առաջ խօսք առնես Հիւսէին-Ալի խանիցը, որ մեզ հանգիստ պահի: Դու մի՛ ցանկանար, Թագաւո՛ր, որ իմ ազգը տարագիր լինի, թողու իւր հայրենիքը, իւր տունն ու տեղը: Օտա-

---

[1]) Շղթայ. [2]) Դրութիւն: [3]) Ահաւասիկ:

րութեան մէջ որքան էլ հանգստութիւն լինի, էլի պապական երկրի նեղութիւնները աւելի քաղցր են։ Գաղթականութիւնը ազգերի ջնջուելու գլխաւոր միջոցն է. մեր ազգը էսքան չի եղել, որ տեսնում ես, 100 անգամ աւելի շատ է եղել. բայց գաղթելով ղանազան երկիրներ, ցրուելով օտար ազգերի մէջ, կորցրել է կամաց կամաց իւր լեզուն, իւր ազգը, իւր հաւատը։ Ո՞ւմ պտի թողնենք մեր երկիրը, մեր նախնեաց գերեզմանները, սուրբ վանքերը, Լուսաւորչու աթոռը՝ սուրբ Էջմիածինը, որ հեռանանք գնանք էստեղից։

Եթէ հնարք ունիս, ջնջիր մեր աշխարհքում բուն դրած անօրէն պարսիկներին, հալածիր, սրանց ոտը կտրիր, Թէհրանումը տնկիր քո դրօշակը ու այն ժամանակը, տես թէ քո նոր հպատակները՝ հայոց ազգը սուրբ Լուսաւորչու օրհնութեամբ և արեանթաթախ գեղարդի զօրութեամբ ինչպէս իրանց կեանքը քեզանից չի խնայում. էն ժամանակն ամէն բերան քեզ կօրհնի, ամէն հայ իւր աղօթքի մէջ քո անունը կը յիշի, քո գործերին յաջողութիւն կը խնդրի։ Ի՞նչ օգուտ ունի մեր օտար աշխարհում վայելած արտաքին հանգստութիւնը, եթէ մեր միտքը, մեր սիրտը, մեր հոգին մեր սուրբ հողի՝ մեր հայրենիքի կարօտը պէտք է զգայ ու վերջ ի վերջոյ մի երկու դարից յետոյ հայի անունը պէտք է յաւիտեանս ջնջուի աշխարհքիս երեսից։

— Խեղճ արէ մեզ, ողորմած թագաւոր, ժողովրդի կողմից ձայն տուին հայ իշխանները, կամ դուրս արա պարսիկներին և կամ հաշտուիր։ Մեզ սուրը քաշի՛ր ու մեր պապական հողից դուրս մի՛ անիր։

Սիրտը կոտրած՝ աչքերն երկինք ձգած՝ մի «Պահպանիչ» էլ ժողովրդի վրայ ասեց սուրբ կաթողիկոսը և հրամայեց վերադառնալ իրանց տեղը. իսկ ինքը երկար ժամանակ առանձնացաւ Հերակլ թագաւորի հետ նրա վրանումը։

Երկու ժամից Գէորգ խալիֆէն կրկին նշան տալով բերդապահներին՝ վեր բարձրացաւ սանդուխով և մտաւ բերդը։

Հաշտութեան պայմանները հետևեալն էին։ Պարսիկները հանգիստ պէտք է թողնեն հայերին. նշանակեալ հարկից աւելի ոչինչ չպիտի պահանջեն. իրաւունք չպէտք է լինի հայ աղջիկ քաշելու, Էջմիածնի վանքը ազատ պէտք է լինի իւր ուխտին՝ խաներին ընդունելուց և որոշեալ ընծաները տալուց։ Իսկ եթէ ինքը կաթողիկոսը

կը կամենայ իւր մեծափառ սարդարին տեսութիւն գալ և մի արժանավայել ընծայով իւր հպատակութիւնը ցոյց տալ, նա ազատ է. բացի դրանից բայրամի [1]) ժամանակ ամանով ոսկի պարգև բերելը վերանայ, վանքերի կալուածքները հաստատ ղաբալայով [2]) յետ տրուին իրանց և ոչ մի պարսիկ իշխան իրաւունք չունենայ ղանազան պատրուակներով յետ խլել։

Այս ամէն պայմաններն ինքը կաթողիկոսն էլ կրկնեց խանին, երբ Գէորգ խալիֆէն վերադարձաւ խանի մօտից և յայտնեց նորա ցանկութիւնը, թէ նա վրաց թագաւորին տեսնելուց յառաջ կամենում է կաթողիկոսի հետ անձամբ տեսնուել։

Այս անգամ էլ սանդուխտ չիջեցրին ծերունի կաթողիկոսին ընդունելու։ Բերդի դուները յետ բացուեցան և հաշտութեան հրեշտակը՝ Հիւսէին-Ալի խանի արհամարհանաց առարկան՝ հայերի սեւագլուխը բերդի դուռը մեծ մուշտէհիդը ամենայն յարգանօք ընդունուեցաւ և ներս տարուեցաւ խանի ամարաթը [3])։

— Հոգևոր տէր, ասաց նրա միակ ուղեկից հայը. շան կաղալուն մի՛ հաւատար, ղըրթ ա սրանց խոստմունքները ոնց որ սառցի վրայ գրած, բայց էլի դու քո գործդ պինդ բռնիր, մեզ հանգիստ պահելու համար ռաղամ [4]), առ։

— Է՜հ, Գէորգ խալիֆայ, սրանց ռաղամին էլ հաւատալու չի, ափսոս, որ վրաց թագաւորը այնքան զօրութիւն չունի, որ սրանց ոտը կտրի մեր աշխարհքից։

Հիւսէին-Ալի խանը իւր սենեկի դուռնին յառաջ եկաւ կաթողիկոսին, կուռն ընկաւ և իւր մօտ հաւասար նստացրեց,

Հաշտութեան պայմաններն ընդունուեցան։ Սարդարը խոստացաւ ամէնը կատարել։ Բոլոր ռաղամները գրուեցան, կնքուեցան և կաթողիկոսին յանձնուեցան։

Միւս օրը խանը ներկայացաւ վրաց բանակումը Հերակլին իւր իշխաններով առանց զէնքի և հայոց ժողովրդին հրամայուեցաւ կրկին ցրուել իւրեանց գիւղերը։

Երկու օրից յետոյ վրացւոց զօրքերը ճանապարհ ընկան Արայի լեռան կողմովը դէպի Վրաստան, իսկ ինքը Հերակլը 300 մարդով կաթուղիկոսի ընդրանօքը հիւր գնաց Էջմիածին, խոստանալով Գէորգ խալիֆին, որ վերադարձին մի գիշեր էլ Աշտարակումը իւր մօտ կիջևանի։

---

[1]) Նոր տարի։ [2]) Կալուածագիր։ [3]) Պալատ։ [4]) Արտօնաթուղթ։

ԻԵ.

ԱՆԻՄԱՆԱԼԻ։

Հայոց ազգն իւր կռապաշտութեան օրից սկսած եղել է մի կրօնական ժողովուրդ, նրա անհատական յատկութեանց մի գլխաւորը նրա հոգեւոր ծէսերն են, նա իւր բոլոր արտաքին և առտնին սովորութեանց հետ միացրել է կրօնականը. նա քրիստոնէութեան պայծառ լոյսը իւր մէջ ընդունելու օրից հետէ իւր սիրելի թագաւորներին, իւր ազգային պարծանք ու պաշտպան նախարարներին, իւր հոգեւոր գլխին հիւրընկալելու ժամանակը իւր ամէն բանից նուիրական սրբութիւնովն է դիմաւորել, իւր հոգեւորական դասի հետ միացած՝ եկեղեցական զարդեր, խաչ ու խաչվառ է քաշել ու հոգեւոր երգասացութիւններով է ընդունել։

Այս հիւրասիրութեան նշանակը այնքան յատուկ է եղել հային, որ երբ իւր քաղաքական իշխանութիւնը կորցրել է, նա փոխարինել է իւր հարազատներին օտար մեծարանաց արժանի քրիստոնեայ իշխանաց հետ։

Վերջերումը՝ հայի այս նախնական ընտիր սովորութիւնը շատ հաճոյ է թուեցել մեր աշխարհի անքրիստոնեայ տիրապետողների ճաշակին էլ. նոքա թէպէտ ոչ մեր կրօնն են յարգել և ոչ մեր սուրբ անօթները պատուել, բայց փառասիրութեան կիրքը այն աստիճան է նրանց մոլորեցրել, մինչև իրանք էլ պահանջել են հայերից եկեղեցական զարդերով իւրեանց դիմաւորելու պատիւը։

Լսուած ու տեսած բան է, որ Երևանու կուսակալ պարսից խաները տարին մի քանի անգամ մեծ բազմութեամբ գիշակեր անգղների նման Էջմիածին են թափուել. ինչ կարծիք, որ յափշտակութեան նպատակն է նրանց այցելութեան առաջին տեղը բռնել. գլխաւորից սկսած՝ մինչև վերջին ձիապանը՝ ամէնքն էլ իւրեանց աստիճանին համեմատ պարգևներ են տարել։ Շատ անգամ էլ, եթէ իւրեանց քմաց հաճոյ չի եղել ընծայն և հաստատ տեղեկացել են, որ չկայ, օրինաւոր մուրհակաւ պարտաւորել են հատուցանելու։ Անցել է մի քանի օր, օրէնքի բռուն զօրութեամբ, օրով ցրեկով Էջմիածնի տաճարը ոտնակոխ տուած՝ դուրս են քաշել թանգագին սրբութիւնները. մինչև որ խղճալի միաբանութիւնը իւր վշտակած գլխի հետ մի հնարք են արել և այդ գայլերին դուրս արել իւ-

րեանց փարախից։ Բայց և քանի՞ անգամ փալախաններ ու քօթուկների [1]) մէջ արենթաթախ են եղել նոքա՝ այս պարգևները ըստ արժանոյն պատրաստել չկարողանալու համար։

Ոչ մի ծէսը թերի չեն կամեցել տեսնել մեր պատուելի խաները. երգերի ու շարականների ներդաշնակութիւնն էլ կարողացել են ընտրել. մհասիլի ձեռքով առաջուց նշանակել են այս ինչ երգը՝ այս ոքին երգելու։

Շատ տարի չի անցել, որ երբ Ահարոն զուարճախօս վարդապետը Հիւսէին սարդարի առաջին նրա նախապէս պատուիրանօքը երգել է «Անիմանալի» շարականը և իման—ալի վանկերը պարզապէս հնչել, սարդարին շատ ախորժելի է եղել, որ իւրեանց իմամ [2]) Ալին՝ իւրեանց հաւատոյ սիւներից մէկը՝ մեր սուրբ երգասացութիւնների մէջ տեղի է ունեցել։

Այդ տարին իւր շնորհաբեր այցելութիւնը մի քանի անգամ կրկնել է մեծափառ սարդարը և ամէն անգամ էլ Ահարոն վարդապետին մի մի խալաթ պարգև տալով, յայտնել է, որ իրան շատ քաղցր է եղել նրա շարականը, ուստի և պատիւ է անում Էջմիածնին իւր շուտ շուտ գալովը։

— Տունդ չքանդուի, Ահարոն վարդապետ, ասաց նրան մի անգամ կաթուղիկոսը. դու այս ի՞նչ կրակի մէջ ձգեցիր մեզ քո շարականովդ, մենք քանդուեցինք դրանց պարգևներ տալով։

— Իմ քանդած պատը ես կը շարեմ, հոգևոր տէր, պատասխանել է սրամիտ վարդապետը, և երբ միանգամ էլ սարդարի ուրախ սրտի ժամանակը կանչել են իւրեան այն երգը կրկնելու, սարդարը ըստ սովորականին հարցրել է. եթէ դուք մեր իմամ Ալի փեղամբարին [3]) այնքան պատւում էք, որ ձեր եկեղեցական երգերի մէջ նրան փառաբանում էք, ընչի՞ համար ուրեմն մեր օրէնքը չէք ընդունում։

— Դու լաւ չես հասկացել, քո մեծութիւնը, պատասխանում է զուարճախօս Ահարոնը. եթէ քո քաղցրալուր ականջը շնորհ էր արել օրինաւոր լսել և Ալիի անունով այդքան քո երևակայութիւնդ չէր յափշտակուել, դու՝ իման [4]) և ոչ թէ իմամ

[1]) Ծառի բուն։ [2]) Հաւատոյ սիւն։ [3]) Մարգարէին։ [4]) Հաւատ։

կը լսէր: Անիման-Ալի բառը մեր լեզւում նշանակում է անհաւատ Ալի:

Շատ էլ հաճելի չէ լինում սարդարին այս ճշմարտութիւնը լսելը, բայց ծաղրածուին իրաւունք ունի ամէն բան պարզ ասելը: Պարսից բոլոր մեծամեծներն ունին իրանց ծաղրածուն. Ահարոն վարդապետը այս րոպէին ծաղրածուի դեր էր կատարում սարդարի առաջին:

— Աֆէրիմ [1]) մահրասայ [2]), ասել է լեզուն կծելով սարդարը. Թէպէտ ես գիտեմ, որ էդպէս չէ, բայց դու էնքան խելօք և սրամտութեամբ յարմարացրիր, որ իմ սրտիս շատ դուր եկաւ և մինչև քաղցրալուր եղաւ: Տղայք, հրամայում է նա, շուտով մեր սրախօսին մի խալաթ [3])

Թէ ի՞նչքան սրտանց էր սարդարի արածը, ի՞նչքան հաճելի էր եղել վարդապետի խօսքը, նրանից կարելի է գուշակել, որ Էջմիածին գալը վերջինն եղաւ, նրա ոտքը խոպառ կտրուեց այնտեղից: Երկու տարուց յետոյ քրիստոնէութիւնը բարձրագլուխ փայլեց Երևանու երկրումը:

Խաչ ու խաչվառով դիմաւորելու սովորութեան քաղցրութիւնը վաղուց էր Էջմիածնի միաբանութիւնը մոռացել: Եթէ նա տարին մի քանի անգամ անիծելով իր գոյութիւնը՝ պարսից խաների յառաջն էր գնում, նա այդ ակամայից էր անում:

Բայց սրանից մի դար, կամ էլի յառաջ՝ մի գեղեցիկ առաւօտ, մի հեգասուգ օր աչք պէտք էր, որ տեսնէր, թէ ինչպէս Էջմիածնի վարդապետները շտապելով դէպի Հռիփսիմէի վանքն են վազում: Աւագ լուսարարն առաջուան պէս էլ կոտրած սրտով չէր բաց անում մասանց խորանի դուռը և գլխութեամբ էժանագին զգեստները չէր հանում. էլ նա երկիւղ ու կասկած չէր տանում, թէ գուցէ երկու ժամից էլ անօթներն և զարդերը իր ձեռքից դուրս կը գան և ինքը միայն կը բաւականանայ մատենի մէջ այսքան աւելցնելով, թէ սարդարը, կամ այս ինչ բէգը իրան սեպհականացրեց:

Այսօր մեր մեծ լուսարարը հրամայում է իր օգնական կրտսեր լուսարարին ամենաթանգագին զարդերը յառաջ ուղարկել և սուրբ մասունքը բոլորը բազմացնել Աւագ սեղանի առաջին:

[1]) Կեցցես: [2]) Վարդապետ: [3]) Պարգև:

Վանքը մի ոգևորութի՞ւն է մտել:

— Ի՞նչ կայ, ի՞նչ ոտք ու ձեռք են ընկել մեր միաբանները, հարցրեց մի ծերունի վարդապետ, դուրս վազելով իր խցից, երբոր անժամանակ հրաւիրական զանգակների ձայնը լսեց:

— Վրացւոց Հերակլ թագաւորը գալիս է, ընդունելութիւնը Հռիփսիմէի վանքի դիմացը պէտք է լինի:

— Փառք քեզ Աստուած, հազիւ մի քրիստոնեայ թագաւորի առաջ պէտք է արժանանամ իմ քաղցր ձայնս գործ դնելու:

Փարաքար գիւղի գերեզմանների մօտից ծերունի Սիմէօն կաթուղիկոսն առաջ ընկաւ Հերակլից և կէս ժամ էր, որ Հռիփսիմէի մօտ պատրաստ էր թանգագին հիւրին ընդունելու:

Խաչերի ու կերոնների ծայրերը երևելուն պէս, իսկոյն ձիուց իջաւ ջերմեռանդ թագաւորը: Այս տեսարանն զգալի եղաւ ոչ միայն իւրեան—Հերակլին, այլև տասնապատիկ աւելի թշուառ միաբաններին: Այսօրուան բարեմաղթութիւնները ուրիշ անգամներին նման չէին: Ընդհանուրի աչքերից արտասուքները վազում էին, մանաւանդ երբ Վաղարշապատի ժողովուրդը գալին գոչելով թափուեցին թագաւորի ոտքերը:

Քաղցրասիրտ թագաւորը ինքն էլ մոռացել էր իր բարձր կոչումը, եղբօր և որդւոց նման գրկում ու համբուրում էր ռամիկ գիւղականներին:

Գոհաբանական հանդէսը մէջ առած օգոստափառ հիւրին իր սիրելի հայրապետի հետ՝ երգասացութեամբ վերադառնում էր Էջմիածին:

Շատ էլ խնդրեց ինքը Հերակլը, որ վերցնեն զգեստները և ազատ ու թեթև յետ գնան, բայց ոչ ոք լսող չեղաւ: Հայրապետը միայն շուրջառը վերցրեց և թագաւորի աջակցութեամբ գնում էր ոտքով:

Տրդատայ դռնից ոսկեթել փիանդազը [1]) փռուած էր: Շատ էլ տոկեց, աղաչեց թագաւորը հաւաքել, բայց հնար չեղաւ, կոխոտելով վրայից անց կացաւ: Վերջումը թէպէտ նա չէր էլ ցանկանում փիանդազն իրան սեպհականացնել, բայց կաթուղիկոսը խնդրեց, որ Էջմիածնի միաբանութիւնից Սղնեթի վանքին շուրջառացու ընդունի: Թագաւորը համաձայնեցաւ:

[1]) Ափռոց ոտքի տակ փռելու:

Մեր մայր աթոռը, որքան էլ ճնշուել հարստահարուել է պարսիկներից և այլ անհաւատ ազգերից, բայց նա միշտ պարծեցել ու էսօր էլ պարծենում է իւր քրիստոնէական եկեղեցւոյն վայել սրբութիւններով:

Վաղուց վրաց թագաւորը ուխտել էր համբուրել մինչև արիւնաներկ սուրբ Գեղարդը, և նա այսօր արժանացաւ: Ցնծաց նրա սիրտը, երբ Գեղարդից յետոյ կարգաւ ծունկ չոքեց կենաց փայտի, մեր Լուսաւորիչ պապի, Թադէոս առաքելոյ և ուրիշ 1000աւոր սուրբ մասունքների առաջին:

— Իմ կեանքիս մէջ ամենաերջանիկ օրն այսօր եմ համարում, պատասխանեց Հերակլը Սիմէօն կաթուղիկոսի մի փոքրիկ ճառին: Այսօր ես ուրախ եմ, ոչ միայն Յիւսէին-Ալի խանի ամբարտաւանութեան եղջիւրը փշրելու և ձեզ մի կարճ օրուան հանգստութիւն տալ կարողանալուս համար, այլ այս սրբութիւնները համբուրելու արժանաւորութիւն ունենալուս: Դուք, հայեր, մեզանից շատ երջանիկ էք, շարունակեց թագաւորը, թէպէտ Վրաստանն էլ քրիստոնեայ է, բայց նա իւր իշխանական գաւազանովը ձեր չափ բաղդաւոր չի: Դուք մեզանից աւելի պարծենալու սրբութիւններ ունիք:

Երեք օր Հերակլը կացաւ Էջմիածին և այդ երեք օրը սուրբ մասունքը բազմացրած էր: Օրը մի քանի անգամ բարեպաշտ թագաւորը իւր սրտի փափաքն առնում էր:

Չորրորդ օրը մի սուրբ մասունք ընծայ ստանալով նոյնպիսի հանդիսով բաժանուեցաւ նա Էջմիածնից դէպի Աշտարակ, որտեղից պիտի անց կենար Թիֆլիս գնալու:

ԻԶ.

ԵՐԿՈՒ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԲԱՆ:

Դեռ երկու օր էր, որ Աշտարակու էլէկը վերադարձել էր Երևանից, դեռ շատերը չէին հանել պահած տեղերից իրեանց կահ կարասիքը, դեռ շատերի սրտից չէր կորսուել նրանց կորցրած, աւար տարած կալուածքի ծուխը, որ Գէորգ խալֆի տանը ամէն բան պատրաստ էր: Էս անգամ սովորականից աւելի բազմութիւն էր խռնվում նրա ներս ու դուրսը: Նրա պարտէզը բոլոր Խորասանու գորգերով փռուած էր: Մեծ տան վերին անկիւնը զարդարում էր թաւիշէ մահիճը և նորա վրայ նոյնանման կոլոլ բարձը: Դրսի բակումը մի

քանի արտաքի պղնձներ սարքած օճաղների վերայ, կրակը Ջուակներին վառվում էր. մի քանի կանացի բնութեան տէր երիտասարդներ քէյվանուն[1]) այս և այն կողմն էին կանչում:

— Մենծ նանի[2]), արի տօլմէս տես, եփը պակաս հօ չի՞, ձայնը քաշում էր մինը:—Մենծ նանի, փլաւի դանը[3]) դալիս ա, երեսի սարփօշը[4]) բանձրացնեմ, թէ չէ. մինթանի[5]) փէշը ձգելով աւում էր միւսը:—Մենծ նանի, մի բողբաշլու մոխ տուր, ընգաբեղէնները[6]) քցելու վախտն ա՞, թէ դեռ մնայ:

— Մենծ նանի, մի աման փլաւ տուր մենք իրեքս ուտենք, գեղեցիկ հագուած այն ժամանակուան ձևով, ասում էր մի հինգ—վեց տարեկան մանուկ, իւր հետ քաշ տալով իւր հասակակից մի տղայի ու մի երեք չորս տարեկան գեղեցիկ աղջկայ:

— Ի՞նչ էք ինձ քաշքշում, քանի կտոր ըլիմ, ճակատի քըրտինքը գոգնոցովը սրբելով, ամէնքի հաւարին էլ հասնում էր իւր միջին փքուելով քէյվանի մեծ նանը:—Երեխէք, դո՞ւք որտեղից ներսև ընկաք, ձեզ ո՞վ ա բերել ըստեղ. գնացէք ձեր տունը, Թորոս ջան, ես ձեզ համար ըստեղ բաժին կը ղրկեմ, ձիաւորի ոտի տակը կընկնէք:

— Ի՞նչ անեմ քու բաժինը, մենք կարօտ չենք, տղանց մեզ ինչ կարան անել: Վրացոնց թագաւորի բարձի վրայ պտի նստենք, որ ոտն ուզուրով[7]) ըլնի. մեզ խորիշան հալսը ղրկեց քեզ մօտ, քիթը քաշ ձգելով իւր ընկերների կռուը ձգելով յետ դառաւ մեծասիրտ Թորոսը. երևում էր, որ քէյվանու յանդիմանութիւնը սրտին առաւ:

— Դէ որ ըտենց ա, բալէք ջան, կացէք ձեզ փլաւ տամ, կանչեց մեծ նանը, բայց Թորոսը յետ էլ չնայեց. ընկերներին առած իրեանց տունն էր ուզում գնալ:

— Պէտք չի՛, ոչ դրանց փլաւը, ոչ պատիւը, շատ հարկաւոր ա՞, թէ թագաւորի ոտն ուզուրով չի ըլնիլ. հէնց իմանայ ողորմութիւն են անում մեզ. մեր տանը մի կտոր ցամաք հաց կը գտնենք ուտելու. արի գնանք, Վարդ, մեր բաղչումը խաղ անենք, մինչանք թագաւորը չգնայ, դուս չգանք, ի՞նչ ա շատ՝ գեղումը լէքը երեխէք, ում կուզեն, տանին նստացնեն:

---

[1]) Տնտես. [2]) Մայրիկ. [3]) Եփուելու աստիճանը. [4]) Մեծ ափսէ. [5]) Շրջազգեստ. [6]) Համեմունք. [7]) Բարեյաջող.

— Չէ, մայրո՛ջ, մառամիկը դուրս գալով բռնեց նրան խորի-շան խանումը — Գէորգ խալֆի կինը, որ տեսել էր քէյվանու արածը. մենծ նանը չի իմացել, գնանք ես ձեզ փլաւ տամ, դուք իմ բալէքս [1]) էք:

— Թող մենծ նանը իրա թոռներին կանչի ուտացնի, բարձի վրայ էլ նստացնի, մեզ հարկաւոր չի, հեռանալով, աչքերը սրբելով ասաց Թորոսն և ուզում էր դուրս ընկնել խորիշան խանումի գրկիցը: Վարդը թէ որ ուզում ա, թող գնայ, ես ու Մանուշակը կերթանք, հա՞, Մանուշակ, ես ու դու գնանք:

— Չէ, ես խորիշան հարսին սիրում եմ, ես սրա կշտին կը կենամ, ուրախ ուրախ տան տիկնոջ գիրկն ընկաւ փոքրիկ աղջիկը. շատ հարկաւոր ա՞, որ մենծ նանը փլաւ չտուեց. մենք հօ փլաւ ուտելու չե՞նք եկել. ընէնց չի՞, Վա՛րդ, դու էլ ինձ հետ կը կենաս ու թէ որ Թորոսը մեզ մենակ թողայ, մենք էլ սրա հետ խաղ չենք անիլ:

— Դէ բան ես էլ կը մնամ, փոքր կանգառնելուց յետոյ ասաց Թորոսը, համա խօսք տուէք, որ սրանց փլաւն էլ ուտենք ոչ:

— Ուտիլ չենք, ինչ կայ որ, պատասխանեց Վարդը:

— Ա՛խ, դու իր ասածի մեռնի, ասաց խորիշանը, երբ ինչ հնարք ունէր գործ դրեց ու Թորոսի կամքը չկարողացաւ տանել փլաւ ուտելու համար. դու որ էս օր սոյ դեռ ձուկը դուս չըրած էդքան սիրտ ունիս, էքուց ինչ պտի դառնաս:

— Հըմ ես էսօր մենծ նանիցը խնայիր [2]) կը հանեմ, նրանց աղջկայ ուսին կուժը կը կոտրեմ ջուր տանելուս, էքուց էլ աչքի չեմ թողայ, որ իմ սրտին դիպչի. ախր մենք հօ փլաւ չէինք ուզում, դու դրկեցիր, մենք էլ գնացինք իրա մօտ:

Մեծ նանի խօսքը կտրեց կառավարիչը, որ յանկարծ ներս ընկաւ դրսի բակը և ձայն տուեց. եկէք երեխէք, շտապեցէք, հենց հիմի թագաւորը կը գայ. առումեն Սաթումենց յիքու [3]) կուչան ա հասել, դու էլ, խորիշան հարսի՛, քէյվանու հետ շուտ արէք, կերակրների հօգսը քաշեցէք:

Հիւրակը բոլորովին հիացաւ, երբ որ Գէորգ խալֆէն նորա երեք հարիւր ձիաւորին էլ իւր տունն ընդունեց: Ամենքի համար ըստ

[1]) Երեխայքս. [2]) Վրէժ. [3]) Այգու.

արժանաւորութեան տեղեր պատրաստել. բոլոր ձիանքը նրա մեծ գոմումը տեղաւորուեցան և կարծես, թէ ոչինչ անսովոր բան չէր պատահել:

Շատ հաճելի թուեցաւ թագաւորին, երբ որ իւր բարձի վերայ կարգով նստած տեսաւ երեք երեխաներին, որոնք ներս մանելուն պէս վեր թռան տեղերիցը և միասին ձայն տուին. — ոտնամուտդ բարի:

— Ի՞նչ գեղեցիկ երեխէք ունիս, Գէորգ խալֆայ, դարձաւ դէպի տանտէրը թագաւորը. Աստուած քեզ պահի, բայց բանն այս է, որ միմեանց նման չեն. էս մի տղայդ, բռնելով Վարդի ձեռքը՝ ճակատիցն երեւում է, որ քաջ պէտք է դուրս գայ, էս միւսը՝ շատ խելօք աչքեր ունի, իսկ աղջիկդ՝ միանգամայն Վրաստանի թագուհի կարող է դառնալ իւր գեղեցկութիւնովը:

— Փա՛ռք իմ Ստեղծողին, տէր թագաւո՛ր, ասենք Աստուած ինձ երեխէք չի տուել, համա էլի իմ են սրանք. էս մի տղէն ու աղջիկը իմ ազգականներն, իսկ միւսը մի աղքատի որբ է, որ մեզ մօտ ա մնում ու մեր երեխեցը պակաս չենք սիրում:

— Կը գա՞ս ինձ հետ քեզ տանեմ, դարձաւ թագաւորը դէպի Վարդը, ինձ մօտ կը պահեմ, լաւ մարդ կը շինեմ:

— Թէ որ Մանուշակին էլ տանիս, ես էլ կը գամ, ես սրանից հեռանալ չեմ:

— Մանուշակը որ գնայ, ընկի մի հրոպէ ես ըստեղ կկենամ, ձեզանից յառաջ կը վազեմ, դուրս ընկաւ Թորոսը, քեզ ա կանչում, դու գնա. էլ ուրիշի հետ ի՞նչ գործ ունիս:

— Վարդը որ գնայ, ես էլ կերթամ. Թոթովեց աղջիկը, ես Վարդին շատ եմ սիրում:

— Էս դեռ թո՛ղ, յանկարծ ծանրակշիռ դէմք առած, մտածողական գծագրութիւն երեսի վերայ կերպաւորելով՝ դարձաւ Թորոսը դէպի թագաւորը. ասենք դու հանաք ես անում, ոչ դու մեզ կը տանիս, ոչ էլ մենք կը գանք. համա թէ որ դու ընէնց լաւ թագաւոր ես, ընչի՞ ես մեր գեղը թուրքի ձեռին թողում, մենք մեղք չե՞նք. էս ի՞նչ ա մեր հալը [1]) էս քուչի բազմութիւնը տեսար, որ կանգնած էին, նրանց միջին մի մարդ չը կայ, որ հարիր հետ

[1]) Դրութիւն.

ծեծ կերած չլնի, մի Թուրքի ահասից գալուս՝ մեր գեղը արին արտասուքը տանում ա. Ինչ կըլի, որ գաս մեզ նրանց ձեռիցն ազատես. մեր գեղցիք ամէնքն էլ վախում են. ես դեռ պստիկ եմ, մենծ որ ըլէի, ըսկի չէի վախենալ, Աստուած տայ մի մենծանամ, քեզ չափ մարդ դառնամ, տես Թուրքերի գլուխն ինչ եմ բերում:

Թագաւորը սառած մնայ, բոլոր կանգնողները զարմացան: Բոլորովին անհնար էր հաւատալ, որ մի փոքրիկ երեխայ այդպիսի խօսքեր կասի:

— Դու ո՞ւմ տղէն ես, հարցրեց Թորոսին Թագաւորը քմծածաղ տալով: Պարզ երևեցաւ, որ նա կարծեց, թէ խօսքերը սովորցրած, երեխայի բերանն են դրել:

— Ինձ հէր չունիմ, եթիմեմ, մի տէրտէր կար, տէր Յարութիւն կասէին, նրա տղէն եմ:

— Քեզ ո՞վ սովորցրեց էդ խօսքերը, որ ինձ ասես, Գէորգ խալֆէ՞ն:

— Ընչի՞, ես խելք չունի՞մ, որ ուրիշները սորվացնէին, քոռ եմ, ամէն օր տեսնում չե՞մ, թէ ինչ են անում Թուրքերը մեր գեղը գալուս:

— Հաւատա՛, տէր Թագաւո՛ր, քո գլուխը վկայ, որ մենք էլ քեզ հետ առաջի անգամն ենք լսում դրա բերնից էդ խօսքերը:

Այ երեխայ, բացականչեց Թագաւորը, լուսի բաժին է սրա հայրը, որ էսպէս երեխայ է յետ քցել: Ա՛խ, երանի չէ՞ր, դարձաւ նա դէպի իւր քամակին կանգնած մի վրացի զօրապետ, որ իմ Գէորգի որդին էլ էս երեխի նման յոյսեր խոստանար. ես վախում եմ, որ նա մեր ունեցածն էլ կորցնի:

— Եթէ դուք հանգիստ ապրել էք ուզում, աչքով նշանացի անելով ուրիշներին, ասաց Հերակլը Թորոսին, էլ ընչի՞ էք ըստեղ մնացել էս Թուրքի աշխարհքումը. եկէք ձեզ տանեմ իմ երկիրը, էնտեղ ազատ ու հանգիստ կապրիք, ու ոք ձեզ նեղութիւն չի տայ. էնտեղ շատ հայեր կան, նրանց լաւ երեխէք ունին, նրանց հետ կը խաղաս:

— Մենք մեր գեղը Թողա՞նք, ուրիշ տեղ գնա՞նք, մեր քցենք շինած տուն, տեղ, յէքի, մուլք, մեր Ծիրանաւորը, մեր ժամերը, մեր Մողնու սուրբ Գէորգը ու գնանք օտար աշխարհք, շլնքներս ծռենք, որ մեզ ողորմութիւն անեն, տուն, տեղ, ապրուստ տան.

չէ՞, թէ որ ինձ մնար, ես կուզէի օրը տասը հետ Թուրքերն էստեղ ինձ ծեծէին, քան թէ ուրիշ աշխարհքում անկաջս դինջ ապրէի: Թէ որ մի ճար ունիս, ըստեղ արա՛, թէ չէ քու աշխարհքը գալը խելքումս նստում չի: Սերտած խօսքերի նման այս բառերը դուրս եկան Թորոսի բերանից:

Հերակլին այնքան զգալի եղաւ Թորոսի ասածները, որ մոլորուածի նման չէր իմանում ինչ պատասխանի:

— Էս երեխան մեծ յոյսեր է խոստանում, ասաց նա, Աստուած տայ երկարակեաց լինի:

— Եթէ այդպէս է, եթէ դուք չէք ուզում ձեր երկիրը Թողնել, ես քեզ խօսք եմ տալիս, թէ որ Աստուած մի յաջողութիւն տուեց, մի օր գամ ու Երեւանի երկիրը պարսից ձեռքիցն ազատեմ. ես քեզ իմ Թագաւորական խօսքն եմ տալիս, գիրկն առնելով ու կրծքին սեղմելով ասաց Թագաւորը. բաւակա՞ն են քեզ իմ ասածները:

Երևի Հերակլը մոռացել էր, որ իւր խօսակիցը մի երեխայ է:

— Թէ որ մենծացած ըլենք, ես ու Թորոսն էլ քու ձեռի տակը կըմտնենք ու Թուրքերին կը կոտորենք, մէջ մտաւ Վարդը ոչ այնքան համարձակ:

— Ես էլ ամէն կիրակի բոբիկ ոտով Սանդուխտ տատիս հետ Մողնի կերթամ աղօթք կանեմ, որ Աստուած քո Թուրը կտրուկ անի, Վարդն ու Թորոսն էլ սաղ սալամաթ [1]) յետ գան, Թոթովեց Մանուշակը:

Չէր իմանում ի՞նչ անէր Թագաւորը. երկար ժամանակ երեք երեխային փոխէփոխ համբուրում էր. վերջը մի մի ոսկի բաշխեց ու բաց Թողեց:

Համադամ խորտիկների անուշահոտութիւնը Գէորգ խալֆի տուն ու կուրսը բռնել էր: Սողոմոնենց Գասպարը պատիգումը վրաց իշխաններին էր կառավարում, իսկ ինքը — տանտէրը անմիջապէս մեծապատիւ հիւրի առաջին ձեռքերը խաչած՝ սպասաւորներին էր հսկում:

Հերակլը ամենայն ախորժանօք վայելում էր բազմատեսակ կերակրները. չէր կարելի իմանալ, երեխայից արախօսութիւնը նրա ա-

---

[1]) Ողջ առողջ.

խորժակը բացել էր, թէ կերակրների քաղցրութիւնը նրա միտքն ըմբռնել։ Այսքան էր նկատում Գէորգ խալֆէն, որ այս վերջիններն Թագաւորի աչք ու միտքը սեղանից դուրս չէր, այնպէս որ իրան էլ մոռացել էր նա։

Գէորգ խալֆէն արդարև Թագաւորներ չէր տեսել, բայց իւր կեանքի մեծ մասը միշտ պարսից խաների ու բէգերի և մեր վեհափառ սուրբ հայրերի մօտ էր անցկացրել։ Եթէ Հիւսէյն-Ալի խանը նրան իրան հետ սեղանակից չէր արել, սակայն պատահել էր, որ ղալյոնի շնորհ էր արել. որը Գէորգ խալֆէն թէպէտ ծնկան վերայ չոքած ձեռքն էր առել, բայց չէր ծխել, խանին պատուելով։ Այս նշանակում է, որ եթէ խանը իրան այնքան յարգել է, որ ղալյոն քաշելու է արժանացրել, ինքն էլ խանի մեծութիւնն ու պատիւն է ճանաչել և նրա մօտ ղալյոն քաշելը իւր արժանաւորութիւնից բարձր է համարել։ Այս գերազանցութիւնը միայն իւրեան—խանին է արել, ապա թէ ոչ, միւս խաների ու բէգերի մօտ միշտ ծխել է։ Էջմիածին գտնուած ժամանակը նա միշտ մեր Հոգևոր տիրոջ և աւագ եպիսկոպոսների հետ է սեղանակից եղել։ Այսօր էլ նրա համար մի նոր բան չէր Հերակլի այցելութիւնը. քանի՞ քանի անգամ ինքը խանն իջևանել էր նրա տանը, և իհարկէ Երևանու կուսակալը թէպէտ և բռնակալ, բայց իբրև երկրի տէրը՝ Հերակլից աւելի մեծ պատուով է ընդունուել և մեծ նշանակութիւն է ունեցել իրա աչքում։

Առաջին անգամ նկատելի չեղաւ Գէորգ խալֆին Հերակլի իրան էլ սեղան նստացնելը, ուրիշ իշխանները պարտիզումն էին ճաշում, միայն ինքը Թագաւորը տանը առանձին էր ուտում։— Երևում է այսպէս է վայել, մտածում էր սկզբումը Գէորգ խալֆէն, բայց քանի յիշում էր իւր մինչև էս օր տեսած պատիւները և հիմա Թագաւորից անարգուելը, այնքան միտքը պղտորվում էր։

Ինքը խալֆէն էլ չիմացաւ, թէ ի՞նչպէս յանկարծ մի բարձր ծիծաղ դուրս թռաւ իւր շրթունքներից և Թագաւորի ուշադրութիւնն իրան գրաւեց։

— Ինչի՞ համար, կամ ո՞ւմ վերայ ես ծիծաղում, Գէորգ խալֆայ, անբաւականութիւնը երեսի վերայ երևեցնելով հարցրեց նրան Հերակլը. գուցէ կարծեց թէ իւր շատակերութեան վերայ լինի։

— Քեզ վրայ, տէր Թագաւոր, վստահաբար ասաց Գէորգ խալֆէն։

Թագաւորը ձեռքի պատառը ցած դրեց, գոյնը կապտեց ու խօսք չէր գտնում արտասանելու։

— Ճշմարիտ եմ ասում, տէ՛ր, կրկնեց Գէորգ խալֆէն, հէնց քեզ վրայ եմ ծիծաղում։ Ես միտք եմ անում, որ եթէ քո մեծութիւնը տեսնում ա, որ ես մի գեղացի մարդ՝ կարողացայ քեզ նման մի մեծ Թագաւորի իմ ծածկի տակ 300 ձիաւորով ընդունելու արժանի ըլել, գեղին մի սև փող ծախսի տակ չը քցեցի, մի կտոր իմ հալալ աշխատանքից եկած հաց ունեցայ քո առաջը դնելու, իհարկէ ես էլ իմ միջին մի մարդ եմ, մարդի հաշվում կը ըլնիմ. մի՞թէ ես էսքան արժանի չէլայ, ինչպէս տանտէր քո ոտի տակին չոքեմ, քո սեղանից մի կտոր հաց էլ ես ուտելու շնորհքն ունենամ։ Ես շատ լաւ գիտեմ, որ քո դռանն ինձ պէս 1000 ծառէք կան, ես տեսնում եմ, որ քո հետի իշխաններից ոչ ով համարձակութիւն չունեցաւ քեզ մօտ սեղան նստելու, համա դու ինձ նրանց ոտովը չը պտի տանէիր. քու պարտքն էր ինձ, ինչպէս տանտէր, նստացնէիր, բայց կընստէի թէ ոչ, էդ ես եմ իմանում. դու որ ինձ էդ պատիւը տայիր, ես էլ իմ մարդութիւնս կը բանացնէի։ Էս էր, էլ ուրիշ ի՞նչ ծիծաղելու բան կայ. սուտ եմ ասո՞ւմ, գլխիդ մատաղ։

Թագաւորի երեսի կնճիռները յետ գնացին, նրա բարկութիւնը զիջաւ, ներողութիւն խնդրեց այդ իրաւացի պահանջի համար և իսկոյն իւր հետ սեղան նստացրեց ու ամենայն զօրութեամբ ստիպեց հետը ճաշել։

Միւս առաւօտը գնալու ժամանակը Հերակլը մի քանի անգամ կրկնեց, որ ինքը երկու բան չի մոռանալ իւր կեանքում.— երեխաների խօսակցութիւնը և Գէորգ խալֆի հետ միասին անխորժանօք կերած ճաշը։

ԻԵ.

ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳԱՒԱՌԸ։

Մեծ Հայաստանի գլխաւոր նահանգներից մինն է Այրարատ նահանգը, որ ունենալով իւր վերայ մարդկութեան երկրորդ օրօրոցը՝ Սուրբ Գրքի մէջ հռչակեալ Աստուծոյ ընտրած Արարատ սարը, նրա անունն իւր վերայ է առել։ Այս նահանգը Հայոց աշխարհքի առաջին քարը դնելու օրից շատ պարծենալու տեղիք է ունեցել.

այս տեղ է դրուել Հայաստանի առաջին մայրաքաղաքի—Արմաւիրի հիմքը, ուր մեր պապերը 3000 տարի սրանից յառաջ բլրակի գլխին փայլեցրել են իրանց սիրելի Անահիտ Աստուածամօր ոսկի արձանը, որոյ աւերակը անթիւ պատահարներ ու ոչինչ համարած՝ էսօր էլ անց կենողի սրտից մի ախ է դուրս քաշում: Այրարատ նահանգումն է Վաղարշապատը—գուռը Արշակունիների մայրաքաղաքը, որ տեղից մեր հսկայ Տրդատը սասանեցրել է Սասանեան պարսիկներին, իսկ հիմա որքան էլ աւերուած՝ իւր շքեղ պալատներից մի հասարակ գիւղ դարձած՝ էլի ամէն հայի սիրտ իրան է քաշում: Այս Այրա-րատումը—Վաղարշապատումը մարդկութեան փրկիչը ոսկէ ուռով խփելով՝ իջաւ կրկին անգամ ու նշանակեց այն նուիրական տա-ճարի տեղը, որով ամէն մի հայ աշխարհքի էն ծայրումն էլ պար-ծենում է, ուր ինքը Միածին որդին արմատացնելով իւր աւետա-րանի ճշմարտութեան լոյսը, իրա իջնելովն Էջմիածին բառը մեզ աւանդ տուեց: Այրարատ նահանգումն է այն խոր վիրապը, որը մեր կենդանի պապ Գրիգորին տասն ու հինգ տարի գերեզման է դարձել, և վերջումը ողջ առողջ այն սուրբ աւանդը մեզ վերա-դարձրել:

Այրարատ նահանգի գաւառներից մինն է Արագածոտն, որ տեղ է այն նշանաւոր Արագած երկճղեայ սարը և որ տեղ Հայկայ որդի Արմենակը իր հօրից բաժին ստանալով առաջին անգամ բնակուե-ցաւ. իսկ Արագած սարի գլխին է մեր սուրբ Լուսաւորչի աղօթա-տեղին, որտեղ, ասում են, մինչև հիմա էլ մի կանթեղ անպարան կա-խուած է մշտավառ և անտեսանելի և յիշեցնում է հայասէր Միած-նին իւր սիրելի Գրիգորի ձեռնամած այս կանթեղի տակից Հայոց աշխարհի համար օրերով թափած արտասուքները: Այս սարն է, ուր մեր թագաւորները և հայրապետները ընտրել են իւրեանց հա-մար ամարանոց:

Արագած սարի բարձրաւանդակներն են ահա, որ հիմա էլ ամէն մէկը իւրեանց գլխին հպարտ հպարտ մի հնութիւն դրած՝ կար-ծես ուզում են միմեանց դէմ իրանց գերազանցութիւնը ցոյց տալ:

Մի կողմից Ամբերդայ վանքն է մի քարի վերայ՝ մի անդնդա-խոր ձորի գլխի ուռած ուռած բազմել, մի երկար ու ձիգ պարիսպ էլ մինչև Արագածի ծայրը տարածել, որ իւր մէջ ամառանոց եկող թագաւորներին ապահով պահի. միւս, կողմից Տեղերայ վանքն է գլուխը ցցել և յիշեցնում մեզ, որ ինքը մի ժամանակ արժանի է

եղել իւր հովերի մէջ Էջմիածնի շոգից ազատելու մեր սուրբ Հայրա-պետներին. աջակողմից Բիւրականը, Կոշը, Ագարակը մեր միտքն են բե-րում մեր նախնի իշխանների վերունիստը նրանց ամառը անց կացնելու տեղերը, ձախակողմից Փարպին ու Լազրվանն են մեր գրականութեան ծաղկեցնող Ղազար Փարպեցուն յիշում: Իսկ Օշականը—Արագած սարի ստորոտի սրբազան աւանդապահ գիւղերից մէկը՝ հայոց ազգային ամ-բողջութիւնը, հայոց լեզուն յարգող ամէն մի անհատի սիրտ է մագնիսի նման իրան ձգում:—Մի՛ անցկենար, ո՜վ հայի զաւակ, ձայն է տալիս այդ գիւղը—Արագածի որդին—Այրարատ նահանգի գլխաւոր պարծանաց տեղը. տես, թէ ո՜վ է իմ ծոցումս պարկած, այս տեղ է քո Մեսրովբդ, քո ազգի երախտաւորը, քեզ գրականու-թիւն, քեզ անուն, քեզ գրաւոր ազգերի մէջ նշանակութիւն տուողը: Այո՛, Օշականումն է մեր սուրբ Մեսրովբի պաշտելի գամբա-րանը՝ նրա խնկելի մարմինը: Հինգ վեց տարի սրանից յառաջ մեր բազմերախտ թարգմանչի վանքի ամէն մի խարխուլ քարը ազգասէր հայի աչքն էր ծակում: Քանի՜ քանի անգամ ընթերցողի հետ խօ-սողը սուրբ Մեսրովբի գերեզմանի հողը համբուրելուս մտածել է, թէ գուցէ այժմ իսկ մի թեթև երկրաշարժ իւրեան ևս Մեսրովբի ոսկի տակից չվերկենալու պատուին կարժանացնի: Այո՛, զգայուն հա՛յ, քեզ հետ ցաւած սրտով խօսողի պէս շատերը առանց արտասուքի չեն կարող անց կենալ Օշականից: Բայց հիմա ամէն վտանգ ան-ցաւ, էլ այսուհետև Մեսրովբի վկայարանն անհետանալու համար մի՛ մտածիր: Սուրբ Լուսաւորիչ պապի ներկայ արժանաւոր ժա-ռանգը իւր ուղղոյ ջերմ նուիրատուութիւնով ծածկելուն մօտեցրել է մի փառաւոր սրբատաշ քարեայ տաճար: Գնա՛, իմ պատուական հայի զաւակ, աշխարհքիս չորս կողմումը տարագիր ընկած՝ անտուն անտեղ թշուառ դու, գնա՛ Մեսրովբի գերեզմանին ուխտ և ինքդ աչ-քովդ տես իմ պատմած ճշմարտութիւնները: Մեսրովբեայ նշխարքներն այժմ ապահով կը պարկեն Գէորգ կաթուղիկոսի շինած վանքումը:

Իսկ եթէ Արագածոտն գաւառի իւրաքանչիւր քարն իրաւունք ունի պարծենալ, ընչի՞ մենք մոռանում ենք անմոռանալի Աշտարակը, մի՞թէ սա Արագածոտն գաւառում գտնուելու երջանկութիւնն ու-նելով, արժանի չէ՞ նրա միւս ականաւոր տեղերի կարգումը կանգնելու, մի՞թէ Աշտարակումը արժանայիշատակելի բաներ ոչինչ չկա՛ն.

Աշտարակ—դա աչքն է Արագածոտն գաւառի, դա Արագած սարի բազմատեսակ հոտաւէտ ծաղիկներից կազմած փնջի գլխի

վարդն է, դա կատարելատիպն է բոլոր Արագածոտնում գտնուող իւր նմանների: Նա իւր հիմնարկութիւնից ցայսօր ոչ միայն երեւելի է եղել իւր մի քանի վկայարաններով, ոչ միայն նշանաւոր է եղել իւր կենսատու ջրովը, իւր մաքուր և առողջարար օդովը, իւր երկրային դրախտ այգիներովը, իւր վայելչագեղ հովիտներովն ու ձորերովը, նա միշտ պատիւ է ունեցել իւր մէջ ընդունելու Հայոց ազգի սուրբ հայրերին և ազգապաշտպան հայրապետներին: Նա ընծայել է ազգին ամէն ժամանակ անհասների կարգն անցնող որդիք, որոնք ամէն մէկը իւրեանց ժամանակին փայլել են իւրեանց մեծագործութիւններով: Դար չէ եղել, որ Աշտարակը երեւելի կաթուղիկոսներ, տեղապահներ, ուսեալ լուսարարներ, արք եպիսկոպոսներ, հռչակաւոր քարոզիչ վարդապետներ և գործունեայ իշխաններ չպարգեւէր Հայոց ազգին: Թողունք ուրիշ մասերում Աշտարակու զաւակների ցոյց տուած գործունէութիւնները, հարցնենք մեր մայր Աթոռի տաճարներից և տեսնենք, թէ Էջմիածնի վանքումը Աշտարակեցի միաբան եղած ժամանակը նոյա եղբայրութիւնից ո՞րն է համարձակուել դուրս անցնել: Բարսեղ եպիսկոպոս, Մարտիրոս եպիսկոպոս, Գալուստ եպիսկոպոս, Սաթունեանց Սահակ՝ Պարսկաստանի բարերար եպիսկոպոս, երկու Ներսէս կաթուղիկոսներ. ես ի՞նչ գիտեմ, քանի՜ քանի հոգեւորական և աշխարհական անձինք են ծնել Աշտարակից: Այսքան միայն կասեմ, որ ժամանակը ցայսօր Աշտարակցիներին դուրս է կանգնացրել իւրեանց դասակարգից և էլի կը կանգնացնի յաւիտեանս ժամանակաց: Աշտարակու օդն ու ջուրը, նրա բարեխառն կլիման այդպիսի կաթ են ծծացնում իւրեանց որդւոցը: Մինչեւ այսօր էլ Այրարատեան գաւառի մէջ առած է եղել. «դողացնումես, Աշտարակ գնա առողջացի՛ր»:

Այս բարեյաջող հանգամանքներն եղել ահա, որ միշտ Աշտարակ են բերել մեր թագաւորներին, նախարարներին և հայրապետներին, եթէ ոչ ամբողջ ամառն անցկացնելու, գոնէ մի քանի օր այս հրաշազարդ գիւղի վայելչութիւններով զուարճանալու: Ի՞նչ է եղել Բերդաթաղը իւր անառիկ պարսպովը, (որի միայն նշոյլն է այսօր մի քանի տների ծառայում իբրեւ պատ), եթէ ոչ այսպիսի թանգագին հիւրեր իւր մէջ ընդունելու ապարանք:

Այո՛, Աշտարակը տարաբաղդացել ես է իւր այս անգուգական բարիքների պատճառաւ: Դէպի ինքն է հրապուրել գեղեցիկ աղջկայ պէս իւր անհարազատ բռնակալներին—Երեւանու խաներին ու բէգե-

րին, որոնք ամիսներով նստելով Աշտարակ՝ քաշել են նրա երեսի սերը, տանջել, չարչարել են Աշտարակու բնակիչներին: Թէհրանում մոլի խաները միմեանցից յափշտակել են Երեւանու կուսակալութիւնը մեծ մեծ կաշառներ տալով, գլխաւորապէս Աշտարակու սիրուններին տեսնելու չար դիտաւորութիւնով յափշտակուած: Ամէն մի կառավարութեան տիրող առաջին գործն է եղել Աշտարակն իրան սեպհականացնելը: Երբեմն տեսնում ենք նրան Էջմիածնի սեպհականութիւն, մի ժամանակ որեւիցէ պարսիկ խանի կալուած, վերջերումը պարսկական կառավարութեան տիրապետութիւն: Ի վերջոյ Աշտարակը մի քանի տասնեակ տարիներ շարունակ մի դրութեան մէջ երբէք չի մնացել, և այս ամէնը իւր նմաններից գերազանցութեան շնորհիւ: Այսօր էլ ամէն մի Այրարատցու բերանից կը կըլսես, թէ Աշտարակը Երեւանու աչքն է:

Ահա այս յատկութիւններն են, որ Աշտարակցուն տանելի և քաղցր են արել իւրեանց այցելուների դաժանամբ պատճառած նեղութիւններն ու դժուարութիւնները: Իսկ եթէ նրանք կարողանումէին, թէեւ ակամայից, ծառայել շատ բռնակալ հիւրերի և լցնել նրանց պահանջմունքները, ի՞նչ կարծիք, որ ամենամեծ պատրաստականութեամբ կը դիմաւորէին հիւրընկալելու իւրեանց սեպհական տէրտէրին և բարերար հայրապետներին, ինչպէս մեկմէկու ուրախ ուրախ կաւետէին մի այսպիսի երջանիկ դէպքը: Հետագայ անցքը թող հաստատէ մեր գիւղացւոց հիւրասիրութիւնը:

— Աչքդ լո՛յս, Գէորգ խալֆա՛, աչքներդ լո՛յս, Աշտարակու պատուելի հասարակութիւն, այգիների նեղ ու քարքարոտ քուչայից ձին թռցնելով գիւղի մէջ տեղը կանգնեց ու դուրս տուեց Էջմիածնի թուանքչին:

— Աչքի լոյս կենաս, Սարօ՛, ի՞նչ կայ, խէր խաբար:

— Էջուց Հոգեւոր տէրը [1]) կամենումա գալ ձեր գեղը:

— Տանուտէր, ասաց խալֆէն Սողոմոնենց Գասպարին, որին ղեւոնդի տեղն էին տուել. դէ շո՛ւտ, մեր Սարօյին մի անկաջարոնուկ [2]). էս

[1]) Հին ժամանակը չի եղել վեհափառութիւն, բարձր սրբազնութիւն և այլ այսպիսի տիտղոսները. սովորաբար կաթուղիկոսին կոչել են Հոգեւոր տէր, իսկ եպիսկոպոսներին ու վարդապետներին Հայր սուրբ: [2]) Վարձատրութիւն:

ահալթը ղօկի մեր տանից երկու չաղ հաւ բերեն տան իրանց թող տանի իր երեխեքանց հետ անուշ անի: Թուանքչին ուրախ ուրախ իրա պարգեն տացաւ ու յետ դառաւ, իսկ գիւղն իրարոցով դիպաւ:

— Տէր ցարութիւնի թանաբին [1]) պատրաստ ա, խալիչէքը [2]) փռած ու բարձերը դրած են, լուր է բերում մինը Գէորգ խալֆին:

— Զաւէրը [3]) տուել ենք գալուստ եպիսկոպոսի յիքու ափին ձորաբաշին, հետևումէ միւսը:

— Բաւականին ձուկն են բռնել թօռչիքը, [4]) քէյվանիքը մի կողմից պատրաստումեն, իմ կիսի չափ էլ մի մեծ կարմրախէտ ձուկն էլ՝ հէնց իմանաս, էս օրուայ համար էր պահած, իսկ կաթուղիկոսի ուտելու արժան բան ա. ոչխարներն էլ մորթիլեմ տուել, տղէքը կռները քշած՝ հաղրումեն, ասաց կառավարիչ կարգած Մարուգենց Մկրտիչը:

— Ջիաւորի ծէրը Յուշականայ առուի մօտ ա հասել, տէրտէրները զգեստաւորուած Օլորանի յիքանոնց գլխին, գեղացիք էլ ձիաւորուած՝ քեզ են սպասում, Գէորգ խալֆայ, թէզ հասիր:

— Գալի՛ս եմ, գալի՛ս, ասաց խալֆէն ու հարկաւոր տնօրէնութիւնները մէկ էլ կրկնելով, շտապեց դիմաւորել թանգագին հիւրին:

ԻԲ.

ԿՐԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՉԱԽՄԱԽԻ ՁԵՆ ՏԱԼ:

— Ծառայեմ սուրբ աջիդ, հոգևոր տէր, էս օր մենք մեր բոլոր նեղութիւնները մոռացանք, քո օրհնութիւնը մեր գլխից անպակաս ըլնի, էսպէս չարչարանքներ մենք ուրախութիւնով կը քաշենք: Մենք՝ գեղահաւան քո սուրբ ոտը մեր գեղը կոխելու համար մատաղ ենք տալիս սուրբ Աթոռին վեց անծին աչառ տամալղացու [5]), քսան ու հինգ չաղ [6]) ոչխար, օխտը կարաս իստակ գլխաւոր բաժակացու գինի ու երկու խալվար [7]) սիպտակահատ, աշնանավար նշխարացու ցորեն:

1) Դահլիճ: 2) Գորգերը: 3) Վրան: 4) Ձկնորսները: 5) Ընտիր սերունդ յառաջացնելու համար պահած անասուններ: 6) Գէր: 7) 30 փութը մի խալվար է:

— Աստուած ի փառս իւրում ընկալցի ձեր ուխտը, Աբէլի ու հայր Աբրահամի մատաղը համարի: Ի հարկէ, որդիք, ձեր պարտականութիւնն է, կըսաք. եթէ ժողովուրդը չտայ, ընչո՞վ պտի մի տուն լէքը միաբանք աշխարհքիս փառքերից իրանց զրկած՝ օրերը, սև արած, տանից, տեղից, ազգ ու ընտանիքից հեռացած, ապրին՝ որ ձեզ համար քուներն ու բսները թողած՝ Սաղմոս քաշեն: Տեսնո՞ւմ էք էս անօրէն թուրքերի տուած տանջանքները, թէ որ մեր աղօթքը չլնէր, սրանց ոչ մէկը չէիք կարող տանիլ. բոլորդ միասին կը թուրքանայիք, հուրն յաւիտենական դժոխքի բաժին կը լնէիք: Բայց հիմի փառք Աստծոյ, ինչքան էլ նեղացնում են, էլի Լուսաւորչու լոյս հաւատը կայ ու կայ:

— Ծառայեմ Լուսաւորչի լիս գերեզմանին, ասաց Գէորգ խալֆէն, որ չոքած էր Սիմէօն կաթուղիկոսի խալիչի ծայրին. (այսքան կաթուղիկոսը պատվումէր Գէորգ խալֆին) թուրքերը որ կան, անօրէն անհաւատ են, նրանց տուած նեղութիւնները մեզ էնքան թվում չի, ինչքան էս մեր պ ո ղ ի ու ա թ ո ռ ա հ ա ս [1]) հաւաքող հայր սուրբների ու տէրտէրների արածները: Ասենք քո սուրբ օրհնութիւնովը մեր գեղին էնքան նեղութիւն չեն տալիս, տան էլ՝ մենք սովոր ենք քաշելը, մեր շնքէ կաշին հաստացել ա, ամբոլի եզան [2]) պէս ինչքան էլ ծանր լուծ ըլի, կը կրենք, բայց բանն էս ա, որ ուրիշ գեղերի հետ էդ հոգևորականները շատ վատ են վարվում: Ես սրանից մի շաբաթ յառաջ Յուշական էի, իմ աչքովս տեսայ, թէ ինչպէս մի վարդապետ կալի մէջ տեղը գեղի համփեքանց ու իշխանաւորների առաջին մի խեղճ մարդի ոտ ու գլխի վրայ երկու թուանքչի նստացրած՝ մէկի ձեռն էլ մի կապ բարակ կակուղ ճիպոտ տուած՝ անողորմաբար ծեծիլ էր տալիս. ի՞նչ ա, թէ էդ աղքատ մարդը ո՞նց ա համարձակուել սուրբ Աթոռի բաժինը լուլի տալուց յետը՝ մի կոտ [3]) էլ իրան հայր սուրբին պահպանիչի վարձն ա վրէն աւելացրել, բայց չի ուզեցել թուանքչիներին շահիլ: — Ի՞նչ անեմ, գոռում էր ողորմելի մարդը, մի տուն լէքը մանր քիւլֆաթ [4]) ունիմ, իմ կողմից էդ էլ շատ ա, որ նրանց բերնի թիքէն կտրումեմ: Երեկ մի կալ հանեցի, մի բուռը հատիկ

1) Էջմիածնին հասանելիք հասոյթ: 2) Ամբոլի եզն են գութանին լծուած առաջին զոյգը: 3) Չափ է: 4) Ընտանիք:

չվեր կալայ. աչքիս առաջին իմ դառը քրտնքի պտուղը խանի վերգուն [1] ու Փարրաշների ոտի քրեհն սրին, աչքիս լիսը քաղուեց, երբ որ քաղցած երեխեքանցս սովածութիւնից մի օր շուտ ազատելու համար շտապեցի մի կալ հանել, որ սանիմ ալիւր շինեմ. ինչպէս սրբեցին տարան, որ մի հաւի կուտ չը մնաց: Էն օր էլ էս կալը հանեցի, հէնց էն ա ուզում էի մի պարկ շինեմ ջաղացը վազցնեմ, որ դուք հասաք:

— Այդ ի՞նչ սարսափելի բաներ ես պատմում, Գէորգ խալֆայ:

— Դեռ լսէր, ծառայեմ: Շատ—հարկաւոր չի, թէ քո երեխէքդ կը կոտորուին, մի քանի շան լակոտով պակաս կըլնի աշխարհքումս, ծղրտում էր նրա վրայ վարդապետը: Սրտիս ծէրն էրուեց, աչէդ մատաղ, քեզ դըրուստն ասեմ, աչքիցս արտասունքը կաթեց, էլ կարացի ոչ համբերել. մօտ գնացի ու աղանչաք արի.— Հայր-սուրբ, ասի. հերիք ա, մեռաւ էդ տնաքանդը, բաս դու խղճմտանք չունի՞ս։

— Դու՞ ով ես, անիծեալ, ոտը թափ տալով գոռաց վրէս վարդապետը. ես չեմ իմանում, թէ «որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ». էս բոպէիս քեզ էլ փէտի տակին կը սատկացնեմ: Դուք չէք իմանում, որ հովիւն իրաւունք ունի իր ոչխարին պատժել, խուզել, կթել, սիրտն ուզած ժամանակն էլ մորթել ուտել, ոսկորներն էլ շներին տալ: Ժողովուրդն ի՞նչ է, եթէ ոչ մեր ոչխարը:

— Ո՞վ է եղել այդ անշնորհքը բարկացաւ կաթուղիկոսը:

— Վարդապետի փուքն, երեւում ա, նստեց խեղճ գեղացու վրայ, շարունակեց Գէորգ խալֆէն, ընդուր որ մի կողմից գեղացուն ծեծում էին, միւս կողմից մի թուանքչի ջվալը դէմ տուած ցորնի շեղջին, առանց չափել լցնում էր: Երբ որ էս աղէն իր ջվալը բեբանկոլս արեց պրծաւ, վարդապետը հրամայեց բաց թողել արինկոլոլ մարդին:

— Էս ո՞ր Աստուածը կվերցնի հայր սուրբը, մօտեցայ ես, ի՞նչ իրաւունքով էս անճարի տունը քանդում էք:

— Տղէք, բռնեցէք հիմի էլ էդ բերանը պատռածին վէր քցեցէք, պատուիրեց նա թվանքչիքանցը: Ես, ի հարկէ, ինձ համար սառը կաննած էի. կարծեմ թուանքչին ինձ ճանանչեց, վարդապետին

[1] Հարկ.

աչքով արեց ու անկաշկանդ փախայ. ես լսեցի որ իմ անունը տուեց. կարծես հայր սուրբս ինքն էլ շնորհակալ չէրաւ իրանից, մօտ եկաւ, ներողութիւն խնդրեց, որ ինքն ինձ չէր ճանաչել:

— Ընչի՞, կո՞յր էր ի՞նչ էր, օրը տասն անգամ Էջմիածին չես գալիս:

— Էնպէս վարդապետները, ծառայեմ աչէդ, դարձաւ Գէորգ խալֆէն կաթուղիկոսին, պարսիկներից աւելի ատելի են մեզ համար: Հէնց էն սհաթին մի քանի Յուշականցի հալւոր մարդիկ էն ծեծուողի հետ ուզում էին գնալ Բաթրինջ գեղի մօլլի մօտ թուրքանալ, թէ որ ես աղաչանք, պաղատանք չանէի ու չպահէի. համա ի՞նչ օգուտ, որ մի օրից յետոյ մեր պատուական վարդապետը մի ուրիշ գեղում էլ էն օյինն եկել ա ու հինգ մարդ տանով տեղով ճարները կտրուած՝ գնացել են թուրքացել. Լուսաւորչուս զաւակները Մահմատի սուրուի [1] մէջն են խառնուել:

— Ես հիմա յիշում եմ, ասաց կաթուղիկոսը, վարդապետն ինձ պատմեց, որ էդ թուրքացողները շատ անպիտան ու խռովարար մարդիկ էին և եթէ ինքը չը լինէր, բոլոր գիւղը պիտի թուրքանար: Դրա համար էլ ես վարդապետին ծ ա յ ր ա գ ո յ ն շինեցի: Մեր եպիսկոպոսներից մի քանիսն էլ ինձ պատմեցին, որ Յօշականից մինչև անգամ մի քանի հոգի եկել էին վարդապետից շնորհակալութիւն յայտնելու:

— Սուտ ա, աչէդ մատաղ, դողալով յառաջ եկան այդտեղ հաւաքուած բազմութեան միջից մի քանի Յօշականցիք, որոնք կաթուղիկոսին ուղեկցող ձիաւորներիցն էին. Էջմիածին եկողների միջին մենք էլ էինք, մենք ուղիղ քեզ մօտ գանգատ եկանք, համա մի քանի հայր սուրբներ մեզանից երկուսին Փալախայ գըրին, մի լաւ ծեծ տուին ու վանքեցը թվանքչիքանցով դուրս արին, որ քո երեսը չը գանք:

— Փալախայ ուտողի մինն էլ ծառէդ էր, հոգէս տէր, յառաջ եկաւ մինը նրանցից, ընչանք էսօր էլ ոտներս ուռած են, կարմիր տակ [2] են դառել. մենք եկել ենք էստեղ քո ողորմութիւնը խնդրել, թէ որ դատաստան չես անիլ, իմացած կաց, որ մենք էլ էն հինգ տան հետ մեր հոգին կը սեւացնենք, սատանի դասը կը-

[1] Հօտ. [2] Ճակնդեղի արմատ.

գասակունք, կը թուրքանանք, դժոխքը կերթանք, թող Աստուած մեր մեղքը էն աշխարհքումը վարդապետներիցը հարցնի:

— Յառաջ արի, անիծեալ խլնխլնթ Մեսրովբ վարդապետ, ձայն տուեց կաթուղիկոսը երեսը դարձնելով մի խումբ հոգեւորականների:

Խմբի միջից մի սուր ճիչ բարձրացաւ եւ մի վեղարաւորի ծնկները ծալուեցան ու վէր ընկաւ:

Ուշքը գնաց, ասացին մօտին կանգնողներից մի երկուսը եւ կամեցան բարձրացնել:

— Սուտ է, մօտ բերէք:

— Վեղարը վէր առէք, հրամայեց կաթուղիկոսը, երբ վարդապետն ուշքի եկաւ եւ վերարկուն հանեցէք: Այս րոպէիս, Գալուստ եպիսկոպոս, տար սրան եկեղեցի եւ կարգը յետ առ, ուղարկիր Էջմիածին մեր ջորապանների մօտ երկու տարի անասունների աղբ սրբելու:

Հրամանը կատարվում էր, եթէ Գէորգ խալիֆէն համոզելով Ցօշականցիներին՝ չգար եւ հոգեւոր տիրոջ ոտքերն ընկած՝ այս մի անգամի համար ներողութիւն չը խնդրէր:

— Շատ բարի, երկար մտածելուց յետոյ ասաց կաթուղիկոսը, միայն թէ թող Քրիստոսի խօսքը սրա վերայ կատարուի, «որ սուր առցէ, սրով մեռցի». թող մի քանի մահակներ սրա միջքին իջնեն այս խեղճ գիւղացու փոխանակ, որ իմանայ, թէ ինքը հովիւ է եւ «հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:

Մի փառաւոր ծեծ Գալուստ եպիսկոպոսի այգումը վայելեց մեր Մեսրովբը եւ ուղարկուեցաւ սուրբ Աթոռի գարեւանը երկու շաբաթ իւր սաղմոսը քաղելու, իւր հոգւոյ փրկութիւնն ապաշխարութիւնով շահելու:

— Էն ի՞նչ ձիաւորներ են Մողնու գարիգուսից ներքեւ գալիս, նկատեց Սողոմոնենց Գասպարն ու իսկոյն ճանաչեց: — Վա՜յ ձեր տունը չքանդուի, մենք կորանք, էլ մի՛ կաննիլ, Գէորգ խալիֆայ, Ցօշի գեղի մենծ մօլլէն ա, երեւում ա գալիս ա մեր հոգեւոր տիրոջը գալուստը շնհաւորելու:

— Ու բարով գա՛ր, իջեցնելով իւր միահեծան իշխանական ձայնը՝ սիրտը կտրած խօսեցաւ կաթուղիկոսը, կօշիկներս տուէք. շուտով մարդ ղրկեցէք իմացէք. թէ որ նա է, մինչեւ այգու դուռն յառաջ գնանք: Գալուստ եպիսկոպոս, պատուիրեց նա, շտապի՛ր, մեր սնդուկից հանի՛ր էն մի թօփ զարբաբը, վրանի առաջից սկսած փռի՛ր

ինչ տեղ որ կը հասնի. մի քանի թօփ էլ էժանագին կտորներ կան, այն էլ պատրաստի՛ր ծառաների համար:

Դեռ խօսքը բերանումն էր, որ թուանքչին լուր բերեց, թէ մօլլէն այգու դուռը մտնում է:

Ողորմելի ծերունին մոռացաւ իւր տարիները. երիտասարդի նման էր վազում դիմաւորելու:

Գէորգ խալիֆէն ու միւս իշխանները վաղուց կաթուղիկոսին թողած՝ մօլլի չորս կողմն էին պատել:

Իջաւ ձիուցը փառաւորեալ մօլլէն եւ մի քանի ուղղահաւատ սէյիդների ձեռքերի վերայ թինկնած՝ Ղեւոնդի առաջնորդութեամբ մտաւ այգին:

Դռան քամակին ներսի կողմը կարգով շարուած էին կաթուղիկոսը իւր եպիսկոպոսներով:

Նա խոնարհաբար գլուխ իջեցրեց եւ մի կեղծաւոր բարեւ էլ մեծ մօլլայից առաւ ու նրան առաջ ձգած՝ ինքը քամակից հետեւեց դէպի վրանը:

Դեռ նշմարելի էին մօլլի երեսին կնճիռներ եւ թանձր բարկութեան մռայլներ, բայց երբ որ մտնեցաւ վրանին ու աչքն ընկաւ զարբաբ փիանդազլին, բարձրացրեց սուրբ մօլլէն իւր ժողոված յօնքերը, երեսը դէպի կաթուղիկոսը դարձրեց եւ հրամայեց իւր հետ հաւասար մանդալ:

Յառաջ եկաւ Սիմէօն կաթուղիկոսը, բայց էլի մի քանի ոտք յետ էր մնում եւ խոնարհութիւնով պատասխանում մօլլի հարցմունքներին, որոնք էին Էջմիածնի բարեկեցութեան, միաբանների առողջութեան եւ իւր՝ խալիֆայի կեանքի ուրախութեան մասին:

— Քո սուրբ օրհնութեամբն եւ մեր արեգակնափայլ շահի ու մեծափառ խանի անչափ ողորմութեամբն ապրում ենք երջանիկ եւ ուրախ, պատասխանեց կաթուղիկոսը:

Երբ մօլլէն կօշիկները գոռոզութիւնով հանեց եւ ոտքերը դրեց փիանդազլի վերայ, նրան հետեւող սէյիդները չսպասեցին էլ կաթուղիկոսի առաջարկութեանը, իրենք իրեն սեպհականութիւն՝ մի կողմից հաւաքում էին զարբաբն եւ ծալում:

— Խնդրեմ ներող լինիս, ցած ձայնիւ ասում էր կաթուղիկոսը, քո պատւին այսքան չպէտքէ լինէր, բայց քեզ յայտնի է, որ մենք մեր տանը չենք, ես էլ հիւր եմ իմ սիրելի ժողովրդի մէջ. մի ու-

րիշ անգամ քո ընծայն իմ աչքի վերայ. պատրաստ ենք ամէն ժամանակ ծառայելու:

— Շատ շնորհակալ եմ, ինչ նեղութիւն ես քաշել, ասում էր սուրբ մարգարէի ջերմեռանդ աւանդապահը. ես կը խնդրեմ վերցնես այս զարբարը, մի ուրիշ աւելի կարեւոր տեղ պէտք կըլինի, մենք հոգեւորականներ ենք, էդպէս փայլուն բաների աչք չունինք, մենք դին այրի (կրօնով տարբեր) եղբայրներ ենք:

Մի կողմից էս խօսքերը կխաբերան բաց էր թողում մոլլէն քաղաքավարութեան համար, միւս կողմից աչքի ծայրով քամակ էր նայում, որ տեսնի, թէ իւր սէյիդները հաւաքո՞ւմ են զարբարը. Թէպէտ առանց այն էլ գիտէր, որ ուղղահաւատ մուսուլմանների հոգեւորականների ոտքերի տակին փռուելու արժանացող գորգ կամ կերպաս ոչ մի անմաքուր քրիստոնեայ իրաւունք չունի ձեռք տալու, թող թէ ոտքի տակին կոխոտելու: Այդ կը նշանակէր մարգարէի սուրբ օրէնքը պղծել: Մոլլէն լաւ գիտէր, թէ ինչ բանի վերայ ինքը բազմեց, այն մնաց իւր սեպհականութիւնը: Այժմ էլ այդ դիտաւորութեամբն էր շնորհ բերել, որ մի քանի բաներ ճանգը ձգի:

Մենք թողնենք երկու հոգեւորականներին միմեանց հետ քաղցր զրոյցներ անել, աչքներս դարձնենք վրանից դուրս կատարուած իրողութիւնների վերայ:

Քսանի չափ սեւ չալմաները [1]) գլխներին փաթաթած, պատառոտուն կանաչ զառաքի երկար կապէն հագին, կէս չարէք կեղտ իրանց բոբիկ ոտքերի վերայ մեռցրած սէյիդ ասես, տկլոր, մերը բաց ձիապաններ ասես, առաւօտից մինչեւ երեկոյ մոլլի դռանը քարցած ծառաչների հետ բաժ լեզող անգործ ծոյլեր ասես, ագռաւների նման լցուել են այգին ու էլ ոչ տէր են հարցնում, ոչ այգեպան. ինչ գտնում են՝ պոկում են ու կլլում, կծեպով, կնձեռով, փթած՝ հոտած չհարցրած, խակ ու հասած մոխկ չտուած՝ բերանները ածում եւ կիսածամել կուլ տալիս. կարծես գիշակեր գայլեր լինին, որ ոսկրն էլ չեն հարցնում, եւ նրանց քարից պինդ ատամները պաշտօնն էլ միայն է կատարում, աղում, փշրում, հալում է բոլորը:

— Քանդեցի՜ն, փչացրի՜ն, լուր է բերում այգեպանը Գալուստ եպիսկոպոսին:

[1]) Գլխի փաթաթան:

— Թո՛ղ, խէր Աստուծոյ, հարամ լինի գլխներին, յուսահատուած ասում է եպիսկոպոսը:

— Էլ խակ ու հասած չեն հարցնում:

— Էդ աւելի լաւ, փորացաւ կընկնին, որ յառաջ Մահմետի մօտ կերթան:

— Ինչքան կարողանում են, փորերն են ածում, մնացածն էլ մի մի ձիու տոպրակ շան պէս շլինքներն են անց կացրել, պաճոկում մէջն են լցնում:

— Ուրեմն միայն չեն ուզում իրանց մարգարէին տեսութիւն գնալ, իրանց լակոտ-լուկոտներին էլ հետները կը տանին:

— Խաղողի վազի մատը իրանց դիպչելուս արջի պէս ջարդոտում փշրտում են, էլ ոչ անդալիս [1]) են թողում, ոչ բարունակ, ոչ ջխտաթայ [2]), ոչ մատը, ոչ կուտրակ [3]):

— Էդ աւելի լաւ, թո՛ղ, կարելի է մէկի աչքին դիպչի կոտրածը, աչքը դուրս գայ: Է՛հ, ինչ ես խօսում, ա՛յ որդի, հեգնութիւնները յետ թողած պատասխանեց այգեպանին Գալուստ եպիսկոպոսը. դու այգու հոգսումն ես, մէկ այս կողմն էլ աչքդ դարձրու եւ էնպէս խօսիր:

Եւ արդարեւ, որ կողմը ոտքդ փոխումես, պարսիկ են. էլ ոչ եպիսկոպոս, ոչ գիւղացի, ոչ տանու եւ օտար են հարցնում: — Ո՞ւր է իմ ընծան, ասում է մինը, ես մեծ մոլլի գրագիրն եմ: — Ինձ բաշխի՛ր քո գօտին, բռնել է մի ծառի տակի մի ուրիշը մի վարդապետի, ես մեծ մոլլի ղայլաչին եմ. — Էս փոքրիկ գորգը շատ յարմար է մեծ մոլլէն նամազի համար, ես քանի անգամ Երեւան եմ գնացել սրանից մինն առնելու եւ չեմ ճարել, ասում է մի երրորդն ու անտարբեր կռնատակը դնում գորգը:

Մի գեղեցիկ պատանի էլ՝ ձեռքերը հինայով կարմրացրած՝ ինչ տալիս էին չէր բաւականանում եւ դէն էր ձգում. — Էս ինձ արժանաւոր պարգեւ չի, բարկանում էր նա, ես մոլլի սպասաւորն եմ:

Բոլոր մոլլի հետ եկողներից միայն սա էր մաքուր հագնուած: Շատ ձանձրացրեց սա իւր անտեղի պահանջներով եւ երբ որ չըլցուեց իւր սրտի փափագը, աներեսաբար գնաց մոլլէն գանգատեց:

[1]) Բարակ վազ: [2]) Ցնկելու վազ: [3]) Հաստ վազ:

Երեւումէ սպասաւորի խօսքերը իւրեանց ազդեցութիւնն արին: Մօլլի երեսի վերայ մի չարուգուշակ հետեանք պարզ կարդաց խեղճ կաթուղիկոսն և հանդարտացնելով տղային, կանչեց Գալուստ եպիսկոպոսին և հրամայեց իւրեանց նստած լաւ ձիանց մինը զարդարած ընծայել պատանուն: Պարզ նկատեց կաթուղիկոսը, որ տղայի գանգատից ոչ պակաս իւր պատուէրը ազդեց մօլլի սրտին: Նրա հաստ շրթունքների անկիւնները յետ բացուեցան և կրկին շողոքորթական անճոռնի ծոռոմախօսութիւնները յառաջ եկան:

Ի՞նչքան յաջող եղաւ դէպքը, որ յանկարծ Երեւանից ձիաւոր եկաւ մեծ մուշտէյիդից և մօլլին շտապաւ քաղաք կանչեց:

— Շատ ցաւումեմ, որ երկար ժամանակ չկարողացայ քեզ հետ տեսնուիլ, ասաց մօլլէն կաթուղիկոսին. ես ուզումէի մարդ ղրկել մեր գեղը, իմ խոհարարին կանչել, մի քիչ հաց բերել տալ, որ էս գիշեր քեզ մօտ մի լաւ ուրախութիւն անէինք:

— Շատ ուրախ կըլինէի:

— Վնաս չունի, յետ դառնալուս մի երկու գիշեր քեզ մօտ կը մնամ:

— Շատ կը պարտաւորէիր, բայց ես էգուց յետ եմ դառնալու, Աթոռի գործերը երեսի վրայ թափուած են:

— Է՛հ, վնաս չունի, մի ուրիշ միջոց:

— Էգուց քաշուինք գնանք մեր տեղը, մօլլի հեռանալուց յետոյ ասաց կաթուղիկոսը, թէ չէ, իմ սիրելի Աշտարակցիք, դուք կը քանդուիք, եթէ այդ անպիտանը վերադառնայ ու ինձ այստեղ գտնի. գոնէ Աստուած բարի տայ մուշտէիդին, որ ձեզ էլ, մեզ էլ ազատեց սրա դաժան դէմքիցը:

— Է՛հ, ծառայեմ, պատասխանեց Գէորգ խալֆէն, մեզ համար թուրքերի տուած նեղութիւնները խաղ ու պար են դառել, մի երկ օր հանգիստ մնալով մեր ցաւին դարման չի ըլնիլ, դուստ վերջնական մի ազատութիւն ըլի, թէ չէ մեր օրն ըսկի մի օր չի, գիտենք՝ որ կանք:

— Մենք էլ էգ մի և նոյն տանջանքների մէջ ենք, օրհնեալ լինիք, բայց ձեռքերիցս ինչ կը գայ, պէտք է կրենք. փառք Իրան, դրանով երեւում է, որ մեզ ինքն ինչքան է սիրում. ասած է. «զոր սիրէ տէր, խրատէ, տանջէ զամենայն զոր կամի». էս աշխարհքումս եթէ նեղանում ենք, ապահով պէտք է լինենք, որ պարզերես դատաստանի օրը Քրիստոսի առաջին պէտք է կանգնենք:

Մինչ այս՝ մինչ այն՝ սպասաւորները սեղանը պատրաստեցին: Երեք երեխայ — մի աղջիկ ու երկու տղայ — բռնած իւրեանց ձեռքին որը մի աղաման, որը մի բաժակ կամ մի գաւով գինի, ուրախ ուրախ վազվզելով գալիս էին:

— Ի՞նչ լաւ երեխայք են, ուրախացաւ կաթուղիկոսը, մօտ կանչելով նրանց:

— Էս օր, ծառայեմ, մեր հանգուցեալ տէր Ցարութիւնի տէրտէրակինը քեզ համար մի լաւ քուֆթայ ա եփել, երեխէքը նրանց տանիցն են: Ահա էս մէկը՝ իրա — տէրտէրի տղէն ա, մէկէլը մեր խեղճ նախրչու տղէն ա, որ մի օր քեզ պատմեցի, էս էլ մեր էն փուչ Գևոնդի մինուճար աղջիկն ա, որ հիմի էլի խեղճ տիրուհին ա պահում:

— Միտքս ա միտքս, հառաչեց կաթուղիկոսը: Բայց ինչ՞ համար տիրուհին չի ուզում մի փոքր թեթեւանալ էս երկու ցաւերիցը, իրան տղէն, ինչպէս հոգեւորական, պէտք է անպատճառ վարդապետ չինի. թող էս միւսին էլ նրա հետ վանքն ուղարկի, միանգամից ազատուի այս ծանրութիւններիցը, մի տղայն իրան բաւական է:

— Իր որդուն նա միտք ունի անպատճառ վանքական չինել, ծառայեմ, ինքն էլ ուխտ ա արել, բայց էս որբին նա իրանից հեռացնիլ չի. սրան իրան որդու պէս սիրում ա. իրանի տեղակ դա պտի նրան մխիթարող ըլնի:

— Եթէ էդպէս է՝ որբի համար իւր կամքն է, բայց իւր որդուն անպատճառ թող էս մի քանի օրս ուղարկի. փոքր չի, լաւ ժամանակն է, դու իրան ասա, Գէորգ խալֆայ, թող չմոռանայ:

— Աչքիս վրայ, աջիդ մատաղ:

Միւս օրը մի քանի վեղարների քամակի ծայրերն էին քամուց փռփռում դէպի Աշտարակ: կաթուղիկոսը իւր միաբաններով գնաց Էջմիածին:

ԻԹ.

ԱՐԴԱՐ ԴԱՒԻԹԸ:

Սեպտեմբերի քաղցր առաւօտներից մէկում, մի միջահասակ ծերունի կարմիր ձիու վրայ նստած՝ Ցօշականու ձորից շատ ժամանակ չէր դուրս եկած՝ երեսը ուղղած էր դէպի հարաւ և հանդարտ ներքեւ էր գալիս դէպի Արդար Դաւթի աւերակները:

Ծիրանին միայն չէր, նրա քամակին իր հետ նոյն ձիու վրայ նստած էր մի փոքրիկ նիհար մանուկ և իր բարակ կռները պատատել էր ձիաւորի մէջքով:

— Գլուխս դանդ ու սար արիր[1]) մնջում չէիր տալիս հարց ու փորձ անելով, դէ հիմի դուզ մոտիկ արա դպա Մասիս, այ, վանքն երևում ա. էնքան տեսնես, որ լէթուիս[2]):

Մանուկը փոքր ինչ ծռուեց ծերի քամակից ու նրա կռնատակից աչքը դէպի հարաւային արևմուտք դարձրեց:

— Այ, էն հինգ կաթուղիկէով երևացողը Էջմիածինն ա, նրանից դպա ձախ՝ երկու վանքերից մինը Հռիփսիմէն ա, մէկէլը Շողակաթը, էն Էջմիածնի քամակից գլուխը հանածն էլ Գայեանէն ա: Այ մոտիկ տուր, որդի՛, գլուխը ծռեց նա դէպի երեխան, որ հեռաքրքրութեամբ նայում էր դէպի Արարատեան դաշտը, որ փռուել էր մինչև հայեացքի առաջին և զքանչելի տեսարան էր ներկայացնում իր կանաչ ու սպիտակին տուող արտ ու այգիներովը՝ իր մէջ առած Էջմիածինը: Տես, էս մօտիկումն երևացող հանդերն Էջմիածնինն են, արտերը հնձուած են. համա էն կանանչ ցելերը որ կան, նրանք բամբակի արտերն են. հիմի էլ ձախ մոտիկ տուր էս ձորակի մէջը, տեսնումես էդ քեալաւրքը[3]), էդ քանդուած տները. էդ Արդար Դաւթի խարաբէքն են:

— Արդար Դաւիթն ո՞վ ա, փիլիպպոս ամի՛ր, ի՞նչ կըլի պատմես, լսել չեմ:

— Դէ բաս անկաջ դիր: Չգիտեմ սրանից քանի տարի անց, էս տները շինել ա մի Դաւիթ անունով ճգնաւոր: Նա շատ ժամասէր, աստուածասէր մարդ ա ըլնում, շատ խիստ ճգնաւոր ա ըլնում. բան ու գործը միմիայն աղօթքն ու ծոմ պահելն ա ըլնում: Էս տները ընդուր համար ա շէնքերից էնքան հեռու շինում, որ իրան տներին նեղութիւն տայ, ամէն իրիկուն առաւօտ շոքերին ու ցրտերին, անձրևին ու կարկտին ճամփայ ընկնի ըստեղից, գնայ Էջմիածին ժամ ու յետ գայ աղօթք անելով: Ամէնքն արմացել են էս ճգնաւորի վրայ, իր օրումը գլուխը բարձր չի բռնել, միշտ աչքերը գետին քցած՝ իր ճամփէն բռնած անխափան գնացել եկել ա: Կաթուղիկոսը խղճն ա եկել Դաւթի վրայ, ասել ա, որ քանց

[1]) Զանձրացրիր: [2]) Կշտանալ: [3]) Աւերակ:

իրան նեղութիւն ա տալիս, թող վանքումը միաբան մնայ: Գլուխը մահի ա տուել ճգնաւորը: Ինչքան էլ խնդրել աղաչել են, որ իրանց հետ մի հանդիսաւոր օր սեղան էլ ա նստի, էլել չի, զաբուլ չի կացել[1]): Ես, ասել ա, շաբթական մի կտոր ցամաք չոր հացից սաւահի ոչինչ չեմ ուտում, տարին 12 ամիս ծոմեմ: Մարդիկն էլ էս ճգնաւորի սրբութիւնը տեսել են, անումը դրել են Ա ր դ ա ր Դ ա ւ ի թ:

Մի ժամանակ Էջմիածնի ուսումնարանի աշակերտներից շաբթէնը մինը կորչում, աներևոյթ ա ըլնում: Միաբանքը մոլորվում են, էլ տեղ չեն թողում, ման են գալիս, չկա՜յ որ չկա՜յ. մէկէլ շաբթին մինն էլ ա կորչում: Էս վարդապետները ինչ հնարք ասես բանացնում են, ոչինչ իղ ու թող[2]) չի երևում. մի կողմիցն էլ կորչում ա:

— Ի՞նչ անենք, Դաւիթ հայր, հարցնում ա միանգամ ինքը կաթուղիկոսը Արդար Դաւթին, սուրբ մարդ ես, մի ճար արա էս անբաղդութիւնին:

— Ես մեղաւոր անարժան սևերես եմ, ծառայեմ, ասում ա Արդար Դաւիթը, արժանաւորաց աղօթքը բարեխօս ըլի, էլի հսկում պատարագ արէք, բալքի Աստուած խղճա գայ:

Կաթուղիկոսը հրամայում ա սաղ շաբաթ հսկում անել ու միաժամ կենալ. ինքն էլ ընչանք իրիկուն ծնկան վրայ եկած՝ աչքերից գլդր գլդր թափելով աղօթք ա անում:

Գորթ որ Աստուած միաբանքի ձէնը լսում ա: Լսի՛ր թէ տակիցն ի՞նչ ա դուս գալիս:

— Ի՞նչ, հարցնում է ուշադրութիւնը արած մանուկը:

— Մի օր Էջմիածնի վանքի մէջ կանգնած տեղը էս քո Արդար Դաւթի միջքին կպցրած մի թուղթ են տեսնում. նրա վրայ գրած ա ըլնում. ո՛վ տէր Աստուծոյ, ինձ ազատեցէք էս տեղից. Արդար Դաւիթը խափելով ինձ բերեց իր տունը. էգուց պտի ինձ մորթի ուտի. իմ բոլոր ընկերներին սա է կերել: Էդ գրողն էլել ա վանքի կորած մանկերից մինը:

— Ես իրա տան մէջը կրակ կըտայի, կերէի էդ մարդակեր ջանավարին[3]) քաշուած ասաց մանուկը:

— Հէնց ըռէնց էլ արել են, ոտ ու ձեռը կապել են, ու իր տան մէջը կրակը տակը տուել:

[1]) Չի համաձայնել: [2]) Հետք: [3]) Գազան:

— Դեռ քիչ էլ։

— Էդ անաստուած սատանայ Դաւիթը հինգ մոնթ ա կերած էլել. ամէն մէկի ոսկոռները ջոկ ջոկ իրար վրայ դասած ա էլել ու մի կտոր թղթի վրայ անունները գրել, վրէն դրել։

Էն օրուանից էս խարաբէքը [1] կան ու կան. հէնց իմանաս թէ էս տեղն անիծած ա. տարի չանցկենայ, որ էս քալավէքանց [2] մէջ մի քանի թալան [3] չըլնի, մարդ չսպանուի։ Հարամին [4] ճամփէն կտրում ա ու եկողին քշում ձորակը, տանում խարաբէքանց մէջ ինչ ունի չունի, սըլկում ու բաց թողում. թէ որ Աստուած խռովեց մի քիչ ընդդիմութիւն արիր, գլուխդ էլ կը թռչի։ Դէ հէրիք ա, էս ա մտանք ձորը, քշենք շուտ անց կենանք էս փորձանքոտ տեղերը. ասենք քաղհանաւորը մօտ ա, համա ինչ կուզի ըլի, էլի չարը սատանէն հակառակ ա։

Ծերունին ձին շտապեցրեց, իսկ երեխան մտածմունքների մէջ ընկած Արդար Դաւթի աւերակների արած վատ տպաւորութիւնից, սիրտը կոտրած՝ յիշեց իւր հայրենական տունը, իւր ընկերներին։—Հիմի Վարդն ու Մանուշակը պտի կուռ կոխբռնած մեր բակումը վազէ վազ անեն, մեր Կարապետին պտի խաղացնեն, ես աշխարհքից կորած՝ պտի փթեմ Էջմիածնի չորս պատի մէջը, վերջն էլ ով գիտայ ինչ մարդ դուս գամ. ինչ կըլէր իմ հէրս էլ նախրչի ըլնէր, ես էլ Վարդի պէս մեր գեղումը մնայի իմ թայ ու թուշների [5] հետ խաղայի, կռուէի, լաց ըլէի, էլ յետ բարիշէի, քանց թէ տէրտէր՝ ու ինձ նրա խաթեր զոռով վարդապետ են ուզում շինել. ես ինչ մեղաւոր եմ, որ տէրտէրի տղայ եմ էլել. Նանս ասում էր, որ տէրտէրի առջինեկը պտի վարդապետ դառնայ. տօ չեմ ուզում էլ՛, զոռով թազին [6] հորս կերթա՞յ։ Ասում ա, կաթուղիկոսը հրամայեց որ ինձ շուտ ղըրկեն Էջմիածին, շատ սխալուեց նա, ինձ վրայ ի՞նչ էրք [7] ունի, նա իմ ի՞նչն ա, հէրս չի, մէրս չի, ազգականս չի։ Երեխայն էս մտածմունքների վրայ փոքր մնաց լաց էր լինում, բայց էլի ինքն իրան խրախուսեց։—Է՛հ, գիժ հօ չեմ, որ լաց եմ ըլում, մտածեց, հրէս չէ՞ Էջմիածինը, կը փախչեմ, տներս հօ կապելու չե՞ն։

Ծերունին խիստ զարմացաւ. նա մինչև Արդար Դաւթի աւերակները հասնելը ձանձրացել էր երեխայի հարցմունքներից. նա ուզում էր ամէն բան տեղեկանալ և զանազան հարցեր էր տալիս. բայց ահա անցնում են ամենագրաւիչ տեղերովը, ահա Արարատեան դաշտը իւրեանց ոտքի տակին, ահա աջ ու ձախ գիւղերը, ահա կուսանաց վանքերը, Վաղարշապատը, բամբակի արտերն ու գերչակի թփերը, բոլորը մանկան համար նոր բաներ էին, բայց երեխան անտարբեր էր մնացել։ Առաջին անգամ կարծեց՝ թէ քնած է, և երբ իմացաւ որ այդպէս չի, ուզեցաւ պատճառն իմանալ։

[1]) Աւերակ։ [2]) Նոյնպէս աւերակ։ [3]) Ասպատակութիւն։ [4]) Աւազակները։ [5]) Հասակակիցներ։ [6]) Բարակ որսի շուն։ [7]) Իրաւունք։

— Ոչինչ չկայ, Փիլիպպոս ափէր, ես միտք եմ անում, որ նախըրչու տղէն տէրտէրի տղից շատ բաղդաւոր ա։

Էջմիածնի պարսպից դուրս հարաւային կողմի «Դրսի բակ» կոչուած պարսպապատ տարածութեան վրայ էին գտնվում առաջ Էջմիածնի գոմերը։ Ամէն մի ուխտաւոր իրաւունք ունէր առանց հարցնելու իւր ձին այդ տեղ կապել։ Ձիապանը պարտական էր ձին եկաւոր հիւրի ձեռքից առնել և օրինաւոր կերպիւ դարմանել։

Այս տեղ ահա կապեց իւր ձին Աշտարակեցի Շահազիզենց Փիլիպպոսը և ընթերցողին ծանօթ հանգուցեալ տէր Յարութիւնի ութ—ինն տարեկան Թորոս որդու կուռը բռնած՝ մտաւ վանքի բակն ու իւր քայլերն ուղղեց դէպի Գալուստ եպիսկոպոսի խուցը։

Լ.

ԻՄ ԸՆԿԵՐԻՆ ԲԱՐՁ ՉԵՄ ՇԻՆԻԼ։

Էջմիածնի վանքի հիւսիսային կողմի նեղ և փոքրիկ խցերից մէկի մէջ մի մահճակալ էր դրած, նրա վրայ մի անկողին էր փռած։ Մի փոքրիկ Խորասանու գորգ ծածկում էր անկողնի երեսը։ Մահճակալի ոտքի ու գլխի կողմից դրուած էին մի մի կլոր բարձ, կամ մութաքայ գոյն գզոյն թաւիշից. մի այդպիսի բարձ էլ զարդարում էր մահճակալի մէջ տեղը։

Խուցը լուսաւորվում էր հարաւային կողմից երեք քառորդ գազչափ լայնութեամբ վանդակապատ պատուհանից. որի ներս թողած լոյսը չնայեցեալ պարզ և ջերմ արեգակին, շատ աղօտ էր. դրա պատճառը լոյսի դռան սրահը, կամ ինչպէս տեղական բարբառով կոչվում է, կամարակապ տալանն էր։ Իսկ եթէ սորա վերայ էլ աւելացնենք բակումը տնկած մեծ և բազմադարեան ճղքնաշատ ու տերևալից թեղի կամ սովորական խօսքով չինարի ծառը, որը

նաւապետին բարձրացել է խցից և իւր մշտական հովանաւորութեամբը արգելք է դարձել արեգակին իւր ճառագայթները գետին ձգել, այն ժամանակը կարող ենք երևակայել, որ այդ կարգով շարուած խցերից ոչ մէկի մէջ արեգակ չի կարող ներս թափանցել: Մեր նկարագրած խցի յատակը մեծ մեծ կոփածոյ քարերով սալած է. բայց ժամանակի հնութեամբն ասենք, թէ վարդապետական փոքրաւորի անհոգութեան շնորհիւ քարայատակը միանգամից կարծվում է հողայատակ, որի վրայ ամէն Աստուծոյ օր մի քանի անգամ ջուր է սրսկվում: Այդ պատճառաւ էլ դրանից տուն մտողի երեսին մի զովութիւն և քթին մի խոնաւ հոտ է դիմաւորում: Այս զգալի է առաւելապէս օտարականին. միջի բնակիչներին և առհասարակ բոլոր այս տեսակ խցերի համեստ եղբայրակիցների համար դա անզգալի է, մանաւանդ թէ՝ Էջմիածնի անտանելի շոգերի պատճառաւ շատ հաճելի:

Այս մեր նկարագրած խուցը իւր նմաններից մի բանով միայն զանազանվում էր: Դալանից ներս մտնելուն պէս մի տախտակեայ փոքրիկ բաժանմունք ունէր նա, որ ծառայում էր նախասենեակի տեղ, ուր դրած էր մի երկայն նստարան, կամ տեղական կոչմամբ իշոտնուկ:

Երեք մարդ ներս մտան նախասենեակը. նոցանից մինը մի բարձրահասակ ծեր—երիտասարդ վեղարաւոր էր. երկրորդը մի ծերունի՝ ուղտի բրդի երկայն քղանցներով ու նոյնպիսի երկայն թևերով չուխայ հագին, գլխին էլ մի ամբողջ ոչխարի մորթուց գտակ՝ մի քանի տեղ էլ բրդոտուած՝ պլոկուած: Երրորդը՝ մի կարմիր չիթ արխալուղ հագին ութ-ինը տարեկան մանր աչքերաւոր տղայ:

Վեղարաւորը խցի դուռը բաց արեց ու գլուխը սաստիկ խոնարհացրած՝ ներս մտաւ նախասենեակը. իսկ ծերունին թէպէտ ոչ շատ բարձր, այսու ամենայնիւ գլուխը կորացրեց ներս մտնելուս, բայց շեմքը անցկենալուց յետոյ՝ գլուխը շուտ բարձրացնելուց ասենք, թէ անփորձութիւնից, գագաթը սաստիկ զարկեց դռան վերին բարապանին:

— Ձեր տունը չքանդուի՛, վարդապետնե՛ր, փնթփնթաց նա, գլուխս մէջ տեղից երկու կէս էլաւ, էս ի՞նչ դռներ ունիք, մեր հաւարնի դուռը սրանից աւելի բանձր ա:

— Պէտք է շատ կռանայիր, ուշ զգուշացրեց վեղարաւորն ու ինքը հանեց իւր ցածրակրունկ կօշիկները, իւր հետ եկողներին էլ

պատուիրեց տրեխները հանել նախասենեակումը և սպասել մինչև որ կանչէին:

Փոքր ժամանակից յետոյ մի պատանի բացեց ներսից նախասենեակի դուռը և ներս հրաւիրեց դրանց: Պէտք է, որ ծերունին մի քանի անգամ եղել էր այս խցումը. գլխարկը յատակի վերայ վայր ձգելով, իւր քայլերն յառաջ տարաւ նա դէպի հիւսիս—արևելեան անկիւնը, ուր սպիտակին էր տալիս առաստաղի վերայ ամրացրած՝ մահճակալի գլխին կախած մի շղարշեայ վրանանման բան, որին «մուռչակտամայ» են կոչում և որի փրկարար ներգործութիւնը ամէն մի էջմիածնաբնակ շատ լաւ գիտէ: Այս մուռչակտաման է, որ բացուելով անկողնի վերայ և ծալուելով ամէն կողմից մահճի տակ, ազատում է ամառը նեղ խցերի բնակիչներին անհամար մծակներից, խեղդող մժեղներից և աներևս ճանճերից: Թէպէտ ամէն կողմից օդն արգելվում է այս վրանի տակին, ծանրացնում է միջի հանգստացողների շնչառութիւնը, բայց մեզանից ամէն մէկը ուրախութիւնով կը համաձայնի շնչարգել ընկնել Էջմիածնումը մուռչակտամի տակ, քան թէ գիշերը մինչև լոյս տանջուել այս անկոչ հիւրերի—անտանելի միջատների ձեռքից: Մի բոպէի մէջ ամէն մի մծակը ճանճի չափ է դառնում ու կարմրում լալազարի [1] նման, երբ որ բզզալով գալիս իջնում է երեսիդ կամ ձեռներիդ վերայ ու իւր սուր ծիծը խցկում մինչև կէսը մարմնիդ մէջ: Ո՛ր մէկին քշես, ո՛ր մէկին սպանես. էս երեսիդ ապտակ կը խփես որ կամ սպանես կամ թռցնես անպիտան արարածին, միւս երեսիդ, աչքիդ, քթիդ, վզիդ, կը նստի. արենքամ են անում մարդու: Դրա համար էլ հարկն ստիպել է մեր սուրբ հայրերին մուռչակտամէն սարքել, մտնել մէջը, մեր պապի պապ Ադամի նման տոից գլուխ մերկանալ ու ազատ քնել, ապա թէ ոչ ոչինչ ծածկոց չի կարելի փռել վրէն, քրտինքը առու կը լինի և ջրի նման կերթայ այդ շոգի մէջ:

Ծերունին ինքն յառաջ էր գնում դէպի անկիւնը, բռնած երևխայի ձեռքից. վերջինս կարծեց, թէ խաւարի մէջ ընկաւ, այնքան անսովոր էին նրա աչքերը խցի աղօտ լոյսին:

— Աստուած օգնական, ծառա՛յեմ սուրբ աջիդ, խոնարհու-

---

[1] Արենագոյն ծաղիկ:

թինով համբուրեց ծերը մահճակալի վրայ ծալապատիկ բազմած իւր հասակակից ծերունու ձեռքը: Մեր ողորմածիկ տէր Ցարութիւնի երեխին բերի հոգևոր տիրոջ հրամանովը, ասաց նա ակնածութեամբ և երեխային յառաջ հրելով, հրամայեց համբուրել հայր սուրբի աջը: Մանուկը հետևեց իւր առաջնորդողի հրամանին:

— Անունդ ի՞նչ է, երեխայի ձեռքը իւր ձեռքի մէջ բռնած՝ հարցրեց քաղցր դէմքով բարձի վրայ բազմած ծերունին:

— Թորոս, վստահաբար պատասխանեց երեխան և հազիւ աչքերը սովորելով խցի լուսին, մի սուր հայեացք ձգեց ծերունու վրայ և կարծես թէ քննում էր իւր հետ խօսողի դծագրութիւնը:

— Ո՞րտեղից ես, ո՞ւմ տղէն ես, ինչի՞ ես եկել, երկու երեք հարց միմեանց ետևից շարեց տեղակալը և աչքով նշանացի արեց իւրանից փոքր ինչ հեռու կանգնած, ձեռքերը սրտին խաչած Գալուստ եպիսկոպոսին, որը սրանց բերող վեղարաւորն էր:

— Ես գիտեմ, որ քեզ ասած կըլնի իմ պապը, մտով Գալուստ եպիսկոպոսին ցոյց տուեց մանուկը և կարծես, թէ վիրաւորուեց, որ իրան այդպիսի երեխայական հարցեր առաջարկեց տեղապահը:— Ես Աշտարակցի եմ, տէր Ցարութիւնի տղէն եմ. ես չեմ եկել, ինձ բերել են էստեղ վարդապետ շինելու:

Տեղակալը զարմացաւ, կամ իրաւն ասենք, սարսափեց այս երեխայի անվեհերութեան վրայ. երկրորդ անգամ էլ նայեց նա Գալուստ եպիսկոպոսին ու հարցրեց մանկանը:

— Վարդապետ կըդառնա՞ս:

— Զգիտեմ:

— Եթէ այդպէս է, ինչի՞ ես եկել:

— Ասցի ինձ բերել են, ընդուր որ տէրտէրի տղայ եմ:

— Քեզ համար այստեղ շատ ուրախալի կըլինի, մեր ուսումնարանումը լաւ լաւ ընկերներ կունենաս, քեզ Փարաջայ կըհագցնենք, վերջն ինձ նման մեծ մարդ կըդառնաս, ինձ պէս փափուկ տեղերում կընստես. հը՛, լաւ բան է՞ թէ ոչ, դու քո օրումդ էսպէս բաներ չես տեսել, էնպէս չէ՞:

— Չէ:

— Ինչի՞:

— Ինձ համար մեր գեղն էլ շատ լաւ էր, լաւ լաւ ընկերներ էլ ունէի, կարդալ էլ գիտեմ, տէտրը պրծել եմ, կանոն սաղմոս եմ ընկել, լաւ լաւ շորեր էլ ունէի:

— Բայց որ էնձ պէս լաւ տեղ չէիր ունենալ, էսպէս հանգիստ բարձերի վրայ թինկը տուած չէիր նստիլ. էս քիչ բան է՞:

— Որ ալանչանք էլ անես, ես քո տեղը չէի ուզել նստել, գոլթրում [1] հօ չե՞մ, որ ընչանք իրիկուն կակուղ տեղաշորի միջին վեր ընկնիմ. քանի պստիկ եմ, կըխաղամ Վարդի ու Մանուշակի հետ, երբ որ մէնծացայ, կերթամ մեր մուլքը կըբէջարեմ [2], չալէշ [3] կըգամ, ճակատիս քրտինքովը մի կտոր հաց կաշխատեմ կըբերեմ մեր տունը. ես էն լաւ աշեմ, քանց թէ քեզ պէս անգործ պարապ ոտս ձգիլը:

— Տօ չար Ցուլխանեա, դու ի՞նչ գիտես, որ ես չեմ գործում, քեզ ո՞վ է ասել, որ վարդապետները չեն աշխատում:

— Ես քեզ համար չեմ ասում, ես քեզ չեմ ճանանչում, ես մենակ իմ պապին եմ տեսել. այս ասելով երեխան մատնացոյց արեց Գալուստ եպիսկոպոսին. սա մեր գեղն էկած վախտը սաղ օրը ուտումա, քնում, վեր կենում ու իր ժլքումը պարապ սարապ կուները քցելով պօլթայ տալիս [4]:

— Աչքդ լո՛յս, Գալուստ եպիսկոպոս, ծիծաղելով դարձաւ դէպի նա տեղակալը, քեզ էլ ոչ պակաս լուաց:

— Շատ սուր երեխայ է ծառայեմ, պատասխանեց Գալուստ եպիսկոպոսը, մի և նոյն ժամանակն էլ երես տուած է:

— Այո՛, ես էլ տեսնում եմ որ էս երեխան մեծ յոյսեր է խոստանում ապագայումը, Աստուած տայ երկարակեաց լինի, մարգարէաբար վճռեց տեղապահ սրբազանը. տար սրան, Գալուստ եպիսկոպոս, հրամայեց նա, յանձնիր ուսումնարանումը վերակացու վարդապետին, հրամայիր հանդերձապետին վերարկու հանդցնել և խառնել մեր աշակերտների հետ:

— Փիլիպպոս ափէրը խօսք ա տուել ինձ, որ վանքի ամէն տեղերը ինձ շանց տայ, էս օր սրա հետ կըլնիմ, էգուց կըգամ ձեր ուսումնարանը. էստեղ մնում եմ, հօ փախչում չե՛մ. մի օր յառաջ, մի օր յետ, մի օրումը հրաբունի [5] չըպտի դառնամ, մէջ ընկաւ Թորոսը:

— Շատ լա՛ւ, շատ լա՛ւ, էս մի օրը քեզ բաշխեցի. փա՛յ ապրես

[1] Անդամալոյծ: [2] Մշակել: [3] Կըչարչարուիմ: [4] Զբօսնում: [4] Րաբունի, փիլիսոփայ:

դու, ի՞նչ լաւ տղայ ես, երեսը շոյելով աջ ձեռից տեղակալն և արձակեց նրանց:

— Փիլիպպոս ափէ՛ր, հարցրեց երեխան ծերին, երբ որ իրանք բաժանուեցան Գալուստ եպիսկոպոսից և վանքի տեսարաններին նայումէին. տեղակալը տեղաշորի վրայ էնքան բարձերն ընչի՞ համար էր շարոտած. բարձը գլխատակի համար է, նրա միջքին էլ կար, ոտերի դիհն էլ:

Փիլիպպոսը յայտնի էր իւր սրախօսութիւնովը, այս անգամ էլ իւր ճարտարութիւնը գործ դրեց:

— Էն բարձերից մինը նրա կնկայ տեղակ ա կողքին դրած, մէկէլները որդկերանց. մենք աշխարհականներս կնկով, երեխեքանցով ենք մխիթարվում, ուրախանում, վարդապետները իրանց բարձերով. էլ ինչ երկարացնեմ, բարձը որ կայ, վարդապետի մենակութիւնի հնկերն ա:

Մանուկը մի փոքր միջոց մտածմունքների մէջ մտաւ ու ոչինչ չպատասխանեց նրան. երևում է այդ բանի համար նա ինքն էր կշռում. իսկ յանկարծ հրելով իւր խօսակցի կողքին ասաց. փիլիպպոս ափէր, ես իմ ընկերին բարձ չեմ շինիլ: իմ հէրն ու մէրն ինձ խաղտում, սիրում, պաչպչտում ու վրէս ուրախանումեն, որ իրանց որդին եմ, ես էլ բարձը պտի խաղտեմ ու սիրե՞մ. չէ ափէր, անխելքութիւն ա:

— Տօ գիժ, շատ լաւ բան ա, երբ որ կը փորձես, կը հաւանես. երկու կակղ բարձ գլխատակդ կը դնես, երկուսը ոտներիդ տակը, մինը քամակդ, մինն էլ պինդ կը խաղտես, ճիտ կանես, դօշեցդ կը կպցնես ու ձմեռը տաք տաք կը քնես:

— Սուտ ա, լաւ բան չի. ես չեմ ուզում, ես իմ ընկերին բարձ չեմ շինիլ:

— Տեսնո՞ւմես ինչ չաղ, գուարթ, կարմիր մարդիկ կան էս վանքումը, քոմնա էդ բարձերի զօրութիւնիցն ա այ:

— Է՛հ գլխներովը դիպչի իրանց գուարթութիւնը. գորթ, [1]) փիլիպպոս ափէր, հանաքն էն դիհը [2]) կենայ. ես էս վանքումը ոչ մի կարմիր երեսով մարդ չտեսայ, դեղնած, աչքերը փքուած, օխտն օրէն մեռելի են նման. ասենք հաստափոր ու չաղ են, համա դրանց չաղութիւնը ուռածի նման ա: Ա՛յ, ինչ կասեմ մեր խաւմի

[1]) Իրաւ: [2]) Կողմը:

էս պապի գէմօյի չաղութիւնը, կզակների [1]) տակի կախ ընկած եղը մարդի քէֆ [2]) ա բերում, կարմիր վարդը քեզ օրինակ. համա սրանք՝ ոնց որ փչած տիկը քեզ օրինակ, որ մէջը դատարկ ա: Դորթ քեզ մտամ, փիլիպպոս ափէր, մի ասա՞ տեսնեմ պատճառն ի՞նչ ա:

— Սուրբ մարդիկը սիպտակ կըլնին լուսի պէս, սրանց հոգին էլ լուսի պէս պսպղում ա, պատասխանեց կէս հեգնաբար, կէս հաստատ հաւատացած ծերունին. մենք աշխարհականներս մենակ մեր ջանի ու մեր երեխեքանց հոգսումն ենք, համա վարդապետները գշերն ընչանք լիս անքուն աղօթում են քաղում մեր հոգու փրկութեան համար. հալբա՛թ, որ դեղնած ու հիւանդոտ կըլին, տարին տասներկու ամիս քուն չունին, կերածներն էլ մի բան չի. ուտիս օրերը մի աման չըլբուր [3]) ա, պասերին էլ մի քիչ ոսպախաշու:

— Չէ՛, ես էդ բանին հաւանում չեմ՝, գլուխը պտըտեց մանուկը. մի մարդի ջան որ առողջ չըլնի, նա ընկի [4]) իր գլխի ճարը չի կարալ քաշել, օտարների համար ո՞նց պտի աղօթք անի:

Փիլիպպոսի մտքովն երբեք էս բանը չէր անցել. նա հազարաւոր իւր նմանների հետ հաստատ հաւատացած էր ամէն օր իրանց ականջումը հալողների խօսքերին, թէ վանքականները ամէն բանից զրկուած՝ միայն ուրիշների հոգւոյ փրկութեան համար են աղօթում և ձեռքերը տարածած բարեխօս լինում. բայց մանկան խօսքը նրան թերահաւատացրեց. նա երկմտեց, իրաւ, որ մի մարդ գնա ինքը պէտք է առողջ լինի, որ ուրիշների ակարութեան համար էլ հոգայ. քանի մի անգամ մտքումը ծամեց այս խօսքերը և հաստատ ու վճռաբար ասեց երեխային. գիտես ինչ կայ, Թորոս ջան, դու քո երեխայ տեղովդ ինձանից աւելի խելօք ես. շատ ուղիղ ես ասում էս վարդապետների համար. ասած ա «քաչալը դեղ գիտենայ, իր գլխին կանի»:

Ամբողջ օրը փիլիպպոսն ու Թորոսը ման եկան Էջմիածնի բոլորքը: Ծերունին նրան տեսնելու համար ուսումնարան էլ տարաւ. դեղնած մանուկների գոյները Թորոսին աւելի սարսափեցրին. շատ անգամ կասկածեց նա իւր այս տանը արմատ բռնելու մասին. իսկ այն գիշերուան Գալուստ եպիսկոպոսի տալանում առանց մուռչակտամի ժժմունքներից կրած նեղութիւնը բոլորովին յուսակտուր ա-

[1]) Ծնօտ: [2]) Ուրախութիւն: [3]) Ջրալի կերակուր: [4]) Երբէք:

րին երեխային. Թէպէտ արդէն աշուն էր, Թէպէտ Աշտարակումը վաղուց զովութիւնն ընկել էր և դուրսը քնելը փոքր ինչ վտանգաւոր էլ էր դարձել, բայց էջմիածին սրանից մի ամիս յետ էլ դեռ մուաշակտամի կարօտութիւն կայ:

Միւս օրը Փիլիպպոսը Գալուստ եպիսկոպոսի առաջնորդութեամբ տարաւ երեխային ուսումնարան, ուր իսկոյն հագցրին նրան նախապէս պատրաստած կապոյտ լանքայի ֆարաջան:

Փիլիպպոս աղէրը թողեց երեխային ուսումնարանումն և ինքը սիրտը կոտրած՝ ճանապարհ ընկաւ դէպի Աշտարակ:

Հինգ րոպէ չէր անցել, որ մեր վերարկուի մէջ կոլոլուած մանուկներից մէկի ոտքերը ֆալախի մէջ մտաւ: Ամէն մի մահակի հարուածը Թորոսին թվում էր, թէ իրան է դիպչում: Նա մտածում էր, որ եթէ ոչ այսօր, գոնէ վաղը կամ միւս օրը նոյն ֆալախէն իւր գալուստն էլ շնորհաւորելու է:

— Չէ, հաստատ վճռեց նա, էստեղ մնալն իմ կողմից իշխ մարտիրոսութիւն ա. հիմի մեր գեղումը Վարդն ու Մանուշակը իրանց համար ուրախ ուրախ մեր յիքանոց թմբերումը հաւող են պտուղ անում [1]), ես պօպօք են հաւաքում, ես պտի էս չորս պատի միջին ամէն ահաթ սպասեմ, թէ որտեղ որ ա, ֆալախէն ինձ էլ չը չալթի [2]). ես սրանց ո՞ր մինի հետ պտի ընկերութիւն անեմ, էնպէս են խէթ մուխ տալիս վրէս, որ կասես թէ ես իրանց աչքի քոռ գրողն [3]) եմ. չէ, աղպէր, Աստուած ամէնքին էլ բարի տայ, լաւն էն ա, ես վաղօրօք իմ գլխի ճարը տեսնեմ: Մէրս ինձ ի՞նչ պտի անի, տանիցը հօ դուս չի քցի, շատ շատ՝ մի երկու սիլլայ [4]) պտի տայ ու կէս սհաթից էլ յետ քաշի թշերս պաչի:

Փիլիպպոսը Աշտարակ հասաւ, ձին կապեց ու գնաց Սուսամբար տիրուհւոյն պատմելու իւր երեխայի նոր վիճակը:

Ի՞նչքան մեծ եղաւ նորա զարմանքը, երբ դրսի բակի դուռը բանալը, տէրտէրենց բակը մտնելն ու աչքովը Թորոսն ընկնելը մէկ եղաւ, երևում էր որ մանուկը ինքն էլ նոր է ներս եկել ու դեռ տուն չի մտել:

[1]) Այգեքաղից յետոյ երեխայքը կրկին մնացածները ժողովում են: Այս է պտուղ անելը: [2]) Կոչկանդել: [3]) Ջար հրեշտակ: [4]) Ապտակ:

— Յիսուս ու Քրիստոս Աստուած, երեսին խաչակնքեց Փիլիպպոսը, տօ, դու սատանայ հօ չե՞ս, էս ե՞րբ եկար, ո՞ւմ հետ, ես ընչի՞ համար:

— Նոր եմ գալիս, պատասխանեց անվրդով, բայց յոգնածութիւնից հեւհեւալով Թորոսը, մէն մենակ եմ. ես քեզ ասեցի, որ իմ ընկերին բարձ չեմ շինիլ:

ԼԱ.

Թ Ո Ւ Ա Ն Ք Չ Ի:

Երկու ժամ հազիւ կը լինէր անցել, որ վանքի մէջ դղրդիւնն ընկաւ. էլ բաց տեղ չմնաց, էլ գոմ ու մսուրքներ, էլ ամբարի ծակեր չթողին, թուանքչիքը մտնում դուրս են գալիս. շաթիրներն էլ գործի կանգնեցան, եպիսկոպոսների փոքրաւորներն էլ ձեռ ու ոտ ընկան, վանքի հասարի մէջ կասկածելի տեղ չթողին՝ բոլորը տեսան, բայց նոր աշակերտը չկար, ասես դառաւ աներևութացաւ: Հրամանը սաստիկ էր, կաթուղիկոսը Աշտարակցուն հէնց նրան քաղցր աչքով էր մտիկ տուել. Գալուստ եպիսկոպոսի պէս էլ կնքահայր ունէր. էլ ի՞նչ ասել կուզի, որ շփոթը մեծ կը լինի: Գիւղն էլ տակ ու վրայ արին, ջուր տանող հարս ու աղջիկներին, այգիներն ու արտերը գնացող սայլապաններին էլ անհանգիստ արին, ոչ մի մարդ, մի Ադամայ որդի չկարողացաւ տեղեկութիւն տալ. վանքի տիրացու, 6—7 տարեկան, ոչ ոքի աչքով էն օրը չի ընկել:

Ուսումնարանումը նրա մօտ նստող մանկթը էսքան միայն ասեց, որ նոր աշակերտը վեր կացաւ իւր մօտից, «ծարաւ եմ, գնամ մի քիչ ջուր խմեմ ու գամ» ասաց ու առանց վարժապետ վարդապետից հրաման ստանալու դուռը բաց արեց, դուրս գնաց: Էգ բանը միայն ես տեսայ, շարունակեց դողալով երեխան, որովհետև էգ միջոցումը առաջին կարգի աշակերտները դասերը չգիտենալու պատճառաւ կարգով չոքել էին ծնկները բաց, վարժապետ հայր սուրբը պարապած էր նրանց երկու ականջից մի մի գլուխ հանելով [1]), պահապան մահտեսին էլ ֆալախէն դրել էր նրանցից մէկի ոտքը. ամէնքի ուշադրութիւնն այն կողմն էր: Էգ պատճառաւ էլ ինքը՝ այդ

[1]) Ականջները քաշելով:

լուրը հաղորդող երեխայն յարմար չհամարեց խանգարել կարգը և անհանգիստ անել ուսուցչին։

Ջուր դնելու սրահը շինած էր ուսումնարանի հանդէպը՝ խցերի կտերը։ Մի մեծ լուսամուտ արևելեան կողմից նայում էր այդ սրահից դէպի Հռիփսիմէի վանքը։ Մոնթի պատմելու վերայ, ինքը՝ վարժապետ—վերակացու հայրը, որ սաստիկ վախում էր իւր անհոգութեան համար, մի վերջին անգամ էլ մտաւ ջրի սենեակը և պատուհանից ուզեցաւ դուրս նայել։ Նրա մազերը քստմնեցան, երբ որ լուսամտի խարխուլ պատի մէջ մի լանքայ վերարկուի ծայր հողի տակից դուրս եկած տեսաւ։ Դուրս քաշեց զգուշութեամբ այդ վերարկուն, և ո՜վ զարմանք, մի փոքրիկ փարաջայ՝ պատի մէջ թաղած։

Բոլորը միաբան վկայեցին, որ այս նորեկ Մոնթինն էր։

Հետաքրքրութիւնը կրկնապատկուեց, լաւ զննեցին պատուհանից դուրս, լաւ նայեցան և գտան, որ պատի խուռչների հողը իջած և եղունգների տեղեր կան։ Պարզ երևեցաւ, որ մանուկն այս պատից է իջել։ Ամենքը սարսափեցան. ինչպէս սիրտ էր արել մի անծանօթ երեխայ այս բանը մտածել. այդքան բարձրութիւնից ցած գալը հեշտ բան չէր, եթէ վայր ընկնէր, մեծ կտորն ականջը կը մնար։

— Աշտարակցի է, մինչև երեկոյ բարդի ծառերի գլուխներին կը լինի եղած, հաստատեց մինը։

— Աշտարակցի մի՛ ասիլ, մի սատանի ճուտ ասի՛ր, կրկնեց միւսը։

— Չորս թուանքչի թող ձիաւորուին իսկոյն և զանազան ճանապարհներով դէպի Աշտարակ գնան, հրամայեց կաթուղիկոսը, երեխայն անպատճառ գիւղի կողմն է գնացել, որտեղ գտնեն վերադարձնեն, գիւղումն էլ եթէ լինի, պարանով պինդ մէջքներին կապեն ու բերեն։ Եթէ նա իւր մի մատը տեղովը այնքան խելք և ճարպիկութիւն է գործ դրել, անծանօթ տեղից առաջին անգամը իրան ճանապարհ է գտել փախչելու, նա շատ երևելի գլուխ կը դուրս գայ, աւելացրեց Հոգևոր տէրը։ Ասացէք տիրուհուն, որ չվախենայ զոկելը, էլ ուսումնարան չենք ուղարկիլ, կը թողանք գալուստ եպիսկոպոսի մօտ մինչև կը սովորի. թող միամիտ լինի, ոչ ոք նրան մի կծու խօսք չի ասիլ. հէնց առաջին անգամից ես նրան սիրեցի։

— Գլխիս վրայ, ծառայեմ, պատասխանեց թուանքչիբաշին,

դժոխքումն էլ որ ըլի, դուս կը քաշեմ ու էս օր ընչանք ծրագ կպցը էն սատանի ճուտին առաջիդ վէր կը քցեմ, ինձ թուանքչի Սարօ կասեն, մի կողքս քրդստանցի ա։

— Մտիկ տուր, Սարօ, երեխայքին չնեղացնես, չծեծես։

— Է՛հ, դու ողջ կաց, աջիդ մեռնիմ, Սարօյի ղամչու տակից շատ մեծաւոր են դուս եկել, էս եպիսկոպոսներից մի քանիսը էս ղամչոմն են մարդ դառել, հիմի ամենքն էլ ինձանից շնորհակալ են, ծեծելով մարդ չի մեռնի, ասեց թուանքչիբաշին ու մտիկ չտուած կաթուղիկոսի վերջին պատուէրին՝ դանէ դուրս։

— Դէ տղէք, հարամ ա մեր կերածը, քնթներիցս վէր կը գայ մեր խմածը, թէ որ էն մկան ձագին էս օր գետնի տակիցը հանիլ չենք։ Ափսո՛ս, Հոգևոր տէրը չի թողում ծեծելու, թէ չէ ես նրա կերակուրը հէնց ափէի, որ Սարօյին ընչանք մահը մտիցը քցէր ոչ։ Ամա՛ն տղէք, ըղլապատառ չանէք, էլ հոգով մարմնով պրծնիլ չենք. դեռ ոտը տուն չդրած՝ տասը տէր ունի գլխին կաննած։

Էս պատուէրները տուեց թուանքչիբաշին իւր թուանքչիներին ու ձին մտրակեց։

Թող նրանք իրանց ճանապարհը բռնած գնան Թորոսին պտռելու, մենք տեսնենք, թէ ի՞նչ ասել է թուանքչի և ի՞նչ է նրանց պաշտօնը Էջմիածնի վանքումը։ Այդ մարդկանց հետ մենք մինչև հիմա պատահել ենք, էլի պէտք է տեսնուենք։

Բառի նշանակութիւնից երևում է, որ թուանքչի—հրացանակիր ասել է։

Էջմիածնի խաղաղ միաբանութեան մէջ, ուր բոլոր զէնքը աղօթք ու սաղմոսերգութիւններն են, զինակիրներ ինքն ըստ ինքեան աւելորդ են երևում արտաքուստ. բայց ո՛չ, մենք սխալվում ենք, դրանք հարկաւոր են և կան։

Եկէք մտնենք վեհարանի տակի մութը սենեակները և կը գտնենք մի քանի նախունջաւոր, վիզերը հաստ, առողջակազմ աշխարհական մարդիկ, դաշոյնները կապած՝ ատրճանակը կողքին խրած՝ վառօդամանն ու գնդակամանն աջ ու ձախ կռնատակներումն անցկացրած։ Մի երկայն տախտի վրայ մի կարպետ է փռած և էս մարդիկը էդ տեղ ուտում են, քնում, վերկենում. ոչ անկողին են մտնում նրանք, ոչ շոր են հանում, ոչ զէնք են վերցնում վրայից և ոչ բարձ ունին գլխատակներին. նրանց կռներն են իրանց բարձերը, նրանց նախունջքերն են իրանց վերմակն ու մահիճը։ Տան բո–

լոր զարդարանքն ու կաճ կարասիքը պատերի վրայի կախած հրացաններն ու թրերն են, որ փայլում են. մի անկիւնումն էլ մի քանի խուրջիններ են թափուած և ձիանց սանձեր ու թամբեր. մի երկու գաւ էլ մի գաւաթի հետ պատուհաններից մէկի մէջն է դրած:

Շատ ուրախ մարդիկ են սրանք, տանն եղած ժամանակը միշտ ասում, խօսում ու բարձր բարձր ծիծաղում են: Եթէ լսելու լինիս սրանց պատմութիւնները, մազերդ ցից ցից կը լինին. այնպիսի անցքեր են պատմում իրանց կեանքից, կամ թէ իւրեանց նախորդների գործերից, որ երբէք չես հաւատալ և կը շփոթուիս. բայց իւրեանց համար դրանք շատ սովորական բաներ են: Աւելորդ է ականջ դնել, կամ մի առ մի պատմել ընթերցողին սրանց առակները. այսքան միայն իմանանք, որ Էջմիածնի վանքի գլխաւոր անդամից բռնած մինչև յետին մոնթն ու ժամկոչն ու դռնապանը ինչ որ արել են, ինչ կերել են, քանի՛ քայլ փոխել են, սրանց մէկին կամ միւսին յայտնի է: Այս ինչ վարդապետը ինչ պատուէրներ տուեց սպասաւորին այս երեկոյ, այն ինչ դռնապանը ընչու՞ երեք անգամ հազաց, մէկի կատուն ինչ փախցրեց միւսի սենեկից. սարեկի մի սիրացու որքա՞ն կաշառք տուեց ինձ ու քեզ, որ քահանայ ձեռնադրուեց. մի հիւանդ ինչ է խոստովանել իւր վերջին շնչումը, ինչ կտակ է աւանդել. մի Վաղարշապատեցի օրը քանի անգամ սրա նրա խուցն է մտել լէքը դրպանով և դատարկ դուրս գնացել՝ կամ դատարկ դրպանով և լէքը վերադարձել. ո՞ր անդամին ինչ լուրեր է տարել բերել: Ո՞ր մինն ասեմ. այնպիսի բաներ գիտեն այդ մարդիկը, որ խելք ու միտք մոլորվում է: Նոքա այս բոլոր գիտեցածները, լսածները իրաւունք չունին միմեանցից պահելու, ով ինչ տեսաւ, ինչ լսեց, ինչ գործողութիւն կատարեց, պէտք է յետ գայ ու իւրեանց գլխաւորի առաջին բոլոր ընկերների ներկայութեամբը բարձր բարձր մի առ մի պատմի և իւր արած որ է լցէ ծառայութեան համար ստացած վարձատրութիւնը լիովին դնի իւր ընկերների առաջ՝ վերջումը հաւասար բաժին անելու համար:

Սոցա պատմածը օտար մարդ իրաւունք չունի լսելու, իրանցից ոչ մինն էլ իրաւունք չունի մի ընչին լուր ես դուրս տանելու. եղբայրը, որդին, կինը չպէտք է իմանայ թուանքչու արածը:

— Ինչ որ անես, տեսնես, լսես, պէտք է գաս էս չորս պատի միջին սրտիցդ թափ տաս, պատմես ու քարը վերցնես, քարի տակը դնես, խրատում է թուանքչիբաշին մի նոր մտնողի. թէ չէ էն

պատերի վրայ պպզացող թուր ու թուանքը տեսնում ես, էդ քո հնկերների փշտամներին ու խանչալներին մտիկ ես տալիս, աղեք-մաղեքդ վեր կածեն. որդիս ըլիս, իմ ձեռքով կը մորթեմ էս մութն օթախի մէջ ու ըստեղ կը թաղեմ, հենց կը կորցնեմ իզը, որ ջամդաքդ [1]) չի՛ հոգիդ էլ չեն գտնիլ սատանէքը, որ դժոխք տանին: Թուանքչին որ կայ, էս վանքի գանձանի աղբի վրայ կապած թասն [2]) ա, ամէն մարդ էրբ ունի էն թասովը ջուր խմել, եա ձեռ ու երեսը լուանալ. համա ոնց որ էն թասը լեզու չունի, չի կարող ասել, թէ ով իրան ձեռն առաւ, ով ինչ արեց, ընէնց էլ մենք էն թասի պէս լուռ պտի մնանք: Էս տան ամէն մինը մեր աղէն ա, մեզ կարող ա հրամայել, ջրի, թրի, կրակի առաջ ղրկել, ամէնին էլ պտի լսենք, պտի գնանք, չէ՛ ասել չկայ. ի հարկէ մենք պտի իմանանք, թէ ում խօսքը աւելի շուտ ենք պարտաւոր կատարելու. համա մեր քիսի [3]) բերանն էլ չպտի մոռանանք: Հասկացա՞ր, աղբէ՛ր, որդի՛, հոգի՛, ցուցամատը ծանր ծանր շարժում է գլխաւորը. դու քեզ չափ ու ձև արա. թէ որ էս բաները չես կարող տանիլ, թէ որ լեզուիդ գեամ [4]) չես կարող դնիլ, հենց էս սհաթը վեր կաց, սուս ու փուս քաշուի՛ գնա. մեղք ես, ջիվան [5]) ես, որդու՝ օջլուշաղի [6]) տէր ես, ջահել ես, մուրազի [7]) վրայ ես, չըլնի՛ թէ մի օրից մի օր գլուխդ մի փորձանք գայ. ես քեզ ասեցի, որ թուանքչին սիրտ չունի, իր հօրն ու որդուն էլ չի խնայիլ:

— Ես ինքս իմ ձեռովս լեզուս կը կտրեմ շներին կը քցեմ, թէ որ Աստուած գլխիս խռով կենայ, սխալուիմ, բերանիցս մի քամի բաց թողամ. խանչալը սիրտս կը կոխեմ, թոք ու մոքս վեր կածեմ:

— Ա՛յ տղայ, վեր կաց էն գաւն [8]) էստեղ բեր, հրամայում է գլխաւորը մի թուանքչու և գաւով լէքը գինին մէջ տեղ է գալիս:

— Էս մեր նորընծայ աղբօր կենացը, տղէք ջան, լցնում է Սարօն գաւաթը, սրա տունամուտը շնհաւոր ըլի, իգիթ [9]) ըլի, վանքի ու վանքցոնց ուղուրին [10]) գլուխը յետ դրած ըլի, մեր աղբէրութիւնի մէջ էլ երկարատև ըլի:

Համբուրում է գլխաւորը նորեկին, նա էլ նրա ձեռքն է պաչում ճակատին դնում և գաւաթը բոլոր ընկերների մէջ կարգով պտտվում է:

---

[1]) Դիակ. [2]) Բաժակ. [3]) Քսակ. [4]) Սանձ. [5]) Կայտառ. [6]) Գերդաստան. [7]) Փափագ. [8]) Գինու աման. [9]) Քաջ. [10]) Սիրողն.

Ընկնում է յետոյ մեր Թուանքչիբաշին [1]) ուռած ուռած մի կողքի վրայ և ընկերներից մէկին հրամայում, որ ցոյց տայ նորեկին իրեանց բոլոր նշանաքանները ու ծանօթացնի իրեանց կանոնների հետ:

Երկու երեք օրի մէջ նորընծան քաջ գիտէ շան պէս ոռնալ, կատուի պէս մլաւել, հաւի պէս կչկչալ, խոզի նման մռթմռթացնել, ծտի նման ծուծուացնել, գիտէ, թէ աջ ձեռով ձախ ականջի գմակը քորելը, ծկութով աչքը մաքրելը, մորակի կոթը բերանը դնելը և այլ այսպիսի նշաններն ի՞նչ կը նշանակեն. մի խօսքով նա կարճ միջոցում տեղեկանում է Թուանքչիական բոլոր գաղտնիքներին:

Դրանից յետոյ մի առ մի պատմում են նորեկին ամէն անցեալները. էլ նրանից 100 տարուան եղածը անյայտ չի:

Հէնց էս պատմութիւնների ժամանակն է հետաքրքիր լսելը, որ սովորաբար լինում է երեկոները լոյսն ու մութը բաժանուելուս: Ըստ որում նրանք ամբողջ ցերեկը ժամանակ չունին. պարապած են Էջմիածնի ներքին հասարակական ծառայութիւնները կատարելով: Նրանք են նամակատարները, պատժուելու հոգևորականների քամակից գնացողը, գիւղերում վարդապետների հետ պտղի առած տուրքը ժողովողը, կալաչափի օգնականը, էլ ի՞նչ երկարացնեմ, նրանք են վանքի ոտ ու ձեռը: Ցերեկը մի սհաթ Թուանքչին հանգիստ չունի, գիշերն էլ կամ պէտք է փոքր ինչ քնեն հանգստանան և կամ մի ժամից, երբ որ ոտքը խաղաղուեց, մի նոր յանձնարարութիւն կը լինի կատարելու: Բայց վա՜յ նրան, եթէ փորձ անի ականջ դնել Թուանքչոնց հանգստանալու ժամանակը արած պատմութեանցը, թող նա իր գլխիցը ձեռք քաշի. այդ է պատճառը, որ ամէն բան նրանց մէջ մեռնում է.

Այժմուս այս Թուանքչիների թիւը շատ փոքրացել է, իսկ յառաջ, պարսից բռնակալութեան ժամանակը, երբ նրանց պարտականութիւնն էր գիշերներն էլ հսկել պարսպի գլխից վանքը, շատ շատ էին: Ինչպէս այն ժամանակը, նոյնպէս և հիմա, սոցա վարձատրութիւնը իրեանց մեծամեծ և անձնազոհ ծառայութեանց հետ համեմատելով շատ աննշան է: Բայց չնայելով այս ամէնին, ամէն մի կարիճ երիտասարդ ուրախութեամբ յանձն կառնու վանքի Թուանքչի դառնալ:

[1]) Թուանքչապետ:

Որքան էլ նրանց ներքին ծառայութիւններն անյայտ էին անսովոր մարդին, սակայն և այնպէս նրանց արտաքինը նախանձելի է: Առաւօտից մինչև երեկոյ ղ ա շ ա ն գ [1]) մաքուր հագնուած՝ զրահաւորուած ման է գալիս Էջմիածնի Թուանքչին վանքի մէջ կամ Վաղարշապատի գիւղում մորակը խաղացնելով հպարտ հպարտ, կամ թէ վանքի ձրի եկած գարու շնորհիւ նստում է նա իր գիրացած պատկերի նման ձիու վերայ, աստղերի հետ թռցնելով իր հրեղէն նժոյգը, կրակի պէս չափում է Վաղարշապատի փողոցները: Գործ ունի նա գիւղումը կամ չունի, այդ մի և նոյն է նրա համար. որ տեղից անցկենալու լինի, նա իրան միանգամ Վաղարշապատցոնց աչքին կերևեցնի, մանաւանդ եթէ ապա տղայ է, որ 10 պահապան էլ քամակիցը դնես, նա ինչպէս ըլի դուրս կը պրծնի նրանց աչքերից և էլի մի երկու անգամ իր սրտի առարկայի քուչովը անց ու դարձ կանի:

— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, տղէք, տեսէք Թուանչի կօմբօն ո՞նց ա ձիու ականջը մտած կրակի նման Երևանիցը գալիս, տեսնես էլ ի՞նչ ա պատահել, կը լսես շատ անգամ Վաղարշապատցիներից:

— Էն ո՞ր խեղճ տէրտէրն ա, թէ տիրացուն կամ վարդապետը Թուանքչի Գրիգորի ճանգն ընկել. տեսնում ես ո՞նց ա ողորմելի մարդին առաջ արել, ձիուն քամակիցը ղամչաչոր [2]) անելով, դպա վանքը քաշ տալիս. իմ թշնամիս դրա ճանգը չընկնի. ասում են միմեանց մի քանիսը նայելով դէպի այն ճանապարհը, որտեղից մի խեղճ հոգևորական տխուր երեսով էնքան է իր ձիուն կրնգել, որ ոչ իր ոտքերումը ոյժ և ոչ ձիումը զօրութիւն է մնացել, երկուսն էլ յոգնել են, բայց Թուանքչին էլի ծեծում է նրա ձիուն և իրան էլ ստիպում, որ շուտ շուտ գնայ.

— Ա՛յ տղայ, Ղազա՛ր, վառելիքն էժանացրիր, վանքի խցերը ձմեռս համամ [3]) կը դառնան. էդ ո՞ր գեղի ցախն ես բարձել տուել դէսը քշում. էդ հօ բաղերը սունդ ես արել [4]):

— Ցուշակնայ ցախն ա. մի շաբաթ ա հոգիս բերանս ա հասել, կռներս բեզարել են մարդ ծեծելով. քիչ էր մնացել ինքս էի կացինը վերցնում, բաղերն ընկնում, ծառերը կոտրում, պարծենում է մի Թուանքչի մի Վաղարշապատցու առաջին:

[1]) Գեղեցիկ: [2]) Մտրակահար: [3]) Բաղանիք: [4]): Հիմնայատակ անել:

— Ա՛յ քո տունն Աստուած շէնի, էգ հօ թացցախ ա, ղորթ, չըլնի՞, նոր ես կտրել տուել:

— Քեզ ասումեմ բաղերումն էլ շէնլիկ չեմ թողել, էլ շէ-շակ ¹) ծիրանի ծառ չի մնացել. ի՞նչ անհասկացող բոլի, ²) կոպիտ մարդիկ են տօ էգ գեղացիք, ըլանցը որ կայ, էն օրհնած ղամչին ³) ա, գլխներիցը որ հեռացաւ, մարդ կուտեն. կացինը ձեռն եմ տա-լիս, տանում ծառի քօքին ⁴) կանգնացնում, էլի չեն ուզում կըտ-րել. - երեխեքանցս ապրուստն ա, տունս քանդումես, կուլաս կտրես լաւ ա, քանց էս նուշը ծիրանին, աչքիս լիսը քաղուելա սրան մոլիկ տալով, գեռ առաջի բարն ⁵) էս տարի ենք տեսել. ես ի՞նչ գիտեմ, մարդի ղուղ են տանում. տօ գլուխդ քարը, թէ տնով տե-ղով էլ քաղցած կը կոտորուիք, վանքին ցախ ա հարկաւոր, կոտո-րեցէք էլի. վերջն՝ վերջը, որ շատ գլխահան են անում, մի քանի անգամ որ էս ղամչին երեսախառը միջքներին հանումա, աքինն աչքերը կոխումա. մին էլ էն տեսաք, որ ծառը շուռ անցաւ:

— Աղբէր, ղօչաղ ես, ղօչաղ, ⁶) քեզ ուշով չի հանիլ, շո-ղոքորթումեն այս և այն կողմից, քո ձեռիցն ամէն բան կըգայ:

— Բաս հարամ չի՞ իմ կերածը, բաս էլ ո՞ւր ա անումս ղա-զար, բաս էլ էս փափախն ⁷) ո՞ւր եմ ծածկում. փքուելով իր մէջ, գլխարկը վերցնումէ մեր ղազարն ու ձեռքումը պտտի տալով ծուռը ծածկում. բայց որ իր գիւղացիների մօտ հաստատի իր ասածը, ընկնումէ նա ցախ բերող խեղճ գիւղացոց ջանին, սրան նրան մի քանի մորակ հասցնում ու գոռում. աղա, հարամզադէք, ⁸) ոտակ հօ չէք գնում, քշեցէք էգ սատկած եաբուքը ⁹), թէ չէ ղամչով ¹⁰ փորերը վէր կածեմ:

— Աղա, գլխիդ ղուրբան, որ ձիերը բեզարել են ¹¹) չեն գնում, մենք ի՞նչ մեղաւոր ենք, մօրից էլել ենք կօս ու բէզգեառ ենք արել, համա էսքան շատ բեռը չենք բարձել, ուղտն էլ տակին կը չօքի, էլի մեր ձիանքն են, որ քաշումեն, խեղճ հայվանների ¹²) ոտները սև ջուր վէր եկաւ:

— Բաս չէ, ուզել չէի՞ք, որ մի մի իշաբեռը բարձել տայի, ձեզ էլ աղի պէս մէջը բաղմացնէի, հետս քաղըր մալըհալթ ¹³) ա-

¹) Նորահաս. ²) Վայրենի: ³) Մտրակ: ⁴) Արմատին: ⁵) Բերք, պտուղ: ⁶) Քաջ: ⁷) Գլխարկ: ⁸) փուչ կենդանի ⁹) Բեռան ձի: ¹⁰) Դաշոյն: ¹¹) Յոգնել: ¹²) Անասուն: ¹³) Խորհուրդ:

նելով բերէի: Ասումէ թուանքչին ու բեռները քշում դէպի վանքի գոմերի բակը, ուր սովորաբար դարսումէին վանանց գիւղերից հա-սանելի վառելափայտը:

Բոլոր գիւղերումը մեր թուանքչիքը մեծ պատիւ ունին:

— Տէրտէր, տէրտէր, լեզուն կէս գազ կախընկած՝ վազումէ գիւղի ժամկոչը. շուտ արի, թուանքչին ա եկել, երեցփոխի տանը վէր ա եկել, աշխարհքը գլխին ա հաւաքել, շուտ քեզ կանչումա:

— Քո տունը չքանդուի, էդ ի՞նչ ասացիր, սիրտս փորս ըն-կաւ, ոչ բարով գար նա, տեսնես էլ ի՞նչ բան կայ, շուտ արա, ժամհար, մեր ձուերից մի երկուսը բանիր վազացրու աչքը կախի, բալքի քուանայ: Ասա տէրտէրը քեզ փէշքէշ ¹) ղըկեց, ինքն էլ էն ա փարաջէն հագնումէր, հիմի էս տեղ կըլնի:

— Տօ ի՞նքն ընչի ուշացաւ ի՞նքը, էգ ձուերը իրան կարգէն, ոտները կապած պահի, որ չփախչէն. համա տէրտէրն ուշացաւ:

— Բարի ողջոյն, կարապետ ջան, բարով հազար բարի ես եկել, մեր գլխի՝ մեր աչքի վրայ, խէր խաբար: ²)

— Էլ ի՞նչ խէր խաբար, ծառայութիւն է անում տեղեցը մի փոքր շարժուելով ու էլի ծանր նստելով խալիչի վերի կողմը թուանքչին, վէր կա՛ց, ջուլ ու մուլդ ³) հաւաքի՛, բօբիկ ոտով ա-ռաջ ընկի, կաշիդ քերթելու եմ:

— Դու ողջ ըլի՛ս, թող իմ կաշին դու քերթես, երբեւ թէ իր կողմից էլ զուարճախօսութիւն է անում տէրտէրը, բայց որ իսկն ասենք, սրտապատառ է լինում:

— Հանաքը ղըաղ ⁴) կենայ, տէրտէր, յօնքերը ժողովումէ կա-րապետը, քեզ վրայ գանգատ կայ, վէքիլ ⁵) հայր սուրբը խիստ բարկացած ա, շուտ, ձին նստի՛, գնանք վանքը, լիսը չբացուած՝ պտի հայր սուրբի առաջին սանղծուիս:

Մեր տէր հօր ոտք ու ձեռքը թուլանումէ, ողջ մարմնով դո-ղումէ: — Քեզ մատաղ, Աստուած օրհնեսցէ, կարապետ աղա՛, իմ տունը մի՛ քանդիլ, երեխեքանցս խեղճ արի, մի ճար արա՛, իմ ձեռն ա քո փէշը ⁶):

Երկար աղաչանքներից յետոյ, երեցփոխն էլ մէջ է մտնում,

¹) Ընծայ: ²) Ինչ բարի համբաւ: ³) Փալաս-փուլուս, հագուստ ⁴) Մի կողմը: ⁵) Վանքի կառավարիչ: ⁶) Քեզ եմ ապաւինում:

թուանքչին էլ իւր կողմից, իբր թէ, կարեկցում է և վճռում են, որ գիշերս չգնան. մինչև առաւօտ մի քանի դաւթայ [1]) թխեն, մի երկու երեք հաւ մորթեն, խաշեն, առաւօտեան մի երկու լիտր եղ, մի տիկ պանիր, մի քանի լիտր գինի, բրինձ և այլն, ամէն գիւղում իւր գտնուած բարութիւնից, տէրտէրի տանից շինեն, առաջ առաջ ղրկեն վանքը վէքիլի խուցը, վերջը ինքը թուանքչին ու տէրտէրն էլ կը հասնեն, տէրտէրը դուրսը կը մնայ, թուանքչին ներս կերթայ, կը միջնորդի, վէքիլի սիրտը կը քաղցրացնի և յետոյ կը գայ տէրտէրին կը կանչէ։ Բայց ի՞նչ կարծիք, որ մի խուրջին [2]) էլ այդ բաներիցը Վաղարշապատայ փողոցներովը մտաւ թուանքչի կարօյի տունը։

Վերջապէս թուանքչութիւնը շատ նախանձելի պաշտօն է։ Առանց այդ մարդկանց վանքը չի կարող կառավարուել, դրանք են այն բանալին, որով Էջմիածնի վանքումը ամէն դուռ կը բացուի, որոնց առաջին ոչինչ անհնարին բան չը կայ։

ԼԲ.

Մ Ե Ծ Ն Ա Ն Ը.

Այն անդամը, որ ամենքից աւելի նախապատիւ է համարւում գերդաստանի մէջ և ամէնքի վրայ իշխում է, նա կոչւում է սովորաբար հ ա յ ր։ Այդ անունի վերայ է բոլոր տան բեռը, հոգսը, սնուցանելու և հագցնելու ծանրութիւնը։

Մի այդպիսի անուն էլ կայ տան մէջը, որ քանի այս հայրը կենդանի է, նա երկրորդական դեր է խաղում, իսկ նրա մահից յետոյ, անմիջապէս միահեծան տէր է դառնում, առնում է իւր վերայ ամբողջ գերդաստանի սանձը և վայելում է ընդհանուր յարգանք։

Այս անձը մ ա յ ր ն է. այն այրին է, որ կարծես իւր ամուսնու մեծ կորուստից յետոյ մի մխիթարական վարձատրութիւն գտաւ նա։

Այս կինն է, որ կրում է իւր վերայ ն ա ն ի, աղէ՛ կամ մ ե ծ ն ա ն ի յորջելի մականունը և դրա մէջ էլ կենդրոնացնում է իւր անպայման իշխանութիւնը. մանաւանդ՝ եթէ կայտառ և առոյգ է նա։ Այն օրուանից առանց նրա տնօրէնութեան և խորհրդի ոչինչ

[1]) Իւղով թխուածք։ [2]) Պայուսակ։

բան չի կատարուիլ։ Ոչ միայն իգական սեռը, ոչ միայն տան փոքրիկները, նրա կատարեալհասակ որդիքն էլ առանց նանի, կամ մեծ նանի ոչինչ գործ չեն բռնիլ։ Թողունք մի յարկի տակ ժողոված անբաժան եղբայրները, որոնք ամէն երեկոյ մանրամասնօրէն հաշիւ կը տան իւրեանց մօրը բոլոր կատարած գործողութեանց համար,—բաժանուած և անհամաձայն որդիքն էլ առանձնապէս իւրեանց մօրը կը հաղորդեն իւրեանց գործերքը և կը լսեն նրա տուած բարի խորհուրդները։

— Գնամ նանիս հարցնեմ, օրհնի՛ էս իմ նոր գործը, որ Աստուած էլ յաջողէ։

Իւր որդւոց բաժան ժամանակը նանն ապրում է նոցա որ և իցէ մէկի մօտ, որն աւելի կարօտութիւն ունի իւր հսկողութիւններին, որի երեխայքը մանր են, կամ կինը աւելի պատանի ու անփորձ է. բայց և այնպէս նա լիակատար իրաւունք է պահում իւր վերայ բոլոր իւր որդւոց տները իւր սեպհականութիւնը համարել, ժամանակ անժամանակ մտնել, կարգադրել, բարեկամներին հիւրասիրել, կերակրները եփել ու առանց իւր հարսին հարցնելու բաժիններ ուղարկել իւր մէկէլ որդւոցը կամ ամուսնացած աղջիկներին ու մօտիկ չքաւոր հարևաններին։ Շատ լաւ գիտի այդ ինքնիշխան կինը, որ իւր համեստ հարսին հաճելի չի լինում իւր արարքը, բայց ո՞ւմ ինչ. հարսն ի՞նչ կը յանդգնի քանի սկեսուրը գլխին պտըտւում է, տանտիկնութեան իրաւունքների մէջ մտնել։ Այսօր նա մեծ նանն է, քանի որդի ունի՝ էնքան էլ տուն ու օճաղ ունի, էնքան էլ չերեփ կայ ձեռքին. Թող ուրեմն Աստուած մեր հարսի խելքն առնի, մի թթու երես ցոյց տայ, իւր մրթմրթոցի ձայնը մի քիչ բարձրացնի, իւր սկեսոր ներկայ ծամանակը ինքը կերակրի պղնձին, եղի պուլիկին [1]) ու փոշեմանին [2]) մօտ գնայ ինքնագլուխ, տես, թէ քանի՞ ատամը վայր կը թափի, տես թէ տաք տաք չերեփը որ նանի ձեռին պատրաստ է, ի՞նչ տեղը կը դաղէ։ Դեռ սկեսոր խփածը նախատօնէքն է, տօնը նանի սիրեկան որդին - մեր սիրունիկ հարսի ամուսինը վերջը կը գայ, կը լսի ու կը կատարի։

— Կնկանդ լեզուն շատ ա երկարացել, կը գոռայ որդու վերայ նանը, տար շատ ա առաջ գրել, սրա լեզուն կտրի՛, սրա տոը բռով [3])

[1]) Իւղի աման։ [2]) Փոշիի աման։ [3]) Կողպէք։

քցի՛ր, թէ չէ յետինն ու առաջինը կըլնի իմ ոտը քո շեմքը ներս դնելուն:

— Էս մի խօսքն էր հարկաւոր նանի կողմից և ահա աթառոցը[1] կամ բռունցքը հասաւ խեղճ հարսի կողքին:

Բայց եթէ որդին էնքան կնիկ մարդ եղաւ, որ իր կնկանը կնկութիւն արեց, նրան չըկարողացաւ զսպել, նա ինքն էլ, իւր կինն էլ ողջ գիւղումը թուք ու բէդնամ[2] կըլնին, նրանց անունը հողի հետ կը հաւասարուի. հասարակաց բերանը այնպիսի մարդին կնկայ կնիկ՝ իսկ կնոջը լկտուած ու անամօթ բառերով կը կնքի:

Այսքան ահա մեծ է ամուսնոյ մահից յետոյ նորա այրուկարգը:

Եթէ ներկայումս փոքր առ փոքր ընկնում են այս նահապետական սովորութիւնները, հարսներն աներեսանում են, որդիքը մօր վերայ գոռում են, նրան մարդատեղ չեն ձգում, մի շնչին ապրուստ տալով, կամ առանց գրան՝ մուրացկանի պէս օտարների դռներն են ձգում իւրեանց ծնող մեծայնողին, եթէ այժմեան քաղաքակրթեալ բառերով ասենք սկեսուրը մօդայ չէ, մի տղայի աղջիկ տալու պայմաններից առաջինն այն է լինում, որ նա իւր տունը կապած, գոգնոցաւոր կամ ղաչիֆաւոր մօր հետ չապրի, իւր մօրը չընդունի. եթէ այժմ այս բաները սառնասրտութեամբ տարվում է ոչ միայն քաղաքներումը, որ ըստ օրէ գիւղերն էլ մտնում է, հին ժամանակներումը Աստուծոյ կրակ կը թափուէր այդպիսի բան մտքումն անգամ անց կացնողի վերայ:

Մեծ նանին ոչ թէ միայն հարազատ որդիքն են լսել. երեք չորս հօրեղբօր որդիք իւրեանց զաւակներով, թոռներով ու ծոռներով նայել են մի ժամանակ մի ժրաջան տանտիկնոջ ձեռքին. 40, 50, 60, մինչև 80 հոգի մի ընտանիք են կազմել և այդ փոքրիկ գիւղի ամրութիւնը, պնդակապութիւնը մեծ նանն է եղել, նա է իւր ձեռքովն ամէնքին իւր արժանաւորութեան համեմատ բաժին տուել ու նրա արածի վերայ ոչ ոք չի տրտնջացել:

— Լաց մի՛ ըլի, բալա ջան, մեծ նանը քեզ էլ, ինձ էլ դուս կանի, կերակուր չի տալ, լացը կտրել է իւր երեխայի հարսներից մինը:

[1]) Թօրօնը խառնելու փայտ. [2]) Թուք ու նախատինք:

— Ամա՛նը գիտես, ա՛յ կնիկ, տաղ արա՛, մենք աշխարհքի միջում խայտառակ կըլնենք, ի՞նչ կասի մեծ նանը որ լսի, թէ երկու ութքերակնանիքդ իրար ետևից ձաւար էք հաւաքում, խրատում է անկողնի մէջ գիշերը իւր կնոջը նանի որդիներից մէկը:

— Ա՛յ հարսը, քո երեխէն էս ընչի՞ ա կեղտոտ, երեսն անլուայ, ի՞նչ փնթի փալասն[1] ես դու, վեր կա՛լ էս սհաթին խտակի՛, թէ մին էլ տեսել եմ, էդ վարդ կըպոկոտեմ, ծղրտում է մեծ նանը հարսներից մէկի վերայ և երեխայն իսկոյն մաքրվում է:

Այսպիսի մեծ նանները ոչ միայն իւրեանց ընտանեկան շրջանի մէջ, նաքա և դուրսը գիւղի մէջ յարգ և պատիւ ունէին, հարսանիքներումն ու մահենիքներում միշտ վերի կողմն էին բազմում: Գիւղական մի ծանրակշիռ հարցի մէջ այսպիսի մեծ նաներից էլ խորհուրդ էին հարցնում, աւելի՝ եթէ խնդիրը վերաբերում էր մասամբ ընտանեկան կեանքին:

Թէպէտ մեզանում կանացի սեռը առհասարակ չխօսքան է այր մարդուց, միշտ նրանից ակնածում է, բայց մեծ նանը — տան քէխվանին, երբ որ 50 տարին անցկացրեց, սպիտակ քնթկալի փոխանակ մի սև աղլուխ կապեց, որ այրիութեան նշանն է. նա այնուհետև չխօսքան կըմնայ միմիայն իւր կնքաւորի հետ. բացի նրանից ամէնքը նրա եղբարքն ու որդիքն են: Գիւղի միջովն անց կենալուս այնուհետև երիտասարդ տղամարդիքը նրա առաջին ոտք կը կանգնին և համեստութեամբ կը պատասխանեն մեծ նանի բարևին ու պարկեշտօրէն կը ծիծաղին մեծ նանի մի սրախօսութեան վերայ:

— Հ՛ը, էլ ի՞նչ էք էս ցրտումը գլգլի տալիս[2], էլի մի փորացաւ կունենաք, էլ ո՞ւմ աղջկայ գլխին էք թաւջի[3] անում, մտիկ տուէք, իրար հետ կռուիք ո՛չ, փառք Աստուծոյ, ի՞նչն ա շատ՝ գեղը լիքը սիրուն ու տռուզ աղջկէք. ուրախացնում է ջահելներին մեծ նանն ու անց կենում,

— Քեզ արքայութիւն մեծ նանի՛, մեր սրտիցը ջուր խմեցիր: Այս է լինում նրա քամակից երիտասարդների հաճոյախօսութիւնը:

Ջահէլ օղլուշաղները[4] տանն էլ, քուչումն էլ պարտական են մեծ նաների ձեռքը պաչել. թէ կուզ կուժն ուսին էլ լինի, պէտք է մօտենայ մեծ նանին գլուխ տայ ու այնպէս անց կենայ:

[1]) Աղտոտ. [2]) Գողգողում. [3]) Խորհուրդ. [4]) Կանայք.

— Քո տէրն ապրի, քո աղէքն ապրի, բարով քեզ նշանենք, բարով կարմիրդ կապենք. անխնայ բաժանում է մեծ նանը Հայր Աբրահամու օրհնութիւնը բոլոր իւր ձեռքը պաչողներին, ամէնքին իւրեանց դրութեան յարմար:

Այս մեծ նանութեան կամ տանտիկնութեան իրաւունքովն էր, որ տիրուհի Սուսամբարը իւր մարդին թաղած օրն իսկ՝ խօսեցաւ Գալուստ եպիսկոպոսի և Գէորգ խալֆի հետ: Եթէ առաջինը հոգևորական չը լինէր, 100 տարեկան էլ որ դառնար, էլի Սուսամբարը եպիսկոպոսի հետ չէր խօսել. նա իւր Թորոս որդու կնքահայրն էր, բայց հոգևորականը մեր հայրն է և հօր մօտ որդուն չի կարելի չխօսքան մնալ:

Այդ օրուանից գիւղի մէջ իւր մարդի պատուին տիրացաւ Սուսամբար տէրտէրակինը. էդ օրուանից նա քուչովն անցնելուս բարև էր տալիս նստողներին. էդ օրուանից նա իւր տան ներքին և արտաքին կառավարչութիւնն իւր ձեռքն առաւ: Այն կինը, որ մինչև հիմա ոչինչ իմացել, թէ ինչպէս են մշակուել և հերկուել իւր այգիներն ու արտերը, քանի՛ գլուխ ոչխար են ունեցել, որի իշխանութեան սահմանը մինչև բակի շեմքն է եղել, հիմի նա ինքն էր իւր շարժական և անշարժ կայքը կառավարում: Արդարև երբեմնապէս Գէորգ խալֆին խորհուրդ էր հարցնում նա, բայց առհասարակ բոլորին զարմացրել էր իւր հմտութիւնովը:

Տէր Յարութիւնի մահից յետոյ, ի հարկէ, դադարել էր Աշտաբակու ուսումնարանը, մնացել էին երկու տէրտէր. մինը բոլոր օր ու գիշերները պարապած էր իւր համամիտ Ղևոնդի հետ չարութիւններ նիւթելով ու խաների դռներին քաշ գալով, եթէ ուզենար և շարունակելու, ոչ ոք շուն չէր տալ նրան պահելու ոչ թէ որդի, միւսը աղքատ մարդ էր, մեծ ընտանիքի տէր, հազիւ իւր քահանայական պարտաւորութիւնների և աղքատութեան հոգսերի մէջն էր:

Էլ ով երկու այբ էր սովորել, այն էլ մոռացաւ. էլ ոչ Թորոսին ու Վարդին տիրացութիւն, ոչ գիւղի մի քանի աղջիկներին ու Մանուշակին վարպետութիւն. ամէնքն իրանց գործին են, իսկ մեր ծանօթ երեք մանր երեխայքը ազատ թռչունների նման մինչև երեկոյ կամ պարտիզումն են խաղում, կամ հորթերն են առաջ անում, տանում այգին ու այնտեղ սկսում իւրեանց սիրելի պարապմունքը. լաւ լաւ, քաղցր քաղցր ծիրաններ են ուտում, վար-

դախնձոր են շինում, խնձորից ջաղացի չարխ են շինում, ամէն մարդ իւրն է հաւանում, կռւում են, ծեծւում են, երկուսն էլ լաց են լինում, խռովում են: Էդպէս ժամանակը Մանուշակը միշտ Վարդի մօտ էր վազում ու Թորոսին մէնակ թողում. Թորոսն էլ ի՞նչ անէր. հէնց որ մնակ մնաց, գլուխը քորելով կամաց կամաց մօտ էր գալիս ու խառնւում նրանց հետ:

— Թէ ղօչաղ ես մօտ մի՛ գալ, հպարտանում էր Վարդը:

— Թող Մանուշակն ինձ հետ խաղայ, տես լայաղ անո՞ւմ եմ քեզ հետ խօսելու:

— Մտիկ տուր, Թորո՛ս, դու շատ կռուարար մի՛ ըլիլ, ասում էր միշտ այսպիսի միջոցները մայրը, թէ չէ անկաշքեցդ կը բռնեմ, վանքը կը ղրկեմ:

— Ես էլ գնալ չեմ:

— Ոտներդ կը կապեմ ձիու վրայ կը քցեմ, քաշ տալով տանիլ կը տամ:

— Չէ չէ, նանի ջա՛ն, Թորոսին վանքը մի՛ ղրկիլ, փաթաթւում էին տիրուհուն Վարդն ու Մանուշակը:

— Չէ, բալէք ջան, վերջը պտի գնայ. նա տէրտէրի տղայ ա:

— Բաս ես տէրտէրի տղէն չե՞մ, փքուած սրտով հարցնում էր Վարդը:

— Դու էլ տէրտէրի տղէն ես, համա նա առաջնեկն ա, մենծը պտի վանքական դառնայ, պստիկները մենծանան իրանց նանին պահեն:

— Հա՛, հա՛, ես չեմ գնալ, ես կը մենծանամ, քեզ կը պահեմ Կարապետի հետ, թռչկոտում էր Վարդը:

— Ջա՛ն, ես էլ քեզ մօտ կը մնամ, նանին ղուլլուղ [1] կանեմ. մէջ էր ընկնում Մանուշակը, Կարապետն էլ կը մենծանայ, հառամսիմն ու գեարանն էլ կը հանեն, հա՞, նանի ջան:

— Հա՛, նանը ձեզ ղուրբա՛ն, լալով համբուրեց տիրուհին իւր բոլոր երեխաներին մի աշնան օր, երբ Թորոսը ամէնքի հետ պաչուեց ու փիլիպպոս ափոր թարքին նստեց, գնաց Էջմիածին:

Տիրուհին չէր պղջացել իւր ուխտի վրայ, նա ուրախ էր, որ իւր մի որդին մատաղ տալովը կարողանում է այսօր միւսներին իւր առաջին վազվզելուս տեսնել, բայց ծնողական սիրտը կարող էր մի

1) Ծառայութիւն.

երկու օր գոնէ չզգալ այսպիսի մեծ կորուստը. 7—8 տարեկան անդրանիկ որդին յաւիտեան կորչում է, հեշտ բան չի ասելը:

Թէպէտ Էջմիածինը շատ հեռու չէր, բայց նա այնուհետեւ կորած է մօր համար:

Ժողովրդի մէջ մի աւանդութիւն կայ, թէ ինչպէս մի հայր դառնագին լալիս է եղել և ոչինչ բանով չի մխիթարուել:

— Ի՞նչ կայ, հարցնում են նրան:

— Շատ մեծ կորուստ եմ ունեցել. երեք որդի ունէի, երեքին էլ զրկուեցի:

— Անբաղդ հա՛յր, երեքն է՞լ մեռան:

— Ոչ, մինը մեռաւ, միւսը կորաւ, իսկ երրորդը հոգւով մարմնով կորաւ:

— Ի՞նչ ես ասում, չենք հասկանում:

— Շատ պարզ. մի որդիս մեռաւ, երկրորդը թուրքացաւ, իսկ երրորդը վարդապետ դառաւ, որ ասել է, թէ հոգւով մարմնով կորաւ:

Այս աւանդութիւնը որքան էլ հնարովի բան, բայց և այնպէս ժողովրդի վերայ իւր տպաւորութիւնը թողել է: Այդ նախապաշարմունքի մէջն էր և տիրուհի Սուսամբարը: Այդ էր պատճառը, որ երբ Փիլիպպոս ափէրը ներս մտաւ և Թորոսի կռնից բռնած մօրը տուեց կրկին ու եղածը պատմեց, Սուսամբարը ոչինչ չասաց ու չքարկացաւ, ընդհակառակն նա աւելի ուրախացաւ, որ էլի իւր կորած որդուն գրկում է: Բայց ի՞նչ օգուտ, որ նոյն իսկ օրը ստիպուեցաւ կրկին իւր ձեռքով դնել Թուանքչիբաշի Սարօյի թարքը ու մի հաստ շալով էլ կապեց:

— Ա՛յ լակոտ, դու ուզում ես Սարօյի թարքից փախչի՞ս. էս ղամչին տեսնում ես, մէջքդ հէնց դաղդղրիկ կածեմ, որ էլ Սարօյին չես մոռանալ:

— Էհ, դու ի՞նչ մեղք ունիս, Սարօ ափէր, մեղքն իմ մօր շլինքը. ասաց Թորոսն ու լռեց:

Թուանքչիբաշին իւր խօսքը կատարեց: Ճրագ կպոց չըկար, որ կորած երեխին կաթուղիկոսի առաջին կանգնացրեց:

ԼԳ.

ԱՆՈՒԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ:

Հայոց ազգը միշտ պատուել ու պաշտել է իւր կրօնի և ազգի բարերարներին, նա շատ նուիրական տեղեր ունի իւր համար սիրելի ու յարգելի. նա մեծամեծ հալածանքների և բռնակալութիւնների ժամանակներումը կարողացել է մի երկու օր, մի երկու շաբաթ միջոց ճարել և գնալ իւր սիրելի սրբութիւնները համբուրել:

Մինչև այսօր եւս 1000աւոր ասպարէզների մի ժամի չափ ճանապարհ են թւում ջերմեռանդ Նոր-Նախիջևանցուն կամ Հաշտարխանցուն ու Ղզլարեցուն, առ ոչինչ են համարում նրանք բոլոր կրած նեղութիւնները, եթէ արժանանում են համբուրել մեր կռապաշտ պապերից մեզ յանձնած աւանդը՝ Անահիտ աստուածուհու ոսկի արձանի տեղը, ուր մեր Լուսաւորիչը կանգնացրեց եօթն անուան տէր սուրբ կարապետի վկայարանը: Առանց ուրախութեան արտասուք թափելու չի կարող ոչ ոք մեզանից տեսնել Տաճկաստանի խորքերից՝ Արմաշից, Զէյթունից կարմիր ֆասը գլխին՝ լայն վարտիկներով՝ իւրեանց մայրենի լեզուն իսպառ մոռացած քաջ հայերին, որոնք իւրեանց ջղոտ երեսի և բիրտ պատկերի վերայ ճանապարհի ազդեցութիւնն էլ միացրած՝ կէս ժամով ծնկների վերայ ընկած մնում են արենթաթախ սուրբ Գեղարդի, սուրբ Գրիգոր բաբայի Աջի և ուրիշ հրաշագործ մասունքների առաջին Յիսուսի իջման տեղումը՝ Էջմիածնի հրաշակերտ տաճարի մէջ:

Եթէ հեռաւորներն այսքան երջանիկ են համարում իւրեանց կեանքի մէջ մի անգամ, գոնէ, այն սրբարար հողերը համբուրելու, ի՞նչ կարծէք, որ մերձաւորին ոչինչ բան արգելք չի կարող դառնալ՝ տարէնը՝ ամենափոքրը մի անգամ՝ գնալ դէպի իւր ազգի պարծանաց տունը: Թող այսօր էլ Էջմիածին չտեսնողը գայ ինձ հետ սեպտեմբերի վերջերումը՝ Վարագայ խաչի կիւրակէ օրը հայոց մայր աթոռը և ստուգի, թէ քանի՞ գերդաստան կը գտնի մի քանի օրուան ճանապարհից եկած: Սրանք մի անգամից երկու փափագ են առնում, շաբաթ օրը նրանք Մողնու սուրբ Գէորգի գլխաքարն են

համբուրում, իսկ կիւրակէ օրը Էջմիածնում Ղազարապատի ու վանքի լայնարձակ բակերն են լցւում. սայլերի մի ծայրը մինչև Ներսէս կաթուղիկոսի անտառն է ձգվում, միւսը՝ Վաղարշապատի հրապարակը:

Ներկան թողած՝ մենք վերադառնանք մի այդպիսի հանդիսաւոր օր հոկտեմբերի սկզբներին 1770 թուերին, Վարագայ սուրբ խաչի պահոց հինգշաբաթ օրը Էջմիածին:

— Ծառայեմ, հոգևոր Տէր, շնչասպառ տուն ընկաւ վեհարան վանքի վէքիլ [1]) Գալուստ եպիսկոպոսը. Երևանից չորս մհասիլ են եկել, էլ մեծ ու փոքր՝ վարդապետ ու եպիսկոպոս չհարցրած՝ ջարդում են.—շուտ արէք, տեղ պատրաստեցէք, ասում են, որ խանը 50 ձիաւորով էգուց գալիս է էստեղ Ուչքիլիսայ եղնաղի (Էջմիածնի ուխտ):

— Չէ՞ որ վերջացաւ այդ վնասակար սովորութիւնը, սա ի՞նչ նոր բան է:

— Մհասիլներին ոչինչ չենք կարող հասկացնել, նրանք ուղարկուած են ամէն անօրէնութիւններն անելու:

— Լաւն այն է, որ ասես, օր յառաջ յափշտակութիւններն սկսելու, խոր հառաչանօք պատասխանեց Էջմիածնի բարեկարգիչը՝ Պռօշ մեծ իշխանի սերունդ Երևանցի Սիմէօն կաթուղիկոսը. այդ անիրաւներին ո՞ր օրէնքն է ուզել, որ տուած խոստմունքները հաստատ լինէր. գնա՛, Գալուստ եպիսկոպոս, կանչի՛ր նրանց այս տեղ:

Չէր վերջացրել բազմահոգ ծերունին էս խօսքերը, որ շաթիրների սենեկումը մի քանի սովորականից դուրս համարձակ քայլերի ձայն սաստկացաւ: Վերջին խօսքի հետ միասին դուռը թընդալով յետ բացուեցաւ և չորս զրահաւորուած պարսիկներ ներս թափուեցան:

Կաթուղիկոսն իւր հեզ և քաղցր դէմքին տուեց մի խոժոռ ու վեհ հրամայական կերպարանք. վսեմութիւնով գլուխը վեր բարձրացրեց և աչքն ուղղակի առաջին պարսկի վերայ ձգեց, որ միւսներից պատուովն էր իւր շքանշաններովը:

[1]) Հաւատարմատար:

— Ի՞նչ էք, ո՞վ էք, ի՞նչ էք ուզում, ի՞նչպէս յանդգնաբար առանց հարցնելու ներս էք թափվում, ահարկու ձայնով գոռաց կաթուղիկոսը, ձեզ. ո՞վ տուն թողեց, ընչո՞ւ չսպասեցիք իմ հրամանին, ո՞ւմ գլխացն էք առանց գլուխ տալու էդպէս համարձակ կանգնում. մի քանի խիստ հարցեր միմեանց ետևից շարեց նա:

Մհասիլպաշին՝ որ երբէք չէր սպասում այդպիսի մի դժուար դրութեան, մուկը կտրուեցաւ և մինչև ծունկը երեք անգամ խոր գլուխ տուեց և ձեռքով նշանացի արեց իւր թիկնապահներին յետ կանգնել:

— Խալֆան ողջ լինի, կմկմաց նա, մենք մեծափառ Հիւսէին-Ալի խանի սարդարի ծառաներն ենք. նրա հրամանով եկել ենք յայտնելու, որ մեր տէրը էգուց կամենում է գալ ձեզ հիւր Ուչքիլիսայ եղնաղի:

— Խանը մեր գլխի վերայ տեղ ունի, վեհութիւնը չփոխելով ձայն տուեց կաթուղիկոսը, բայց դու որքա՞ն անպիտան մարդ ես եղել, որ էսքան ժամանակ կարողացել ես խաբել խանին, որ նա քեզ մի օրինաւոր լրաբեր համարելով, ինձ մօտ պատգամաւոր է ուղարկել: Խանը քեզ պատուիրե՞լ է, որ դաս վանքի մէջ լրբաբար վարուիս, քեզ հրամայե՞լ է, որ իւր կեանքի համար աղօթք անող խեղճ վարդապետներին ծեծես, այն աստիճան կորցնես խանի պատիւը, որ նրա սիրելի Խալֆայի մօտ առանց իրաւունք խնդրելու ներս ընկնիս և այդպէս խանգարես նրա աղօթքի րոպէները, որի մէջ խանի կեանքի համար էլ բարեմաղթութիւններ կան: Գնա՛, հրամայեց խիստ ծերունին Գալուստ եպիսկոպոսին, թուանքչիք կանչի՛ր ու սրանց կապոտի՛ր, բանտարկի՛ր ու ինքդ արժանաւոր պատրաստութիւն տես մեր գլխի տէր խանին ամենայն յարգանքով ընդունելու: Ես քեզ նորա համար էի կանչել, որ գնաս Երևան, խնդրես մեր տիրոջը՝ իւր սիրելի խանզադէքանց [1]) հետ էգուց շնորհք բերի Էջմիածին և ուրախանայ իւր սիրելի հայերի բազմութիւնը տեսնելով: Գնա՛ շուտ, աչքով նշանացի արեց Գալուստ եպիսկոպոսին և ձայնն աւելի բարձրացրեց, կանչի՛ր թուանքչիքեանցը ու իմ հրամանս ճշդութեամբ կատարի՛ր: Իսկ դուք՝ ոգէտ տէրը խաբող ծառաներ, դարձաւ նա դէպի թուրքերը, չհամարձակէք տեղից շարժուիլ, մինչև որ ես էգուց ձեզ ցցի վերայ չբարձրացնել տամ:

[1]) Աջատորդւոց.

Սիմէօն կաթուղիկոսը ոչ միայն հոգեւորական էր, նա և երեւելի քաղաքագէտ էր, նա իմացել է վարուելու ձեւը:

Միհասիլները ծնկի վրայ ընկան ու չոքէ չոք մօտացան դէպի կաթուղիկոսի ոտքերը:

Ոչ Գալուստ եպիսկոպոսը և ոչ կաթուղիկոսը չէին նկատել, թէ ի՞նչպէս այդ միջոցումը մի 8—9 տարեկան նիհար, մանր ու սուր աչքերով ուսումնարանի մանուկ՝ վանքի լանքեայ ֆարաջէն հագին՝ միւս դռնից ներս էր մտել, լսել սուրբ հայրապետի խօսքերը և դուրս գնացել:

Դեռ եպիսկոպոսը տեղից չէր շարժուել, որ չորս կարմիր զանգապաններ հագած շաթիրներ և վեց թուանքչէի մանուկի առաջնորդութիւնով ներս մտան:

— Ձե՞զ ով կանչեց, զարմացմամբ և ծանրութեամբ հարցրեց կաթուղիկոսը:

— Ես, հոգեւոր տէ՛ր, դուրս պրծաւ երեխան, ես փոքր ժամանակ յառաջ ներս եկայ ետեւի դռնից պապիս կանչելու: (Այս ասելով՝ նա ցոյց տուեց գլխով Գալուստ եպիսկոպոսին:) Լսեցի քո հրամանը, էլ չուզեցի ուշացնել, գնացի սրանց բերի՝ Թուրքերին կապոտելու:

Երեխայի արարքը կաթուղիկոսին ու եպիսկոպոսին զարմացրեց ու ծիծաղ պատճառեց:

— Արի աջս առ, Թուրքերին չոքած թողած առանց ուշադրութեան՝ ասաց հայրապետը մանկանը. իրաւ որ կրակի կտոր, և համբուրելով երեխայի ճակատը՝ կամաց ցուցամատով խփեց երեսին և հրամայեց շաթիրներից մէկին տանել նրան միրգ տալ:

— Երանի՜ այն աչքերին, որ սրան մեծացած կտեսնի, Գալուստ եպիսկոպո՛ս, ասաց ծերունին, ես նախանձում եմ քեզ վերայ, որ այդպիսի սանիկ ունիս, կռներդ դալա՛ր:

— Վեր կացէք, գոչեց վերջապէս հրամայաբար կաթուղիկոսն իւր ոտքերն ընկած միհասիլներին, խալիֆան ներողամիտ է. ձեր կեանքը բաշխում եմ, այն պայմանով միայն, որ իսկոյն վերադառնաք Երեւան և մի առ մի պատմէք մեր ողորմած խանին, ինչ որ տեսաք ու լսեցիք: Եթէ մի խօսք բաց էք թողել, էլի ձեր գլուխը կը թռչի, բայց վերջումը խնդրեցէք իմ կողմից խանին, որ բերել տայ սիրունիկ խանզատային՝ փոքրիկ Սուլէյմանին ու նրա գլխով երեք անգամ ձեզ պատեցնելով ձեր կեանքը ձեզ բաշխի ու պատ-

ուից չձգի. ասացէք, որ ես եմ խնդրում: Սպասեցէք, հրամայեց նա, երբ Թուրքերն անդադար գլուխ տալով՝ յետ յետ էին դիմում:

— Բերէք ներսից մի թօփ կարմիր մախմուր ու չորս թօփ կանաչ ղաղաք, դարձաւ կաթուղիկոսը դէպի շաթիրը:

— Ահա այս մախմուրը տարէք քնքուշիկ Սուլէյման խանին ու նրա մօրը՝ մեծ բաղիւմին [1]) ընծայ, իսկ այս մի մի թօփ ղաղաքը ձեզ արխալղացու: Ես ձեզ չէի ներիլ, բայց տեսնո՞ւմ էք այս երեխային, ցոյց տուեց նա մեր ծանօթ Թորոսին, որ միրգը գրպանն առած՝ դուրս էր եկել այնտեղ կանգնել. սա ձեզ համար միջնորդեց, սրան էք պարտական ձեր կեանքովը:

— Աստուած քեզ էլ կեանք տայ, դրան էլ, խոնահարար պատասխանեցին պարսիկներն ու դուրս գնացին թուանքչիների և շաթիրների ուղեկցութեամբ:

— Դէ՛հ, Գալուստ եպիսկոպո՛ս, գնա էլի մեր սովորութիւնները միտդ բեր, պատրաստութիւնների հոգ քաշի՛ր. թող էս մի անգամն էլ ընդունենք, «բզէ գլխին բռնցքով տալ չի լինիլ» ուրիշ հնարքներ պէտք է մտածել մեր ձեռք բերած իրաւունքները չկորցնելու համար, գրենք Վրաց Հերակլ թագաւորին՝ կրկին մի սպառնալիք կարդայ սրա գլխին, որ մեր զօրութիւնը չմոռանայ:

— Հանդէսը փառաւո՞ր է հարկաւոր անելու:

— Որքան կարող ես, ամէն բան կարգին արա, փիանդազը մեր ունեցած ամենաթանգ զարբաբը լինի, այնպէս՝ որ աչքերը կուրանայ: Ես գիտեմ, որ միհասիլների հետ վարուելս շատ հաճելի կը թուի իւրեան. և արդարեւ ի՛նչ յաջող եղաւ դէպքը, նա հիմա պէտք է կարծի, որ մենք սրտով և հոգւով ցանկանում ենք իւր այցելութիւնը:

— Մի օր էս նեղութիւններին վերջ չը պէտք է լինի՞, հոգեւոր տէ՛ր, յանկարծ հարցրեց Թորոսը: Մի՞թէ մեր ճակատին գրուած է, որ մենք միշտ ուրիշների գերի լինենք. հէնց երեկ Մակար վարժապետը մեզ պատմեց, որ հայերի մի մասն էլ Օսմանցու ձեռին է և թէ ամէն տեղ էլ անասունի պէս կոտորում են, էս ընչե՞ն է, մի՞թէ հայը Թուրքի չափ ոյժ չունի: Իմ միտքս է գալիս, երբ որ ես մեր գիւղումն էի, հինգ Թուրք գեարանենց Սարգսի աղջիկը դուրս էին

[1]) Տիկին:

քաշել՝ տանում, Ղևոնդն էր տեղը ցոյց տուել: Խեղճ Նաշխունին մինը Թարքն էր քաշել, նա գոռգոռում, ճղճղում էր, ողջ գիւղը հաւաքուել էր, հեռուումը կանգնել մոխիկ էր տալիս ձեռները ծոցին դրած. մէրը մղկտում, աղաչում էր, ձիանոց ոտների տակն էր ընկնում, օգնեցէք, ձեզ մատաղ, յետ էր դառնում նա միշտ իշխաններին, բայց ոչ ով մի ձէն չէր հանում, իրանք էլ երեխի պէս կանգնել լաց էին լինում: Ես մեր դռի կտերը կանգնած մոխիկ էի տալիս, սիրտս պատռում էր, 100 անգամ ձէն տուի մեր ազէքանցը, որ մօտ գնան Թուրքերին էլ սպանեն, աղջկանն էլ խլեն, ոչ ով ոտը չը փոխեց: Ես մի քանի քար քցեցի վերևից, համա մէրս չը թողեց, թէ կը գան հիմի քեզ կսպանեն. էն օրուանից դէսը էդ ղզլբաշներին [1]) շան պէս ատում եմ, գեարանենց Նախշունի ձէնը էս օր էլ անկանջումս ծվում է. ընչանք չմեռնիմ՝ ես նրա վրէժը հանեմ, լաւ աղջիկ էր խեղճը. ես շատ էի սիրում: Ես իմ Աստուածը, Հոգևոր Տէր, դու լաւ չարիր, որ մհասիններին ազատեցիր, խօսքը փոխեց Թորոսը. երբ որ ես տուն մտայ ու քո խօսքը լսեցի, որ պապիս հրամայում էիր գնալ Թուանքչեքանցը կանչել, ուրախութիւնից սանդխտի չորս մարը միանգամից էի թռչում, տեսա՞ր ոնց ձեռաց հաւաքեցի առաջիդ կանգնացրի: Բայց սիրտս՝ ոնց որ մի դանակ խրեն, երբ որ վերջումը կեանքներն էլ բաշխեցիր, դեռ խալաթ էլ տուիր:

Զիմացաւ զգայուն ծերունին, թէ ինչպէս ինքը նստած տեղը վեր էր կացել ու այս փոքրիկ երեխայի առաջին կանգնել և դատավճիռը լսող յանցաւորի նման լսում էր մանկան խօսքերը:

Ո՛վ կարող է մեզանից գուշակել, թէ այդ րոպէին ինչե՞ր էին անցնում կաթուղիկոսի մտքից, ի՞նչ ալեծուփ մրրիկներ տատանում էին նրա անվրդով հոգւոյ խաղաղութիւնը. դէմքից երևում էր, որ այս րոպէին իւր հետ խօսողին ոչ թէ 8—9 տարեկան մի երեխայ մանուկ՝ այլ մի բազմափորձ ու քաջ հսկայ էր կարծում, երևում էր, որ ցաւահար ու վշտահար հայրապետն ինքն էլ չէր իմանում, թէ իւր խոշոր ու փոսմ աչքերից միմեանց ետևից սևաւի հատիկների նման արտասուքներ էին թափվում և երեսի կնճիռների առուակներով ցած գլորվում, ալեզարդ մօրուքի մէջ անհետանում: Գալուստ եպիսկոպոսն արձան կտրած՝ մնացել էր. նա էլ ոչ պակաս շարժուել էր իւր սանիկի խօսքերից:

1) Պարսիկներին.

Կարելի է շատ կը խօսէր Թորոսը, եթէ աչերեկ հայրապետը յառաջ չքաշէր նրան, չսեղմէր իւր գրկումը և չասէր՝ համբուրելով նրա փոքրիկ ճակատը.—Աստուած տայ, որ մեծանաս և սրտիդ փափաքն առնես: Այսուհետև դու իմ որդին ես. հենց էս րոպէից Գալուստ եպիսկոպոս, խլում եմ քեզանից քո սանիկին. սա այսուհետև կերթայ ուսումնարան և կը վերադառնայ վեհարան:

Բաւական ժամանակ մանկանը գրկից դուրս չէր թողում կաթուղիկոսը. պարզ նկատելի էր, որ յիշողութեան մէջ մի միտք է ամփոփում. Տրդատ, Գրիգոր, Սահակ, Մեսրոբ, Վարդան, Ղևոնդ, Ներսէս.... լսելի ձայնով միմեանց յետևից շարում էր նա յիշեալ անունները:

—Ներսէս, Ներսէս, շեշտելով երկայնացրեց նա իւր ձայնը, դու, մանուկս, այսուհետև ոչ թէ Թորոս, այլ Ներսէս պէտք է կոչուիս, դու պէտք է լինիս մեծն Ներսէսը:

—Իմ ողորմածիկ հայրս ասում էր, որ մեր պապերի մէջ Ներսէս էլ է եղել, ես շատ սիրում եմ էդ անունը, պատասխանեց երեխան ու իւր փոքրիկ ձեռքերի մէջ առած Սիմէօն կաթուղիկոսի աջն, անդադար համբուրում էր:

Այս օրուանից երկու պապ ունիմ ինձ և երկու տուն,— բաց ընկնելով կաթուղիկոսի գրկից, վազեց փաթաթուեց մեր նոր Ներսէսը Գալուստ եպիսկոպոսին:

ԼԴ.

«ԿՈՒՇՏԸ ՔԱՂՑԱԾԻՆ ՄԱՆՐ ԿԸ ԲՐԴԻ»:

—Գլուխս խմ չի, բոլորովին շփոթուել եմ, ինչպէս անեմ, որ ամէն բան կարգին լինի, ինչ տեսակ ընծաներ պատրաստեմ, որ անհաւատի աչքը մեզ վրայ քաղցր մնայ, խեղճ կաթուղիկոսը էս մի գիշերուայ մէջ հինգ տարուան կեանքն է կորցրել. երեկ էլ մի քանի թելեր սև էին տալիս լուսափայլ մօրուքի մէջ, էս օր միանգամայն բամբակի քուլէն քեզ օրինակ. մինչև ե՞րբ, ո՛վ Աստուած, ներքև չես նայում քո բարձրութիւնից, չես խղճում այս աշխարհքիս բարիքներից իսկական անձը յօժարակամ զրկող միաբաններին: Դեռ լոյսը նոր է բացուել, դեռ ոչ ոքի բերանը մի կտոր նշխար չմտած՝ ծոմ, անօթի մի մի եկեղեցական զգեստ կռնատակն առած՝ Սողոմոնի կամուրջն են շտապում: Խեղճ ողորմելիք, եմ հա-

մար էք էդպէս գլուխ պատռած քայլ առնել վազում, ո՛վ պէտք է ձեր արածը գնահատի, արդեօք շա՞տ պէտք է վերադառնաք, թէ մինչև երեկոյ քաղցած ու ծարաւ այս խոնաւ եղանակին ոտքերդ պէտք է ջուր իջնի բաց օդումը կանգնելով. գոնէ մի պարզ ու մաքուր օր լինէր. գետն ու ջուրն եկել տարել է մեզ, եթէ անձրև էլ գայ, մինչև ոսկրը կանցկենայ, բոլոր զգեստներն էլ կէս փող կը դառնան։ Բոլորը գլուխը քարը, գոնէ շնորհակալ վերադառնար։ Քանի՞ քանի անգամ պատահել է, որ շաբաթով նստել լափել են ու վերջը մի քանիսին փայտի ու ֆալախաների մէջ կիսամահ արած՝ հեռացրել։ Է՛հ, ի՞նչ եմ կանգնել, ոտքիս տակին կրակ է վառվում, ես մոլորուել, պաշարուել, մնացել եմ. ա՜յ շաթիրն էլի դէպի ինձ է վազում, դեռ նոր լուսացաւ, բայց չորրորդ անգամն է, որ վշտալի հայրապետը ինձ կանչում է. ո՛վ գիտէ ի՛նչ նոր բան է մտքէ արել։

— Հա՛, էլի կանչում է՞, ասացի որ գալիս եմ, չսպասելով շաթիրի տուն մտնելուն, ձայն տուեց իւր խցից Գալուստ եպիսկոպոսը շաթիրին։

— Ասում էր հոգևոր տէրը, որ ձեռքիդ գործը թող և շուտ արի։

— Ներսէս, յետ դարձաւ եպիսկոպոսը դէպի իւր խցի միջի փոքրիկ սենեակը, դու ընչի՞ եկար, գնա, հագիր, վեհարան, ամբողջ օրը ներքև չգաս, Թուրքերի ոտնատակ կը լինիս։

— Իսկո՛յն, իսկո՛յն, պապի՛, գնում եմ, շատ լաւ ես հրամայում, սենեկից ոտքս դուրս չեմ դնիլ։

Գալուստ եպիսկոպոսը վերջին խօսքերն էլ չլսեց, նա շտապեց կաթուղիկոսի մօտ։

Դեռ Գալուստ եպիսկոպոսը կաթուղիկոսի մօտից չէր դուրս եկել, որ Ներսէսն յետին դռնից բարձրացաւ վեհարան ու մտաւ մահտեսու սենեակը, ուր որ իւր անկողինն էլ էր։

Քանի մի տարի էր, որ Էջմիածնումը կենում էր մի ծերունի Տաճկաստանից եկած՝ որին ծերերը մահտեսի էին կոչում, իսկ երիտասարդները՝ բաբի։ Ծերը իւր բարի բնաւորութեամբը արժանացել էր ընդհանուրի համակրութեանը։ Առաջ նա կենում էր Ղազարապատումը, բայց վերջը արժանացաւ վեհարանական դառնալու։ Ամէնքը միաբան յարգում էին նրան և ուրախութեամբ ընդունում էին. չէին կարող չանել, ծերունին ոտքը Էջմիածին դրած օրից բոլոր վանքցոց հիւանդապահն էր. կանչել չէր հարկաւոր, ինքն իսկոյն

անձնայօժար կառաջարկէր իւր ծառայութիւնը և հիւանդապահ կնոջ նման տկարի անկողնու մօտից չէր վեր կենալ։ Միայնակեցական ամենադժուար պայմաններից մինն էլ այս է, որ տկար ժամանակը երեսի վերայ ընկած է մնում. արդարև երբեմն երբեմն լինում են նրան այցելուներ իւր միաբանակից եղբայրներից, բայց այդ մի րոպէական տեսութիւն է. հիւանդը շատ կարիքներ ունի այլոց օգնութեանը և ձեռնհասութեանը կարօտ և այդ կարևոր բանը միայնակեցին պակաս է։ Եթէ նա սպասաւոր ունի և հարուստ է, նորա փոքրաւորն է նորա հրամանակատարը և կարիքին ճշդութեամբ հասնողը մինչ նրա տկարութեան սաստկանալը։ Այնուհետև ծառայի միակ նպատակն է իւր գրպանի հոգսը քաշել ու փոքր առ փոքր իւր մեծաւորի խցի թանգագին իրեղէնները եղբօր, որդու, ազգականի ձեռքով վերափոխել իւրեանց տունը, իսկ ինքը այդ միջոցումը ոտքը վանքից դուրս չի դնիլ, որ կասկածանաց տեղիք չտայ։ Այնուհետև հիւանդի կարիքը ճշգապէս լցուցանում է նա միմիայն այցելուների մօտ. միայնակ ժամանակը կամ չլսելու է տալիս, կամ իբր թէ գործով է զբաղուած և կամ, եթէ բոլորովին յոյսը կտրած է, կոպիտ պատասխաններով և բիրտ վարմունքով շտապեցնում է երանաւէտ կեանքը։

Աղքատ և անծառայ հոգևորականի համար խօսելն էլ աւելորդ է, ամէն մէկս կարող ենք երևակայել այնպիսի երեսից ընկած թշուառների դրութիւնը։

Սակայն այն օրից, որ մահտեսին բուսել էր Էջմիածնումը, ամէնքն էլ ուրախ էին, որ կայ մինը, որ իւրեանց հիւանդ ժամանակը ծնողի նման խնամ կը տանի իրենց։ Այս մահտեսու երևոյթը բացառութիւն չէր. ամէն ժամանակ այսպիսի մարդասէր ու Աստուածասէրները գտնվում են, որոնք ուխտում են իւրեանց անձը մինչև մահը չխնայել որ և է վանքի միաբանների օգտին։

Ահա այս մահտեսի Աստուածատուրի խնամարկութեանն էր յանձնած Ներսէսը վեհարանումը։ Ոչ մի մայր՝ մի ծնող չէր կարող իւր երեխային սրանից լաւ պահել։ Գիշերը նա մի քանի անգամ վեր էր կենում, ծածկում մանկանը, նրա ամէն մի պիտոյքին իսկոյն հասնում էր ու պէտք է ասած, որ խիստ էլ սիրում էր։

Այն միջոցին, երբ Ներսէսը մտաւ իւրեանց սենեակը, բաբին կամ մահտեսի Աստուածատուրը այն տեղ չէր, սենեկի և ներսի դուռը կիսաբաց էր, պարզ լսվում էին կաթողիկոսի այս խօսքերը. գնա

Գալուստ եպիսկոպոս, էլ մի՛ ուշանալ, ես հրամայել եմ ծաղկած այգանից սուրբ պատկերները հաւաքել. մի վեհարան ունէինք, որ անօրէնների ոտը չէր մտել, այն էլ նրանց ծանր շնչովը պէտք է լուսի: Զգիտեմ ո՞վ է մատնիչ Յուդայ դառել, որ խանը ցանկացել է այս անգամ վեհարանումն իջնել. մինչև քո գալը երեք մհասիլ եկաւ:

— Էդ անպատճառ մեր գիւղացի տէր Մելքսեդեթի գործն է, Հոգևոր տէր, առէն ընկնելով պատասխանեց կաթուղիկոսին Ներսէսը. հէրու Գէորգ խալֆէն Սողոմոնենց Գասպարին պատմում էր, որ ինքը լսել է, որ տէր Մելքսեդեթը մի տեղ ասել է, թէ ախտս խանը Էջմիածին էլ չի գնում, թէ չէ ինքը նրան կըհասկացնէր, որ վեհարանը ներսի Ղազարապատից աւելի լաւ իջնելու տեղ է: Ես ու Վարդը Գէորգ խալֆենց բաղչումը խաղում էինք ու իմ ականջովս լսեցի, բայց ի հարկէ ոչինչ չհասկացայ:

— Ներսէսը սուտ չի ասում, Հոգևոր Տէր, ասաց Գալուստ եպիսկոպոսը, մի հնարք չկայ այդ սև օձի գլուխը ջախջախելու, քանդեցին այն երկու փշերը Աշտարակն ու բոլոր Երևանու նահանգը:

— Է՛հ, հոգւոց հանեց կաթուղիկոսը, նրանք իրենց գործերը լաւ կարգի են դրել, ի՞նչ կարող ենք անել, մինը Վասակն է՛ միւսը Ջանգալ քահանայն: Օրը տասն անգամ խանից շնորհակալութեան թղթեր է գալիս փուչ տէրտէրի համար, լեզուներս կարճ է, պէտք է լռենք: Յուսերս մի՛ վերանորոգիր, ՚ի սէր Աստուծոյ, Գալուստ եպիսկոպոս, շտապի՛ր ծաղկած այգանը պատրաստել տալ խանի համար, միւս շնորհին էլ Ղազարապատը կայ:

— Շատ ցաւալի էր այսօր միաբանաց դրութիւնը, խանին սպասելով Հռիփսիմէի վանքի մօտ: Ծերունի հայրապետի համար մի փոքրիկ գորգ էին փռել բաց օդումը, միւսներից ոմանք ոտքի վրայ կանգնած մնացին, այլք ուղիղ խոնաւ գետնին իրենց հօր սուտ պէս ոտքերը ձգած նստեցան: Երկու երեք թուանքչի ձիանց ոտքը հատացրել էին մինչև փարաքար գնալ գալով, և միշտ մի և նոյնն էին կրկնում, թէ դեռ չեն երևում:

— Ծառայեմ, Հոգևոր տէր, երբեմն մօտենում էր կաթուղիկոսին տեղակալը, դու գնա Վաղարշապատի մօտիկ աներից մէկի մէջ հանգստացի՛ր, այս խոնաւութիւնը վնաս է, թուանքչին լուր տալու պէս

մենք քեզ իմացում կը տանք, ձին պատրաստ է, կը նստես կըշտապիս:

— Ո՛չ, ո՛չ, համբերենք սիրելի՛ք, միայն թէ ուղարկեցէ՛ք մի քանի տախտակ հաց բերեն, ոտքի վրայ կանգնած մի փոքր կաղդուրուեցէ՛ք, գուցէ աւելի ուշանայ:

Յամաք հացով գոհացան մեր միաբանքը այդ օրը:

— Երեկոյան ժամի ժամանակը մօտ է, մի թուանքչի ուղարկեցէք մեր ծերունի վարդապետներին, թո՛ղ ժամն ասեն, մենք էլի սպասենք, հրամայեց կաթուղիկոսը:

Ամէնքից անհամբեր էին գտնվում խանի խոհարարները, որոնք օր յառաջ եկել, վանքի խոհանոցը բռնել, մէկի փոխանակ 10,20 ոչխար՝ հաւ կոտորել և կերակուրները վաղուց պատրաստել էին. եթէ ոչ, ի՞նչ պիտի ուտէին մարգարէի մաքրասէր սրբագործուած որդիքը. քրիստոնէի ձեռք տուած ամէն բանը հարամ էր, մանաւանդ ուտելիքը: Ամէն մի րոպէ տասը ծառայ էին վազեցնում խոհարարները խանի գալն իմանալու, փլաւը փչացաւ, ասում է, մեր գլուխն էլ հետը կը գնայ:

— Մի կէս ժամ էլ սպասենք, վճռեց խղճալի կաթուղիկոսը, թէ չեն գալ, այդ է որ վաղն էլ այս մի և նոյն վիճակի մէջ պէտք է լինինք:

Այս խորհրդի վրայ էին, որ թուանքչին ձիու ականջը մըտած՝ Հռիփսիմէի վանքի քամակից կրակի նման գալիս էր, ձեռքին մի սպիտակ թաշկինակ օդի մէջ ծածանեցնելով:

— Գալիս են, գոչեցին միաձայն և շուրջառաւորուած՝ կարգով շարուեցան. ձայնաւորներն իրենց տեղը բռնեցին, ծերունի կաթուղիկոսը օձ—գաւազանը ձեռքին, գլուխ կանգնեց:

Փոքր միջոցից պարզ երևեցաւ երկնքի բարձրացած փոշին և նկատելի եղաւ ձիաւորների խումբը:

— Եալլա՛ [1]) գոռացին մի քանի թուանքչիք առաջին արշաւելով և ձայնաւորները սկսեցին երգասացութիւնը:

Ամենախոնարհ երկրպագութեամբ յառաջ եկաւ կաթուղիկոսն և նշանացի անելով ձայնաւորներին լռել, մի քանի հաճոյախօսութիւններ արեց: Նոյնպիսի շողոքորթական խօսքեր էլ խանը գործ դրեց

---

[1]) Կեցցէ:

և հանդէսը երգասացներով յառաջ եկաւ դէպի Բազարի կոչուած դուռը:

Այդ տեղ խանը իջաւ ձիուց և տրորեց փիանդազը: Փռուածքը նախ կարմիր մահուտ էր, յետոյ հասան կանաչ մահուտին, իսկ Տրդատայ դռնից մինչև վեհարան՝ ոսկեթել հնդկաստանի զիպակ:

Ճրագները վառուեցան և հազիւ մեր թանգագին հիւրերը սեղան նստեցան:

Երկու անգամ կերակրներն եփուել թափուել են, գլխիդ մատաղ, արդարացաւ սեղանապետ բէգը, երբ որ սարդարի աչքից գուշակեց իւր գլխին ընկնելիք կայծակը: Խալֆէն ինքը հրամայեց աւելի լաւ պատրաստութիւններ նորից նոր տեսնել, ոչ ինչ չխնայել, քո ողորմածութեան ախորժակը քաղցր անելու համար, ասաց նա:

Կաթուղիկոսը թէպէտ ոչ ինչ էլ չգիտէր կերակրների եփուել թափուելու մասին, բայց ստիպուեցաւ ստորաբար գլուխը շարժելով պաշտպանել սեղանապետին և խոհարարին:

Սեղանի ժամանակն ինքը կաթուղիկոսը 10 եպիսկոպոսով ոտքի վերայ կանգնեցաւ, բայց սարդարը մարդասիրաբար հրամայեց նրան ծունկ չոքել իւր մօտ: Այն նշանակում էր, որ սարդարը քաղցր աչքով ընդունեց հիւրընկալութիւնը. բայց իմանո՞ւմ էր արդեօք նա, կամ մտածո՞ւմ էր, որ ինքն այսօր երրորդ անգամն է ուտում, իսկ իւր առաջի չոքած ծերունին մի կտոր ցամաք հացով է յագեցրել իւր քաղցը: Ընտաբ են ասել «կուշտը քաղցածին մանր կը բրդի»:

Մութը գետինն առել էր, որ Էջմիածնի միաբանութիւնը այսօր սեղանից դուրս եկաւ:

ԼԵ.

ՃԱՄՓԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԵՐ:

Մողնու ուխտաւորներն իւրեանց ճլվլոտան սայլերով փոքր առ փոքր Էջմիածնի պարիսպը, դրսի բակը, քեազգխանի առաջը լցվում են: Քանի մութը գետինն առնում է, սուրբ Գէորգի տօն շաբաթ օրը, էնքան Մողնու ուխտաւորը պակասում է, Էջմիածինն աւելանում:

Հեռաւոր ճանապարհորդներն այս ուխտին երկու փափագ են առնում, առաջինը՝ սուրբ Գէորգը, որ Աշտարակից երկու ասպարէզ վերև՝ Մողնու գիւղումը պահապան հրեշտակի պէս հսկում է

Արագածոտն գաւառի և Արարատեան դաշտի գիւղերի վերայ: Երկրորդը՝ մեր մայր Աթոռն է, որ սուրբ Գէորգի շնորհիւ ամէ՞նք, թէ մի ուրիշ մտքով՝ էս օր է կատարում իւր ուխտը:

Տայոց աշխարհքի, Շիրակայ, Փամբակի, Կարսի և այլ տեղերի ջերմեռանդ հայ ժողովուրդը, թէպէտ երեք միմեանց հակառակ տէրութեանց մէջ գերի՝ էդ մի իրաւունքն են ձեռք բերել շատ դժուարութիւններով, որ տարին մի անգամ իրանց թոյլ է տրուել, վայր ձգել երեսի վերայ ամէն գործ ու գնալ իւրեանց իղձը կատարել սուրբ Գէորգի և Էջմիածնի հողերը համբուրելով:

Շատ կարելի է, որ այս ուխտաւորներից շատերը սրտանց էլ փափագէին Յօշականայ հանդովն անց կենալու՝ մեր Մեսրովբ բազմաշխատ Թարգմանչին ևս մի բարև տալ, բայց ի՞նչ հարկաւոր է իրանց նեղութիւն տալ՝ մի ժամաչափ տեղը մէկ էլ ծռուել ճանապարհից: Սուրբ Մեսրովբն անյիշաչար է. նա կը ներէ իւր որդւոց ապերախտութիւնը. նա ձեռն առ Աստուած բռնած՝ բարեխօս է Հայոց ազգի գոյութեան համար, նրա միակ աղաչանքն այս է, որ քանի աշխարհս կայ, նրա հետ էլ մշտնջենաւորուի իւր տաժանակիր աշխատանքի քաղցր պտուղը՝ հայերէն այբուբենը: Մեսրովբը մեր համար այդ է աղօթում, իսկ մենք կրօնասէր և ուխտասէր հայերս, մեր «Հայր մերը» օրը եօթն անգամ մեր լեզուովն ասող աղօթասէրներս շատ քիչ ենք ուշ դարձնում այդ սրբազան աւանդը՝ Հայոց լեզուն անմահացնող Մեսրովբի վերայ:

Մեզանում ամէն մի գիւղում ունին իրանց համար մի պաշտպան սուրբ, որոնց համար ամենաքիչը տարին մի անգամ մի օր են սեպհականացրել և մեծ բազմութիւնով նրա դուռն են գնում. այդ սրբերից էնպէսներն էլ կան, որ երկու՝ երեք՝ մինչև եօթը շաբաթի արտօնութիւն են ստացել: Դրանց մէջ առաջին տեղը բռնած ունի Մողնու սուրբ Գէորգը, որ գարնան ու աշնան ուխտեր ունի եօթն եօթը շաբաթական: Այդ վատ չէ: Բայց էնպէսի անբաղդ սրբեր էլ կան, որոնք կարելի է իւրեանց ընկերներից փոքր աշխատանք և Աստուծոյ առաջին պարզերեսութիւն չունին, բայց որ զուրկ են միանգամայն ուխտերից: Սրանցից ահա մի նշանաւորը քեզ օրինակ. խեղճ Մեսրովբ Թարգմանչի վկայարանը տարին 12 ամիս աչքը կթած՝ Յօշականումն սպասում է, թէ ե՞րբ, քանի տարին մի անգամ, մի զգայուն հայ առանձնապէս իրան համար մի օր կը զոհի: Բայց շատ տարիներ են անցնում և այդ չի պատահում:

Մխլյն, չգիտեմ թէ ի՞նչ ծիսակատարութեան պատճառով ամառը մի օր Աշտարակու և Օշականու խառնուռիկ—մառուռիկ, կայտառ հարս և աղջիկները Օշականայ գլխի Դիզի կոնդ կոչուած բլրի վրայի մատուռի մօտ կը հաւաքուէին, իրար բարև կը տան, իրար հետ տեսութիւն կանեն և մի քանիսը իրար կասեն.—աղջի, հաղիր նիկէ ենք, էրթանք Թարգմանիչն էլ համբուրենք:

Մէկէլ էն տեսնիս, բլրից ներքև կը վազեն ու Մեսրովբի գերեզմանը համբուրելուց յետոյ՝ իրանց ծանօթ Օշականցիների տանը մի մածնաջուր կը խմեն, էլ յետ—վա՜յ, բալամ ջա՛ն, պրծէք գնանք, հիմի կը մթնի՝ ասելով, երեսների քօղերը աղատ յետ ձգած՝ կարմրատակած, վռշնած՝ վարդ կտրած՝ կոնդի քարերի միջին նրանց հետքը պահող թագկացած պատանիների բերանների ջուրն իջեցնելով՝ կը բարձրանան բլրի գլուխը մատուռի մօտ, որ չեկողների նախանձը շարժեն:

—Դէ՛, շուտ արէք, հաւաքուեցէք, օրը մթնում ա, յանկարծ մի հրաման դուրս կըգար մի փոքր հեռուումը սուփրէն չաղ արած նրանց ազգական երիտասարդներից:

—Հինգ րոպէ չէր քաշել, մեր սիրունները իւրեանց կապոցները պնդացրած՝ ուսերին դրած՝ քօղը ցած կը թողնէին ու կըմտնէին երիտասարդների կապած շրջանի մէջ ու ձայն ու ծպտուն կտրած՝ երեսները դէպի Աշտարակ կը դարձնէին: Մեր կրակոտ պատանիներն էլ, որը մի գագանակ, որը մի խանչալ, միւսը մի հրացան ուսը ձգած՝ մէջ կանէին մեր նաշխուններին ու Օշականցի ուխտաւորներին հեաս բարև ասելով քաղցր երգերով Աշտարակու հանդն ու այգիները կը դղրդացնէին:

Ահա այս տարին մի անգամի Աշտարակցոց այցելութիւնն է, որ մինչև այսօր շարունակվում է և սուրբ Մեսրովբին մի փոքր ուրախացնում. ապա թէ ոչ, նա խապառ զրկուած է իւր երախտապարտ որդւոց ուշադրութիւնից: «Տանու տէրտէրին օրհնեա տէր չկայ». եթէ Մեսրովբը հայ չըլինէր, կարելի է մի օր էլ նա կուռնենար իրա համար, բայց հիմա ինքն էլ իւր բաղդին վիճակուած հայերի—մեծն Ներսէսի, Տրդատի, Սահակի, Վռամշապուհի, Վարդանանց, Ղևոնդեանց, Վահանների և այլ այսպիսի շատ հայոց ազգի բարերարների հետ ներողամտութեամբ է նայում մեր ապերախտներիս վերայ:

Այս է պատճառը, որ մեր պատմած սուրբ Գէորգայ ուխտի շաբաթ օրը Մեսրովբի վկայարանի սև քարերը կարծես սև սրտով

են մտիկ տալիս Մողնուց էջմիածին գնացող մի ժամի չափ հեռաւորութեամբ անցնող ճռուղին սայլերի մէջ լցուած հայերին:

Հարիւր տարի սրանից յառաջ դու էլ Մեսրովբի հետ արտասուք կը թափէիր, ընթերցող, եթէ Օշականայ կողքով սայլերով անցնող ուխտաւորների հետևեալ խօսակցութիւնը լսէիր:

—Տօ՛, սա ի՞նչ վանք է, որ երևայ կը, խաչիկ աղեա՛ր, իշաէ յաշէ [1]), սա բաղերի միջէն գլուխը քիչմ ցցնէ կը:

—Աղեա՛ր, չիդեմս [2]), քանի հեղ [3]) կերթաս գուքաս, ամօթ չէ՞, սա Թարգմանիչն է, մեռնիմ էնոր յոտացը, հասկացնում է Ղարսեցի խաչիկը Թօրոսին ու «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ» բարձր ձայնով ասելով, երեսին խաչ հանում ու եզները քշում:

—Տօ՛ մարիկ, խանում աբլայ [4]), յաշեցէք, տե՛նա [5]) կըսեն Թարգմանիչը, իւրեանց մարդկանց ձայնի արձագանքը սայլերի մէջ հնչեցնելով՝ ասումեն միմեանց կանայքը:

—Հապա՛, հասկացող և բանագէտ մարդը դէմք բռնելով բացատրում է մի պառաւ. աղ Թարգմանիչն է իշտէ [6]), որ երազին մէջ Աստծու իրեն ձեռքէն տաղտկի մ'կտորի վրայ առաւ այբբեմը. աղ Թարգմանիչը շատ սուրբ է եղեր, ըսենք թէ աղայ Մողնու չափ չէ, ծառայեմ անոր զօրացը (երեսը խաչակնքում է), հմա աղ ալ պակաս սուրբ չէ: Մի մի խաչ էլ ի պատիւ Մեսրովբայ քաշումեն կանայքն ու մռացութեան տալիս:

—Ապէր, Օհէփ ապէր, հլէ մի աչքդ դրա դէմը քցա՛, քը մատաղ գնամ, տեսնումես էն ժամը որ ըրէւում ա՛, էն ո՞ր սուրբն ա:

—Բօ՛, քու իգանդ [7]) քեզ խռով կենայ, խի՞, [8]) բա գիտում չե՞ս, ինքնաբաւական ձևերով սորակն օդի մէջ պտտեցնելով ու եզներին «օհօ» ձայն տալով՝ պատասխանում է մի փամբակեցի իւր խօսակցին. ա՜ դալա՛, [9]) բա ես ընչի՞ եմ [10]) պտի սաղ մեամ, որ ամէն բան ձեր անկաջումը հալի անեմ [11]). դէ հլէ Թարգմանիչն ա էլի՛:

—Քու հօրն օղորմի, ապէր, հլէ մի հսկացրու, էդ Թարգմա-

---

[1]) Նայիր. [2]) Չգիտես: [3]) Անգամ: [4]) Տիկին հարսիկս. [5]) Ահա. [6]) Ահա. [7]) Հասկացողութիւն [8]) Ընչի. [9]) Այ տղայ. [10]) Մինչև երբ. [11]) Հասկցնեմ.

նիշն ա մե՞նձ, թէ սուրբ Մողնին, մեռնիմ նրա զօրութիւնին, մէջ է մտնում երրորդը։

— Դէ՛ հլէ սուրբ Մողնու չանք [1]) խո՛ կըլնի, փոքր ինչ մտածելով և մտքի մէջ վճռաբար համեմատութիւն անելով՝ բացատրեց Օսէփ ապէրը. աղայ Մողնին որ կայ, չիմ [2]) սրբերի գլուխն ա, մենակ սուրբ Մայրամ Աստուածածինն ա նրանից մենծը. մնացողները՝ ոնց որ քեօխվի [3]) կշտին՝ գեղի իշխանները։

— Հլէ հենց քու որդիքն ապրին, Օսէփ ապէր, խնդրում է չորրորդը, մի ջաֆա քաշա [4]) մեր բէյինները [5]) լըրու ես թարգմանչի նաղլը [6]). ասում են սա մեր հայի այբբենը չինել ա, ղորթ ա՞։

— Դրա ասողն էլ քե չանք խելքի տէր ա էլել, Մարտի ջա՛ն, խո՛, քու իդանդ ո՞ր տեղ էր, որ մի տեղ սուրբ Մողնի ըլնի ու դա կարենայ՝ տեղեցը ժաժ գալ, դէ ղորթ ա, դա էլ ընտիր ա էլել, համա սուրբ Մողնին ա վերք արել։ [7])

— Բա հլէ ասում են, թէ սուրբ Մեսրոպն ա գտել, կասկածանքով և համեստութեամբ բերանից մի խօսք բաց թողեց մի ուրիշը, քը մատաղ, ջգրվես ոչ, Օսէփ ապէր, ես լողանց եմ ասում, թէ չէ քու ստն իմ գլխիցը շատ գիտայ, ես ի՞նչ հաղդ ունիմ [8]), որ քու առջևը ձէն հանեմ. ես ոչ գիր գիտամ, ոչ ղալամ, համա դու սաղ Այսմաւուրքը՝ ժամի էն հաստ գիրքը փորումդ ունիս, օխտը տէրտէրի չանք կրթացել ես։

— Դու էլ սուտ չես ասում, բալամ ջան, ուռչելով իր մէջ գովասանութեան վերայ, պատասխանեց Օսէփ ապէրը. դէ սրբերը մենակ հօ մի անում չեն ունենում, այ, լսել չե՞ս, որ սրփ կարապետը օխտն անում ունի. սուրբ Մողնին էլ հընէ [9]) իրեք անում ունի. — սուրբ Գէորգ, սուրբ Մողնի ու սուրբ Մեսրոպ։

Այսպէս զանազան առարկաների վերայ խօսելով մեր ուխտաւորները երեկոյեան ժամի ժամանակը սուրբ Գէորգի շարաթ օրը մտան Էջմիածին։

---

[1]) Չափ. [2]) Բոլոր. [3]) Տանուտէր. [4]) Նեղութիւն կրիր. [5]) Ըւղեղ. [6]) Պատմութիւնը. [7]) Մտածել. [8]) Վստահութիւն. [9]) Այնպէս.

ԼՁ.

«ԱՆՑ ԿԱՑԱԾ ՕՐԻՆ ՕՐ ՉԻ ՀԱՍՆԻ»

Ինչպէս աստղալից գիշերը տեղ տեղ ամենապայծառ փայլմունքով աչքերը խտտղեցնում երկնակամարի վրայ մանր ու մեծ 1000աւոր աստղերովը, տեղ տեղ մի քանի աստղեր միայն պէծպծիլ են տալիս, մի քանի տեղեր էլ երկնքի վերայ երևում են սև սև ամպի կտորներ, որոնք տեսարանին աւելի շքեղութիւն են տալիս. այդպէս է այս գիշեր Էջմիածնի պարսպի ներս ու դուրսը։

Տեղ տեղ կրակ են վառվում, տեղ տեղ սայլի վերայ մի ծալովի մոմած կտաւէ լապտեր է քաշ արած, տեղ տեղ էլ բոլորովին մութն է։ Լուսաւորուած տեղերումը ստուերների նման շարժվում են ուխտաւորների խմբերը, գաւիթն դուռնը վանքը վերցրել է. ամէն տեղ կենդանութիւն է։ Մօտ գնա այդ կրակներին և ինչ կը տեսնես, երկու քար դրած՝ վրան մի մեծ կաթսայ, մէջն էլ մի ամբողջ ոչխար քլթքլթալով եփվում է, խորովածի անուշ հոտն ու բուրմունքը մեկ հետ բարձրանում և վանքի քունջ ու պուճախն է բռնում ու վանքի մշտաժուժկալ և սակաւապէտ միայնակեաց միաբանների քթերի թելերը գրգռում։ Խորոված շատ են անուշ արել մեր հայր սուրբները, բայց այս գիշերուանի հոտը մի ուրիշ տեսակ մագնիսական զօրութիւն ունի իր անուշութեան հետ. միս նոքա շատ վայելել են, բայց երևում է, որ կամ նոցա խոհարարները չեն իմացել մինչև էս օր եփելը, կամ թէ մատաղի շնորհքն է, որ այս երեկոյեան խաշլամաների հոտը քիթ է ծակում, աւելի ախորժ է ներգործում ամէն միաբանաց ուղեղի վերայ։ Շատ էլ աշխատում են սրբակեաց հոգևորականները զսպողութիւնը ձեռք առնուլ, չպատռել ամօթխածութեան վարագոյրը, հեռու փախչել աշխարհքիս հրապուրանքներից, սովորականին նման բաւականանալ իւրեանց աղքատիկ ընթրիքովը, որ արել են սեղանատանը, բայց իրանք էլ չեն իմանում, թէ ի՞նչպէս եղաւ, որ մի կարմիր ֆաս գլխին՝ որպէս թէ գետնից՝ բուսան ուխտաւորների մէջ և իրանց շրջակայքումը հաւաքեցին ուխտաւորների բազմութիւնը։ Ի՞նչ անէին, որոնց էլ մեղադրելու չէ. անկարելի է, որ այսքան բազմութեան մէջ մի ազգական կամ ծանօթ չունենային։ Էջմիածնի վարդապետները միմիայն Վաղարշապատեցի հօ չե՞ն, որ աշխարհքիցն

տեսս, կըգտնես։ Բայց եթէ և ոչ մի ծանօթ էլ չունենան, էլի մեղք չէ նրանց այս խմբերի մէջ հրեալը։ Ի՞նչպէս կարելի էր մարդասիրական զգացմունքից չշարժուել, ի՞նչպէս կարելի էր զրկել ուխտաւորներին սեղանն օրհնելուց. մի՞թէ անխղճութիւն չէր լինիլ կարօտ թողուլ մեր ջերմեռանդ հեռաւոր տեղերից եկած հայրերին, եղբայրներին, մայրերին ու քոյրերին Էջմիածնի միաբան հայր սուրբի աջը համբուրելուց։

— Աստուած պահապան որդիքս, յանկարծ մօտ է գնում մի խմբակի՝ փառը ծածկած հայր սուրբը, հի՞ւր չէ՞ք կանչում։

— Ծառայեմ աջիդ, Աստուած օգնական, հայր սուրբ, շփոթվելով խրարոցով են դիպչում ամէնքը. մեր գլխի վրայ, մեր աչքի վրայ տեղ ունիս, համեցէք, մենք հէնց սպասում էինք, առանց ձեր օրհնութեանն հալալ չէր լինիլ մեր էս գիշերուան ուրախութիւնը։ Սայլի վերի կողմը մի բարձ է դրվում և մեծապատիւ այցելուն վրէն բազմում է։

— Հայր սուրբ ջան, էս մեր օղլուշաղին մի լաւ օրհնի՛, քո որդիքն են, խնդրում է խմբի ամենից պատուելի անդամը, սուրբ Իջման տեղի սէրն ու ձեր օրհնութիւնն է սրանց էս կողմը քաշել հասցրել։

— Աստուածային օրհնութիւնն եղիցի ձեր վերայ, ձեր գերդաստանի վերայ, ձեր աշխարհքի՝ ձեր գիւղի վերայ, Աստուած ի փառս իւրում ընկալցի ձեր ուխտը, Աբելայ, հայր Աբրահամու մատաղն եղիցի ձեր գոհաբանութիւնը, սուրբ աջը կարգաւ տղամարդկանց գլխին դնելով, յետոյ կանանց ու աղջկանց կրակի պէս այրող շրթունքներին կպցնելով՝ աղօթքի պէս օրհնութիւնը դուրս էր բղխեցնում իւր արժանաւոր բերանից որդեսէր հայրը։

Սեղանը քաշվում է, ամէն տեսակ բարիք մէջտեղ են գալիս, ամէն աղէկ թիքէն հայր սուրբի առաջն է դրվում, ամէն կողմից բաժակը դէպի սրան է ձգվում։

— Ես, որդիքս, բերանս չեմ առնում խմիչքը, բայց ձեզ պէս ուխտաւոր որդւոց սիրոյն պէտք է չհրաժարուիմ, ամէն անգամին էլ կրկնում է էս խօսքը կամակատար հիւրը։ Եւ արդարև, պէտք է խոստովանած՝ որ բաժակը միայն պռնգին էր կպցնում ու յետ տալիս, բայց ի հարկէ, ամէն մի բաժակի վերայ անխնայ թափում էր իւր օրհնութիւնը մէկի կամ միւսի կենացը։ Առատաբաշխ հօր համար խտրութիւն չկար, ամէնքն էլ հաւասարապէս նորա որդիքն

էին, ո՞ւմ սիրտը կոտրէր, որի՞ կենացը չխմէր, նա՝ օրհնութիւնը վերջացնելուց յետոյ՝ անխնայ ձգում էր իւր աջն ամէն մէկին։ Մարդկանց սիրտը ուրախացնելուց յետոյ՝ հայրական պարկեշտութեամբ դարձնում էր երեսը դէպի սայլի տակին լուռ ու մունջ ընթրող համեստ խումբը։ Սրանք կանայքն էին, սրանք էլ հայր սուրբի դուստրներն էին, նա սրանց էլ արժանացնում էր ընդհանուր ուրախութեանը. առատօրէն տարածում էր իւր սուրբ աջը դէպի կանայքը։ Եթէ նկատում էր նա, որ սրանց մէջ որևիցէ ամօթխած օրիորդ կամ նորահարս քաշվում էր, կուչ էր գալիս, ամաչում էր մօտենալ իւր աջին, ինքը բարեսիրտ հայրը վեր էր թռչում տեղից ու մտնելով կանանց մէջ, ձեռքը հասցնում էր այդպիսի ամօթխածներին։ — Ես գիտեմ, որդիս, դու ամաչում ես ու մօտ չես գալիս, ես ինքս քեզ մօտ կըգամ, վնաս չունի։ Ոչ մի ժամանակ այսպիսի շնորհաբաշխութիւններից չեն փախել մեր ժողովրդասէր հայրերը. այս գիշեր աւելի քաղցրացել էին։

— Ի՞նչպէս է կարելի այսպէս վարուել, հաստատում էին միմեանց մօտ միաբանակից եղբարքը իւրեանց արդարացի վարմունքը, ամբողջ տարուայ մէջ միայն մի օր է այս ուրախութիւնը, այս էլ կորցնենք. դիցուք ուխտել ենք հագուստներս սևացնել, հոգիներս էլ միանգամայն հանգած ածուխ շինելու հօ չենք. մի՞թէ մենք էլ մարդիկ չենք։

Պէտք է ասել, որ ծերունի եպիսկոպոսներն ու իշխանաւորները շատ լաւ գիտէին, որ այս գիշեր ոչ մի երիտասարդ միաբան տանը չի լինիլ, պարզ յայտնի էր իրանց, որ հերթական սաղմոսասացները չէին կատարել առաւօտեան իւրեանց պաշտօնը, նրանք մինչև առաւօտեան ժամերի տալը ուխտաւորների մօտ կը լինին, դորա համար էլ կարգադրել էին, որ վարդավառի կիրակէ օրը մի պատուելի ծերունի եպիսկոպոս պատարագի. սաղմոս քաղելն էլ իւրեանց վերայ էին առել։

— Ի՞նչպէս կարելի է զրկել երիտասարդներին այս վայելչութիւնից, խորհում էին ծերունիքը, մի՞թէ մենք էլ երիտասարդներ չենք եղել, մենք էլ նոյնը չե՞նք արել. մի՞թէ մեր ամէն մէկի մտքին չէ, թէ ի՞նչպէս անհամբեր սպասում էինք այդ օրին, ի՞նչպէս երկար էր թւում մեզ սուրբ Գէորգի շաբաթ օրը. մինչև մթնելը հոգիներս դուրս էր գալիս, երանի՜ այն օրերին։

— Ներողամտութիւնը մեր սրբազան պարտականութիւնն է

հայրեր, վճռում էր մի նախապատիւ իշխանաւոր ծերունի և չտեսնելու էին տալիս իրանց ջահել եղբայրակիցների այս գիշերուան արարքը:

— Աջիդ մեռնիմ, հայր սուրբ, թողութիւն կանես, որ մեր ջահել—ջուհուլները մի քիչ ուրախանան, խաղեր ասեն քեզ մօտ, պար գան, դու էլ նստիր քո որդիքների գժութիւնների վրայ ծիծաղի՛ր, գտակը հանած՝ խնդրում էր սեղանակից վարդապետին ծերունի ուխտաւորներից մինը:

— Օրհնեալ լինիք դուք, ծանրաբարոյ պատասխանում էր հիւր վարդապետը. ի՞նչպէս կարելի է այդ անմեղ զուարճութիւններին արգելք լինել. ես այսօր արդարև վարդապետ եմ, ձեր հոգևոր հայրն եմ, իրաւ է, հոգի առաւել է քան զմարմին, մենք միշտ հոգևոր երգերով և սաղմոսներով ենք անցկացնում մեր օրերը, բայց ի հարկէ «կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ», մարմինը պէտք է ուրախանայ, որ հոգին էլ նրան մասնակից լինի, ես շատ ուրախ կը լինեմ:

— Դէհ, քէյֆանիք, [1]) վեր կացրէք էդ հարս ու աղջկներին, թող գան հայր սուրբի աջը համբուրեն ու պար գան, էս օր մուրախաս [2]) ա, հրամայում էր սեղանի գլխաւորը և կարգով առաջ մէկ մէկ յետոյ բոլորը միասին պար էին բռնում ու երգում:

Հայր սուրբի աջն էս գիշեր անպարկեշտ ազարակ էր դարձել, ով ասես, օգուտ էր քաղում: Ինչպէս աղջիկ էր լինում, 100 անգամ պաչում էր:

— Քը՛ մատաղ, հայր սուրբ ջան, քու որդին ա իմ աղջիկը, մի լաւ օրհնա՛, որ լաւ բաղդի տիրանայ, մէջ էր մտնում ոչ պակաս շարժուած զաւակասէր Լօռեցին:

— Աստուածային օրհնութիւնը քո վերայ լինի, զաւակս, գլուխը երկու ձեռքերով բարձրացրած՝ կրկնապատկում էր նա, համեստ դէմքիցդ պարզ երևում է, որ դու լաւ աղջիկ պէտք է լինիս և մի երջանիկ ապագայ պէտք է ունենաս:

Այս լուռ բարեպաշտութիւններն և հայրական զգուանքներն ուխտաւորներից աւելի ախորժանօք էին լսում ծերաւորները, եպիսկոպոսները կամ 50 տարին անցկացրած ծեր վարդապետները, որոնք

---

[1]) Տնտես պատուելի կանայք: [2]) Արձակուրդ:

իրեանց տարիների կամ աստիճանների վեհութիւնից քաշուելով չէին կարողանում ջահէլների այս գիշերուան երջանկութիւնն ունենալ: Եպիսկոպոսութիւնն ամէն վանականի վերջնական ցանկութիւնն է, բայց այս գիշեր շատ երիտասարդ եպիսկոպոս հեռու՝ մթնումը կանգնած՝ նախանձում էր իւր ընկեր վարդապետի երջանկութեանը, նա ափսոսում էր իւր կորցրած վարդապետութեան աստիճանի վերայ: Ծերունիներն էլ երգերի ու աղաղակների ձայնից քնահատ եղած՝ կանգնում էին իրեանց խցերի դռներին և հառաչանք քաշելով յիշում իրեանց անդարձ կորցրած օրերը: «Անց կացած օրին օր չի հասնիլ»:

— Զգոյշ կացէք, լաւ մտիկ տուէք ձեր ունեցած չունեցածին, շատ բաց չթողնէք ձեր հարսների ու աղջկերանց երեսները, անօրէն խանն էս գիշեր վանքումն ա, թուրքերը քաղցած գելերի պէս հոտհոտելով չորս կողմերդ ման են գալիս, ձեռներն ընկածիցն էլ խեր չկայ. ամէն րոպէ լսում էին ուխտաւորները վանքի թուանքչիներից, բայց ոչ ով էլ նրանց խօսքը պարանի չէր դնում, ամէն մարդ իւր քէֆի վրայ էր: Գիշերը բաւականին անց էր կացել ու դեռ ոչինչ չէր պատահել:

Ամէն տեղ ուրախութիւն էր, ամէն խումբ էլ մոռացել էր որ ինքը ճնշուած է օսմանցու, պարսկի, կամ քրդերի ձեռքին: Լօռեցին միանգամայն մտքումն էլ չէր անցկացնում մի անյաջող դէպք: Նա լինելով վրաց իշխանութեան ներքոյ՝ շատ բռնութիւն չէր տեսել, էս օր երբէք շան տեղն էլ չէր ձգում պարսիկներին. նա իւր երջանկութեան ծայրն էր հասել: Սեղանակից սուրբ հայրերն էլ արհամարհում էին ամէն զալէք պատահարք. ի՞նչ ժամանակն էր մտածելու, նրանք այն ևս մոռացել էին, որ այս օր առաւօտից մինչև երեկոյ հալիփախմէի մօտ ոտքերը սև ջուր վէր եկաւ խանին սպասելով, հիմի ի՞նչ վտանգ պէտք է նրանց աչքին երևայ այս երջանիկ րոպէին:: Սարվազ չի, խան չի, որ շան էլ չեն մտաբերում: Մի՞ թէ բանտի խորքումը տասը տարի փթած՝ ոտքերն երկաթով կապած՝ արեգակի լուսին կարօտ՝ ազգ. ընտանի, իրաւորի ու մերձաւորի շնչին ու լեզուին կարօտ բանտարկեալը՝ ամբողջ կեանքն էս անելանելի տանջանքների մէջ անցնելու դատապարտուած թշուառականը, իւր սև օրերի վրայ ողալով, գլուխը բանտի խոնաւ պատին խփելով, եթէ թմրի, մի տեսակ անզգայութեան մէջ ընկնի ու կէս քուն՝ կէս արթուն նրա աչքին երևի, որ ինքը գտնվում է մի ծաղկալից պար-

տիզում, մայիսի ամենաքաղցր օրերից մէկում, վերևից ծառերի հովանին է նրան պահում արեգակի ջերմութիւնից, ներքեւ 1000աւոր ծաղիկներ իւրեանց գլուխն են խոնարհեցնում նրա ոտքի տակին, մի կողմից բիւլբիւլներն են նրա ականջի թեւերը ներդաշնակութեամբ խտտղեցնում, միւս կողմից իւր սիրելի բարեկամներն ու իւր քնքուշիկ սիրուհին են իրան շրջապատել, ջան են տալիս, ջան լսում, շարուել են սեղանի չորս բոլորքը՝ էս անմահական սեղանից, էս բազմատեսակ անուշահամ կերակրներից մի կտոր իւրեանց բերանն են դնում, միւսը իւրեանց նոր գտած աղեկ բարեկամի, գինու փոխարէն նեկտար են վայելում նրանք և առաջարկում իւրեանց սիրելուն, մի՞ թէ, հարցնում եմ ամէն մի զգայուն սրտի, մեր խեղճ բանտարկեալը կը յիշէ՞ էս երջանիկ րոպէումը, էս խորհրդաւոր ժամուն իւր անցեալ նեղութիւնները:

Նմանօրինակ և մեր ջերմեռանդ ուխտաւորները մտքներումն էլ չէին անցկացնում, թէ իւրեանք սուրկութեան ու նեղութեան մէջ են, կամ թէ մի վտանգ կարող է մի րոպէից յետոյ խանգարել նրանց ուրախութիւնը:

Ներկան՝ ներկան է Ադամայ որդու կեանքի նպատակը, թէ կուզ երեկ միլիոններ ունեցած լինիս, այսօր եթէ կարօտութիւն ես քաշում, այս է քեզ զգալի, երեկը անցաւ, թէ կուզ երկու րոպէ առաջ կախաղանի դատապարտուած կեանքիդ վերջն էր ու մի հրաշքով ազատուեցար, այս է քո բարեբաղդութեան կէտը: Էգուցն էլ մի՛ ասել, գիժ չեմ, որ ներկան թողած՝ էգուցվան գլխիս ցաւերը մտածեմ, էգուցն իւր ներկան ունի: Մեր խօսքը մեր այս օրուան ներկայի վրայ է, որ մեր պատուելի, ուխտաւոր, զուարճասէր և հիւրասէր բարեկամները ոչ մի բանի վրայ ոչ թէ մտածել, լսել անգամ չէին ցանկանում: Թուանքչիների զգուշացուցիչ խօսքերին ուշք էլ չէին դարձնում, նրանց սարսափեցուցիչ խօսքերը քամու նման էին գլխների վրովն անց կենում:

— Հանեցէք մի թաս գինի անուշ արա, քը մատաղ դնամ, թեւերը քաշելով զոռով կոկորդն էր լցնում թվանքչու մի ուրախացած փամբակեցի:

— Ծօ ինչ փթփթում կը ջանիկս, ծօ շաշխուն հարիֆ [1]), ինչ

[1]) Անխելք:

աշամ [1]), ինչ խան հա [2]) մէմ [3]) էս ֆինջէնը [4]) թարքէ [5]), էս ըօխումս [6]), եա էս շէքեար չորտկին [7]) անուշ էրա, յետուան [8]) կաշենք [9]), վեր էր թռչում տեղեցը, փաթաթվում թուանքչուն ու երես-մերեսը լպստելով, աղջկայ կամ կնոջ կաղքին նմանցնում հաքեար կորուած [10]) Դարսեցին:

— Դէհէ [11]) թէ իմ գլուխը սիրում ես, տուր մի՛ դըհէ [12]) բանեեր, եա քու ջանին մատաղ, աղայ աղբէր, էս ուհաթիս իմ բիձայ [13]) վախթօն էլ իմ քէֆին ու մրաքէն [14]) ունի ոչ, մհիկս [15]) չիմ [16]) վրացու թամաշնին [17]) իմ շներն են. հընէ [18]) չէ՞, եա քու աչիդ մեռնիմ հայր սուրբ ջան, իւր տաճներին հաստատութիւն էր խնդրում մեր պարոն լուկեցին, հետն էլ Աշտարակից առած կխահանին պղտոր մաճառը լցնում թուանքչու բերանը, կէսն էլ երեսի վրայ թափում: Մի կողմից էլ իւր կնոջ վերայ էր գոռում. աղջի եղպարմըրթ, ջհանի թօռը, դէ մի թեզ արա իմ աղայ աղբօր կտուցը բղըրացրու մեր են գոզթիղլի [19]) ծմակի ձագուց միղրի հացովը:

ԼԷ.

ՊՈԶԱՏ ԶԱԼՕ, ՀԱՏԱՆԿԱԾ ՍԵՒՕ:

Ինչ՛ էր խանգարում այս գիշեր մեր վանքի քէֆը, միայն ուխտաւորները չէին ամէն ինչ մոռացած՝ իրենց քէֆին տուել, միայն երիտասարդ աշխարհից ձեռք քաշածները չէին վայելչութիւններին անձնատուր եղել. ողջ Էջմիածինը, Վաղարշապատ գիւղը, ամենքն էլ մինչև լոյս արթուն և ուրախ էին: Մի քանի ծերունի եպիսկոպոսներ ու վարդապետներ միայն կշտացած էս ամէն դատարկաբանութիւնից, իրիկնէց մտել էին անկողին և հանգիստ քնել:

Երկու մարդ, սակայն, կարծես չէին բաժանում ընդհանուր ուրախութիւնը: Դրանցից մինը բազմահոգ կաթուղիկոսն էր, որ շատ ժամանակ չէր վերադարձել էր խանի ղուլլուղից [20]) ու ձեռքը ծնօ-

[1]) Պարսիկ: [2]) Դեռ: [3]) Միանգամ: [4]) Գաւաթը: [5]) Դատարկիր: [6]) և [7]) Թխուածք: [8]) Յետոյ: [9]) Կը տեսնենք: [10]) Քաղցրացած: [11]) Դէհ: [12]) Այդպիսի: [13]) Հօր եղբայր: [14]) Հանդէս: [15]) Այժմ: [16]) Բոլոր: [17]) Իշխաններ: [18]) Այնպէս: [19]) Կողմի: [20]) Սպառազինուած:

տին տուած՝ մտածմունքի մէջ էր, միւսը նրա հաւատարիմ Գալուստ եպիսկոպոսը: Դերջինս կանգնած կաթուղիկոսի առաջին, շլինքը ծուռը մոտիկ էր տալիս նրա ոտքը երեսին:

Խանի ծառաներն էլ, էս գիշեր, հենց խմանաս, փարու հորն էին ընկել: Էնքան փլաւ ու ղաւուրմայ էին կերել, էնքան շարբաթ [1]) ու վարդաջուր էին խմել, որ փորերը Վրաստանի ուռումբի [2]) էր դառել: Մէհտարներն [3]) ու մուքուրիկներն [4]) էլ էս գիշեր իրանց պաշտօնը մոռացած՝ մի մի խաներ էին կարծում իրանց. ինչ որ հրամայում էին, իսկոյն կատարվում էր: Խանի համար պատրաստած ու ժամանակն անցկացնելու համար թափուելիք կերակրերն էլ սրանց փորն էր մտել. մէհտար ու խանի կերակո՞ւր, բայց իրան հարցրու, տես ինչպէս պարծենալով կըպատմի գեավուր [5]) հայերի տուած պատիւը:

Խանը կաթուղիկոսին մի քանի քաղաքավարական խօսքեր ասելուց յետոյ՝ հրամայեց գնալ հանգստանալ:

«Նաղի՛», ձայն տուեց նա, երբ կաթուղիկոսը հեռացաւ, էլ մի՛ ուշանալ, գնա մեր էսօրուան ուրախութիւնը կատարեալ արա, մի՞տքդ է աշտարակցի Ղարաքէշիշի ասածը. էնպէս՛ արէք, որ շփոթը չը շատացնէք. խոստացէք, որ իմ սիրելի կանանց կարգումը տեղ կունենայ:

— Ես էս տեղ եմ, գլխիդ մատա՛ղ, դուան տակից օձի նման ներս սողաց մի ստուեր և մինչև գետինը խոնարհելով գլուխ տուեց խանին. ես եկայ, որ իմ ծառայութիւնս ցոյց տամ, շորերիս ինչ ես մոտիկ տալի, իմ տէր, ես քո ղուլերի [6]) շորերն եմ հագել, որ չճանաչուիմ, քո կամքդ գլուխ կը բերեմ ու էլի մթնով կը քաշուիմ կը հեռանամ:

— Մաշալլա՜հ, մաշալլա՜հ [7]), ես քո ծառայութիւններդ չեմ մոռանալ, գնա ինչպէս գիտես, էնպէս արա, քո խալաթդ [8]) Երևանումը կը լինի, անպատճառ քեզ համար Շահից Շիրի—խուրշուդ [9]) բերել կը տամ, խօսքս խօսք ըլի. բայց էլի ասում եմ, զգոյշ կացէք՝ ձայնը չբարձրանայ, թող Սիմոն խալֆի [10]) սիրտը չկոտրենք:

---

1) Շաքարաջուր. 2) Եզան կամ գոմշի տիկ. 3) Ձիապան. 4) Խոհարարի օգնական. 5) Անհաւատ. 6) Սպասաւոր. 7) Կեցցես. 8) Պարգև. 9) Առիւծի և արեգական շքանշան. 10) Կաթողիկոսի.

— Ամէն բան իմ վզին, գլխիդ մատա՛ղ, կեղծ խոնարհութեամբ աչքերի բիբերը խաղացնելով, պատասխանեց անծանօթն ու դուրս գնաց:—Նաղի բէգ, ասաց նա միւս սենեկումը, էլ մի՛ ուշանալ, չորս քաջ ֆարրաշներ վերցրու գնանք, հիմի շատ լաւ ժամանակն ա:

Էս անծանօթը մեզ լաւ ծանօթ է, բայց էս րոպէին ոչ թէ մենք, իւր կինն էլ որ դար՝ միանգամից դժուար կը ճանաչէր. սրա նոր կերպարանափոխութիւնը շատ յարմարում էր իրեն. պարսկական սուր գլխարկը, կանաչ ղադաքի երկար կապէն, կարմ քիրմանի շալ քուլաջէն, միջքին կապած առիւծագլուխ գոտին, ճպատան լայնակրունկ կօշիկները, կարծես վրան ձևած էր, և որովհետև ինքն էլ բնական փոքր ինչ պարսկի նմանութիւն ունէր, առաջին անգամը ամէնքը կը շփոթուէին, բուն պարսկից չէր զանազանվում. չար լեզուները շատ բաներ էին ասում նրա համար, բայց ո՞վ կը հաւատայ, ո՞վ ինչ կուզի, թող խօսի, ոչով իրաւունք չունի:

Եթէ ուզումէք իմանալ, թէ ո՞վ է այս անծանօթը, որ խանի համար էսպէս հոգսերի մէջն է, հարցրէք էն րոպէին խանի սենեկին կից միւս սենեկի դուան տակին երկար ժամանակ կանգնած ու բանալիի ծակից նայող երեխային:

Վաղուց է այս մանուկն այս տեղ: Նա լսել էր կաթուղիկոսի ու խանի խօսակցութիւնները, լսել էր Նաղի բէգին տուած պատուէրները, ճանաչել էր օձի նման ներս սողացող անծանօթին. մի մատաղի հնարք անցկացաւ, որ երեխան իրան չմատնեց, հէնց էն է՝ մի զարմացական բացականչութիւն էր դուրս թռչում նրա բերանից, բայց էլի իրան պահեց, բութ մատը սաստիկ կծեց ու լռեց: Էս միջոցին նրա սրտի բաբախիւնը իւր ականջին էլ հասնում էր, այնքան շփոթուել էր նա անծանօթին տեսնելով:

— Ես կը մեռնիմ ու քո չար խորհուրդդ կը խափանիմ, ձեռքը թափ տուեց երեխան, որ մեռնիս, իմ աչքիցը չես փախչիլ. ինչ ասես՝ կը կարծէի ու էսքան անաստուածութիւն չէի կարծել:

— Ոնց ըլի կը հասնիմ, գնա թուրքացած, տէր Մելքիսեթ, սպառնաց ցուցամատը շարժելով ծածկուող դուան քամակից երեխան ու էլի աչքը դէմ տուեց բանալիի ծակին կանգնեց: Նաղին և տէր Մելքիսեթը դուրս գնացին թէ չէ, մանուկը ինքն էլ միւս

դռնից ներքև վազեց և առանց ուշք դարձնելու թէ նոքա ո՞ւր գնացին, ինքը վազեց դէպի Տրդատայ դուռը:

Եթէ այն գիշերը չլինէր, ամենքին նկատելի կը լինէր, թէ մի փոքրիկ մանուկ այսպէս ուշ՝ կէս գիշերին ընչո՞ւ է շտապում դէպի Տրդատայ դուռը. բայց այժմ ոչ ոք էլ ուշք չը դարձրեց, որ սա կարող էր մի վանքի տիրացու լինել: Բակը լիքը ուխտաւորների երեխայք էին. սա էլ նրանցից մէկը. մի արխալուղ միայն ունէր հագին ու ֆաս գլխին:

Ինքը դռնապան Պետրոսն էլ առաջին անգամը չկարողացաւ նրան ճանաչել, երբ մանուկը իրեն մօտեցաւ:

— Մահտեսի՛, հեծկլտալով ասաց նա դռնապանին, շուտ դռնակը բաց, ինձ դուրս թող, էլի կռվի:

Տիրացու Ներսէս, էս դու ե՞ս, ո՞ւր ես գնում էս վախտ, էն էլ առանց փարաջի:

— Էլ մի՛ ուշանալ, մահտեսի՛, շուտ ինձ դուրս թո՛ղ, կաթուղիկոսը հրամայեց. շտապի՛ր, հէնց հիմի թուրքերը կը հասնին՝ ինձ կը վերցնեն: Խանն ինձ ուզում է տանի Թուրքացնի, իրան ղալյոնչի [1]) շինի, շաթիրը եկել էր, կաթուղիկոսին պատմեց, նա հրամայեց ինձ Վաղարշապատ փախչել:

Դռնապանը կասկած չտարաւ. երեխան այնպէս յարմարացրած խօսեց, որ ամենքը կը հաւատային, նրա բաղդից էլ երկու ստուեր երևեցան վեհարանի դռնից դուրս գալիս, որոնք այս կողմն էին շտապում:

— Դէ պրծի՛, տնաքա՛նդ, տեսնում չե՞ս, որ թուրքերը գալիս են, էլ ինչ ես ուշանում, աւելացրեց Ներսէսը:

Մի րոպէի մէջ Պետրոսը դռնակը բացեց, Ներսէսին դուրս թողեց ու կրկին փակեց: Վերջումը փոքր միջոց կշտաց ես դռնապանը երբ տեսաւ, որ եկողները վանքի սպասաւորներ էին, բայց որովհետև մանկան խօսքերին հաւատացել էր, ուրախացաւ իւր մէջը երեխային պարսից ճանկից ազատելու համար, ապա թէ ոչ նա իրաւունք չունէր էս ժամանակ դռնակ բանալ և մի փոքրիկ երեխայի դուրս թողուլ: Այս գիշեր՝ մանաւանդ՝ սաստիկ հրամայած էր նրան ոչ ոքի դուրս չը թողնել իւր դռնակից և ներս չընդունել:

---

1) Ղալյոն բերող:

Այս սովորութիւնը ի նախնեաց անտի մնում է Էջմիածնում. մութը գետինն առնելուն պէս, խցերի ճրագները հանգչում են, ու ցածր և նեղ խցերի համեստ բնակիչները իւրեանց ճրագների հետ հանգիստ են մտնում՝ յուսադէմին ժամ գնալու համար: Թէպէտ չի կարելի հաստատ ասել, որ մի քանի խցերում մինչև կէս գիշեր զանազան անմեղ զուարճութիւններ էլ չեն լինում: Ի հարկէ ընկերներ են, կը հաւաքուին միմեանց մօտ, գրականական երեկոներ կը կազմեն, իւրեանց ապագայ գործողութեանց ծրագիրը կը խմբագրեն, իւրեանց յանձն առած պարտաւորութեանց կատարումը կը քննեն, կասեն՝ կը լսեն, փոքր ժամանակ էլ կատակներ կանեն, սեղանատան կերակրներին չը հաւանելով իւրեանց սպասաւորների եփածը կը վայելեն, երբեմն էլ սազ ու քեամանչայ կածեն, կը պարեն, ղումար [1]) կամ այդպիսի անմեղ խաղեր կը խաղան, ես ինչ գիտեմ՝ էլ ի՞նչ կանեն, մարդիկ չե՞ն, ու կը գնան կը հանգստանան: Ամէն բան ներելի է, էնքան լինի, որ լուսամուտներիցը ճրագ չերևի. մի մեծ բան չի, երկու տաղտակ է, կը ծածկեն՝ կը վերջանայ, կամ թէ երկու զոյգ սև վարագոյրն էլ բաւական է:

Եթէ այս գիշեր Էջմիածնի ուխտը չը լինէր, բոլոր դռները պէտք է փակուէին և միանգամայն արտաքին աշխարհքի հետ վանքցոնց յարաբերութիւնը պէտք է ընդհատուէր, բայց այս գիշեր միշտ Վաղարշապատի դռնակը բաց էր մնում:

Հաստատ գիտէր Ներսէսը, որ պարսիկներն ու տէր Մելքսէթը այն կողմիցն են դուրս գնացել, որոնց, եթէ ինքն էլ հետևելու լինէր, չէր կարող հասնել: Դրա համար նա Տրդատայ դռնովը գնալն ընտրեց ու խեղճ Պետրոսին խաբեց:

Պետրոսի օյինը [2]) խաղաց նա Բաղարի [3]) դռան պահապանի գլխին, նրանից էլ ազատուեց:

Բաղդը, կարծես, յաջողում էր երեխային: Վանքի պարսպից ոտքը դուրս դրեց և մի քանի գազաչափ հեռաւորութեամբ իւր առաջին գնալիս տեսաւ տէր Մելքսէթին պարսիկների հետ: Նա պարզ լսեց փոքր տէրտէրի խօսքերը, որ բացատրում էր իւրեանց գնալու տան տեղը և մարդու անունը:

Էլ հիմա ոչինչ ուշանալու պատճառ չունէր Ներսէսը. պարզ

---

1) փողով վիճախաղ: 2) խաղը: 3) փողոց:

իմացաւ, որ տէր Մէլիքսէթը գնում է Խանի համար բերելու իւր ազգական Բօյաղչոնց Անտօնի աղջիկը, որոնց տան հետ միայն՝ ինքը՝ մանուկը երթեւեկութիւն ունէր:

Էլ չսպասեց ճարպիկ տիրացուն: Թողեց Թուրքերին ձախ և ինքը դէպի աջ խփեց:

Վանքի պարիսպը գիւղից բաժանող հրապարակի վերայ մի տուն կար ցած պատերով, դուռը դէպի արեւմուտք: Այդ տան քամակին երեսը դէպի գիւղի փողոցը կար և մի ուրիշ տուն. Նրա մուտքը փողոցից էր: Այն տեղ էին ուղղում այս մթնագնչերն իւրեանց գնացքը — տէր Մէլիքսէթը Թուրքերի հետ փողոցի դռնով, իսկ մեր երեխան՝ հրապարակի վերայ գտնուած տան կտեր պատովը բարձրանալով:

Եթէ Ներսէսն այս ճանապարհով երթեւեկութիւն արած չը լինէր, Նրան կը քրքրէին այդ երկու տների անքուն պահապանները՝ Զալօն ու Սեւօն՝ երկու հարեւանների հաւատարիմ շները: Նրանք գլուխները ոտքների արանքները խրած, մինը իւր տան տիրոջ խոտի դիզի վերայ էր պառկել, հանգարտ աչքերը բաց ու խուփ անում, մէկը՝ միւս տան կտերը երթկի մօտ էր թիկնել ու ականջները քամու կողմը դարձրել, որ մի շփոթ լսելուն պէս՝ պատրաստ լինի իւր ծառայութիւնը ցոյց տալ:

— Զալօ՛, Զալօ՛, Սեւօ՛, Սեւօ՛, կամաց պատասխան տուաւ Ներսէսն իւր երկու նախածանօթների մռմռոցներին: Եւ ահա այդ երկու աչեղ գազանները հոտոտելով երեխայի հագուստը, պոչերը շարժելով, մինը աջ և միւսը ձախ կողմն ընկած՝ հետեւեցին մինչև երկրորդ տան երթիկը, ուր պառկած էր նախ Սեւօն:

— Սառան հօրքի՛ր, Սառան հօրքի՛ր, մինչև կէսը երթկից կախ ընկնելով՝ ձայն տուեց Ներսէսը Բօյաղչոնց Յովհաննիսի կնոջը: Ճար ունիք՝ տեսէք, հէնց հիմի Խանի ծառայքը ձեր աղջկանը կը փախցնեն:

Երկու րոպէից ողջ տունը ոտքի վրայ էր: Բօյաղչոնց Անտօնը բռնած իւր աղջկայ ձեռքը, քամակի քուչաներով փախում էր մի բարեկամի տան թաքցնելու:

Ներսէս մանուկը չկար, նա իւր դեսպանութեան պաշտօնը կատարեց, յետ դարձաւ շտապաւ Ղազարապատի դռնակովը դէպի վեհարան: Նա վախում էր, որ հիմի քաղէն եկած կը լինի իւր աղ-

դական ուխտաւորների մօտից և շատ վրդովուած. իսկ Բօյաղչոնց դուռը սաստիկ ծեծվում էր:

Աւելորդ էր նեղանալը. Զալօն ու Սեւօն կարող էին պարսիկների պատասխանը տալ, եթէ տան տէրերը լսած չլինէին Խանի հրամանն ու բաց արած:

Տէր Մէլիքսէթը Թուրքերին սովորեցրել էր անելիքն ու ինքը մթնումը կանգնել:

— Ո՞վ էք, ի՞նչ էք ուզում, հարցրեց Անտօնի եղբայր Յովհաննէսը, որպէս թէ ոչինչ տեղեկութիւն չունէր:

— Անտօնի աղջիկ Գայիանէին ենք ուզում, պատասխանեց Նաղի բէգը, Խանը լսել է ձեր աղջկայ գեղեցկութիւնն և իւր խնամքը ձեզ վերայ շատացնելով, ուզում է Նրան շինի իւր առաջին կինը— իւր հարամխանի ծաղիկների միջի վարդը:

— Մեզ համար դրանից մեծ բաղդաւորութիւն չէր ըլել, քաղցրութեամբ պատասխանեց Յովհաննէսը, բայց ափսոս, որ մենք էս րոպէին արժանի չենք կարող լինել Խանի ողորմութիւնին. հէրն իր աղջկանն էս օր առաւօտից տարել է Մողնի ուխտ:

— Ո՞ւմ ես արածացնում, անհաւատ հա՛յ, գոռաց Նաղի բէգը, տունդ գլխիդ փուլ կածեմ, թէ որ հէնց հիմի գտնի տակից չես հանել ձեր աղջկանը, որտեղ որ է, պէտք է ստեղծես, դուրս բերես. էս անգամ Խանը ձեր աղջկայ համար է Էջմիածին եկել:

Գլուխս Խանի ուղուրին ղուրբան [1]) կը տամ, թէ որ խօսքս սուտ դուրս գայ, ուզում էր հաւատացնել Յովհաննէսը, բայց Նաղի բէգը տէր Մէլիքսէթի աչքերին մտիկ տուեց ու չը էլ ուզեցաւ լսել ասածը, ուղղակի մտաւ տուն ու քունջ ու պուճախ ընկաւ:

— Չեմ հաւատում, ճչում էր Նաղի բէգը, յոյսը կտրելով աղջկանից, ես ոտս էս տեղից դուրս դնողը չեմ, ես առանց ձեր աղջկանը Խանի երեսը գնացողը չեմ, թէ չէ իմ գլուխս ուսիս կենալ չի, հազիր լաւն էն չի՞, որ դուք տնով տեղով ինձանից առաջ կոտորուէք:

Շատ կարելի է Գայիանէի մօր աղէքները կը թափուէին Խանչալի սուր ծայրից, եթէ Յովհաննէսը ձեռքը չէր ձգել, խլել Նաղու ձեռքիցն ու դէն ձգել, շատ կարելի է երկու երեք հոգի կը սպան-

[1]) Մատաղ:

ուէին, եթէ Զալօն ու Սեօն, որ հեռուումը կանգնած մռմռալով սպասումէին Յովհաննիսի հրամանին, էս րոպէին ինքնագլուխ իրանց ծառայութիւնը ցոյց չը տային: Նրանցից մինը բարեհաճեց քաջ վիրաբոյժի նման արիւն առնել Նաղի բէգի կունկը, իսկ միւսը երկու Փարրաշի ոտքերի ջլերը կարմիր ներկեց:

— Իւրեանց կեանքումը Նաղի բէգն իւր Փարրաշների հետ էսպէս շների չէին հանդիպել, որ կէս ժամի չափ դիմադրէին դաշոյններին: Վերջը թէպէտ մեր քաջ հաւատարիմ Զալօն ու Սեօն կարողացան մինչև փողոցն էլ հալածել այն անկոչ հիւրերին, բայց ի՞նչ անես, որ մինը կորցրեց իւր աջ ականջը՝ միւսը պոչի կէս ծայրը: Դրա համար նրանք այնուհետև կոչուեցան. պոչատ Զալօ, հատանկաջ Սեօ:

ԼԲ.

ԶՕՐԱՒՈՐ ԿԱՐԻՔ:

Բնականաբար եթէ մարդ մտադրվումէ միւս օրը մի կարևոր գործ վաղ առաւօտեան կատարելու, նա այն գիշերը որքան էլ խոր քնի մէջ ընկած լինի, չի կարող երկար քնել, ժամանակից յառաջ կարթնանայ, որպէս թէ մինը նրան զրթում լինի: Առաւել կը լինի էս գործողութիւնը սիրահարների տեսակցութեանց պայմանաժամի համար, կամ թէ մոլի կրքերի տէր մարդկանց մէջ: Այդպիսի ժամանակը անքուն ամբողջ գիշերներ անցնումեն:

Հիւսէին Ալի խանը որքան էլ հաստատ գիտէր, թէ առանց իւր հրամանին ճանճն անգամ չի թռչիլ, թէ իւր համար անհնարին ու ինչ չկայ, թէ իւր կամքը չկատարողի անունը ջնջուած է աշխարհիս մատենի միջից, նա էլ այս րոպէին չէր կարող քնել, այնքան տէր Մէլիքսէթի խոստացած գեղեցկուհին նրան գրաւել էր: Սուտ չէր ասում Նաղի բէգը, որ խանն այս անգամ այդ չքնաղ կոյսի պատճառաւ է եկել Էջմիածին: Ի՞նչն էր պատճառն ուրեմն, որ նա որքան և աշխատեց արթուն մնալ, անկարելի եղաւ:

— Պատճառը մեզ յայտնի է. նա սուրբ Մարգարէի օրէնքներից մինը քանդել էր: Զգիտեմ ինչպէս եղաւ, որ սրանից մի քանի տարի յառաջ սատանէն մտաւ խանի սիրտը, և նա այն անիծեալ հեղուկի—խաղողաջրի համը տեսաւ:

Այդ օրից, ասումեն, ամենատեսակ շարբաթներից և վարդաջրերից աւելի խանի աչքումը պատիւ է ունեցել Մահմէդի օրէնց տունը քանդող ու քրիստոնէից տունը շինող զօրաւոր ջուրը:

— Ղուրանը վկայ, շատ լաւ հաւատ ունին էդ հայերը, եթէ գինին է դրանց կրօնի մէջ գլխաւոր նշանակութիւն ունեցողը, շատ լաւ է ասած՝ թէ գինի—երմանն գինի: 1)

Մեծ մուշտէիդը սկզբներումը շատ էր աշխատել սրբազան Ալու ահեղ սուրը խանի գլխին փայլելու սպառնալիքներով յետ թողել տալ սարդարին էդ կորստական չար ճանապարհից, բայց երբ չէր յաջողացրել, էս մի հնարքն էր մտածել, որ նա գինու անունը—ներկած շարբաթ—կոչի ու էնպէս խմի, որ ուղղահաւատները չգայթակղուին և խմողների բարկութիւնն էլ զիջանի: Մեր Ղևոնդն ու տէր Մելիքսէթն էին տանում միշտ խանի համար ներկած շարբաթը:

Այսօր էլ Էջմիածնումը եթէ Հիւսէին—Ալի խանը այդ ներկած շարբաթից երկու գաւ վայելած չը լինէր, սատանէն կը քնէր՝ նա ոչ:

Յայտնի չէ, էլի ներկած շարբաթի զօրութիւնի՞ցն էր, թէ մի աւելի զօրեղ պատճառ կար, որ երկու ժամից ամբողջ վեհարանը տակ ու վրայ էր լինում:

Տէր Մելիքսէթը չկար, նա էլ վանք չը վերադարձաւ, նա աղջկանը Մողնուց բերելու պատրուակաւ գիւղէց արդէն դուրս առել կորել էր:

— Ֆարրա՛շ, մի ահեղասաստ ու կսկծալի ձայն եկաւ խանի սենեակից:

Նաղի բէգը մի քանի րոպէ կար, որ վերադարձել էր իւր անյաջող դեսպանութիւնից ու յաղթուած զօրավարի նման ամօթահար եղած՝ ուռի տերևի պէս դողում էր, սպասելով իւր մահուան դատակնիքը լսելու: Նա այնպէս կարծեց, թէ երկինքը բլեց իւր գլխին:

— Գլխիդ մատաղ, ես մեղաւոր չեմ, կուները ծալած՝ չոքէչոք առջն ընկաւ Նաղի բէգը, աղջիկը Մողնի ուխտ է գնացել, Ղարաքէշիշը գնաց բերելու, լալով արդարանումէր խեղճը:

---

1) Հայի հաւատ:

— Շո՛ւտ, շո՛ւտ ձիանքը պատրաստեցէք. շուտ ճանապարհ ընկնենք, շո՛ւտ, սուրբ Գէորգն իր մըրաղը աչքս է կոխում, գոռում էր խանը:

— Ես մեղաւոր չեմ, մի տուն լեքը երեխեքանցս խնայի՛ր, երեսի վըրայ ընկած՝ գլուխն էլ չէր բարձրացնում Նաղի բէգը շշկլուած:

— Չէ՛, չէ՛, էլ չեմ կենալ, հէնց հիմի՛, հէնց հիմի՛, գոռում էր խանը, չմտիկ տալով Նաղի բէգի աղաչանացը:

— Ես ի՞նչ մեղաւոր եմ, աղջիկը Մողնի ուխտ են տարել, արդարանում էր Նաղի բէգը. հրամայի՛ր, ես բոպէիս գնամ Մողնին քանդեմ, էն աղջկանը բերեմ առաջիդ կանգնացնեմ, աւելի դողդողում է Նաղի բէգը:

— Հա՛, հիմի միտքս եկա՛ւ, կրկնեց խանը հառաչելով, ես հասկանումեմ, վերջապէս հայի Աստուածը վրէժխնդիր եղաւ ինձ. վերջը իմ տանջած ու հաւատից հանած հայ աղջիկների պատիժը ես էս օր Էջմիածնումը պէտք է տանեմ:

— Խալֆա՛յ Սիմոն, խալֆա՛յ, դարձաւ նա դէպի կաթուղիկոսը, երբ որ լսեց նրա ձայնը՝ որ շտապաւ տուն ընկնելով զարմացած հարցրեց պատճառը. խալֆա՛յ, ձեր Աստուածն ինձ պատժեց, աղայ Մողնին իմ աչքս հանեց, ես խօսք եմ տալիս այսուհետեւ ոչ մի հայ աղջիկ չքաշել: Ես խոստացել էի Ուչքիլիսայ եղնաղի [1]) չգալ, խօսքս չպահեցի, եկայ. էս վերջինը լինի, աղօթք արա, աղայ Մողնին ինձ ների, ես իսկոյն կը հեռանամ. Նա երազում մըրախով աչքս հանում էր: Այս ասելով ողորմելին գլխիկոր նստեց կանգնած տեղը:

Նոր իմացուեցաւ խանի վրդովմունքի պատճառը: Մի կարիճ որտեղից որտեղ նրա աչքը կծել էր և երազում նրան թուեցել էր, որ սուրբ Գէորգն է իւր նիզակը նրա աչքը ցցում:

— Վնաս չունի, ողորմած տէր, անց կը կենայ, ուզեցաւ յուսադրել կաթուղիկոսը, բայց խանը լսել անգամ չկամեցաւ, ձեռքը աչքին դրած՝ հրամայեց իսկոյն ձիանքը դուրս քաշել:

— Ներէ՛ր ինձ, աղաչում էր խանը դուրս գնալիս կաթուղիկոսին. ես էգուց 10 հազ ոչխար կը ղրկեմ սուրբ Գէորգի դուռը

[1]) Էջմիածնի ուխտ.

մատաղ, իսկ դու այսուհետեւ համարձակ իրաւունք ունիս սիրտդ ուզած ժամանակը ինձ մօտ գալ: Ոչ մի խնդիրդ գետին չի ընկնիլ:

Երկուշաբթի օրը մինչեւ առաւօտեան սեղանը դուրս գալը Էջմիածնի բոլոր բակերը դատարկուել էին: Ուխտաւորները ճանապարհ էին ընկել իրեանց հայրենիքը: Մի կողմից վանքի ծառաները էին աւլում մաքրում բակերը, միւս կողմից Վաղարշապատի և վանքի ոչխարի շները իրար միս կծոտելով, միմեանց ձեռքից խլում էին ուխտաւորների թափած ոսկրներն ու փշրանքը:

Մեր բարեկամ Զալօն ու Սեօն էլ մոռացած իրանց արտաքը՝ ներկայ էին այս հանդիսին և առաջին հանդիսականների շարքումն էին յարգուած:

ԼԹ.

Զ Ա Մ Բ Ռ:

Մի կողմից Հայոց ազգի կրած անտանելի նեղութիւնները, պարսից խաների ու կալուածատէրների բարբարոս վարմունքները, միւս կողմից ծերութիւնը սկսել էին ազդել ազգի բարերար մեծափառ Սիմէօն կաթուղիկոսի ֆիզիքական դրութեան վերայ:

Անդադար չարչարանքի մէջ էր բազմահոգ ծերունին, Էջմիածնապատկան մլքերի և կալուածքների թղթերը վերաքննում էր: Այս խանի, միւս բէգի, երրորդ չալմաղլուխ [1]) ախունդի զուլումն էր քարշ գալիս. մէկի աչքերը ընծաներով էր կապում, մէկէլին պարսկական անհաստատ օրէնքի սպառնալիքներովն էր կոտրում, երրորդին արտաքուստ գործ դրած կեղծ բարեկամութեամբն ու ճարտար լեզուովն էր յաղթում: Ի՞նչ անէր, պարսիկների հետ ուրիշ տեսակ վարուել անհնար էր, իւրեանց զէնքը պէտք է իւրեանց դէմ գործ դնէր:

Ոչ ոք նորա նախորդ և յաջորդ կաթուղիկոսներից այնքան չէ հոգացել Էջմիածնի Աթոռի շահերի համար, ինչքան ինքը Սիմէօնը: Էլ 100 տարի յառաջ չէ՛ն՝ իսկ իւր ժամանակ աւերակ վանք չմնաց, որ փախչէր հեռատես հայրապետի աչքից. քունն ու

[1]) փաթաթած սպիտակով.

սուսմակ էր ընկնում, հարցնում, տեղեկանում, Էջմիածնի ցեցերի ու մկների կերակուր եղած՝ փոշիների տակ թաղուած յիշատակարանները քրքրում և մի թղթի կտոր, մի յիշատակութիւն եթէ գտնում էր, որ այս խեղճ ուխտատեղը մի ժամանակ չէն է եղել, սեպհական անշարժ կայքի է տէրն, որ այսօր որևէ բռնակալ խանի, կամ աղալարաբարոյ մօլքն սեփականութիւն է դարձել, էլ դժուարութիւն չէր հարցնում անխոնջ մշակը, մէկ էլ այն կը լսէր, որ ձիապանը դուրս է քաշել ձիանքը, մի եպիսկոպոս, երկու վարդապետ, չորս թոռանքչի և երկու շաթիր ձիաւորուելեն ու մի ծերունի մէջ արած՝ դէպի Երևան են գնում։

Շատ անգամ ինքը—Հիւսէին-Ալի խանը յարգելով Սիմէօնի կաթուղիկոսի ծերութիւնը, հրամայում էր, որ նա նեղութիւն չկրի անձամբ գալ. բաւականանայ մի Ղարաբաշի [1]) ձեռքով իր պահանջը յայտնել և հաստատ հաւատացած լինի, որ իր կամքը կը կատարուի. բայց էլի խանը ստիպուած է եղել մի քանի օրից յետոյ ոտքի վերայ կանգնել, կաթուղիկոսի կուռն ընկել և նորա համար յատկապէս պատրաստած տեղը նստացնել։

Այս պատկառելի ծերունու պատիւն ու համբերութիւնը թէպէտ յառաջ էլ կար խանի մօտ, քանի որ նա երկու անգամ Վրացւոց թագաւորի բարկութիւնը զիջեցրել էր, բայց Էջմիածնի ուխտի գիշերուան ծիծաղելի դէպքից յետոյ խանը մի գերբնական արարած էր համարում Սիմէօն կաթուղիկոսին։

Շատ չանցաւ, Էջմիածինը բաւականին կալուածքներ ունեցաւ, իր մէլքերի մէջ մի քանի գիւղեր, այգիներ և վարելահողեր էլ մտան։

Այսօր մեր աչքի առաջին կենդանի վկայ է նոյն քրտնաջարջար նահատակի նոյն մեծագործ Սիմէօն Հայրապետի տքնութեանց նկարագիրը, իր ծերութեան օրերում հաւաքած, կարգի ու կանոնի տակ դրած մատեանը—Ջամբռը, որի վերայ քանի՜ քանի գիշերներ անքուն լուսացրել է ճիգն թափելով բազմարդիւն հովիւը։ Նա խնդրել, աղաչել է յետնոց շարունակել այս տարեգրութիւնը, որ վանքի մի ծղօտն էլ չը կորչի, բայց ո՞ւր է։ Հարիւր անգամ եթէ տակն ու վրայ անէիր սրանից մի քանի տարի յառաջ

[1]) Սեւագլխի.

անհոգ ու անտէր մի խոնաւ տան մէջ թափած Էջմիածնի թանգարանը—մեր սուրբ նախնեաց երկանց պտուղների՝ ապրիներով արտագրած կամ շարադրած կարևոր մատեանների պահարանը—ոչինչ չէիր կարող գտնել։ Ու ո՞վ կը համարձակէր շատ խառնշտորել, կարող էր այդպիսի յանդուգն մարդը իւր անտեղի վստահութեան պատիժը կրել. մի կարիճ, մի մորմ, կամ մի այլ թունաւոր միջատ, որ իւր նախնիքներից սեպհականութիւն էր ստացել այդ գրքերի ծալքերը, կամ գաղտնի արանքները, կարող էր իւր անհանգիստ անողին չարաչար պատժել։ Ճիճուների երկիւղը թողունք, չորս մատնաչափ նստած ու ամբարտաւանած փոշին կամ մկների սուր սուր ատամների շնորհիւ աղացած, ալիւր դարձած մագաղաթների ու թղթերի փշրուկները ձեռք տալուս ամպի նման կը բարձրանային և իւրեանց խաղաղութիւնը վրդովողի աչք ու ականջ, քիթ ու կոկորդը կը լցնէին և կիսակուրացրած՝ հազի մէջ խեղդելով՝ դուրս կը թռցնէին։

Կարելի է այս արդիւնալի Ջամբռը՝ արդիւնաւէտ հայրապետի պատուական հեղինակութիւնն էլ իւր շատ նմանների հետ չքացած լինէր, եթէ մի քանի տարի յառաջ Ներկայ վեհափառ նախորդ գրասէր կաթուղիկոս Մատթէոսի օրով՝ նորա հրամանովը վերջ չտրուէր Էջմիածնական անհոգութեանը, եթէ չշինուէր այժմեան մաքուր մատենադարանը և կարգի տակ չմտնէր։

Վերջին երևան կարող է այսօր գրատան ցուցակով գտնել իւր ցանկացածը նշանակեալ համարի տակ։ Այս կանոնաւորեալ գրատանը գտնուեցաւ Ջամբռը և տիպ մտաւ։

Միմիայն Ջամբռը չէ երջանկայիշատակ Սիմէօն կաթուղիկոսի գրաւոր աշխատութիւնը։ Նա ցորեկը ազգի ցաւերին դարման տանելու հոգսումն էր, Էջմիածնի վանքի արդիւնքներն աճեցնելու միտքերը մտածում, գիշերներն ազգի համար հոգեշահ և մարմնաշահ հեղինակութիւններ էր անում։

Այս դժուարակիր պարապմունքն ո՞ւմ չի հալել ու մաշել։ Եթէ մեծավաստակ հայրապետն իւր աշխատութեանց հետ չէր ունեցել առողջ և թարմ կազմուածք, անվրդով հոգի, խաղաղ բնաւորութիւն, արի և աննկուն սիրտ, նա չէր տանել այնքան մարմնական չարչարանքները, չէր հասնել խորին ծերութեան։

Վերջումը մի տարի ամբողջ հիւանդ էր նա, էլ չէր կարողանում գրիչ ձեռք առնել կամ օգտակար գրքերի ընթերցանութիւ-

նով պարապել. դորա համար իւր մխիթարութիւնը գտնում էր մանուկ Ներսէսի մէջ, որ մինչև կէս գիշեր նստած կաթուղիկոսի անկողնի մօտ կարդում էր Աստուածաշունչը և շատ ուրիշ գրքեր: Թէպէտ երկար ժամանակ չէր նա ուսումնարան էր յաճախում, բայց ի բնէ ունենալով պարզ արտասանութիւն և քաղցրահնչիւն ազդու ձայն, գրաւել էր կաթուղիկոսի ուշադրութիւնը, Ներսէսի կարդալը ամէնքից աւելի հաճոյ էր նրան:

Շատ անգամ այդ ընթերցանութեանը փոխարինում էր Ներսէսի ճարտար և խելացի խօսակցութիւնը և ուղիղ հայեացքը, որ ունէր նա ի մանկութենէ վարդապետութեան վերայ:

— Հայրիկ Տէր, պատասխանում էր Ներսէսը կաթուղիկոսի հարցերին. ես իմ վերայ յոյս չունիմ, ես միանգամայն չեմ ցանկանում հոգևորական դառնալ. էս պարտաւորութիւնը, ինչպէս քո մէջ տեսնում եմ, իմ կարողութիւնից բարձր է: Ոչ թէ միայն ես, մեր վանքումը շատ քիչերը, կամ ոչ ոք արժան չէ բացի քեզանից վարդապետութեան. ես՝ իմ պապի — Գալուստ եպիսկոպոսի երեսին շատ եմ ասել. էս ի՞նչ բաներ են լինում մեր միաբանութեան մէջ, ես մեր գիւղի ոչ մի աշխարհականից էդպէս բաներ չեմ տեսել:

— Պատմի՛ր մի քանի բան, դառնակ, մի այսպիսի խօսակցութեան ժամանակ առաջարկեց նրան կաթուղիկոսը, ինչն է քեզ յետ խփում մեր վանքի միաբանութիւնից, ընչի՞ց ես զզուել, վարդապետական կեանքից էլ հանգիստ տան:

— Իմ լուսահոգի հայրս միշտ ասելիս է եղել, թէ անբանները գերեզմաններումն են. մարդ ծնել է աշխատելու, չարչարուելու և իւր ճակատի քրտինքով իւր հացը ճարելու: Հէնց էս մի բանն ինձ շատ աւելի է թւում, որ մեր Էջմիածնի միաբանները վատ աչքով են նայում այդ պարտականութիւնին. ժամ ու սեղանատուն գնալուց աւելի ուրիշ գործ չունին. դու քո հիւանդութեամբ էլ չես հանգստանում, նրանք կուշտ անուշ անելուց յետոյ՝ ամառ ձմեռ բաւական չեն համարում գիշերուան քունը, ցերեկուայ շատ բաժինն էլ քնի մէջ են անցկացնում: Ինչպէս սովորութիւն է դարձել այդ ախտը, որ չքնողի վերայ ծիծաղում և բամբասում են: Վարդապետը մի՞թէ սաղմոս ասելուց և ժամ գնալուց աւելի ուրիշ պարտք չունի, ի՞նչ կլինի, որ գնան գիւղերումը քարոզ տան, կարդալ սովորցնեն, որ ամէն մարդ էլ իր լաւն ու վատը ճանաչի: Բայց ես նրանց շատերից լսել եմ, որ ասում են. գիւղացին պէտք է էշ ուտի,

էշ մեծանայ: Անցեալ օրը մի քանի ձեռքից գլուխը հաստացած վարդապետ իմ պապին ասում էր, որ գիւղացին պէտք է չարչարուի, տանջուի, բերի մեզ պահի. նա որ կայ՝ մեր ստացուածն է, մենք էլ իր տէրն ենք: Ուղիղն ասեմ, Հայրիկ տէր, շատ դուր չեկաւ ինձ էդ խօսքերը: Պապիս փախեցայ, թէ չէ պէտք է ասէի. քանի՞ սև փոշի աշխատանք է դրել իւր տաւարի վերայ, կամ իւր կեանքումն ի՞նչ է արել բացի քնելով գլուխն ուռեցնելուց:

— Դու շատ խիստ ես դատում, զաւակս, ուղղելով Ներսէսին խօսեցնել, ասաց կաթուղիկոսը. մի՞թէ վարդապետները չեն գործում, չե՞ս տեսնում, որ մենք նրանց ուղարկում ենք գիւղերը պտղի հաւաքող, վանքի կալուածքներին վերակացու, կալչափող, մի՞թէ սրանք գործ չեն:

— Երանի թէ նրանց տեղը աշխարհականներ կամ կոյրի գեղացիներ ուղարկէիք, քան թէ վարդապետներին իրանց անխղճմտանք թուանքչիների հետ:

— Ի՞նչ ես տեսել դու թուանքչիներից, որ էդպէս գանգատում ես:

— Լսի՛ր, Հայրիկ տէ՛ր, մի բան պատմեմ, տես, թէ դու չես բարկանալ: Աշտարակ մի խեղճ կնիկ միշտ գալիս է մեր տանը բան անում. իմ մայրս նրան ամէն օր կերակուր է տալիս. նրանով էն խեղճ կինը իւր երեխէքը մեծացնում է: Նա կենում է մեր տան կողքի մարագումը. նրա երեխայքը շատ փոքր են. իմ Աշտարակ եղած ժամանակը մինը ծծկեր էր, միւսը նոր էր տնաւորուել. Նրանք օտարական էին, ես նրանց լեզուն շուտ չէի հասկանում. մայրս ասում էր, որ նրանք Յօշականցի են:

Մի օր միտքդ է, ծառայեմ, երբ դու գիւղն եկար, պապիս այգումը վէր եկար. ես իմ ընկեր Վարդի հետ մեր կտերը կանգնած՝ մտիկ էի տալիս: Մարագի դռան ծակից Յօշականցի հոռոմն էր նայում: Բոլորն անցկացան՝ ոչինչ. բայց երբ որ վերջումը մի վարդապետ անցկացաւ, էդ խեղճ հոռոմը ծղրտաց ու թուլացած շեմքի տակին փռուեց: Ես վազեցի մօրս կանչեցի: Խեղճ կնգանը ջրով ու քացախով յետ բերին:

— Ի՞նչ կայ, ի՞նչ էլաւ քեզ, հոռոմ, հարցրեց մայրս, չարը հօ չխփե՞ց շեմքի ծակից, գիր անել տանք, ղրկենք Կարմրաւորից օրհնութիւնի հող բերենք, խաչալուայ անենք, մուղիան խմացնենք,

նաՀատակի գերեզմանի վրայ տանենք քեզ, տո ու ձեռիդ ջուր ածենք, ախր ի՞նչ Հանդիպսի ղիպար դու:

— Հանդիպսի գայ Ֆռանգցի վարդապետը, սէրտէրակին ջան, կրծքին ծեծելով, աչքերիցը թափելով ասեց Հոռոմը, իմ անլեզու քօրփեքանց մեղքի տակից ոչ պրծնի նա, որ իմ տունը քանդեց, երեխեքանցս անՀէր դռներին թողեց. ախր էդ սև սիրտն ու սև Հոգին էր, որ մեր բաղը ջրելուս խեղճ երեխեքանցս Հօրը կոխել էր կուառի ¹) մէջն ու քացով քացով գլխին վեր Հատելով քանդել իմ տուները. ընենց նրա լաչը ²) ձգուի, ոնց որ իմ գլխի տիրոջ իմ անմեղ քալէքանց Հօր մէյիդը ³), մին էլ տեսնեմ, երկու փէտի վրայ կապած՝ տուն բերին:

— Ախչի Հոռոմ, դու մի քանի Հետ էդ բանը պատմել ես ու մի օր միտս չի եկել, որ պատճառը քեզ Հարցնեմ. Ֆռանգցի վարդապետը քո մարդի Հետ ի՞նչ խնադ ⁴) ունէր, որ քու երեխեքանց մեղքն ընկաւ, Հարցրեց մայրս:

— Աստուած ոչ գիտի նրա գլուխը, ես ի՞նչ իմանամ, պատմում էր Հոռոմը, վա՜յ ինձ, բամբասանք չը Համարուի, մեղքն առողի շլինքը: Մեր բաղի մօտ ա դրա խնամի Ցեանջցոնց եղանի բաղը: Էդ պռճնկուածն եկել էր մեր գեղը կալաչափ: Էդ օրը ջուրը մերն էր: Դու մի՛ ասիլ, էդ անաստուածը էն լէրբ անզգամի Հետ նրանց բաղումը սէղանը փռած՝ իրանց խաղով կենայ, աէր ու սուհրաթի ⁵) մէջ ենէ Թուանքչուն Հրամայում ա, որ գնայ ջուր կապի իրանց առաջև Հաւուզը ⁶) լցնի:

— Ի՞նչ Հաւուզ, բաղումը Հաւուզն ի՞նչ բան ունէր, Հարցրեց մէրս:

— Ախր էդ Աստծու պատժին գալուն բաղումը մի Հաւուզա շինել, սաքի՝ որ եղանի կոտորուածքը ամառները մէջը լեղանան: Աստուած մեղք չՀամարի, ես Հօ տեսել չեմ, ասում են ինքը — էն ծակծկոտուելու եղանը բաղի դուռը կողպում ա ու շորաՀան ըլում, լեղանում: Իր գլուխը քարը, ինչ կուզի անի, Համա իմ խեղճ քօրփեքանց Հօր արէնտէրը դառաւ:

— Էդ ո՞նց ա ըլում.

¹) Ջրաբերան. ²) Դին. ³) Դիակ. ⁴) Նախանձ. ⁵) Քաղցր խօսակցութիւն. ⁶) Աւազան.

— Թուանքչին գալիս ա ջուր կապելու. իմ ղարամածիկս չի թողում, նա էլ գնում ա վարդապետին գանգատվում. դա էլ վեր ա կենում, գալիս նաչարիս կուառի մէջը կոխում ու իրանց դինՀը բացանում. էնքան ծեծում ու էնքան գլխին կանգնած մնում ա, որ բաղեցը խաբար ա գալիս, թէ Հաւուզը լցուել ա: Դեռ էլի էդ անՀոգու սիրտը չի Հնջանում, մի քանի էլ քացի ա տալիս ու նոր Հրամայում, որ կուառից Հանեն: Էլ ի՞նչ Հանել, որ խեղճիս աչքերը դագաթն ա թռած ըլում. մէնակ բողազումը մի քիչ տըրփալուս ա ընում: Էն Հալին ¹) Հրամայում ա, որ վեր ունեն տուն բերեն. կէս ճամփին ջրատարս Հոգին տալիս ա ու ինձ դունէ դուռը քցում:

— Յենա ²) դու ո՞նց չի գնացիր կաթուղիկոսին գանգատ, Հարցրեց մէրս:

— Ինձ ասեցին, որ կուառի գլխին քնել ա, ընկել մէջը խեղդուել: Մեր բարեՀոգի իշխաններն էլ իմացել ու ծածկել էին: Մի քանի օր անց կացաւ, երբ որ բաղը ծախեցինք էն անամօթ եղանին ու Հոգին Հոգացինք, ես նոր իմացայ բանի էութիւնը: Շատ էլ ուզեցի գնամ կաթուղիկոսի ոտներն ընկնիմ, Համա մեր աղէքը քոմձքն ³) էլ էդ մարդակերի դինՀը պաՀեցին. մենք տնով, որդով կերթանք օթում կուտենք, ասեցին, որ դու ես սուտը:

— ԷՀ, Հոգևոր տէր, խօսքը վերջացրեց Ներսէսը, Հենց իմանաս, թէ անգիր սերտած լինեմ խեղճ Հոռոմի պատմածները. մի բառ չեմ աւելացրել: Լաւ՝ որ Ֆռանգցի վարդապետը իմ եկած ամիսը մեռաւ, թէ չէ ես վաղուց փախած կըլինէի վանքից. երբ որ ժամումը յանկարծ աչքովս էր ընկնում, ոնց որ մարդ մի սև օձ տեսնի:

Երեխայի պատմութիւնն աւելի խոցեց տկար Հայրապետի սիրտը. իսկոյն կանչեց Գալուստ եպիսկոպոսին:

— Շատ ժամանակ չէ, Հոգևոր տէր, ասաց Գալուստը, Ներսէսն ինձ էլ պատմեց այդ բանը և Հաւատացի՝ որ ճշմարտութիւն է, բայց որդէն ուշ էր, չուզեցի Սրբութեանդ սիրտը կոտրել:

— Իսկոյն տնօրինել այն անզգամին Ցօշականից Հալածել բոլոր կալուածքները խլելով:

¹) Այդ դրութեան մէջ. ²) Ցեռայ. ³) Ամենքն էլ.

— Դա վաղուց իւր ունեցածը ծախել, տեղափոխուել է Երեւան, ասում են շատ անկանոն կեանք է վարում:

— Մեր մեղքն է, հոգւոց հանեց ծերունին:

Այս օրուանից Սիմէօն կաթուղիկոսի տկարութիւնը քանի գնում, աւելանում էր:

ԽԸ.

ԸՆԿՆԱՒՈՐ:

Էջմիածնի վանքից դէպի հարաւ՝ Ղազարապատի դռանը եթէ կանգնենք և ուղղակի նայենք, մեզ կը դիմաւորեն մի լիճ, մի անտառ և փոքր ինչ արեւելահայեաց՝ պարտէզների քամակին՝ մի վանք: Այդ այսօրուան տեսարանն է: Մեր պատմութեան ժամանակը լճից մի փոքր հս կողմը շինած էր մի միայարկ մեծ տուն, որ իւր պաշտօնին համեմատ անուն էր կրում և որ պահել է մինչև այսօր.— թ ղ թ ի գ ո ր ծ ա ր ա ն, իսկ ռամիկ ժողովրդի բերանում՝ ք ե ա ղ զ խ ա ն ա յ:

Շատ տարի չէր այն միջոցը այդ գործարանի շինելը: Դրա տեղը քանի մի տարի յառաջ հասարակ գետին էր. բայց մեր պատմած ժամանակը այն տեղից դուրս էր գալիս Սիմէօն կաթուղիկոսի հոգացողութեամբ պատուական թուղթ, որի վրայ միտք ունէր նա անմահացնել բոլոր Էջմիածնի ձեռագիրները, բայց որ չյաջողեցաւ բազմաշխատ հայրապետին:

Քեաղզխանի արեւելքում գտնուած երեք պարտէզից մէկի մէջ ծառերի հովանու տակ այսօր հանգստանում են աշխարհքիս նեղութիւններից ազատուած Էջմիածնի միաբանքը: Նոցա փոխանակ միայն մահարձաններն են խօսում այցելուի հետ:

Այս պարտէզի հարաւային պատի միւս երեսին է լայն բակի մէջ կանգնած Գայիանէի վանքը, որ տեսանք մենք Ղազարապատի դռնից:

Վանքի արեւմտեան պատին միացրած է մի սրահ գեղեցկաքանդակ սիւներով, ուր եթէ այսօր մտնելու լինիս, կարգաւ շարուած կը տեսնես մի քանի դամբարաններ՝ մեծ մասը մարմարեայ կափարիչներով: Սրանց մէջ, թէպէտ մտել են մի քանի բարձրաստիճան կաթուղիկոսապատիւ հոգեւորականներ և մի երկու էլ արժանաւորութեան, թէ չգիտեմ կեղծաւորութեան շնորհիւ ներս ընկած աշխարհականներ, բայց ամէն մի Էջմիածնի միաբան քեզ կասի, որ այս սրահն է սովորական մեր հայրապետների գերեզմանատունը: Խոնարհ և հեզ միաբանութիւնը ուզելով իւր վեհ գլխին մահից յետոյ էլ անհատացնել, ընտրել է նոցա համար նախամեծար տեղ: Չի կարելի ասել, որ այս կանոնը ճշդութեամբ պահուել է. մի քանի կաթուղիկոսներ թաղուել են Էջմիածնի բակում, իսկ մինը— Երանելի Եփրեմը ընտրել է իւր համար իւր սիրելի միաբանաց հասարակաց գերեզմանատունը: Այս վերջիններս բացառութիւններ են. պէտք է որ այս սրահն է կաթուղիկոսական դամբարանը:

Ահա այս սրահումն էր 1780 թուականի յուլիսի 27ին՝ վարդավառի մեռելոց երկուշաբթի գիշերը, որ մի նոր թաղած գերեզմանի հողակոյտի վրայ մթնումը մի ստուեր էր նշմարվում: Ստուերը տեղը չէր փոխում, չէր շարժվում, միմիայն գերեզմանի գլխավերեւը երբեմն երկարանում և երբեմն կարճանում էր:

Վանքի վանահայրը վաղուց մտել էր Մորփէոսի թագաւորութիւնը, երբ նրա դուռը սաստիկ բաղխեցին:

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում, ձայն տուեց խոր քնի միջից ցորեկուան աշխատութիւններից յոգնած ծերունի Յարութիւն հայր սուրբը:

— Ես եմ, հայր սուրբ, շուտ դուռը բաց, լեզուն կապկպուելով պատասխանեց Գայիանէի վանքի ժամկոչը. կաթուղիկոսը կենդանացել է, գերեզմանից դուրս է եկել:

Վարդապետի ոտք ու ձեռքերը դողացին, քանի անգամ կամեցաւ չախմախի [1]) տալ, բայց հրահանը ձեռքից վէր էր ընկնում. սարսափից մազերը ցից ցից էին եղել, չախմախի չղկոցից աւելի էր բարձրանում նորա ատամների չղչղկոցը: — Ի՞նչ է ասում ժամկոչը, մտածում էր նա. դեռ այսօր Սիմէօն կաթուղիկոսին թաղեցին. ինքն է մտել գերեզմանի փոսը և ուղղել նրա դագաղը. իսկ հիմա լսում է, որ կաթուղիկոսը կենդանացել է, նա իւր կեանքումն այսպիսի բան չի լսել, որ մեռելը տեղից վեր կենայ:

— Շտապի՛ր, շուտ վազի՛ր, հայր սուրբ, աւելի կցկտուր խօսքերով և վանահօրից ոչ պակաս դողդողալով կրկնում է ժամհարն և աչքը ակամայից դէպի Սիմէօն կաթուղիկոսի գերեզմանը դարձնում:

[1]) Հրահան:

Նրա աչքին հիմա ոչ թէ սիզքի նման մի փոքր ստուեր է երևում, այլ մի երկարահասակ սևերում պատատուած մարդ, որի գլուխը սրահի առաստաղին է հասել, իսկ ոտներով նա կանգնած է կաթուղիկոսի գերեզմանի գլխին:

— Հայր սուրբ... հայր... էլ չկարողացաւ շարունակել ժամկոչը և սաստիկ դղրդիւնով վանահօր խցի դուռը գետին փռուեցաւ:

— Տղայ, տղայ, որպէս և իցէ կակազելով ձայն տուեց վանահայրն իր ներսի սենեկումը քնած սպասաւորին, ճրագ վառիր:

Ծառայն ճրագը վառեց և ոչ պակաս վախեցաւ, երբ որ իր մեծաւորին էնպէս գտնելուց յետոյ՝ դուռը բաց արեց ու ժամկոչին անշնչացած՝ շեմքի մօտ ձգուած տեսաւ:

Որպէս և իցէ հասկացրեց վանահայրն իր սպասաւորին, հաւաքուեցան վանքի բոլոր միաբանները, որոնք էին—երկու ձիապաններ, մի քանի հօտաղներ, մածնապան պառաւն և ընկնաւոր [1]) աղջիկը:

Ի հարկէ, վանքումը հրաման չկար ջահել աղջիկ պահելու: Սովորաբար լինում են մի քանի անտէր ու այրի պառաւներ, որոնք Էջմիածնի կովեր կթողներն ու եղ ու պանիր, մածուն ու թան շինողներն են, բայց այդ աղջկանից ինչ վնաս պէտք է գար, նա անխելք էր, նա ընկնաւոր էր: Երբեմն երբեմն ընկած ժամանակը նրա բերանը փրփրակալում էր եկեղեցու մէջ, բարեպաշտ ուխտաւորներին սրբից պատգամներ էր տալիս և մարգարէութիւններ էր անում. իսկ ուխտաւորները ցրուելուց յետոյ՝ նա էլի հանդարտվում էր ու պառաւ Գիլլիար Նանին օգնում:

Էս աղջկայ մշտական կացարանը Գայիանէի վանքն էր. նա ոչ մի ժամանակ ոչ Վաղարշապատի գիւղը կը գնար և ոչ Էջմիածնի վանքումը կերևար: Նա սուրբ Գայիանէ կուսի ղուլն էր, իր խաթունի ոտքի տակին պէտք է գտնուէր:

Երկու երեք տարի էր ընկնաւոր աղջիկը լոյս էր ընկել էս վանքումը. որտեղից էր, օրիորդ էր, թէ կին, իսկական անունն ինչ

[1]) Ընկնաւոր կոչվում են այն հիւանդ աղջիկները, որոնք իբրև թէ պատժուած մի սրբից՝ գալիս են այն տեղ ուխտ և եկեղեցւոյ մէջ բերանը փրփրեցնելով վայր են ընկնում ու զանազան պատգամներ են տալիս սրբից: Ընկնաւորը կոչվում է այն սրբի ղուլը (ծառայն) իսկ սուրբը՝ նրա աղէն, խանումը.

էր, ոչ ոք չգիտէր: Նա ուզած ժամանակը շատ յաջողապէս ծամածռում էր իր գծագրութիւնը և լորձունքը բերանից թափելով, տարօրինակ, անհաստատ քայլերով էս պատից միւս պատին կպչելով անկապ ու անհասկանալի խօսքեր էր ցնդաբանում: Այսպիսի ժամանակը նրա երեսը ցեխոտած և մրոտած էր լինում: Եթէ քար տայիր, նա կասէր հաց է, ջուր՝ ծաղիկ և այլն: Եթէ նրա կենցաղավարութիւնից հարցնելու լինէիր մածնապան Գիլլիար Նանին, նա կը պնդէր, որ աղջիկն ամէն ժամանակ այդպէս է, բայց միայն շատ հլու հնազանդ է իրեն և առանց փչացնելու ամէն տնտեսական գործերը կատարում է, օգնում է իրեն խնոցի հարելումը, թան կըտրացնելումը, կրակ, օճառ-պուճախ անելումը, վանքի մշակներին կերակուր քաշելումը, սեր չինելումը և միւս տնային գործերումը: Մանաւանդ շատ գովում էր պառաւն ընկնաւորի հմուտ սեր չինելը և մածուն մերելը: Վեհարանի ու եպիսկոպոսներին գնացած բոլոր սերն էդ կեղտոտ մատների շնորհքն է: Էդ պատճառաւ էլ պառաւը յանձնել էր նրան և սերատան բանալին:

Մի կողմից մենք իրաւունք չունինք մեր աչքի տեսածին ու պառաւի պատմածին չհաւատալ: Ընկնաւոր աղջիկն ամենազազրալի, անմաքուր, տգեղ, ուղեղապակաս մի անվնաս արարած է, մի անասուն է, որ մարդու կերպարանքով Գայիանէի վանքի բակումը քարշ է գալիս: Ամառը գործից ազատ ժամանակը շուաքներումն է նա շների հետ խաղում, իսկ ձմեռն՝ արևկող տեղերումը: Հաւատարիմ շներն էլ, երևում է, ամենքից աւելի սիրում էին իրենց կերակրողին, մանաւանդ՝ երբ նա կովկիթը թանով լիքը բերում և շների համար դրած յատուկ տաշտի մէջն էր լցնում: Մածնատան դռնից մինչև տաշտի մօտ աղջկայ չորս կողմը հաւաքուած՝ պոչերը շարժելով քաղցր աչքերով պատասխան կը տային իրենց կերակրողի անկապ փաղաքշանքներին:

Միւս կողմից՝ եթէ մենք հետաքրքրութեամբ հետազօտենք այս յիմարի քամակից, ու մեր տեսածին կը հաւատանք և ոչ վանահօր ու պառաւի պատմածներին: Եթէ երբեմն յանկարծ երեկոյեն Գայիանէի վանքը գալու լինէիր, կարելի է պատառոտուն հագուստից միայն կը ճանաչէիր քո առաջից սուրացող ստուերի պէս, դնդակի նման սլացող գեղեցկուհուն: Ինքդ երբեմն կերկբայէիր. երևակայութիւնդ արդեօք խանգարուած չէ՞. ապա թէ ոչ այն տգեղ հրէշ ընկնաւորից կարելի՞ էր սպասել մի բոլորակաձև դէմք, այն լորձունքոտ

ծուռ բերանի փոխանակ մի կանոնաւոր նազուկ պռօշներով բացուածք:

Այո՛, մենք չենք սխալվում. այս աղջիկը իսկապէս ընկնաւորն է: Եթէ պատահէ Գիւսիւպըը մի օր կատարը տաքացած ժամանակը բերանիցը բաց չթողնէր, ոչ ոք էլ չէր իմանալ նրա ով լինելը. բայց հիմի գոյինեէի վանքի մի երկու մշակներն էլ չէին կասկածում, որ ընկնաւորը Գիւլվար բաջուն ¹) շատ նման էր. և որովհետև ինքը Գիւլվարն ամենքի մօտ պարծեցել էր, թէ նա արհամարհել է ծնողաց սոխրմունքն և իւրեանց գիւղի երիտասարդների սէրն ու աշխարհ չի մտել, այլ իւր կեանքի նախկին տարիներն անց է կացրել Մշոյ սուրբ Կարապետի վանքումը, էդ պատճառաւ էլ եզրակացնում էին, որ ընկնաւորը Գիւլվարի մօտ արենակից ազգականը պէտք է լինի: Նա երևի նոյնպէս մեծացել էր Մշոյ վանքումը, կամ մօտ գիւղերումն և սովորել ընկնաւորութիւնը: Ահա մի քանի տարի էր, որ այստեղ՝ Գայանէի վանքումը վանահայր ծերունու խորհրդով և Գիւլվարի համոզելովը ապրում էր ընկնաւորը ծպտեալ կերպարանքով: Այս անելով մեծ օգուտ էր բերում աղջիկը: Նրա պատճառաւ վանքի ուխտաւորները շատացան, որով թէ վանահօր և թէ միւս սպասաւորների գրպանն էլ լցվում էր: Ընկնաւորը գուշակում էր ուխտաւորներին, որ վանահայր հայր սուրբին, մանաւանդ Գիւլվար բաջուն և միւս սպասաւորներին ով որ չի շահել, ողջ առողջ իւր ընտանիքի տեսութեանն արժանի չի լինել:

Թէ այսպէս, թէ այնպէս՝ գողգիւնը վանքը բռնեց. ամենքը ժողովեցան և նրանց մէջ ընկնաւոր աղջիկն էլ էր:

Ժամհարը բազմութեան հաւաքուելուց սիրտ առած՝ ինքն էլ ուշքի եկաւ: Վարդապետի խցի դռանը կանգնած էին ամենքն էլ լուռ ու մունջ և մթնումը տեսիլքը տեսնում էին: Ոմանք մի փոքրիկ առուեր էին նկատում, այլք ժամհարի հետ էին համաձայնում, որ գլուխն առաստաղին է հասած՝ ոտքերը գերեզմանի վերայ է. մի երկուսն էլ մի փայլուն լոյս էին պնդում տեսնել, որ գերեզմանի վրայ պէծպծի է տալիս. երևակայութիւնն այս տարբեր ներգործութիւնն էր արել ամենքի վերայ: Ոչ ոք չի համարձակվում բարձր

¹) Քուրիկին.

խօսել: Ամենքի աչքը հայր սուրբի բերանին է, թէ ինչ վճիռ դուրս կը գայ:

Հայր սուրբի հետ բոլորը միաբերան վճռեցին, որ ընկնաւոր պատգամախօսի պարտականութիւնն է մօտ գնալ և տեսիլքը պարզել: Շատ էլ ցանկանար այլապէս վարուել վարդապետը, անկարելի էր, կարող էր կասկածներ զարթեցնել:

— Կաթուղիկոսն ինքն է կենդանացել, փնթփնթաց աղջիկն և բոլոր կարծիքը փարատուեցաւ:

— Վանքի դրսի դուռը ծեծում են. լսեց մի սուր ականջ և դռնապանը շտապեց բանալ:

Երկու հոգի՝ մինը հոգևորական և միւսն աշխարհական ներս մտան:

— Ծառայեմ, Հայր սուրբ, մօտ գնալով դէպի նոր եկող հոգևորականը, յարգանքով գլուխ իջեցնելով՝ ասաց Վանահայրը. կաթուղիկոսը կենդանացել է. հէնց հիմի ես ուզում էի գալ Էջմիածին և տեղակալին իմաց տալ: Նայիր, տես ինչպէս նստել է գերեզմանի վերայ, ձեռները երկինք բարձրացրած աղօթում:

Աշխարհականը շտապաւ մօտեցաւ Սիմէօն կաթուղիկոսի գերեզմանին:

— Հէնց ինքն է, հայր սուրբ, ձայն տուեց Գալուստ եպիսկոպոսին աշխարհականը:

— Ո՞վ, մահտեսի Աստուածատուր, ո՞վ է, կաթուղիկո՞սը:

— Ում որ պտռտում ենք:

— Ներսէս, ասաց ստուերին մահտեսին, դու ես, էստեղ ինչ ես անում էսպէս անժամանակ:

— Ես եմ, բարի, լալագին ձայնով պատասխանեց մեր ստուերը — մանուկ Ներսէսը:

— Ո՞ւր ես, գառնուկս, հոգիներս դուրս եկաւ մահտեսի Աստուածատուրի հետ քեզ պտռտելով, մօտ գալով բարձրացրեց Ներսէսին Գալուստ եպիսկոպոսը գերեզմանի վրայից, որ դեռ անշարժ նստած էր:

— Ինչ հարկաւոր էր պտռտելը, պապի ջան, քի՞չ բաներ կորցրել, որ քունս տանէր: Այսուհետև, պապի, ես էլ Էջմիածին

կենտը չեմ. չեմ եկեղեցի Սիմեօն պապի գերեզմանին վերջին բարևը տալ:

Այս անգամ ներսէսը չկարողացաւ իւր մտադրութիւնը գլուխ բերել. Գալուստ եպիսկոպոսի խնդիրքը յարգեց նա և վեհարանական կեանքը մոռացած՝ ապրում էր իւր պապի մօտ:

ԽԱ.

«ԿԱՏՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՂԼՈՒԽՆ Է:»

Գազանների մէջ երկուսը միայն ընտանի են մարդուն, երկուսն էլ իւրեանց օգուտն ունին: Նրանցից մինը գոված իւր հաւատարմութեամբը՝ ճշդութեամբ կատարում է իւր պարտաւորութիւնները: Այդ շունն է, որ շատ անգամ իւր գլուխը զոհ է տալիս իւր տիրոջ համար:

Մարդն իւր կողմից ճանաչելով շան կարևորութիւնը, զանազան ծառայութիւնների մէջ պէտք է ածում նրան: Պահապան է կարգում իւր տանը, իւր հօտին, լծում է, որսի է տանում, իւր երեխաների զուարճալիքն՝ իւր տան զարդն ու շատ անգամ իւր ամենամօտիկ ընկերն է շինում: Շների բազմատեսակ ցեղը պէտք է գալիս այլ և այլ ծառայութեանց մէջ:

Միւս տեսակ ընտանի գազանը շան և ոչ մի լաւ և ազնիւ յատկութիւնը չունի. ոչ միայն հաւատարմութեան նշոյլ չկայ, ընդհակառակն ապերախտութեան տիպար կարելի է համարել աներես կատուին, բայց նա էլ բաղդ է ունեցել մարդուս ընտանեկան շրջանի մէջ մտնել և աւելի նախամեծար լինել, քան թէ շունը:

Շռայլ հարուստից մինչև օրական պարէնը դառն քրտինքով հայթայթող չքաւորի աղքատիկ սեղանի վերի կողմը բազմում է խորամանգ աչքերով չալիկ գող կատուն: Թագաւորական փառահեղ պալատների ոսկեթել բարձերի վերայ կատուի բազմելն այնքան սովորական է դարձել, որ նազիկ տիկինների ու քնքուշիկ օրիորդների նուրբ մատների ասեղնագործութեան մէջ թաւիշեայ բարձի վերայ կատուի բազմելը պարծանքի տեղ է բռնել: Ամէն մի որդեսէր մայր հրճվում, զուարճանում է, երբ որ իւր սիրունիկ զաւակն՝

իւր կեանքն՝ իւր ուրախութիւնն՝ իւր թոթովան երեխային տեսնում է կատուի ձագը գրկած ու իւր փափկիկ թշիկները նրա կակուղ մորթին կպցրած: Ժողովրդական առածը կատուին իւր արժանաւորութիւնից բարձր կոչում է տուել. «կատուն Քրիստոսի աղլուխն է» ամէն մի պառաւի ու տատես կնոջ բերանից կը լսես: Աստուածի շնորհքն է, որ մեր ծիսապաշտ մայրերը մեր սրտումն արմատացրել են, որ եթէ որ և իցէ ուտելիքի շուն մօտեցաւ, նա էլ ուտել չի կարելի, նա հարամուեց:— Աղջի՛ մեռնահող բեր, շունն ամանը լպստեց, հրամայում է զզուելով ու շան վերայ բարկանալով իմ բազմագէտ տատս ու մի քանի անգամ երեսին խաչակնքելով, խաչալուայ է շինում իւր օրհնեալ ձեռքովն ու շան կեղտոտած ամանը սրբում՝ հալալում: Բայց եթէ օրը 100 անգամ կատուն լիզի, լպստի եղի բղուղը [1]), կամ մածնի կճուճը և կամ պղնձի տակից գողանայ, դուրս քաշի տատիս իւր սիրելի փեսացուի համար պահած աղեգ թիքէքը, [2]) գետնի վերայ քարշ տալով տանի մի անկիւնում կէսն ուտի,— էդ ոչինչ. կը խլի պառաւը մնացորդը կատուի ձեռքից, կը լուանայ, կը մաքրի ու էլ յետ իւր աղեգ փեսի առաջը կը դնի ու ինքն էլ փեսի խաթեր [3]) մի երկու կտոր անուշ կանի.— ի՛նչ վնաս, կատուն հարամ հօ չի՞, կատուն Քրիստոսի աղլուխն է:

Երևի շողոքորթութիւնը որքան ինքն ըստ ինքեան ատելի յատկութիւն է, բայց դիմացի շողոքորթուողի սրտին միշտ հաճոյական է. որքան էլ վիրաւորած լինի կատուն մեր տանտիկնոջ սիրտը, եթէ բակոյն նրա երեխայի բերանի պատառը յափշտակած, երես ու պռօշները էլ ծուատած ու փախած լինի, էլի երկու րոպէից գայ իմ անյիշաչար տատի շորերին քսուի, կեղծաւորաբար մլաւի էլ ոչ ինչ, ամէն բան մոռացման պէտք է տալ, կատու է կը չանգռի էլ, կը լուանայ էլ, «կատուն Քրիստոսի աղլուխն ա»:

Միակ ծառայութիւնը, որ կատուն անում է մարդուս, նրա մկների հետ ունեցած դարաւոր խնամութիւնն է, և հէնց այս միակ յատկութեան համար կատուն ամէն մի տան անմիջական անդամն է դարձել: Դարշելի մուկն՝ այնքան զզուելի է, որ հաւասարապէս ատելի է մեծերին ու փոքրին, հարուստին ու աղքատին, աշխարհակա-

---

[1]) Հողէ աման. [2]) Ընտիր պատառները. [3]) Սիրոյն.

նին ու հոգևորականին։ Այդ միջնորդութիւնն է պատճառը, որ թշուառական կատուն արձակ համարձակ եկ ու մուտք ունի սուրբ մենաստաններումն և ոչ ոք մի թթու խօսք չի ասում։ Էդ է պատճառը, որ աշխարհքիս բոլոր վայելչութիւններից զրկուած ու հեռացած միայնակեացներն էլ ուրախութեամբ բաժանում են իրանց փոքրիկ խուցը, իրանց կոշտ անկողինը, խորանը, լուրանի չոր հացը կատուի հետ։ Եթէ աշխարհաքաղուածից ենթադրութիւն անենք, պէտք է կարծենք, որ շատ խստակրօն հայրեր եթէ չվախենային իրանց կատուի մրմռոցներից, ձմեռները կրակ էլ չէին վառիլ․ ամառը մարդա խանի թագի ըլի, ձմեռը վարդապետի կատուն․ շատ լաւ է ասած։ Վարդապետի պէս ոչ ոք չի կարող սիրել ու խնամել կատուն և կատուապահութիւնը վարդապետական կեանքի անհրաժեշտ պայմաններից մինն է։

— Տէս, Գրիգոր վարդապետ, ասաց մի ջահել աբեղայ, մի ուրիշ իր նման եկեղեցուց փախչող ծոյլ աբեղայի․ Ա․․․ եպիսկոպոսն ինչ լաւ սովորացրել է իր կատուին․ սամ փիլոնից հեռացնում է իր դունչը, մուկ տուր, եպիսկոպոսը ժամ է գնում, կատուն էլ մինչև ժամի դուռը ճանապարհ է քցում։ Այ, հրաշալ ժամի դուռը, հիմի յետ կը դառնայ՝ կը հրամայի որ տուն գնայ, կամ թէ մինչև իրա ժամից դուրս գալը՝ իրա խցի դռանը ծաղկանոցումը թաւալվլոր տայ, կամ թէ ծառերի վրայից ծիտ բռնի։ Տեսա՞ր ինչ հասկացող կատու է, եպիսկոպոսը երեսը շուռ տալուն պէս՝ ինքը յետ դառաւ, ու դալիս է, կամ կանչենք։

— Ցիցի՜, ցիցի՜, փամփո՛, փամփո՛, փուգո՛ւն, փուգո՛ւն, փշի՜, փշի՜, փշի՜, այ, եկաւ, տես ի՞նչ մաքուր լուացած է, ա՛խ, ի՞նչ սիրուն դունչ, ի՞նչ գեղեցիկ աչքեր, ինչ սպիտակ ու մետաքսի պէս մազ, ի՞նչ բերդոտ պոչ, ի՞նչքան քնքշութիւն, ի՞նչքան փափկութիւն, ցիցի՜, ցիցի՜, ցիցի՜, ձեռքն է առնում ու շոյում երջանիկ կատուատիրոջ գերերջանիկ կատուին մեր ջահել վարդապետը, ինքն էլ դող կատուի պէս շուտ շուտ խչկտում, որ իրանց ոչ ոք չտեսնի։

— Ի՞նչ արկէ, սա մի հասարակ կատու չի, հաստատում է խօսակիցը, չես տեսնո՞ւմ, Վանայ կատու է․ ասում են էս կատուի պապին ու տատին են բերուած սրանից 100 տարի յառաջ մեր վանքը Վանից։ Սրա քոյրերից մինը հիմի Մուշեղի մօտ է, միւսը Բէչաչու, իսկ մի եղբօրն էլ Բակրաւի հայրը գողացաւ տարաւ իւրեանց գիւղը․ քիչ մնաց, աբեղան բանտում չդառաւ։ Կօղօղը

ինքն էր ուզում յատուկ ձի նստել գնալ քամակից, համա միջնորդներ մէջ ընկան չթողին։ Վերջն ասացին, որ էդ կատուն ընկաւ մի Փռանգ վարդապետի ձեռք։ Ասում են էդ Փռանգի վարդապետն էնքան է սիրելիս եղել իր կատուին, որ երբ նրանց փափը կատուի համբաւն իմացել է, եպիսկոպոսութիւն է խոստացել վարդապետին, միայն թէ էն կատուին իրան ընծայի։ — Չէ, ասել է խելօք գիտունը, ես ոչ քո եպիսկոպոսութիւնն ուզեցի, ոչ իմ կատուից զրկուիլը։

— Բայց դու չե՞ս իմացել, թէ մինդամ էդ կատուն ինչ քաջագործութիւն է արել, պատասխանեց Գրիգոր աբեղան։

— Ո՛չ, ի՞նչ կայ։

— Էդ Փռանգի կացած տեղը կարմրախէտ ձուկը շատ հազուագիւտ բան է լինում։ Չգիտեմ ո՞ր տեղից, դրան ընծայ են բերում մի մեծ կարմրախէտ։ Ուզենալով իւր գերազանցութիւնը իւր բարեկամների մօտ ցոյց տալ, վարդապետը մեծ հրաւէրք է անում։ Այդ վարդապետը լինում է մի վանքի վանահայր․ Նրա մօտ կենալիս է լինում իր քեռայանի մայրը, որի եփած կերակուրները «Օսմանլուի սուլթանին արժանի բանան կը»։ Նոյնպէս է եղել պարծենալիս վերապատուելին ամենքի մօտ իր մօր տնտեսութեանի համար։

— Մարիկս, ասում է վարդապետն առաջին օրը, քեզի տեսնիմ, կարմրախայտն անպէս պիտոր խաշես, որ իրեն թարմութիւնը պահէ, ամէնքն ալ կարծեն, որ կենդանի է ու ան բոպէին մէջ ջրէն հանած։

— Դուն միամիտ եղի՛ր, աղուորիկ մանչս, եօթն անգամ հօրմէն անունը տամ նէ, ամէն բան լմննայ կը։

Միւս օրը սեղանը պատրաստ էր, հիւրերը վաղուց փափուկ գորգերի վրայ բազմած են և պերճախօս հայրը մի ազդու յառաջաբանութիւնով բոլորի ախորժակն էնպէս բաց արեց, որ ամէնքի բերանն էլ ջրակալեց։

— Չեմ ուզեր անուանել ձեզի ան հազուագիւտ կերակուրը, որ պիտոյ քաղցրացնէ ձեր քիմքը, այքան միայն կըսեմ, որ ձեզնէ շատերը կեանքին մէջ առաջին անգամ կը վայելէք։ Աս պատուական կերակուրը մեզի նման մահկանացուներու վայելելու արժանաւորութենէն շատ բարձր է, միմիայն մերին անմահական հօր սեղանին համադամը կրնայ համարուիլ․ սակայն ափսոս, որ ուղարկողին անհնարին էր ու այդպիսի բարիք բնութիւնը միայն հայոց աշխարհին է պարգևեր։

Ծառան էլ հիւրերի հետաքրքրութիւնը շարժուեց, բայց հայր վարդապետը, թէպէտ հայի զաւակ, սակայն սպայի իմաստութիւնովը լցուած՝ ինքն վառեց բազմականների ախորժակը, մինչ ոչ թէ մի այնպիսի հաստ կամրախէտ, տասն էլ որ լինէր, կը մաքրազարդէին ու նոր համը կը հանանային:

— Ճաշը պատրաստ է, փախաց վերջապէս աւետաբեր կզեր սպասաւորը վերապատուելու ականջումը և հիւրերի հոտոտելիքը ծառայի համեստ հաղուստի հոտից բանի էութիւնն իմանալով, էլ համեցէքի չսպասեցին:

— Մի մի նախաճաշիկ ըրէք, իմ պատուական բարեկամքս, հրաւիրեց տանուտէրը՝ քաղցր մաստիքի արաղով ստամոքսները տաքացնելուց յետոյ, բայց դու ոչ մեռնիս, ոչ ավի կոկորդից մի պատառ չի կուլ գնում. ով է կմարացել ախորժակը փչացնել. միաբերան վճռեցին անսուաղ մնալ և հաղուագիւտ կերակրովը բերան բանալ:

— Տօ, բշտէ [1] բէր, մանչս [2] հերիք տանջեցինք մեր աղնիւ հիւրերուն, հրամայեց նախագահ բազմած իր կարգի շնորհիւը հայրը և ամենքի աչքերը ջուր մաղելից դուան կողմը մոլիկ տալով:

Բոպէները մեծեանց քամակից թուչումեն, քառորդ ժամը մօտենումէ, օղին իր գրգռիչ ազդեցութիւնն է արել ստամոքսի թաղանթների մէջ, գործարանները բան ընկնելու պատրաստ են և գործելու նիւթը դեռ չկայ:

— Տօ, ի՞նչ եղաւ ձկը, ջանմ, համբերութիւնից դուրս է գալիս համբերութեան օրինակ կրօնականը, բերէք էլ թերմաշ [3] կարմ.... (խօսքը կուլ տուեց) մեղայ, մեղայ, քիչ մնաց պիտոր անունը տայի ու համը փախցնէի. ծօ, երեսը ծածկած ըլլայ, մինչև սեղանի վերայ չդնէք նէ, կափարիչը չվերցնէք վրայէն, տնօրինեց նա դուռը բացող ծառային: Բայց երևի թէ լռաբերի աչքերի մէջ մի տարաբաղդութիւն նշմարեց, տեղեցը վեր թռաւ, յառաջ վազեց ու դուան մօտ աջու ականջը ծառային դարձրած՝ իւր այլանդակ դէմքի ծամածռութիւնով բոլոր նստող ու իրեն նայողների սիրտը կասկած ձգեց:

— Տօ, իրա՞ւ կըսես, բարձրաձայն ճչաց խոնարհութեան քարոզողը ծառայի վերայ, իրա՞ւ կըսես:

¹) Դէհ, ²) Որդեակ: ³) Անպիտան:

— Դժբաղդաբար ոչ մի բառ սուտ չկայ ըսածներուս մէջ, ծառայեմ:

— Հա՜, հա՜, հա՜, երկար ու բարակ ծորելով՝ քրքջաց հայր վարդապետը. աս բոպէիս քաղէ կատուն հօս բէր. ես ըսի քի [1] որ մը աղ կատուէն վնաս մը պիտոր մեզի հասնի: Թող իմին միւսէֆիրներս [2] տեսնին ու սուդեն, որ ադպէս տարօրինակ կատուէն ասպէս քաջագործութիւններ կելլէ:

Բազմականները մնացել էին միմեանց երեսի նայելով. կանոնիկոս հօր անկապ ու անյարմար խօսքերից ոչինչ չէին հասկանում, մինչև որ այս խճճուած հարցը ինքը՝ ճարտասան հայրը մի պատուական աղուամաղ կատու գիրկն առնելով ու քնքշաբար շոյելով բացատրեց:

— Նախ՝ կը խնդրեմ իմին սիրելի ու պատուական հիւրերէն, որ ինձի ներեն ու դեռ ոչինչ չվայելած՝ մի մի բաժակ գինի դատարկեն իմին միայնութեան մխիթարիչ կատուին կենացը և յաջողութիւն ցանկան ասոր ստամոքսին, որ կարող ըլլայ մարսել միայնակ անուշ ըրած մեր բոլորիս քիմքը գրգռող սպասելիք պատուական կերակուրը:

Որքան էլ խորթ և նորաձև էր տան տիրոջ խնդիրը, բայց քաղաքավարի հիւրերը անվայել համարեցին բացասել մի այսպիսի չնչին ու հեշտատար խնդիր:

— Հիմակ յայտնեմ, շարունակեց վարդապետը. ձեզի այսօր նեղութիւն պատճառելուս գլխաւոր շարժառիթն եղել էր մի շատ մեծ և վիթխարի կարմրախայտ ձուկն, որ ինձի ընծայ էր բերել մեր Թափագոլլակցի հռովմասէր ուղղափառ կաթոլիկներէն մէկը: Անոր համար շատ ժամանակ չէ, որ ես սրբազան պապէն արքայութեան մէջ տեղ էի միջնորդեր ու կրցայ չնչին ու աննշան գումարով մը ձեռք բերել: Պիտոր ըսել, որ մարդը կ'արժէ ադ շնորհքին՝ իրեն ջերմեռանդութեան աղագաւ. տարի չըլլայ, որ նա ինձի համար ձուկ չուղարկէ կամ ձմեռները մի երկու տիկ օղի ընծայ չը բերէ: Նա՛ ադ պատուական ընկելէքը կը շահի իւր տանն իջեցրած աշտարակցոց տկերէն, երբ ապրանքին տէրը յուսալով տանուտիրոջ հաւատարմութեան վերայ, թանձր քունին մէջ կ'ըյնի

¹) Թէ, ²) Հիւրերս:

նա՝ իմին խնլացի բարեկամս ձեռք կառնու իւր նախապէս պատրաստած սրածայր փայտը ու պաճախէն ներս կը խոթէ տկին մէջ՝ անանկ, որ կնիքը չի քակուիր: Ամէն մի տկէն չափ մը հանելով, երկու մեծ ամն կը շահի: Ի հարկէ, անոր ալ փոշետեսակ յանցանքները ներեր եմ. «նպատակը կարդարացնէ միջոցը». այլ բան է, եթէ նա իրեն սեպուհ օգտին համար վերցնէր ու մեզի բաժին չը հանէր: Ի՞նչ կը լլայ եղեր, օղին տէրը ի՞նչ պիտի կորսնցնէ, բոլորը մի տկէն առնելու ըլլար նէ, ուրիշ բան էր: Եւ այսպէս իմ կրօնաւէր խոստովանադաւակս երեկ մեզի ընծայեր բերեր ալ կարմրախատը:

Ես իմին հոգուն մեծ յանցանքը համարեցի առանց իմ սիրելի բարեկամներուս ուտել այս անուշահամ խորտիկն և ձեզի ձանձրութիւն տալի, ու գոհ եմ ձեր շնորհքէն, որ արժան տեսաք, չզլացաք:

Իմ խնլացի ու տնտես մարս, ցանկալով մեզի այսօր պարգև մը ընել, տարօրինակ կերպիւ եփեր էր կարմրախատը, անանկ՝ որ տեսնողը չի պիտի հաւատար, թէ ան խաշած է, այլ ջրէն նոր հանած: Ջալըալի ճանճերէն յուսահատուած ըլլալով, մարիկս լաւ է համարեր ձուկը մեծ ափսէի մը մէջ դրած՝ պահել մեր պահարանին մէջ: Սակայն երկնուց կրելով սրատամ մկներէն, որոնք արձակ համարձակ կը վխտան մեր պահարանին մէջ, առեր կատուն ալ ձկան քովը կը նստացնէ: Ի՞նչ ըներ ջանամ, անհերեւ մկները ոչինչ բան անարատ չեն թողներ:

Պարզ կերեւի, որ իմ բանագէտ կատուն արդարեւ ուսումնական ցեղէ մ՚ըլլալ է ու ազէկ ալ ճաշակ ունի եղեր, ցանկայեր է ձկան ճաշակն ինքն ալ իմանալ. բայց բնականաբար շատակեր ըլլալով, պատիւ չճանչցող կատուս միայն ինքն է մաքրակերեր, որով թէ մկներու և թէ մեր ամենուս պաշտօնն ինքն է կատարեր, և ինչպէս որ ձերին յարգելիութիւնը տեսնիք կը, շատ ինքնաբաւօրէն կը լզէ իւր շրթունքները:

Մի այնպիսի ծիծաղ է բարձրանում հիւրերի կողմից և այնքան քաղցրալուր է լինում Փօանգ վարդապետի ձայնը, որ պատուելի հանդիսականները խոստովանում են էս դասն ճշմարտութիւնը, որ եթէ նոյն իսկ իրանք վայելած լինէին, այսպէս ախորժ և անմոռանալի տպաւորութիւն չէր թողուլ իրանց վերայ հոկայական կարմրախայտը: Միաբան համութեամբ վճռում են՝ երկրորդ

անգամ մեր էջմիածնի վանքից դողացած վանայ դաղթական կատուի թուան կենացը վայելել: Բայց որպէս զի ուրախութիւնն աւելի կատարեալ լինի, կատուին ձկան հետ միասին պահարանումը նստացնելու գիւտը հնարող հայր կանոնիկոսի յարգելի մօրն էլ չեն մոռանում. երկրորդ բաժակը նրա կենացն են կոնձում:

— Եթէ ուղիղն ասենք, կատուները ոչ միայն Փօանգ վարդապետի մօտ պատիւ են ունենում, մեր ամէն մէկ միաբանն էլ իւր կատուն աշխարհքի հետ չի փոխիլ, իրաւունք տալով Գրիգոր վարդապետի պատմութեանը, յայտնեց իւր կարծիքը նրա խօսակիցը:

Շատ ուղիղ ես ասում դու, ասաց Գրիգորը, չե՞ս տեսնում, թէ ինչ մեծ յարգանք ունին մեր վանքի կատուները սեղանատանը ճաշի ժամանակը: Հէնց որ սեղանատան զնգալու զանգակը քաշում են, տեսնո՞ւմ ես ինչպէս ամէն խցից իրանց տիրոջից յառաջ դուրս են գալիս պատի հարսների նման կարգով շարուած կատուներն և մեաւոցի ձայնը վանքի պարիսպը ձգած՝ գլուխները քաշ՝ սեղանատան ճանապարհը բռնում են: Չե՞ս լսում, ինչ հանդէսներ է բարձրանում, երբ որ սեղանատանը ամէն մէկը իւր տիրոջ տուած պատառը երկու թաթերի մէջ ամուր բռնած՝ նստում է նրա ֆարաջի մօտ ու մռմռալով ճաշընտիր կարդացողի ձայնին յաղթում:

— Ես շատ սիրում եմ էդ տեսարանը. կատուները մռմռում են, եպիսկոպոսները փիշտ փիշտ անելով բարկանում են, սեղանապետները մի պատուելի հայր սուրբի հրամանով նրա կատուի ճանկի միջը խլել յանդգնողին ոտքով յետ են մղում, տիրացուն լուսամուտի մէջ նստած՝ իւր ճաշընտիրն է կարդում, ամանների ու դդալների չխչխկոցը մի կողմից է բարձրանում և մի ներդաշնակ երաժշտութիւն է կազմվում, աւելի քաղցր՝ քան թէ մարաքեայ անող [1]) աշուղների սազերի ու քեամանչեքանց ձայնը:

— Իրաւ, ասում են անբան անասունները խելք չունին, տեսնո՞ւմ ես ինչպէս ճանաչում են կատուները սեղանատան զանգակի ձայնը: Մի անգամ, պատմում են, որ յանկարծ անժամանակ սեղանատան զանգակը տալիս են: Ամէնքը վազում են տեսնել, թէ ինչ կայ, և ինչքան զարմանում են, երբ որ տես-

[1]) Աշուղ երգիչների կազմած հանդէսը, ուր նրանք միմեանց դէմ մրցում են իւրեանց գիտութեամբ:

նում են զանգակի թելը գետնին ընկած՝ ու ծայրը կատուի բերանին, որ ամենայն զօրութեամբ քաշում է ու կողկողագին մլաւելով պոչը շարժում: Հարցնում, քննում են, որ երրորդ օրվան մեռած վարդապետի կատուն է, որ անխնամ ընկած, քաղցածութիւնից ստիպուած՝ ղիպուածով գտել է զանգակի թելը գետնին ու բնազդումով այս հնարքը գործ դրել: Բանը հասնում է մինչև կաթուղիկոսը, որի հրամանաւ կատուն վեհարան են տանում:

— Բայց ընչո՞ւն է, որ հոգևորականներս կատու շատ ենք սիրում, Գրիգոր վարդապետ, այն էլ մենք՝ կուսակրօն հոգևորականներս, թէ չէ մի տէրտէր չես գտնիլ, որ կատուի վրայ թուլանայ մեզ պէս:

— Մի անգամ ես հարցրի էդ բանը Ցօփցօփին, նա ինձ շատ օրինաւոր բացատրեց պատճառը:

— Ի՞նչպէս:

— Մարդս ընկերական է, ասաց նա, նրա սիրտը բնական հակում ունի ուրիշներին սիրելու. աշխարհականներն իրանց սէրը բաժանում են տնային գործերով ու բազմատեսակ հոգսերով, և ի հարկէ այն ժամանակը կենդանիներին ոչինչ բաժին չի մնում, իսկ մենք՝ վարդապետներս ամէն բանից զրկուած՝ մէնքերից ազատուելու պատճառաւ միայն կատու պահելու իրաւունք ունինք. էնքան ընտելանում ենք այդ շողոքորթ գազանի վրայ, որ վերջումը մեր միայնութեան մխիթարիչն ենք շինում. որդու, ընտանիքի, շրջակայքի սէրը կեդրոնացնում ենք մեր աչքի առաջին միշտ պտոյտ եկող կենդանի էակի մէջ, նրա պոչի հետ ենք խաղում մեր սրտի տխուր ժամանակը, նրան՝ իբրև ընկերի ենք գանգատվում աշխարհքիս անարդար գործերից, նրա շարունակ մըմռոցի մէջն ենք գտնում մեր բողոքներին տեղիք տուող և մեզ արդարացնող դատաւորին: Ի հարկէ եթէ մենք իրաւունք ունենայինք փոքրիկ շնիկ էլ պահելու, մեզանից մէկը դէպի շունը համակրութիւն կունենար, միւսը դէպի կատուն, բայց ի՞նչ անես, ո՞ր բանումը չենք զրկուած, որ հիմա գանգատուելու տեղիք ունենանք:

— Ես կարծեմ առաջին խելօք բանն է, որ իր կեանքումը ասել է հաստափոր Ցօփցօփը. դեռ էլի կասկածում եմ. նրա գլխից էդքան դատողութիւն չէր կարող դուրս գալ, տեսնես ումնից կը լինի լսած, թէ չէ նրանն այն է, որ տօլմով ու քուֆթով իր փորը լցնի:

Շատ երկար խօսեցան այս երկու վարդապետները և կարելի է էլի կը շարունակէին, եթէ նրանց փիլիսոփայական դատողութիւնը չխանգարէր Ա...ի կատուն, որ մինչև էդ ժամանակը մէկի կամ միւսի գիրկն էր անց կենում: Ցանկարծ մլաւեց նա ու դուրս ընկաւ դրանց գրկից, վազեց դէպի վանքի կողմը:

— Քո տունդ չքանդուի, Գրիգոր վարդապետ, տուն մտնենք. ժամը դուրս եկաւ, հիմի կը տեսնեն եպիսկոպոսները որ էստեղ կանգնած ենք, կորկոտներս [1] կեփեն, հիւանդը դրանն ինչ գործ ունի, կասեն, առանց էն էլ աչքով աչք չունին մեր վրայ մտիկ տալու:

— Ցիցի՛, ցիցի՛, փամփօ՛, փամփօ՛, իմ սիրունիկ ցիցիս, իմ նազաճեմ փամփօս, դու իմ ճանապարհս պահո՞ւմ էիր, ինձ սպասում էիր, ո՞ւր էիր, ի՞նչ արիր, էդ ինչի՞ վրայից ծաղկահոտ չես գալիս, էդ ինչի՞ փորդ փոքր է, երևում է ծիտ չը կարողացար որսալ, գրկելով ասաց կատուին մեղմագին ձայնով Ա... հայր սուրբը:

Դու նայիր, ցիցի՛, շատ մի՛ քաշ գալ, սկսաւ խրատել Ա... կատուին, Գալուստ եպիսկոպոսի աղաւնիների հետ շատ մի՛ ընկնիր, զգուշացի՛ր, ես էն անպիտան Աշտարակեցի երկու մատնաչափ ներսէս լակոտի աչքերից վատ բան եմ գուշակում, նա քեզ ծուռն աչքով է մտիկ տալիս, մի օր գլուխդ մի փորձանք չբերի, իմ թանգագին, իմ սիրելի ցիցիս, իմ խելացի, իմ պատուական փամփօս, շարունակելով իւր գուրգուրանքը, կատուի դունչը մատների ծայրով բարձրացրած՝ աչքերը նրա աչքերի մէջ ուղղահայեաց ձգած՝ հասաւ Ա... իւր խցի դուռը:

Սպասաւորը տուն տարաւ նրա փիլոնն ու վեղարը, իսկ կատուախնամ հայրը նստեց իւր թախտի բշտունկի [2] վրայ և շարունակեց իւր խօսակցութիւնը իւր ծնգանը բազմած Վանայ գերբարպատիւ գաղթականի հետ:

ԽԲ.

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ:

— Այս ի՞նչ աղաղակ, ի՞նչ դորդոռոց, կանչեց Ղուկաս կաթուղիկոսը շալթիրին, տեսէ՛ք ի՞նչ կայ, պարսիկները վանքը լցուած

1) Հարիսայ, խաշիլ. 2) Նստարան:

չլինի՞ն, սպանութիւն հօ չէ՞ պատահել. այս ի՞նչպէս է, որ ես այստեղ լսում եմ, իսկ ձեր ականջները փակուել են:

Շանթիրը դեռ նոր էր ոտքը շեմքից դուրս դրել, որ Ա... եպիսկոպոսը վերարկուի կոճակներն արձակած՝ կուրծքը բաց, առանց վեղարի, փէշի մէջ մի բան փաթաթած՝ տուն ընկաւ վեհարան:

Մի քանի վարդապետներ յետ յետ էին քաշւում նրա թևերից, առաջը կտրում, խնդրում, համոզում էին, որ այդ բանը չանի, այսպէս անկարգ կերպիւ կաթուղիկոսի մօտ չգնայ, նրան չվիրաւորի, բայց ոչ ոք չէր կարողանում դիմադրել: Երևի շատ խոցոտուած էր նրա սիրտը, երևի մի մեծ տարաբաղդութիւն պէտք է պատահած լինէր նրան, որի փրկութիւնը միայն կաթուղիկոսից էր սպասում: Նա աւելի ուժով բարձրացաւ վեհարանի սանդուխներն և մտաւ շանթիրների սենեակը ու աղիողորմ ձայնը աստիճանաբար բարձրացնելով, արտասուքները թափելով ուզում էր բաց անել կաթուղիկոսի սենեակը:

— Մի՛ թողնէք դրան ներս, քամակից ձայն տուեց միջնորդողներից մինը, և շանթիրը բողոքարկուի առաջը կտրեց:

— Արդարութի՜ւն, արդարութի՜ւն և իրաւունք եմ խնդրում, հոգևոր տէ՛ր, բարձրաձայն գոչեց շանթիրների սենեկից խեղճ մարդը, ու ներսից դուռը բացուեցաւ: Յառաջ եկաւ ինքը՝ դունաթափուած պատկառելի հայրապետն ու ներս կանչեց վշտացած եպիսկոպոսին:

— Ի՞նչ է պատահել քեզ, հայր սուրբ, ո՞վ է քեզ վիրաւորել, այդ ի՞նչ է քո դրութիւնը, շատ տամ, ուզում էր հրամայել կաթուղիկոսը, բայց գանգատաւորն էլ չթողեց շարունակել, յետ բաց արեց վերարկուի քղանցն և գորգի վերայ գետին ձգեց արտասուքներն աւելացնելով մեզ ծանօթ Վանայ գաղթականի թոռանը՝ իւր գերահաւչակ կատուին:

— Այս ի՞նչ անաստուածութիւն է, հոգևոր տէ՛ր, կանչեց կոկորդանոց ու հեծկլտալով եպիսկոպոսը, ձեռքը ձգելով դէպի կատուի ոտքերը, այս ի՞նչ անխղճութիւն է. անբան կենդանուն այսպէս չարաչար կը պատժե՞ն, այսպէս անխնայ կը տանջե՞ն:

Առաջին անգամը կաթուղիկոսը ոչինչ չկարողացաւ հասկանալ. մէկ նայում էր նա եպիսկոպոսի աչքերին, դէմքին, անվայել դրութեանը, մէկ էլ աչքը ձգում էր կատուի վերայ: Վերջը կատուի ուղիղ կանգնել չկարողանալու վերայ զարմացած՝ խորամուխ աչքերով նայեց նրա ոտքերին և եպիսկոպոսի աղիողորմ հառաչանքներին այսպէս պատասխանեց: — Ո՞վ է եղել այս ծաղրալի տեսարանի պատճառը, որ քեզ այդքան վիրաւորել է, ո՞ւմ մտքին է անցել մի այդպիսի հնարք:

Կաթուղիկոսը շարունակում էր նայել կատուի վերայ և ծիծաղը չէր կարողանում բռնել:

— Ուրեմն չկա՞յ արդարութիւն, աւելի յուսահատ աղաղակեց Ա... հայրը:

— Ո՞վ և ինչի՞ համար են այս խաղը մտածել այդ ծաղրածուները, գուցէ քո վերայ ծիծաղելո՞ւ, կամ կատուին պատժելո՞ւ համար:

— Երկուսն էլ, երկուսն էլ, հոգևոր տէ՛ր, ես ուրախութեամբ մի աղաւնու փոխարէն իմ ամբողջ աղաւնատունս կտայի, միայն թէ իմ կատուիս հետ այսպէս անողորմաբար չվարուէին:

— Ո՞վ է, ո՞վ այս կատակ խաղացողը, չդադարելով ծիծաղելուց, կատուն ձեռքի վերայ առաւ և սկսեց ամենայն ուշադրութեամբ նրա ոտքերին նայել կաթուղիկոսը:

Որքան նայում էր նա, այնքան իւր ծիծաղն աւելանում էր: Մի քանի անգամ քաշեց ոտքերի վերայ կպրաձութով կպցրած ընկուզի կճեպներն և տեսաւ, որ շատ ամուր են նստացրած:

Եպիսկոպոսի գանգատը պարզուեցաւ, նորա կատուի ոտքերն ամրացրել էին կպրաձութով լցրած ընկուզի կճեպների մէջ:

— Արդարև, ասաց վերջումը կաթուղիկոսը, արածն անխղճութիւն է, բայց խորամանկ հնարագիտութիւն:

— Ծառայեմ սրբութեանդ, խնդրեմ դու այդպէս սառնասրտութեամբ չդատես այս բանը. ինձ համար իմ կատուն աշխարհքիս ամէն ընչից թանգ է, աղաչում եմ, դու էլ էս կէտից դատիր էն օձի ձագերին՝ էն մողէսին՝ էն մի մատը լպստուած լակոտին, որ երես առած՝ դեռ 10—12 տարեկան, դեռ ոտը ձուից դուրս չդրած՝ բոլոր միաբանութեան գլխին ընկոյզ է կոտրում: Մենք լաւ ենք 'ի հնուց անտի, որ ամէն ժամանակ էս վանքի տունը քանդողն աշտարակեցիք են եղել, բոլոր վանքերինը գզուացրել են. եթէ էդ Աշտարակեցու ձագը աստծու ապաշոյց չէ, ինչ է ուրեմն:

— Ներսէ՞սն է արել, շարունակ ծիծաղում էր հայրապետը. արդարև մեր վանքումը միայն նրա գլխից էդպիսի հնարքներ կը ծնին:

Շամիր, հրամայեց նա, կանչեցէք Գալուստ եպիսկոպոսին ու տիրացու Ներսէսին:

— Այս ի՞նչ բան է, Գալուստ եպիսկոպոս, լուրջ դէմք բռնելով և աշխատելով ծիծաղը պահել, գետնին նայելով հարցրեց կաթուղիկոսը:

— Ես բոլորովին ոչ ինչ չգիտեմ, հոգևոր տէր, արդարացաւ Գալուստ եպիսկոպոսը, կէս ժամ չկայ, որ ես Դաւի այգուցն եկայ և արդէն բանը բանից անցել էր. լաւ էլ պատժեցի այս սատանային, ցոյց տալով իր քամակին կանգնած Ներսէսին, բայց արդէն ուշ էր:

— Դու իրաւունք չունէիր, պապի, ինձ պատժել, լացակումած եպիսկոպոսի խօսքը կտրեց Ներսէսը. Ես քանի՜ անգամ Ա... հայր սուրբին խնդրեցի, որ իւր կատուին խրատի, կամ բաց չթողնի, քանի՜ անգամ աղաւնիներիս խեղդած ձագերը իւր կատուի ճանկերը խլել եմ ու քեզանից ծածուկ տարել իրան ցոյց տուել. բայց նա միշտ ծիծաղացել է ու ինձ ծաղր արել: Այսօր էլ, երբ տեսայ, որ իմ աղաւնիներս խառնաշփոթ թռչկոտումէին աղաւնատան գլխին, շտապով վեր բարձրացայ ու իմ թուշուշուրիկ, քաքուլաւոր, սաները բըռդոտ, թալիայ տուող [1]) աղաւնուս երկու ձագն էլ խեղդած գտայ, որոնցից մէնը մի կողմն ընկած էր, իսկ միւսը կատուն բերնին բռնած մռռալով ուտում էր: Վրայ հասայ, բռնեցի կատուին ու էլ ուրիշ հնար չգտայ դրա տէրն իմ աղաւնատանից կտրելու, ընկուզի կճեպի մէջ սև ձութ հալեցի ու ոտքերը մէջը թաղեցի, որ էլ այսուհետև չկարողանայ բարձրութիւնների վերայ պատերը ճանկռտելով մտնել: Ի՞նչ կայ որ, շարունակեց նա, կատուին հօ չեմ սպանել, դա էլի կարող է մտնել, բայց միայն ճանկեր [2]) չունենալով, իմ աղաւնիներս կազատուին:

Կաթուղիկոսն էլ չկարողացաւ իւր ծիծաղը պահել, այնպէս օրինաւոր արդարացաւ ջահել տիրացուն, որ տեղիք չմնաց բարկանալու. ըստ որում վերջին խօսքերի հետ վերարկուի տակից հանեց նա երկու սիրունիկ խեղդած աղաւնու ձագեր ու վեր ձգեց գորգի վերայ: Ահա ձեզ հաստատութիւնը, լալով ասաց Ներսէսը, ես չեմ ուրանում, որ արել եմ, բայց եթէ դու լինէիր իմ տեղը, Ա... հայր սուրբ, ի՞նչ կանէիր, դարձաւ նա դէպի Ա... եպիսկոպոսը. Ճշմարիտն ասա, կատուին կենդանի կը թողնէի՞ր:

[1]) Ցախր ածող. [2]) Մագիլներ.

— Իրաւունք ունի երեխայն, վճռեց կաթուղիկոսը. դու՛ Ա... եպիսկոպոս, պէտք է հսկէիր քո կատուիդ վերայ, բայց անցեալն անցել է, ներիր դու Ներսէսի չարութիւնը, առ քո կատուդ և գնա. միւսանգամ մի՛ մոռանար մեծաւորիդ առաջը չգալ այդպէս անկարգ ու անկանոն. վարդապետի պատիւն իւր վեղարն է, իսկ խոնարհութեան նշանը՝ վերարկուն պինդ կոճկելը: Մօտ գնա, Ներսէս, հրամայեց կաթուղիկոսը, Ա... հայր սուրբի աջն առ և միւսանգամ զգոյշ կա՛ց անբան անասուններին պատժելուց:

Ներսէսին աջ տալով ներեց Ա... հայրը, իսկ իրեն — Ա...ին կաթուղիկոսը. նրանցից մէնը իւր կատուն և միւսն իւր աղաւնու ձագերն առան դուրս գնացին:

— Ընչո՞ւ այսպէս նիհարանումէ այս երեխայն, Գալուստ եպիսկոպոս, հարցրեց կաթուղիկոսը:

— Տկար է կազմուածքով, ծառայեմ սրբութեանդ, միշտ ջերմումէ, այդ պատճառաւ էլ չի ուզում վանքական դառնալ, ամէն օր գլուխս տանումէ, որ իրեն գիւղը ղրկեմ:

— Ո՛չ, չպէտք է դրան ձեռից թողնել, հրամայեց հայրապետը, իրաւունք ունէր. լուսահոգի Սիմէօն կաթուղիկոսը սրան երես տալու, մեծ հանճար է խոստանում սա. պէտք է ոչինչ չխնայել, սրան առողջացնելու համար:

Այնպէս էլ եղաւ: Ղուկաս կաթուղիկոսի հրամանաւ Ներսէսի բժշկութեան վերայ վանքից ծախք եղաւ 3000 ղուրուշ և հիւանդոտ մանուկը կատարեալ առողջացաւ:

ԽԳ.

ԱՌԱՋԻՆ ՍԷՐ:

— Փղոսկրեայ հնդկաստանից ուղարկած մեծ թևաւոր աթոռը դուրս կը բերեն մասանց խորանից, ուղիղ կաթուղիկոսի քամակին կը դնեն, տակն էլ Աղամալ աղենց ընծայած ասղնէթել ոսկեծոպ գորգը կը փռեն: Փոքր մարդ չի մեր հէրը, այսօր մեր Երևանի առաջին իշխանն է. Էջմիածնի ազգի պարծանքներ շատ չունինք. Երևանումը միայն դրանք են՝ Գեղամենք ու Կամսարականնենք, Աշտարակումն էլ՝ Գէորգ խալֆէն: Ազգի ճրագ են՝ դրանք են, լոյս են՝ դրանք են: Պատուիրէր, որ անօթները մաքուր լինին, նախատօնաքի համար թանգագին շուրջառներն ու զարդերը դուրս բերել տուր, եկեղեցին լուսաւորուած լինի, ամօթ է մեզ համար, մարդը բոլոր գերդաստա-

նուլ է եկել, ընտանիքի համար էլ մի մեծ Խորասանու լաւ գորգ փռել տուր: Երբ որ ամէն բան պատրաստ լինի, արի ինձ իմաց տուր, որ գնամ կաթուղիկոսին յայտնեմ, զանգակը տանք: Ձայնաւորի մօտ մարդ ղրկի, որ շարականները ծանր ասեն, հերթական սարկաւագներն ու դպիրները, եթէ հասարակներից են, խնդրիր իմ կողմից կարգապահ վարդապետին փոխել, լաւերին նշանակել: Մասունքների սնդուկները դիր, սփռոցները ձգիր, իմ զգեստս պատրաստիր. կաթուղիկոսը հրամայեց, որ մասունքներն զգեստաւորուած դուրս բերեմ:

Այս հրամանները տալիս էր Էջմիածնի տօնի նախատօնակ շաբաթ օրը՝ ճաշից յետոյ՝ աւագ լուսարարը կրտսեր լուսարարին:

— Ամէն բան կարգին կը լինի, հայր սուրբ, խոնարհաբար գլուխ տուեց փոքր լուսարարն և գնաց իւր գործին:

— Կը հրամայես, հոգևոր տէր, երեկոյեան զանգակները տալու, բոլորը կատարած է սրբութեանդ կամքին համաձայն:

— Շատ լաւ, ինքդ ուրեմն գնա Մելիք-Աբրահամին խնդրիր շնորհ բերել եկեղեցի իւր բարեպաշտ գերդաստանի հետ:

Եկեղեցու դուռը ճանապարհ պահող ժամկոչը գլխով նշան տուեց, փոքր լուսարարը ժամն օրհնելու զանգակը քաշեց և ժամ օրհնող եպիսկոպոսապատիւ Յարութիւն վարդապետը քթախոտի աւելորդներն իւր օրհնեալ մօրուքից ու ընչացքից ձեռքով թափ տուեց ու ժամն օրհնեց: Հէնց այդ րոպէին էլ Մելիք-Աբրահամն իւր բազմաթիւ ընտանիքով — տղաներով, աղջիկներով ու փեսաներով շրջապատուած՝ ոտքը դրեց եկեղեցու շեմքը:

Նրանց առաջնորդում էր աւագ լուսարարը:

Կերպասների ու կանացի շքեղ հագուստի շրշյունից երիտասարդ դասականների սրտերը թնդացին. նրանցից մի քանիսը չկարողացան համբերել, յական թօթափել մի յետ նայեցան, աչք ձգեցին կաթուղիկոսի քամակին կանգնած խմբի վերայ, և էլ յետ վեղարների խաշուշքը քաշ ձգած՝ ամէն մարդ իւր ծնրադրութեան հետ եղաւ:

Արտաքոյ իւրեան հերթի՝ պարզ առաքինութեան համար՝ դպրութիւն անելու շնորհքին այսօր արժանացած մի դպիր ոչինչով չկամեցաւ յետ մնալ իւր համանմաններից. նա աչքի ծայրով դէպի մեծապատիւ հիւրերն ակնարկեց:

Ուղիղ կաթուղիկոսի քամակին՝ փղոսկրեայ գահի առաջին

կանգնած էր Մելիք-Աբրահամը: Նա թէպէտ իրաւունք ունէր բազմել այն գահի վերայ, բայց խոհեմութիւնը թոյլ չէր տալ իւր հայրապետի հետ միասին Աստուծոյ տաճարի մէջ նստել: Կաթուղիկոսն այլ բան է, նա ընդհանուր ազգի գլուխն է, եկեղեցու փեսան է. իսկ ինքը՝ Մելիք-Աբրահամը շատ լաւ է հասկանում համեստութեան կանոնը:

Պատանի դպրի աչքը դիպուածով ընկաւ մի մանկամարդ աղջկայ երեսին:

Մելիք-Աբրահամի դստեր գեղեցկութիւնը վաղուց յայտնի էր Էջմիածնի միաբանութեանը, բայց մինչև հիմա լսել էր, անձամբ ոչ մինը չէր տեսել: Առաջին անգամն էր Մելիքն իւր ընտանեօք ուխտ եկել Էջմիածին. ինքը շատ անգամ էր եղել, բայց միշտ միայնակ: Մեր հայր սուրբերից շատերն էլ յաճախ պատահում էին նրա տանը Երևանում, բայց կանացի սեռի երեսն իւրեանց սեռը միայն իրաւունք ունի տեսնելու:

Երևի էլի դիպուածով էր, որ նոյն րոպէին, երբ դպիրն երեսը յետ դարձրեց, աղջիկն էլ ճիշդ նրա աչքերի մէջ նայեց:

Դպիրն եթէ ուզէր էլ, չէր կարող երկար մտիկ տալ. նա պատրաստվեց գնալ իւր պաշտօնը կատարելու. փոխասաց էր նա այս երեկոյ:

Մի րոպէի մէջ մի սարսուռ անցկացաւ մեր դպրի երակներում և աչքերը սևացան: Ժամանակ էլ չունեցաւ նա պատճառը մտածելու. կողքի կանգնած տիրացուն բրթեց նրան թևով և փսփսաց, որ ժամանակ է գնալ փոխ ասելու:

Եթէ մէկն այս րոպէին աչքը ձգէր սիրուն աղջկայ երեսին, կարող էր նկատել, որ էն պայծառ ու զուարթ դէմքը մի քանի վայրկեան մեռելի գոյն բռնեց. ինքը օրիորդն էլ չիմացաւ, թէ ինչ պատահեցաւ իրան, նա զգաց, որ անծանօթ դպրի աչքերից մի զօրութիւն սլաքի նման խոր թափանցեց իւր սրտումը. ոտքերի ոյժը կտրուեց, գլուխը պտոյտ եկաւ, և եթէ նա թիկնած չլինէր իւր կողքին կանգնած հարսին, գուցէ վայր էլ կընկնէր եկեղեցու մէջ: Այս փոփոխութիւնն այնքան վաղանցուկ էր, որ հարսը ոչինչ չզգաց: հաւաքեց իրան նազելի աղջիկն և աչքերը չէր համարձակվում վեր բարձրացնել:

Շատ չանցաւ, մի սուր և բարակ ձայն պարզ առոգանու-

թեամբ ակամայից քաշեցին օրիորդի ուշադրութիւնը դէպի փոխասաց դպիրները:

Երկու ուրարակիր տիրացուներ, կերպասեայ ժամաշապիկը հագին, ասում էին ատեան կանգնած՝ փոխերը: Մէկի ասելու ժամանակն անտարբեր էր գեղեցկուհին, իսկ միւսի սկսելուց մինչև վերջացնելը նրա սրտի լարերը թրթռում էին. երբեմն տաքանում, կրակ էր դառնում նա, երբեմն սառույց էր կտրվում:

Հիմա հարցնենք փոխասաց վանքական դպրին, ի՞նչ է լինում իրա հետ ատեան կանգնած ժամանակը:—Նա չի հասկանում իւր ասածը. նրա ուշք ու միտքը յետ է. նա փոխերի տներն ասելուս այնպէս է ոգևորվում, որ ամենքին էլ զարմացնում է. նա գոված էր իւր պարզ հնչիւնի համար, բայց այսօրուանը գերազանցեց. նա ինքն այնպէս է կարծում, թէ խօսում է այն երկու աչքերի հետ, որ իւր սրտի մէջ տաւաձգականութիւն ձգեց. իսկ իւր ընկերի միւս տունը կրկնելովը կարծում է, թէ նոյն աչքերիցն է իւր հարցերին պատասխան ստանում:

Վերջապէս փոխն աւարտուեց և պատանին վերադարձաւ իւր տեղը գնալու: Հիմա էլ գող կատուի նման չի նայում նա դասից. հիմա դէմ ու դէմ կարողացաւ համարձակ ժողովել իւր խոհական յօնքերն և մանր ու սուր աչքերովը շանթել դիմացի թուխ կամարակապ աչքերով նայող սրտին:

Ու մեր դպիրը կարողացաւ միտք անելով գտնել իւր անսովոր փոփոխութեան պատճառը և ոչ մէկը—Աբրահամի աղջիկը մտածեց իրան մի վանքի նիհար տիրացուի հետ կապող զօրութեան վերայ:

Առաջին անգամն էր, որ սիրոյ ազդիչ զօրութիւնն երկու պատանիների վերայ իւր ոյժը գործ էր դնում. նրանցից մէկը միայնակեցութեան ուխտեալ, աշխարհքից հեռացած, ամուսնութեան վերայ երազում անգամ չմտածած մի հոգևորական չորս աստիճանաւոր դպիր, դեռ մինչև այսօր էլ աչքով մի օրիորդի չի նայել: Նա թէպէտ տարին մի քանի անգամ տեսել էր շատ ուխտաւոր կանայք վանքումը հաւաքուած՝ որ երկու երեք օր առաջին ման էին գալիս, թէպէտ Վաղարշապատի կանայքը սովորաբար ամէն շաբաթ երեկոյ փաթաթուած սպիտակ սաւաններում յաճախում էին վանքի եկեղեցին, թէպէտ իւր ընկերակից դպիրներն, աւագ սարկաւագներն ու

երիտասարդ վարդապետները հրաւիրվում էին ուխտաւորներից գիշերուան հանդիսի, թէպէտ ամէն մի միաբան եղբայրակից ունէր Վաղարշապատ գիւղումն իւր սանամայրը, քեռակինը, խնամին ևայլ հեռու և մօտիկ ազգականները և անխափան ամիսը, կամ շաբաթը մի երկու երեկոյ նուիրում էր իւր ազատ ժամանակը իւր բարեկամին, նրանց ուրախացնում էր իւր այցելութեամբը, թէպէտ ինքը՝ մեր ներկայ դպիրն ևս ոչինչ բանով չէր ուզում իւր անձը զանազանել իւր միաբանակիցներից, բայց բնականաբար նա չէր սիրում անգործ ու անպտուղ ժամանակ կորցնել: ընդհակառակն նա իւր ժամերը գործ էր դնում զանազան գրչեայ և տպած մատեանների ընթերցանութեամբ: Էջմիածնի ամէն մի անդամն էլ իրաւունք ունէր գրատան գրքերից օգուտ քաղել, բայց շատ հազիւներն էին այս արտօնութիւնը վայելում, որոց մինն էլ մեր դպիրն էր:

Նրա միակ զբօսանքն էր ազատ ժամանակները գնալ վանքից դուրս՝ դաշտերը չափ ու ձև անել, Էջմիածնի շրջակայքը քննել, հերկերին ու արտերին նայել, վանքի այգիները պտըտել, Էջմիածինը ոռոգող ջրերի ակիզբները որոնել և իւր մէջ երևակայական նախագծեր կազմել ամէնքի համար առանձին առանձին: Ո՞վ գիտէ, ի՞նչ էր պտոյտ անում նրա մտքումը, բայց շատ անգամ այդ զբօսանքի ժամանակը, երբ աչքը ձգում էր Էջմիածնի պարսպի արևելեան կողմը, ուսումնարանի առաջը, սաստիկ դուր չէր գալիս նրան գոմերի ու անասնանոցների վանքին և ուսումնարանին այսքան կից և մօտ լինելը: Նա իւր մտքումն օրը հարիւր անգամ փոխում էր այդ գոմերը Գայիանէի վանքի արևելեան կողմի բաց դաշտը: Երբեմն երբ որ սրտնեղած՝ Էջմիածնից դուրս էր գալիս Վաղարշապատի դռնովն ու աչքը դէպի հարաւ էր դարձնում, սիրտը կտոր կտոր էր լինում երիտասարդ դպրի՝ թանձր ամպի նման մառախլապատ մինչև դետինը իջած տաքութիւնը նայելով. բացի իւր կանգնած տեղից արևելեան կողմում գտնուած երեք պարտիզից, մի ծառ չէր երևում. հորիզոնը Մասեաց վեհապանծ սարն էր, որ աչքի էր ընկնում, նոյնպէս մառախուղի մէջ կորած. ոչ մի բարակ քամի, ոչ մի խոսփ սօսափիւն չկար այդ կրակ կտրած գետնի վերայ: Շատ անգամ ժամերով կանգնում էր նա Վաղարշապատի դաշտը և փեսաղզեանի մօտ մի մեծ լճի ու նրա ներքևը մի արհեստական անտառի նախագիծ էր կազմում իւր մէջը: Դրանցով նա մտածում էր և Էջմիածնի ջերմային յատկութիւնը ջնջել և օդն ու կլիման զովացնել, բար-

ռքեւ և անտառի բերքերովը վանքի եկամուտը տասնապատիկ աւելացնել:

Սրանք էին եղել մինչև հիմա մեր երիտասարդ դպրի ցնորքները: Նա էլ երբ պէտք է սիրոյ ցնդաբանութիւններով պարապելու միջոց ունենար: Էս էր գլխաւոր պատճառը, որ նա չիմացաւ, թէ սէրն էր, որ բոլոր վերոյիշեալ երևակայութիւնները իրա գլխից հանեց և մի անծանօթ աղջկայ մէջ կեդրոնացրեց նրա մտածմունքը:

Մելիք Աբրահամի աղջիկն էլ առաջին անգամն էր, որ սիրոյ ճանկերում թակարդուեց. նա մինչև հիմա Երևանումը իւր հօր չորս պատերից ոտքը համարձակ դուրս չի դրել, ուրիշ տեղ գնալիս նրա երեսի ծածկոցը յետ չի գնացել՝ պարսից վատշուէր կրքերից յառաջ գալիք երկիւղից:

Եթէ Մելիք Աբրահամը մի հասարակ գիւղացի, կամ մի աննշան անձն լինէր, նա հիմա վաղուց իւր աղջկանը 12 տարեկան ժամանակը պսակած՝ գլուխն էլ ծածկած կը լինէր, որ պարսիկները չքաշէին, բայց նա այնքան սիրելի էր ամենքին, որ ոչ ոք նրա տան գաղտնիքը, նրա աղջկայ գեղեցկութեան համբաւը խաների ու բէգերի ականջը չէր հասցրել: Այդպէս մեծացել, ոտքը 18 տարուայ մէջն էր դրել աննման Վարդիշաղն և իւր գեղեցկութեան բոլոր փայլովը այսօր այն ժամանակի սովորութեան համեմատ գլխին դրած թաւիշեայ սրածայր գլխարկը՝ առանց փաթաթուելու՝ կանգնած էր պարզաբար Էջմիածնի տաճարի մէջ, և կարելի է ասել, որ այսօր էր նրա ազատօրէն երևելու առաջին օրը: Էլ նա ո՞րտեղից պէտք է երիտասարդ տեսնէր, որ սէր հասկանար:

Զարմանալու բան չէր, ուրեմն, որ պատանի դպրի կայծակնացայտ աչքերն և ազդու ձայնը դրաւէին Վարդիշաղի հոգին ու սիրտը: Այն աչքերն ի մանկութենէ ներգործել են իշխանաբար ամենքի վերայ, և այդ յատկութիւնը պահեցին այն աչքերը մինչև մեր դպրի խորին ծերութիւնը. աչքեր մի՛ ասիլ, արևի ճառագայթներ ասա:

Միայն Վարդիշաղի վերայ չէին ազդել դպրի ձայնը կամ աչքերն այս երեկոյ: Ինքը՝ Մելիք Աբրահամը միանգամայն հիացել էր այդ կարճահասակ տիրացուի պարզ հնչիւնի վերայ. իւր կեանքումն այսպէս մաքուր և ազդու արտասանութիւն առաջին անգամն էր լսում: Ոչ երգեցողների ներդաշնակ ձայնը գրաւեց նրան և ոչ թանգագին զգեստները. նա միայն աչքը կթած ունէր դէպի մեր հեր-

թակալ դպրի կանգնած դասը: Առհասարակ պէտք է ասել, որ մեր տիրացուն այս երեկոյ ամենքի ուշադրութիւնն իրան գրաւեց, բայց ինքն էլ մի ուրիշից գրաւուեցաւ:

—Երանի՜ թէ էս տիրացուն մեզ բարեկամ լինէր, որ կարողանայի հետը խօսել, քամիներ էին տատանում օրիորդի միտքը:

—Հաւանեցի՞ք, Մելիք, մեր եկեղեցական նոր կարգադրութիւնը, որ արեց մեր հանգուցեալ հայր Սիմէօն կաթուղիկոսը. մի՞տքդ է, թէ ի՜նչ անկարգութիւն էր մինչև լուսահոգի հայրապետի կարգ ու կանոն տալը, հարցրեց նրան կաթուղիկոսը ժամից յետոյ:

Հիանալի էր, ծառայեմ, շատ լաւ էր, բայց ամենից աւելի իմ խելքս տարաւ աջակողմեան դասի փոխ ասող տիրացուն, էդ ի՜նչ քաղցր ու պարզ ձէն ունի, ասլի ինքը, Աստուած աւելի շնորհք տայ. էն ո՞վ էր, հոգևոր տէր:

—Աշտարակցի տէր Յարութիւնի տղան է, դու կարծեմ պէտք է ճանաչէիր դրա հօրը:

—Հա՛ հասկացայ, խեղճը լաւ մարդ էր:

—Այո՛:

—Հէնց ինքն է, որ կայ:

Այս երեկոյ կաթուղիկոսի ու Մելիքի խօսակցութիւնը մեծ մասամբ Ներսէսի վերայ էր:

Ներսէսի առաջին սէրը շատ ի զուր անց կացաւ. ոչինչ բանով Գալուստ եպիսկոպոսը չ'զիջաւ նրա խնդրանացը և չուզեց նրա համար Մելիք Աբրահամի աղջկանը. ընդ հակառակն նա հասկացրեց Մելիք Աբրահամին բանի էութիւնը, որ միւս առաւօտեան վերցրեց իւր ընտանիքն ու գնաց Երևան:

Ներսէսը միանգամայն յուսահատուեց վանքից ու առանց ոչ ոքի ասելու, քաշուեց գնաց Աշտարակ:

—Եթէ Մելիք Աբրահամն իր աղջկանն ինձ չտուեց, գոնէ մի օգնութիւն արեց, ՚ր ինձ էս չորս պատի միջից բոլորովին ազատեց, ասաց նա վերջին անգամ ու համբուրեց Էջմիածնի դուռը՝ ճանապարհ ընկաւ:

ԽԴ.

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ։

Ամէն բան կամաց կամաց հասկանալի եղաւ Վարդին. տարիների հետ ոյժն էլ աւելանում էր. ոյժին խելքն էր օգնում։ Քանի փոքր էր, տէր Յարութիւնի տունը նրան սիրելի էր երևում, բայց հիմա ծանրանում է նրա սրտի վրայ։ Ոչ Սուսամբար տիրուհին, ոչ նորա աղջիկներն և ոչ ներկայ մեծացած ժառանգ Կարապետը մի օր մի կծու խօսք չէին ասել նրան, միշտ ջան էին ասել, ջան լսել, մինը որդուց չէ զանազանել նրան, միւսները եղբօրից. բայց Վարդն ինքն է փոխուել. էլ ոչ առաջուան պարզութիւնը, ոչ համարձակութիւնը, ոչ երեխաների վրայ մեծ եղբայրական իրաւունքներ գործ դնելը, ոչինչ չկան, ամէնը թողել է։

Սկզբում երեխայքը զարմացան էս բանի վրայ, բայց վերջումը տարիներն իրանց շնորհքը սրան էլ ցոյց տուին. սրանք էլ հասկացան Վարդի փոփոխութեան պատճառը։

— Նանի ջան, մկար [1]) Վարդը մեր հալալ աղբէրը չի՞ էլել, գեարանենց աղջկէքն ասում էին, որ նախրչու տղայ ա։

— Ի՞նչ անենք, բալէք ջան, ես նրան ձեզանից չեմ ջոկել, էլի ձեր աղբէրն ա։

— Վա՜յ հողն իմ գլխին, բա ամօթ չի՞ մեզ, որ օտար տղի հետ ընչանք էս օր արձակ համարձակ խօսացել ենք ու նրա հետ մի տեղաշորում քնել։

— Ջէններդ կտրեցէք, այ աղջիկներ, Վարդն ու Կարապետն ինձ համար՝ ոնց որ մի խնձորի երկու տապակը [2])։

Մայրն ինչքան էլ համոզեց, Կարապետն էլ բանի խելութիւնը հասկանալուց յետոյ մօր խօսքերը քոյրերին պնդեց, բայց աղջիկներն էլ առաջուան պէս ազատ չէին, սէրը փոխեցին յարգանքի։

— Հիմի ես էլ իմանում եմ ինչ կանեմ, մտածեց Վարդը։

— Նանի ջան, մի մարտի առաւօտ բահն ուսին դրած՝ տուն մտաւ Վարդը Սուսամբար տիրուհու մօտ. էս օրուանից ամէն մարդ իրանց յլքանոց [3]) բանի հետ են. ես գնում եմ փոխարայ [4]), մի քանի բանւոր [5]) չինենք, մեր յլքանիքն էլ փորենք։

---

[1]) Մի՞թէ. [2]) Կտոր. [3]) Այգիների. [4]) փոխադարձ մշակութիւն. [5]) Մշակ.

Մինչև տիրուհին գլուխը կը բարձրացնէր, Վարդը դռնից դուս։

— Էս ի՞նչ ա մտել սրա գլուխը, ով ա դրան փոխարայ ղրկում, որ գնայ ընչանք խրխլուն բահի տայ. Աստծու տուածիցը ձեռներս կարճ չի, մշակ կը բռնենք. գնա Կարապետ, տես Վարդն ո՞ւր գնաց, կանչի՛ էս սհաթս։

Բոլոր Աշտարակու փողոցները չափից Կարապետը, բայց Վարդին չգտաւ, չի էլ կարողացաւ իմանալ, թէ ում այգին է գնացել։

Ոչինչ խօսք, ոչ մի խնդիրք, ոչ մի նախատինք չներգործեց այնուհետև Վարդի վրայ. իր կեանքումն առաջին անգամն էր, որ տիրուհու խօսքը գետինը քցեց։

— Եթէ դու ինձ կարգելես, ասաց նա, որ ես ձեզ համար աշխատիմ, ես էս օրուանից ձեր շէմքը ոտ չեմ դնիլ, Աշտարակից գլուխ կառնեմ կը կորչեմ. ի՞նչ կը պակսի ինձ, աշխատելով մարդ չի մեռնիլ, ձու չեմ՝ որ պխլւեմ, եղ չեմ՝ որ արևի տակին հալւեմ, կուռս ա պակա՞ս, թէ ճուռս, հացակեր եմ, խոտակեր հօ չեմ։

Ճարն ինչ, խեղճ տէրտէրակինն ուսերը վեր քաշեց։ Լաւ էլ նրա ջանին ցաւ էր տալիս, լաւ էլ սրտի ծէրը մղկտում էր, երբ որ Վարդն իրիկները տուն էր գալիս, ծիրանաւորի պատի տակին նըստում, տրեխները հանում, միջի հողը թափ տալիս. բայց հոգւոց էր քաշում ու տաղ անում. ինքը զորթ ա, էդպէս չի մեծացրել նրան, բայց որ միանգամ էն Աստծու դառը տղէն սատանի ձեն ա նի էլել [1]) վէր չի գալի՞։

Շուտով մի քանի օրից Աշտարակու ջահէլների բերանի խօսքը դառաւ Վարդը, ծակ բերանը նրա գովութիւնն էր անում — հում աշխատանքն ուտում ա տնաքանդը. էլ ո՞ր օրի համար էր պահել իր հունարը [2]), մենք ասում էինք տէրտէրակինն իր երեխանցն անբան ա սարվացնում, աղայ ա մեծացնում, համա չէ, տա իր հօրն ա քաշել։

Էս օրուանից տէր Յարութիւնենց այգիները գիւղի ամենագեղեցիկ աղջկայ պէս կարելի էր մատով ցոյց տալ։

— Ձեր ջանին մեռնիմ, աղէք, թմբան գլուխն ընկած՝ բահին քացի տալով ասում էր Վարդն իր փոխարայով հաւաքած բան-

---

[1]) Հեծել. [2]) Շնորհք.

ւորներին, Աստուած սիրողն իր հալալ մքի [1]) պէս ջան դնի. քիչ աշխատեցէք, հեշտերը դուք վեր կալէք:

Էս քաղցր լեզուն օձին էլ ծակիցը կը հանէր և ոչ թէ մեր մեծասիրտ տէրքանցը. ով իր գլուխն էն տեղը կը դնէր, որ իր բանած թումբը կիսատ թողայ ու Վարդին կանչէ՛, թէ արի իմ դժուարս վերջացրու: Վարդն ամէն մէկի այգումը ջան ա դրել, աշխատանք չի խնայել, հիմի սրանք պէտք է խնայե՞ն:

Ինչպէս որ ապառաժ քարափի վրայ էլ աշխատանք դրուի, դրախտ կը դառնայ. ու՞ր մնաց տնկած, մշակած, պտղատու այգին:

Հիմա առաջուան նման տխուր չի յետ գալիս երեկոները Վարդը. իւր մանկութեան ուրախ օրերը կրկին յետ են եկել. ինքն զգում է, որ այսպէս սրտանց աշխատելով, կարող է մի քանի տարուան մէջ իւր բարերարներին երախտահատոյց լինիլ:

Փոքր առ փոքր տիրուհին էլ սովորեցաւ Վարդի աշխատասիրութեանը, էլ նրա թափած քրտինքի համար իւր լերդ ու թոքը չէր խաշվում. ընդ հակառակը մի կարօտութիւն էր զգում նրա մէջը և սէրն աւելի կրկնապատկում դէպի նրան:

Մի բանը միայն շատ զգալի էր տիրուհուն. նա Վարդի մէջ առաջուան պարզութիւնը չէր տեսնում. առաջուան սէրը հիմա յարգանքի էր փոխել նա, էլ եղբայրաբար չէր վարվում կարապետի և աղջիկների հետ. էլ փառահաբար նանի չէր կանչում իրան. երբեմն տէրտէրակին էլ խառնում էր:

—Լաւ չես անում, Վարդ, քանի մի անգամ երեսը քորեց [2]) տիրուհին. ես քեզ ինձ երեխայ եմ շինել, քեզ իմ վանքը մատաղ տուած Ներսիսի տեղն եմ դրել:

—Շատ շնորհակալ եմ, տէրտէրակին, Աստուած քո վարձքն ընդունի, Աստուած քո որդիքը պահի, ես հիմի մարդ եմ, մարդ պտի իր չափը ճանաչի, մարդ պտի իր ոտն իր կարպետովը մեկնի. ես ի՞նչ արժան եմ կարապետ աղի հետ ոտս ձգեմ. ես պտի մի հաց ուտեմ, մինն էլ ձեր ուղուրին մատաղ տամ, լուսահոգի տէրտէրի գերեզմանի գլխին օրը հինգ անգամ պտի գամ. թէ չէ որ դուք չէիք էլել, ես հիմի օտար պատան մաշած կըլնէի: Գիտես ինչ կայ, տէրտէրակին, անջախ ես մի կտոր հալալ հաց

[1]) կալուածքի [2]) Ցանդիմանեց.

եմ ուտում, թէ որ մին էլ դու ինձ զօռ կանես, որ շատ չըանեմ, քո երեխեքանց հետ առաջուայ պէս վարուիմ. էլ իմ իզ ու թոզս [1]) չի մնալ ըստեղ:

—Լաւ, որդի, մեղքը քո շլինքը, արա ինչ որ քո կամքն ա. իմ սրտիցս էլ հօ չես կարող կտրիլ իմ սէրը քեզանից. ես երեխեքանցն էլ կասեմ, որ էլ քեզ զօռ չանեն, իրանց սրտումը քեզ սիրեն, թաքըլի [2]) դու իմ տանիցը ոտդ դուս մի՛ դնիլ:

Այնուհետև ոչ ոք Վարդին չէր նեղացնում, չէին ստիպում որ իրանց հետ նստի վեր կենայ, ինչպէս մինչև հիմա: Վարդն ընտրել էր իւր համար տէրտէրենց թանաքիին [3]) կպած փոքր սենեակն և էնտեղ էր հանգստանում իւր օրուան աշխատանքիցը:

Մի բան միայն շատ անհանգիստ էր անում Վարդին: Մի քանի տարի էր, որ Մանուշակին Ղևոնդը տարել էր տէրտէրենց տանից. նա այժմ պառաւ Սանդուխտ տատի հետ իւր հօր տանն է ապրում. ինչի՞ համար ուրեմն քնած թէ արթուն՝ Մանուշակն է իւր միտքը գալիս. ինչ կապ ունէր նա իր հօր սպանողի աղջկայ հետ, ինչի՞ պէտք է նա իր բարերարների երեխեքանցը թողած՝ իր թշնամու աղջկայ վրայ մտածի:

—Խեղճ աղջիկը տեսնես ո՞նց ա գլխանում իր դաժան հօրը, առաւօտնից ընչանք իրիկուն չորս պատի մէջ փակած ա մի պառաւի ումուդով, ոչ գեղի աղջիկէքն են նրա մօտը գալիս գնում, ոչ ինքը տէրտէրենց տունն ա գալիս. դորթ ա, քանի մեծանում ա, սիրունանում ա, համա ինքն առաւօտները ջրի գնալուս շատ անգամ նրա ճամփէն պահել ա, տեսել, որ աղջիկը, հէնց իմանաս, մի դարդ ունի: Այս մտքերը միշտ գիշերները հանգիստ չէին տալիս Վարդին:

—Տօ ինչ յիմարն եմ ես, երբեմն երբեմն ուզում էր ցրուել իւր մտածմունքները պարկած ժամանակը Վարդը, հօրս որդին հօ չե՛մ, շատ հարկաւոր ա՞, որ նեղութիւնի միջի ա, իր գլուխն էլ քարը, իր հօրն էլ. հերիք ա, գլխիս քամիները հանեմ ու գինջ քնեմ, ես լիսնակը դուս գալուս պտի գնամ արտը ջրելու: Բայց որտեղ. Մանուշակի անունը ցի՛ց էր դառել ջանը մտել, պատահում էր, որ շաբաթներով քունը չէր տանում: Ցերեկն էլ շատ անգամ իր

[1]) Հետք. [2]) Գէթ. [3]) Սրահ, կամ մեծ սենեակ.

գործին գնալուս, ինքն էլ չէր հասկանում, թէ ինչպէս եղաւ, որ ստեղծուեց Ղևոնդի գլուխը. չէր իմանում, թէ ընչի՞ իր ոտները չեն ուզում էս փողոցից շուտ դուրս գալ. ինքն էլ նկատում էր, երբ որ վաղ առաւօտը վեր էր կենում այգին գնալու և Մէլիքի բաղչի կողմն էր ծռվում առուի վերայ երեսը լուանալու. ինչ հարկաւոր էր իրանց ջրեցքը թողալ, վերև գնալ. բայց չէ, էլի անում էր, որովհետև Մանուշակն էնտեղ էր ջրի գնում:

Շատ էր դուր գալիս Վարդին գտակն այն քարի վերայ դնել երեսը լուանալուս, որին Մանուշակը ձեռը դէմ էր տալիս ջուր լցնելուս:

Մի քանի անգամ էլ պատահել էր, որ ինքն երեսը լուանալուց յետոյ վեր էր կացել յետ մտիկ տալու ու տեսել, որ Մանուշակը մի փոքր հեռու, գլուխը կախ՝ կուժն ուսին՝ սպասում է իր պրծնելուն, որ գայ ջուր լցնի: Նոյնպէս ժամանակը շատ մեղադրում էր ինքն իրան Վարդը, բայց չէր կարողանում յետ թողալ էս նոր ստացած բնութիւնը. դեռ նրա քամակիցն էլ գնում էր մինչև նրանց քուչէն: Մի անգամ էլ ուղիղ մօտ գնաց աղջկանը ջրցքի վերայ նստած ժամանակն և ասաց.— Թողա՞ս, իրեսս քո կշտին լուանամ: Մանուշակը գլուխը բարձրացրեց ու ամաչելով՝ ցած մտիկ տուեց ջրին: Քիչ մնաց յետ էր դառնում մեր քաջ Վարդն ու փախչում, բայց մէկ էլ ականջն ընկաւ աղջկայ ձայնը.— ես պըրծայ, հիմի արի լուացուի:

Փոքր առ փոքր, կարծես, Վարդի այցելութիւնները սովորական և ցանկալի դարձան աղջկանը. նա էլ էնքան հեռու չէր կանգնում Վարդը ջրցքի մօտ եղած ժամանակը՝ գալիս էր ու նրա կողքին կուժը ջրի մէջը կոխում, աչքի պոչով էլ մտիկ տալիս. մի անգամ մինչև այն տեղը հասաւ, որ ասաց.— մի՞տդ ա մեր երեխութիւնը, մեր անց կացրած օրերը. էրնէ՛կ էր էն վախտը:

Հիմա՛ ով երիտասարդ է, ում երակներում մի տաք արիւն կայ, թող խեղճ Վարդին մեղադրէ, թող մի քանի վավաշոտ [1]) բամբասող կնանոց խօսքերը չուանի գնի, որ ամէն մի քունջ ու պուճախում հաւաքվում են ու բան ու գործերը թողած՝ իմ ու քո վերայ խօսում:

[1]) Շատախօս:

— Աղջի՛, վա՛յ հողը հօրդ գլխին, բա՛ լսե՞լ ես ինչ կայ. էնղուր են ասել աշխարհքս քանի գնում, փչանում ա. ոչ ով իր ոտն իր կարպետին չի մեկնում. ասում են նահատակ—Նախրչի Մանուկի տղէն դեռ մի ոտը ձուից դուս չի դրել, դեռ տէր Ցարութիւնենց ծոխանքը [1]) լպստում ա՝ նրանց հօր խէրին, հիմիկուց Ղևոնդ աղի աղջկայ քամակիցն ա հոտհոտալով ման գալի. հողեմ նրա գլուխը, ասում են քշերն ընչանք լիս Ղևոնդենց քուչէքումն ա ընկած:

— Ի՞նչ ես դուս տալիս, ա՛յ գլխիդ մի անդրդենի [2]) քարափ ընկնի, քեզանից ինչ չի դուս գալ, խեղճ տղէն տէր Ցարութիւնենց յիքանիքը դրախտ ա շինել, քշերն էլ չի տուն գալիս. Սուսամբար տէրտէրընկանը հարցրու, տես քեզ ինչ կասի. ատամներս վեր ա թափում, ասում ա տէրտէրակինը, աղանչանք անելով, որ խեղճ եթիմ [3]) էնքան չարչարուի ոչ՝ ըլում չի. քշեր ցերեկ մեր յիքանոցիցը տուն չի գալիս, գլուխը մեր միքերի՝ մեր օճաղի ուզուրին յետ ա դրել:

— Չէ, աղջի՛, էն սուրբ Գէորգը վկա՛յ, տէրտէրակինն էլ ասխալ, ցերեկները, ղորթ ա, իրա գործին ա, համա քշերները Ղևոնդենց դռներին ա քաշ գալիս:

Ով ինչ ասի, իրաւունք ունի, մեր տղէն օր ըստ օրէ հալվում, մաշվում է. կարծես էն հրեշտակի կտոր Մանուշակն էլ բարակում, մեղրամոմ է դառնում, երկուսի մէջն էլ սէրն իր նետը ցցել է, իր զօրութիւնը գործ է դրել. իրանք էլ հիմա հասկանում են, թէ ինչն ընչի՞ն է: Արդարև, մի քանի անգամ Վարդն ինքն իրան մտածեց.— էս ինչ յիմարութիւն է իմ կողմից. առաջին՝ որ նրանք մեր արեանտէրն են, իմ հէրս նրա հօր ձեռքովը փչացաւ, երկրորդը՝ որ ես նրա հօր գոմը սրբելու էլ արժան չեմ. լաւն էն ա՝ թողամ հեռանամ. կամ թէ ես աղջկայ վրայ ուշք դարձնելու ի՞նչ ժամանակ ունեմ, ո՞ր պտի տանեմ, ընչո՞վ պտի կնիկ պահեմ. ինքս ուրիշի տան, ուրիշի դռան, ուրիշի հացի ումուտով. չէ՛, թթու ա՛յ ատամներս կանչին. թէ որ Ղևոնդը լսի, իմ բուրդս բարբրար կանի [4]), ըմբուլս [5]) քամուն կըտայ. լաւն էն ա՝ աշխա-

[1]) Ամանների լուացած ջուրը: [2]) Ահագին: [3]) Որբը: [4]) Կըբրդգզի: [5]) Փետուր:

տեմ իմ կորած հացը հալալացնեմ ու լխաւհոգի տէրտէրի հոգու համար տալօթք անեմ:

Այս մտադրութիւնը, համարեա, միշտ ցորեկները նրա գըլխումն պտոյտ էր գալիս, հաստատ վճիռ էր դառնում, բայց էլի գիշերը տան երես չէր տեսնում, ջրաղքներումն էր քաշ գալիս:

Մանուշակն ընդհակառակն ոչ ոքի բան չէր ասում, իւր և Վարդի մէջ ոչինչ զանազանութիւն չէր գտնում:—Ես գիտեմ, մտածում էր նա, որ իմ հէրս թէ լսի, մահի կըտայ ինձ, համա որ մեռնի էլ, ես Վարդին չեմ կարող չսիրել:

Ու ոք Մանուշակի վերայ բան չէր խօսում, նրա երեսը միայն իւր մի քանի ընկերուհիներն էին տեսնում մեղր հոխելուս, կամ ջրի գնալուս. նրանք էլ բան չէին գլխի ընկնում:

Մինը կար, որ ամէն բան պարզ տեսնում էր ու մի կողմից ուրախանում, միւս կողմից սիրտն այրվում էր: Սա պառաւ Սանդուխտն էր: Նա կամաց կամաց ուխտի կատարումը մօտեցած էր համարում:

ԽԵ.

«ՓԷՏԸ ՎԵՐՑՆԵՍ, ԳՈՂ ՇՈՒՆԸ ԿԻՄԱՆԱՅ:»

Ու տէրտէրակինն և ոչ Գէորգ խալֆէն կարողացան կտրել տիրացու Ներսէսին Էջմիածին ուղարկելու համար: Շաբաթ չանցկենար, որ Թաւանքչի չգար. ինքը Ղուկաս կաթուղիկոսն իւր ձեռքովն է նամակ գրել, Գալուստ եպիսկոպոսը յատուկ վարդապետ է ուղարկել, ոչինչ չի ազդում մեր անկատրում տղայի վերայ. ամէն մէկին էնպէս խօսքեր է ճակատին թխկացնում, որ էլ պատասխան չեն գտնում տալու:

— Տէրտէրի տղայ է, սև քարի հաց է կերել, շատ շնորհալի է, աւաղ է մարգարիտը ցեխի մէջ կորցնելը, ուրիշը լինէր, հոգ չէր, ինչպէս լինի մի հնարքով յետ ղրկի, ասաց մի անգամ կաթուղիկոսը Գէորգ խալֆին, որին յատուկ նորա համար էր կանչել:

— Ջօւով արջին կալ չեն լծիլ, ծառայեմ, թող մի ժամանակ մնայ, ձմեռուան ծխից ու աթարի [1]) մխից զզուի, գոմերի

[1]) Քակոր:

գարշելի հոտերը քիթը ծակեն, յետոյ օձով էլ որ կապես, կենալ չի:

Ջուր անցկացան ամէնքի յոյսն էլ, ձմեռն անցաւ և Ներսէսը դեռ Աշտարակ էր:

Սկզբումը բոլորից էլ հեռու էր փախչում նա, կամ ձորերումն էր քարշ գալիս, կամ Աշտարակու խաչքարները կարդալով էր անց կացնում օրերը. բայց վերջումը կամաց կամաց մարդահոտեց, մարդամէջ մտաւ ու իւր թայ ու թուշների [1]) հետ գոմերի օդէքանցումը ասուլիս էր անում:

Էս քաղցր մասլահաթները, էս ձմեռուան գիշերների երկարութիւնն անզգալի անողը մինչև էսօր մեր ջահէլների համար Շահ—Սանամի, Շահ—Իսմայէլի, Շահ—Ուսուփի, եօթը գլխանի վիշապների ու դէւերի առակներն են եղել, բայց այս ձմեռը Ներսէսը բոլորովին փոխել էր: Լեզուն էր պակաս, թէ շնորհքը, Աշտարակցի չէ՞ր, նրանց անլեզուն էլ ուրիշ տեղերի ճարտասանից աւելի լեզուանիկ է. Ջրաղացի չախչախը քեզ օրինակ, ոչ կըդադրին՝ ոչ կըլռեն, առածն ասել է 1000 խօսողը կը ճաքի, Աշտարակցուն 10 օր խօսացրու, ոչ ինքը կը դադրի, ոչ քեզ կը ձանձրացնի, մանաւանդ Ներսէսի պէս տղան, որի բնականի հետ արհեստականն էլ միացել է:

— Քեզ մատաղ, տիրացու ջան, դէ սկսիր, հաւաքվում են Ներսէսի չորս կողմը գիւղի բոլոր երիտասարդներն ու բերանները փակում, ականջներն և ուշքերը բաց անում:

— Բացուիր ուրեմն անսպառ աղբիւր, բղխէ քչքչալով ու փրփրալով քո անմահական ջուրը:

Սկսում էր մեր վանքի վախտական տիրացուն, վերարկուի փէշերը հաւաքելով, Աստուածաշնչի և ուրիշ գրքերի պատմութիւնները: Մակաբայեցւոց անցքերն և Վարդանանց քաջագործութիւններն էնպէս էին վառել մեր կրակոտ ջահէլներին, որ շատ անգամ մտածում էին մի օր վեր կենալ գնալ շրջակայ պարսից գիւղերը կրակ տալ կոտորել, աւերել ու մեր ազգի ու հաւատի թշնամիներին մեր երկրից բնաջինջ անել: Շահաբբասների տուած նեղութիւնները, հազարացւոց հալածանքները, Լէնկթէմուրների աւերմունքներն այնպիսի վրէժխնդրութեան ոգով լցրել

[1]) Հասակակիցների:

էին նրանից, որ եթէ էդ միջոցումը մի պարսիկ ձեռքերն ընկնէր, արիւնը կըխմէին, սիրտը կըծամէին։

— Տղէք, բաս էլ ո՞ւր ենք մենք աշխարհքի միջին ապրում, ո՞ւր ենք գտակ ծածկում գլխներիս, հագիր ¹) լաչակաւորուենք ²) որ Թուրքերին տեսնելուս ծակերը մտնինք. տօ բա մենք էն պապերի Թոռները չե՞նք, Վարդանի արնիցը սառն ա մեր արի՞նը, Վահան Մամիկոնեանի կտրը չե՞նք, գնանք Երևանը քանդենք, տափ ու տարազ ³) անենք, բերդն էլ՝ մզկիթներն էլ քամուն տանք, ղրաղումը կանենք։

Մեր Վարդն ամենքից աւելի էր կրակ կտրվում, ատամները որ կրճտացնում չէր՝ մի պարսկի անուն տալուս՝ լ՛ւքը Ներսէսն էլ էր գոռում։

— Ա՛յ դրանց անունը կտրուի, որ յանկարծ կըգոռար Վարդը, նրա խրոխտ ձայնի Թնդիւնիցը բոլոր լսողները Թափահարում էին, գոմը դղրդում էր։

Եթէ էլի Ներսէսն իր ճարտար լեզուովը չհանգստացնէր մեր կայպկլու դժերին՝ անպատճառ միւս օրը մի փորձանք կըբերէին գլխին։

— Չէ, ձեր ջանին մեռնիմ, աղբէրտինք, համբերում էք հէտոտեա տիրացուն, ես գիտեմ, որ ձեր ամէն մինը 100 Թուրք ա մի, մի բռնցքումը տասին կանշնչացնէք, բայց բղի գլխին բռնցքով տալը յիմարութիւն է, մենք պէտք է աշխատենք խելօքութիւնով բէդը ջարդել. շտապող Թաւլանը ⁴) որս չի անիլ, աշխարհքս խելօքութիւնով է կերել, համբերութիւնը կեանք է, շատին զիմացել ենք, քիչն էլ սպասենք. մի առուով որ մի անգամ ջուր է գնացել, էլի կերթայ. մենք մեզ պատրաստ պահենք, էս օր էգուց մեզ մի լոյս ու ճար կըլինի. երբ որ էդ օրը հասաւ, գլխներիցս ձեռք վերցնենք, արիւնն աչքներիս տակն առնենք ու ամէն մէկս մեր կարողութեան չափ օգուտ բերենք։

— Օ՛հ, տիրացու, դու ոնց ես, նալին էլ ես խփում, մեխին էլ. քո լեզուդ օձը ծակիցը կըհանի. ինչ որ ասում ես, մեր աչքի, մեր գլխի վրայ. որ օրը աչքդ ժաժ տուիր՝ քամակիդ կանգնած ենք, էնքան ըլի՝ որ դու մեր Վարդանը դառնաս, մեր մի քԹալ արիւնը քեզ փէշքեաշ, հայի խաթեր ուրախութիւնով կըԹափենք։

---

¹) Ահաւասիկ. ²) Կանացի շղարշ ծածկենք. ³) Բնաջնջենք. ⁴) Բազէ.

Ներսէսն ինքն էլ գիւղացի էր, նա գիտէր, որ միշտ միատեսակ վերացական պատմութիւնները կարող են ձանձրացնել մեր երիտասարդներին. նրանց սրտին հաճոյանալու համար երբեմն կասէր.— մեր տղէք, չանէքս ¹) բռնուեց խօսելով, մի քիչ էլ դուք ձեր գլխի եկածներից ասացէք, կամ թէ սիրուն աղջիկների պատմութիւններ արէք. դառնով փլաւն էլ ամէն օր ուտիլ չի ըլում, հարկաւոր է փոփոխել։

Այնուհետեւ սկսվում էին կատակներ և զուարճախօսութիւնները.— դէհ, մեր տղէք, ով որ պսակված իր մուրազին հասած ա, վեր կացէք, փասա փուսէքդ ²) քաշեցէք. դուք հիմի մեր ընկերը չէք, հանաք էին անում ազափները։

Այստեղ մէջ էին գալիս գիւղի ազափ աղջիկները։ Որի Թուխ Թուխ աչքերն էին մէկին դուրս գալիս, միւսի շէշակ ³) հասակն էր մէկէլի գլուխը ճկուելու յարմարում, երրորդին՝ ոչ ուտացնէին, ոչ խմացնէին, Թող տային այս ինչ աղջկայ երեսին գիշեր ցերեկ պելացած մտիկ տալ։ Մեր սեւերում կոլոլուած կուսակրօնի քիմքն էլ քաղցրանում էր.— տղէք ջան, էդքան քարասիրտ չէն ըլնիլ, հոգիներդ միտ բերէք, ինձ էլ խեղճ եկէք, էսքան ժողովրդին մի տէրտէր կըսազի. էդ հուրի-փարիներից ⁴) մինն էլ մեր դուռը ղրկեցէք, ես էլ քահանայ կըդառնամ, ձեզ կըհովուեմ։

— Դու իսկի ոչինչ չես խօսում, Վարդ, հարցնում էին մեր ազափները, ընչի՞ ողջոյնը վէր գալուս դու միշտ ուշանում ես, կէս գազ քինԹդ երկարանում ա. տնաշէն, բռնենք ⁵) տիրացու Ներսէսը մեզ գլխից ձեռք ա վերցնել տալիս, ջլէս ⁶) կտորուելու հօ չե՞նք, դուշմանի արինը Թափելուս էլ՝ Թէ որ մարդի սրտումը մուրազ ըլի, իր սիրեկանին միտը բերի, աւելի սրտով կըկռուի ու ղոչաղութիւնով կըմեռնի։

Ոչինչ չէր պատասխանում էսպէս ժամանակը մեր Վարդը, նա միշտ լուռ էր մնում ու Թէ որ լաւ մտիկ տալու լինէիր, մի քանի կաթիլ արտասուքներ էլ կընշմարէիր։ Մանաւանդ երբ որ Մանուշակի անունը յիշում էին, Վարդը միանգամայն մրրած երկինք էր դառնում։

---

¹) Ծնօտներս. ²) Եղած չեղածը. ³) Բարձր ու բարակ. ⁴) Յաւէրժահարսունքներ. ⁵) Գիցուք. ⁶) Բոլորովին։

— Աղջի՛ր, Մանուշակը հընկեր չունի, կանէր մինը, նա մի էնպէս եղալի թիքայ ա, որ ամէն մինս փիս շների պէս իրար ձեռից ուզում ենք խլել, ա՛յ ես նրա լիս երեսին մեռնիմ, նրա շարմաղ [1]) պռօշները ծծեմ, բերէք վիճակ քցենք, Աստուածածնայ կողմանէ ում ղսմաթն [2]) ընկնի, նա թող տանի:

— Չէ հոգի՛ս, բերէք էդ եղալի թիքէն իմ գզգզուած հոգուն բաժին հանեցէք, վանական եմ, կուտեմ ձեզ կօրհնեմ, ծլէք, ծաղկէք, պտուղ տաք, մի մին որդի էլ դուք մեր վանքին մատաղ տաք՝ կատակով մէջ էր ընկնում Ներսէսը:

— Ես ու իմ Աստուածը, հացը հացարարին տուր, մինն էլ աւելի, Մանուշակն էնպէս փշի տակի չի դուս եկել, որ մեր անշնորհք մատները կարենան էդ փուշը կտրել ու էն անմահական ծաղիկը քաղել. էլի մեր տիրացուն փարաջէն փշի գլխին կը փռի, կամ փուշը կրակ կը տայ, Մանուշակի հոտին կարժանանայ. բերէք սուտ գլխով սրան բաշխենք, ես նրա մանր ատներին մատաղ, ծիծաղելով պարզւում էր տիրացուին մի երրորդը Աշտարակու առաջին սիրունին:

— Ա՛յ տղայ, Վա՛րդ, քո տունը չքանդուի, չլուէլ հօ չես, դու էլ մի բերան բաց արա, մեր տիրացուի սիրտը լեզուով էլա շահի, բերանիցդ քրեհ [3]) են ուզո՞ւմ. խնայում ես թորսենց Ղևոնդի աղջի՞կը, թէ պատրաստ դրած ա քեզ համար, որ գնաս ու ճանդդ քցես. դորա համար էլ աչքդ չի վեր ունում. մի՛ վախիլ, քո քիսիցը [4]) ոչինչ չի գնալ, ես ու դուն էն մահկանացուն չենք, որ Ղևոնդի խնամաքարին [5]) նստենք. մի հանաք ա՝ անում ենք, քեզանից ի՞նչ ա պակսում. ասում ա. մէջի [6]) ծաղիկը շատ ա, համամարաներն իրար թաւազայ [7]) են անում. Մանուշակն էլ մեր մէջի ամէնքից ազնիւ ծաղիկն ա, մեր տիրացուն էլ մեր ամէնքից լաւ մաքալը. դու էլ մի խօսք խառջիր. ի՞նչ կըլնի.

— Է՛հ. ասում էր Վարդը, ես չեմ սիրում ջուրը հաւանդն ածել ու ծեծել. հերիք ա մասխարութիւնները, էս ճրագի ձէթն

[1]) Նազուկ. [2]) Վիճակուած լինի. [3]) Վարձ. [4]) Քսակ. [5]) Խնամաքար կոչվում է այն քարը, որ երբ թէ աղջկայ տիրոջ դուռը դրուած է եղել, ով որ այն քարի վերայ նստել է, նշանակում է նա եկել է տան տիրոջ աղջիկն ուզելու. [6]) Անտառ. [7]) Ընծայ.

ափոս ա կորչում, կամ խնդրենք տիրացուին, էլի պատմի լաւ լաւ բաներ, կամ ամէն մարդ գնայ իրանց տունը, քունս տանում ա:

— Շատ դրուստ ա ասում Վարդը, պնդում էին պսակուած ջահէլները, շատ քշեր ա անցկացել, գնանք քնինք:

Զրատար Վա՛րդ, մի նրա հետքը պահենք, տեսնենք թէ արդե՞օք տղայոց ցրուելուց յետոյ նա իսկոյն քնեց:

Այս օդէն, որ մեր ջահէլների ժողովարանն էր դարձել, Ներսէսենց էր. ծերունիքը Գէորգ խալֆենց օդումն էին հաւաքվում: Վարդը ձմեռն օդումն էր քնում:

Հէնց որ տղայքը կը ցրուէին, ձիթի ճրագը կը հանգցնէր, կամաց գոմի դուռը բաց կանէր ու նախունջին վրէն ձգած՝ մինչև լուսադէմը Ղևոնդի պատերի տակին կուչ կը գար: Լուսադէմին կը վերադառնար, տաւարի տակը կը սրբէր, կը չորացնէր ու առանց շոր հանելու, նախունջին գլխին կը քաշէր ու երազների մէջ կընկնէր:

Անցնում էր Ներսիսին էս կատակները — Մանուշակին պարգև տանալը՝ միայն զուարճախօսութիւններ ու հանաքներ էին թւում, բայց քանի այս գիշերները երկարատև եղան, այնքան նորա վերայ ներգործեցին: Հիմա՞ նա էլ երազներ է տեսնում. նա ոչ միայն գիշերը մինչև լոյս երազի մէջ էր նստում, ասում, խօսում, գգւում, ուխտեր անում Մանուշակի հետ, ցերեկն էլ, կարծես, մի քամի է ղփպել նրան, որը մի քանի անգամ Ղևոնդենց քուչովն անցնում էր:

— Շատ լաւ կըլնի, տղէք ջան, ես ձեր տուած պարգևին կաշխատեմ մի օր արժանանալ ու ձեր վրայ քահանայ դառնալ, պատասխանեց Ներսէսը մի գիշեր հաստատապէս երիտասարդների կատակներին: Ամէնքն էլ հանաք կարծեցին, բայց ափէտը վերջնես, գող շունը կիմանայ:

Էդ օրուանից Վարդը Ներսիսի մէջ իւր հակառակորդն էր տեսնում, սակայն ոչ մի նշոյլ չէր ցոյց տալիս:

ԽԶ.

ՑԻՇԵՆՔ ԿՐԿԻՆ ՄԵՐ ԱՆՑՈՒԿ — ՄՈՌԱՆՑՈՒԿ ԱՐԱԾ ՏԱԽՏԱԿԱԿԱՊ ԱՅՐՆԵՐԸ, ՈՒԽՏՆ ԵՒ ՈՒԽՏԻ ԳՐԱՒԱԿԱՆԸ:

Էլ յետ գարունքն եկաւ, էլի Մասեաց ալեոր գագաթի ստորոտն երիտասարդացաւ, էլի ձիւներն ու սառուցները պարզարակ աղ-

բիւրներ ու առուակներ դարձան և գահավիժուելով ձորերի միջերով՝ ապրուստի ճանապարհ խոստացան Հայոց աշխարհի թշուառ զաւակներին:

Էլ ո՞ր քարոմն ասես, ո՞ր ձորով, ո՞ր գետակովը, ո՞ր վտակովը՝ ջրերը կատաղած՝ ահեղագէղ փրփրաւորուած՝ ներքև են վազում: Ա՜խ, ի՜նչքան գեղեցիկ են այս տեսարանները. այդ փոքրիկ առուակներն աւելի զմայլեցուցիչ են, քան թէ շատ մեծամեծ նաւագնաց գետեր: Տեսնում ես մի սարի թմբին մի քանի կանաչ խոտեր, որոնք դիմացից ընկել է վրէն և խոտերի ամէն մի երակը, կարծես, արծաթեայ կամ բիւրեղեայ նկարներ լինին. ամէն մի տերեւն աստղալից երկնքի պէս ճքճքում է իւր վերայ ցօղած ջրի փոշիներից: Ակամայից զարմանում ես. ո՞ւր է այս ջուրը, ո՞ր տեղից է կազմուել այս գեղեցիկ տեսարանը. այդ մի փոքր կանաչ տեղից վերը բոլորովին անջրդի, իսկ ներքևը նոյնպէս քարափի կոյտեր են դիզուած. ճիշդ մի օազիս է այդ կանաչը ապառաժուտ լեռան թմբին:—Մօտ գնա և զմայլուիր բնութեան այս խաղերի վերայ. մի քարի տակից մի փոքր աղբրակ է բղխում և ջարդուելով ընկած քարի վերայ՝ յետ է խփում իւր կաթիլներն ու մշտահոս անձրև կազմում, ու այդ մի կտոր տեղը քարերի միջիցն էլ խոտեր յառաջ բերում. ապա կրկին միանալով մի ձորակի միջում, կրկին առուականում և գալար—մալար գալով՝ ներքև վազում ու աւելի չքնաղ պատկեր ներկայացնում:

Դեռ ոչ մի վրձին չի ստեղծուել, որ Հայաստանի բնութեան գեղեցկութիւնները պաստառի վերայ կենդանացնէր: Մի քանի տարի սրանից յառաջ՝ աշխարհիս տաղանդաւոր երևելի նկարիչներից մինը, Հայոց աշխարհի հարազատ զաւակ՝ Այվազեան Յովհաննէսը մեծ փափագով եկաւ, մօտեցաւ Հայաստանին և կիսաճանապարհին կանգ առաւ: Նա բաւականացաւ միայն Լեզգիստանի լեռներն ու Թիֆլիսի կանանց լեզգինկան [1]) ու դիմբլիպիտօն [2]) անմահացնել: Արդեօք կասկածեց նա իւր հայրենիքի բնութեան գեղեցկութեան վերայ, թէ զգաց իւր գրչի տկարութիւնը, որ անտես արեց Հայաստանը լուսաւորեալ աշխարհի հետաքրքրութեան առարկայ չինելու: Հարկ էր նրան մի քանի քայլէլ յառաջ գնալ, տեսնել գեղամայ

[1]) Պարի անուն է: [2]) Թմբուկ.

լճակի, Մայր Արաքսի, Հրազդանի, Մեծամօրի, Քասախի Վանայ ծովի և այլ անթիւ մանր ու մեծ լճերի հրաշալիքն և գետերի արած շրջանները. ի՜նչ ջրվէժներ, ի՞նչ խորախոր ձորեր, ի՞նչ անտառներ կը ներկայացնէր նա աշխարհահանդէսներում, քանի՞ բնագէտներ կը գրաւէր նա դէպի մեր հայրենիքը: Ափսոս, Այվազեանը մի մեծ պարտք ունէր կատարելու և թերի թողեց. աշխարհքն այսօր պարծենում է մեծաքանքար պարոնովն իբրև մարդ, իսկ Հայաստանը լալիս, կամ չգիտէ իւր այսպիսի նշանաւոր որդւոց գոյութիւնը: Մարդս պէտք է իւր մեծութիւնն իւր հայրենիքումը ցոյց տայ, որի մէջ պէտք է հաստատուած լինին նորա զօրութեան արմատները. իսկ հայրենիքից դուրս, որքան և երևելի, նորա արմատը հաստատ չի լինիլ, նա կը նմանի մի թոյլ եղէգան, որ կըկոտրուի ամէն մի փոթորկից: Կարօղ ենք արդեօք յոյս ունենալ, թէ հանրահռչակ տաղանդը կը կատարի իւր պարտքը:

Ահա այսքան սքանչելի է գարունը մեր սպարազդ հայրենիքումը: Ես չգիտեմ, կարելի՞ է համեմատել Ադամայ իմանալի դրախտը Հայոց աշխարհի գարնան հետ: Հետիր ինձ, ընթերցող, գնանք քեզ հետ գարնան երեք ամիսներին Աշտարակ, տես, ի՜նչ կենդանարար հոտ է բուրում, տես թէ ինչպէս գետ ձիւնը մի փոքր չալ ընկած [1]) տեղը մհասիլի պէս գարնան շունչը քեզ աւետում է խլոպուզը կամ ձնծաղիկը՝ աներեսի նման արհամարհելով իւր մօտի կիտուած ձիւնը, նրանից յետոյ արևկող տեղերում սէզն է քեզ բարևում, այնուհետև էլ ժամանակ չես ունենալ մի մի թուել. ձոր ու դաշտեր կանաչեղէններով, ծաղիկներով ու աղցաններով [2]) լցվում է

Էս ժամանակն է, որ արևը շարժվում է իմ փթած՝ ցժից ընկած՝ 100 տարեկան տանը մէջ, ո՞ւր մնաց այն ջահել պատաներերի մէջ, որոնք ձմեռուան պարգէկայ [3]) գիշերները իւրեանց խարերի [4]) դուռը կամ պատը թոնդրից տաք են համարում, կամ այն համեստ օրիորդների՝ որոնք մի բարակ չիթ մինթանով, առանց տաք մուշտակների, սողնակից ձեռքը դուրս են տանում և ժամերով թողնում իւրեանց սրտի առարկաների ձեռքումն. ի՜նչ աւել կուզէ, որ սրանք գարունը գալու պէս առանց կրակի եփվում, քքթում են:

[1]) Բացուած. [2]) Բանջարեղէն: [3]) Չոր ցուրտ: [4]) Սիրահար:

— Նանի՛ ջան, մեր հարևան աղջկներն իրանց բանջարքաղելը ղրկել են սրիլ տալու, էգուց ձորը պտի գնան, ինձ էլ թողաս ի՞նչ կըլնի:

— Աղջի՛, վա՜յ թէ մի բան պատահի ու հօրդ ձեռիցը պըրծնիմ ոչ, հօ գիտես, դաժանակի տակին լէնքս ու երկէնքս մին կանի:

— Ի՞նչ պտի պատահի, մամա՛ ջան, ձորը լեբը միջմի քարվանի պէս ժռվժում կըլնին: Ամեն ծնեփակը կէս գազ ծիլա քշել, կռանս պէս հաստ՝ դառան դմակի պէս կակուղ ու լսի պէս սիպտակ. երեկ տէր Առաքելնց Ցոլիթէն սալի [1]) մէջը դրած լուանում էր, տեսնողի բերնի ջուրը ծըծըլում էր:

— Ջանի՛ս մանիս, ջան պուտուտուրիա [2]), մի քնջում քրքչումեն երկու երեք աղջիկ, դուս եկան մեր տանձինի տալու [3]) օրերը, ըստուց յետոյ կարբու հանդ, Վարդանաբակ, Խնձերք, Սիբահողեր, Ծաղկեվանքի տակից բռնած՝ ընչանք Բերակնայ ձորերը, մեր տափ տակին կըլնին, հա կայ ու քաղէ, կապոցից մէջը լայըրուէս ի՞նչս.— սիբեղ, առուէինկարաս, պարոն բանջար, գառնանկաջ, թրթնջուկ, բոլի, երիցանուկ, կաթնալի ափնձը, բոխ, գարնան սունկը, լալագար ծաղիկ, Օխտն աղբօր կուան արին [4]), ես ի՞նչ գիտեմ, աչքդ ինչ կտրի: Ա՜հ, ինչ քէֆ կըլնի, դէ սարքեցէք, աղջկէք, ձեր ղեղարքեղը [5]); աչքներդ գեղ քաշեցէք, սիրունացէք, նոր նոր շորերդ հագէք ու ազատ տղէքանց սիրտը թլկտացրէք:

— Բալամ [6]) ջան, էն օրն ո՞վ չի սիրունանալ, ինչքան էլ որ գէշ՝ անշնորհք պատկերի տէր ըլես, արևի տակին փըշնում, վարդ ես կտրում:

— Աղջի, ես կամանչեմ, որ նայանեմ՝ գլուխս վեր չեմ քաշել, որ տղէքը մտիկ տան քարափների տակից:

Ը՜հ, հողեմ ծօծ կատարդ [7]), սաքի թէ դու գիտես էլ ոչ, որ քարի էս երեսին դու ես քո հընկեր աղջկայ հետ խօշ ու բէշ

[1]) Տափակ զամբիւղ: [2]) Ուրախ բացականչութիւններ են: [3]) Ըստոստալ: [4]) Բանջարեղէն և ծաղկունք են: [5]) Փոքրիկ երկայն ու բարակ բոլորակացրած սալր, որով աչքերը գեղ են քաշում: [6]) Հոգեակս: [7]) Դատարկ գլուխդ:

անում [1]), մի տղի ձէնը գալում, մէկէլի բօյն ու բուսաթը [2]) ու էն ահաթը՝ քեզ ու էն տղէքանցը էդ քարին ա բաժանում:

Ահա մի այսպիսի գարուն էլ բացուեցաւ Ներսիսի Աշտարակում եղած տարին: Մեր տիրացուն երբէք իւր կեանքումն այսպիսի երջանիկ գարուն չէր յիշում. մի մաքուր երեխայ՝ տարել վանքի չորս պատի մէջ՝ հագուստի հետ սիրտն էլ սևացրել են, նա աչքը բացել արևը ու փակուած կեանք, միմեանց վերայ բամբասանք, անմեղ պարզութեան բացակայութիւն, տխրութիւններ, աչքը փակելու և փախչելու արժանի անցքեր և այլ այսպիսի հոգեմաշ տեսարաններ են նրան շրջապատել, ի՞նչ ասել կուզի, որ այս գարնան մի օրը նա գերազանց էր համարում իւր վանքումը մաշած կեանքիցը:

— Ի՞նչ հարկաւոր էր 3000 ղուրուշը, որ ինձ առողջացնելու համար կաթուղիկոսն իմ վերայ փչացրեց, մտածեց նա, ընչի՞ պէտք է այսպէս գեղնած ու նիհար լինիմ և ոսկրներս երևան, քանի որ կենսատու, առողջարար օդն ու ջուրը իմ հօր դաշտն է: Ի՞նչ եմ ես, երբ համեմատում եմ ինձ մեր գիւղի բոլոր պատանիների հետ, — մի հաւի ձագ՝ մի արծուի առաջին: Թէպէտ երբեմնապէս ինքը ներքուստ միւս կողմից խոստովանում էր իւր մտաւոր գերազանցութիւնը իւր շրջականների վերայ, սակայն էլ տանջւում էր, որ չէր գտնում մէկին իւր հասկացողութեան համեմատ, որին կարողանայ սիրտ բաց անել, ասել ու լսել, բայց աւելացնում էր. — ի՞նչ կըլնէր, որ թէ մտքներս բանային և թէ առողջ ու պարզ կեանքի ու մարմնի մէջ կազդուրէին մեզ վանքումը: Մի՞թէ նրանք, եթէ ցանկանան, չեն կարող ամէն տեղ ուսումնարաններ բաց անել, ուսում տալ, մարդկանց էս խաւարից դէպի լոյս հանել, բայց որ չեն անո՞ւմ: Ե՜հ, հետևեցնում էր այս հարցին. ի՞նչ եմ կորցրել, ի՞նչ եմ պտրում, եղածն էլ որ պահեն, շնորհակալ պտի ըլնենք: Ա՜խ, էնքան չմեռնեմ, էս ժողովրդին լուսաւորեմ:

Այս բոլոր քամիները նրա գլխիցը թռչում, անհետանում էին, երբ իւր քամակը ձգած մի քանի աղաւնիներ, դաշտ ու ձոր չափում էր:

Խալերի ու երգերի արձագանքը Ներսիսի խմբի միջից ամբողջ ձորի խուռներն ու ծմակները բռնել էր. ամէն տեղից կարելի էր

[1]) Քաղցրախօսութիւն: [2]) Հասակն ու տեսքը:

ականջ դնել նրանց երգերին. աղջիկները հեռուից ճանաչում և զանազանում էին մէկի, կամ միւսի ձայնը:

Վարդը թէպէտ լաւ էլ տեսնում էր Ներսեսի մէջ իւր ախոյեանը, թէպէտ մի քանի անգամ Գլենդենց փողոցի մութ անկիւնում նշմարում էր նրա երկար Փարաջի քարշ գալն և ինքն էլ նրանից էր փախչում, թէպէտ լսել էր, որ Գլենդը մի քանի տեղ ասել է, որ եթէ տիրացուն վարդապետացու չը լինէր, ուրախութեամբ իւր աղջիկը նրան կըտար, թէպէտ այս ամէնը տեսնում էր Վարդը, բայց լեզուն բունն էր դրել, ու չտեսնել էր ձեւացնում և ակամայից իւր հակառակորդի հետ մօտ էր գալիս:

Մի երկու անգամ Ներսեսի ականջովն ընկաւ, որ Վարդը Մանուշակի քամակից մանէ գալի, բայց նա ասաց. աչքովս էլ տեսնեմ չեմ հաւատալ, առաջին՝ որ Վարդն իր չափը չի կորցնիլ, երկրորդ՝ որ Գլենդի աղջիկը նրան մարդատեղ չի քցիլ: Սխալուեցաւ մեր տիրացուն. եթէ նա սիրոյ թակարդի մէջ սխմուած ձեռաց չթողնէր իւր հեռատեսութիւնը և աչալրջութիւնը, նա գիշերները գող աղուէսի պէս ինքն իրան շուաքից խրտնած՝ չքաշուէր ու չփախչէր Գլենդենց քուչեցը, նա գուցէ կը տեսնէր ամէն գիշեր Գլենդի դռան տակի ստուերը, կամ թէ կը լսէր սողնակի ծակից էս խօսակցութիւնը:

— Էփ տիրացուն իր փարաջիցն ամանչում չի՞, ինչ ա սեւ ձիթ [1]) գառել, մաշկիցս [2]) կպել՝ պոկ չի գալիս. ինձ էլ թող հարցնի, տեսնենք ես իրան մռո՞ւմ [3]) եմ. շահզադայ [4]) էլ ըլի, ինձ հարկաւոր չի: Ես չգիտեմ, Վարդ ջան, թէ ընչի՞ եմ քեզ էնքան սիրում. մի՞տդ ա որ երեխութիւնից տէր Յարութիւնենց տանն ամէնից աւելի քեզ հետ էի խաղում. միտդ ա՞, որ Թորոսն ի՞նչքան էր ինձ աղանչաք անում, որ իրա կողմը պահեմ, ինչ որ ձեռն էր ընկնում, ինձ համար էր բերում, համա էլի ես իրան չէի սիրում. թէ որ Աստծուց ըլնէր, ընչի՞ պտի ընենց ըլէր. անմեղ քօռփէք էինք, բայց սրտներս իրար հասկանում էին:

— Ա՜խ, ես քո լեզուին մատաղ, Մանուշակ ջան, մեռնիմ սուրբ Կիրակոն, ի հարկէ Աստծու կամքը պտի կատարուի. համա էրնէկ կըլնէր՝ էս բանը չպատահէր, գլուխս քանի թշնամի կայ մեր

1) Կպրաձիւթ. 2) Կոշկից. 3) Ուշադրութիւն անել. 4) Շահի ժառանգ.

առաջին. քու հէրը որ իմանայ, ինձ էլ՝ քեզ էլ մաս մաս կանի, ինձ կրակը կըդնի էրի, որ ես քո տուի ընկնին էլ չեմ արժան ու իմ տուն իմ կարպետովը չեմ մէկնում. պէ ես ի՞նչ քարը տամ իմ գլխին, որ չեմ կարում՝ ինչ անեմ, ճակատիս գրուածիցը ո՞նց փախչիմ: Ա՜խ, թէ որ Սանդուխտ տատի ասածները գլուխ չպտի գան, շատ լաւ կըլնէր, որ դու ինձ ասէիր, որ ես իմ գլուխս մահի տայի՝ պրծնէի ամէնքի լեզուի տակիցը.

— Էն օրը երկու մեռել դուս կըրթար փէշիցը, պատասխանում էր Մանուշակը:

— Ի՞նչ էլաւ Վարդը, տղէք, հարցրեց գարնան օրերից մէկում էս խօսակցութիւնից մի երկու շաբաթ յառաջ Գոմշախրամի ցեբերի [1]) տակին տիրացու Ներսէսը. հէնց հիմի էստեղ էր, մի բայաթի [2]) ասիլ ասինք, թող աղջիկների սիրտը դող ընկնի: Նրա ձայնը մեր էջմիածնի մեծ զանգակից քաղցր է, լա՛ւ՝ որ տէրտէրի տղայ չի, ապա թէ ոչ, միայն իւր ձայնի համար ինձ պէս մի փոած տիրացու էլ նա կը լինէր:

— Վա՜րդ, Վա՜րդ, մի քանի անգամ ձայն տուեին մեր տղէքը, բայց միայն իւրեանց ձայնի արձագանքը յետ առան. սար ու ձոր լեզու եղան և ձայնում էին Վա՜րդ Վա՜րդ:

— Շատ մի՛ կանչէք, մեր տղէք, անօրինեց Ներսէսը, դուք տեսնում էք, որ քանի՛ ժամանակ է՝ նա ուրաթախօս է դառել, երեւի էլի իծանն [3]) եկել են, կամաց տուն է գնացել, մենք երգենք:

— Աղջիկքը բոլորն սրմացած մնացել են, լուր բերեց նրքեւից մի տղայ, Մանուշակն ու Սանդուխտ տատը քարերի մէջ աղցան քաղելու՝ մի հրոպէի մէջ գլումին էլէլ [4])՝ չկան:

— Պառաւը շատ պղտոմն [5]) ա, հալբաթ լաւ ծնեփակների տեղս գլխեցել, կամաց փասափուսքն քաշել հեռացել ա, գուշակեց մի ուրիշը:

— Աղջի, Մանուշակ, ի՞նչ էլաւ ձեզ, սրտներս ջուր մաղուեց, մենք հէնց իմացանք, թէ թուրքերը ձեզ տարել են. հարցրին աղջիկները, երբ երեկոյեան պահուն՝ յանկարծ երեւցան նրանք:

1) Ուրեր. 2) Որաձայն պարսկերէն երգի անուն է. 3) Այծերը. Այծերը գալ, նշանակում է խռովել. 4) Աներեւութացել. 5) Խորամանգ.

— Մոռնու ձորումն էինք, խօսքը խլեց պառաւ Սանդուխտը, և մի քանի ծնեփակի տեղ գիտէի, նրանց համար գնացինք, համ ինձանից գիտուններն էլ են էլել, քաղել էին:

— Մեր տղէք, էն ո՞վ ա Ջաղի ձորակի գլխին քարի վրայ նստածը, Վարդը չի՞, աչքը հարաւ դարձրած՝ նկատեց մի պատանի:

— Հէնց ինքն ա:

— Ո՞ր տեղ էիր, Վարդ, ի՞նչ էլաւ քեզ, բօղազներս պատռուեց քեզ ձէն տալով, հարցրեց Ներսէսը:

— Գլուխս շատ փիս ցաւ բռնեց, տիրացու, յետ դառայ որ տուն գնամ, բաղչի [1]) ծառերի շուաքը շատ դուր եկաւ, մի քիչ թէք ընկայ ու քունս տարել էր: Հէնց հիմի ձեր խաղերի ձէնիցը զարթնեցի, եկայ էստեղ նստեցի, ձեր ճամբէն պահեցի:

Եթէ, իմ սիրելի ընթերցող, յիշում ես Տախտակակալ աղբերումը Սանդուխտ տատի իր սանի հետ արած երկար ու ձիգ խօսակցութիւնը, Ոսկէ պատմութիւնը, Ոսկէ գրաւականը, դու իսկոյն կըհասկանաս, որ մեր կոյսի գիւղացին՝ մեր նախըշուն տղայ Վարդն իր ընկերների տակը ջուր կապեց, [2]) խաբեց, իսկ պառաւ Սանդուխտը՝ աղջանի գնացած հարս ու աղջիկներին:

Վարդն ու Մանուշակն այսօր նոր մարդ դարձան, նրանք հասկացան իրանց ապագան, նրանք կտրեցին իւրեանց մանկութիւնից մինչև հիմա գլխներումն անցածները:

ԽԷ.

ՈՍԿԻ ԿՈՃԱԿ:

Ոչքը խաղաղուել է, փողոցներումը մարդահոտ չկայ, ամէն բան խորին լռութեան մէջ է, ծառերի վերայ երբեմն երբեմն բուերն են ծվում ու լռում, առուի շըշըլոցը բաւականին հեռուից լսվում է, ցամաքային գորտերը դուրս են եկել իրանց խոնաւ բնակարաններից պատերի խոռոչներից ու ազատ թռչկոտումեն քուչեքումը. շատ հեռուից պարզ լսվում է շների հաչոցը, որոնք միասին հաւաքուած՝ գիւղի գլխովը պտտվում են, բնութիւնն էլ շատ հանգիստ է, ոչինչ բան չի վրդովում խաղաղութիւնը:

[1]) Պարտէզի. [2]) Տակը ջուր կապել նշանակում է խաբել:

Հէնց այս խորհրդաւոր րոպէին մի տան շրջակայքումն երեք գործողութիւն էր կատարվում:

Բակի դուռը կիսաբաց էր, ուղիղ շեմքի վերայ՝ երեսը դէպի բակը կանգնած է մի պատանի. նա գլուխը քարշ ձգած ունի, նրա շրթունքներն առանց ինչ ձայն պատճառելու փակվում ու բացվում են մի կրակի նման այրուող ճակատի վերայ, իսկ ձեռքերը դրկած ունին մի բարձրահասակ իրան՝ մի նազուք մէջք: Երկրորդ անձնաւորութեան մի ձեռը պատանու ուսումն է ձգած, իսկ միւսը, կողքիցը կախ: Սիրահարներն երկար ժամանակ լուռ մնջիկ դրութեան մէջ անշարժ կացած են:

— Իմ հոգիս, իմ կեանքս, ժամանակ ժամանակ մի շշուկ է լսվում պատանու բերանից:

— Իմ տէրս ու տիրեկա՛նս, իմ գլխիս թագ ու պսակը, նոյնպիսի անլսելի պատասխան է դուրս գալիս երկրորդի բերանից:

— Ի՞նչ պտի լնի մեր վերջը, ո՞ր կերթայ բէնց, շշնջում է մինը:

— Սպասենք, յոյներս չկտրենք, ոգևորում է միւսը:

— Տուտ արա, այ ճար կտրածի աղջի՛կ, բարի գիշեր ասա, հերիք ա, քնելու վախտն ա, ուրիշները հիմի հինգ հետ երազ են տեսել, առանց էն էլ հալուել մաղես դառել, այ իմ աչքերը դուս գան. ներսից դուռը բաց է անում և չուզելով արգելք լինել, կամ ամաչացնել երկու սիրահարներին, կամաց կանչում է մի պառաւ:

— Հէնց հիմի՛, հէնց հիմի՛, տատի ջա՛ն. դու գնա շորերդ հանի թէք ինկ, ես գալիս եմ, աղաչում է ձայնին երկրորդն ու աւելի պինդ փաթաթվում իր սիրեկանին:

— Ո՜վ լխամթամթախ սուրբ Կիրակի, երեսս ուրիշ տակը, խաչ է հանում տատը, դու շուտ վրայ բերես էն բաղդաւոր օրը. ես էլ էս ա ոսս գերեզմանի շեմքումն ա, մի տեսնիմ՝ ու յետոյ հանգիստ հողը մտնիմ. թէ գժոխքն էլ գնամ՝ էլ դարդ չեմ անիլ էն վախտը:

— Ցիմա՛ր իմ գլուխ, ուրեմն ճշմարի՞տ է եղել լսածս, ուրեմն սա՞ է տիրած եղել Աշտարակ գիւղի աղէգ ծաղկի սրտին, ու ես չեմ հասկացած եղել, փոքր ինչ հեռաւորութեան մէջ՝ մի անկիւնում կանգնած՝ աստղերի լուսով դիտում էր երկար միջոց վերոգրեալ անցքերը մի լայնաքղանց երիտասարդ ու վախելով, որ

չմտնում իւր սրտի բարձր բաքախունից, վերարկուի փէշերը բարձրացրած՝ յետ յետ էր գնում նա և հեռանում շտապաւ:

— Հա՛, ուղիղ է ասած՝ թէ ամէն բան պառաւ կախարդներից կը ծագի. էս մըմռուղ [1]) պառաւն երկու անհաւատար սրտերը միմեանց մօտեցրել է. հիմի ես հասկանում եմ, թէ ընչի՞ սա մի օր ինձ ասաց, թէ քեզանից մեր աղջկներն անբաւական են, որ դու առաւօտները ջրաքների վրայ մտնես գալիս, չես թողում խեղճերին ջուր լցնեն. ուրեմն սա ուզեցել է սրտերն իրար հետ սիրահարացնել իմ ոտս կտրելով: Շատ լաւ է եղել, աշխարհս դժան մարդը դանակ, կարողացել է իր անփորձ անզգամ ինձ արածացնել ձեռքի մէջ տեղիցն է եկել. թէ ես մարդ եմ՝ իմ գործս յառաջ կըտանիմ, թէ չէ՝ թող գնայ ու պարծենայ:

Այս պատմածները գուցէ շատ պէտք է շարունակէր մեր երկայնամէջը, աննպատակ փախչելով երկու սիրոյ մրափով թմրած պատանիներից, եթէ յանկարծ այս տան քամակի միւս պատի տակին մութը տեղումը նրան չզարթեցնէին մի քանի շարժուն շուքներ:

Ինչպէս մի սառը ջուր ածեն մեր Փարաջանովի գլխին, անցեալը բոլորը մոռացաւ, խոկոյն ուշքի եկաւ: — Դաւաճանութիւն է, վճռեց նա ու իրան ձգեց պատի շուքը:

Երեւում է միւսները ոչինչ չհասկացան, մի փոքրիկ շրջան կազմած՝ խորհրդի վերայ էին:

— Ձեզ մատաղ, քաջեր, պարզ լսեց մեր փախստական սիրացուն խմբի միջից մէկի ձայնն և ճանաչեց, ամենքիդ էլ լաւ խաղեթներ կայ, ինչպէս որ ճանապարհին ձեզ սովորցրի, ոչինչ չմոռանաք, մի՛ վախէք, համարձակ մտէք բակը, դուռը բաց է, մէհտարները [2]) գիտութեամբ խոր քնի մէջ են մտած, մէկդ պառաւին կապեցէք, վեր քցեցէք, միւսդ՝ աղջկանը: Երկուսի բերանն էլ էնպէս փակեցէք, որ շունչները չկտրուի. քնթի ծակերը չբռնուին: Պառաւի հետ շատ նալ ու դուզ [3]) չի հարկաւոր, աղջկայ զգուշութիւնը չկորցնէք, չվախեցնէք, ասեցէք՝ որ իր հէրն Երեւանումն իրան ուզել է: Ես քուչի գլխին ձեզ կսպասեմ, որ ճանապարհը չկորցնէք. էնքան ըլի՛ որ առանց ձայն ու շփոթի ձորը հասցնէք, կամինջի տակին ձիանքը պատրաստ սպասում են:

---

[1]) Խորամանգ. [2]) Ջրապտտները. [3]) Զգուշութիւններ.

— Աւելորդ է, Ղարաբէշէ՛շ, բերանդ բաց չարած՝ միտքդ հասկացանք. էդ մեր գործն է, Թագէն [1]) գիտի, թէ աղուէսին ո՞ր ծակից կը հանի, ողջ գեղն էլ որ վեր կենայ, որսը մեր ճանկից չի կարող խլել:

— Դէ գնացէ՛ք. ա՛յ, էն մթնումը սպիտակին տուողն է Ղևոնդի դուռը:

Տէր Մելիքսէթը մատով ցոյց տուեց թուրքերին ու ինքը շտապաւ քաշուեց դէպի քուչի ծայրը:

Փարաջանովը շլթոփուել էր, ինչպէս անի, ինքն էր չէր հասկանում:

Երկու սիրահարները վերջապէս շատ դժուարութեամբ միմեանցից բաժանուեցան. աղջիկը դեռ դուռը չէր փակել, գլուխը հանեց դրան արանքից, մի վերջին հայեացք էլ ուզում էր ձգել իւր սիրեկանի քամակից. յանկարծ դուռը յետ հրուեցաւ և երկու օտար ձեռներ իրան բռնեցին:

— Հէնց սա է, շուտ աղլուխ հանի՛ր, բերանը կապի՛ր, ասաց նրանցից մէկը իւր ընկերին. բայց այս գործողութիւնը ուշ կատարուեցաւ. աղջիկը սաստիկ ծղրտաց ու շնչասպառ փռուեց իրան բռնող գրկի մէջ:

Քանի մի քայլ հազիւ թէ հեռացել էր պատանին իւր սիրուհուց, սուր նետի պէս ծակեց նրա սիրտն աղջկայ ձայնն ու յետ դարձրեց:

— Ո՞վ էք դուք, գոռաց նա ամպի նման չարագործների վերայ և մէկին բարձրացրեց գլխի ծայրն ու թօփի նման խփեց գետնին, միւսի կանեցն էլ որ ձգեց, հակառակորդը կարծեց, թէ կուռը պոկուեցաւ: Առանց ընդդիմութեան բաց թողեց ձեռքից աղջկանն ու իւր ընկերի վերայ ձգուեց:

— Ճրա՛գ, Սանդուխտ տատի՛, ճչաց պատանին պառաւին:

Պառաւը նոր էր ուզում շորահան լինել, անկողին մտնել, որ Մանուշակի ձայնը լսեց ու շապկանց դուրս թռաւ:

— Քեզ մատա՛ղ, վարդ ջա՛ն, վա՛յ գլխիս, էս ինչ պատահեց:

— Ճրագ հասցրո՛ւ, ասում եմ:

---

[1]) Բարակ որսի շուն.

— Խանչալս հանում, անօրէն, պառաւի բերած ճրագի լուսով տեսաւ Վարդը Թուրքերից մէկին, երբ նա մօտացած նրանց, գրկել էր անշնչացած աղջկանը ու մոլորուած կանգնել: Ես քեզ ցոյց կըտամ խանչալ բռնացնելը, գոռաց Վարդն ու ձախ գրկումն աղջկանը հաւի ձագի նման սեղմած՝ աջ ձեռքով մի այնպիսի բռունցք իջեցրեց Թուրքի քներակին, որ նրա աչքերը ջուր մաղուեցան, խանչալը կիսահանել մնաց ու ինքն էլ դիակի նման իր ընկերի կողքին տարածուեց:

— Դու էլ շատ ուշքի չես գալ, քեզանից էլ վախ չկայ, թող քո հընկերն էլ քո հացին ուտի [1]) ու մենք մեր ցաւը քաշենք. մի աքացի էլ միւս Թուրքին հասաւ. նա էլ մի փոքր շարժուեց ու մնաց:

Այնպէս շուտ կատարուեցան այս գործողութիւնները, որ մեր Փարաջաւորը դեռ նոր սթափեց իր շփոթմունքից: Նա էլ իր բարակ ձայնը փողոցի մէջ ձգեց, մի երկու դուռը սաստիկ ծեծեց ու ընկաւ Ղևոնդի բակը:

— Հասի՛, տիրացու Ներսէս, գոռաց Վարդը, ջուր հասցրու, խեղճ աղջիկն ուշաթափուել ա:

— Ջուր, Սանդուխտ տատի՛, մեքենաբար կրկնեց Ներսէսն և ճրագը պառաւի ձեռքից խլեց, մնաց կանգնած:

Թէ ի՛նչ տպաւորութիւն արեց մեր կուսակրօնի վերայ այս տեսարանը, չգիտեմ, բայց կարծեմ, նա այս րոպէին շատ կըցանկանար, որ Վարդն էլ Թուրքերի կողքին անշունչ ընկնէր, ու ինքը նրա տեղը կարողանար այնպէս համարձակ երկու ձեռքի վերայ բռնած տուն տանել էն հրեշտակին: Սակայն երբ կարժանանայ միանձնութեան ուխտաւորն այդ երջանկութեանը: Սանուշակի փակուած աչքերի, նրա դալկացած երեսի վերայ անմահութիւնը խնդում ծիծաղում էր, իսկ Ներսէսի աչքերը սևացան. նրա ոտք ու ձեռքը դողացին, երբ որ մի փոքր յետ բացուած շալկի տակից աչքովն ընկաւ մի ձիւնի նման սպիտակ լանջ: Մեզ յայտնի չէ, Թուրքերն էին կորել աղջկայ շալկի ոսկի կոճակը, թէ առաջուց մի անընդդիմադրելի զօրութիւն վստահացել էր մօտենալ այդ նուիրական փականքին ու կոճակն ինքն իրան յետ էր գնացել:

---

[1]) Նոյն հացից ուտել նշանակում է մի և նոյն վիճակին ենթարկուել

Թէ մինը և թէ միւսը՝ Ներսէսը կարողացաւ դուցէ իր կեանքումն երազում չտեսածն առաջին անգամ բաց աչքով մի խաւար ձիթաճրագի շնորհիւ տեսնել:

— Բռուանամ ես, դուս գան իմ աչքերը, ջուրն աղջկայ երեսին սրսկելով կանչեց պառաւը, երեխս դօշը բացուել ա, ասաց նա ու շալիկը վրայ քաշեց:

Մինչ այս, մինչ այն՝ տունը բազմութիւնով լցուեցաւ, բայց ոչ ոք ոչինչ չհասկացաւ:

— Թուրքերին բռնեցէք, տղէք ջան, չփախչեն, ձայն տուեց Վարդը տուն լցուողներին ու տան միջին ցած դրեց արդէն ուշքի եկած Սանուշակին. բայց ոչ ներս մտնողները և ոչ ինքը Վարդը ոչ մի Թուրք չգտան: Նրանք խելքի էին եկել ու գլուխ առել կորել:

— Շտապեցէք ձորը, Թուրքերի ձիանքն այնտեղ կամրջի տակին են, աշխատեցէք տէր Մելքսէթին բռնել, նա էլ նրանց հետ է, նրա սարքած բաներն են, ես իմ ականջովս լսեցի, տնօրինեց Ներսէսը:

Բայց մինչ մերոնք ձի կընստէին, կամ ոտքով ձորը կիջնէին, չարագործներն իրանց բանը տեսել էին. նրանք Ուլատխիկ կոչուած բլրակի քամակով ճանապարհից ծռանց էին ընկել ու աճապարել դէպի Երևան:

Ոչինչ բանով չկարողացաւ կտրել Ներսէսը տէր Մելքսէթի կնոջը. նա մկրատի պէս անկոտրում մնաց ու պնդեց, որ իր մարդն երեք օր է Ղևոնդի աղի հետ Երևանումն է:

— Թող տուէք կորչին, որդի՛ք, հրամայեց Գէորգ խալֆէն, ես վաղուց գուշակում էի, որ մի օր սատանայ տէրտէրը Ղևոնդի գլխին մի փորձանք կըբերի: Փառք Աստուծոյ, որ անվնաս ազատուեցաւ աղջիկը գայլերի ձեռքից, բայց երանի թէ վերջինն ըլնէր:

ԽԸ.

ԿՌՈՒԱԾԱՂԻԿ:

Առաջին անգամն է պատահում, որ Վարդն ու Ներսէսն իրար հետ գնան ու չխօսին: Ոչ մէկի բերանից մի ծպտուն չի դուրս գալիս, պռօշ պռօշի չի դիպչում: Ուրիշն, եթէ տեսնէր, կըկարծէր, որ նրանց մի անբաղդութիւն է պատահել. գլուխները

քաշ ձգած՝ Ներսէսն առաջ է ընկել, Վարդը քամակից հետեւում է։ Նրանք գալիս են Գէւոնդի բակից։ Նրանցից ամէն մէկը ուզում է խօսակցութեան տուտը բռնել անց կացած դէպքի մասին, բայց ոչ ոք չի ուզում ինքն սկսել։ Վարդը սպասում է, որ Ներսէսն սկսի, իսկ սիրացուն էնպէս մրրած, ամպած է, որ կարծես քարէ կարկուտ պէտք է թափի. փոքր մնաց, որ ամպի որոտոցն աշխարհքը սասանացնի, բայց էլի երկնքի բարկութիւնը նստեց ու առանց կայծակի անցկացաւ։

Վարդը տեսաւ, որ սիրացուն շատ է թնդուած, գժուած եղի նման փնչոցի ձայնը քաշի լռութիւնը խանգարում է, ուզեցաւ ինքը խօսք բաց անի. նա հաստատ չգիտէր, սրդիքը տեսե՞լ է Ներսէսն իր և Մանուշակի այցելութիւնը. էդ պատճառաւ էլ վախում էր ունքը շինելու տեղ՝ աչքն էլ հանի. լաւն էն ա, սպասեմ թող ինքը բաց անի, մտածեց նա. սխալ ընչանք երբ պտի թագուն մնայ, բալքի երբ որ սա իմանայ, թէ Մանուշակն ինձ բուլթայ ա տուած, խեղճ գայ ու ձեռք քաշի, բալքի իր հօր տան իմ կերած հացին խնայի. սիրտս, քաղցրացաւ՝ քաղցրացաւ. թէ չէ կը քարանայ հօ, ես էլ իմ գլխեցածը կանեմ։

— Հը՞մ, չափ ու ձև էր անում իւր մէջ սիրոյ նետերով մխուած կուսակրօնը, աշխարհքիս բանը տես, էնդուր են ասել. շատ գիտեցող աղուէսը ջուխտ ոտով թակը [1]) կընգնի. ես մի տարի է այս գիւղումն եմ ու ոչինչ չեմ շինել իմ հօր որդիութիւնովս, իսկ սա մի նախրչու աղջի՝ մեր հացովը մեծացած՝ կարողացել է Գէւոնդի նման մարդի աղջկայ սիրտը գողանայ. ո՞ր ենն իմ աչքերը, որ առաջուց չտեսայ և չարգիլեցի սրան, հիմի էլ ի՞նչ պտի անեմ, բանը բանից անցել է. էլ ես չեմ կարող սրան համոզել, որ յետ կենայ։ Իրաւ է, ամէն բանում սա ինձ լսել է և կըլսի իւր գլուխը մեր համար կըդահի, բայց սիրոյ ու սրտի դէմ ոչ ոք չի կարող հակառակել։ Պէտք է փորձել, սկսեմ համոզել, եթէ լսեց՝ շատ լաւ, իսկ եթէ ոչ՝ էս օրուանից մեր մէջը կռիւ է. ով յաղթի՝ նա տանի։ Թող մեր երկուսից մէկը կործանուի այս յաղթանակին հասնելու ճանապարհի վերայ։ Գիւղի բոլոր աղաւնիների համար Մանուշակը մի կռուածաղիկ է, որ բուսած է դժուարամերձ ժայ-

[1]) Որոգայթ.

ռերի միջին, օձերն ու ժժմունքները շրջապատած են այդ կռուածաղկին. հաստատ գիտեմ, որ Գէւոնդի գազանական բնութիւնը ամէնքին էլ վախեցրել է, մնացել ենք ես ու իմ հոգև—եղբայրս՝ հօրս հողեգաւակը՝ նախրչի Մանուկի տղէն։ Մի կողմից ծիծաղելի է էսպիսի մի անոյեանից վախենալ, միւս կողմից ես զգում եմ, որ շատ երկիւղալի հակառակորդ ունիմ. վախում եմ այնպէս լինի, որ էս կռուածաղիկը բուսած տեղը թառամի ու ոչ մէկիս չհասնի։

— Բարի գիշեր, տիրացու, վերջապէս ասաց Վարդը, երբ նրանք հասան տէր Ցարութիւնենց դուռը։

Վարդը գարունքուանից քնում էր Գալուստ եպիսկոպոսի այգումը, որ մինչև էս օր էլ դանէ դուռը հարևան է տէր Ցարութիւնենց տանը։

Ներսէսը կամ չլսեց, կամ չլսելու տուեց։

— Բարի գիշեր, տիրացու, ձայնը բարձրացրեց Վարդը։

— Չէ, Վարդ, ես տուն չեմ գնում, գնա վաղ է, ես էլ քեզ հետ այգին եմ գալիս, քունս չի տանում, մի փոքր խօսինք։

Նրանք երկուսն էլ մտան այգին։

Շատ ու շատ է մեզ նկարագրել Աշտարակու բնութեան գեղեցկութիւնները, որոնց մի գլխաւոր պատկերը ներկայացնում է Գալուստ եպիսկոպոսի, կամ ինչպէս հիմա կոչվում է, Վանանց այգին։ Քասախ կարկաջասահ գետակը քարափներին դիպչելով, ձիւնի նման սպիտակ փրփուրների կուտակներ կազմելով վազում է Վանանց այգու տակովը։ Լայնատարած և անդնդախոր ձորն իւր մէջն առած Քասախին, նրա դղրդոչիւնի դղրդիւնը գիշերուան գերեզմանական լռութեան մէջ՝ ամէն երաժշտութիւնից քաղցր է հնչում մարդու ականջին։ Ոչ մի մայր չի կարող այնքան քաղցր օրօր ասել իւր երեխային, ինչպէս մեր ձորակն իւր մտերքը քնողին։ Այս ձայնին անծանօթ չէին ոչ Ներսէսը, որ իւր մանկութիւնից սովոր էր գետակի օրօրին և ոչ Վարդը, որ մեծացել էր Ներսիսի ծնած տանը։ Այդ էր պատճառը, որ մեր պատանիները չզբաղուեցան գետի կախարդիչ ձայնովը։

Նստել էին նրանք բաւական ժամանակ ու ամէնքն իւրեանց մտքի հետ էին։

— Գիտես ի՞նչ կայ, Վարդ, վերջապէս սկսեց Ներսէսը, դու ու չես անում՝ ես ամէն բան տեսայ։

— Քեզ մատա՜ղ, տիրացու, էդ բանը մի՛ ասիլ։

— Երեխայութիւն է, ամէն մարդ իւր տան իւր կարգադրութիւնն պէտք է անի. դու ո՞ւր, Ղևոնդն ո՞ւր:

— Էդ ես հասկանում եմ, համա բանը բանից անց ա կացել:

— Արի, յետ կաց էդ ճանապարհիցը:

— Հիմի էլ շատ ուշ ա:

— Դու իմանում էիր, որ ես էդ աղջկայ համար եմ աշխարհքի մէջ թուք էլել, վանքը թողել:

— Դու ինձ ոչ մի օր չես ասել:

— Հիմի ասում եմ, Մանուշակին ես պտի առնիմ, տէրտէր պտի դառնամ:

— Էդ հանաքով ասած խօսքեր են:

— Հանաքը չանաք ա դառել: 1)

— Ի՛նձանում աւելի բէթար, 2) յառաջուց պտի ասէիր:

— Ես ի՞նչ գիտէի, թէ մարդ իր չափը չի ճանաչիլ:

— Սէրն ածարիցն ա կպել: 3)

— Ես գիտեմ, որ դու օգուտ չես դուս տանիլ, բայց աղջկայ անունը մի մասը մեղը կը չինես. Ղևոնդը քեզ էլ իր աղջկանն էլ 1000 կտոր կանի, նա քեզ մի չօփ 4) չի տալ, որ աչքդ կոխես:

— Էդ ինձ լաւ յայտնի ա:

— Էլ ի՞նչ ես ուրիշի ճամփին քար քցում:

— Ջուր ես երկարացնում, տիրացու, ես գիտեմ, որ դու աղջիկ առնողը չես, դու ինձ սիրելով ուզում ես հեռացնել իմ անխելքութիւնիցը, համա ձեր տան աղուհացը վկայ, էլ կարալ չեմ. ես Մանուշակին սիրում եմ. մի ճար ունիս, տես, մի դուռը սարվցրու ինձ:

— Ես էլ միևնոյն աղուհացովն եմ հաւատացնում քեզ, որ հանաք չեմ անում, ես էլ Մանուշակին սիրում եմ ու հաստատ գիտեմ որ Վարդն իր մեծ եղբօր խաթեր ձեռք կը քաշի իր որդի սիրեկանից:

— Քեզ մատաղ, տիրացու, մորթի, քերթի, գլուխս կորի, հրամայի էս բարափիցը վեր ընկնիմ՝ աչքիս վրայ, կանեմ. համա էդ բանն ասիլ մի՛. ես կը մեռնիմ, որ մի օր Մանուշակին չտեսնիմ:

1) Հեգնութիւնն իրողութիւն է դարձել: 2) Վատթար: 3) Արտաքոյ իմ կամքի է եղել: 4) Ծղօտ:

— Բաս ես չե՞մ մեռնիլ:

— Դու ինձ պէս չես սիրել, շատ փախտ ա, որ գլուխս իմս չի:

— Ընչի՞ միտդ չես բերում, որ նա քո հօր արէնտէրի աղջիկն ա:

— Էդ ա ցաւն է՞, համա որ էլ ըլել չի՞, իմ ճակատին էլ ըսէնց ա գրած էլել:

— Արածդ յիմարութիւն է, Վարդ, հանաքը յետ կենայ, ինձ հետ վէճ մի՛ մտնիլ, իմ հարսնացուի անունը մի՛ կտրել, իմ աչքը չի վերցնում:

— Ես գիտեմ, տիրացու, որ իմ ապրուստը ձեզանով ա, գիտեմ, որ ձեր արևի մատաղ եմ ապրում, ձեր մեծ ու պստիկ կոխած տեղն ինձ համար սուրբ ա, գիտեմ, որ իմ առաջի պարտքն ա գլուխս ձեր համար մատաղ անել, համա՝ տիրացու ջան, ինչևիցս հանիլ մի՛ ձեր մի կտոր հացը. լաւն էն ա՝ էս սհաթիս վեր կենամ, դանակն առնես մորթես, քանց թէ ասես Մանուշակիցը ձեռք առ:

— Ախար դու ընչի՞ ինձ չասեցիր, որ մաքումդ էդ յիմարութիւնը մտաւ:

— Ի՞նչ ես ասում, աղբէր, դու հէնց գիտես էս օրս՞ ա, միտդ չի՞ մեր երեխութինը, մեր խաղերը, միտդ չի՞, որ Մանուշակն աւելի իմ դիհն էր պահում. ես ի՞նչ գիտէի, թէ էդ դարդակ խաղերը հիմի պտի աչքս հանեն, անչուան 1) ինձ իմ հօր սպանողի դաւանը դուլ չինեն, ես ի՞նչ գիտէի, թէ Ղևոնդ աղի աղջիկն իրա հօր գզրի տղի վրայ աչք կունենայ. համա երեի Աստուածանից ա, էլել պրծել ա. էլ սրանից յետոյ ինձ ու Մանուշակին բաժանողն առաջ պտի մեր հոգին առնի. դրախտ ու դժոխք երկուսիս համար մին պտի ըլնի: Ես քանի՞ հետ մտածել եմ սիրտս քո առաջին բաց անել, համա անտէր ըլի էս երեսը, մսից ու արնից ա, որ կարմրում էր, թողում չէր, ես ի՞նչ մեղաւոր եմ:

— Վարդ, երեխայութիւն մի՛ անիլ, եղբայր, ինչ օգուտ՝ որ Ղևոնդը քեզ աղջիկ չի տալ, ասում ա. էն ծառին կուռդ մեկնի, որ կը հասնի. ես քեզ չեմ մեղադրում, երեխութեան խաղերը մեծ ժամանակն էլ քո և Մանուշակի վրայ ներգործել են, Մանուշակն էլ մի աղջիկ՝ չի կարացել միտք անել, թէ էս բանի տուտն

1) Առանց պարանի:

ուր կը հանի, բերել էս տեղն է հասցրել: Ես .հիմի քեզ խորհուրդ եմ տալիս, Վարդ, արի ինձ լսիր, քանի ձեր սէրը նոր է՝ հեռացիր մի քանի ժամանակ Աշտարակից ու ինքն իրան կը սառչի, գնա՛ օտարութիւն, ու կը տեսնես, որ կամաց կամաց սրտիդ փուքը նստեց. աչքից հեռու, սրտից հեռու: Մի քանի տարուց յետ կը գաս՝ քո տիրացուին տէրտէրացած կը տեսնես, Մանուշակին էլ տէրտէրակին դառած:

— Ա՛խ, տիրացու, էդ բանը մի՛ ասիլ, շատ ուշ ա, տեներս կը թիլանան ու Աշտարակից դուս չեն գնալ:

— Ինքան խաթր [1]) չունի՞մ քեզ մօտ:

Կրակի մէջ ընկի՛ր՝ կը գնամ, համա Մանուշակից հեռանալ չեմ:

— Մանուշակին ես պտի առնիմ, ես. ականջիդ բուրդը հանիր [2]):

— Էդ անկարելի ա, քանի իմ շունչը գնկիս ծէրին ա, Մանուշակն ուրիշի կնիկ չի դառնալ:

— Քո գլուխդ է նա մտցրել էդ յիմարութիւնները, նա ի՞նչ է հասկանում, նա հօր կամքից չի դուրս գալ:

— Սխալ ես:

— Դու նրա երեխայական խոստմունքների վրա՞յ ես յոյս դնում, կին արմատը փոփոխական է, նրանք կամք չունին. էս օր քեզ «հա՛» կասեն, էգուց ուրիշին:

— Մանուշակը քո ասածներիցը չի:

— Ես ասում եմ մօրս կամքովը լինի, թէ չէ այսօր Ղևոնդն ուրախութեամբ ինձ աղջիկ կը տայ. և գիտե՞ս որ աղջկայ մազերից քարշ տալով կը պսակի:

— Մ՝էնակ նրա լաշը [3]) նաշի [4]) մէջ դրած՝ դուս կը տանին դպա Թօրոսենց գերեզմանները:

— Տօ՛, գիտե՞ս, որ Ղևոնդը եթէ ձեր միջի սաղութրագն իմանայ, մոխիրդ քամուն կը տայ:

— Ի՞նչն էլ իր աղջկանից կը զրկուի:

— Վարդ, ձեռք քաշի՛, ասում եմ:

— Ջեմ կարող:

[1]) Պատիւ: [2]) Լաւ լսիր: [3]) Դի: [4]) Դագաղի:

— Դու գժուել ես, խե՛լքդ յետ ա տուել, գրի բանատեղ ես դառել, չես հասկանում ի՞նչ և ո՞ւմ հետ ես խօսում:

— Էս օրուանից խելօք ոչ մի օր չեմ էլել:

— Մեղա՛յ քեզ տէր, տօ կորի՛, հեռացիր, ձեռք քաշի՛ խալխի աղջկանիցը:

— Դու հեռացի՛, վանականինը վանքն ա:

— Դու համարձակուիս ինձ էդպէս բան ասե՞լ:

— Խօսքը խօսք ա դուս քաշում:

— Դու ինձ սպառնալի՞ք ես տալիս:

— Մտքովս էլ չի անց կացել:

— Իսկ ես զգուշացնում եմ քեզ, որ այսուհետև Ղևոնդի աղջկայ վրայ աչք չունենաս:

— Իմ խելքս իմ գլխիս ա:

— Դու փորձանքի մէջ կընկնիս:

— Մանուշակի համար ամէն բան աչքիս տակն եմ առել:

— Ի՞նչ դառաւ էդ աղջիկը քեզ համար:

— Երկուսիս մէջ մի կ ռ ո ւ ա ծ ա ղ ի կ:

— Հետս կռուելու միտք ունի՞ս:

— Ջէ, ո՛վ ղօչաղ ա, թող նա քաղի էդ կռուածաղիկը:

— Էս օրուանից ես քո թշնամիդ եմ:

— Վերկաց, էս հրապէին դանակ քաշի՛, բօղազս կտրի՛, բան չեմ ասիլ, գլխիս վրայ իրաւունք ունիս, համա գիտցած կաց, որ էլի՛ Մանուշակը քո ձեռը չի ընկնիլ, նա իմ բուլթէն [1]) ա:

— Էդ քամիքն ո՞վ ա գլուխդ մտցրել:

— Սուրբ Կիրակին:

Տեմինք, ասաց Ներսէսն ու տեղից վեր թռաւ՝ առանց բարի գիշեր ասելու գնաց տուն:

— Ղ՝որթ որ կ ռ ո ւ ա ծ ա ղ ի կ ես դու, Մանուշակ ջան, երեսը դէպի Ղևոնդենց տան կողմը դարձնելով մտածեց Վարդը, էս խօսքը դեռ շատ ջուր վեր կունի, ափսո՛ս, որ գիտացիս մարդն իմ գլխի տէրն ա, համա ի՞նչ անենք, Աստուած էլածն օրհնի:

[1]) Նախասահմանեալ սիրահար:

ԽԹ.

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՈՒԽՏԱՒՈՐ:

Յունիս ամսին՝ մի քաղցր և զով առաւօտ՝ արեգակը դեռ նոր մի քանի ճառագայթներ սփռել էր Արագած լեռան հիւսիս—արևելեան կողմի կանաչների վերայ ու լուսացնցուղ ցօղը ցամաքեցնում գոյնզգոյն հոտաւէտ ծաղկների վերայից, որ երեք ձիաւոր՝ նախունջիները ծածկած՝ Արագած սարը շրջվում էին դէպի հիւսիսային երեսը: Նրանք ոտից գլուխ զրահաւորուած էին, նրանց երեսը կարմրել և կոշտացել էր. ինչպէս երևում էր, ամբողջ գիշերը ճանապարհորդել էին: Նրանցից երկուսը մէջ էին արել մի ձիաւորին ու երբեմնապէս այդ մէջ տեղի գնացողի քամակից նախունջիան դաշոյնի ծայրով բզում էին: Ինքը ձիաւորն էլ մի մին իւր քամակին բըթում էր կռնատակից:

Ամէն մի անգամին սրա նախունջու տակից մի ձայն միշտ կրկնում էր.—Ես մեռայ էս տեղ, հէնց իմանում էք, թէ ոտ ու ձեռս որ կապած ա, թէ ուզենամ՝ կարալ չեմ ինձ էլ ինձ պահողին էլ ձիուցը վէր քցի՞լ. համա էլ քանի՞ սուս կենաք, ասէք տեսնիմ, ինձ ո՞ւր էք տանում, կամ ո՞վ էք դուք, ինչի՞ ջուղաբ [1] չէք տալիս:

Էս ձայնը միշտ անպատասխան էր մնում:

Երբեմն նախունջին իւր տիրոջ հետ թափահարվում էր. փորձ էր անում, որ ձիաւորն իւր միջքին կապածի հետ վայր ընկնէր, բայց խանչալի ծայրն էլի հանդարտացնում էր լղուր նեղացնող խորհրդաւոր անձնաւորութեանը:

—Ա՛յ, ասաց վերջապէս միջին ձիաւորին առաջին գնացողը՝ Արագածի միւս երեսին՝ մի խոտաւէտ տեղ կանգնելով. էլ այսուհետև երկիւղ չկայ, վէր գանք, մեր ձիանքը կշտացնենք, առաւօտեան նամազն էլ անենք ու ճանապարհ ընկնենք. էն է մօտենում ենք սահմանին, մի քանի ժամից կը հասնենք:

Թուրքերը, որոնց հեռուից տեսնողն իսկոյն կը ճանաչէր իւրեանց հագուստի ձևից, որ Երևանու խանի Փարրաշներիցն էին, կանգնեցան. երկու ադամներն իջան, իսկ երրորդի վերայից զգուշութեամբ հանեցին նախուջին:

[1]) Պատասխան:

Հիմա պարզ կարող ենք տեսնել, որ մի բարձրահասակ, լայնաթիկունք պատանի աչքերը պինդ կապած՝ ոտքերը ձիու փորի տակին ամրացրած՝, ձեռքերն էլ Փարրաշի կողքերին պատած՝ պարանով կաշկանդած էր:

—Հայի տղայ, դարձաւ պարսիկներից մէկը դէպի կալանաւորը, մենք քեզ ազատ պէտք է թողնենք այստեղ. եթէ փախչելու ջանք անես, խանչալը սրտումդ կըցցեմ:

—Աստուած վկայ, էնքան ըլի, որ ասէք, թէ ինձ ո՞ւր էք տանում, դառան նման հնազանդ կըլնիմ:

—Դէ յետ արէք, տղէք, տնօրինեց մէկը, բայց զգուշութիւնը ձեռից մի՛ թողնէք, առաջ ձեռները պինդ կապեցէք միջքին, մի օղակ էլ շինեցէք վիզն անցկացրէք, որ փախչելուս քաշենք խեղդենք:

Խեղճի խորհուրդը հաւանել էր. գլուխն դրեց կանաչ խոտի վերայ ու աչքերը բաց արին:

Էս ժամ հազիւ նրա աչքերը լոյս տեսան:

—Էս ո՞ւր տեղ ենք, տղէք, հարցրեց նա.

—Ալագեազ սարի միւս երեսին, Շորագեալումն, բայց թէ ինչի համար, այդ յետոյ կիմանաս:

—Էլ աւելորդ ա շատ զգուշութիւն, ասաց գերին պարսիկներին, երբ նրանք հանգստանալուց յետոյ կամենում էին առաջուան նման կաշկանդել. ես ձեզ խօսք եմ տալիս, որ հանդարտ կենամ, թաք ըլի [1]) ինձ ասէք իմ գլխի եկածը. միտս չի, թէ ինձ ո՞նց բռնեցիք, ո՞ւմ հրամանով, կամ թէ հիմի ո՞ւր էք տանում:

—Թէպէտ սա հայ է, մէջ մտաւ Ալին, համա հայերի միջին էլ լաւ մարդիկ կը լնին, ես տեսնում եմ, որ սա լաւ տղայ պէտք է լինի. թողէք սրա ձեռները յետ անենք, ես իմ թարքին [2]) կը նստացնեմ. և եթէ մի բան պատահի, ինքս եմ պատասխանատու:

—Մենք խանի Փարրաշներիցն ենք, սկսաւ Ալին իւր պատմութիւնը տղային, երբ նա արձակ նստեց սրա թարքին. դու ինձ չես ճանաչում, բայց ես քո քաջութիւնդ անձամբ փորձեցի. մի՞տդ է անցեալ գիշերը Ղևոնդ աղի տան բուռնցքը, որ հասցրիր նրա աղջիկը փախցնողներից մէկին, ձեռդ տուր, ես ցոյց տամ գլխիս վերայ ընկուզի չափ պօպոզիկը [3]):

[1]) Միայն թէ: [2]) Գաւակ, յետևը: [3]) Ուռուցք:

Վարդի աչքերն արիւնով լցուեցան երբ իմացաւ, թէ իւր սիրուհին փախցնողը հիմի էլ իրան է տանում. մին մտածեց մի բռունցք էլ նրա քամակից հասցնել ու Մահմետի արքայութիւնն ուղարկել, մին էլ խոհեմութիւն գործ դրեց. — տեսնենք, ասեց, տակիցն ի՞նչ ա դուս գալիս:

Այնին մի առ մի պատմեց Վարդին, որ իրանք տէր Մելքսէթի թելադրութեամբն են եկած եղել, թէ տէրտէրն Երևանից դրանց առաջնորդել է, թէ նոյնպէս զատարկաձեռն իմիասին դարձել են նոյն գիշերը Երևան և թէ հիմա էլ մի և նոյն Ղարաքէշիշի ու Գևոնդ աղի կամքովն են իրան տանում:

— Մենք պէտք է հասցնենք քեզ Օսմանցու հողն և յետ դառնանք, շարունակեց Այնին, բայց թէ ընչի՞ համար, ի՞նչ թշնամութիւն ունէին քեզ հետ Գևոնդ աղէն ու Ղարաքէշիշը, էդ դու պէտք է իմանաս: Քո կեանքի վերայ էլ մեզ իշխանութիւն այն ժամանակն է տուած, երբ դու ընդդիմութիւն գործ կը դնես: Եթէ Ղարաքէշիշի կամքը կատարուէր, դու հիմի պիտի սպանուած՝ մի փոսի մէջ ընկած լինէիր, բայց էս բանումը Գևոնդ աղի սիրտն աւելի քաղցր էր. նա մին համաձայնեց քեզ սպանելուն, մին էլ երկար միտք անելուց յետոյ՝ չյօժարուեց: — Էնքան ըլի, պատուիրեց, որ Ղզլբաշի հողից դուրս տանէք, թող գնայ ապրի:

— Ինձ ի՞նչպէս բռնեցիք, իմ տեղս ի՞նչ գիտէիք:

— Էնի Ղարաքէշիշը ցոյց տուեց: Երևանից մենք բոլորս երեկ երեկոյին եկանք, Գևոնդ աղէն պատուէրները տալուց յետոյ գնաց իւր տունը, իսկ Ղարաքէշիշը մեզ առաջնորդեց դէպի ձորաբաշը. դու քնած էիր, քեզ կապեցինք, ձիու վրայ դրինք ու ճանապարհ ընկանք: Ի հարկէ լաւ ուզում էիր գոռալ, բայց բերանիդ խցկած թաշկինակը ձայնդ փորումդ թողեց:

— Եթէ ես դաղրած չըլնէի, եթէ երեկ սաղ օրը տէր Յարութիւնենց այգին ջրում չըլինէի, ես հիմա էստեղ չէի լինիլ, բայց էլ ի՞նչ կօգտի:

— Վա՜յ իմ հոգուն, ես միտք էի անում, թէ տիրացու Ներսեսի սարքած ցլիններն են, որ ինքը Մանուշակին առնի, համա նա լռի պէս արդար ա էլել, մտածում էր Վարդը Այնի լռելուց յետոյ, էլ էն երկու գազաններն են իմ արինս ծարաւած էլել: Համա շատ լաւ, ասենք Գևոնդ աղէն իրաւունք ունէր. նա չի ուզում էսօրէն էգուց ինձ իրան փեսայ տեսնիլ, հէնց էդ մտքովն էլ հօրս գլուխը

կերաւ. տէր Մելքսէթն ի՞նչ թշնամութիւն ունի հետս. ես նրան ի՞նչ եմ արել: Բանն էն տեղն ա հասել, որ տէրտէրն ուզեցել ա ինձ սպանել տայ, Գևոնդը չի թողել:

— Բա դուք էն գիշերը Գևոնդ աղի աղջկանն ո՞ւր էիք ուզում տանել, հարցրեց կէկին Վարդն Այնուն, Գևոնդ աղէն ինքը գիտէ՞ր էդ բանը:

— Նա ոչինչ չգիտէր: Ղարաքէշիշը Գևոնդ աղից թագուն ուզեցաւ նրա աղջկանը փախցնել. մեզ հրամայած էր Փառաշբաշու հարամխանէն տանինք [1]), զարաւաշին [2]), յանձնենք, որ Գևոնդ աղէն ոչինչ չիմանայ. էդ Ղարաքէշիշն ու մեր Փառաշբաշին շատ դոստ [3]) են: Ֆառաշբաշին մէկէլ օրը Գևոնդ աղին տարաւ որս գառնու սարը, մենք Ղարաքէշիշի հետ եկանք Աշտարակ: Ես դրսիցը լսում էի Փառաշբաշու ու Ղարաքէշիշի խօսակցութիւնը, ասաց Այնի. Ղարաքէշիշն ուզում էր Գևոնդին սպանել տայ, որ ինքը մենակ լինի խանի աչքի լոյսը:

Էլ ոչինչ չխօսեցաւ Վարդը. նա մտածմունքների մէջ տատանւում էր. ամէն բան թողած՝ նրան տանջում էր Մանուշակի զրկութիւնը:

— Հիմի գնա, Աստուած քեզ հետ, ասացին Վարդին Փառաշները, երբ որ Օսմանցու սահմանը մտան. թէ խելք ունիս, քանի Գևոնդ աղէն ու Ղարաքէշիշը ողջ են, աչքդ յետ չը դարձնես, ախպեր ես, ջիվան [4]) ես:

Այժմ Երեւկեան տաճկաստանի հայ գիւղերից մէկում՝ մի տան հիւր էր մի օտարական Աջամի հայ, որ ինչպէս ինքն ասում էր, սուրբ Կարապետ ուխտ էր գնում:

Մենք դրան ճանաչում ենք, դա մեր ջրատար հալածական Վարդն էր:

Ծ.

«ՍԻՐՏՍ ՄՈՒՓՐԱՑ ՁԻ, ԱՄԷՆ ՏԵՂ ԲԱՆԱՄ:»

— Հ՛ը, դայի [5]) Վարդան:

— Հա՛..

[1]) կանանոց: [2]) Հարճ: [3]) Բարեկամ: [4]) Գեռահաս: [5]) Քեռոյին:

— Դուք էլ.
— Մենք էլ:

Այսպէս էին ասում երկու շաբաթ միմեանց հանդիպելուս Աշտարակու երիտասարդների խմբերը:

Էլ ոչ ձորեր մնացին, ոչ քարափների խոռոչներ, ոչ գետերի խոր լճեր, ոչ այրեր ու ծառուտներ, որ այս երկու շաբաթը մեր տղայքը Գէորգ խալֆի հրամանով եղ ու մուտ չանէին, աղուէսի ծակերը փորստղ մտնում էին ու «Վարդ» էին ձայն տալիս. շրջակայ գիւղերը ոտնատակ էին տուել, անց ու դարձ անողներ չէին թողել, որ հարցրել էին, Երեւանու բաղերից բռնած՝ մինչեւ Մասիսի տակը ձիաւորուել էին՝ ու մի տեղ հետքը չէր կար: Ողջ գաւառն իմացաւ Աշտարակից մի խլիթ ¹) տղամարդի աներեւութանալը, տեղից վեր կենողը ցաւում, ափսոսում էր: Ամէն գլխից մի խօսք էր դուրս գալիս. մինը ջրումն էր խեղդում, միւսը քարափներումն էր ցած գլորում, երրորդը՝ սատանայական զօրութեամբ մի կողմը տարուած էր հաստատում ու մի քանի այդպիսի օրինակներ էլ իւր ասածին ապացոյց բերում, մի չորրորդը՝ սպանած թաղած էր համարում, բայց ոչ մէկն էլ հաստատապէս ոչինչ չէր կարողանում ասել. էլի ուսերը վեր էր քաշում և «Աստուած գիտի» խօսքն աւելացնում:

Քանի՜ քանի անգամ Գէորգ խալֆի մտքովն անց էր կենում, որ Ղեւոնդի ու տէր Մելքսէթի լարած որոգայթը պէտք է լինի, բայց էլի տարտամ դրութեան մէջ էր մնում:

— Չէ՞ որ նրանք Վարդի կորչելու երեկոյին Աշտարակ չէին ու Երեւանից երկու օր յետոյ եկան և լսելով շատ ցաւեցին. տէր Մելքսէթն ինչ տեղ նստում էր, մինն ու ափսոսը բերանից չէր կտրում. մէկէլ՝ որ ինչ թշնամութիւն պէտք է ունենար նա մի աղքատ տղի դէմ: Էլի Ղեւոնդն ուրիշ բան էր: Գէորգ խալֆին յայտնի էր, որ նա գիտի իւր կնոջ ուխտն և չի ուզում կատարել. պառաւ Սանդուխտը բոլորն նրան ասել էր:

— Համա դրանց բաները սատանէն էլ չի հասկանալ, աւելացնում էր Գէորգ խալֆէն. Ներսէսն երդում ա ուտում, որ իր աչքովը տեսել էր էն քշերը Ղեւոնդի աղջկանը փախցնելուս տէր Մելքսէթին ու անկաջովն էլ լսել էր Թուրքերին տուած

¹) Քաջ.

պատուէրները, համա Ղեւոնդը չի էլ ուզում հաւատալ.—Ես մի ահալթ, ասում ա, տէր Մելքսէթին աչքից չեմ փախցրել. երկու տէր Մելքսէթ հօ չկա՞յ, հօ կարող չէ՞ր մէջ տեղից երկու կտոր ըլել, մի մասն իմ կշտին կենար, մէկէլը Աշտարակից աղջիկ փախցնէր: Մէնակ, ասում ա, մի օր եմ ես Փարրաշբաշու հետ որս գնացել ու մթնով յետ եկել, էն քշերը նրա տանը քնել. էն էլ լոյսը չբացուած՝ աչքս բաց եմ արել, տեսել, որ տէր Մելքսէթը քնաթաթախ մէկէլ օթախիցը դուրս եկաւ: Մենք որ եկանք որսատեղից, Փարրաշներն ասեցին, որ Ղարաքէշիշը միւս օթախումը քնած ա: Էհ, մտածում էր Գէորգ խալֆէն, դրանց էլմը Փէլմն ¹) ոչ ով իմանալ չի:

— Ի՞նչ էք ասում, այ տնաքանդներ, պատասխանում էր Ղեւոնդը, երբ որ նրան ուզում էին հաւատացնել, որ իր աղջկանը փախցնողը տէր Մելքսէթն էր, հազիր ասէք, որ շան լակոտ Վարդն ա էլել, հազիր ասէք, որ աղջիկս ծղրտալուս երբ որ տիրացու Ներսէսը վրայ ա հասել ու նրա կռանը փռուած տեսել, նա ինքն ա սարքել, որ Թուրքերի ձեռիցն ազատեց. թէ չէ ինչպէս էլաւ, որ մի Ադամայ որդի չտեսաւ Թուրքերին:

— Ներսէսին էլ չես հաւատո՞ւմ, որ իր աչքովը տեսել, անկաջովն էլ լսել ա ամէն բանը:

— Աղուէսի վկան իր պոչն ա, շունը շան միս ուտել չի::

— Սանդուխտի՞ն ինչ ես ասում:

— Է՛հ, պառաւն ինչ ա իմացել, մէն էլ էն ա տեսել, որ աղջիկն ուշաթափ Վարդի ձեռի վրայ ընկած ա. թէ որ նա լաւ տղայ էր, կէս քշերին իմ դռանն ինչ բան ունէր, որ Թուրքերին հանէր:

— Նա ինքն ասում էր, որ հանդիցն էր գալիս:

Ի՞նչ էք գլխս դիլի աւետարան կարդում, ես իմ աչքին ու Փարրաշներին աւելի կ՚հաւատամ. երկու տէր Մելքսէթ չկայ, ձեզ ասում եմ, որ իմ աղջկանը փախցնողը Վարդն էր՝ որ կար: Երբ որ բանն աշկարայ էլաւ, փասափուսէն քաշեց, մի դհով ²) կորաւ. շատ էլ խնլօքութիւն արեց. առանց էն էլ, ես որ գայի՝ նրա մահն էր:

Ղեւոնդն ասում էր, տէր Մելքսէթն էլ վկայութիւն էր տա-

¹) Խորամանգ հնարքները: ²) Մի կողմով:

լիս։ Կամաց կամաց դրանց օրինակին շատերը նմանեցին։ Մենք գիտենք, որ պառաւների բերնումը սխալ չէր թռչուել, վաղուց Վարդի վրայ իրանց մտքները սարքել էին։

Օրերի հետ Վարդի անունն էլ մոռացուեցաւ, պառաւներն էլ յուսահատուեցան սառեցան. ամէնքն էլ ձեռները լուացին և կարծես էլ ոչ ով չէր հոգում։ Իրաւունք էլ ունէին. ամէն ջանի իր շալինն է մօտիկ կպած։ Նախրչի Մանուկը չկար, որ երկաթի տրեխներ հագնէր, արարած աշխարհքը խախալտակէր [1]), ջաղացի բօղազէցը դուս քաշէր իր որդուն, բերէր էնտեղ կանգնացնէր. Շուշան քուրիկը չկար, որ ամէնքի տները ջուր անէր խմէր, օրն օխտը հետ երեսը սուրբ Սիւրակէի ու սուրբ Գէորգի դռների հողին քսէր, պաս ու ծոմ պահէր, որ գուցէ ամէնքի սիրտն էլ գութ ընկնէր, երկրէ երկիր ընկնէին, իր աչքի սև ու սպիտակին՝ թէ որ սաղ ա, սաղ բերէին, թէ որ, Աստուած ոչ անի, գլուխը մի բանի ա եկել՝ ոսկոռները տոպրակի մէջ ածած իրան հասցնէին, որ իր չորացած գլուխն էնքան վեր հատէր էն ոսկոռներին, մինչև ինքն էլ իր բալի կուշտը գնար ու յետոյ մի աստուածասէր բանդայ [2]) երկուսին մի պատանի մէջ դնէր։ Ո՞վ ունի խեղճ Վարդը, այ նրա մօր փորը ջուր կտրէր ու ըսկի արշայ [3]) չգար։ Էսպէս էին խօսում մի քանի պառաւներ իրար հետ. դաշտումը 1000 տեսակ ծաղիկ կայ, նրանցից մինը պոկես ո՞վ կիմանայ։

Բայց դրանք սխալվում էին։ Իրաւ է, ձայնը հանդարտեց, իրաւ է, արտաքուստ Վարդի անունը դադարեց, իսկ ի ներքուստ նա այնպէս շուտ մոռացուած չէր. սրտեր կային, որ նրա համար ցաւում էին, աչքեր կային, որ ուռել կարմրատակել էին։ Սուսամբար տէրտէրակինը Վարդ կանչելուս, քթիցը ծուխը դուրս էր փչում. նա ինչպէս միշտ իրան մեղադրողների մօտ արդարանում էր, հաւի ճուտ չէր կորցրել, աչքի լիս էր քաղել, ջան էր քանդել Վարդի վրայ. զորթ ա՛ պարկել ծնել չէր, համա շապկի միջիցը դուս էր քաշել, նրա մատը մնած փուշը՝ իր աչքի մէջն էր կարծել. Վարդը նրան լաւ որդու համ էր տուել. նա իր Ներսիսի փոխարէնն էր, նա իր տան սներից մինն էր։ Էլ ոչինչ բանով մեր տէրտէրակինը ոչ ինքն էր մխիթարվում, ոչ իր երեխեքանց կերածն էր հալալ անում.

¹) Մաղել ու որմնել. ²) Ընձնի. ³) Երևան.

Ներսիսին հօ, կրակն էր գնում էրում. — քո մեղքն էր, որ Աստուած իմ առաջը բերեց, թէ որ դու վանքիցը փախչէիր ոչ, էս զուլումն [1]) իմ տան գլխին գալ չէր։ Գէորգ խալֆին օրը տասն անգամ էր աղաչում. Խորիշան խանումին դադար չէր տալիս, որ ինքն էլ մի կողմից մարդին խնդրի, պառաւը ձեռքից չթողնի։

— Ի՞նչ անեմ, տէրտէրակին, Վարդի գլուխը թէ որ վերն ըլէր, ինչանք հիմի պտի լիս ընկնէր, ջահէլների մէջն էլ հալ [2]) չը մնաց, ձիանոց տների նալներն էլ մաշուեցին. սաղ Երևանայ երկրումն էլ քունջ ու պուճախ չմնաց՝ քաշ եկան խեղճերը, որ գտան ոչ, ո՞վ ա մեղաւոր. ասեղ հօ չէր. սրանք էլ մարդ են, ամէն մարդ էլ իրա ցաւն ունի, կալ ու կտի վախտ ա, ամէն մարդ մի բուռն ապրուստ ունի, հօ կարալ չէ՞ նաղըն [3]) տալ, պտի հաւաքի. ես ասում եմ, չըլնի՞ թէ Ղևոնդի աղջիկը փախցնող թուրքերը հետն ինադ [4]) ընկան, սպանեցին, մի տեղ հողի տակն արին։

Խեղճ տիրուհին աւելի յուսահատուեց. սգաց, սգաց ու ձայնը փորը ձգեց։

Էլի մինը կար, որին զգալի էր Վարդի կորուստն և միշտ այդ բանի վրայ մտածում էր։ Այս Ներսէսն էր։ — Այն տղայի հետ ես ի մանկութենէ ընկեր եմ եղել, իսկ այս մի տարուան մէջ իմ սէրն աւելի կրկնապատկուեց. ափսոս տղայ, թէ որ դրա նմանները մի առ մի անհետանան, էլ ո՞ւմ հետ ես վերջը կարող եմ իմ մտադրութիւնները գլուխ բերել, էս անօրէն պարսկի ոտը մեր աշխարհքիցը կտրել։ Անպատճառ Ղևոնդի ու տէր Մելքսեթի թակարդի մէջն ընկաւ խեղճ Վարդը, մտածում էր Ներսէսը, ինչ լաւ, որ մեր այն գիշերուան այգու խօսակցութիւնը ոչ ոք չլսեց, թէ չէ ինձ պէտք է մեղադրէին, որ ինչպէս ինձ յայտնի է, ես բոլորովին արդար եմ։

Մի կողմից ցաւում էր մեր տիրացուն, միւս կողմից կարծես ուրախ էլ էր, որ իւր ճանապարհն ընդարձակուեց. թէպէտ Վարդը ինչպէս անուշան տղայ՝ իրան ախոյեան չէր կարող լինել, թէպէտ «Ուխտի» մասին ոչինչ չէր լսել, բայց ինքն էլ չէր հասկանում, թէ ինչ՝ նրանից վախում էր, ինքն էլ զարմանում էր, որ Աշտարակու այնքան աղաների միջից իր հօր դռան մեծացած նախրչու որդին ինչ պէտք է լինէր, որ նրա անունը յիշելիս սրտի մէջ մի դող էր անց կենում։

¹) Պատուհասը. ²) Զօրութիւն. ³) Աւերիչ զօրութեանը. ⁴) Նախանձ.

— Հիմի էլ աչ չունիմ, վստահարար մտածեց Ներսէսը՝ ինչպէս լինի, մօրս կամքը կատարեմ, Գեհարդ խաչին էլ կը հաւատամ, Մանուշակի հետ կը պսակուիմ ու տէրտէր կը դառնամ. Վանքցիք էլ ոչինչ չեն ասիլ. Աստուած եղածն օրհնի, ես ինքս էլ ուրախ չեմ, որ Վարդը կորաւ, բայց ի՞նչ կարող ենք անել:

Իսկ մինը կար, ընթերցող, Վարդի վերայ մտածող, որի զգացած ցաւը ոչ ոքի չէր կարող հաւասարել, որին ոչինչ բան չէր մխիթարիլ. տէրտէրակինը իր որդին ունէր, Ներսէսն իր ճանապարհը ունէր, ծնողքը գերեզմանում հանգիստ վաղուց պառկած էին, գիւղացիք իրանց ցաւին էին, բայց այս մինն էլ ոչինչ չունէր Վարդին փոխարինող. աշխարհքիս ամէն հարստութիւնները, զարդարանքները, ծնող, ազգական, ամենամօտ սիրելի, կեանքի վերջնական նպատակ՝ միայն Վարդն էր: Սիրող սրտերն առանց իմ ասելու էլ կարծեմ մտածում կը լինէին Մանուշակի դրութեան վերայ Վարդի կորչելուց յետոյ: Լաւ դատիք, այս մինն անմխիթար Մանուշակն էր, որի դրութիւնը արդարեւ ցաւալի էր, որին երկու շաբաթ յառաջ տեսողն այսօր չի կարող ճանաչել, որին եթէ հիմի ինքը Ներսէսը տեսնէր, մի ժամ Աշտարակումը չէր կենալ, կը փախչէր վանքը: Ո՞ւր են նրա մեծ մեծ փայլուն աչքերը, նրա բոլորակ լիքն երեսը. ի՞նչպէս հալուեց նրա պարարտութիւնը, ի՞նչպէս շուտ դուրս ցցուեցան նրա ծնօտի ու աչքի տակի ոսկրները, գերեզմանից դուրս քաշած մեռելը քեզ օրինակ:

Դժուար դրութիւն: Մարդ կարողանում է իր անբաղդութիւնները մոռանալ, սիրտը նստացնել արտասուք թափելով և ուրիշներին իր ցաւերն ասելով, բայց թշուառ Մանուշակը զրկուած է և այս չնչին մխիթարութիւնից. նա լեզու ունի, բերան ունի, կարող է գոռալ, լալ, ճչալ, բայց իրաւունք չունի. մի կողմից օրիորդական համեստութիւնն է նրա բերանը փակել, նրա լեզուն կապել, միւս կողմից բարբարոս հօր շանթերը. արտասուք չի կարող թափել, հէրը կըտեսնի, իր սեւ օրը կըբերի. ձայն չի կարող հանել՝ գեղը կիմանայ, ինքը կը խայտառակուի. իր մրմունջն էլ, հեկեկանքն էլ կոկորդի միջին սպանում էր, որ ոչ ոք չիմանի:

— Հէ՜, ի՞նչ ես նօթերդ [1]) կխել, քինթ ու մռութդ կէս պաղ

[1]) Քիթ ու մռութդ.

կախ քցել, անզգամ, էդ էր մնացե՞լ, որ մի նախրչու լակոտի հետ ուզում էիր փախչել, ինձ աշխարհքի մէջ թուք ու բէդնամ [1]) անել. չըլնի՞ հիմի էլ նրա համար ես չորացել. մնիկ տուր, քացի կըտամ, բըղկոտդ կը հանեմ [2]). տամ, ի՞նչ կայ, որ տխրել ես:

— Ոչինչ, ափու, ես ուրախ եմ. թէ կուզես Սանդուխտ տատին հարցրու:

— Էդ անաստած գիլն էլ կոր կոր կանեմ, թէ որ քեզ մին էլ տխուր տեսնեմ, ղայնեմ [3]) կաշէդ օսկոռիցդ ա կպել, խելք ունիս, խելքի արի, գոռում էր Ղևոնդն ու դուրս գնում: Իսկ ողորմելի աղջիկը սրտի կատաղութիւնից իւր կուռն էնպէս էր կծում, որ ատամները մէջը թաղվում էին. իւր մարմնի փափուկ մսերը բոլոր ճմկոտել, մաշել, կապուտ լեղակ էր շինել:

— Ա՜խ, Սանդուխտ տատի, օգնիր ինձ, ձայնը փորը կըձգէր, հեկեկանքը սրտումը կը խեղդէր ու գլուխը պառաւի չոր կըծքին, կամ ծնկների մէջ թաղած՝ մսերը կը կրծոտէր խղճալին:

— Մի՛ անիլ, բալէս, մի՛ անիլ, իմ քաղցր աղջիկս, Սանդուխտ տատը մեռնի քո էրուած ու խորոված ջանին, դու դարդ մի՛ անիլ, ես հաստատ գիտեմ, որ Վարդի գլուխը փրկն՚ա. ես գիտեմ, որ պըճնկուած տէր Մէլիքսեթի ու հօրդ բաներն են, համա իմացած կա՛ց, որ ոչինչ չեն կարող անիլ, դու քեզ հանգարտ պահի:

Պառաւն երեսանց սրտապնդում էր իւր սանին, իսկ ներսից ինքը, եթէ կարելի է ասած, նրանից պակաս չէր ցաւում: Սրան երկու հոգս էր մաշում. չքնաղ պատկերն աչքի առաջին օր ըստ օրէ թառամում էր՝ էս մէկ. իսկ միակ զուարթացնող առարկան էլ անհետացել էր՝ էս էլ երկու:

Էլ բան ու գործ չունէր Սանդուխտը. իւր աղէն տանից դուս գնալուն պէս մի ոտը սուրբ կիւրակէումն էր, միւսը կարմրաւորումը:

— Սիրտս սուփրայ չի ամէն տեղ բանամ, փնթփնթում էր իւր մէջ Մանուշակն ու մութն անկիւնները քաշվում:

ԾԱ.

ՂԵՒՈՆԴԻ ԳԵՐԵԶՄԱՆ, ԿԱՄ ՔԵՇԻՇ ՄԱԶԱՐԻ:

Աշտարակից Երեւան տանող քարքարոտ և ձոր ու փոս ճանապարհն էս օր էլ անց կենողի սիրտը դող է ձգում: Ամէն ոք ու-

[1]) Նախատինք. [2]) Քղկացնել. [3]) Լզարել.

բախութեամբ յանձն կառնի ուրիշ կողմով մի շաբաթ ճանապարհորդել մէն միայն, քան թէ Աշտարակու երկու ժամաչափ ճանապարհով հինգ ընկերի հետ: Որչափ էլ կիսաճանապարհին Մեծ փոս կոչուած լայնաբերան ձորի գլխին բլրի վերայ բարձր քեաթիլէ [1]) կտրից շողշողում է հսկող պահապանի հրացանը, որքան էլ առաւօտից մինչև երեկոյ անց ու դարձ անողներին հաշիւ չկայ, բայց և այնպէս այս մարդակեր տեղումը գլուխը մի սոխ է: Աւազակութիւններ, ասպատակութիւններ, սպանութիւններ սովորական բաներ են այս մեծ ու անջրդի անապատումը: Դար ու փոս՝ ձոր ու բլուր՝, քարեր ու քարափներ, ահա քեզ մեր ծուռտիկ—մուռտիկ նեղ ճանապարհի նկարագրութիւնը. երկու մարդ կողք կողքի չեն կարող մանգալ, ուղին չուղին՝ ուղտի քարվանի պէս միմեանց ետևից շարուել պէտք է ընկնին: Մէկ էլ տեսար՝ քարվանի մի ծայրը ձորի միջին է, միւսը բլրի քամակին կամ քարափի տակին. մի քանի րոպէ առաջ միմեանց տեսնում, ասում, խօսում, ծիծաղում էին, հիմի մինն երևում, միւսը կորչում է. մինչև հիմա հանաք մասլահաթներ [2]) էին անում, հիմի մի քանիսը մի երկու քայլում աւազակների ճանկն են ընկել ու ետևի եկողները չեն իմանում. իրանք էլ յանկարծ բռնվում ու քարի տակն են քաշվում: Ոչ քաջութիւնը ձեռք կը տայ այս սատանի ճանապարհին և ոչ զգուշութիւնը. երկու մարդ մի քարի տակի մի ձորում նստելով կարող են հարիւր մարդ կապել. տեսնել չի լինիլ, փախչել չի լինիլ, գուշակել չի լինիլ. մի քանի քայլաչափ տեղում նոր ծռանցներ ու խորուբորդներ են գալիս, նոր ձորեր են բացվում, որոնց միջի ապառաժների տակին ու ահագին այրերի միջին հարիւր ձի ու մարդ կարելի է պարտակել [3]) ու երկու քայլից անցւորականը չի իմանալ: Իմ աչքի առաջին հարիւրաւոր սուրբ Գէորգ գնացող ուխտաւորներից մի քանիսին ձորը քաշեցին, թալանեցին [4]) ու մենք ոչինչ չիմացանք: Այս ամէնը մեր հուշակաւոր ճանապարհի շնորհքն է:

Նոր չի սկսել մեր ճանապարհը, սա քանի մի դարերի նախնեաց բացածն է. Աշտարակու և Երևանի քանի մի հարիւր տարեկան կամուրջներն էս ճանապարհի երկու դռներն են, մէկից մտնում

[1]) Պատշգամբ. [2]) Ծաղրալի պատմութիւնները. [3]) Ցեղաւորել. [4]) Կողոպտեցին.

միւսից դուրս ես գալիս: Ոչ թէ մօտութիւնը կամ տգիտութիւնն է այս ճանապարհը բացել. այլ նոյն իսկ տեղական դրութիւնը. ահագին տարածութեամբ դաշտը բոլորը ձորեր ու քարափներից է: Դէպի արևելք՝ Զանգուի ահեղասաստ ձորերն են մարդի մահ սպառնում, դէպի արևմուտք՝ վերը յիշած ձորերի շարունակութիւնը. էլի յարմարութիւնն էս մէջ տեղիցն է, որ եթէ ահալի է, գոնէ կարճ է: Չենք ասում, թէ հարթելն անհնարին է, բայց մեր պապերն էղպխի բաների վրայ երբ են մտածել: [1])

Բայց արի քեզ հետ միասին մենք էլ սիրտ անենք, գնանք այս ճանապարհովը, ինչ գալու է՝ թող գայ, մի օր մեռնելու ենք. արի քեզ մի զարմանալի բան ցոյց տամ:

Երևանից մի ժամ հեռացած՝ մի փոքր տեղ տափարակ է, որից դէպի արևմուտք մի սարսափելի մեծ ձոր կայ սեպաձև քարափներով. այդ հարթ տեղի վերայ մենք և ոչ մի խիճ անգամ չենք տեսնիլ. ճանապարհորդին թվում է, թէ դժոխքից դրախտ ընկաւ, երբ մի փոքր հանգստութիւն է զգում նա իւր ոտքերին: Մարդ կը կարծի, թէ այս մի բնութեան խաղ է, որ տեղի տափակութեան հետ քարերն էլ անհետացել են. բայց այդպէս չէ: Մօտիկ տուր առաջդ ուղղահայեաց և ինքդ գուշակ կը լուծես այս դժուարալուծելի խնդիրը: Արդարև ճանապարհի արևմտեան կողմը մի կարկառ՝ մի քարի կլուկ, մի չնգել [2]) է երևում: Ահա այս տեղն թափած այս տափարակի վրայի քարերը: Այդ ոչ թէ գիտութեամբ մի աստուածավախ մարդ հաւաքել է, ոչ: Մօտիկ տուր քո ուղեկցին, մի փոքր կանգնի և դիտիր ու կը տեսնես, որ ամէն անց ու դարձ անող տափարակին մօտենալուս մի քար վերցրեց: Արի, մենք էլ քեզ հետ մի մի քար վերցնենք ու նրանց հետ գնանք ու ականջ դնենք: Ահա նրանք հասան կարկառին և իւրեանց վերցրած քարը ձգեցին կարկառի վերայ: Լսիր, ինչ են ասում:

— Դժոխքի բաժին ըլէք դուք, ասում է հայն՝ ու իր ձեռքի քարը վայր ձգում:

— Գեօռբէզեօն [3]) ըլէս, հայհոյում է պարսիկն ու քարը կարկառին խփում:

[1]) Երեք չորս տարի է, որ գաւառապետ հայազգի պ. Գէորգ Խանաղեանցի աշխատասէր հետևողութեան շնորհիւ Երևանից Աշտարակ տանող ճանապարհը հարթուած է և կամուրջներով հնարաւոր է լինում ման գալ: Թող ընդունի ազնիւ պարոնն այդ ճանապարհով անցնողների լիասիրտ գոհունակութիւնը: [2]) Կարկառ. [3]) Գերեզմանումդ հանգստութիւն չգտնես.

Այն օրվանից մի մի քար ձգելով այս տեղը, այս ահագին կարկառն է գոյացել և տափարակի վերայ ման գալը հեշտացել:

Եթէ մենք ուշադրութեամբ լսէինք քար վերցնողներին, կ'իմանայինք այս կարկառի նշանակութիւնը:

— Տօ՛, Ղեւոնդի գերեզմանին մօտացանք, մի մին քար վերցնենք. ասում են գնացողներն ու կռանում քար վերցնում:

— Քէշիշ մազարին երեւաց, քար վերցնենք. ասում են Թուրքերն ու նոյնն անում:

Ղեւոնդի գերեզման և Քէշիշ մազարի, կամ հայերէն բառացի թարգմանութեամբ «տէրտէրի գերեզման»: Ուրեմն հայերի ասածով այստեղ թաղուած է Ղեւոնդը, իսկ Թուրքերի ասելով՝ մի տէրտէր: Մենք աւելացնենք.— երկուսն էլ ի միասին: Թէ ինչպէս.— հետեւենք աւանդութեանը, մեր պատմութեան շարունակութիւնը չկորցնելով:

Երկու երեք շաբաթ էր անցել, որ մեր տարագիր եղբայր Վարդն օսմանցու երկրումը գիւղէ գիւղ մանգալով իւր արեւի ձայնն էր ածում. օտարութեան ծանր ազդեցութիւնը նրա վրէն ներգործել էր. մին Աշտարակ էր յիշում, մին էլ քթերի ծուխը կոլ կոլ էր անում: Մենք թողանք սրան մի օր քաղցած՝ մի օր ծարաւ, այստեղ, այնտեղ վէր ընկած՝ գիշերները սուգ ու շիւանով լուսացնի, ցերեկները ամօթից գետինը մտնելով մի կտոր հաց մուրայ ու գնայ մի ձորի միջի, կամ մի քարափի տակի պարկի, միտք անի, միտք անի ու էնքան աչքերից թափի, որ արտասուքը հողի հետ խառնուելով ցեխ կտրուի ու այս դրութեան մէջ թմրի, մրափի, ոչ քուն՝ ոչ արթուն ժամերով ընկած մնայ:

Թողանք Վարդին էս Քրդստանումը, կարելի է մի օրից մի օր մենք էլի կը պատահենք սրան. թողանք, ասում եմ, ու էլի յետ դառնանք Աշտարակ:

Ասացինք, որ ամէն տեղ Աշտարակու երիտասարդներն երկու շաբաթի չափ պտուտեցին ու Վարդի հետքը չգտան: Նրա անունը կամաց կամաց մոռացվում էր ու միմիայն մեզ ծանօթ սրտերումն էր մնացել: Ամէն մարդ իր մշակութիւնի հոգսումն էր: Աշնանավար ցորենները հնձուած՝ կալերումը կիտած՝ մի կողմից կասում էին, միւս կողմից պլրականչից՝ աշխատաւոր ջահէլներն օրանները բարձած իրանց համբերատար ձիանոց միջքերին, փոքրիկ քաղլակի դնչկան էլ բերանն անց կացրած՝ որ ձին ցորենը չուտի, ու դնչով չխփի բեռը

շուռ չտայ, ձիանոց քամակից գնում են դա՛հ, դա՛հ կանչելով, բեռը բերում, կալումը թափում ու վերադառնում:

— Դա՛հ, դա՛հ, իմ սև ձի ջան, շո՛ւտ, մի քիչ էլ ոտներդ ժաժ տուր, էս ա պրծնում ենք հա՛, երկու խալվար գարի պտի ամբարեմ քեզ համար, որ քանի ատամդ կտրի, ուտես ու չաղանաս [1]), դա՛հ, ես քո ոտ փոխելուն մեռնիմ, սիրտ էին տալիս մեր ջահէլները ձիերին ու հետն էլ մի բայաթի, մի շքաստայ կամ մի մուխամբազ ղլում:

Այգիների համար էլ հարցնել չէր ուզել. էս տարուան բերքն այնքան առատ էր, որ հաւաքելով օգտիցը չէին գալիս, թողել էին քերում:

Խաղողն էլ նոր էր ժուռը կապել, քորցի գլխի չափ մեծացել էր. էնքան շատ էր, որ ծերերը չէին յիշում իրանց կեանքումն էսքան լիութիւն, առատութիւն:

Կարճ կապենք, էս տարի Աշտարակցոց սիրտն ուրախ էր: Նրանց բաղդիցը պարսիկներն էս տարի շատ նեղութիւն էլ չէին տալիս. ոչինչ արկածք չէր պատահել:

— Արդարև «կէսուրս մեռաւ, տեղս լէնացաւ» մտածում էր տիրացու Ներսէսը, Վարդի կորչելովն իմ դուռը բացուեց, ես հիմի ոնց ըլէ՝ Մանուշակին կառնիմ, նպատակիս կը հասնիմ:

Այս միտքը յառաջ տանելու համար նա սկսաւ Ղեւոնդի այգիների ու տան քուչէքումը գիշերներ անց կացնել:

ԾԲ.

«ԻՆՁ ՑԱՆԵՍ, ԷՆ ԿԸ ՀՆՁԵՍ:»

Այն ձորը, որի արեւելեան կողմը գտնվում է կարկառը, զանազան ժամանակներում այլ և այլ անուններ է կրել, ժամանակակից դէպքերի թողած տպաւորութիւններից: Այժմ նա կոչվում է Միկինի ձոր:

Ես չգիտեմ, ինչպէս էր կոչվում այդ ձորը կարկառի առաջին քարը նոր ձգելու օրը: Այսքան միայն յայտնի է, որ այդ նշանաւոր արձանը հիմնելուց մի օր յառաջ, տասը հոգի ոտից գլուխ զէնքով զրահով վառուած մարդիկ կապեցին իրանց ձիանքը ձորի մէջ մի գուշ

[1]) Գիրանաս:

արած [1]) քարափի տակի ու իրանք քարերը չանգռելով բարձրացան վերև ու երկու բաժին եղած՝ պարկեցան ճանապարհի երկու կողմը: Նրանք սկսան աստղալից գիշերի աղօտ լուսովը դիտել Աշտարակու կողմը:

— Ձիանոց ոտների թփթփոցն ա գալիս, մեր տղէք, քչփչաց նրանցից մինը, ամա՛ն, ուրիշ մարդիկ չըլնին:

— Հէնց նրանք են, որ կան, ձէնը չես լսում։

— Ձեզ մատաղ, լաւ աչքեցէք:

— Չորս են, էն երկուսը մհասիլ կըլնին:

— Դուք իրանց նիզամեցէք [2]), մհասիլների հետ ի՞նչ բան ունինք:

— Սուս.... մօտենում են:

Նրանք լռեցին:

— Դու ասում ես, որ խանը միտք ունի ինձ ու քեզ կախել տա՞յ, լսում էին դարան մտածները եկւորների խօսակցութիւնը:

— Հա՛, աղա՛յ, քո գլուխը վկայ, ինձ Ֆարրաշբաշին թաքուն պատմեց, որ Գէորգ խալֆէն մի քշեր գնացել ա խանի ոտներն ընկնել, հասկացրել, թէ դու մի սիրուն աղջիկ ունիս ու ընչանք հիմի խանից պահել ես:

— Ես չեմ հաւատում, Գէորգ խալֆէն Մանուշակին ինձանից շատ ա սիրում:

— Քեզ ըռէնց ա թվում:

— Բաս հիմի մենք ո՞ւր ենք գնում:

— Ես քեզ ասեցի, որ գնանք խանին հասկացնենք, որ Գէորգ խալֆէն սուտ ա ասել, ասենք, որ էն քո աղջիկը չի, տէր Յարութիւնինն ա, որ քանի դու աշխատել ես մի հնարքով խանի համար տանել, Գէորգ խալֆէն ու սիրացու Ներսէսը խափանել են: Քեզ ասում եմ, ընչանք էդ երկսին Աշտարակից չվերացնենք, մեր օրն օր չի:

— Մեղք ու վարձքը քո շնքին, էս ա գնում ենք, ես նրանց երկսի քարն էլ ծովը կքցեմ։

— Սուսէք, շնորդ էլէք, դուք ձեր սրտի փափաղին չէք հասնիլ, ձէն տուեց դարան մտնողներից մինը: Տասը հրացան մի անգամից դատարկուեցան երկու առաջին ձիաւորների վերայ:

---

[1]) կորացած։ [2]) Հրացանը մղել։

Ձիանքը խրտնեցան, փախս ընկան ու մի քանի քայլի վերայ երկու առաջին խօսողները գլխիկոր գետնին դիպան:

Հարուածները ճիշդ էին:

Նրանց հետի միւս երկուսը, որոնց դարան մտնողները մհասիլ անուանեցին, չիմացան էլ, թէ ձիանքը որ կողմը փախցրին իրանց: Սպանողները տեսան, որ նրանք քարերի միջով կրկին դէպի Աշտարակ են փախչում:

— Դեռ շունչ կայ սրա մէջ, տղէք, ասաց դարան մտնողներից մինը և մօտեցաւ դիակներից մէկին:

— Հը՛, Ղևոնդ աղա՛յ, երբ ես ուզում Գէորգ խալֆի ու սիրացու Ներսէսի քարը ծովը քցել:

Մեռնողը գալար—մալար էր անում. նա կեանքի ու մահուան հետ կռվում էր:

— Ո՞նց ա, փափաղիդ հասա՞ր, պռծնկվելու տէր Մելքսէթ, քանի՞ մի քանի մեր գեղը տակն ու վրայ անես, դէ հիմի գնա քո աղի հետ շնատակ իլ. հերիք ա՛ ինչ որ մենք ձեր երկսի ձեռից քաշեցինք:

— Մտիկ տուր, Ղևոնդ աղա՛յ, ինձ լաւ ճանաչի, մօտեցաւ առաջին դիակին մի երիտասարդ, ես Գասպարի տղէն եմ, միտդ ա որ նովրուզ բայրամին իմ քուրը դուս քաշեցիր, տարար խանին փէշքաշ [1]). դէհ, աչքերդ փակիր, հերիք ա, գնա սատանի գոգը, ոնց որ իմ խեղճ քուրը քցեցիր Մահմատի գոգը: Նա խանչալը ցցեց Ղևոնդի սրտումն ու էն աշխարհքը ղրկեց:

— Միտդ ա՞, տէր Մելքսէթ, որ սարվաղը գեղը լցրիր ու իմ խեղճ քօրփիս գլուխը քարին տալ տուիր, առաջիս թաղել տացրիր, մօտեցաւ մի ուրիշը տէր Մելքսէթին, միտդ ա՞, քանի տուն ես քանդել, դէ հիմի պրծար: Սա էլ տէր Մելքսէթի բողազը կտրեց:

— Էստեղ և եթ, տղէք ջան, էստեղ և եթ հորենք էս գազաններին, էս ճամփի վրայ, որ գնացող եկող սրանց ուշունց տան, ասաց մինը:

— Ա՛յ, հէնց էս փոսի մէջը քցենք, հողը վրայ տանք:

— Եկէք մի պստիկ հողել [2]) շինենք սրանց վրայ, ոխտ անենք, ամէնքին էլ ասենք, որ անց կենողը մի մին քար քցի սրանց վրայ

---

[1]) Ընծայ։ [2]) Կարկառ։

ուշունց տայ ու գեօրբէզեօ անի: Թող Աշտարակը որդէց որդի մնանայ ոչ Ղեւոնդ աղին ու տէր Մելիքսէթին:

Մենք տեսանք, որ հիմա ոչ թէ միայն Աշտարակը, ամբողջ գաւառը՝ Թուրք ու հայ շարունակ յիշում են Ղեւոնդի գերեզմանը կամ քէշիշ մաղարին:

Բայց թէ ո՞վ էին այս տասը խորհրդաւոր անձինքը, որ ազատեցին Աշտարակն այն երկու հրէշից և ում ղեղմամբ,—լսիր որ պատմեմ:

«Կէսուրս մեռաւ, տեղս լենացաւ», կրկնեց մի քանի անգամ Ներսէսն և իւր անկողինը տարաւ իւրեանց վերի այգին:

Աշտարակցոց սովորութիւնն է ամառը մեծ մասամբ այգիներումը քնել: Այդ պատճառաւ ոչ ոք կասկած չտարաւ Ներսէսի արածի համար: Բայց ի՞նչն ստիպեց նրան այդ անելու:

Սրանց այգուն կից էր Ղեւոնդի մեծ այգին, ուր ունէր նա իւր ամառուան տներն և կենում էր: Այս տեղ էր ապրում այս ամառ և Մանուշակը Սանդուխտ տատի հետ:

Մի երեկոյ գնում էր Ներսէսը գիւղից դէպի այգին, որ իւր առաջին մթնումը նկատեց երկու ձիաւոր և մի հետեւակ: Վերջինիս նա ճանաչեց, որ ձայնը լսեց: Դա տէր Մելիքսէթն էր, որ խօսում էր պարսիկ ձիաւորների հետ:

—Էլ ուրիշ ոչինչ չասե՞ց Փարրաշբաշին, հարցրեց տէր Մելիքսէթը ձիաւորներին:

—Չէ. նա հէնց էս հրամայեց, որ մենք գանք քեզ մօտ, ինչ որ ասես՝ կատարենք:

—Դէ լաւ, բաս լսեցէք: Ես ու Փարրաշբաշին ուզում ենք Ղեւոնդ աղի աղջիկը խանի համար քաշել: Նա չի իմանալ, բայց ուրիշները կան՝ որ արգելում են: Դրանք երեք հոգի էին: Դրանցից մէկին կորցրինք. նա մեր նախրչու տղէն էր. մնացել են երկուսը, նրանց էլ ուզում ենք փչացնել:

Ես ձեզ տանում եմ Ղեւոնդ աղի մօտ. դուք իրան ասեցէք, որ ձեզ Փարրաշբաշին ա ղրկել, ասեցէք, որ նա ասում էր, թէ խանն իմացել ա որ տէր Յարութիւնը մի սիրուն աղջիկ ունի, քանի դու ուզեցել ես իրա համար փէշքաշ բերի, Գէորգ խալֆէն ու Ներսէսը խափանել են. հիմի խանը շատ բարկացած ա էն երկսի վրայ. թէ ուզում ա Ղեւոնդ աղէն, թող էգուց գայ հասկացնի

խանին, ու իմացած կենայ, որ անպատճառ նրանց էն աշխարհքը կը ղրկի:

—Ախր Փարրաշբաշին մեզ էդպէս բան չի ասել:

—Էհ, ձեր ընչի՞ն ա պէտք. էդ իմ հաշիւն ա, թող էնքան ըլի՝ Ղեւոնդն էդ երկու մարդին մէջ տեղից վերկացնի, էն վախտ իմ ու Փարրաշբաշու ուզածը լիս, ասաց տէր Մելիքսէթը. տակի շաբաթը իր աղջիկը Փարրաշբաշու հարամխանումը կ'ըլնի, ես էլ սաղ մհալի մէջ մին կ'ըլիմ, ինչ որ երկնքումը մի արեւ կայ:

Ներսէսն այս բոլորը լսեց. նա հետեւում էր նրանց:

—Աղայ, հաղեր մեր գործն յաջողել ա, ամէն վախտ էսպէս չի ըլնել, էլ ինչ ես նստել, վեր կաց էս գշեր և եթ գնանք Երեւան, Փարրաշբաշու հետ խորհուրդ անենք ու օրն էգուց՝ էդ երկսի աբեր մեր մոցնենք, վրայ բերեց տէր Մելիքսէթը, երբ որ Փարրաշները տէրտէրի սովորցրածները կրկնեցին Ղեւոնդին:

—Ախր դրանք մեզ ինչ են արել, հարցրեց Ղեւոնդը գլուխը քաշ:

—Դեռ էլի չեն արել. դրանք չեն քո ճամփին քար քցողը: Գէորգ խալֆէն որ չըլնէր, դու հիմի խան կը լնէիր:

—Լաւ, Ներսէ՞ն ինչ վատութիւն ա արել ինձ:

—Թէ ինձ կը լսես, աղայ, դրան էս օրուանից խաշել տուր. սա իր հօրից ու Գէորգ խալֆից աւելի օձի կծեղուն պտի մեծանայ. սա չէր, որ ուզում էր քեզ սուտ հանել. ինքն ա նախրչու տղի հետ ուզեցել քո աղջիկը փախցնել ու քեզ հետ էլ հակառակում, որ դու սուտ ես ասում:

Մի քիչ ընդդիմացաւ Ղեւոնդը տէր Մելիքսէթին, բայց վերջը յաղթուեցաւ նրանից ու գնաց նրանց հետ գիւղը, որ այնտեղից ձի նստի ու նոյն երեկոյին շտապի Երեւան:

Այս ամէնը լսեց ու տեսաւ Ներսէսն իւրեանց այգու պատի տակից:

Կէս ժամ չէր քաշել, որ նա ժողովեց մեր տասն երիտասարդներին, ձի նստեցրեց ու կարճ ճանապարհով ուղարկեց խափանելու չարագործների դիտաւորութիւնը:

Մենք տեսանք հետեւանքը: Երկու ժանտախտն էլ բարձուեցան աշխարհքից:

Ոչինչ կասկած չընկաւ Աշտարակու վերայ նրանց սպանութեան

մասին: Փարրաշներն իրանք վկայեցին, թէ սպանողները պարսիկներ էին:

ԾԳ.

ՀԱՅԸ ԹԱԿԻ ՎԱՐԴԱՆԻՆ, ԹՈՒՐՔԸ ԹԱԿԻ ՎԱՐԴԱՆԻՆ, ԿԱՄ ՎԱՐԴԸ ՎԱՐԴԱՆԱՑԱԾ:

Ո՞ր աշխարհն այնքան խաղալիք է դարձել մրրկածուփ բաղդի ոսներիմ հարուածներին, որքան Հայոց աշխարհը. ո՞ր ազգն այնքան ցաւեր ու նեղութիւններ է քաշել, ինչքան էս մեր ջրատար, ամէնքի աչքի փուշ Հայը. ո՞ր բռնակալը, ո՞ր երկրագնդիս լեւթիւններից աչքը չկշտացող աշխարհակալը մտքումը դրել է ազգեր ու երկիրներ կլանել և Հայաստանի վերայ աչք չի դրել: Եւրոպայի մի ծայրից՝ Ասիայի միւս ծայրումն իւր դրօշակը ծածանեցնել ցանկացող Աղէքսանդր Մակեդոնացիներ, հռովմէական աշխարհաքանդ իշխանութիւններ, յունական մարդու արեան ծարաւ զօրավարներ, Ասիայից եւրոպական խրոխտ պետութիւններ իւրեանց ձեռքի տակ նուաճել ուզող պարսկական թագաւորներ, Մարաց, Բաբելացւոց, Ասորոց երբեմնեան աշխարհատասան իշխանաւորներ բոլորը՝ բոլորը Հայաստանի բարերեր և պտղաւէտ հողի վերայ են իրանց բանակների տեղ ծրագրել մտքներումը, մեր աշխարհքի բարիքի վերայ են դրել իրանց անհամար լեգէօններին կշտացնելու յոյսը, և այդ դժբաղդ երկիրը ոտնատակ տալով դիմել են դէպի իւրեանց մարդակեր նպատակը:

Այդ անխիղճ երկրակալներն երբէք չեն էլ ուզել մտքներումն անց կացնել, թէ Հայոց խաղաղասէր և բարեսէրն ազգն իւրեանց ոչ մեկի շահին չի կամեցել դիպչել, թէ նրա աչքն երբէք ուրիշների ունեցածի վերայ չի եղել: Նա միայն իւր տնային ներքին ցաւերն է քաշել, իւր երկրագործութեամբն ու վաճառականութեամբն է եղել պարապած ու իւր դրացի ազգութիւններին ամէն ժամանակ լիացրել է իւր անսպառելի կենսական մթերքներով:

Հայի այս խաղաղասիրական յատկութիւնը փառասէր տիրապետողների մտքումն անգամ չի անց կացել. տեղեցը վեր կենողը Հայաստանը ոտնատակ է տուել:

Այո՛, երբեմն երբեմն Հայկական հզօր բազկի ուժը մեր այդ

հարեան խոխոտացող ազգութիւններն էլ փորձել են, մենք էլ ունեցել ենք Արամներ, Տիգրաններ, Տրդատներ, որոնք աջ ու ձախ, արեւելք՝ արեւմուտք սարսափ են տարածել, բայց բաղդն ամէն ժամանակ քաղցր չի ծիծաղում մարդիս երեսին: Խեղճ Հայը որքան էլ ձիգն է թափել դէմ կենալ օտարների հարստահարութեանցը, չորս անգամ թագաւորութիւն է հաստատել, մի քանի անգամ հասարակական վարչութիւն է հիմնել իւր նախարարների ու մարզպանների նախագահութեան ներքոյ՝ իւր անկախութիւնը յափշտակողներին մի նշանակեալ տուրք վճարելով, բայց էլի ի վերջոյ իւր աշխարհագրական դրութեան շնորհիւ ուժահատ՝ յուսահատ ընկել, ընկճուել է յորդահոս հեղեղների առաջին և իւր բաց աչքովը տեսել է իւր սուրբ հայրենիքի, իւր պաշտելի աշխարհի մաս մաս ծուատուելը, իւր սիրելի որդւոց, նազելի աղջկանց, սիրասուն կանանց, քնքուշիկ հարսների ու հարազատ եղբայրների արիւնը թափուելը: Քար չի մնացել մեր անբաղդ աշխարհքումը, որ Հայի արիւնով ներկուած չլինի, հող չես գտնիլ, որի վերայ ձգած մի բուռ սերմ չխառնուի Հայի ի զուր տեղը թափած արիւնի հետ, էլ բարբարոս ազգ չի մնացել, որ Հայաստանը ոտնակոխ բնաջինջ արած չլինի: Բնութիւնը, սեպհականութիւնը, կալուածք՝ ամէն բան յափշտակուել, կեղեքուել է. ցերեկներ են եղել, որ իրանց հետ անմեղ տեղը մթնացրել են 1000աւոր Հայերի կարմիր արեւներ, այսօրուան շէն վաճառաշահ քաղաքը միւս օրը բուերի ու գիշակեր թռչունների և գազանների բնակարան են դարձել. նոյն աւերակները միայն անմեռ պատմաբաններն են եղել երեկուան հրաշալի շէն ու խաղաղ ժողովրդի անցեալին: Այս ամէնն արել են անկուշտ չարագործներն ու չեն խղճահարուել, դեռ ընդհակառակը կանգնել՝ պարծեցել են, դեռ յաղթական պսակներ են կապել իրանց արիւնոտ ճակատին: Փառք և պատիւ մարդկութեանը:

Հէնց այս ճնշողութիւններն, այս տանջանքներն էին պատճառը, որ վերջ ի վերջոյ բազմաթիւ Հայերի քառորդ մասն էլ չմնաց իւրեանց աշխարհքում. գաւթանն եկներով դաշտերումն անտէր թողուեցաւ, տառատուրը, ապրանքը փողոցումը երեսի վերայ ձգուեցաւ, բազմամարդ բնութիւնք մի երկու հոգով մնացին և անբան նախրի նման յառաջ վարուեցան մեր թշուառ հայրերը:

Յառաջ արել քշում էին սրանց գետերում խեղդելով, քարերից վայր գլորելով, գայլերի բաժին անելով, մինչև որ կամքները

տալիս էր, մի տեղ էին նշանակում հեռաւոր անբերրի անապատներում:

Շատերին բռնակալները վարեցին տարան, շատերն յառաջուց դուշակելով իւրեանց գլխի գալացուկը, դառն արտասուք կուլ տալով, մի օր՝ մի տխուր օր որքան իրանց ոյժը կըտանէր՝ ժամանակաւոր աւերուտ վերջրին, իւրեանց սիրելիների նուիրական գերեզմանների վերայ մի կուշտ արտասուք Թափեցին, իւրեանց պապական շէնքերը համբուրեցին, մի մի բուռը Հայաստանի պաշտելի հող մի մի շորահնի մէջ կապեցին, երեսները սուրբ վանքերի ու մատուռների պատերին քսեցին ու գլուխն խփելով, մի մի պարկ շալակներին, երեխայքն ուսերին, կամ գրաստների վերայ դրած՝ իրանք հետեւակ, արեւի տօԹակէզ խորշակից այրուելով, բոբիկ ոտները կէծացած աւազների ու սրածայր խիճերի վերայ դնելով, փուշ կոխոտելով՝ գնում էին. Թէ ո՛ւր, իրանք էլ չգիտէին:

Ո՛ր աշխարհքումը նրանց ընդունում էին, որտեղ իրանց արեւ սատաղին ¹) մի յետ ընկած տեղ էին տալիս, Թշուառներն այն տեղ բուն էին դնում:

Բայց արի հարցնենք, Թէ այն գաղԹողներից բոլո՞րը տեղ հասան, հեշտուԹեա՞մբ նրանք ընտելացան նոր կեանքի, նոր աշխարհքի, նոր լեզուի ու նոր սովորուԹիւնների հետ:— Անցեալի վիճակագրուԹիւնն է մեզ ցոյց տալիս այդ բանը, իսկ ներկայն մեր աչքի առաջին կենդանի է: Աչք գիպահ, շատ ժամանակ չէր, որ հայը մի փոքր հանգիստ էր:

Սրանք կորած ցրուածներն էին, որ մեր սիրտը ծակեցին. յետ դառնանք տեսնենք, Թէ հայրենիքի փուշն ուրիշ տեղերի վարդից գերազանց համարող չարքաշների դրուԹիւնն ի՞նչպէս եղաւ:

— Է՛հ, դրանց համար չեմ ուզում նորից քեզ, իմ սիրելի դժբաղդ հայ ընԹերցող, արտասուք Թափել տալ: Հերիք է ասել, որ հայրը որդուց խլուեցաւ, մերձաւորն իւր մերձաւորից եւ ինչպէս անշունչ առարկաներ՝ մի բռնակալից միւսի ձանգն ընկան: Վերջումը մեր պատմուԹեան ժամանակը՝ մեր նախնիքների արեան գնով սրբուած հայրենիքն երեք տեղ պառակտուեցաւ: Պարսիկն, Օսմանցին ու Վրացին իւրեանց սեպհականուԹիւն արին օտարի տունը եւ մեր

¹) Սերոյն.

Վաղարշակի հրահանգին համաձայն «սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի» ասելով, ամէն մարդի ոյժ որքան կարեց, այնքան իւրացրեց:

Այս տխուր տեսարաններն, այս սեւ քողը քո առաջեդ այն պատճառաւ բաց արի, որ դու իմանաս, Թէ մեր Վարդն Օսմանցուի երկրումն էլ նոյն նեղուԹիւնները, նոյն հալածանքները գտաւ, ինչ որ իւր հայրենիքումը. եԹէ այնտեղ միայն պարսիկն էր ճնշում, այստեղ մի կողմից օսմանցին է հարստահարում, նեղացնում, ժամանակ՝ անժամանակ, տեղի՝ անտեղի հարկեր հաւաքելով՝ պարզի տակ ձգում, խաւար բանտերումը կամ կախաղանների ծայրին ոչընչացնում հային, միւս կողմից անօրէն ու անկարգ քուրդը, անունն օսմանցու հպատակ դրած՝ ոչ օրէնքից վախում, ոչ իրաւունք է հարցնում. արձակ համարձակ սիրտն ուզած ժամանակը դաշտերը հայի անասունն է յառաջ անում, իւր գիւղը, կամ իւր վրանը քանդում, կամ Թէ խեղճ հայերի գիւղերի վերայ յարձակվում, քանդում, աւերում, եկեղեցիներն եւ սրբուԹիւնները կողոպտում, մի քանի մարդի արիւն Թափում ու հանգիստ՝ անվրդով գնում իւր տանը նստում: Դուրսը հօ, էլ ի՛նչ ասել կուզի, որ մի քրդի լամուկ ¹) տարէնը մի քանի հայի գլուխ է իւր կեռակոտուց Թրին կերակուր տալիս:

Այս ամէնը տեսաւ Վարդն եւ սարսափեց.— Էս ի՞նչ բան է, ասաց, ով Աստուած, մենք ընչո՞վ մեղաւոր ենք, որ առաւօտենց՝ տեղէցը շուտ վեր կենողը մեր գլխին ա չաքուչ կոտրում. վաղի առածի նման «Հայը Թակի Վարդանին, Թուրքը Թակի Վարդանին.» բաս Վարդանի ձեռները փլաւ են ուտո՞ւմ. ընչի՞ չենք մենք էլ մեր կողմից մեր Թշնամիքանցն «ակն ընդ ական» անում ու «ատամն ընդ ատաման»: Տօ, Աստուած մեզ հօ ուրիշների համար մատաղ չի՞ տեղծել. դրա համար ոչխար, եզ, աչառ կայ. մենք մարդ ենք, մեր մարդուԹիւնը բանացնենք: Տօ, Թէ տէրացու Ներսէսի պատմածները ղորԹ են, որ մի վախտ մեր պապերը քաջ մարդիկ են էլել, մենք ընչի՞ պտի հիմի ըսէնց խեղճանանք, կուչ գանք. Աստուած մեր գլխին անիծք հօ չի՞ Թափել. չըլնի՞ Թէ մեր մեղքը հէնց էն ա, որ խաչապաշտ ենք. բաս ուրիշ տեղերումը խաչապաշտները նեղուԹիւնի

¹) Լակոտ.

մէջ ե՞ն, եսիր ¹) ե՞ն: Չէ՞ որ ասում են Թիֆլիսի թագաւոր Վրացին էլ խաչապաշտ ա, չէ՞ որ նրանց ասում էր, որ ուրիշ քրիստոնեայ թագաւորներ էլ շատ կան, հէնց մենք պտի ոտի տակի հողի հետ հաւասարուէ՞նք. ա՛, ղուրը քա՞րը, թէ թագաւորութիւններս կորցրի՞նք, մարդութիւնից էլ հօ դուս չե՞նք էկել. ձեռ չունի՞նք, աչք չունի՞նք, ոտ չունի՞նք:

— Ինչպէս բան չի գտնուել, մտածեց Վարդը, մեզանից մինը պտի սկսի, արի ես էս աշխարհքումն էլ ա կարողանամ նրանցի տած տղամարդութիւնին արժանանալ. մահը՝ հա էս օր, հա 100 տարուց յետը. ինձ համար քանի շուտ գայ՝ էնքան լաւ բաղդն ա. էլ հօ ես սրանից յետը Աշտարակ յետ դառնողը չեմ, էլ իմ սրտի սիրեկանին տեսնողը չեմ, էլ ի՞նչ յոյս կայ ինձ համար, էլ ի՞նչ Մանուշակ, ի՞նչ բ ո ւ թ ա յ, ի՞նչ սուրբ Կիրակի…

Խեղճ տղան էլ չկարողացաւ շարունակել. մի քարի տակ նստած՝ բաւականին լաց եղաւ:

— Դէ, ասաց նա արտասուքը սրբելով, ամօթ ա ինձ համար գեղէ գեղ քաշ գալ, ձեռս գէմ անել, մի կտոր հաց ուտելը, սրան վերջ չկայ. երկու ամիս ա՝ ես Օսմանցւոց երկրումն անում սուրբ Կարապետի ըխտաւոր գրած՝ դէս ու դէն եմ ընկնում, ինքս էլ չեմ գիտում, թէ սուրբ Կարապետը ո՞ր դէհի վրայ ա: Էհ, մեռնեմ սուրբ Կարապետի զօրութիւնին, երեւում ա նա էլ իր աչքը թեքել ա մեր ազգի վրիցը, թէ չէ, ասում են, էս քրդերի շատերն էն կողմերումն են, էնտեղ, ասում են, աւելի են կոտորում ու թալանում հայերին:

— Ընկնելով բան չի գտնուել, վճռեց մի օր Վարդը Դարսայ գիւղերից մէկում, երբ յանկարծ աղաղակն ու վայնասունը գիւղը բռնեց: Հարցու եկաւ, թէ հանդումն քրդերը չորս գութանաւոր են սպանել ու լծկանները քշել:

Բոլոր բազմութիւնը դէպի դաշտը վազեց: Աչքերը կայծակին տուէին Վարդի, երբ որ խեղճ մարդկանց մարմինները փռած հողի ակօսի մէջ վայր ընկած տեսաւ: Նա բոլորովին ինքն իրան մոռացաւ: Նրա մտքից թռաւ, որ ինքն օտարական է, ծիլեց ոչխարի նման բառաչող ապրանքների ու գեղացիների մէջ, ընկաւ մի ցնակի վրայ, անդադար հարցեր մէմէկանց քամակից

¹) Գերի.

շարեց արինոտ ճակատին ու յանկարծ ոգեւորուած ասե՞նք, թէ ցնորուած՝ տեղիցը վեր թռաւ: — Ամօթ ձեզ, հայե՛ր, գոռաց նա, դուք պտի սաւն աչքո՞վ մտիկ տաք էս անմեղ մատաղների վրայ, դուք ինատ ¹) չպտի՞ հանէք քրդերից: Ա՛յ սառած ու թռոմած նահատակներ, ա՛յ արդար հոգիք, աչքը մին դիակներին և մին էլ երկինք դարձրած՝ ասում էր Վարդը, ես ոչ խաչուիմ, երեսս պարզ ձեզ դրախտումը ոչ հանդիպիմ, թէ որ ձեր ամէն մինի տեղակ տասը քրդի արին չթափեմ, դժոխքի վէրի պուճախը չղրկեմ: Ո՛վ հալը նհախին չտուող ²) Աստուած, դու ներքև չես մտիկ տալի, մեզ էլ մի՞ համարել, թէ որ ես չուզելով մարդասպան եմ դառնում. թող ես մեր ազգի թշնամիներին կոտրեմ, դժոխքն էլ տանիս՝ խղճմտանքս գլինջ կը լնի: Ո՛վ զինւոր Մշու սուրբ Գէորգ, քեզանից հեռու եմ, համա դու էլ գիտես, որ սիրտս քեզ մօտ ա, դու իմ կռանը զօրութիւն տուր, որ օրն էգուց՝ ձեռներս մի երկու քրդի արնով լուանամ:

Տղէք, ջահէլնե՛ր, Բրդատանու հայե՛ր, ո՛վ որ իր մի քթալ արնիցը վախենում չի, ում մէջը սիրտ կայ, եկէք, ընկերացէք ինձ՝ էս աջամի ³) հայիս հետ. դուք կըտեսնէք, որ շատ չի քաշել՝ բոլոր քրդերին կըդողացնենք. առաջուայ հայերը մեզ պէս վախկոտ չէին էլել, ձեր պապերը կտրիճ տղամարդիկ, իգիթներ էլել, մենք էլ նրանց ոտովը գնանք:

Այս անցքի միւս օրը լոյսը նոր էր բացվում, որ այդ գիւղից երկու ժամաչափ հեռու՝ մի ձորում չորս երիտասարդ աղօթք էին անում: Նրանցից երեքը Բրդատանցու հագուստով էին, իսկ մինը՝ Երեւանցու: Նրանցից ոչ հեռու, մի նոր սպանած քրդի դիակ էր ընկած:

Երիտասարդներն աղօթքից պրծան, համբուրուեցան և առաջին երեքն Երեւանցու առաջին ծնկները գետին տուին ու վեր կացան: Երեւանցին մէկ մէկ համբուրեց նրանց ու մօտեցրեց դիակին:

— Տեսա՞ք Աստծու յաջողութիւնը, խօսեցաւ Երեւանցին, դուք ասում էք երեկուան գութանաւորներին սպանողներից մինը սա է՞ր, լաւ ճանաչեցի՞ք:

— Խրամա՞նք ⁴), էղա ⁵) էր, էղօր ⁶) խաւատն ⁷) անիծուի,

¹) Վրէժ. ²) Արդարադատ. ³) Պարսիկ. ⁴) Այո. ⁵) Դա. ⁶) Դրա.
⁷) Հաւատն.

խդա էր, որ զիմ խօրօղէր [1]) մըրթեց. Աստուած լէ զինա [2]), որ ես տայ ու Թորգի [3]) փախայ, ղեղ խատար [4]) էցկէ [5]):

— Ախլա, թէ Աստուած մեր ուխտը կատարեց, մըքներս ղրածը գլուխ պտի գայ. Հիմի դուք տեսէք, թէ ինչ պտի անեմ: Ա՛յ, ես էլ էս աչաթից սկսած՝ քուրդ եմ դառնում, քարացնում եմ իմ սիրտս:

Նա հանեց սպանուածի վրայից կարմիր ջուբբէն [6]) ու հագաւ: Կապեց մէջքը քրդի կեռ սուրը, կրեց իր վերայ նրա փահանն ու բոլոր զէնքը: Մի կատարեալ քուրդ փոխուեց մեր աջամի հայը:

— Դէ հիմի եկէք սրա արնովը մեր սրտերը ներկենք ու որթում ուտենք, որ էս գործն յառաջ տանենք:

— Դու մեր գլխաւորն ու ջոջն [7]) ես, մինչեւ յետ [8]) իմալ [9]) խրամանք էնես [10]). զմէն [11]) կէնենք [12]), ասացին քրդստանցիք ու իւրեանց նորընտիր գլխաւորին հետեւելով մատները թաթախեցին քրդի արիւնի մէջ, քսեցին բաց կրծքերին:

— Ես ընդունում եմ ձեզանից էդ պաշտօնը. Աստուած տայ, որ պարզերես կատարեմ. թող ձեզանից ամէն մինն իր մըրախն [13]) իմ սրտումը ցցի, թէ տեսնի, որ մի օր ես իմ պաշտօնին արի չեմ: Համա իմացած կացէք, սեւ ու մութը նրան կտանի, ով որ իր խոստմունքը չկատարի ու մահից վախենայ. հիմիկուց ասում եմ, որ նա աչքիս լուն էլ ըլի, ինձ համար քրդից վատթար ա. ես նրա արինը կը խմեմ:

— Այրենք միասին, մեռնինք միասին, մեր գլուխը հայի ուղուրին յետ դնենք, ձայն տուին ամէնքը թուրները երկինք բարձրացրած:

— Իմ անունս վարդ ա, ասաց Երեւանցին. համա ես հէնց էս աչաթիցը թաղում եմ վարդին իմ սրտիս մէջը ու վ ա ր դ ա ն եմ դառնում՝ դուք ինձ վարդան ճանաչեցէք. վ ա ր դ ը մեռաւ՝ վ ա ր դ ա ն ը նրա տեղը բռնեց:

— Սուրբ վարդան քեզի թեւ ու թիկունք եղնի:

— Դէ ձիանքդ նստեցէք, աղբէրտինք, ասաց վարդանայած

[1]) Հօրեղբայր. [2]) Նա գիտէ. [3]) Թողի. [4]) Հաւար, չիոթ. [5]) Զգեցի. [6]) Հագուստ. [7]) Մեծը. [8]) Այսուհետեւ. [9]) Որպէս. [10]) Հրամայես. [11]) Ամէնը. [12]) Կանենք. [13]) Տէգ.

վարդը, ես ձեզ որ ասում էի, թէ Աստուած ինձ համար ձի կը հասցնի՞, տեսաք, մենք իրեք ձիով եկանք, հիմի չորս ունինք, քուրդն իմ համար լաւ ձի էր բերել:

Երիտասարդները ձիանքը հեծան ու ձորը դէպի ներքեւ քշեցին:

ԾԴ.

ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ:

Վանքի թուանքչիքն էլ չէին նեղացնում մեր փախստական տիրացուին, էլ Գէորգ խալֆենց ու տէր Ցարութիւնենց դուները չէին թակում: Հիմի Ներսէսն ազատ իրաւունք էր ստացել ուզեցած ժամանակը վանքումը մնալ, կամ Աշտարակումը: Գիժ մօզուպէս կամ էստեղ էր, կամ էնտեղ:

— Էնքան անենք, կարողանանք համոզել դէպի վարդապետութիւն, թող մի քանի տարուց յետոյ լինի, վնաս չկայ, մտածեց կաթուղիկոսն եւ մեր տիրացուին էդ բացառութիւնը տուեցաւ:

Հիմա էլ Աշտարակումն առաջուան հալածանքներն ու նեղութիւնները չկային, երկու չարագլուխները վաղուց մէջ տեղից բարձուել էին: Գևոնդի ու տէր Մելքսեթի սպանուելու միւս օրը խանը բոլոր իրաւունքն եւ սարքարութիւնը [1]) Գէորգ խալֆին տուեց: Ամէն բան իր կարգին գնում էր. պահանջուածն իր ժամանակին կատարվում էր. մէջ տեղը երեք տարի էր անցել ու ոչ մի մհասիլ Աշտարակու վրայ մի ճիպոտ չէր թափ տուել. դառն ու գէշն իրար հետ արածում էին. ոսկին սինու [2]) մէջ ածիր, գլխիդ դիր, Աշտարակի շրջակայ թուրքերի գեղերումը ման արի, քո մի մազին խէթ մտիկ տուող չի լինիլ: Էնքան էր Գէորգ խալֆէն սարդարի աչքը մտել, էնքան էր նրա աչքը ողջ թուրքերին տիրել:

Երեք տարի էր անցել, Գևոնդի սպանելուց յետոյ եւ ոչ մի վնաս չէր դիպել:

Ինքը Գէորգ խալֆէն էլ ամէն բանով ուրախ էր. մի բան միայն նրա մտածութեանց առարկան էր դառել: Գևոնդի սպանելուց յետոյ նրա տան կառավարիչն ինքն էր, Մանուշակի տէրն էլ ինքն էր՝ տիրականն էլ: Նրանց տան աւերուած տնտեսութիւնը բո-

[1]) Գիւղի կառավարչութիւն. [2]) Ափսէ.

ըրովին կարգի էր դրել, բայց Մանուշակի երեսը ծիծաղ չէր կարողացել բերել: Սկզբներումը նա կարծեց, թէ անտէրութիւնն ու որբութիւնն են աղջկայ վերայ իւրեանց տպաւորութիւնն անում, բայց վերջը համոզուեցաւ, որ չէ: Աղջիկը քանի գնում, տնկուրի [1]) է դառնում, շաբաթներով, ամիսներով քուչէ դուռ չի տեսնում, ջրի և այգի չի գնում: Թէպէտ նրա անձի վերայ ոչինչ տկարութեան նշան չէր երևում, բայց տխրութիւնն աչքերից թափվում էր:

Շատ աշխատեցաւ Խորիշան խանումը Գէորգ խալֆի աւելովը տանել Մանուշակին իրանց տունը, բայց չէղաւ, նա ոտը դռնիցը դուրս չդրեց:

Միւս կողմիցն էլ Ներսէսն էր ցաւ ու պատիժ դառել Գէորգ խալֆին, շաբթի էս գլխին կերթար Էջմիածին, մին էլ էն տեսար, էն գլխին՝ նոխտէն [2]) կտրածի պէս դուրս կընգնէր կըգար և ուղիղ՝ նրա մօտ:

— Ա՛յ տղայ, ընչի՞ ես եկել, ի՞նչ կըլնի մի տեղ ձուռ հանես:

— Սիրտս չի տալիս, ի՞նչ անեմ, սաքի [3]) դու չգիտե՞ս իմ գալուս պատճառը:

Վարդի կորչելուց մի քանի ժամանակ յետոյ Ներսէսը խոստովանել էր իւր սէրը Գէորգ խալֆին ու իւր մօրը:

— Ի՞նչ կըլնի, որ խնդիրս կատարես, մօրս ու Մանուշակին համոզես, աղաչում էր Ներսէսը, ես ի՞նչ պակաս տէրտէր կըլնեմ:

— Շատ լաւ ես ասում, համա մէրդ գլուխը մահի ա տալիս, նա իր ուխտը չի ուզում կոտրել. մին էլ որ՝ աղջիկը քեզ չի սիրում, զոռով հօ չենք կարող քաշ տալ:

— Թէ ուզենաս, կանես:

Ի՞նչ ուզում ա թող ըլի, թէ Աստծու կամքն ըլի, գլուխ կըգայ, մտածեց մի օր Գէորգ խալֆէն, երևում ա Սանդխտի աստծը չէնովի բան ա, թէ չէ էս երեք տարումը ոչ մի տեղից Վարդի ձէնը դուս չեկաւ. թէ որ նրա շունչը վրէն ըլէր, ջաղացի բողազիցը դուս կըգար: Ներսէսը Վարդիցը լաւ հօր որդի ու նրանից աւելի շնորհքով ա, թէ որ նրա ճակատին վարդապետութիւն գրուած ըլէր, գլուխ կըգար, մեռանք էս երեք տարումը վանքը գրկելով, որ ձու չի ածում, ճուտ չի հանում, ո՞վ ա մեղաւոր: Երևում ա Մանուշակը սրա համար ա՝ որ կայ, արի ես աշխատեմ, էդ տղին իր մուրազին հասցնեմ:

---

[1]) Տանը նստող, դուրս չեկող. [2]) Սանձ. [3]) Որպէս թէ.

Այս մտադրութեամբն երկար ժամանակ աշխատելով կարողացաւ Սուսամբար տիրուհոյն համոզել, կաթուղիկոսից էլ անձամբ իրաւունք խնդրեց. Մնացել էր Մանուշակի սիրտը գրաւելու:

Կայծակի հարուածի նման զգալի եղաւ խեղճ աղջկանը Գէորգ խալֆի առաջարկութիւնը. առանց էն էլ նա զզուել էր Ներսէսի ձթի պէս կպչելուցը, առանց էն էլ օրերով դռները փակում ներս էր մնում, Սանդխտից իմանալով որ տիրացուն էլ յետ վանքիցն եկել ա ու իրանց պատի տակին չորացած կանգնած է:

— Գնա՛, Սանդուխտ տատի, էն աներեսի ոտներն ընկնի, աղանչանք արա՛, ասա իր կորուստը մեզանում չկայ:

— Հարիր հետ եմ ասել, որդի, որ ճակատին մեռոն չկա՞յ:

— Ա՜խ Վարդ, ա՜խ Վարդ, հոգուց էր հանում խեղճն ու լում:

Այս ցաւերն իրան բաւական չէին, հիմա էլ Գէորգ խալֆէն է մէջ մտել տխպում, որ տիրացուի հետ նշանուի:

— Ես հիմի հաւատում եմ, որ Վարդը մեռած ա, ասաց Մանուշակը մի օր Սանդխտին, երբ որ Գէորգ խալֆէն շատ ձանձրացրեց իրան ու սրտնեղած՝ դուրս գնաց, թէ չէ իմ տէր ու տիրեկան Գէորգ խալֆէն էդ բանն ինձ ասիլ չէր: Ի՜հ, թափ տուեց նա իւր ձեռքը, ո՞վ ա անմեռ, Աստծուն մի օր ենք պարտական՝ պտի տանք. էրնէկ ես էլ մի մաղ դառնայի, կպչէի էն լեռ կրած Վարդի ոտիցը, գնայինք էն աշխարհքումը մեր սրտի մուրազին հասնէինք: Էս շատ լաւ ա, քանի շատ շատ տիրացուի խօսքն անեն, էնքան շուտ կըգայ իմ վերջի օրը:

Ուրեմն Մանուշակի միակ պաշտպանը պառաւ Սանդուխտն էր մնացել, որ թէպէտ երեսանց մխիթարում և համբերութիւն էր քարոզում նրան, բայց սրտանց ուրախ էր, որ իւր ձեռքովը հողը դնի իր տիրատուն սանին, քան թէ աչքը բաց՝ Վարդից աւելի ուրիշի գրկումը տեսնի:

Բայց Գէորգ խալֆի կամքը հաստատուն էր, ծածուկ ու աշկարայ այնքան Սանդխտին համոզեց, որ նրա մէջն էլ կասկած ընկաւ Ուխտի ճշգութեան մասին:

— Էլ հիմի ի՞նչ գալու ա, թող գայ, տատի, ասաց Մանուշակը սաուր դէմքով պառաւին, երբ որ սա խօսքը ծամելով կամեցաւ համոզել նրան Ներսէսին առնելու, գնա՛, ասա՛ Գէորգ խալֆին, թող նշանի մատանիքը վերցնի, գլխից գալացուկիցը փախցնի չէ. թէ

որ ես տիրացուին նամիր ¹) չեմ, վերջին հրաւէրումն էլ էս բանը կը քանդուի, թէ չէ որ ճակատիս գրուած ա, ջուրն էլ ընկնիմ, խեղդուիլ չեմ, Աստծու կամքը պտի ըլի, Աստուած էլածն օրհնի:

Օ՛հ, ի՛նչ օր էր էս օր մեր տիրացուի համար, երջանկութեան ծայրն է հասել, իւր սրտի փափագը լցուեցաւ, Մանուշակն իւր հարսնացուն է, ինքը վերջապէս ազատուեց Նշմարծնի մէջ մի քանի տարի տեսած չար ու բարուց:

Մտահոգաշեւ էր տալիս նա անդադար, թէ ե՞րբ պէտք է մօտենան հարսանիքի օրերը, ամառուան չորս ամիսները տարի էին թւում իրան, ե՞րբ պէտք է սեպտեմբերը վերջանար, որ այգիների քաղից պրծնեն, նոր մաճարը դուրս գայ, բանից գործից, կալից կուից թեթևանան ու հարսանիք անեն:

Մինչև նշանուելը գոնէ գիշերներն երեսը պնդացնում, Մանուշակենց պատի տակին լուսացնում էր, հիմի ամօթ էր, նշանած տղէն իւր հարսնացուի քուչումն էլ չըպէտքէ անց կենայ. մանաւանդ՝ որ Մանուշակը համաձայնելուս այդ միակ խնդիրն էր առաջարկել Գէորգ խալֆին և սա խօսք էր առել Ներսիսից կատարելու:

— Շատ լաւ կը լինի, որ մօրս ցանկութիւնը կատարեմ, ասաց Ներսէսը, գնամ սուրբ Կարապետ ուխտ և վերադառնամ, թող նրա սրտի կասկածն էլ դուրս գայ: Եւ արդարև, Սուսամբար տիրուհին մեծ դժուարութեամբ համաձայնեց իւր որդու ամուսնութեանը, այն էլ էն պայմանով, որ իւր ուխտադրութիւնը նա քաւէր սուրբ Կարապետ գնալ-գնալով ու յետոյ պսակուելով:

Յուլիսի սկզբներին լաւ ժամանակն էր, Վարդավառին կարելի էր Մշու սուրբ Կարապետումը լինել, և մեր տիրացու Ներսէսը չորս Աշտարակեցի պատանիների հետ Սանդուխտ տատի չինած պաշարը խուրջնում ձիու թարքին կապած՝ ճանապարհ ընկաւ դէպի Մշու սուլթան սուրբ Կարապետու վանքը:

Նա տիրացուի շորերով չէր, նա հագած էր ինչպէս մի աշխարհական. հոգևորականի հագուստով վտանգաւոր էր քրդերի աշխարհքումը ման գալ:

---

¹) Վիճակուած.

Ծէ.

«ԿԱՇԱՌՔԸ ՄՈՒԹԸ ՏԵՂԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԱՅ:»

Արզրումի և Ղարսայ փաշայութիւններն իրենց բարեբեր հողերով ու սիզաւէտ պարարտացնող դաշտերովը հարստութեան մեծ աղբիւր են. այն տեղերի խաղաղ և աշխատասէր բնիկները — Հայկայ որդիքը, կարծես, այս լուսւ աշխարհի տեղական դրութեան յարմար են ստեղծուել. շռայլութիւն, ծուլութիւն հեռի է նրանցից, ամենից քաղցր պարապմունքը՝ երկրագործութիւնն է և անասնապահութիւնը: Մայրն օրօրոցից իւր մանուկին հօտաղութիւն է երգում, հայրը հանդումը գերեմաստի ¹) ճիպոտն է տալիս իր գառնուկ որդուն ու զամբիկներին, եզների և կովերի վերայ նստել վարժեցնում: փող, հարստութիւն, խաբերայ աչք շլացնող առարկայ՝ մեր հային չի զբաղում: Տուր նրան մի քանի օրավար հող, և նա երջանիկ է համարուած: Լոյսը նոր ծագելիս՝ նա արան է գնում իւր սիրելի բալաք ²) եզի կամ պուչը ծաղիկ գոմէշի վրայ իշխանավայել նստած՝ մի պարկ էլ շալակին կապած՝ երկու հաց, մի կտոր թել պանիր ³) մէջը, երեկոյեան մութը գետինն առնելիս՝ նա տուարածական քաղցր հէլէլէն գլած՝ իւր պապերի փառքերը կամ իւրեանց աշխարհքի աւերմունքն երգելով, սար ու ձոր, կարծես, իւր հետ շարժել է, արտասուք է թափել տալիս:

Այս բարեկից աշխարհքի Աստուծոյ գառը ժողովուրդը մեծ կարիք չունի ու չի էլ պահանջում, միայն թէ թող տաս իւր սիրելի պարապմունքի մէջ իւր կեանքն անց կացնել, իւր հայ — քրիստոնէութեան մէջ իւր պապական աւանդութիւնները սիրով կատարել, հինգ նաւակատիկն հաղորդուել, ծում ու պաս պահել և քէֆով բաւականանալ:

Բայց արի տես, որ խղճալի հայն էս ամենաչնչին արտօնութիւնից էլ զրկուած է: Օսմանցին ու քուրդը՝ մանաւանդ վերջինս, հայի կերածն ամէն օր իւր քթերից հանում են, մի օր չեն թողում նրա արտասուքն աչքերից ցամաքի:

---

¹) Անտառի ծառ է: ²) Խայտաբղէտ. ³) Արզրումի կողմերը մի տեսակ պանիր են շինում, որ նուրբ թելի նման է լինում. Անծանօթը թել կարծելով, առեղին կուլի անց կացնել.

Տգէտ օսմանցի փաշայն եթէ մի քրդի ելաշի [1]) մի ձի, կամ եզը կաշառք տարաւ, եօթը հայի գիւղ որ ամառնային տայ, ջնջի, կոտորի, էլ ոչ հարցնող կայ, ոչ հոգսը քաշող. կուզես հազար դանգատ տուր, մի փարայ [2]) չաժի. միւս օրն էլ ինքդ փայտի տակին կը մեռնես. լաւն էն է՝ ձայնդ քեզ քաշես, ի զուր երեխեքանցդ հոգուն ուրիշի վերայ չքցես:

Փաշաների բռնած այս անվայել ընթացքն երկրի անքանութեան և անյուրթեան գլխաւոր պատճառն է դառել: Խեղճ հայը ոչ միջոց ունի իւրքն ապրելու և ոչ տէրութիւնն ու քրդերին կշտացնելու: Ընչո՞վ պէտք է նա վար ու ցանքս անի: եթէ երեկ քուրդը քաշեց նրա լծկանը հանդից տարաւ, եթէ ուխտը տարեցը քշեցին, տան աշխատաւորին էլ սպանեցին, էլ ի՞նչ տեղից կը լինի հաց ու պանիր: Թէկուզ օրը 10 անգամ ղուռաղը [3]) գայ փաշայի համար գառը, հաւ ու ձուա ուզի, մարակի տակին նրանց սատկեցնի, որ չկայ՝ ո՞ր տեղից կը տանի: Հին թող անհասկացող փաշան իւր սիրելի քրդերից պահանջի. տեսնիմ ի՞նչ կտան. նրանք երկրագործութիւն՝ նստակաց կեանք չունին. նա մի քանի կով ու եզն է պահում իւր լամուկներին ու շներին թթուած թան չկել տալու և իւր չարժական տունը՝ իւր վրանը մի տեղից միւսը փոխադրելու համար: Թող տեսնենք կը գանի՞ ցիմար փաշան, գնէ, քրդի տեղը: Երեկուան այս սարի թմբին ելած էլլեկն այսօր կարծես ջնջուել, անհետացել է. ով գիտէ ո՞ր ձորի մէջ, ի՞նչ դեռակի տակին է իւր վրանը խփել:

Այն կուժն ու կուլէն մեր օրօրուէ տկլորացած հայ գիւղացու գլխին է կոտրվում, վերջին ոսկուորն էլ փաշան է քաշում տանում, ու թէկուզ քաղցած կոտորուին էլ, նրա հոգը չէ:

Ո՞վ է մեղաւոր, ինչո՞ իրանք իրենց գլխի հոգսը չեն քաշում, կասի մեզանից ամէն մինը, եթէ փոքր ինչ ծանօթ է նրանց կեանքին և օսմանցի փաշաների անհոգութեանը:

Այո, մեղաւորն իրանք հայերն են. տօ, լաւ մարդ, եթէ քուրդը քեզանից խլած եզնումն ու ձիուն կարող է փաշաներն ու դաղեների [4]) աչքերը կապել, դու չես կարող մէկի փոխանակ երկուսը տալ և այնուհետև օրական 100 քրդի վրան քանդել, խլած չե-

[1]) Հասարակութեան գլխաւոր. [2]) Փող. [3]) Տասնապետ. [4]) Դատաւոր.

ղածը քաշել, թէ քրդի աչքը վախեցնել, թէ քո տունդ լցնել, թէ փաշաներին կշտացնել:

Բայց հեռուից մի՛ դատիր, եղբայր, լսիր, թէ ամէն օր իւր ջերմեռանդ բարեպաշտ հօտի ականջումն ի՞նչ է հալում այդը Թոռով կալնող տէրտէրը, կամ սուրբ կարապետու հաստավիզ հայր սուրբը:—Ջեղնիմ չիմանամ, օրթիքս [1]), որ չարն սատանէն ձեր մէջ մտնայ, թշնամուդ վրայ սուր բարձրացնել խրատ տայ, խայու [2]) Թագաւորութիւն որ Աստուած ուզէր, ընչո՞ կը ջնջէր կը վերցուր, Անի քաղաք ընչո՞ կաւերէր, էդ գըմէն [3]) էրած է [4]), որ մենք էս աշխարհքիս մէջ չարչրուինք, մեր օրը սև էնենք, էրթանք դրախտի վէրի քունջ մեր սուրբ Լուսաւորչի գոգն ի նստինք. դուք չէք գինայ [5]), որ Քրիստոս կասայ. «Երանի, որք հալածեալք իցեն, զի նոքա զԱստուած տեսցեն»:

Այս է պատճառը, որ հաւատով ժողովուրդն ամէն մի նահատակուածին սպալուց յետոյ, նրանց գերեզմաններն ուխտատեղի են շինում ու շաբաթ երեկոները լոյս վառում, նրանց վերայ կաթած արիւնը իւրեանց որդւոց և սիրելեաց վերայ կաթել խնդրում: Աստուած էլ իրանցը տալիս է: Միւս օրը իւր մինուճար զաւակն է նահատակվում:

Դեռ այսօր էլ մեր աչքի առաջին, աշխարհքիս լուսաւոր ժամանակը՝ էսպիսի գործողութիւններ միշտ կատարվում ու կրկնվում են: Սակայն մեր պատմութեան ժամանակը՝ երեք տարի էր, որ Ղարսայ ու Արզրումի փաշայութեանց մէջ ամէն բան փոխուել էր: Որ կողմը գնայիր՝ դաշտերը լիքը մշակողներ ու 100ավոր նախիրներ ու ջոկեր կըտեսնէիր. մօտենում ես՝ հայի է: Հօտերով ոչխարները մի դատարկ փայտը ձեռքին մարդու յուսով գիշերն էլ արօտից տուն չեն դառնում. գոլթանաւորներն իրանց եզներն ազատ թողած դաշտումը, իրանք հանգիստ քնում էին. ոչ մի հայի գիւղ մի սպանուածի դիակ չի տուն եկել այս երեք տարումը, այն ինչ յառաջ քիչ գիւղ կը լինէր, որ մի քանի այսպիսի եղերական տեսարաններ չպատահէին: Օսմանցուի ղաւազները որ տանը մտեցան, մէկին երկու ուզածն տանում ու առանց մի ղառը խօսք ասելու ճանապարհ էին ընկնում. վերջին գինուորից բռնած՝ մինչև փաշէն ու վալին [6]) ամենքն էլ կուշտ էին:

[1]) Որդիքս. [2]) Հայի. [3]) Բոլորը. [4]) Արել է. [5]) Չըգիտէք. [6]) Նահանգապետ.

Նրանք էլ չէին հասկանում, թէ էս ի՞նչպէս եղաւ, որ Հայերն յանկարծ հարստացան. նրանց ի՞նչ հոգսն էր, իրանց ուզածը պատրաստ կայ, թէկուզ բոլորն էլ միլիօնի տէր դառնան:

Ընդ հակառակն՝ երեք տարի էր, որ քրդերն աչք չէին կարողանում բանալ. էն վրանները, որ յառաջ խփած էին լինում Հայ գիւղերի լաւ արօտատեղերումը, հիմի հեռու, անմարդաբնակ ձորերն էին մտել: Յառաջ մարդի աչքի լոյս քաղվում էր, երբ տեսնում էր մի տկլոր, միսը բաց, փսլնքոտ, կեղտոտ քրդի 10—15 տարեկան լաճուկ մի բարակ ճիպոտ ձեռքին, քսան, երեսուն եզը երեք թիզ բարձրացած ցնծին սուրդ ցորենի արտի մէջ արած, ինքն էլ արտի գլխին հանգիստ, իւր համար արևի տակին բերանը կիսաբաց՝ խռմփալով քնած է: Կէս ժամ չի քաշում, այն պատուական արտը, որ վերջումը խոստանում էր մի քանի սոմար մաքուր ցորեան, անհերկել անապատի է նմանում: Ինքն՝ օրերով ու գիշերներով աշխատանք անող այս Աստուծոյ բարութիւնն էս տեղը հասցնող արտի տէր Հայը գալիս՝ գլխին կանգնում ու արտասուքի տեղ աչքերից կրակ էր թափում. տեսնում էր անասուններին իւր արտի մէջ և չէր համարձակվում քշել կամ լամուկին մի թթու խօսք ասել: Ճարը կտրած՝ մօտենում, խնդրում, աղաչում, մի դանակ էլ պարգև էր տալիս, որով էդ շան լակոտի սիրտը քաղցրանում էր. բարեհաճում էր դուրս բերել սրա արտից իւր տաւարն և մի ուրիշ արտ քշել:

Ասացինք, որ էս բաները յառաջ էին լինում, իսկ վերջին երեք տարումն էդպէս բան չէիր տեսնիլ: Ամէն տեղ շէն, ամէն տեղ լի ու կարգին է. հիմի աշխարհքը շուռ է եկել, աստղը փոխուել է, հիմի քուրդն է Հայի անունը լսելիս եօթն օրուան ճանապարհ առանց յետ մտիկ տալու կորչում: Եթէ իւր բաղդից խոր ձորերում կամ սարերում մի Հայ գտաւ, նրա կարմիրը կը կապի ¹) ու կը տանի իւր վրանից շատ հեռու տեղ կը հորի, իսկ եթէ ոչ, համարձակ չեն վստահանում մօտենալ. էն էլ լաւ իմանում են խեղճ քրդերը, որ մի Հայի փոխանակ տասը քրդի արեր պէտք է մայր մնի. բայց էլի երբեմն իրանց սրտի մուրը հանում են:

— Ո՞ր տեղից յառաջ եկաւ էն Աջամի լակոտ Վարդանը, միմեանց ասում էին քրդերը: — Մի ձեռքս ընկնէր՝ արիւնը խմէի, կրկնում

¹) Կը մորթի.

էր միւսը: Փաշաներն էլ նրան սիրում են, էլ ոչինչ կաշառք նրանց վերայ զօրութիւն չի ունենում:

— Գնացէք դուք էլ արէք, ասում էին փաշաները քրդերին, երբ որ մի քանի բէչեր հաւաքուած՝ մի երկու եզը կամ մի ձի ընծայ էին բերում և գանգատվում Վարդանից ու իւր ընկերներից. մինչև հիմա դուք էլիք Հայի աչքի լոյսը առել, ձեզ մի բան ասում էի՞, եթէ կարող էք, գնացէք Հայի օրօրոցի երեխայից բռնած՝ մինչև 100 տարեկանը կոտորեցէք, էնքան լինի, որ իմ շահին չը դիպչէք, ձեզ դատաստան չկայ:

— Ի՞նչպէս անենք, լալով պատասխանում էին քրդերը, Հայի մի կորած հաւի տեղակ մեր ձիանքն են համարձակ քշվում, մի ոչխարի փոխանակ՝ մեր երեխան է մորթվում, մի Հայի արիւնը մեր քանի մարդիցն է առնում էն անիրաւ Վարդանը. նա աղրէյիլ է, թլիմ արած ¹) է, նրա վերայ մեր սուրը չի բռնում, նա իւր ընկերներովը որ էլլէկի վերայ յարձակուեցաւ, ջնջում է:

— Եթէ դուք ողջ էլլէկով նրանից վախենում էք, ես ի՞նչ կարող եմ անել, պատասխանում էր փաշան:

Քանի՞ քանի անգամ քրդերը 100—200 ձիաւորով զրահաւորուած՝ փորձեցին Աջամ Վարդանի ու իւր ընկերների վերայ յարձակուել, բայց բոլորն էլ անօգուտ. միանգամ աչքները վախեցել էր: Հէնց որ յանկարծ տեսնում էին նրան ձիու վրայ նստած՝ երեսունի չափ քրդստանցու շորերը հագին ընկերների յառաջն ընկած՝ իրանց վերայ գալիս, մկան ծակը 1000 թումանով էին առնում, շունչները երկիւղից երկու օրուան ճանապարհ հեռու էին քաշում:

Էլ ի՞նչ ասեմ, մեր Վարդն, Օսմանցու երկրումը քրդերի ժանտախտն էր. նրանք իրանց երեխաներին էլ Աջամ Վարդանի անունովն էին վախացնում ու քնացնում:

Նրա մի ոտքը Մուշ էր, միւսն Արզրում, մի օր Կարսի մօտերն էր երևում իւր ընկերներովը, միւս օրն Եփրատի ափին մի կանաչ դաշտում, պաս կը բռնէր Հասանղալայ, կը թաթախուէր սուրբ Կարապետ, կը խոստովանուէր Եօ գիւղումը, կը հաղորդուէր միւս տեղը. մի խօսքով Աստուած նրան Թրքստանի Հայերի համար հովանի էր ղրկել:

¹) Դիւթած.

Ոչ միայն Հայերն էին նրա արևովն երդվում ու գլխից առնելի ուզում, Արզրումի ու Ղարսի փաշաներն ու պաշտօնեաներն էլ էին նրան որդու պէս սիրում: Նա իւր քաղցր լեզուովն ամենքի սիրտն էլ շահում էր: Եւ օր մի Հայի գիւղից էր իւրեանց դատաւորին մի ոչխար, կամ արջառ, կամ ձի պարգև գնում Վարդան աղի անունով, եղաւ մի ուրիշ քաղաքից մի քանի պարապ ընտրովի չաւուշներ էին Վարդան աղի անունից փաշայի բանը լցնում: Հայերից ոչինչ չէր պակասում, քրդերի աւարանքն օսմանցու բէյերն ու փաշաներն ուտեն լաւ է, քան թէ իւրեանք՝ Հայի արիւնը լիզող քրդերը:

Մենք հիմա իմացանք, թէ ինչ էր այս երեք տարուան Հայերի հանգստութեան պատճառը:

ԾԶ·

ՀԱՐՆՀԱՍ [1] ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ:

Վարդի օսմանցու երկրումը լինելու երրորդ տարին, Արզրումի հանդերում՝ մի կանաչ ձորադաշտի մէջ, մի առուակի մօտ, արեգակն իւր առաւօտեան ճառագայթներն աշխարհիս վերայ նոր սփռած ժամանակը՝ չորս ճանապարհորդ իջած էին:

Նրանք կապոտել էին իւրեանց ձիանքը սիգաւէտ տեղումն ու նախաճաշիկ էին անում: Աստծու մի բարին կար սրանց սեղանի վերայ, դրանց բոլորի խուրջինների մի մի աչքն էլ պաշարեղէններով լիքն էր, կերակուրը պատրաստ էր:

— Ընչի՞ չես հանիլ, տիրացու, էդ գաթէքն ու հալուէքը, էդ տապակած բոլը, էդ պատուց տօլմէն, առնենք զանքաշ չունիս, համա էն պառաւը 100 զանքաշի համ կը տայ. նշանած տղայ, ընէնց նշանածի տէր, հալբաթ՝ որ կը հպարտանաս, ասում էին իրանցից մէկին ընկերները, երբ այս տիրացու կոչուածն առատօրէն դուրս էր տալիս ավիտակ լուաշ հացի մէջ փաթաթած զանազան խորտիկներ:

— Ընկի [2]) մի՛ տալ, որ ուր գնաս, Աշտարակու կնանոց շինած կլոնկերից համով ոչ մի տեղ չես ուտիլ. օխայ, տես ինչ անուշ գաթայ ա է, պատուցը որ լինէնց ա, ուտելուցն ինչ կը լինէր, կծելով մի գաթի կողքից՝ գովում էր միւսը:

[1]) Վերջին ճգնաժամին օգնութիւն հասնող: [2]) Ներբէ:

— Բարով սուրբ Կարապետը մուրազներս կատարի, մեր ուխտն անենք յետ գնանք, ուտելուց էլ կուտենք, ինչ էս դարդ անում..

Վերջին խօսքն երրորդի բերանում սառած մնաց: Յանկարծ դիմացի քարափի տակից վեց քուրդ դրանց վերայ յարձակուեցան:

Մինչև սրանք շփոթուելուց մոլորուած կը մտնէին խոտի վերայ դրած իւրեանց զէնքերին, քրդերը սրանցից երեքին կապեցին:

Տիրացու կոչուած ընկերն ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս եղաւ, որ հրացանը ձեռքն առած՝ մի քանի րոպէ իրան ուզում էր պաշտպանել ու մօտ չը թողնել իւր վերայ յարձակուող քրդին, որ քամակի կողմից մի հարուած իջաւ դրա կռանն և հրացանն երեք գազ այն կողմը ձգեց:

— Աջամի հայ ես եղել և ոչ պարսիկ զոռաց մի քուրդ, երբ տիրացուի գլխարկը վէր ընկաւ ու գլուխն երևաց:

Քրդերը տեսան, որ պարսկի նման գլխների մէջ տեղն ածիլած չէր:

— Աջամի հայ ես, սրանց արմատը չորանայ, լաւ ձեռքներս ընկաւ, ձայն տուեց քուրդն իւր ընկերներին, Աջամ Վարդանի վրէժը սրանցից առնենք:

Մեր ճանապարհորդները սասանեցան, նրանք փոքր ի շատէ քրդերէն հասկանում էին:

Եւ արդարև, այդ խօսող քուրդը քաշեց իւր սուրն և ուզում էր իջեցնել տիրացու կոչուածի գլխին, որ երեսի վերայ երկիւղից գետնին ընկել էր: Մի վայրկեան, մի մազաչափ տարածութիւն էր մնացել. տիրացուն իւր երջանկութիւնից՝ իւր նշանածից ձեռն էր վերցրել, մահն առաջին բաց աչքով տեսնում էր, երբ իւր գլխի տակը մի թացութիւն զգաց: Խեղճը կարծեց, թէ իւր վիզն է կտրուել ու իւր արիւնն է թափվում, կասկածելու տեղիք էլ չմնաց, գետնի վերայ պարզ արիւնը վազելիս տեսաւ:

Մեր տիրացուի լեզուն կապուել էր, համր մարդի նման անհասկանալի հնչիւններ էր միայն արտասանում, խեղճի աչքերը մթնեցան, մի քանի րոպէ չիմացաւ, թէ իւր չորս կողմն ինչ է կատարւում, գուցէ ինքը վաղուց իրան հրեշտակների դասումը բազմած տեսաւ շատ նահատակների կարգում:

Մէկ էլ ականջին իւր անունն է ընկնում, իւր ընկերներն են իւր կուռը բռնել բարձրացնում, ջուր են սրսկում երեսին: Ոչ, տեսնէք չի էս, ցնորք չի, ինքը կենդանի է և ոչ մի տեղը չի ցաւում. իրան

շրջապատել են իւր ընկերներն ու քսան—քսան ու հինգ քրդի շորերով հայեր:

— Ուշքի արի, տիրացու աղբար, նորա ձեռքը բռնել սրտապնդում է օտարականներից մէկը Երզնկացու հայ բարբառով, մի վախիր, Աստուած ձեզ ազատեց, քո թշնամիդ ոտքիդ տակին իր կեանք ու արևը քեզ է տուել, սուրբ Կարապետն ինքը ձեզ օգնութիւն հասաւ:

Եւ յիրաւի, տիրացուն տեսաւ իւր բոլոր ընկերներին ազատ, որոնք ուզում էին իւր հետ խօսող օտարականի ձեռք ու ոտքը համբուրել:

Ամէն բան հիմա պարզուեցաւ, այն ինչ քրդերը կապել էին իւր ընկերներին և իւր հրացանը ձեռքից ձգողը սուրը վրայ էր բերել գլխին իջեցնելու, այդ իսկ րոպէին այս մարդիկը հասել են և իրանց ազատել: Ընկերները պատմեցին, որ ազատուած, մօտին վէր ձգած քրդի թուրը մի մազաչափ էր մնացել իւր արևը մթնացնելու, որ այս մարդը հարեհաս սուրբ Սարգսի նման վրայ հասաւ ու նրա գլուխը թռցրեց, իրան մահից ազատեց:

— Իմ ազատիչս, կանչեց տիրացուն և ուզում էր ընկնել իւր ձեռքը բռնող անծանօթի ոտքերը, որին ամէնքը Վարդան աղբար էին կոչում. բայց մեր Վարդը, որին դու կարծեմ առաջին անգամից ճանաչեցիր, ընթերցող, երբ կը թողնէր իւր ձեռքը համբուրելու: Գրկեց երախտագզած տիրացուին և համբուրուեց նրա հետ:

— Ինձանից շնորհակալութիւն մի անիլ, աղբարս, ասաց նա, Աստուածանից գոհ եղիր, որ մեր ճանապարհն այս կողմը դարձրեց, որով կարողացանք մեր Աջամի հայ եղբայրներից մի երկուսին անօրէն քրդերի ճանգից ազատել:

Ու տիրացուն իւր ուղեկիցներով և ոչ Վարդի ընկերները կարողացան նկատել, որ իւրեանց գլխաւորը խօսելուս կակազվում է, ոչ ոք չտեսաւ Վարդի շփոթմունքը. քրտինքն ամէնքին էնպէս էր կոխել, որ ոչ ոքի մտքից չանցաւ, թէ Վարդի երեսից իջնող կաթիլներն իսկապէս արտասուք էին և ոչ քրտինք:

Մի նշանացի հայեացքը բաւական եղաւ Վարդին՝ իւր ընկերներին պատուիրել, որ խորին լռութիւն պահեն:

— Ասա, խնդրեմ տիրացու աղբար, հարցրեց Վարդը, կամ ինչպէս իրանք սկսան կանչել, Վարդան աղան, դուք ո՞ր տեղից էք, ո՞ւր էք գնում:

— Երևանի մօտից ենք, Վարդան աղայ, Աշտարակ գիւղից, պատասխանեց տիրացուն:

Ես Աշտարակումն եղած եմ երեխայ ժամանակս, հազիւ իրեն բռնելով կցկտուր ասաց Վարդը. մենք Էջմիածին ուխտ էինք գնում հօրս հետ ու երկու գիշեր այնտեղ կացանք. ես տասը տարեկան կը լինէի. մենք իջել էինք մի Ղևոնդ աղայ անունով մարդի տան, որին իմ հայրս վաղուց ճանաչում էր: Վերջն իմացայ, որ այդ Ղևոնդը շատ անպիտան մարդ է եղել, բայց մեզ լաւ պատիւ տուեց: Նա մի փոքր աղջիկ ունէր հինգ վեց տարեկան, կարծեմ անունը Մանուշակ էր, շատ սիրուն երեխայ էր:

— Նա հիմի իմ նշանածն է, պատասխանեց տիրացուն, որին է հարկէ ընթերցողը նոյնպէս վաղուց ճանաչեց, ես գնում եմ սուրբ Կարապետ ուխտ ու վերադառնամ պսակուիմ:

— Ամենևին չկարողացաւ հասկանալ Ներսէսը, թէ ընչի՞ վերջին լուրը մի սարսուռ ձգեց իւր ազատողի ջանը, որ մի երկու րոպէ աչքերը գետին ձգած՝ ատամներով ներքին շրթունքը կրծոտում էր: Բայց այս այլայլութիւնը շատ չտևեց, Վարդը կրկին քաղցր դէմք առաւ ու պատասխանեց:

— Հա՞, Մանուշակն ուրեմն կա՞յ և քո հարսնացուն է՞, շատ ուրախ եմ, որ իմ ծանօթի նշանածին կարողացայ մահից ազատել: Ես յիշում եմ Աշտարակումն և մի աղայ մարդ, որ մեզ տարաւ իւր մօտ հիւր: Պէտք է որ անունը Գէորգ խալֆայ լինէր, ասաց Վարդը, լաւ մարդ էր երևում: Նա մի տէրտէրի համար շատ գովասանք էր անում և ցաւում էր որ մեռել է ու կինը միայն է մնացել. կարծեմ տէրտէրի անունը տէր Յարութիւն էր եղած:

— Տէրտէրն իմ հայրս էր, որ վախճանուեց, իսկ Գէորգ խալֆէն իմ նշանածի ազգականն է. նա հիմի փառք Աստուծոյ լաւ է. նա է հիմի իմ նշանածի տէրը Ղևոնդի սպանուելուց յետոյ:

— Մի՞ թէ Ղևոնդին սպանեցին, երբ և ի՞նչպէս:

— Ներսէսը մանրամասն պատմեց Վարդին բոլոր անցքերը:

— Իմ միտքս է գալիս, ասաց Վարդը, Գէորգ խալֆենց տանն էին տէրտէրի երեխայքը. նրանց մէջ իմ հասակակից մի երեխայ կար, դու չէիր, նրա անունը չեմ մոռացել՝ Վարդ էր, ես քեզ չեմ տեսել. մենք նրա հետ Գէորգ խալֆենց ծաղկանոցումը ծաղիկներ քաղեցինք, էն տղան ո՞ւր է, ի՞նչ է անում:

— Նա հիմի չկայ, պատասխանեց Ներսէսը, նա մի օր յանկարծ

աներևութացաւ, կորաւ մեր գիւղից, որքան իմ մայրս ու Գէորգ խալֆէն պտտել տուին, ոչ մի տեղից նրա ձայնը դուրս չեկաւ։ Նա էլ սիրում էր իմ նշանածին, չթողեց ներսէսը, բայց երևի բաղդն ինձ էր վճռակել։

— Ի՛ Հարկէ, Աստծու կամքն է, ինչ որ սահմանել է այնպէս պէտք է լինի, պատասխանեց Վարդը, և ես ուրախ եմ, որ քեզ պէս խելօք տիրացուն է իմ բարեկամի նշանածը դարձել։ Ես էս տարի միտք ունիմ կրկին Էջմիածին ուխտ գնալ, շարունակեց Վարդը։ Եթէ Աստուած սրտիս կատարեց, Աշտարակումն անց կացայ, քեզ մօտ հիւր եմ։ Ես Աշունքը պէտք է գամ։

— Որքա՛ն կուրախացնես ինձ, մանաւանդ եթէ Հարսանիքիս հասնես։

— Աղբարներ, դարձաւ Վարդը դէպի իւր ընկերները, թող ձեզանից մի քանիսը տանին մեր բարեկամներին սուրբ Կարապետ հասցնեն ու գան մեզ գտնեն։

— Իսկ էս քրդերին, որ կապոտել ենք, ի՞նչ կը հրամայես անել, հարցրին Վարդին իւր ընկերներից մի քանիսը, սպանե՞նք թէ արձակենք։

— Ես բոլորովին մոռացել էի, պատասխանեց Վարդը, թէպէտ հարկաւոր էր սպանել, բայց մեր բարեկամների ուխտաւորութեան պատճառով աւելորդ արիւն չը թափենք, ազատեցէք դրան։

— Իսկ դո՛ւ որ տեղից ես, կամ ո՛վ ես, հարցրեց Վարդին Ներսէսը, երբ վերջին հրաժարականն էին տալիս։

— Վանեցի Մանուկի տղայ Վարդան կասեն ինձ, պատասխանեց Վարդն ու կրկին նշանացի պատուիրեց իւր ընկերներին լռութիւն պահել։

Միւս օրը Վարդի ընկերները Ներսէսի և խրայնոց անվտանգ սուրբ Կարապետ հասնելու լուրը բերին։

ԾԷ.

«ՕՂՈՐՄԻ ՁԵՐ ԱՆՑԱԾՈՐԱՑ, ՕՂՈՐՄԻ ԻՄ ՄԵԾ ՏԱՏԻՆ, ԿԱՄ ԱՆՈՒՆԸ ՏՈ՛ՒՐ ՏԵՂԸ ԲՑԻՐ։»

Հոկտեմբերի վերջին աշտարակցիք իրանց բան ու գործից պրծել էին. էլ չէին երևում արանից մի երկու շաբաթ յառաջ տեսած կեղտոտները, որոնց վերայ զզուանօք էր նայում մարդ։

Այգեքաղի սկսած օրից մինչև այգեթաղն ու արաղները քաշելը աշտարակցուն միայն աշտարակցին կը ճանաչէր։ Նրանց սևացած քաղցուտ երեսին այնքան փոշի է նստել, որ երեսը չի զանազանուիլ նրանց հագի արխալղահնից. Արաբստանից եկածներն էլ էս օրին չեն լինիլ. նրանցն իրանց բնական սևութիւնն է և մաքուր, իսկ սրանցը՝ տարթակալած [1]) կեղտ է։

Այս լսելով, ամեն մարդ կը կարծի, թէ իմ աչնիւ հայրենակիցներս շատ անմաքուր ժողովուրդ են, կամ տարիներով երեսներին ջուր չեն առնում։ Ընդհակառակն՝ ամեն մի աշտարակցի առաւօտը վաղ զարթնելուն պէս՝ իւր առաջին պարտաւորութիւնն է համարում ձիուն ջուրը տանելուս, ինքն էլ մի քանի անգամ մեր առանձնական առուի վերայ չօփ տալ [2]), երեսը լուանալ, դտակով սրբել, երեք անգամ խաչ հանել ու իւր ընտանիքի տարեկան ապրուստը ճարող ձիու քաղցուտ ու սևացած փալանի մէջ ոտքերն երկու կողմից կախ քցել ու գնալ իւր մշակութիւնին։ Եթէ դու շուտ զարթնող ես, առաւօտն է աշտարակցու երեսը խոտակ տեսնելու լաւ ժամանակը. էն էլ միայն երեսի կողմից եմ երաշխաւոր, հագի արխալղի գուրջը [3]) քանի գնում՝ կեղտը վրէն մեռնում է։ Ես ասում եմ, որ իմ պարտքը պրծայ, եթէ արևը մի քանի գազ բարձրացած վեր կենաս, նրանց երեսներիցն էլ ձեռքերդ լուա, էլ մաքուր անդ չես տեսնիլ, էլ էն արաբն է, էլ էն կեղտոտը։ Նա ինքն էլ մեղաւոր չի. առաւօտենց մինչև երեկոյ քաղցուի ու փոշիների մէջն է, ի՞նչպէս անի, որ բարձելու ժամանակը լեշի [4]) պաճախն [5]) երեսին չկպչի։ Էհ, ի՞նչ կայ՝ որ փոշի ու քաղցու է, կուպր հօ չի՞, թող մինչև երեկոյ երեսին մի քանի շալիկ կպչի [6]), բանիթող անելուց յետոյ՝ քնելու համար երկու չօփ տալումն էլի էն խոտակն է, էլի էն գեղեցիկ տղամարդը։ Շորերի համար երբէք չենք կարող նրանց մեղադրել, էն կեղտոտ արխալղահինն է, որ դիմանում է, թէ չէ էնքան քարեքար դիպչելուն, էնչափ լոռը վերցնել վէր դնելուն ի՞նչ կը դիմանայ, խէր ու խաշուն [7]) էս գրչոտած արխալղի մէջն է։ Միջացը շատ երկար չէ, ամենաշատը՝ երկու ամիս. հոկտեմբերին շորհ բերէք Աշ-

---

[1]) Թակորի նման հաստացած. [2]) Ջուրն երեսին խփել. [3]) Ցնցոտին. [4]) Արջառի առանց կաշիի տիկ, որով քաղցուն (չիրէն) կրում են. [5]) Ոտքը. [6]) Մի քանի կարգ մինչև վերայ դասուել. [7]) Օգուտը.

տարակ, ու կրակարանը, թէ այն կեղտոտ մուկն ինչպէս պարզ և մաքուր հագնուած է, ջանին էլ որ ձեռք տաս, մախմուրի ¹) պէս կակուղ է:

Արտը քաշելն ու այգեթաղը պրծնելուն պէս՝ ամէն մարդ խոտակ սապոնով կը լուացուի, տնգուկի մէջ պահած շորերը կըհագնի ու փալաս փուլուսը, քէչայ, խալիչէն, աշխատաւոր արխալուղի գուրջն իր քէյվանի կնոջ ձեռքով կուժարկի ձորումը լուացուեն:

Այս միջոցումն ես սիրում եմ մեր գիւղացոց տներումը լինել, մաքրութիւնը մարդու երեսին շաւաղ է տալիս ²), մեծից մինչև պըստիկը, հացատանից մինչև բակի դուռը, մինչև քուչէն՝ մարդի երեսին ծիծաղում է, խաղը թափես, կըհաւաքուի: Իրաւ է, ամէն բան հասարակ է, ամէն բան գիւղայարմար է, բայց որ մաքուր է՝ մարդի սիրտը բաց է անում:

Հոգի ունիմ տալացուկ, մեր Երևանի ամբողջ նահանգում Աշտարակն օդ ու ջրով, գեղեցկութեամբ ու ազնուութեամբ, մի փոքր էլ, խօսքը մեր մէջը մնայ, խորամանկութեամբ և մանաւանդ մաքրակենցաղութեամբ ու լաւ ապրելով բոլոր գիւղերի աչքն է:

Էսօր ես իմ տեսածն եմ պատմում ձեզ, սրանից 100 տարուանը իմ չի բաժինս, դատաստանը քաղցր 135 տարեկան, շէշակ բարդի ծառի բարձրութիւնից երեք թզի հասած տատս էր փոքր ժամանակս պատմում: Պատուած նրա հոգին լուսաւորի, շատ լաւ կին էր. միտքս է, ինչպէս այսօր, ես կըլինէի էն ժամանակը 8—10 տարեկան. իմ տատս էլ հասակով ինձ հաւասար, կամ երկու մատը ցածր էր: Երկու որդի էր թողել նա, ամէն մինը 70—75 տարեկան: Նրա փոքր որդին էր իմ պապս—մօրս հայրը—հանգուցեալ Մելքումենց Մարգարը, որ մի բարձրահասակ ալեզարդ ծերունի էր: Առաւօտն ինչքան էլ շուտ զարթնէինք, մենծ տատս ոտի վերայ էր, իսկ նրա հարսը՝ իմ տատս՝ մօրս մայրը՝ Մարգարի կինը մօտ 70 տարեկան ոտ ու ձեռից ընկած մի պառաւ, շատ նեղանում էր, որ չէր կարողանում իր սկեսուրից շուտ վեր կենալ:

—Դէհ, լուացուեցէք պրծաք՝ եկէք, անօրինում էր Մարգար պապս ու ինքն առաջ ընկնում և մօտենում մեզ հետ միասին էս մի մատը տիկինի ձեռը պաչում, բարի լոյս տալիս:

¹) Թաւիշ. ²) Փայլում է.

Այնուհետև մեծ տատի սիրելի պարապմունքը մեզ երեխաներիս իւր չորս կողմը հաւաքել՝ հին հին բաներ պատմելն էր:

Լուսահոգին շատ քաղցր և ճարտար լեզու ունէր: 135 տարուան մէջ նրա գլխովը շատ չար ու բարի էին անցել և բոլորն էս օրուան պէս միտքն էր: Քանի՞ անգամ Ալաշկերտ, Գլասոր քոչ էին գնացել, որքան հայեր էին կախուել գիւղի գլխին, Օսմանցին, լեզգին, Բօռ շահը, Չօլախ խանը, տէրտէրի ապայ Թուրքացած վէզիրը ինչ նեղութիւններ էին տուել Աշտարակին, Գէորգ խալֆէն, Գևոնդ աղէն, տէր Յարութիւնը, պռճկուած տէր Մելքսէթն ինչ կռիւներ էին ունեցել, Խորիշան խանումը, Սուսամբար տէրտէրակինը, Համամփիւս խանումն ինչպէս էին իրարու սիրել, մեր դրախտումը հրեշտակների հետ ծլվլացող պապը (այսինքն տատիս ամուսինը) քանի՞ անգամ է իւր վերայ բարկացել ու ծեծել, գլուխը ինչ ցաւացնեմ, որքան կարողացել եմ գրել, 1000 ապատիկ աւելի բաներ պատմել է մեզ:

—Մենծ տատի ջան, քեզ աղքայութիւն, Վարդն ում նման էր, Մանուշակը կըլնէր սիրուն, թէ մեր Մարգարիտը, Ներսէսն էր գալում ¹), թէ ես. հարցնում էի ձեռքս նրա վզը փաթաթելով:

—Մենծ տատի ջան, Գէորգ խալֆենք քանի՞ գոմէշ ունէին, քանիսի ճակատն էր ղաշկայ ²), խօսքն ինձանից խլելով հարցնում էր ընկերս:

—Այ բալէք ³) դէ կացէք մի ջուղաբը տամ, յետոյ մէկէլը հարցրէք է. քեզ ասում եմ, որ Վարդը շատ սիրուն երեխայ էր, ինց որ դու. Մանուշակն էլ՝ հէնց բոնի՝ ⁴) մեր Մարգարիտը, համա Ներսէսը քեզանից գալում էր, բաւականացնում էր նա ինձ:

Մի՞թէ չէ, թէ Գէորգ խալֆենք քանի՞ գոմէշ ունէին, ես ինչ գիտեմ երկու—երեք հարիր, հինգ հարիր, համա մի օր մեր դուռը կանգնած համբարեցի, 30ի ճակատը ղաշկայ էր ու պոչն էլ ծաղիկ, ընկերիս սիրտը շահում էր տատս: Եւ այսպէս նորից սկսում էր Մանուշակի ու Վարդի գիմաց գծագրութեանց և Ներսէսի ճարպիկութեան մանրամասն նկարագրութիւնը:

Ահա այս իմ մեծ տատիկենք պարտականս, ընթերցող, ես և դու, ես գրելով իսկ դու կարդալով: Աւաղ, որ այն ժամանակը ոչ

¹) Ճարպիկ. ²) Խատուտիկ. ³) Որդիք. ⁴) Կարծես.

կարդալ գիտէր, ոչ խելքս բան էր կտրում, թէ չէ շատ բաներ կա-
րող էր մօտ դարուկլխուան կենդանի պատմութեան հետաքրքրիր ճշմար-
տութիւններից ի լոյս ածել, որոնք նրա հետ միասին յաւիտեան
անհետացան հայկական դրականութեան տարեգրութիւնից:

Հա՛, էն էր ասում. հոկտեմբերի վերջումն էր. նոր մաճարը հա-
սել էր, մի բաժակ դատարկողի լեզուի տակին քաղցր պճպճում էր.
ամէն լիութիւն աշտարակցոնց քունջ ու պուճախը լցրել էր. տա-
րեկան ալիւրներն աղացած՝ ամբարը ձխտուած էր, քաղցրեղէնին էլ
հաշիւ չկար, պարարտ մսացուներ ամէն դռնից սասը դուս կըգային,
հիմիկուան պէս չէր, որ տանից մի կով հազիւ դուրս գայ: Ոչինչ պա-
կասութիւն չէր մնացել, մի դափ ու զուռնայ էր պակաս, որ երբ
ուզենաս՝ զուռնաչի Փիլօյին ու քառ [1]) Անդօյին կանչես, մի առա-
ւօտ դռանդ կանգնացնես, տղեդ կամ աղջկանդ հարսանիքի մսը
մորթես ու երեք օր երեք գիշեր, բոլոր գեղի հետ միասին քէֆ, ու-
րախութիւն անես, մի սիրուն ոտ ու ձեռից ջուր ածող, տղիդ
կողքը տաքացնող պատի հարսը տուն բերես ու նոր խնամքը շա-
տացնես:

Ահա այս խակ օրերից մէկումն էր, որ տէր Յարութիւնենց ու
Գէանդ աղենց բակը երեխաներով ու բազմութիւնով լիքն էին:

— Ա՛խ նանի ջան, ուրախ եմ որ իմ մուրազիս հասնում եմ,
բայց ափսոս, որ էստեղ չի իմ ապաւէնս:

— Հա՛ բալա ջան, էրնէկ չէր, հէնց հիմի ստեղ ուէր:

— Թէ որ իմանայի, որ իր խօսքը կըպահէր կըգար, էլի յետ
կըքցէի մի ամիս:

Լաւ կըլնէր որ գար, համա վա՜յ թէ չըգայ: Գնա, բալէս, սուրբ
Կարապետը համբրի ու յետ արի: Համբուրեց սուսամբար սիրուհին
Ներսէսին ու ձանապարհ քցեց:

Նորափեան տիրացուի շորերը հագին կարմրաւոր է գնացել իր
մակարների [2]) հետ, ախա արել, յետ է գալիս, հարսանիքը նստած
երեկոն է. հիւրերը բազմած են, սեղանը քաշած է, սպասում են, որ Նո-
րափեանն տուն մտնի, իւր համար դրած բարձի վերայ կանգնի, որ
տէրտէրը սեղանն օրհնի, ուրախութիւնն սկսուի:

Բակի դուռը նոր մտք դրից Նորափեանն իւր մակարներով

---

[1]) Խուլ. [2]) Արխապարդ հարսնաւորներ՝ Նորափեսի ընկերակիցքը.

մեղրամոմերը ձեռքերին վառած՝ եալա [1]) կանչելով, դափ ու զուռնի
առաջնորդութեամբ, որ իրանց քամակից չորս ձիաւոր Գրգասանի
շորերով զրահաւորուած՝ ներս մտան:

Նորափեսան յետ մտիկ տուեց ու մոռացած իր փեսայութեան
յարմար համեստութիւնը, ձեռքի մոմը իւր խաչեղբօրը տուեց ու
վազեց իջնող եկուորի վիզը փաթաթուեց: Մակարները զարմացած
մնացին. դափ ու զուռնէն էլ դադարեց. բոլորը մտիկ էին տալիս այս
նոր եկաւորին:

Դափ ու զուռնի ձայնը կտրուելուն պէս՝ տանից դուրս թափե-
ցան մի քանի սպասաւորողներ պատճառն իմանալու: Չէր կարելի
մինչեւ փեսի ներս մտնելն և իւր տեղը կանգնելը զուռնէն դադարեցնել:
Քիչ ժամանակից բոլոր հարսանիքաւորները երկմտութեան մէջ դուրս
թափուեցան. Սուսամբար սիրուհին փոքր մնաց իրեն կորցնում էր:

— Վա՜յ գլխիս, դուռաց տէրտէրակինը, չըլնի՞ մի քամբաղդու-
թիւն ա պատահել, զուռնի ձէնն ընչի՞ կտրուեց: Խեղճը բազմու-
թիւնը ճղելով մէջ էր մտնում:

— Չէ, նանի ջան, չէ, քամբաղդութիւն չըկայ, յառաջ արի,
լսելով Ներսէսը մօր ձայնը, կանչեց նրան: Արի, Աստուած քո ա-
ղօթքը լսեց, արի հիմի դու գրկիր քո որդու ազատողին, արի տես
սուրբ Կարապետն ինչ ղօնաղ է ղրկել մեզ համար, արի համբու-
րիր Վանեցի Մանուկի տղայ Վարդան աղին, որի համար դու ամէն
օր աղօթք ես անում, արի տես էն քաջ տղամարդին ու իր աղնիւ
ընկերներին, որոնք քո որդուն գերեվարից հանեցին, քեզ բաշխեցին:

— Վարդան աղէ՞ն, ծվաց պառաւն ու ընկաւ այն անծանօթի
ոտները, որին մենք շատ վաղուց ճանաչում ենք:

Ով զգայմունք ունի, թող մտնի Վարդի դրութեան մէջ. այն
կինը, որ իւրեան մանկութիւնից մայրութիւն է արել, հիմի իւր ոտ-
քերի տակին ընկած է ու իրեն բարերար է կոչում:

Արտաշարժ էր տեսարանը: Պառաւն իւր գրկի մէջ սեղմած ունի
հարազատ զաւակի նման մի քանի րոպէ Վարդին, որ այժմ անմը-
ռունչ կանգնել է իւր մօրը փոխարինողի առաջին:

Ներսէսն օգուտ քաղած Վարդի ու իւր մօր գրկախառնութիւ-
նից՝ փոխնակի մէկի կամ միւսի հետ էր համբուրվում: Նոյնը և
պառաւն արեց. մէկին թողում՝ միւսին սկսում է:

---

[1]) Կեցցէ.

Հարսանիքաւորներն աչքերը չռած՝ լուռ ու մունջ նայում էին այս իրողութեանցը:

— Բարեկամներ, յետ դառնալ դէպի հրաւիրեալները Ներսէսը, ներեցէք ինձ, որ ձեր ուրախութիւնը խանգարեցի. ինձ համար այսօր ամենքից մեծ աչքալուսանքն այս է, որ իմ հարսանիքի նստած երեկոյեան վրայ է հասնում էն մարդը, որ սրանից չորս ամիս յառաջ իմ կեանքս ազատեց. ես հիմի որ շունչ եմ քաշում, էս բաղդաւորութիւնն եմ հասնում, այս մարդի տուածն է, ինչպէս ձեզ ամենքիդ յայտնի է: Ո՞ւր են Պետրոսը, Ղազարն և Մարտիրոսը, որոնց կեանքն էլ իմ. նման սրանց բաշխածն է, հենց հիմի մեզ հետ էին, ընչե՞ իրանց ազատողներին չեն դիմաւորում:

Ներսէսը շփոթմունքից չէր նկատել, ուր իւր հետ սուրբ Կարապետ գնացած ընկերները փոփոխակի նորեկների մինին կամ մէկելին են փաթաթվում:

— Էստեղ ենք, էստեղ, խօսքդ շարունակի, պատասխանեց Պետրոսը ձեռքը Վարդի վզովը ձգած:

— Դէհ, իմ Թանգագին բարեկամներս, եալլա կանչեցէք ու նեքսև համեցէք. զուռնաչի փլօ, զուռնին զօռ տուր, քառ Անդօ, կօմբաշին [1] խփի:

Էլ ի՞նչ հարկաւոր է ասել, որ մեր նոր հիւրերը սեղանի վերի կողմը բազմեցան և ուրախութիւնն ամբողջ գիշերը կրկնապատկուել էր:

Գէորգ խալֆէն այս երեկոյ աղջկայ տան հիւրերին էր պատմում. նա էլ լսեց Վարդան աղի Գալուստը, եկաւ տեսութիւն արեց ու գնաց:

Բոլոր հարսանիքաւորներն այս գիշեր անդադար համբուրվում էին քրդստանցիների հետ, բայց ոչ մէկի մտքովը չանցկացաւ, թէ երբ և իցէ սրանցից մէկին տեսած լինի: Պէտք է ասել, որ մեղաւոր էլ չէին. Վարդը հագուստով, կերպարանքով, լեզուով բոլորովին փոխուել էր, ոչինչ բանով չէր զանազանվում իւր միւս ընկերներից:

ԾԲ.

«ՆՐԱՆՔ ՀԱՍԱՆ ԻՐԱՆՑ ՄՈՒՐԱԶԻՆ, ԴՈՒ ԷԼ ՀԱՍՆԻՍ ՔՈ ՄՈՒՐԱԶԻՆ:»

Կարմիր արեն ապխտակի փոխուեցաւ, աշնան բարակ հովը որ

[1] Կռուացլուխ փայտը, որով ածում են չփորան:

մի փոքր յառաջ զգալի էր, այժմ տեղի տուեց արեգակի տաքութեանը:

Գիւղերն էս գիշեր անքնութիւնից ու քէֆից ուռած բարեկամները կամաց կամաց հաւաքուեցան տէր Յարութիւնենց տունը. մի ազատ տղայ հալաւը գլխին դրած՝ նորափեսէն իւր խաչեղբօր ու փեսաղբօր հետ հիւրերի քամակն ընկած՝ գնացին Ղևոնդենց տունը հարսին պսակ տանելու:

Բակի դուռը դրանց դիմաւորեցին Խորիշան խանումը, որ տանտիկնոջ տեղն էր բռնում և պառաւ Սանդուխտը, որ նորահարսին մայրութիւն էր արել: Երկուսն էլ մի մի կտոր շուշուխ [1] նորափեսի բուռը դնելով՝ համբուրեցին ճակատն ու յետ դարձան առանց մի խօսք արտասանելու:

Տունը մտնելուս նրանց ընդունեց Գէորգ խալֆէն: Տէրտէրը վերի կողմը բազմած էր նորափեսի տեղի մօտ: Հալաւօրհնէքը պրծան ու տարան նորահարսին հագցնելու:

Ի՞նչ ասել է հարկաւոր, որ փեսայի կողմից եկած խնամիների մէջ առաջին տեղը բռնած էին մեր քրդստանցիք, որոնք այժմ բոլորի ուշադրութեան առարկան էին դարձել:

— Այ, տեսնում ես էն սև սև աչքերովը, էն ամենքից բարձրը, կարմիր ջուբբէն՝ ու դեղին լափչիները [2] հագին մարդը. նա ա Վանեցի Մանուկի տղայ Վարդան աղէն, ցոյց էին տալիս միմեանց Աշտարակեցիք:

— Մեր տղայ, ինչ որ դօչաղութիւնն [3] աչքերիցը թափվում ա, խօսում էին միմեանց հետ երիտասարդները, տեսնում ես ինչ զարզանդէլ երես ունի, սա որ մի անգամ աչքը դուշմանի վրայ չռի, անմահ անգրող լեզապատառ կանի, կապանի:

— Տղէք ջան, ո՞ւմ նման ա, ես ուզում եմ մին նմանցնել ու միտս չեմ բերում, խորին ուշադրութեամբ զննելով իւր կասկածը յայտնեց սիւնի տակին քսփչող պառաւներից մէկը:

— Էհ ի՞նչ ես խօսում, Բարսեղ, հակառակում էին միւսները, դրա նման որ մեր գեղումը մինն էլ ա ըլնէր, էլ ի՞նչ դարդ ունէինք, մի Թուրք չէր կարող մեզ մօտ գալ, տեսնում ե՞ս Թրի երկարութիւնը, հենց իմանաս Քեօռօղլուի Թուրն ըլի:

— Աչքէյ'ի ա, ազնէյ'ի, դրա մէրը դրա պէս օխտը պտի բերած ըլնէր, զովաբանում էին մինը կամ միւսը:

[1] Քաղցուից եփած քաղցրեղէն: [2] Կօշիկներ: [3] Քաջութիւն:

Այս խօսակցութիւնները թէպէտ շատ կամաց էր լինում, բայց Վարդի ականջը սուր էր, ամեն տեղ էլ հասնում էր:

Հաշիւ չկար Ներսիսի ու իւր ընկերների ազատութեան պատմութիւնը կրկնուելուն. դրանից տան մանուկը մէկ էլ էր ուզում լսել:

Շատ խնդրում էին, որ միանգամ Վարդն իւր բերանովը պատմէր, բայց նա միշտ փախս էր տալիս ու իւր ընկերների վերայ թողնում. ով գիտէ, կարելի է խոնարհութիւն էր գործ դնում, կամ գուցէ չէր ուզում երկար խօսել. այդ իրան էր յայտնի: Բայց եթէ ուշի ուշով զննելու լինէինք, կտեսնէինք, որ Վարդը շատ սակաւ էր խօսում և այն էլ մի երկու բառով հարցերին պատասխանելով:

— Տէրտէր, պատրաստուիր ձեռ ձեռի տալու, դուրս եկաւ Ներսիսի սենեկից կառավարիչը, հարսին հագցրին պրծան, էս ա դուս ենք բերում:

Մեծ հացատունը, որի մէջ խնամիքն ու հարսանիքաւորներն էին հաւաքուած՝ իւր արևելեան կողմն ունէր մի սենեակ: Այդ Մանուշակի կացարանն էր. այնտեղ էր նա օրերով փակվում, իւր մտածմունքների հետ ընկնում: Մանաւանդ քանի նշանուել էր, շաբաթներով պառաւ Սանդուխտի տեսութիւնից էլ փախչում էր, իւր սիրելի քնջումը մի ձեռը ծնօտին, միւսը ծոցումը դրած՝ կաթիլ կաթիլ արտասուքները թափում էր աչքերից:

Շատ անգամ պառաւ տատին աղաչել էր Ներսէսը, որ Մանուշակի կամքն առնի, մի գիշեր տուն տանի, նրա մօտ մի քիչ նստի, Սանդուխտն էլ ցանկանում էր այդ բանն իւր սանի տրտմութիւնը փարատելու դիտաւորութեամբ, բայց աղջիկն իւր սածի մերժում էր դառնում ու սենեկի դուռը պառաւի վերայ սաստիկ խփում, մէջը փակվում: Նախսի օրերը նրա բերանը նշխար չէր մտնիլ, քաղցած, ծարաւ կանգկացնէր:

Խեղճ պառաւի ձայնը կտրած՝ բացէ ի բաց մերժեց Ներսէսին և խօսք առաւ, որ մինչև պսակ տանելու օրն իրանց չեմքը նրա համար պատ լինի:

Ահա այս սենեկումն են հաւաքուել հրաւիրած կանայքն և այս տեղ են հագցրել նորահարսին հալաւը:

Գէորգ խալիֆէն ինչպէս հայր՝ եկել օրհնել ու դուրս է գնացել, հիմա Խորիշան խանումն է օրհնում:

— Ծլէս, ծաղկէս, աճէս, բաղդաւոր ըլէս, փուշ բռնես՝ վարդ դառնայ, հող բռնես՝ ոսկի փոխուի, տասն երկու տղայ բերես, էս հալաւի մէջ առջինեկդ համբուրենք, իրար հետ հալւորէք, իրար հետ պառաւէք, մի բարձի ծերանաք, քո ոտը քո դռանը՝ քո աչքը քո օճաղին ըլի, քեասիրների [1]) հարարին հանես, կորուկ տանտիկին դառնաս, չերեփը ձեռիցդ ու վէր ընկնի, մարդով, որդկերանցով, թոռներով ճաշ նստես ու վերջն էլ քո ազիզների մի բուռը հողին արժանանաս:

Մանուշակը չոքեց Խորիշան խանումի ոտը պաչեց:

— Դէ մօտ արի, Սանդուխտ տատի, արի, մի լաւ օրհնի, քո օրհնութիւնը սրա համար թանգ ամի. մենք ենք սրա ազգ ու ընտանին, դու էս օր սրա մօր տեղն ես, լիս դառնայ իմ խեղճ ջրատար տէգերակինը, հոգւոց քաշելով, Սանդխտի կռնից յառաջ քաշեց Խորիշան խանումը:

— Հողն ու կիրն իմ գլխին, սև ու մութն իմ արևին, գլխին ծեծելով մօտ եկաւ չորացած աչքերից թափելով Սանդուխտը. երնէկ կըլէր, սրանից մի քանի տարի յառաջ էս իմ բայղուշ գլուխս հողը մտնէր, ու էս թաւուր [2]) օրն իմ բալին ընէնց սիրտը կոտրած չտեսնէի պսակ գնալուս, մրմռաց իւր մէջ պառաւն ու Մանուշակի գլուխն իւր գրկի մէջ առած՝ արտասուքի մէջ խեղդուած ոչ մի բառ չէր կարողանում արտասանել:

Բոլոր կանայքը շարժուած՝ լռել կանգնել էին. մի քանի րոպէ այսպէս անցկացաւ և լռութիւնը ոչ ոք չխանգարեց:

— Դէ շուտ արէք, քիչ ջալդ [3]) ժամ եկէք, օխտը սհաթ մի փափսաք, հարսը դուս բերէք, նորափեսէն երթկի տակին հաշըր ա, ձայն տուեց կառավարիչը, գլուխը սենեկի դռնից ներս կոխելով ու յետ քաշելով:

— Գնա, բալայ ջան, գնա, Աստուած քո սրտովը քեզ տայ, արտասուախեղդ եղած՝ մի վերջին համբոյր տուեց Սանդուխտն և ուզում էր յետ քաշուել:

Մանուշակը չոքեց պառաւի ոտն էլ համբուրեց:

— Դէ չաղըաթը [4]) ծածկի, Եղսան, հրամայեց Խորիշան խանումը:

Հարսին շոր հագցնող, գլուխը կապող կինը կարմիր մետաք-

[1]) Ջքաւոր: [2]) Այսպիսի: [3]) Շտապաւ: [4]) Կարմիր մետաքսեայ հաստ քօղ:

նայ անթափանցելի Հաղրաթ կոչուած քօղը ծածկեց Նորահարսի երեսին, որով ամէն բան մթնացաւ նրա համար:

— Պատրաստ ա, ձայն տուեց կառավարիչը, և զուռնաչի փլօն որքան շնորհք ունէր՝ ողբաձայն Տարանի կոչուած եղանակը բարձրացրեց:

Տարանի կամ տանելու, այս եղանակովն է, որ զուռնաչին ուրախացնում է մի և նոյն ժամանակը փեսատիրոջ սիրտն և տխրեցնում աղջկայ տիրոջը:

— Տարա՛ն վա՜յ, ցաւում է հարսնատէրը, տարանք ջա՛ն, ցնծում է փեսատէրը:

— Հերի՛ք ա, ուստա փլօ, քո հօրն ողորմի, սրտներս մի՛ խաշել, աղաչում է հարսնատէրը:

Քանի կարաս՝ զլամն ածա՛, քեզ մատաղ, ուստա փլօ, սրտներս ուրախացրու, մեր խնամինցը լացացրու, քո խալաթն իմ աչքի վրէն, հրախուսում է փեսատէրը:

Վերջապէս սենեկի դուռը բացուեցաւ և երկու մանկամարդ կանայք, նոյնպէս երեսները խոր ծածկած՝ նորահարսի կռներից բռնած՝ դուրս էին բերում:

Զգիտեմ, ինչպէս եղաւ, որ Մանուշակի կարմիր քօղն ընկաւ դրան շեմքի վրայ ցցած փակի երկաթին և ալխատ ծածկոցի տակից դուրս քաշեց քօղի ծայրը, երեսի կէսը յետ բացուեցաւ:

Մի սուր ճիչ, մի բարձրաձայն ախ դուրս թռաւ մեր Նորահարսի բերանից. նա թուլացաւ, դրան մէջը վէր ընկաւ:

Զուռնի ձայնը կտրուեց, ամէնքը վրայ թափուեցան և անշնչացած աղջկանն ուզում էին բարձրացնել. բոլորի ոտ ձեռքը դողում էին:

Մին էլ ի՞նչ տեսնենք, բազմութիւնը յետ ճղելով յառաջ եկաւ մեր Վարդան աղէն ու թողած իւր քրդստանցու բարբառը՝ բուն աշտարակցու լեզուով ձայն տուեց:— Հեռո՛ւ, հեռո՛ւ կացէ՛ք, ոչ ով չհամարձակուի մօտ գալ, ժամանակը հասել ա, ամէն բան պարզուելու ա: Ասաց Վարդն ու յետ բանալով Մանուշակի երեսից կարմիր քօղն ու ալխատ ծածկոցը, խլեց նրանց ձեռքից ուշագնաց աղջկանն ու դուրս բերեց գրկած հացատունը:

— Ջո՛ւր, ձայն տուեց Վարդը, ջուր հասցրէ՛ք, սիրտը գնացել ա:

— Մանուշակ ջա՛ն, երեսն աղջկայ երեսին կպցրած՝ քնքուշ ձայնով ասաց Վարդը, աչքերդ բաց արա, մենակ դու կարողացար ճանաչել, քո սիրածն էր, որ քո աչքերով խօսեց քեզ հետ ու շատ

տուեց քո կորցրածին: Ես եմ, քո Վարդն եմ, զարթնի՛, հոգի ջա՛ն, ինձ էլ քեզ հետ սպանիլ մի՛, ըստուց յետը քեզ իմ ձեռքիցն ոչ ով չի խլել:

— Վա՛րդ... աչքերը բացեց ու փակեց թոյլ ձայնով Մանուշակն ու էլի ուշագնաց եղաւ:

Մինչ այս մինչ այն՝ ջուրը հասցրին, Վարդը մի ձեռով աղջկանը գրկած՝ միւսով սրսկում էր երեսին, իսկ բազմութիւնը բերանները բաց՝ շուարած մնացել էին:

— Վա՛րդ, դո՞ւ ես, աչքերը բացարեց Մանուշակը:

— Ես եմ, հոգի ջա՛ն, դու իմ խօսքին ես:

Աղջիկը բոլորովին ուշքի էր եկել, նրա գլխին չկար ոչ հարսնութեան քօղն և ոչ ալխատ ծածկոցը, նա Վարդի ձեռը բռնած՝ գլուխը խոնարհեցրած՝ կանգնած էր:

— Սանդուխտ տատի, մօտ արի, ձայն տուեց Վարդը պառաւին, որ կողքին կանգնած՝ շուարած մնիկ էր տալիս բերանը կիսաբաց ծիծաղալով, Սանդուխտ տատի, ճանաչո՞ւմ ես ինձ. հիմի դու խօսի:

— Մեռնիմ սուրբ Կիրակու ոտի տակին, բա՞ս են որ ասում էի գրածը ջնջուիլ չի:

Ողջ հարսանքաւորը ջուր կտրած՝ մնացել էին, ոչ մէկի բերանից մի խօսք չէր դուրս գալի: Ինքը Ներսէսն տատրակի տեսք էր առել ու վերացած մնիկ տալիս:

— Իմ բարեբարի տղայ, իմ հոգեառէր տիրացու Ներսէս, Աշտարակու էլ ու հասարակութիւն, բարձրաձայն խօսեցաւ Վարդը. ինչ որ Աստծու կամքն ա, էնպէս պտի ըլնի, զոռով բան չի յառաջ գնալ. Թորոսենց Ղևոնդ աղի աղջիկը նախշէ Մանուկի աղի բուլթէն ա. Ղևոնդ աղէն մեր սաղ տունը մատաղ արեց իր քէֆին, իր լեահոգի կնկանը դարդամահ արեց, դեռ էլի շատ ճշտմներ տուեց, վերջը ինչ որ տեսնում էք, ինձ էլ չօլէ չօլ քշեց, որ էս ուխտը դլուխ չըգայ, նախշէ տղէն իրան փեսայ չըառնայ, համա գրածը ջնջուիլ չի: Մի խօսքը սուտ չեմ ասում, էս բանը գիտեցողները մեռել են, մենակ էդ չորացած, մի ոտը գերեզմանում պառաւն ա մնացել, թող դա խօսի:

Ինձ էլ յայտնի ա էդ խորհուրդը, վա՜յ իմ հոգուն, քո կորչելուց յետոյ ես ինքս աշխատել եմ Աստծու կամքի դէմ գնալ, բայց

իրան էլ լաւ յայտնի ա իմ սիրտս, որ ես քեզ մեռած եմ համարել, ասաց Գէորգ խալֆէն:

— Ես եմ ամէնքից մեղաւորը, ես էլ ուզել եմ մօրս ուխտի հակառակ գնալ, խօսեց Ներսէսը. իմ աչքերն էնպէս փակուած են եղել, որ ոչ Արզրումի հանդումն և ոչ էստեղ չեմ կարողացել իմ ազատող եղբօրս ճանաչել. ասենք ես քամիներով գլուխս լցրած մոլորուել էի, էնքան բաղդաւորութիւնից մինը չկարողացայ վանեցի Մանուկի տղայ Վարդանին Աշտարակցի Մանուկի տղայ Վարդից զանազանել: Վարդ, իմ կեանք տուողս, մօտեցաւ նրան Ներսէսը, ես քեզ յաւիտեան պարտաւոր եմ, ես իմ ձեռքովս իմ նշանածին քեզ եմ տալիս: ինչպէս որ ուզում էի ձեր ուխտը քանդելու պատճառ դառնալ, նոյնպէս էլ կատարուելու պատճառն եմ դառնում. ես իմ ձեռքովս հանում եմ իմ կանաչ ու կարմիրը — կոսպանդը *) և քո կրծքից եմ կապում. գնա բարեաւ վայելիր:

Ներսէսը հանեց իւր վզայից նորափեսայութեան նշանը՝ կանաչ կարմիր թաշկինակները, որ իւր ուսովն և կրծքովը գօտկի վերայ ամրացրած էին, որ կոսպանդ է կոչվում, և իւր ձեռքովը կապեց Վարդի կրծքին:

Իմ հոգևոր քոյրս, Մանուշակ, բռնեց Ներսէսը աղջկայ ձեռքից, դու ինձ ներիր, որ ես աշխատել եմ քո կամքի հակառակ քո սրտին տիրել և էս օր էլ զօռով էի ուզում տանից դուրս քաշել. դու մանկութիւնից իմ և Վարդի մէջ մի կռուածաղիկ ես եղել, միշտ երեխայութիւնից ուզեցել ենք քեզ միմեանց ձեռքից խլել. այն ամէնը մոռացման տուր: Ես այսօր, ինչպէս քո մեծ եղբայր, կրկին քո ձեռից բռնած, տալիս եմ իմ ազնիւ եղբայր Վարդին: գնացէք էդ երկու ծաղիկներդ — Վարդ ու Մանուշակդ ձեր անուշ հոտովը ձեզ սիրող սրտերին ուրախացրէք: Նանի, կանչեց Ներսէսն իւր մօրը, մօտ արի, քո տղէն քո ուխտն էլ կատարում է, էս օր ես խաչեղբայր եմ դառնում իմ ազատողին՝ քո սիրեկան Վարդին ու էդուցուանից գնում եմ փակուել Էջմիածնի չորս պատի մէջ:

Զարմացքն և ուրախութիւնը խառնուել էին միմեանց. Ներսէ-

*) Մետաքսեայ կանաչ ու կարմիր թաշկինակներ են, որ իբրև նորափեսայութեան նշան կապում են փեսայի կրծքին. մի ծայրն ուսին ամրացնելով միւսը գօտու վերայ.

սից սկսած՝ մինչև վերջին հարսանիքաւորներն ամէնքն էլ բաւական էին: Պառաւ Սանդուխտի ու Մուսամբար տիրուհու ոտքերը գետնիցը կտրուել էին:

Նորափեսայ Վարդն իւր խաչեղբայր տիրացուի հետ երկար ժամանակ գրկախառնուած մնացել էին:

Հարսնութեան քօղը կրկին ծածկեցին Մանուշակի երեսին: Ներսէսն ինքը ձեռք ձեռքի տուեց նրանց և տէրտէրն աղօթքը կարդաց:

— Հիմի ես գիտեմ, որ իմ օրերս մօտեցել են, համբուրելով Վարդին ու Մանուշակին, ասաց պառաւ Սանդուխտը:

Երեք օր երեք գիշեր տէր Յարութիւնենց տանը մեծ հարսանիք էր:

Հարսանիքը վերջացաւ ուրբաթ երեկոյին: Շաբաթ առաւօտ մեր տիրացուն Գէորգ խալֆից մի նամակ ստացած՝ Էջմիածին գնաց: Լոյս կիւրակէ Գալուստ եպիսկոպոսը սարկաւագներ էր ձեռնադրում: Ընտրուածները յառաջ վեց էին, իսկ այժմ եօթն են: Եօթներորդը Ներսէսն էր:

Եթէ հետաքրքիր ընթերցողը ցանկանայ հետևել մեր սարկաւագի կենսագրութեանը, կը գտնի նրան 1857 թուին, մի չարագուշակ առաւօտ՝ փետրվար ամսի 13ին՝ Թիֆլիզում վախճանած:

Իսկ եթէ այժմ կամենաս այցելել նրա սուրբ գերեզմանին, արի ինձ հետ մտնենք Էջմիածնի պարիսպը:

Վանքի արևմտեան պատի մօտ, զանգակատան հարաւային կողմը մի մարմարեայ տապանաքար է դրած: Կարդա նրա վերայի արձանագրութիւնը. «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ»:

Ահա մեր սիրահար տիրացուն, մեր վիպասանութեան գլխաւոր հերոսներից մէկը:

Աշտարակու Շահազիզենց կամ Թորոսենց գերեզմաններ կոչուած հանգստարանումն այսօր էլ դրուած են միմեանց մօտ երկու ձիաքար գերեզմաններ: Տապանագրերը ցոյց են տալիս այս նուիրական նշխարների տէրերին:

Առաջինն է. «Այս է տապան բազմաշխատ Գէորգ խալֆին, որ է որդի Յովհաննէսին, բայց ոչ ծնաւ որ-

գին և որդուցն կարօտ վախճանեցաւ։ Թիւ Հայոց Ռ. Մ. Ծ. Գ.» որ Քրիստոսի Թուականովը լինում է 1804։

Երկրորդ տապանագիրն է. «Այս է տապան խորիշանին, որ է կենակից Գէորգ խալֆին և է դուստր Ազարիային գառնեցւոյ Պռօշեանց. Թիւ Հայոց Ռ. Մ. Ծ. Ա.» (1802)

Ափսոս, որ ինչքան պտտեցի, չգտայ Աշտարակու գերեզմանատներումը Վարդիս, Մանուշակիս և պառաւ Սանդուխտ տատիս համար յիշատակութիւն։

ՎԵՐՋ.

ԱՆՈՒԱՆՔ ՅԱՐԳՈՅ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

Որքանութիւն օրինակի։

ԱԳՈՒԼԻՍ

Գեր. Գէորգ վարդապետ Սուրէնեանց 1
Արժ. Մամբրէ վարդապետ Սանասարեանց 1
պ. Ա. Գէորգեանց 1
պ. Ա. Թովմայեանց 1
պ. Ա. Տէր Կարապետեանց 1
պ. Աղէքսանդր Տէր-Մկրտչեանց 1
պ. Աւետիս Աղամիրզեանց 1
պ. Բաղդասար Տէր Միքայէլեանց 1
պ. Երուանդ Գիւլումեանց 1
պ. Թ. Ղարիբջանեանց 1
Թագուհի Աղամեանց, հին-Նախիջեանցի 1
պ. Խ. Խօջամիրեանց 1
պ. Խ. Յովհաննիսեանց 1
պ. Կ. Խօջամիրեանց 1
պ. Հ. Արապխանեանց 1
Հռիփսիմէ Մնացականեանց 1
Մանուշակ Յակոբեանց 1
Մարիամ Աղամիրզեանց 1
Մարիամ Աւետեանց ներքին Ագուլիսից 1
պ. Մարտիրոս Դուլղարեանց 1
պ. Մարտիրոս Հախնազարեանց 1
պ. Մինաս Մնացականեանց 1
պ. Յ. Կոստանդինեանց 1
պ. Յ. Տէր Նիկողոսեանց 1
պ. Յարութիւն Աղամիրզեանց 1
պ. Յարութիւն Շահնազարեանց 1
պ. Յովհաննէս Փանեանց 1
Նազելի Շահնազարեանց 1
պ. Սարգիս Դուլղարեանց 1
պ. Սարգիս Հախնազարեանց 1
պ. Սիմէօն Սիմէօնեանց, հին Նախիջևանից 1
պ. Ստեփաննոս Սարգսեանց 1
32

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՊՕԼ

Արժ. Մելքիսեդեկ քահանայ Մանուկեանց 1
պ. Մինաս քահանայ Տէր Պետրոսեանց 1
պ. Աբրահամ Յովհաննիսեանց 3
պ. Ազարէգ Ամիրեանց 1
պ. Ազարէգ Արշակունի 1
պ. Աղէքսանդր Մխիթարեանց 1
պ. Աղէքսանդր Սիմէօնեանց 1
պ. Աստուածատուր Խանդաթեանց 1
պ. Արշակ Տէր—Ղազարեանց 1
պ. Գեղամ Տէր—Պետրոսեանց 1
պ. Գէորգ Տէր -Մարտիրոսեանց 1
պ. Գրիգոր Խալաթեանց 1
պ. Հայկ Ջալալեանց 1
պ. Հայրապետ Ղուկասեանց 1
պ. Մակար Տէր—Սարգսեանց 1
պ. Մարտիրոս Բօզարճեանց 1
պ. Մարտիրոս Կոստանեանց 1
պ. Միքայէլ Յովնաթանեանց 1
պ. Մկրտիչ Արաքաճեանց 1
պ. Յարութիւն Ստամբօլցեանց 1
պ. Յովհաննէս Աբգարեանց 1
պ. Յովհաննէս Քիւրքչեանց 1
պ. Պետրոս Հայկազունի 1
պ. Պետրոս Յօհանջանեանց 10
պ. Սարգիս Շաթրեանց 1
պ. Սարիբէգ Ոսկեանց 1
պ. Սարիբէգ Տէր—Մելքիսեդէկեանց 1
պ. Սիմէօն Տէր—Մարուգեանց 1
պ. Վահան Տէր Յովհաննիսեանց 1
պ. Վարոս Գեօնջեանց 1
պ. Վարոս Հիւրմիւզեանց 3
44

ԱԽԱԼՑԽԱՅ

Սրբ. Գրիգոր Արք - Եպիսկոպոս Սագինեանց 1

պ.	Աբրահամ Խաղախորդեանց	1
պ.	Աղէքսանդր Ինճիկեանց	1
պ.	Աղէքսանդր Մուրճեանց	1
պ.	Արշակ Յակոբեանց	1
պ.	Արշակ Սաղաթելեանց	1
պ.	Աւետիք Ալլանեանց	1
պ.	Աւետիք Հայրապետեանց	1
պ.	Բարսեղ Բարսղեանց	1
պ.	Գրիգոր Պառուզեանց	1
պ.	Կարապետ և Մկրտիչ Մութաֆեանք	2
պ.	Համազասպ Վարդանեանց	2
պ.	Մանուկ Գիւլբանդեանց	1
պ.	Մարտիրոս Սօղոմոնեանց	1
պ.	Մկրտիչ Ղանթարչեանց	1
պ.	Մկրտիչ Մովսիսեանց	1
պ.	Մովսէս Սամուէլեանց	1
պ.	Յարութիւն Տէր — Մարգարեանց	1
պ.	Յովհաննէս Շիրինեանց	1
պ.	Վասիլ Գասպարեանց	1
պ.	Վարդան Վարդանեանց	1
պ.	Տիգրան Ճարակեանց	1
		25

Ա Խ Ա Լ Ք Ա Լ Ա Ք

Արժ.	Եղիշէ քահանայ Տէր Ղազարեանց	1
Արժ.	Խորէն աւագ քահանայ Բարսեղեանց	1
Արժ.	Տէր Մանուկ Բաղրդանեանց՝ քահանայ Ալաստանու հայ կաթոլիկաց	1
Արժ.	Յովհաննէս քահանայ Բաջաղնունի	1
Արժ.	Թադէոս սարկաւագ Գասպարեանց	1
պ.	Աբրահամ Երէցփոխեանց	1
պ.	Աղէքսանդր Զինգարեանց	1
	Եղիսաբէթ Քանանեանց	1
պ.	Կարապետ Պիճիկեանց	2
պ.	Հայրապետ Գրիգորեանց	2
պ.	Հաջիբաբ Փէշտմալջեանց	1
պ.	Յարութիւն Յարութիւնեանց	3
պ.	Յարութիւն Մարգարեանց	1
պ.	Յովհաննէս Բարայեանց	7
պ.	Յովհաննէս Ստեփանեանց	1
պ.	Յովհաննէս Քանանեանց	1
պ.	Ոսկան Տէր Յովհաննիսեանց Ազավրեցի դպիր	1
տ.	Սոփիա Դարայլանեանց	1
պ.	Ստեփաննոս Աբովեանց	1
պ.	Ստեփան և Արմենակ Փէշտմալճեանք	2
պ.	Ստեփաննոս Յօհանջանեանց	3
		35

Ա Շ Տ Ա Ր Ա Կ

պ.	Աղէքսանդր Շախեանց	1
պ.	Մնացական Ընթանեանց	1
պ.	Մերկեւլոս Շախեանց	1
պ.	Մեսրոպ Զաղեան [1]	1
պ.	Յակոբ Աղումեանց	1
պ.	Յարութիւն Բօյաղչեանց	1
պ.	Պետրոս Տէր Կարապետեանց Տաթեւացի	1
պ.	Սամսոն Ազատեանց	1
պ.	Փոքրիկ Թորոս Բօյաղչեանց [2]	1
		8

Ա Ս Տ Ր Ա Խ Ա Ն

Գեր.	Յովհաննէս վարդապետ Շիրակունի	1
Արժ.	Յարութիւն Աւագ քահանայ Տաւրչինեանց	1
Արժ.	Յովսէփ աւագ քահանայ Բունիաթեանց	1
պ.	Անդրէաս Հայրապետեանց Շուշեցի	1
պ.	Բ. Թուէլեանց	1
պ.	Բ. Կրասիլնիկեանց	1
պ.	Գրիգոր Կարապլեանց	1
Տ.	Եղիսաբէթ Կուզնեցեանց	1
պ.	Խաչատուր Գաղաչեանց	1
պ.	Կարապետ Սողոմոնեանց	1
Տ.	Մանուշակ Գրիգորեանց Վաղարշապատեցի	1
պ.	Մատթէոս Պոպովեանց	1
պ.	Մելքում Մելքումեանց	1

[1]) Նուէր Աշտարակու օրիորդաց դպրոցին։

[2]) Նուէր օրիորդ Տաւիկային։

պ.	Մկրտիչ Պոպովեանց	1
պ.	Մ. Դուրգարեանց	1
պ.	Յարութիւն Բուզդանեանց Խնձորեսկցի	1
պ.	Յակոբ Բաղրամեանց	1
պ.	Յակոբ Սօբօլեանց	1
պ.	Յարութիւն Տէր—Մատթէոսեանց Սղնախեցի	1
պ.	Յոհան Ալլանեանց	1
պ.	Յովհաննէս Համազասպեանց	1
պ.	Յովհաննէս Շամխարեանց Վաղարշապատցի	1
պ.	Յովհաննէս Ստեփանեանց	1
պ.	Յ. Սունդուկեանց	1
պ.	Յովսէփ Կիրէյեանց	1
պ.	Սարգիս Խաչատրեանց	1
պ.	Սիմէօն Խօջայեանց	1
պ.	Սիմէօն Կազաչկեանց	1
պ.	Ստեփաննոս Նազարեանց	1
պ.	Քրիստափոր Տէր Մինասեանց Ագուլեցի	1
		32

Բ Ա Գ Ո Ւ

Գեր.	Խորէն վարդապետ Ստեփանէ	1
Արժ.	Թադէոս Աւագ քահանայ Բուդաղեանց	1
պ.	Աղէքսանդր Ծանչիեանց	3
պ.	Աղէքսանդր Սարգսեանց	1
	Աննա Սափարեանց	1
պ.	Աւաքել Ծատուրեանց	1
պ.	Գէորգ Բայեանց Աստրախանցի	1
	Եղիսաբէթ Ալլանեանց	1
	Եղիսաբէթ Սարգսեանց	1
	Եղիսաբէթ Սաֆարեանց	1
պ.	Մատթէոս Մամիկոնեանց	2
	Մարգարիտ Ջօհրաբեանց	1
	Մարգարիտ Թումայեանց	1
պ.	Մինաս Կաճկաճեանց	1
պ.	Միքայէլ Ջօհրաբեանց	1
պ.	Յաբէթ Տէր Յակոբեանց	1
	Նունէ Վերմիշեանց	1
պ.	Ջաւադ Ղալիեանց	1
	Վառվառիա Նազարբէգեանց	1
		22

Գ Ա Ն Ձ Ա Կ.

պ.	Ներսէս Տէր Ներսէսեանց	8

Ե Ր Ե Ւ Ա Ն.

Գեր.	Կարապետ վարդապետ Այվազեան	1
պ.	Աբգար Գաղեանց	1
պ.	Աղէքսանդր Յօհաննեանց	1
պ.	Աշոտ Տէր Վարդանեանց	1
պ.	Արիստակէս Նուզգարեանց	1
պ.	Արշակ Սարգսեանց	1
պ.	Գէորգ Յովհաննիսեանց	1
պ.	Եմին Տէր Գրիգորեանց	1
պ.	Համբարձում Թադէոսեանց	1
պ.	Մկրտիչ Շահարչեանց	1
պ.	Միքայէլ Աթանասեանց	1
պ.	Յովհաննէս Ղօրղանեանց	1
պ.	Ներսէս Թօփիրեանց	1
պ.	Նիկողայոս Տէր Մովսիսեանց	1
պ.	Պօղոս Մելիք Դադայեանց	1
պ.	Պօղոս Պօղոսեանց	1
պ.	Ռուբէն Հասան-Ջալալեանց	1
պ.	Սողոմոն Մէլիքեանց	1
պ.	Ս. Սաժումեանց	1
պ.	Ստեփան Նաւասարդեանց	1
պ.	Տիգրան Տէր Յակոբեանց	1
		21

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Սրբ.	Երեմիա եպիսկոպոս	1
Սրբ.	Մեսրոպ եպիսկոպոս Սմբատեանց	1
Սրբ.	Վահրամ եպիսկոպոս Մանկունի (1)	1
Գեր.	Գարեգին վարդապետ Սադունեանց Աշտարակեցի (2)	2
Գեր.	Գէորգ վարդապետ Արամելքեանց	1
Գեր.	Գէորգ վարդապետ Արակչեանց	1
Գեր.	Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեան Երեւանցի	1
Գեր.	Զաքարիա վարդապետ	1
Գեր.	Կիւրեղ վարդապետ	1
Գեր.	Ղեւոնդ աբեղայ Յովակիմեանց	1

[1]) Նուէր Սարգիս Արք. եպիսկոպոս Հասան—Ջալալեանցին։

[2]) Մի օրինակը նուիրում է Նուխեցի դպիր Մելքիսեդեկ Խաչատրեանցին։

գեր. Յովհաննէս վարդապետ Փէշտմալճեանց 1
գեր. Յուսիկ Աբեղայ Յովհաննիսեանց 1
գեր. Ներսէս վարդապետ Խուդավէրդեանց 1
պ. Եփրեմ սարկաւագ Սուքիասեանց Աշտարակեցի 1
պ. Արշակ Տէր Յովսէփեանց 1
պ. Աւետիս Շահնազարեանց Գանձակեցի 1
պ. Գարսևան Ալկոնի 1
պ. Գ. Սմբատեանց 1
պ. Գէորգ Ջանիբէգեանց 1
պ. Գրիգոր Տէր Մատթէոսեանց 1
պ. Գիմէնիոս Մուշեղեանց 1
պ. Զաքարիա Տէր Զաքարեանց 1
պ. Լևոն Թիւսիկեանց 1
պ. Կարապետ Ջանիբէգեանց Ալեքսանդրպօլցի 1
պ. Հայրապետ Ջանիբէգեանց 1
պ. Հ. Ստամբօլցեանց 1
պ. Ղազար Տէր-Ղազարեանց 1
պ. Մ. Մամեանց 1
պ. Մ. Մամիկոնեանց 1
պ. Մատթէոս Տէր—Պետրոսեանց 1
պ. Մովսէս Վարդանեանց 2
պ. Յարութիւն Տէր—Գաբրիէլեանց Սիսական 1
պ. Յովակիմ Շամքոռեանց 1
պ. Յ. Այվազեանց 1
պ. Ն. Տէր Յովսէփեանց 1
պ. Պօղոս Ճէպէճեանց 1
պ. Ջաւադ Մելիք-փաշայեանց 1
պ. Ս. Գրիգորեանց 1
պ. Սուքիաս Թաղիանոսեանց 1
պ. Ստեփան Մուշեղեանց 1
պ. Տէր-Մինասեանց 1
պ. Փ. Նաւասարդեանց 1
պ. Փիլիպպոս Շահրիմանեանց 1

45

ԹԵԼԱՒ

Արժ. Աբէլ քահանայ Սուքիասեանց 1

ԹԻՖԼԻՍ

Արժ. Գէորգ քահանայ Գալստեանց 1
Արժ. Եղիշէ քահանայ Տէր Գրիգորեանց 1
Արժ. Ղազար Աւագ քահանայ Թալի-գալիֆայեան 1
Արժ. Յովհաննէս Աւագ քահանայ Տէր Գալստեանց Ախալքալաքցի 1
Արժ. Ստեփաննոս քահանայ Սամուէլեանց 1
պ. Աբրահամ Տէր Ղևոնդեանց 1
պ. Աղէքսանդր Արբեանց 1
պ. Աղէքսանդր Աֆրիկեանց Ալեքսանդրպօլցի 1
պ. Աղէքսանդր Բէլախեանց 1
պ. Աղէքսանդր Նսայեանց 1
պ. Աղէքսանդր Մելիք-փաշայեանց 1
պ. Աղէքսանդր Միրիմանեանց 1
պ. Աղէքսանդր Ռօտինեանց 1
պ. Աղէքսանդր Քալանթարեանց 1
Տ. Անանիա Հախվէրդեանց 1
Տ. Աննա Շլխեանց 1
պ. Արամ Մէշեանց Երևանցի 1
պ. Արամ Վարշամեանց 1
պ. Արշակ Թէմուրազեանց 1
պ. Արշակ Ծովիանեանց 1
պ. Արշակ Մամուլեանց 1
պ. Աւետիք Գույակեանց 1
պ. Աւետիք Եզեկեանց 1
պ. Աւետիք Խօջամիրեանց Ագուլեցի 1
պ. Ա. Ծատուրեանց 1
պ. Բաղդասար Զարդեղեանց 1
պ. Բաղդասար Ծովիանեանց 1
պ. Գաբրիէլ Շահիկեանց 1
պ. Գալուստ Յարութիւնեանց 1
պ. Գէորգ Լօսիս-Շահվէրդեանց 1
պ. Գէորգ Շադինեանց 1
պ. Գէորգ Շահպարունի 1
պ. Գէորգ Սուքիասեանց 1
պ. Գուրգէնբէգեանց 1
պ. Գրիգոր Լալայեանց 1
պ. Գրիգոր Կիրակոսեանց Երևանցի 1
պ. Գրիգոր Մեհրաբեանց 1
պ. Գրիգոր Շահբուդաղեանց 1
պ. Դանիէլ Ալլահվերդեանց 1
պ. Դանիէլ Ղալեանց 1
Տ. Եղիսաբէթ Զմշկեանց 1
տ. Եղիսաբէթ Տէր Դաւթեանց 1
պ. Երեմիա Տապտապեանց 1
պ. Երուանդիկ Յ. Առաքելեանց 1
պ. Եփրեմ Ծատուրեանց 1
պ. Եփրեմ Մելիք-Վարդանեանց 1

պ. Զարմայր Անդրէասեանց Ալեքսանդրպօլցի 1
պ. Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցը 10
պ. Զաքար Շահազիզեանց գնդապետ 3
պ. Զ. Ալամդարեանց 1
պ. Թադէոս Զաքարեանց 1
պ. Թէոդորոս Մուրադեանց 1
Տ. Լիզա Արամեանց 1
պ. Լևոն Արասխանեանց Ագուլեցի 1
պ. Խաչատուր Խաչատրեանց 1
պ. Խաչատուր Քալանթարեանց 1
պ. Խաչատուր Բէշիշեանց 1
պ. Խոսրով Տէր Մովսէսեանց 1
Տ. Կատինկա Յարութիւնեանց 1
պ. Կարագօզեանց 1
պ. Կարապետ վարժապետ Բէլախեանց 2
պ. Կարապետ Խօջապարոնեանց 1
պ. Մահտեսի Կարապետ Մանուկեանց Ակնցի 1
պ. Կարապետ Մատինեանց 1
պ. Կարապետ Տէր Խաչատրեանց 1
Տ. Կէկէլ Շահնազեանց 1
պ. Համազասպ Մամիկոնեանց 1
պ. Համազասպ Սաֆրազեանց Ագուլեցի 1
պ. Համբարձում Թովմասեանց 1
պ. Համբարձում Միրիմանեանց 1
պ. Ղազարոս դպիր Մելքոնեանց 1
պ. Ղազարոս Նազարեանց 1
պ. Ղուկաս Շիրեանց 1
Տ. Մարիամ Դաւթեանց 1
Տ. Մարիամ Մարգարեանց 1
պ. Մելքոն Դանդուրեանց 1
Տ. Մինա Նազարեանց 1
պ. Միքայէլ Մելիք-Հայկազեանց 1
պ. Միքայէլ Տէր Ստեփանեանց 1
պ. Մկրտիչ Խալփեանց 1
պ. Մկրտիչ Ռոստոմեանց 1
պ. Մկրտիչ տէր Մկրտչեանց 1
պ. Մկրտում Արասխանեանց Ագուլեցի 1
պ. Մելիք Ազարեանց 1
պ. Մնացական Սարգսեանց 1
պ. Յ. Զիգիանեանց 1
պ. Յակոբ Խօջամիրեանց 1
պ. Յակոբ Նունուսեանց Ագուլեցի 1
պ. Յարութիւն Աթաբէգեանց 1
պ. Յարութիւն Գուլագեանց 3
պ. Յարութիւն Ջօհրաբեանց 1
պ. Յարութիւն Շահազիզեանց կամսարական 1
պ. Յարութիւն Տէր Յարութիւնեանց 1
պ. Յովհաննէս Առաքելեանց 1
պ. Յովհաննէս Դէյկարխանեանց 1
պ. Յովհաննէս Խուդադեանց 1
պ. Յովհաննէս Յարութիւնեանց 1
Հանգուցեալ Յովսէփ Յարութիւնեանց Օրդուբադցի 1
Տ. Նատալիա Սահակեանց 1
պ. Նիկողայոս Ամիրաղեանց 1
պ. Նիկողայոս Կարապետեանց Ալեքսանդրապօլցի 1
Տ. Նուարդ Առաքելեանց 1
պ. Շահրիար Մելիք-Փարսադանեանց 1
Տ. Շաշինկա Ղուզանեանց 1
Օր. Շուշանիկ Արարատեանց 1
պ. Պետրոս Բերլինեանց 1
պ. Պետրոս Շաքարեանց 1
պ. Պօղոս Պապալեանց 1
պ. Ռոմանոս Նադիրեանց 5
պ. Ռոստոմ Մանդինեանց 1
Օր. Ս. Սուրէնեանց 1
Օր. Սաթինիկ Տէր Սարգսեանց 1
պ. Սահակ Թանդոյեանց 1
պ. Սամսոն Ղայսարեանց 1
պ. Սարգիս Աստոյեանց Ալեքսանդրօպօլցի 1
պ. Սարգիս Իւղբաշեանց գնդապետ 5
պ. Սարգիս Զմշկեանց 1
պ. Սարգիս Տէր Սարգսեանց 1
պ. Սիմէօն Պառաւեանց Շուլավերցի 1
պ. Սմբատ Տէր Պետրոսեանց Ալեքսանդրօպօլցի 1
պ. Սողոմոն Մատթէոսեանց 1
պ. Ստեփաննոս Սաֆրազեանց Ագուլեցի 1
պ. Ստեփաննոս Սաղօյեանց 1
պ. Սվէչնիկեանց 1
Տ. Սօնա Շահազիզեանց 1
Տ. Սօֆիա Իզմիրեանց 1
պ. Վահան Արծրունի նոր Բայազեդցի 1

պ. Վաղարշակ Բալասանեանց Աղեքսանդրօպօլցի 1
պ. Վարդան Սուլթանեանց 1
պ. Վրդանէս Մահտեսի Յակովբեանց 1
պ. Տիգրան Տէր Ստեփանեանց 1
պ. Օրբէլ Օրբէլեաց 1

154

ԿՈՐԻՍ

պ. Աստուածատուր բէգ Տէր Գասպարեանց 1
Տ Բալախանում Պարոնեանց 1
պ. Գէորգ բէգ Տէր-Մկրտչեանց 1
պ. Դանիէլ բէգ Տէր-Յակովբեանց 1
Տ. Զառի Պարոնեանց 1
պ. Զիլֆիղար բէգ Սաֆրազբէգեանց 1
Տ. Կատարինէ Պարոնեանց 1
պ. Կարապետ Դանիէլեանց 1
պ. Ղահրաման Գասպարեան 1
պ. Մանուչար բէգ Մէլիք-Հիւսէինեանց 1
պ. Յովհաննէս Յարութիւնեանց 1
Տ. Նազեժդա Մէլիք-Հիւսէինեանց 1

13

ԴԱՐԱԲԻԼԻՍԱՅՄԵԾ

Արժ. Արսէն քահանայ Տէր Սիմէօնեանց 1
Արժ. Յովհաննէս քահանայ Վիրաբեանց Աւդիբէգցի 1
Արժ. Պօղոս քահանայ Տէր Պօղոսեանց գործակալ 1
պ. Աստուածատուր Գէորգեան 1
պ. Աստուածատուր Խանդատեանց 1
պ. Խաչատուր Աբովեանց 1
պ. Յովակիմ Նալբանդեանց 1
պ. Յովհաննէս Եղշատեանց 1
պ. Նահապետ Ազատեանց 1
Ուսումնարան մեծ Ղարաքիլիսու 1

10

ՄՈԶԴՈԿ

Արժ. Գաբրիէլ քահանայ Տուրփայեանց 3
պ. Ադամ Սարգարեանց 1
պ. Աւետիք Զալեանց 1
պ. Գ. Ք. Տ. նուէր պ. Յ. Ո. ին 1
պ. Դաբրիէլ Թուչմալեանց 1
պ. Գալուստ Քօլուբաշեանց 1
պ. Գէորգ Ախխանեանց 1
Օր. Եղիսաբեթ Ախխանեանց 1
Օր. Եղիսաբեթ Սերեբրակեանց 1
Տ. Կատարինէ Գանջումեանց 1
պ. Կարապետ Բաղչիեանց 1
պ. Կարապետ Շլթեանց 1
պ. Դպիր Կարապետ Վլասեանց Եդեսացի 1
Օր. Հռիփսիմէ Աւանեանց 1
Տ. Հռիփսիմէ Գանջումեանց 1
տ. Մարգարիտ Գանջումեանց 1
Օր. Մարգարիտ Խոսրովեանց 1
Օր. Մարիամ Խօջայեանց 1
պ. Յակովբ Պօպովեանց 1
պ. Յարութիւն Ալխազեանց 1
Տ. Նազելի Շլթեանց 1
Տ. Նատալիա Տերիջանեանց 1
Տ. Նունէ Գանջումեանց 1
պ. Շուշան Գանջումեանց 1
պ. Զահընկալ Սիմէօն Արտեմեանց 1
Օր. Վարդանոյշ Թումանեանց 1
Օր. Վարդուհի Քօլուբաշեանց 1
Տ. Վարվառիա Լիսիցեանց 1
Տ. Վարվառիա Քօլուբաշեանց 1

31

ՆԱԽԻՋԵՒԱՆ ՀԻՆ

պ. Անտօն Թումեանց 1
պ. Աւետիք Բալանթարեանց 1
պ. Խաչատուր Մէլիք—Սարգսեանց 1
պ. Խոսրով Բաբայեանց 1
պ. Կարապետ Ադամեանց 1
պ. Կարապետ Գասպարեանց 1
պ. Կոստանդ Օհանեանց 1
պ. Հախնազար Համբարձումեանց 1
պ. Հայկ Խաչատրեանց Շուշեցի 1
պ. Մկրտիչ Օրդուխանեանց 1
պ. Յովհաննէս Մէլիք—Բաղչիեանց 1
պ. Պօղոս Մէլիք—Ամիրզատեանց 1

12

ՆՈՐ—ԲԱՅԱԶԻՏ

պ. Բալաբէգ Մելիք—Դափլանեանց 3
պ. Գրիգոր Տէր—Խաչատրեանց 2
պ. Եղեկիա Պետրոսեանց 3
Տ. Եղիսաբէթ Տէր-Խաչատրեանց 3
պ. Խաչատուր Տէր Խաչատրեանց 3
պ. Կարապետ Տէր Սահակեանց 6
պ. Յակովբ Առաքելեանց 1
պ. Յարութիւն Մամիկոնեանց 6
պ. Յօհան Բուդումեանց 3
պ. Ներսէս Ազիզեանց 1
պ. Ստեփան Սնացականեանց 1
պ. Վաղարշակ Շահխաթունեանց 6
Օր. Ֆլօրա Տէր-Խաչատրեանց 2

40

ՇՈՒՇԻ

պ. Արսէն Թոխմախեանց 1
պ. Գ. Պապեան [1]) 2
պ. Եփրեմ Ենգիբարեանց 1
պ. Թէոդորոս Խանդամիրեանց 1
պ. Մինաս Խոնոնց 1
պ. Միքայէլ Զօլեանց 1
պ. Յարութիւն Գափեանց 1
պ. Յովհաննէս Լալայեանց 1
պ. Ներսէս Շահլամեանց 1
պ. Զատատ Իշխանեանց 1
պ. Վասակ Պապաջանեանց 1
պ. Տիգրան Նազարեանց 1

13

ՋԱԼԱԼՕՂԼԻ

Արժ. Յակովբ քահանայ Շահինեանց 1
Արժ. Պօղոս քահանայ Տէր Յարութիւնեանց 1
պ. Արմենակ Քուչարեանց (բըժիշկ) 1
պ. Աւետիք Մուրատեան Գեառգեառեցի 1
պ. Գէորգ Բալանթարեանց 1
պ. Զաքարիա Գէմիրխանեանց Գեառգեառեցի 1

[1]) Մի օրինակը նուիրում է Պ. Պապաջանեանցին։

պ. Հայրապետ Տէր-Յակովբեանց 1
Տ. Հեղինէ Խանազեանց 2
պ. Միքայէլ Խանազեանց 2
պ. Նիկողայոս Հայրապետեանց 1
պ. Սարգիս Վարդազարեանց 1
պ. Սարգիս Տէր Գրիգորեանց 1
պ. Տիգրան Տէր Գաւթեանց 1

15

ՍԱՆԱՀԻՆ

Գեր. Կարապետ վարդապետ Տէր Գալստեանց 1
պ. Մարտիրոս վարդապետ Մժէժեանց 3
Արժ. Յակովբ քահանայ Շահինեանց 1
պ. Աղէքսանդր Վերանեանց 1
պ. Աստուածատուր Տէր Պետրոսեանց 1
պ. Գէորգ Խարազեանց 1
պ. Զարմայր Տէր Բարսեղեանց 1
պ. Խորէն Վերանեանց 1
պ. Կարգոս Տէր-Յովհաննիսեանց 1
պ. Հայկ Տէր-Գրիգորեան 1
պ. Միհրան Բաղդասարեան ուսուցիչ Օձունց 1
պ. Յակովբ Գալստեանց 1

14

ՍԱՐԱՏՈՎ

պ. Աղէքսանդր Գիլանցեանց 1
պ. Աղէքսանդր Խաչիկեանց 1
պ. Աղէքսանդր Սարուխանեանց 1
պ. Խաչատուր Ֆարբիկանտեանց 1
պ. Յակովբ Փամբուխչեանց 3

7

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ

պ. Առաքել Բահատրեանց 1
պ. Գէորգ Դողոխեանց 1
պ. Գրիգոր Քեաբաբճեանց 1
պ. Էմմանուէլ Սուրաչեանց 1
պ. Յակովբ Եապըճեանց 1
պ. Յովհաննէս Նազարեանց 1

Ս Ղ Ն Ա Խ

Արժ·	Ստեփաննոս քահանայ Տէր Ստեփաննոսեանց	1
Արժ·	Սարգիս քահանայ Տէր Ստեփանեանց	1
Արժ·	Արշակ քահանայ Տէր Ստեփանեանց	1
պ·	Աբէլ Շահվէրդեանց	1
պ·	Բէգլար Կարապետեանց	1
պ·	Գէորգ Սարգսեանց	1
Տ·	Դարիա Սարգսեանց	1
պ·	Եսսոն Միրաքեանց	1
պ·	Զաքար Փրիդոնեանց	1
պ·	Կամսար Տէր Դաւթեանց	1
Օր·	Մարիամ Յարութիւնեանց	1
պ·	Մէլիք Յարութիւնեանց	2
պ·	Յովհաննէս Շարուռեանց	1
պ·	Նիկողայոս Տէր Մատթէոսեանց	1
պ·	Սարգիս Տէր Մատթէոսեանց	1
		16

Ս Տ Ա Ւ Ր Օ Պ Օ Լ

պ·	Ավարիա Աչաքովսկի	1
պ·	Առաքել Օթարեանց	1
պ·	Գրիգոր Յարութիւնեանց	1
պ·	Դաւիթ Պօպովեանց	1
պ·	Միքայէլ Տէր Միքայէլեանց	1
պ·	Յովհաննէս Զուվալեանց	1
պ·	Պետրոս Զուվալեանց	1
		7

Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ

պ·	Աբրահամ Նաւասարդեանց	1
պ·	Ադամ Վարդանեանց	1
պ·	Անտօն Ներսիսեան	1
պ·	Աստուածատուր Սանասարեանց	1
պ·	Արշակ Յօհանջանեանց	1
պ·	Բեկան Բաղդասարեանց	1
պ·	Գէորգ Թարխանեանց	1
պ·	Գէորգ Խանադեանց	1
պ·	Գրիգոր Զաքարեանց	1
պ·	Գրիգոր Մալխասեանց	1
պ·	Դաւիթ Խուբեանց Թիֆլիսեցի	1
պ·	Եղիազար Եղիազարեանց	1
պ·	Ենօք Տէր-Մկրտչեանց Շահրիարցի	1
պ·	Եփրեմ Մամիկոնեանց Շուշեցի	1
պ·	Զաքար Եդիգարեանց Ներքին Ալյանլուեցի	1
պ·	Թէոս Աստապատցեանց	1
պ·	Լ· Յարութիւնեանց	1
պ·	Խաչատուր Պետրոսեան	1
պ·	Ծանուտէր Ղազար Աւետիսեանց	1
պ·	Մատթէոս Բայադեանց	1
պ·	Մարգար Ասլանեանց	1
պ·	Մեսրովբ Փիչխուլեանց	1
պ·	Մկրտիչ Գառնեանց	1
պ·	Մկրտիչ Համազասպեանց	1
պ·	Մկրտիչ Յովհաննիսեանց	1
պ·	Յակոբ Աղազատեանց	1
պ·	Յակոբ Բարսեղեանց	1
պ·	Յակոբ Զօրանեանց	1
պ·	Յարութիւն Մխիթարեանց	1
պ·	Յովակիմ Զաքարեանց	1
պ·	Յովհաննէս Կարճեանց	1
պ·	Նազարէթ Մովսիսեանց Թալինցի	1
պ·	Նիկողայոս Արամեանց	1
պ·	Նիկողայոս Արտադեան Ալէքսանդրօպօլցի	1
պ·	Պետրոս Մարկոսեանց	1
պ·	Պետրոս Տէր Պետրոսեանց	1
պ·	Սամփսոն Տէր Պօղոսեանց	1
պ·	Սարգիս Ասլանեանց	1
պ·	Սարգիս Ենգիբարեանց	1
պ·	Ստեփան Ահարօնեան Գէչըրլուեցի	1
պ·	Ստեփաննոս Գեղամեանց	1
պ·	Վահան Յօհանջանեանց	1
պ·	Վարդան Պուլուղեանց	1
պ·	Վարդան Տէր Թադէոսեանց	1
		44

Ք Ո Ւ Թ Ա Յ Ի Ս

Արժ·	Դաւիթ Աւագ քահանայ Եարալեանց	1
Արժ·	Յարութիւն քահանայ Տէր-Տէրեանց	1
Օր·	Աննա Եարալեանց	1
պ·	Բուղդան Գասպարեանց	1
պ·	Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանց	1
պ·	Եղիշէ Երզնկեանց Հախպ·	1
Օր·	Եղիսաբէթ Եարալեանց	1
պ·	Կարապետ Մխիթարեանց	1
պ·	Մակար Յարութիւնեանց	1
պ·	Մամիկոն Ղարիբեանց	1
պ·	Յովսէփ Մուրադեանց	1
Տ·	Նատալիա Թափայէլեանց	1
պ·	Տիգրան Աբրհամեանց	1
		13

16293

2013